ՐԱՓՓԻ

ԱԱԼՈՐ

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

"Ամէն սիրտդ չեմ՝
Ռուստամ կամ Սալբի,
Որ քախտը չհատնէ՝
Նասիբը՝ Նասիբի:"

ԱՒԱՓ

ՀԱՏՈՐ ԱՒԱՋԻՆ

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1911.

Digitized by Google

Digitized by Google

PK6548
R13
S9
1911
V.1
MAIN

ԱՆՄԱՀ Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ

ՄԻՇՏ ՕՐՀՆԵԱԼ ՑԻՇԱՑԱԿԻՆ

ԽՈՐԻՆ ՄԵԾԱՐԱՆՔՈՎ

ՆՈՒԷՐ

Ինձ քաղցր էր այդ պաշտելի Տղամարդի յաւիտենական յիշատակը յարգել՝ իմ աշխատութեանց երախայրիքն նորան ընծայելով: Թէպէտ "Սալբի,,ի հեղինակը չէ ունեցել պատուելի Հանգուցեալ հետ խիստ մօտաւոր ծանօթութիւն, բայց քանի կայ եւ կ'ապրի հայոց լեզուն եւ գրականութիւնն, Մ. Նալբանդեանցի անմահ յիշատակը միշտ կ'ունենայ իւր զգալի համակրութիւնքը ամէն մի հայի սրտում մինչեւ դարերի վերջը:

Սպահանում 1867: ՀԵՂԻՆԱԿԸ

450878

Digitized by Google

Digitized by Google

Ա Զ Դ

"Սալքի,,ն տպագրութեան յանձնած ժամանակ՝ պատշաճ ենք համարում՝ մի համառօտ ծանօթութիւն տալ հետաքրքիր ընթերցող հասարակութեան, թէ այդ վէպը երբ եւ ինչ շարժառիթով է գրել հեղինակը, եւ թէ ինչո՞ւ չէ տպուել հեղինակի կենդանութեան ժամանակ, կամ՝ նրա մահից յետոյ մինչեւ այժմ:

I.

Րաֆֆին սկսել է գրել այդ վէպը 1855 թուականից, այն ժամանակ, երբ Թիֆլիսում՝ Արքունական դպրոցի վեցերորդ դասարանը յաջողութեամբ աւարտելուց յետոյ՝ հօր թախանձանօք վերադառնում՝ է իր հայրենիքը՝ Ատրպատականի Սալմաստ գաւառի Փայաջուկ գիւղը:

Առժամանակ այդտեղ մնալով՝ իր հօր Մելիք Միրզաբէկի հարստութիւնը նպաստում՝ է նրան՝ քարձր դիրք ստանալու թէ Պարսից կառավարութեան եւ թէ ընիկ ազգաբնակութեանց մէջ: Նրա այդ նիւթականապէս ապահով դրութիւնը Պարսկաստանի նման փարթամ կեանքի եւ շլացուցիչ փառքի երկրի մէջ՝ թոյլ տուեց նրան՝ ուսումնասիրելու այնտեղ կատարուող քաղաքական եւ տնտեսական գործողութիւնները ու հանգամանքները՝ տիրապետողի եւ հպատակուողների միջեւ: Ազգաբնակութեան աննախանձ դրութիւնը, եւ նրա

Digitized by Google

աւանդութիւնները : գրաւեցին նրա ուշադրութիւնը եւ դոցա համեմատութիւնը նա ձեռնարկեց գծել եւ ամփոփել այս վէպի մէջ՝ զանազան հերոսների եւ տիպերի կենդանի պատկերներով :

Այսպիսով այս վիպասանութիւնը հեղինակի գրչի երեխայրիքն է ներկայանում, գրուած երիտասարդական քուն հասակում :

Պարսկաստանի այդ անյոյս ժամանակներում նա լիայոյս գրում էր : Այդ պատմական երկիրը, որի մէջ նա ծնուել էր, եւ իր երիտասարդութեան թարմ հասակում խորասուզուած էր նրա քաղաքական եւ տնտեսական խնդիրների մէջ, մեծ պաշար տուեց նրան իր պատմական անցեալով եւ քնակուող ժողովուրդի աննախանձ դրութեան հանգամանքներով. նա շօշափում էր նրա պատմական անցեալը, նկարագրում էր ներկայի հանգամանքները :

Թէեւ ցաւում էր նա, տեսնելով այդ ժողովուրդի մէջ խորը արմատացած տգիտութիւնը, բայց նա չէր յուսահատւում՝ այլ համոզուած էր, որ այդ ժողովուրդը քերրի հողի նման անմշակ մնալով խոպանացած էր. պէտք էր ներկել նրա մտաւորականը, շինիչ կրթութեան ազդեցիկ եւ խոր ակօսների հմուտ մշակութեամբ պարարտացնել նրա քունի քթացրած հողը, որ երեւան գային նրա մէջ պիտանի արդիւնքներ — միայն թէ հերկող մշակները հմուտ եւ հեռատես լինէին՝ նրա մտաւորական զարգացման եւ տնտեսական գործառնութեան մէջ :

Յակոբ Մելիք Յակոբեանը (Րաֆֆի) համոզուած էր, որ հեռու չէր արշալոյսի ծագումը այդ երկրի խաւարը հալածելու համար. նա լաւ ըմբռնել էր ժամանակի

Digitized by Google

ոգին, ժողովուրդի ազիտութիւնը եւ տիրապետողների քոնի ընթացքը, որ՝ նման մի խափուտ շէնքի՝ չէին կարող յարատեւել:

Երկրի այդ վիճակը մատակարարած է նիւթ նրա "Սալբի,, վիպասանութեան:

Հեղինակը իւր այդ վէպի յառաջաբանի մէջ հետեւեալ ակնարկն է անում իւր ժամանակակից Նասր—Էդդին—Շահին. ". . . եթէ նա կ'անցուցանէր իր ժամանակը իր նախորդների պէս, թող գիտցած լինի, որ ժամանակը իր պիտոյքները կը կատարի. Պարսկաստանը կը վերանորոգուի առանց նայելու որեւիցէ տիրապետողի կամքին . . ,,:

Կէս դար առանից առաջ Բաֆֆիի մեզ աւանդած մարգարէութիւնները այս օր տեսնում ենք արդէն սկսուել են ճշտուել եւ համարեայ թէ կատարուելու վրայ են: Դա, հեղինակի քնատուր տաղանդի սկզբնական աստիճանի գնահատումն է, եւ՝ ընդհակում է հեղինակի արուեստի ուղղութեան արժէքը:

II.

Թէ ինչո՞ւ մինչեւ այժմ լոյս չտեսաւ այդ վէպը:

1863 թուականին այդ վիպասանութիւնը ուղարկում է Մոսկուա Ս. Նազարեանցին "Հիւսիսափայլ,, ամսաթերթում մաս-մաս տպագրելու համար, սակայն դժբախտաբար դեռ այդ վէպի տպագրութիւնը չսկսած՝ դադարեցնում է յիշեալ ամսաթերթը գանազան փոխադրիկների շնորհիւ . . . :

1872 թուականին երբ Գր. Արծրունին պատրաստւում էր սկսել "Մշակ,, հաքաթաթերթի տպագրութիւնը, ծանօթանալով Բաֆֆիի հետ՝ հրաւիրում է նրան

Digitized by Google

աշխատակցել իր թերթին՝ հետեւեալ խօսքերով. “. . . Դուք աշխարհ տեսած մարդ էք. արեւելքը ճանաչում էք. Դուք քնիկ պարսկաստանցի էք, եւ պտտել էք Թիւրքահայաստանը. — տուեցէք մեզ թարմ նիւթեր այդ երկրների մասին . . .„:

Րաֆֆին ներկայացնում է Գր. Արծրունուն “Սալքին„: Արծրունին խօսելով այդ վէպի մասին տաւն եւ վեց տարի յետոյ, Րաֆֆիի մահուան կենսագրականի մէջ, ասում է. “վէպի նկարագրական տեղերը աննման էին.„ բայց եւ այնպէս անյարմար նկատուեց այդ մեծ վէպը ամբողջովին ամփոփել մի թերթի մէջ, որը շաբաթը մի անգամ էր միայն լոյս տեսնում: Ուստի Արծրունին “Մշակի„ սկզբնական համարներից սկսած տպագրում է “Րաֆֆիի նամակները„ վերցրած “Սալքիից„: Ընթերցող հասարակութիւնը յափշտակութեամբ կարդում է այդ՝ կարծելով թէ որեւէ եւրոպացի ճանապարհորդի գրուածների թարգմանութիւններ են:

Մինչեւ այդ ժամանակը հեղինակը ճանաչուած էր Ց. Մելիք Ցակոբեան եւ երբեմն Մելիքզադէ ստորագրութեամբ, սակայն այնուհետեւ սթափուած ընթերցող հասարակութիւնը՝ սկսեց իւրովի մականուանել նրան իր այդ վէպի հերոսի անուամբ “Րաֆֆի„, եւ այնուհետեւ հեղինակը ճանաչուած է ընդհանրութեան ՐԱՖՖԻ մականուամբ:

III.

1877 թուականին Պարսկաստանի Թաւրիզ քաղաքում “Հարեմի„ առիթ մի հայ քահանայի մատնութեան շնորհիւ, մահմետական հոգեւորականութեան յարուցած ապստամբի փոթորիկները Րաֆֆիի կեանքի ղէմ

Digitized by Google

ապացոյց են, որ անհնարին էր տակաւին ի լոյս ընծայել մի այդպիսի վէպ ամբողջութեամբ, որի մէջ մերկացում է նոցա գռեհիկ կեանքը, մանաւանդ որ հեղինակը ինքը պարսկահպատակ էր եւ ճանաչուած անձնաւորութիւն՝ Պարսկաց կառավարութեան մէջ: Ուստի այս տեսակ քաղաքական նկատումների պատճառով, մինչեւ հեղինակի մահն անտիպ է մնացել այդ մեծ վէպը:

Իսկ այժմ հանգամանքները փոխուած նկատելով՝ յարմար համարեցինք ի լոյս ընծայել այդ ճեռագիր գործը ամբողջութեամբ:

IV.

Մեր տպագրութեան յանձնածը ոչ միայն մի վէպ է, այլ մի պատմական փաստաթուղթ: Իբրեւ վէպ՝ հնայելով իր հնութեան, թարմ է իր շօշափած խնդիրներով եւ ժամանակակից կեանքի հարուստ շտեմարան ներկայացնելով հանդերձ, ունի ամէն մի գեղարուեստական գրուածքի արժանաւորութիւնները: Իբրեւ փաստաթուղթ, նրա նշանակութիւնը մեծ է մեր գրականութեան համար:

"Սալբին,, լոյս տեսնելով շատ բան էր ճշտում: Լոյս է սփռում ռուսահայ գրականութեան նախնական ծագման, ընորոշելով թէ հեղինակի աստիճանաբար զարգացումը եւ թէ նրա գրական արժանիքի ընդհանուր գնահատումը:

Րաֆֆին սկսեց գրել "Սալբին,, 1855 թուին, ինչպէս ինքը յիշում է յառաջաբանի մէջ: Այդ կէտը մեծ կարեւորութիւն ունի. դա մի ժամանակ էր, երբ դեռ ոչ մի վէպ հայերէն լեզուով լոյս չէր տեսել: Այսպէս հեղինակը ինքնաբերաբար ճեռնարկում է առաջին անգամ հայերէն լեզուով վէպ գրել: Խաչատուր Աբովեանի

Digitized by Google

"Վէրք Հայաստանին,, գրուած էր աւելի վաղ, բայց տպագրուեցաւ միայն 1859 թ., երեք տարի "Սալբիի,, գրելուց յետոյ: Ոչ միայն ո՛չ մի վէպ հայերէն լեզուով լոյս չէր տեսել, այլ եւ ո՛չ մի կարեւոր երկ չէր տպագրուած Ռուսաստանում մինչեւ այդ թուականը: Թերեւս միակ բացառութիւնը կազմում էր Գէորգ Հախվերդեանի հրատարակած "Սայեաթ-Նովան,, 1852 թուին: Մի երկու դասագիրք եւ քառարան ու մի քանի անգոյն գրքոյկներ կազմում էին ամբողջ ռուսահայ գրականութիւնը: Լրագրութիւնը գոյութիւն չունէր — եթէ չհաշուենք պաշտօնական "Կավկաս,, ռուսաց թերթի հայերէն յաւելուածը, եւ Պատկանեան Տէր Գաբրիէլ Քահանայի հրատարակած մի քանի փոքրադիր թերթիկները "Արարատ,, անուամբ: Կեանքի առօրեայ խնդիրները հրապարակապէս չէին արծարծւում. ո՛չ մի հասարակական վերլուծութիւն չէր կատարւում նոցա վերաբերմամբ. բայց եւ այնպէս այդ խնդիրները զբաղեցնում էին փոքրիկ խմբակներ, եւ անհատական հարցասիրութեանց առարկայ էին դառնում. ամէն ինչ մասնակի էր եւ անհատական: Գրողները եւ թէ ընթերցողները գրեթէ մի եւ նոյն մարդիկ էին: Մի քանի հայրենասէրներ, որոնք աշխատում էին հանել ժողովուրդը խորին թմրութիւնից:

Հինգերորդ դարում, երբ հայոց ոսկեդարի առաջին զօրավիգները վերադառնալով Աթէնքից ըերին իրենց հետ լուսաւորութեան ջահը, նոքա սկսեցին մարտնչել խաւարի եւ տգիտութեան դէմ: Նոյն բանն էր կատարւում հայկական կեանքի մէջ 50-ական թուականներում:

Ծեղական քիչ ու շատ բարեկարգուած դպրոցները տուել էին իրանց առաջին պտուղը: Հայ մանկտին օտար երկրներից վերադառնալով՝ բարձրագոյն կրթութեան

Digitized by Google

հետ միասին բերում էր իւր հետ հայրենիքի վերածնութեան տենչը: Ամէն մէկը դոցանից, իրան կոչուած էր համարում այդ նպատակին եւ զգում էր գործի պատասխանատուութիւնը: Ահա այն, գաղտնիքը, թէ ինչու այնքան բերրի էր ռուսահայ ուսանողութեան առաջին շրջանը եւ թէ ինչքան արգասաւոր անուններ կան դրա մէջ:

Բաւական է միայն յիշել Ս. Նազարեան, Մ. Նալբանդեան, Ռ. Պատկանեան: Դա զարթնումի առաջին շրջանն էր, ուր մարտ էր մղւում խաւարասէրների դէմ, "հինական պարիսպները,, տապալելու համար. եւ դոքա առաջին յեղաշրջման աւազ կարապետներ էին: Դա "Հիւսիսափայլի,, շրջանն էր, ինչպէս անուանում են մեզանում:

Բայց, ինչպէս մենք ցոյց տուինք, հանգամանքներն էին ստեղծել այդ միջնորդը. եւ "Հիւսիսափայլը,, այդ միջնորդի արտայայտիչն էր միայն: Մ. Նալբանդեան իր ներշնչումները չէր կարող ստանալ Ս. Նազարեանից. շատ քիչ կեանք ունեցաւ այդ թերթը՝ այդքան կարճ ժամանակուայ մէջ առաջ բերելու Նալբանդեանի նման խոշոր ոյժեր: Նալբանդեան եւ մի քանի ուրիշները արդէն "Հիւսիսափայլական,, էին դեռ "Հիւսիսափայլը,, լոյս չտեսած, որովհետեւ կեանքը դեռ առաջ հասուցանել էր որոշ հասարակական խնդիրներ:

Այդ հարցերը մեծ մասամբ պատում էին ժամանակակից տգէտ հոգեւորականութեան շուրջը, որ խարխափելով խորին տգիտութեան մէջ, կաշկանդել էր ժողովուրդի միտքն ու հոգին: Հարկաւոր էր մաքառել դոցա դէմ: Ուստի նորա, որ ուղղակի կերպով էին ստացել իրենց ներշնչումները — բոլոր մեծ մարդիկ ուղղակի

Digitized by Google

են ստանում իրենց ներշնչումները, հարկաւոր էր համբակցէին, եւ այդ մարտիկներին առաջնորդելու համար, Նազարեանը պարգեց իր դրօշը "Հիւսիսափայլով,, 1858 թ. որը խոշոր չափերով կրում էր իր անհատական կնիքը եւ այդ պատճառով Նազարեանի այդ շարժման տուած ուղղութիւնն էլ քոլորովին ինքնուրոյն էր:

"Գամառ Քաթիպա,, ուսանողական համբակի քնարը արդէն սկսել էր հնչել: Եթէ Ռուսաստանի հայկական հօրիզոնը միգապատ էր եւ առաջին մարտիկները իրենց երկնատու կրակի շնորհիւ ճեղքում էին այդ՝ ազատութեան եւ լոյսի շաւիղ յարդարելու, Պարսկաստանի խաւարը աւելի թանձր էր եւ Րաֆֆին միակ կամաւորն էր, որ գիտութեան լոյսը հայրենիք էր տանում, որտեղ, ոչ միայն գոյութիւն չունէին դպրոցներ, այլ եւ հասարակ գրաւարժութիւնը գրեթէ անսովոր բան էր: Հոգեւորականները, որոնք ժողովուրդի առաջնորդներ էին, իրենց տգիտութեամբ միջում էին ժողովուրդի տգիտութեան հետ: Ժողովուրդի հալածանքը եւ կեղեքումը վաշխառու կալուածատէր խաների ձեռքից անտանելի էր դարձել: Եւ Րաֆֆին ոչ միայն զգում էր ինչ որ կատարւում էր իր շուրջը, այլ եւ գիտակցում էր՝ արտայայտելով այդ քոլորը իր առաջին վէպի "Սալբիի,, մէջ, հորս տարի — "Հիւսիսափայլի,, լոյս տեսնելուց առաջ: Նա ուզում էր ձեռք առնել պարսկահայոց վերածնութեան գործը, արդէն քանակցութեան մէջ էր մտնում քերել տալու, մի ամենաթերթ եւ թէ իր վէպերը տպագրելու համար: Բայց դժբախտաբար վաճառականական գործերի ձախորդ գնալը արգելափակեց նրան թողնել իր հայրենիքը:

Digitized by Google

Բաֆֆին իր ներշնչումները առացել էր Պարսկաստանից, բայց եւ այնպէս "Սալբի,,ն մի սուկ տեղական-գրական վէպ չէր, եւ չէ սահմանափակւում Պարսկաստանով, այլ դրա մէջ խոշոր կերպով շօշափւում են ժամանակակից հրատապ խնդիրները, որոնք յետոյ պիտի արծարծէր "Հիւսիսափայլը,,:

Գրիգոր Արծրունին խօսելով Բաֆֆիի այդ շրջանի մասին՝ հետեւեալն է ասում "— — — Ես պնդում եմ, որ իր առաջին մոքերով հանգուցեալը պատկանում էր Նազարեանի շկօլային, ոյովհետեւ նրա առաջին գրուածքը, որ լոյս տեսաւ "Հիւսիսափայլի,, մէջ եւ որ նկարագրում էր Աղթամարի վանքը, կարծես ներշնչուած էր Նազարեանի ուղղութեամբ եւ ոգով: Այդ գրուածքը որ պարունակում է իր մէջ մեր հոգեւորականութեան այժմեան կազմակերպութեան պակասութիւնները, թերի կողմերի խիստ քննադատութիւնը, արդէն գուշակել էր տալիս Բաֆֆիի գրական գործունէութեան ապագայ ուղղութիւնը՝ նկարագրական ճեւի կատարելութիւնը, հասարակաց տէնդենցեա, եւ խիստ քննադատական ոգին,,:

Կրկնում ենք նորից, որ Բաֆֆիին գլխաւոր ներշնչողը՝ Պարսկաստանն էր, եւ սկսելով իր գրական գործունէութիւնը կավկասում, Պարսկաստանը մատակարարում է նրան, գոնէ իր գործունէութեան առաջին շրջանում, բազմաթիւ նիւթեր: Այդ մի նորութիւն էր մեր գրականութեան մէջ եւ գրաւում է ընթերցողների ուշադրութիւնը:

"Գամառ Քալթիպան., (Ռ. Պատկանեանը) կարդալով հեղինակի "Հարեմը,,, որ տպագրուեցաւ 1874 թ. "Փունջի,, երկրորդ հատորի մէջ, գրում է Բաֆֆիին

Digitized by Google

1874 թ. Սեպտեմբեր ամսի 5ին Ն. Նախիջեւանից.
“: . . Ձեր արձակը իւր սեռումն՝ թէ ներքին եւ թէ արտաքին հիւսուածքի կերպով եւ թէ առարկայի ժամանակակցութեամբ, միով բանիւ ամէն կողմանէ նոր երեւոյթ է մեր նորագիւտ գրականութեան մէջ: — Ոչ ոքի անձնասիրութեան չը խոցելով, ոչ ոքի դափնիից մի տերեւն չը խլելով, ոչ ոքի արժանաւորութիւնէն մի կաթիլ չպակասացնելով, ես կը յայտնեմ Ձեզ, որ ոչ Արովեան, ոչ Նազարեան եւ ոչ Թաղիադեան, ոչ ոք, ոչ ոք Ձեր նախորդ արուեստակիցներից ունեցած չէ այն գրական նշանակութիւնը եւ ազդեցութիւնը, եւ թէ էլ պէտք է ասել հանճարեղ գրուածքը միշտ ժամանակակից ինքնրես ունի, որն որ դուք պիտի ունենաք, եթէ միայն չը շեղուէք Ձեր բռնած ճանապարհէն, իսկ այդ ճանապարհը ամենից ճիշտն է:

Դուք անզգալապէս կը զարթացնէք ազգի մէջ այն թմրած զգացմունքը, որ Ձեր նախորդները ի զուր աշխատում էին զարթացնել թմբուկներով, փողերով, եւ հազար ու մէկ լաց ու շիվաններով եւ . . . . չը զարթացրին, չը չափելով իրենց ոյժի եւ քանքարի աստիճանը: Նոքա մնաղորում էին միայն ազգին, ազգութեանն, մինչ ազգ զարթեցնողը ուրիշ կերպ ոյժ պիտի ունենայ, որ նոքա չունէին, իսկ դուք ունէք:

Դուք այն քանաստեղծներէն էք, որոնց մէջ մշտավառ կայ հին Մարգարէների Աստուածաշունչ ոգին, որ մինչեւ այնքան կը խլրտի Ձեր մէջ մինչեւ ազգին ցոյց կը տայ իր դրօշը եւ երթալու ուղիղ ճանապարհը . . . ինչ խօսքս երկարացնեմ՝, դուք այն Մեսիա — քանաստեղծներէն էք, որին մենք ցարդ պատրում էինք եւ չէինք գտնում: Բաւական է:

Digitized by Google

Գրեցէք այդ նիւթի վրայ շատ, շատ, եւ շատ, կը հաւատամ՝ կարդալով Ձեր "Հարեմն, հազար ու մէկ զգացմունք քորքոջեցին մէջս, եւ տարփանք զրգռեցին մէջս, եւ արտասուք ծմլեցին աչքերէս, եւ սէր, եւ ատելութիւնն քորքոջեցին այս ու այն անձին, միով բանիւ, դուք տիրապետեցիք բոլոր էութեանս, որ կողմ կամեցաք այն կողմ տարեցիք հոգիս...: Ինչո՞ւ, նրա համար որ դուք քանաստեղծ էք քաոիս ծայրահեղ իմաստով...,,:

Պէտք է ի նկատի ունենալ, որ այդ տողերը գրելու ժամանակ դեռ չէր լոյս տեսել Րաֆֆիի ոչ մի մեծ վէպը, եւ Գամառ Քաթիպան Հարեմով եւ Փունջի մէջ զետեղուած վէպիկներով էր միայն ճանաչում Րաֆֆիին:

"Սալբին,, միակ հայերէն վէպն է, ուր արտացոլում է 50-կան թուականների ռուսահայ գրականութեան ոսկեդարի մթնոլորտը, գրուած լինելով ժամանակի թարմ տպաւորութեան տակ. մինչեւ անգամ միայն այդ տեսակիտով "Սալբին,, ներկայացնում է մի հազուագիւտ փաստաթուղթ:

V.

Մի քանի խօսք էլ՝ այն փոփոխութիւնների մասին, որոնք մենք մտցրինք տպագրութեան մէջ՝ հեղինակի դիտաւորութեան համեմատ: Երբ հեղինակը իւր կենդանութեան օրով՝ մի քանի գլուխներ հրատարակեց "Սալբի,,ից, ինքն իւր նախնական գրութիւնը ձեւափոխեց՝ ժամանակի լեզուին յարմարեցնելով: Մենք էլ միայն "Ցառաջաբանը,, այնպէս պահեցինք, ինչպէս որ գրուած է եղել ձեռագիրը. այդտեղ կը տեսնուի վէպին նախնական լեզուն. իսկ վէպի ամբողջ ընթացքում՝ հեղինակի "ունէիմք,,, "քարեխօսութիւնքը,,, "նորան,,, "գտանելով,,, "պիտոյ է,, եւն հնաձեւութիւնները պատշաճ

Digitized by Google

համարեցինք ուղղել "ունէինք,,, "բարեխօսութիւնները,,, "նրան,,, "գտնելով,,, "պէտք է,,: Քանի որ այս վէպի նախնական անունը "Սալբի,, էր (որի քնագիրը մեր ձեռքի տակն է), իսկ "Հիւսիսափայլում,, տպագրելու համար օրինակած առաջին հատորը միայն կրում է "Խլվլիկ,, անունը, եւ այնուհետեւ հեղինակը միշտ յիշել է այդ վէպը իր յայտարարութիւնների մէջ "Սալբի,, անուամբ միայն, մենք էլ պահելով ամբողջ վէպի անունը "Սալբի,,, առաջին գլխին "ծառայող դեւիկը,, վերնագրի սկիզբը աւելացրինք "Խլվլիկ,, անունը: Այս վէպից մի քանի մասեր, ինչպէս ասացինք, արդէն լոյս են տեսել "Մշակ,,ում եւ "Վէպիկներ եւ պատկերներ,, գրքում:

VI.


Հրաւիրում ենք այն Ցարգելի անձնաւորութեանց լուրջ ուշադրութիւնը այդ "գործի,, վրայ, որոնք համակրում են Րաֆֆիի տաղանդին եւ յարգում նրա յիշատակը: Թող ի նկատի առնեն մի այդպիսի մեծ գործի տպագրութեան ծախքերը, որ պիտի հոգացուին միայն եւ միայն Րաֆֆիի այժմ պատրաստի վաճառելի գրքերի, եւ թէ նոր լոյս տեսնող գործերի եկամուտներով: Եթէ գտնուին մարդուս հոգով եւ ազնիւ զգածմունքներով նախանձախնդիր համակրողներ, որոնք իրանց շրջանում տարածեն Րաֆֆիի այդ գործերը՝ կանխավճարով իրանց համար կամ իրանց հայրենիքում նորաբաց գրադարանների համար, դորանով մեծապէս նպաստած կը լինեն՝ թեթեւացնելով եւ դիւրացնելով Րաֆֆիի գործերի տպագրութեանց ծանր ծախքերը:

Լոնդոն, 20 Դեկտեմբեր 1910:

ԱՑՐԻ ԱՆՆԱ ՐԱՖՖԻ

Digitized by Google

Digitized by Google



Digitized by Google

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայոց ազգը՝ — կորստաբեր ժամանակներուն փոթո-
րիկներուն բռնութեամբ արմատախիլ լլնելով իւր բնիկ եր-
կրից, երկար ու ձիգ տարիներ անտէր անտէրունչ տարու-
բերութեամբ աշխարհի երեսին եւ որպէս մի փշրուած նաւ կտոր
կտոր եղած, — վերջապէս դարձեալ է առնում երկրագնդի
զանազան մասներում: Եւրոպա, Ասիա, Ափրիկէ, այդ
անգութ հիւրընկալքը, ընդունելով խղճալի գաղթականքը
իւրեանց ծոցում՝ փոխանակ հանգիստ տալու նոյանց, փո-
խանակ սրբելու նոցա աչքերից արտասուքը, ինքեանք սկսան
գազանաբար յօշոտել նոցա անպաշտպանները, ուտել նոցա
միսը, ծծել նոցա արիւնը եւ ծամել նոցա ոսկերքը...:
Այդ ջարդուփշուր ազգից փոքրիկ մասունքներ միայն, որ-
պէս փշրանքներ մնացած այդ ճիւաղների քաղցը յագեցնե-
լուց յետոյ, շատ ուշ, դարերի ընթացքում հազիւ սկսան
մօտենալ միմեանց, միաւորիլ եւ զգալ իւրեանց մարդ-
կային կենդանութիւնը:

Տանեւինները դարու առաջին կիսաբաժինը եղաւ
այդ եզեկիէլեան ժամանակամիջոցը, երբ Աստուծոյ հոգին
փչեց այդ կիսամեռ ազգի վերայ, եւ հայերը զանազան
երկրներում սկսան շարժուել, կերպարանագործուիլ եւ
երեւալ իւրեանց ազգային գոյութեամբ: Նոքա սկսան
ոգեւորուել բարոյական եւ իմացական գործունէութիւններով եւ
հետեւելով լուսաւոր դարու ընթացքին, լուսաւոր ազգերի
օրինակին, աշխատեցին հաւասարել հայ հորիզոնից տափտու-

Digitized by Google

թեան թանձրամած խաւարը։ Ռուսաստանում, Թուրքիայում, Եւրոպիոյ այլ եւ այլ մասերում, Հնդկաստանում հիմնուեցան դպրոցներ, կազմուեցան տպարանք, լոյս ընկան լրագրներ եւ օրագրներ եւ զանազան հեղինակութիւնք՝ նոր եւ կենդանի լեզուով սկսան արծարծել ազգային շիջած լոյսը։

Բայց Պարսկահայք տակաւ թէ՝ մի ճակատագրական դատապարտութեամբ, որպէս իւրեանց տիրող տէրութիւնը, միացին տգիտութեան մահահրաւէր խաւարի մէջ, միայն... միում են... եւ գուցէ կը միային անթուելի շատ օրեր...։ Ով որ շատ ու քիչ տեղեակ է հայոց կեանքից, կը ճշմարտէ մեր ասածը, տեսանելով որ այսօրուայ օրում Պարսկահայք տակաւին չունին ոչ կանոնաւոր դպրոցներ, ոչ տպարանք եւ ոչ մի ազգային օրագիր կամ լրագիր, որ ցուցանէր նոցա տխուր եւ տրտում բարոյական եւ իմացական վիճակը։

Այդ առանց պատճառի չէ։

Պարսկաստան... դա մի կորսուաբեր երկիր է։ Այստեղ բռնակալի երկաթեայ գաւազանը աւելի բարբարոսաբար ներգործում է, քան թէ մի այլ աշխարհում։ Այստեղ սարսուռների աչքերից արտասուքը երբեք չէ չորանում։ Այստեղ հայերը առաւել քան մի այլ երկրում կրել են անբախտութեան դառն հարուածքները...։

Մինչեւ 1792 թուականը՝ Պարսկաստանի Ատրպատականում, — ուր ձեւանում է մեր վիպասանութեան դերը, — մինչեւ Ղափլան - քուհ ամէն մի մահալ (նահանգ) պարունակում էր իւր մէջ զանազան մանր, միմեանցից անկախ խանութիւններ, որոց մէջ ղըզլբաշ խաները էին միանգամայն բացարձակ իշխանները բոլոր բնակիչների վերայ։ Այդ խանութիւնքը միշտ գտանուելով մի-

Digitized by Google

մեանց հետ թշնամական յարաբերութեանց մէջ, եւ միշտ ունենալով միմեանց հետ անխզելի պատերազմներ, Ատրպատականը ձեւացնում էր արիւնոտ կռիւների թատրոն, ուր դժբախտ հայը էր միակ ծեծկուռղ պերսոնը:

Եւ այդպէս, նոքա ամենեւին ապահովութիւն եւ հանգստութիւն չունենալով՝ միշտ փախստական, սարեբում, ժայռերի վտակարներում եւ բերդերում, հազիւ հազ կարողանալով թշնամու թրից ողջ պահել իւրեանց անբախտ գլուխները, եւ գերութիւնից ազատել իւրեանց խղճալի ընտանիքը, — մի այդպիսի իսառնաշփոթ ժամանակում, երբ նոքա մի րոպէ եւս դադար չունէին թշնամիների երկիւղից, — Պարսկահայոց համար մի օտարոտի բան էր մտածել լուսաւորութեան համար: Որովհետեւ նոցա օրը, նոցա արեւը ամենայն կերպիւ խաւարած էր...: Այդ այն սգաւոր ժամանակն էր, երբ յառաջ քան ռուսաց տիրապետութիւնը եւ կովկասեան նահանգներում հայերը նոյնպէս հեծում հառաչում էին ղըզլբաշ խաների բռնակալութեանց երեսից:

Բայց 75 տարի առաջ Աղայ Մահմադ-խանը Ղաջարեան ցեղից տիրեց Ատրպատականը, բոլոր խաները խոնարհեցնելով իւր իշխանութեան ներքոյ: Եւ հայերը ազատուելով խաների նեղութիւններից՝ մի փոքր հանգստութիւն գտան: Ալիժանայիշատակ Փաթհ-Ալի եւ Մուհամեդ շահերի տիրապետութեան ժամանակներում, եւրոպական լուսաւորութեան ճառագայթները, թէեւ դժուարութեամբ, բայց կամաց-կամաց ցոլանալ սկսան Պարսկաստանի սեւաթոյր վարագոյրի նեղ ծակերից եւ քաղաքակրթութեան թոյլ եւ գունաթափ լոյսը մի փոքր հալածեց նախնի բռնակալութեան սեւ խաւարը:

Բայց հայերի համար տակաւին շուտ էր մտածել լուսաւորութեան վերայ: Խաների բռնակալութիւնքը խափան

վերջացած չէին։ Եւ հայերը մի փոքր հանգստութիւն միայն գտանելով, յառաջագոյն սկսան բարւոքել իւրեանց նիւթական դրութիւնը։ Երկրագործութիւնը եւ խաշնարածութիւնը շուտով ծաղկեցան նոցա մէջ. եւ քաղաքարնակք սկսան ձեռք զարկել վաճառականութեան եւ զանազան արհեստների։ Եւ շուտով հայոց աշխատասիրութեան ոգին երեւան հանեց իւր վառվռուն վաստակները։

Բայց երկար չը տեւեց այդ բարեբախտութիւնը։ 1827 թուականը թողեց Պարսկահայոց համար մի յաւիտենական ափսոսանաց արժանի անցք, երբ Պարսկահայոց մեծ մասը գաղթեցին դէպ Արաքսի միւս կողմը, անմխիթար սուգի մէջ թողնելով իւրեանց հայրենակիցքը։

Հայոց պատմութեան ատեանում չեն կարող պարզ երեսներով երեւել երկու հայազգի անձինք. — մինը՝ մի հոյակապ եւ արժանի յիշատակի էվէղէցական ոմն, որ շատ ուշ հասկացաւ իւր սխալը..., միւսը՝ մի փոքրոգէպ հայ աստիճանաւոր ռուսաց զօրքի մէջ, որ խարուելով շքանշաններից, հազարաւոր գերդաստաններ ձգեց ռուսաց խորամանգ քաղաքականութեան շղթայների մէջ եւ թողեց նորանց մաշուել՝ քսուելով մի հզօր տէրութեան երկանաքարի տակ...։

Գաղթականութիւնից յետոյ Պարսկաստանում մնացած հայերի վիճակն աւելի վատթար եղաւ։ Նոքա թուով քիչնալով՝ եղան անզօր եւ տկար, ուր մնաց, տէրութիւնը, վշտացած լինելով յաղթող ռուսերից, եւ մանաւանդ կարծելով, թէ պատերազմը քրիստոնեաների համար էր, սկսան խստութեամբ վարուել հայերի հետ։

Այժմեան Ատրպատականի հայերը իւրեանց կեանքով պարտական են յաւիտենական օրհնեալ յիշատակի

Digitized by Google

արժանաւոր Մուհամմէդ Սադը-Խան Դուրբուլին, որ ազատեց նորանց մի մեծ կոտորածից՝ պարսկական թրի բերանից։ Վասն զի Աբբաս Միրզան իւր անյաջող կռուից յետոյ, ջարդուած, սրտարեկ, երբ հասաւ Խոյ քաղաքը, կամեցաւ իւր վրէժխնդրութեան թոյնը թափել խեղճ քրիստոնէից վերայ, որպէս ռուսաց կրօնակիցների. այդ պատճառաւ, հրամայեց կոտորել բոլոր հայերը։ Բայց այդ բարեհոգի Մուհամմէդ Սադը-Խանն էր այն մարդ. պատէր աղատողը, որ Նայիբուլ Սալթանայի ոտքն ընկնելով, գնային համբուրեց, եւ մեղմեց թագաւորազնի բարկութիւնը, հաւատացնելով, թէ հայերը ամենեւին մեղաւորութիւն չունէին, եւ պատերազմը ոչ մնոով չէր վերաբերում քրիստոնեաներին։ Թողումք դժբախտ անցեալը իւր տխուր եւ տրտում յիշատակներով։

Հայերը Պարսկաստանի մէջ, եւ մեր ժամանակներում, ահա այդպիսի կորստաբեր քաղաքական յեղափոխութիւններում, մաշուելով, խորտակուելով եւ ջարդափշրւր լինելով, հազիւ հազ իւրեանց փոքրիկ մնասունքները հասցրել են մինչեւ ներկայ օրերս։

Այժմ մեր սիրելի ընթերցողին եմք թողում մտածել, արդեօք Պարսկահայք՝ այդքան նեղութիւնների մէջ, ունէին ժամանակ աշխատել իւրեանց բարոյական եւ իմացական կրթութեան համար, երբ նոցա նիւթական դրութիւնը ոչ բոլորովին ապահովութեան մէջ էր։

Այդքանը հանառօտաբար տեղեկութիւն տալով անցեալից, աւելորդ չեմք համարում մի փոքր խօսել Պարսկահայոց ներկայ վիճակից։ Բայց այդ մասին ստոյգ գաղափար տալու համար մեր ընթերցողին, պէտք է նորան ծանօթացնել Պարսկաստանի այժմեան կառավարութեան հետ։

Digitized by Google

Պարկաստանը, այդ հին արիւնախում ճիւաղը, տասնեւինն երորդ դարու լուսաւորեալ քաղաքակրթութեան առջեւ տակաւին կանգնած է իւր ասիական տգեղ եւ այլանդակ կերպարանքներով։ Պարսկաստանի անկարգ եւ անկանոն կառավարութիւնը ոչ միայն չէ ապահովում իւր քրիստոնեայ հպատակների դրութիւնը, ոչ միայն չէ բաւականացնում նոցա արդար իրաւունքը, այլ Թուրքերը եւ Պարսիկները ոչ բոլորովին գոհ են իւրեանց տէրութեան վարչութիւնից։

Մոլլաները՝ իսլամի դէնի ալտօնութեամբ, իւնելով կառավարութեան ձեռքից Շաֆկոնը (օրէնքը), ոչինչ չեն թողել քաղաքական դիւանատներին։ Եւ շահիմը՝ խարդախ մոլլաների խորամանկութեամբ փոխելով իւր արաբական պարզ եւ բնական կերպարանքը, դարձել է իսլամի ուլեմայների (իմաստունների) շահորոզութեան միակ ուռկանը։

Պարսկաստանի հողը՝ որ արդար իրաւունքով պիտի բաժանուած լինէր հասարակ ժողովուրդի մէջ, տակաւին հին կալուածատիրական ժառանգութեամբ մնացել է խաների, բեկերի, մոլլաների եւ աղնուականների ձեռքում։ Եւ կալուածատիրոջ իւր հողի անիրաւ գործադրութիւնը, ոչ միայն տալիս էր որեւիցէ վաստակ նորա մշակող ռայաթին (հպատակին), այլ թողում էր նորա միշտ ստրուկ, որ գործում էր մի միայն իւր տիրոջ համար։

Եւ այդպէս, օրէնքը մնալով մոլլաների սեպհականութիւն, գիւղօրայքի հողն եւ ռայաթը լինելով աղնուականների ժառանգութիւն, Շահին մնում են՝ քաղաքները եւ քաղաքական ուժը — զօրքը։ Բայց եւ այդ նօթի, կիսամերկ զօրքին՝ կառավարութիւնը չը տալով բուսականաչափ թոշակ եւ ապրուստի հնարներ, փոխարէնը շնորհել է նորանց

աւելի իրաւունքներ, աւելի պատուոնութիւնք, քան հասարակ ժողովուրդը: Ի՞նչ իրաւունքներ, ի՞նչ պատուոնութիւնք. այսինքն, նոքա իւրեանց հասարակ ժողովուրդի ապրանքը, կողոպտէին նոցա այգիների պտուղները, նոցա հունձքի արտերը եւ իւրեանց գլուխը պահէին. բոլոր այդպիսի հանգամանքներում կառավարութիւնը միշտ փափկութեամբ է վարվում նոցա հետ: Ու երբ բողոքում էին նոցա դէմ, դատաւորքը սովորաբար պատասխանում են. "Ո՛հ վնաս չունէ, սարվազ է...": Այդ պատճառով Պարսկաստանում որտեղից զօրք է անց կենում, միշտ թողում է իւր յետքից աւերում եւ ամայութիւն:

Պարսկաստանի մէջ աւելի վատթար է քրիստոնեայ ազգերի դրութիւնը: Նոքա, ըստ մեծի մասին բնակուելով գիւղօրայքում՝ մշակում են կալուածատիրոջ հողը, խիստ փոքր վաստակ միայն շահելով իւրեանց տէրերի ամբարները լցուցանելէն յետոյ: Բայց եւ այդ փոքրիկ վաստակը, նոցա արիւնախառն քրտինքների վարձը՝ խիստ սակաւ ձեռնտու է լինում նոցա ապրուստի համար: Վասն զի ղէխեան մահմետականների շառիաթը՝ միանգամայն պիղծ համարելով քրիստոնեայքը, արգելում է նոցա հետ ամենայն տեսակ հաղորդակցութիւն: Այդ պատճառաւ քրիստոնեայք չէին կարող վաճառել մահմետականներին իւրեանց երկրագործութեան համար բերքերը եւ իւրեանց մշակութիւնների բոլոր թաց պտուղները: Ու եթէ պատահում էր մի այդպիսի բան, այն եւս գաղտնի եւ ամենայն զգուշութեամբ, երբ մի մահմետական, մեղանչելով ընդդէմ իւր շառիաթին, եւ խաբուելով չափազանց աժանութիւնից, խիստ թեթեւ գնով՝ գնում էր քրիստոնեայ վաճառողից նրա մշակութեանց պտուղները:

Քաղաքաբնակ հայերի դրութիւնը աւելի լաւ է քան գիւղաբնակներին: Նոքա թէեւ չեն կարող վաճառել մահ-

Digitized by Google

մեսականներին ուտելիքներ եւ ըմպելիքներ, բայց մանիֆակտուրիայի եւ այլ տեսակ վաճառականութիւնք արգելուած չեն նոցա համար: Բայց մեք չեմք կարող գովաբանել այն տեսակ առեւտուրը մեր հայերի Պարսից իշխանների հետ, որք ծանր տոկոսներով փող շահով տալով, բեռնաւորում են նորանց պարտքերով, եւ այնուհետեւ սկսում են աղօթել նոցա բախտի յաջողութեան համար, որ նոքա տէրութիւնից գործ — բան գտանէին, եւ նոցա պարտքը վճարէին: Այդպիսի վաճառականներից շատերը անանկացած են, իւրեանց դատարձերը թողելով լքեր հարիւր հազարների ստանալեաց զրօսեներով:

Քաղաքաբնակ հայերից նոցա վիճակն էր միայն մի փոքր լաւ, որք ունէին շատ ու քիչ կալողութիւն եւ պարապում էին վաճառականութեամբ: Բայց այն կարգի մարդիկը, որոնց նիւթական կալողութիւնը չէր ներում որեւիցէ վաճառականութիւն անելու, նոքա մնում էին զուրկ եւ խեղճ: Որովհետեւ, իսլամի մոլեռանդութիւնը այստեղ նոյնպէս զրկում է քրիստոնեաներին շատ գործերից, նորանց արգելած է ունենալ խանութներ մսավաճառի, մանրավաճառի (աթթարի), ալլաֆի, հացթուխի, մրգավաճառի եւ այլն: Այլ եւ նոքա չէին կարող ունենալ եւ ղահվէտունք, խոհանոցներ, հասարակաց բաղանիքներ: Մնում էր նրանց բանացնել մի քանի արհեստներ, որպիսիք են՝ հիւսնութիւն, ոսկերչութիւն, դարբնութիւն, դերձակութիւն: Բայց խիստ պախարակելի է հայերի այն սովորութիւնը, որ նոքա մեծ մասամբ քաղաքներում պարապվում էին գինեվաճառութեամբ, եւ առաւել պախարակելի է, որ մի այդպիսի վատթար վաճառականութիւն իսլամի երկրում գործադրվում էր կանանց ձեռքով...:

Digitized by Google

Միայն դնելով այդ հանգամանքներին, մեք չէիմք կա-
րող մի քանի խրատներ չը տալ մեր Պարսկաստանի հայ-
բնակիչներին: Առաջին. գիւղաբնակները, որոնց կալողու-
թիւնը նեղում էր, թող տեղափոխուին քաղաքներում
եւ սկսին որեւիցէ վաճառականութիւն: Այդ մասին տէ-
րութիւնից չկայ ոչ մի արգելք: Պարսկաստանում հպա-
տակները կարող են տեղափոխուել քաղաքից գիւղ, գիւղից
քաղաք, ուր եւ նոցա համար ձեռնտու էր ապրել: Իսկ
եթէ նոքա կամէին գիւղերում բնակուել, աշխատէին
իւրեանց վաստակների աւելորդով գնել սեպհական հողեր
(որոց համար արգելուած չէր), եւ այդ հողերի վերայ մշա-
կել ոչ թէ խաղողի եւ այլ ծառերի այգիներ, եւ կամ
այնպիսի ցանքեր, որոց հում բերքերը պիղծ էին մահ-
մետականներին, այլ մշակել թթենիք, որոյ համար Պարս-
կաստանի կլիման, հողն ու ջուրը խիստ ձեռնտու են: Իսկ
քաղաքաբնակ հայերին այս է մեր խրատը. նոքա առանց
թանկագին ժամանակը կորուսանելու թող շահին տէրու-
թեան նոցա բաշխած ազատութիւնը լուսաւորութեան
մասին: Նոքա թող լաւ հասկանան, այստեղ տպագրու-
թեան մամուլը դրուած չէ ցեներալի անտանելի իշխանու-
թեան տակ, այդ պատճառաւ կարելի է հրատարակել
ամենայն տեսակ ազատ հեղինակութիւնք: Բացի ի դորա-
նից դպրոցներու ուսանող ընդլայնութիւնը սահմանափա-
կուած չէ խորամանդ քաղաքականութեան նեղ ու անձուկ
կանոններով, այդ պատճառաւ այստեղ կարելի է ունենալ
ամենայն տեսակ դպրոցներ եւ կարելի է տալ նորանց ամե-
նայն տեսակ ձեւերու ու կերպարանքներու լուսաւոր դպրոց
ընտիր դաստիարներին հասնձայն: Իսկ վաճառականու-
թեան մասին այս է մեր խրատը. Պարսկահայք թող
իւրեանց բոլոր ճարպիկութիւնը ու ճարտարութիւնը գոր-

Digitized by Google

Ծիք չը շինեն Եւրոպացի վաճառականներուն հատար, հաշե-
լով եւ մաշելով նոցա Անգլիայէց բերած ծանրագին ա-
պրանքները։ Թող ինքեանք աշխատին միաբանութեալ եւ կազ-
մել հաստատուն ընկերութիւնք, եւ կապուին Եւրոպայի
գլխաւոր վաճառական տներուն հետ, այնուհետեւ շուտով
կը տեսնէին ասիական վաճառականութեան հանդիսի մէջ
ինքեանք էին գլխաւոր վաստակարալքը։

Մեր խօսքը կալձելով մեր սիրելի հայրենակիցներուն
հետ, դառնում եմք դէպ Պարսկաստանի բարձրագոյն կա-
ռավարութիւնը, եւ որպէս նորա հաւատարիմ հպատակ,
առաջարկում եմք նրան մեր ինդիրը։

Ժամանակ էր արդէն Պարսկաստանի Օգոստափառ
Շահին բարեկարգել եւ վերանորոգել իւր տէրութիւնը
լուսաւոր դարուս օրինաւոր քաղաքակրթութեան հատա-
ձայն։ Եւ այս գլխոյն կէտին հասանելու համար՝ ամէ-
նէն յառաջ պէտք է հասկանայ Արեգակնափայլ Շահը,
որ տէրութիւն, թագաւորութիւն կոչուած բանը չէ
ժողովուրդի մի բազմութիւն՝ ճնշուած եւ կաշկանդուած
բռնութեան շղթայներով՝ մի տիրանի երկաթեայ գաւա-
զանի տակ, որոց կառավարում էր ոչ թէ արդար եւ
ազատ օրէնքը, այլ բռնակալի թուրը ու նորա սարսափը։
Բայց տէրութիւն կամ թագաւորութիւն մեք հասկանում
եմք մի հասարակութիւն՝ սրտով, մտքով ու հոգւով կա-
պուած միմեանց հետ, որք իբրեւ մի մարմին՝ կազմում
էին մի ամբողջութիւն միաւորուած մի գլխի հետ, որուն
ասում եմք թագաւոր։ Այդ հոգեւոր եւ մարմնաւոր, այլ
խօսքով՝ այդ ֆիզիքական եւ բարոյական կազմակերպու-
թեան մէջ՝ իւրաքանչիւր անդամ կամ իւրաքանչիւր ան-
հատ ունի հաւասար իրաւունք, նոցա ոչ մինը չէ ազատ
եւ միւսն ստրուկ, ոչ ծառայ եւ ոչ տէր, ոչ պիղծ եւ ոչ

Digitized by Google

մաքուր, այլ բոլորը մի են եւ հաւասար բաժին ունին իւրեանց տէրութեան հողից ու այլ բարեմասնութիւններից, որ Աստուած ստեղծել է նոցա համար:

Մի այդպիսի տէրութիւն կառավարելու համար՝ նուիրական կամ սրբազան օրէնքները — թէեւ դրքա տուած լինէին որեւիցէ մարգարէի ձեռքով, եթէ հաւաձայն չէին նոքա ժամանակի, երկրի ու կլիմայի հետ, եւ ազգերի բնաւորութեան հետ, եթէ չէին բաւականացնում նոքա՝ առանց խտրութիւն դնելու կրօնքի ու ազգութեան՝ մարդկութեան պիտոյքները եւ նոցա իրաւունքը — ոչ ինչ նշանակութիւն չունին:

Օրէնքները, թէեւ երկնքից իջած, չէ պիտոյ տանել մինչեւ դարերի վերջը: Վասն զի ժամանակները փոխվում են եւ մարդկութեան կեանքը ու բնաւորութիւնը նոցա հետ ստանում են զանազան կերպարանքներ, ուրեմն եւ մարդկութիւնը կառավարող օրէնքը պիտի յարմարապար փոխոխուի նորա հետ:

Ամէն մի տէրութիւնք, որոց մէջ գլխաւոր տեղը բռնել են հոգեւորականք, ամենեւին յառաջ չեն գնում: Հին Չինաստանը եւ իսաւար Հնդկաստանը մեզ օրինակներ են. բրահմինականութիւնը եւ այլն մեր խօսքերի ապացոյցներ են: Բայց Պարկաստանը ոչ միայն իւր կառավարութեան սանձը տուել է մոլլաների ձեռքում, այլ եւ նա ունի իւր «էկոնեզը»:

Շատ եւ շատ անգամ անտանելի նեղութեանց մէջ չարչարուած քրիստոնեաների լացը եւ բողոքը հասել են բարձրագոյն կառավարութեանը: — Բողոքներ՝ շառիաթից, բողոքներ՝ կալուածատէրներից, բողոքներ՝ տէրութեան պաշտօնականերից, բողոքներ՝ թուրքերի, պարսիկների հալածանքներից: Բայց Արեգնափայլ Շահը միշտ իւր ողորմած ուշա-

Digitized by Google

դրութիւնը դալձուցել է իւր քրիստոնեայ հպատակների ինդիրները լսելու, ամէն մի հայաբնակ գաւառներում կարգելով մի առանձին հաւիմ քրիստոնէից վերայ հսկելու, եւ նորանց այլեւայլ նեղութիւններից պահպանելու համար։

Ահա տասներորդ տարին լրանում է, որ մի այդպիսի տնօրէնութիւն արել է վսեմափայլ Շահը։ Բայց մինչեւ այսօր, այդ առանձին հաքիմները, որք կոչվում են ասֆֆպասպ, ոչ միայն կարողացել են հեռացնել քրիստոնեաներից նոցա այլեւայլ նեղութիւնները, այլ ինքեանք մի աւելորդ ծանրութիւնք են եղած նոցա այնքան անտանելի բեռան վերայ։ Այդ իրողութեանց մէջ Օգոստափառ Շահը մեղ չունի, միայն նորին վեհափառութեան բարձրագոյն ֆէրմանները, Թեհրանից դուրս գալէն յետոյ՝ կորուսանում են իւրեանց նշանակութիւնը։ Պարսկաստանի անկարգ կառավարութեան պղտորութեան մէջ անիլաւ պաշտօնակալները զբաղած են միայն իւրեանց օգուտը որսալու, ոչ թէ բարձրագոյն ֆէրմանների հրամանները կատարելու, եւ մէջտեղից վերացած լինելով արդարութիւնը եւ իրաւունքը՝ միշտ զօրիղը ճնշում է անզօրին։

Ողորմած Շահը հասկանալով, որ իւր սարփարատները նոյնպէս ոչ ինչ օգնութիւն չարեցին քրիստոնեաներին, այս տարի մտածել է բոլոր քրիստոնէից եւ հրէից (որ աւելի նեղութեան մէջ են) վարչութիւնը միանգամայն որոշել մահմետականներից, թէ նոցա հարկը եւ թէ նոցա դատաստանական գործերը յանձնել մի իշխանի, որ նոցա համար միայն կարգուած էր, եւ այդ իշխանի գործակալները ամէն տեղ կառավարէին նորանց։

Բայց այդպիսեաւ դարձեալ թէ քրիստոնեայք եւ թէ հրէայք չեն լինելու հանգիստ, քանի այդ դատաւորները ընտրվում էին մահմետական ազգերից, քանի իսպառ չէին

վերջացած այն դժգոհութիւնքը, որ նոքա ունէին իսլամի շառիաթից եւ հոդից։

Հայերին Պարսկաստանում պէտք է խնդրել սահմանադրութիւն։ Բայց ինչ ծիծաղելի ցանկութիւն է այդ։ Մի մանաւոր կարգաւորութիւն անսահման անկարգութեանց մէջ կորուսանում է իւր նշանակութիւնը։ Ուր ճնաց, Պարսկահայք իւրեանց այժմեան անկրթութեան մէջ կարող էին կանոնաւոր կերպով յառաջ տանել սահմանադրական վարչութիւն։ Մինչ Պոլսոյ հայերը իւրեանց բոլոր քաղաքակրթութեամբ կոպկողալով +ալեց-նո՞ւ են Սահմանադրութիւնը։

Պարսկահայոց համար դեռ վաղ է խնդրել սահմանադրութիւն։ Ոոցա համար պէտք է մահմետական սալփարաստների փոխանակ ունենալ քրիստոնեայ սալփարաստներ Եւրոպայի մարդերից, որոց ընտրութիւնը լինէր թեհրանում Եւրոպիոյ գլխաւոր դեսպանատանց խորհրդով եւ դեսպանատունքը երաշխաւոր լինէին հաւկաւորած միջոցներում պաշտպանել իւրեանց ընտրած սալփարաստանները։ Բաց ի դորանից քրիստոնէից եւ հրէից կառավարութեան գործերը, ոչ մի կերպով խառնուած չը լինէին մահմետականների հետ։

Մեք յոյս ունիմք, որ վեհմափայլ եւ հարձրադոյն Նասրադդին Շահի օրով Պարսկաստանը կը թափէ իւր միջից հին անկարգութիւնքը. նա կը փոխէ իւր ասիական վայրենի կերպարանքը. եւ հետեւելով լուսաւոր դարուս լուսաւոր գաղափարներին, ազատութիւնը լուսաւորութեան հետ ներս կը բերէ իւր մէջ։ Ես յոյս ունիմ, որ Պարսկաստանի պատմագրութեան մէջ ոսկի տառերով պիտի գրուի մեծ եւ փառաւոր անունս Նասրադդին, որպէս ասիական քաղաքակրթութեան մի նոր դարագլխի

սկզբնաւորիչը։ Թող այդ փայլուն պարծանքը նա տանէ իւր հետ մինչեւ դարերի վերջը։ Բայց եթէ նա կ'անցուցանէր իւր ժամանակը իւր նախորդներուն պէս, թող գիտցած լինի, որ ժամանակը կը կարգադրէ իւր պիտոյքները եւ Պարսկաստանը կը վերանորոգուի ինքնուրոյն՝ առանց նայելու որ եւ իցէ տիրապետողի կամքին։ Արդէն Պարսկաստանի արշալոյսը սկսել է շառագունել եւ արեւի ծագումը արդէն գուշակվում է . . . այնուհետեւ կը հալածուին սեւ թուղթերը մթին խաւարի հետ եւ ամենայն բան կ'երթայ իւր կարգին . . . ։

Արդէն զանազան կրօնական հերձուածներ պատառել են այն թանձր վարագոյրը, որ ղորանը ձգել էր իսլամի դէնի վերայ։ Շէյխ Ահմադ Բահրէյնին իւր նոր վարդապետութեամբ հասարեա կէս կիսեց շիիտեան մահմետականքը. նորան հետեւողքը կոչվում են Շէյխի. իսկ հինները Ղուլաթ։ Շէյխիք՝ ընդդէմ մեռեալ աշառուհիների են որպէս ազատ պրօտեստանտականութիւնը ընդդէմ կաթոլիկութեան։

Մի քանի նոր փիլիսոփայութիւնք, թէեւ իրրեւ ամէն մի նոր իրողութիւն՝ անկարգ եւ անկատար, բայց մեծ շարժառիթ են լինում ներս բերելու Պարսկաստանի մէջ ազատութիւնը։ Պապիզի, այդ անաստուած նիւթականները՝ հաւատալով թէ մարդոց կեանքը խոտի նման սկսում է եւ վերջանում է այս աշխարհում, աշխատում են ազատել մարդկութիւնը ամենայն նեղութիւններից, եւ այնպէս բարեկարգել մարդոց վիճակը, որ նորա անցանող կեանքը դիւրին լինէր եւ երջանիկ։

Պապիզի հերքելով ամենայն տեսակ հեղինակութիւնք, խելացի տրամաբանութեամբ ներս են բերել առողջ մտածութիւնը, որ աշխատում էր տնօրինել մարդկութեան բարին։

Digitized by Google

Լաբէի՛ը բոլորովին ջարդուփշուր են անում զօրանի վարդապետութիւնքը, ինքեանք հաւատալով դեռ եւս շատերին անյայտ մի ճշմարտութեան, նոքա եւ ընդդէմ են որեւիցէ միապետական իշխանութեան: Զանգեանի արիւնահեղ կոտորածը, եւ ամենայն տարի այնքան զոհերի սոսկալի մահերը, ոչ միայն կարողացան սրբել Պարսկաստանը բաբինեերից, այլ առաւել զօրացուցին նոցա ազելութիւնը: Միրզա Մելքում Խան Սարթեփը՝ այն գիտնական հայ տղամարդը՝ Պարիզից Պարսկաստան բերեց Քրամաօնականութեան սերմերը: Թէհրանում նա ստացաւ Շահից առանձին տուն, ուր սկսեց իւր դասախօսութիւնքը եւ փոքր միջոցում գտաւ իւրեան բազմաթիւ հետեւողներ: Մօլանները սարսափելով նկատեցին այդ կորստաբեր ուսմունքը, որ մի ահագին վիշապի նման, բերանը բաց արած, կամէր կլանել, ուտել եւ մաշել իսլամականութիւնը: Շահը ստիպուած մօլանների խնդիրներից, ակամայ կերպով արտասահման ուղարկեց Սարթեփին, չը կտրելով նորա ռաճիկը: Քրամաօնականութեան աշակերտները կոչվում են ահլե-ֆաքամո-ղեանայ: Քրիստոնէութիւնը, Միզանուլ-Հագգի, Թարիվուլ-Հայաթի եւ Ընկկիանների ձեռքով այլ պարսկերէն տպուած գլքերի շնորհիւ, թէ եւ խիստ ծածուկ կերպով, ձգել էր իւր լոյսը շատ սրտերի մէջ: Նա Քրիստոսի վարդապետութեան խաղաղասէր բարոյականութիւնը, գտանելով իւր զգալի համակրութիւնը մարդկութեան բարեկամ դարվիշների մէջ՝ արել է նորանց անկեղծ թարգման Աստուծոյ ճշմարիտ բանին:

Այժմ, Նէրսէսեան դարձել են այն լուսաւորեալ երիտասարդքը, ուր Շահը յուղարկել էր նորանց ուսում առնելու, արհեստ եւ գիտութիւնք ձեռք բերելու: Պարսից հետաքրքիր եւ նորաձեր բնաւորութիւնը առիթ է տուել

Digitized by Google

նոցա ընդունակութեանը՝ Եւրոպիոյ բերել Ասիա այն ա-զատ գաղափարները, որ բաժան բաժան են արած լուսաւոր աշխարհի բոլոր հասարակութիւնքը։ Եւ Վօլթերի, Բուխ-ների, Փէյերբախի, Ռոսսոյի, Լուի-Բլանի, Պրուդոնի, Կա-բէի եւ լուսաւոր դարուս այլ մեծամեծ մտածողների փի-լիսոփայութիւնքը լսել են լինում պարսկական բարբառում։

Ահա այսպիսի կայծեր են ընկած Իսլամի կազ-մուածքի մէջ, կայծեր, որք մի ազատ քամու էին կարօտ, որ յանկարծ բռնկին եւ հրդեհեն բոլոր իսլամականութիւնը, եւ այրելով, մաշելով գետնի, մաքրեն ու սրբեն նորան ամենայն պղտորութիւններից . . . ։

Մեր վիպասանութեան երկրորդ հատորում աւելի երկար նկարագրութիւնք լինելով Պարսկաստանի կեանքից, առ այժմ այդքանով միայն բաւականացնում ենք մեր ընթերցողը, աւելի ձանձրութիւն չտալով նորա բարի ու-շադրութեանը։ Դառնանք դէպ մեր խօսքը։

Մենք չը կամենալով մեր հայրենակիցք Պարսկաս-տանում մնային իւրեանց գերեզմանական անյայտութեան մէջ, եւ աշխատելով մեր արտաքին ազգայիններին շատ ու քիչ ծանօթութիւն տալ նոցա մեռելային վիճակից, մեր Թիֆլիսում աշակերտութեան ժամանակից (1855 թուականում) սկսած էինք պատրաստել մի վիպասանա-կան գրուածք, որ պատկերացնում էր Պարսկահայոց կեանքը իւր բոլոր աւերուած եւ այլանդակուած կերպարանք-ներով։ Եւ այդ հեղինակութիւնը մի փոքր ալսորժելի կա-ցուցանելու համար ծոյլ եւ անգրաւէր հասարակութեանը, յօրինեցինք նորան Հօմանսի ձեւով, անուն տալով նրան "Սալբի"։

"Սալբին" մեր նոյն ժամանակի գրականութեան հոգ-ւոյն համաձայն գրուած էր գրաբար լեզուով, բայց երբ

1858 թուին երեւեցաւ պատուական "Հիւսիսափայլ"ը՝ տալով մեր լետերատուրեային մի նոր հոգի, մի նոր կերպարանք, այն ժամանակ եւ մեք զգացիմք մեր սխալը, մեր վէպի հին լեզուն դէպի նորը փոխելով։

Ռոմանները ազգերի գրականութեան մէջ կատարում են ամենակարեւոր պաշտօն. Ռոմանները՝ որպէս ազգերի բարոյական եւ իմացական կեանքի պատմագրութիւնք, աւանդում են նոցա բարք ու վարքի, նոցա սովորութիւնների կենդանի պատկերքը գալոց սերնդին։ Ռոմանները են այն կախարդական հայելիքը, որոց մէջ ազգերը՝ տեսանելով իւրեանց կեանքի տգեղ եւ աւերուած պատկերքը, իւրեանց մոլութիւնների ամօթալի նկարագիրքը, ուսանում են շինել եւ բարեկարգել իւրեանց դրութիւնը։

Արեւելքիք իւրեանց գերբնական գաղափարներով վառուած երեւակայութեամբ՝ վաղուց սովոր են յօրինել վիպասանական հեքեաթներ, եւ արեւելքին ընդունակ է այդ առասպելական վէպերու միջից քաղել բարոյական խրատների ծաղիկները։ Բայց դժբախտաբար հայերի մէջ գրականութիւնը՝ ըստ մեծի մասին զգաղած լինելով եւ կեղեցական մատենագրութեամբ, այն եւս՝ հին եւ մեռած լեզուով, մինչեւ այս օր զուրկ է կացուցել իւր ընթերցողը հեղինակութեան այդ փափուկ եւ քնքոյշ մասնից, մինչեւ այս օր խիստ սակաւ է տուել ընթերցող հասարակութեանը մի գիրք որ մօտ լինէր նոցա արտերին եւ հասկացողութեան, մի գիրք, որոյ մէջ հայ մարդը նշմարէր իւր անձը եւ իւր կեանքը իսկութեամբ։ Ու եթէ կային մի քանի հատուկտոր վիպասանական գրքեր, բայց հայ ընթերցողը իւր արեղայական կրթութեամբ միշտ զզուանօք նայում էր նոցա վերայ. պատճառ, նոցա մէջ չկային

Digitized by Google

սրբոց աղօթքներ եւ նոքա չէին պատմում առասպելական հրաշքները իւրեանց սուրբ հարց։

Բայց Փանդազեան բնական է մարդոյն, եւ մարդկային միտքը միշտ վսեմութեամբ երեւակայում է գերբնական եւ աներեւոյթ իրողութեանց վերայ։

Այդ պատճառաւ անոտիապաշտութիւնը կամ անհաւատութիւնը մինչեւ լուսաւորութեան եւ մարդկային խելքի կատարելագործութեան ամենավերին աստիճանները՝ կենակից են մեզ հետ։ Դորա համար մեք միշտ սիրում ենք լսել առասպելներ կամ հեքեաթներ։ Ու այդ հեքեաթները կամ վիպասանութիւնքը առաւել քաղցր էին մեզ, երբ առնուած էին մեր կեանքից։

Անմահ Աբովեանի վէրք Հայաստանին ապացոյց է մեր խօսքերին, ամէն մի հայ մարդ, որքան անզգայ լինէր նա եւ սառնասիրտ, դարձեալ սիրում է այդ հրաշալի գիրքը։ — Այդ գիրքը թորում է ամէն մի հայի աչքերից արտասուք, երբեմն շարժում է նոցա ծիծաղը. իսկ շատ անգամ ուռեցնում է նոցա կուրծքերը մի վսեմ ազգասիրական ոգեւորութեամբ։ Ինչո՞ւ։ — Որովհետեւ ազգի հոգին խօսում է այդ գրքի խորքից ու ընթերցողը ճանաչում էր նորա թոյլ, կիսամեռ ձայնը . . . ։

Միտ դնելով այդ հանգամանքներին, մեք աւելի իրաւունք չունեմք բողոքել հայերի անընթերցասիրութեան համար, վասն զի մեզանում խիստ սակաւ էին այն գրքերը, որք կարողանային սնունդ տալ նոցա սրտերին եւ գրաւել նոցա միտքերը։ Մեր հին մատենագրութիւնքը իւրեանց գրաբար լեզուաւ անհասկանալի են շատերին, մի քանի նոր թարգմանութիւնք, թէ եւ աշխարհիկ լեզուաւ, դարձեալ չեն կարող յագեցնել նոցա հարցասիրութիւնը,

Digitized by Google

որովհետեւ նոցանից շատերը՝ կամ դպրոցական գրքեր լինելով, վեր են հասարակ ժողովուրդի հասկացողութիւնից, եւ կամ մի քանի վիպասանականքը, ուրիշ ազգերի կեանքից առնուածներ լինելով, խորթ են։ Այստեղ ճշմարտում է հայերի սովորական առածը, թէ "ուրիշի տան հացը փոր չէ կշտացնում"։

Եւ զարմանք չէ, որ մեք խիստ սակաւ ունիմք ազգային վիպասանական գրուածքներ, վասն զի մեր ուսումնականքը դժբախտաբար աւելի ընդունակ են թարգմանելու քան թէ ինքեանք մի բան գրելու։ Այլ եւ մի քանի գրողներ, բնակուելով Եւրոպիոյ այլ եւ այլ քաղաքներում, նոցա համար անբնական էր մի բան գրել իւրեանց ազգի վերայ, որովհետեւ նոքա խիստ սակաւ ծանօթ են իւրեանց ազգի կեանքին։ Հայութիւնը կարելի է ճանաչել Հայաստանիսարում, աղքատիկ խրճիթների մէջ, ուր նա ճնացել է իւր մաքուր նահապետական բարք ու վարքով, ուր նա կրում է իւր վերայ դժբախտութեան սեւ կնիքը։

Սալբիի մէջ ընթերցողը կարդալու է շատ փոքր բանաստեղծութիւնք, վիպասանական նիւթերը ըստ մեծ մասին առնուած են պատահական անցքերից։

Սալբիի հեղինակը օտար չէ Պարսկաստանին, նա ծնուել ու սնուել է մի պարսկական գիւղի մէջ. նա իւր մանկութիւնից միշտ զգացել է տիրող տէրութեան բռնակալութեանց դառն ներգործութիւնը, նա աչք է բացել եւ իւր շուրս կողմում տեսել է իւր յաղթահարուած եւ գերի ժողած ազգայինների չարչարանքները. նորա ականջները միշտ լսել են նոցա արտասուքը եւ լացը։

Սալբիի տպագրութեամբ ի լոյս հանելու մեր նպատակը՝ հեղինակի փառք վայելել չէր. մեք վաղուց հասկանալով թէ խիստ հեռու էիմք այդ ալբազան կոչումից,

Digitized by Google

արդէն թողնելով մեր սիրելի Պատնասը եւ Մուշանների դաշտը, դիմել էիմք դէպի վաճառականութիւն։ Եւ մտածելով թէ քանի նեղ շրջանակի մէջ փակուած է գրատպութեան ազատութիւնը մեր ազգի համար, եւ նախագուշակելով, թէ քանի հալածանքներ յարուցանելու էր այդ գիրքը իւր յօրինողին դէմ, ամենեւին միտք չունէիմք մեր գրուածքը մամուլին յանձնելով, մեզ համար մի առանձին գործ շինել անվերջ եւ տաղտկալի վիճաբանութիւնքը այլեւայլ նեղսիրտ կրիտիկոսների հետ։ Բայց չը կարողանալով չընդունել մի քանի բարեկամներիս խնդիրքը՝ յակամայից յօժարուեցայ ի լոյս հանել վէպի առաջին հատորը, սպասելով, եթէ լաւ ընդունելութիւն կը գտանէր դա մեր ազգի բարեմիտներէն, այնուհետեւ կարելի էր ի լոյս ընծայել նրա երկրորդ ու երրորդ հատորները, որք արդէն պատրաստ են։

Թէպէտ Սալբիի հեգնակը մինչեւ այժմ չէ կամեցել երեւալ գրական ասպարէզի մէջ, բայց մտածելով, որ հայ ազգը ապագայ ունի, եւ մի ապագայ լի փայլուն յոյսերով, այլ պատճառաւ աւելորդ չը համարեց նա իւր արդէն տասն տարի առաջ պատրաստած իւր հայրենակիցների կեանքի նկարագրութիւնքը, մամուլին յանձնելով, թողնել գալոց սերնդին։

Կրկնում եմք, հայ ազգը մի բախտաւոր ապագայ ունի։

Արդարեւ, նորա անցեալն մնցաւ արտասուքով, լացով եւ արիւնով. նորա ներկան դարձեալ ցաւալի է, բայց նորա ապագայի մասին բոլորովին անյոյս չեմք։

Ժամանակների մեծամեծ կոտորածներն կերան մաշեցին ամբողջ ազգեր։ Եւ կրօնքներն շատ անգամ պատճառ դարձան, որ մի ազգ կուլ գնաց միւսի մէջ։

Digitized by Google

Հայաստանի աշխարհագրական դիրքը պատճառ եղաւ այնքան շատ հայերի կորստեան, որովհետեւ այդ երկրի վրայով անցան դէպ արեւմուտք դիմող Ասիայի բոլոր արիւն թափողները եւ այդ երկրին հասուցին իւրեանց կատաղի բարբարոսութեան առաջին զարկը։

Բայց հայ ազգը իւր դառն կեանքի ընթացքում կատարեց այն թէ եւ արիւնոտ բայց փառաւոր յաղթութիւնը, այսինքն, դիմանալով բարբարոսների այնքան կորստաբեր հարուածքներին, նա ազատեց թշնամու սրից մօտ չորս ու կէս միլիոն հայեր, եւ հասցրուց մինչեւ տասնեւիններորդ դարուս վերջին կիսաբաժինը. — մինչեւ ժամանակի այդ ոսկեղէն միջնաբաշխանը՝ որ այսուհետեւ ազգերին մահ չկայ, որ այսուհետեւ ազգերի ամբողջութեան ապահովութիւնը դրուած է կատարեալ ազատութեան մէջ։ Նորա համար որ ազգայնութեան գաղափարը այս դարուս մէջ դուրս փայլեցաւ իւր մթին եւ խառնակ դրութիւնից, եւ կատարելագործուելով խելացի քաղաքագէտների մտածողութեամբ՝ ձեւ ու կերպարանք ստացաւ։

Մեզ թվում է, թէ անցել էին այն ժամանակները, երբ ազգերի մեծամեծ աւազակապետները՝ իւրեանց բարբարոս խումբերով, աշխարհի մի ծայրից մինչեւ միւսն արշաւում էին։ Մեզ թվում է թէ մօտ է այն բարեբախտ ժամանակը, երբ ազգայնութեան խնդիրը կ'ընդունէ իւր վճռական լուծումը, եւ ազատութիւնը, արդար օրէնքը ու իրաւունքը, որ կրօնքները չկարողացան աշխարհ բերել, պիտի ներս մտնեն մարդկային կեանքի մէջ քաղաքակրթութեան ու լուսաւորութեան ձեռքով։ Ահա այդ է մարդկութեան բարեկամների ցանկացած ոսկեղէն դարը. երբ բռնարարութիւնը կը վերջանայ, գերի եղած ազգերը ազա-

Digitized by Google

տութիւն կը գտնեն ու նոցա կորուսած ժառանգութիւնքը իւրեանց կը դառնան, եւ այնուհետեւ ոչ մի ազգ չի համարձակուի աւերելու միւսի հողի սահմանները։

— Այդ երբ... գուշակութիւն ես անում...։ Հարցնում են ինձանից։ Արդարեւ, ես մարգարէ չեմ, բայց այսքանը գիտեմ. Հայերին մի փառաւոր ապագայ է սպասում եւ հայերը մի այնպիսի ժամանակի հասուցել են իւրեանց, որ այնուհետեւ նոցա ազգութեանը մահ չը կայ։

— Ծ'ղբայր, — խօսքս կտրում է իմ առողջամիտ խօսակիցը — արդարեւ, լուսաւոր կոչուած ազգերի այժմեան քաղաքականութիւնը — այդ մեծ պոռնիկը — իւր կեղծաւոր եւ անոյշ լեզուով, իւր դիմակաւոր դէմքի անգուլուած փայլողութեամբ հրապուրում է քո աչերը, բայց հաւատացնում եմ քեզ բարեկամ, որ նորա այն քաղցրախօս շրթունքների մէջ թագուցած է մահաբեր թոյնը։ Չի թէպէտ, անցած, գնացած դարերում, մարդկութեան առաջին թշնամիքը՝ սլներով ու թլլերով էին սպանում ազգութիւնքը եւ բռնութեամբ էին կողոպտում նոցա գոյքը, բայց այժմ խորամանկ քաղաքականութեամբ ծծում են իւրեանց զոհերի արիւնը, եւ կողոպտում են նոցա ապրանքը։ Ու այդ մեծամեծ վամպիրները, մինչեւ այն աստիճան ծանրացուցել են խղճալի զոհերի քունը, մինչ նոքա ամենեւին չեն զգում, թէ սպառվում էր իւրեանց կեանքը...։ Այո կրօնքները տալիս են քեզ մի յոյս թէ կը գայ մի ժամանակ, երբ եսականութիւնը կը վերանայ, բոլոր ազգերը եւ բոլոր լեզուները կը միանան "մի հօտ մի հովիւ կը լինին," ասում է Աւետարանը. "Մուսաւաթ" — այսինքն հաշտութիւն կը լինի, ասում են մահմետականք։ Բոլոր աշխարհը մի տուն կը դառնայ, եւ բոլոր

Digitized by Google

ազգերը մի տան գերդաստան։ Ողբա միասին կը գործեն, միասին կը վաստակեն եւ միասին կ'ուտեն։ Ու ոչ ոք այն ժամանակ ասելու չէ այս ինչ բանը իմն է, այլ ամենայն ինչ հասարակաց կը լինի։

— Պարոն, — շարունակում է իմ խօսակիցը — ես չեմ ուզում ասել, թէ այդ գուշակութիւնք սուտ են, բայց հաւատացնում եմ քեզ, որ մի այդպիսի ժամանակ անթուելի տարիներով հեռու էր մեզանից։ Քրիստոս՝ այն սիրոյ եւ խաղաղութեան բարեկամը, առաջին . . . փորձն փորձից ընդհանուր մարդկութիւնը հաւասարելու եւ միացնելու համար։ Բայց առաջին քրիստոնեայքը մի քանի տարի միայն ունեցան իւրեանց մէջ "ամենայն ինչ հասարակաց", շուտով չարութեան դեւը բաժանեց նորանց միմեանցից։ Քրիստոսից շատ առաջ՝ Սատուռնոսը երկնքից աշխարհ բերեց ոսկեղէն դարը, բայց իտալացիք երկար չը վայելեցին նորա բանաստեղծական քաղցրութիւնքը։ Ու այդպէս, բարեկամ, ոչ միայն տակաւին եսականութիւնը սեպհական է ազգերին, այլ եւ բռնաբարութիւնը, նոցա մէկ նպատակն է։ Սոցանից ամէն մինը ցանկանում է ընդլայնել իւր երկրի սահմանները, բախտաւորել իւրեան՝ աշխարհի բոլոր բարիքներով, եւ մինչեւ երկինք հասուցանել իւր դրօշի փառքը։ Ողբա ուրախանում են իւրեանց աւազակութեամբ, մխիթարւում են երբ շատ սպանել էին, երբ շատ արիւն էին թափել, ողբա պարծենում են, երբ գերի էին արել իւրեանց նման մարդիկ։ Ու բաւական չէ, որ ողբա իւրեանց սրտի կրակը իւրեանց եղբայրների արիւնով մարում, զովացնում են, բայց ընդհանուր աշխարհին իւրեանց չար յաղթութեանց պարծանքը յայտնելէն յետոյ, իւրեանց չարագործութիւնքը առանց ամաչելու արձանագրում են պատմութեանց մէջ, եւ թողնում են գալոց սերնդին։

Digitized by Google

ժամանակակից կեղծաւոր գրականութիւնը բոլորում է այդ գրքերի վերայ ծաղկից պսակներ եւ անուշահոտ խնկեր է ծխում: Բայց գնացող եւ եկող ժամանակները կը թառամեցնեն այդ անիրաւութեան ծաղկները, եւ յաղթահարուած ազգերի սերունդները երկաթեայ գաւազանաւ կը դատեն այդ չարութեանց գրուածքը, եւ ընդհանուր մարդասիրութեան հոգին մինչեւ յաւիտեան կ'անիծէ եւ կը նզովէ նոցա եղեռնագործ հերոսները:

Ես բոլորովին համաձայն եմ իմ առողջամիտ խօսակցի հետ. արդարեւ, աշխարհի մեծամեծ արիւն թափողների պարծանքը դահիճի պարծանք է եւ մեծամեծ աշխարհակալների փառքը՝ մեծ աւազակների փառք:

Բայց մինչ բոլոր ազգերը իւրեանց փորի համար են գործում եւ իւրեանց փառքի համար միայն մտածում, ապա հայերը պիտի անտարբեր մնան իւրեանց վիճակի մէջ:

Բայց դժբախտաբար երկու բան միշտ արգելք են եղած եւ պիտի լինին հայերի յառաջադիմութեանը. մինը՝ նոցա ցրուած դրութիւնը զանազան դրօշների տակ, միւսը նոցա կրօնական բաժանմունքները զանազան եկեղեցիներում: Բայց կայ մի բան, որ աշխարհի զանազան ծայրերից կարող էր միաւորել հայերը հոգւով, մտքով եւ սրտով. — այն է ազգային «Էջը»:

Հայերի զանազան երկրներում ցրուած լինելու մասին առ այժմ խօսք չունիմ (այդ կը թողնեմք ժամանակի կամքին): Բայց մեծ յիմարութիւն է, երբ կրօնական կամ դաւանաբանական զանազանութեան պատճառաւ, մի ազգի մէջ մի եղբայր բաժանվում է միւսից. որովհետեւ, կրօնքը կամ կրօնական գաղափարը, դոլով վերացական եւ գերբնական մտածողութեան առարկայ, նորա ըմբռնումը ամէն

մարդ կարող է երեւակայել իւր զգացողութեան եւ իւր հասկացողութեան համաձայն: Այս է պատճառն, որ ասում եմք, կրօնի մէջ մարդ ազատ է:

Բայց ազգայնութեան գաղափարը մեր կեանքի գաղափարն է, նա տնօրինում է եւ բարւոքում է մեր բարոյական եւ նիւթական դրութիւնը, նա արտադրում է մեզ մեր մարդկայնութեան իրաւունքները: Ինչ մարդ որ չէ ճանաչում եւ չէ սիրում իւր ազգայնութիւնը, նա վերջանում է մարդ լինելուց:

Մեր կրօնական խնդրի մասին մի փոքր պարզաբար խոստովանութիւնը դարձեալ պիտի զրգիռ տայ շատ ախտերի, բայց մեք հնամոլ մոլեռանդների հետ գործ չունիմք, մեր խօսքը մեր ազգի բարեմիտների հետ է:

Կրօնափոխութիւն քարոզելը խիստ հեռու է վէպի հեղինակից, նա շատ լաւ գիտէ, որ հայերը կրօնական ազգ են, այսինքն նոքա չունեցով որեւիցէ քաղաքական պատրւսպարան, եւ իւրեանց կեանքի խորհուրդն միշտ համարելով իւրեանց կրօնքի պահպանութեան միմիայն նպատակը, մի այդպիսի մտքով կարողացել են պահպանել իւրեանց ազգի ամրողջութիւնը եւ ազատել նորան կլանող ժամանակի բերանից:

Այլ եւ մեր ընթերցողը պիտի հասկանայ, որ վիպասանութիւն կոչուած բանը՝ որեւիցէ վարդապետութիւնն չէ, այլ մի տեսարան, ուր հանդէս են բերուած զանազան անձինք զանազան դէմքերով եւ զանազան մտքերով: Նոցա գաղափարներին կամակից չէ հեղինակը եւ ո՛չ նոցա գործքերին ընկեր:

Վիպասանութեան մէջ հեղինակի պաշտօնը՝ նկարչի պաշտօն է, ուր պատկերացնում է նա մի ազգի մի քանի անդամները՝ իւրեանց բարոյական, իմացական եւ

Digitized by Google

նիւթական կերպարանքներով։ Ծոցա նպատակներին, նոցա դիտաւորութեանց մասին հեղինակը պատասխանատու չէ։

Վիպասանութեան լեզուն եւ զանազան դէմքերի զրոյցնելը ժողովրդի կենդանի խօսքն է. հեղինակի գրիչը լոկ թարգման է կենդանի բարբառին։ Այդ պատճառաւ, ազգերի կեանքից առնուած վիպասանութիւնքը — եթէ ուղիղ յարմարած էին նոքա ժողովուրդի կենցաղավարութեանը — ամենեւին մտածին եւ երեւակայական բանաստեղծութիւնք չեն։

ՀԵՂԻՆԱԿ

Digitized by Google

Ա.

ԽԼՎԼԻԿ, ԾԱՌԱՅՈՂ ԴԵՒԻԿԸ



Ի հին աւանդութիւն հաղորդում է հետեւեալ առասպելը.

Ատրպատականի հայաբնակ գիւղերից մինի մէջ, Զարեհաւան նահանգում, վաղուց արդէն բնակւում էր Ծերունի Բովասարը, բարի եւ երկիւղած հայ-քրիստոնեայ մարդը, որ ծագկաւանում հիւրասէր շինականներից մէկն էր՝ հարուստ իւր մի քանի օրաւար հողերով, խաղողաբեր այգիով եւ արհեստական անտառով։ Նրա ոչխարների հօտը եւ ձիերի ու մատակների երամակը՝ արածում էին իւր սեպհական արօտամարգերում։ Նրա ծանր եւ մեծ գութանը, նրա արծաթափայլ արօրը՝ ձգում էին իւր զօրեղ գոմէշները, գէր ու պարարտ եզները։

Աստուած քաղցր աչքով էր նայում այդ առաքինի ծերունու վրայ եւ նրա օրհնեալ գերդաստանը վայելում

էին լի ուրախութեամբ երջանիկ օրեր։ Բայց մի չար բախտով, յանկարծ մի փորձանք պատահեցաւ նրա մատակներին. ամբողջ երամակը, գժուած, կատաղած, օրերով վազվզում էին դաշտերում, մի րոպէ եւս հանգիստ չը գտնելով արածելու։ Ծրկիւղած ծերունին, համարելով այդ փորձանքը Աստուծոյ մի առանձին պատիժը, իսկոյն արբերի բարեխօսութիւններին դիմեց, մատաղ կտրելով, աղքատներին հաց բաժանելով եւ քահանաներին առատ փող բաշխելով, խնդրեց, որ պատարագ մատուցանեն եկեղեցում եւ իւր կատաղած անասունների համար աղօթեն Տիրոջ սեղանի վրայ։

Բայց հնարք չեղաւ։ Պարոն Յովասաբը՝ ճարահատեալ սկսաւ գործ դնել կախարդական զօրութիւններ։ Նա լսել էր իւր ծերունի պապիկից եւ իւր պառաւ մամիկից, թէ շատ անգամ փոքրիկ դեւիկները չափազանց սէր ունենին նստել ձիերի եւ մատակների վրայ ու աներեւութապար վազ տալ դաշտերում։ Գուցէ այդ ասածի հիման վրայ, պարոն Յովասաբի երամակը, գժուած, սասանուած, փախչում էին արօտների մէջ, տռտիկ տալիս, քացի գցում եւ ծլունկ լինում։

Այդ պատճառով, նա իմաստուն դէրվիշներին մի քանի թիւրիմացական թղթեր գրել տուեց, եւ կաշու մէջ կարել տալով, կախեց իւր անասունների վզից։ Թէպէտ մի փոքր թեթեւացաւ նրանց առաջին յուզմունքը եւ վրդովմունքը, բայց մատակները ոչ բոլորովին հանգիստ էին։ Վերջապէս ծերունին մի զարհուրելի վհուկ կնոջ խորհրդով՝ գտաւ մի հնար, որով ոչ միայն կարողացաւ բոլորովին հանգստացնել իւր չորքոտանիները, այլ եւ որսաց չար դեւիկներից միւնը։ Սա թամբում է իւր արաբական մատակներից միւնը կարմիր եւ խայտաճամուկ համեստով, նրա

Digitized by Google

նստատեղը օձուամ է ձիւթով, որի վրայ շարուամ է պոզովատի ասեղներ կարթաձեւ ծայրերով, եւ այդպէս թողնուամ է մնտակը արօտների մէջ արածելու։ Դեւերը, իրանց ամենօրեայ սովորութեան պէս, գալիս են իրանց դիւական խաղն խաղալու։ Մի մանուկ աղջիկ-դեւիկ, տեսնելով փառաւոր թամբած ձին, իսկոյն թռչուամ, նստուամ է նրա վրայ եւ սկսուամ է վաղեցնել դաշտերի մէջ։ Բայց խղճալին չէ գգուամ, որ իւր մարմինը շատ ամուր կերպով կպել էր ձիւթին, եւ ասեղները, շարուելով նրա հալաւների վրայ, իսկոյն երեւան էին կացուցել դեւիկը[1]։

Պ. Ծովասարը շուտով վրայ է հասնուամ։ Դեւը որքան աշխատուամ է, չէ կարողանուամ պոկ գալ ձիւթից։ Պ. Ծովասարը բռնուամ է ոգին, եւ անցկացնելով նրա վիզը պոզովատի օղամանեակ, ամրացնուամ է առջեւից կողպէքով, եւ նրա ականջներից քարշ տալով նոյնպէս պոզովատի փոքրիկ օղակներ, իւր որսը տուն է տանուամ։

Դեղեցիկ էր փոքրիկ դեւիկը իւր մնտաղ հասակուամ. նրա կերպարանքը բոլորովին նման էր ադամորդիներին. միմիայն նա ունէր իւր հետեւուամ խոզի պոչի նման մի երկայնութիւն, եւ նրա ոտերի կրունկները դէպի առաջ եւ մատները յետնակողմուամ էին։ Նա որպէս հնազանդ աղախին, երկար ժամանակ ծառայեց Ծովասարենց տան մէջ։ Նա աւելուամ էր նրանց տունը, սրահը եւ բակը, կթուամ էր կովերը, գոմէշները եւ ոչխարները։ Նա սափորներով

---

[1] Ինահաւատների մէջ կարծիք կայ, թէ դեւերը խոյս են տալիս պոզովատից, որովհետեւ պոզովատը դիպչելով նրանց, կարող էր լուծ եւ նրանց աներեւոյթ լինելու գաղանիքը։ Այդ պատճառով հայոց կնիկները կրում են իրանց պարանոցի վրայ պոզովատի օղամանեակներ եւ ճկոյթի վրայ պոզովատի մատանիներ, որ դեւերը անմերձենալի լինին իրանց։ Ժողովրդականների մօտ գրվում են պոզովատի դործիքներ, ազատ կացուցանելու նրանց դեւերի ազդեցութիւններից։

Digitized by Google

խմելու ջուր էր բերում աղբիւրից, օրօրում էր, երբեմն ծիծ էր տալիս նրանց փոքրիկ տղաներին։ Նա զանգում էր խմոր, հարում էր լանոցի, թխում էր հաց եւ աթաո, եւ առաւօտեան շատ շուտով վառում էր թոնիրը։

Իւր հնազանդութեան հետ երբեմն նա չափազանց կամակոր եւ յանդուգն էր։ Նրա հետ խօսում էին մի տեսակ ոճով, որին ասում են դիւական լեզու։ Օրինակ՝ փոխանակ ասելու "ջուրը բեր„ — "ջուրը տար„, ասում էին՝ "ջուրը մի բեր„ — "ջուրը մի տար„։ Որովհետեւ, եթէ ասէին՝ "բեր„, չէր բերելու, բայց եթէ ասէին "մի բեր„, իսկոյն կը բերէր։ Նրբ կամենում էին ասել "գնա, շուտ եկ„, ասում էին՝ "գնա ուշ եկ„։ Նա երբ շատ հարստութիւններ ու թանկագին բաներ էին պահանջում նրանից, իսկոյն բերում էր "Զիքենց„ տանից։

Արդէն շատ դարեր եւ տարիներ անցել գնացել էին, մինչ դեւը ծառայում էր Ծովասարենց տան մէջ։ Բայց այդ յաւերժական եւ անթառամելի մանկութեամբ ոգին, ընկնելով ադամորդու ձեռքում, պառաւել էր. նրա ծամերը սպիտակել էին, եւ նրա աչքերը, որ տեսնում էին եւ մութի մէջ, նրանց լոյսը պակասել էր, նա հազիւ էր տեսնում։ Այդ ցաւալի դրութեան մէջ նրան դարձեալ աշխատեցնում էին եւ ոչ ոք Ծովասարենց ազգատոհմից չէր լսում նրա աղաչանքները, որ արձակէր նրան։

Ծովասարենք դեւին անուանում էին Խլէլէկ, որի մայրը, անյիշելի յաւիտենից պառաւ դեւը, ամենայն տարի, Նաւասարդի վերջին գիշերում[1], միշտ գալիս էր Ծովասա-

---

[1] Մի աւանդութիւն, որ աւելի ապացոյց էր տալիս վերոգրեալ զրոյցներին, չէ կարելի չը հաղորդել մեր ընթերցողներին։ Մինչեւ այսօր, Հայաստանի շատ կողմերում, մանաւանդ Պարսկահայոց մէջ կայ այդ սովորութիւնը, որ Նաւասարդի վերջին գիշերում ամենուին չէն քնում,

Digitized by Google

լենց կտուրի վրայ եւ երդիկից լաց էր լինում, աղաղակում, եւ աղաչանք անում, որ իւր աղջիկը արձակէին, խոստանալով փոխարէնը վճարել մեծ փրկանք։

Դժուար էր գուշակել, թէ քանի բոլորակ դարեր անցել էին Պ. Ծովասարի մահից, երբ նրա թոռնիկներից մինը, լուսահոգի Մնջկիկը, յօժարութեամբ ազատել դեւիկ գերիին, միայն այն պայմանով, երբ Խլվլիկի մայրը կ'ուսուցանէր իրան մի հնար, որով ինքը կամ իւր որդիքը՝ կարողանային փրկել բոլոր դիւահարներին։ Դեւի մայրը, թէեւ դժուարութեամբ, այսուամենայնիւ, ճարահատեալ, ուսոյց Մնջկիկին կախարդական ուսմունքի գաղտնիքը եւ իրանց թագաւորի ու թագուհու անունները, պատուէր տալով, թէ երբ որեւիցէ դեւին հրամայում էին այդ անուններով՝ իսկոյն հալածական է լինում, իսկ երբ կանչում էին՝ տեսանելի կերպով երեւան է լինում եւ հնազանդվում է ամէն տեսակ ծառայութիւնների։ Բայց ամենաստահակ երդում տուեց Մնջկիկին, որ այդ գաղտնիքը, բացի իւր որդիներից, մի այլ մարդու չը յայտնէին։

Շրկար ժամանակ այդ գերբնական իմաստութեան գաղտնիքը ծածուկ մնաց Ծովասարենց ցեղի մէջ, առանց

եւ ոչ էլ իրանց փոքրիկ երեխաներին թոյլ են տալիս, որ քնեն, կամ միայնակ տանից դուրս գան մութի մէջ։ Մայրերը կամ հայրերը ամբողջ գիշերը արթուն են պահում բոլոր ընտանիքը։ Ընդհակառակ սովորաբար խաթում են իրանց երեխաներին տեսակ տեսակ մրգեղէններ, մանաւանդ ձմերուկ եւ խարբուզակ, ուտեցնելով, եւ վախեցնում են, որ չը քնեն, կամ միայնակ տանից դուրս չը գնան։ Որովհետեւ Խլվլիկը, որ նոյն գիշեր մեռ էր գալիս երդիկների վրայ, գաղտնալուր էր երեխաները, վրէժխնդիր լինելով այն հին թշնամութեանը, որով մի ժամանակ Ծովասարենք չարչարել էին նրան, երկար ծառայեցնելով իրանց տան մէջ։ Մայրերը միշտ վախեցնում էին իրանց երեխաներին Խլվլիկի անուամբ, որ չարութիւն չը գործեն եւ Խնչլիկից դուրս չիջատակը կենդանի պահուած է հին պառաւների զրոյցների մէջ։ Մեզանում մի մարդ, որ խիստ ճարտար է եւ արագաշարժ, կոչում են Խլվլիկ։

Digitized by Google

մի այլ մարդու յայտնելու։ Ուրանց տոհմի ծերու-նիները, որպէս իմաստուն նահապետներ, այդ մեծա-կշիռ գիտութեան ծածկամիտ խորհրդապահներն էին։ Անչափահասները այն ժամանակ միայն հաղորդակցութիւն կ՚ունենային այդ գիտութեան գաղտնիքին, երբ ստու-գիւ վկայուած կը լինէին իրանց հասատատմտութեան մասին։

Ծովասաբենք ոչ միայն իրանք կարողութիւն ունէին հրաշալի կերպով բժշկել դիւահարներին, այլ նրանց նուի-րական բնակարանի հողեղէն փոշին, հեռու երկիրներ տարուելով, երբ ցրվում էին դեւոտների վրայ, իսկոյն բժշկվում էր ախտաւորը...։

Ուրանց տան կտուրների վրայ, հողերի եւ փոշիների մէջ, թաւալվում էին բորոտները, եւ իրանց մարմին-ներում եռ ու քոր ունեցող հիւանդները։ Մի բարակ առուակ հոսում էր, Ծովասաբենց դրան առջեւից. դրա եզերքը հովանաւորուած էին ուռենի ծառերով։ Աւանդութիւնը վկայում է, այդ ուռենիները տնկուել էին այն ձիւղերից, որ ծաղկազարդի տօնում օրհնուած էին Տիրոջ սեղանի վրայ։ Այդ ահագին հսկայամարմին ծա-ռերը կենդանի, անբարբառ վկաներ էին, թէ այն գերբնա-կան իմաստութիւնը Ծովասաբենց ազգատոհմի մէջ, սկսուել էր ժամանակի խորին հնութիւնից։ Որովհետեւ, այդ ծե-րունի ուռենիքը կրում էին իրանց վրայ խորհրդաւոր անուանակոչութիւնը՝ "բժշկական ծառեր"։ Եւ արդարեւ, ամառնային տօթերի եղանակում, այդ նուիրական ծա-ռաստանի զովացուցիչ հովանիների տակ, տեսանելի են մահիճներ ջերմախտով եւ տենդացաւով հիւանդների, որոնք մի ջերմ յուսով սպասում էին գտնել առողջու-թիւն, լուացուելով առուակի սառն ջրի մէջ։ Մնահաւատ

Digitized by Google

պառաւները, նստած իրանց հիւանդների մօտ, ուռենի ճիւղերով հալածում էին նրանց երեսներից ճանճերը, եւ խուլ ու մաշուած ձայնով՝ երգում են այդ ծառերի գովասանութիւնները։

Ծաղկաւանի գերեզմանատան մէջ, որ դրած է մի բարձր, կրակապաշտական ատրուշաններից ձեւացած մոխրաբլուրի վրայ, նշանաւոր է մինչեւ այսօր իմաստուն Յունջիկի գերեզմանը։ Այդ լուսահոգու գերեզմանաքարի վրայ գտնվում է մի փոսակ. նրա խորութեան մէջ անձրեւի կաթիլներից շատ անգամ ձեւանում է մի փոքրիկ լճակ, որի ջրովը լուացվում էին բորոտները։ Ջերմախտով եւ այլ հիւանդութեամբ տկարացածները նոյնպէս լեղանում էին այն հրաշալի գերեզմանաքարի վրայ հասած լճակ ջրով։

Այդ գերբնական գիտութիւնը, Ծովասաբենց տոհմի մէջ, որդոց որդի անցնելով, որպէս մի ժառանգական սեպհականութիւն, եկել, հասել էր վարպետ-Պետրոսին, արուեստով ոսկերիչ՝ իմաստուն տղամարդուն, որ եւ եղաւ Ծովասաբենց համարեա վերջացած եւ սպառուած ցեղի վերջին ժառանգը։ Վարպետ-Պետրոսը իւր մանկութիւնից ուխտեց աշխարհ չը մտնել, չամուսնանալ, այլ առանձնանալով մի վանքում, միայնակեացների մօտ, ստացաւ մի տարապայման աբեղայական ուսում։ Նա երկար ժամանակ իւր անձը նուիրեց խստակեցութեան եւ ապրում էր անապատում, որպէս մի աղօթասէր ճգնաւոր։

Բայց նա շուտով հասկացաւ իւր սխալը. — մոտածելով, թէ մի այդպիսի կեանք վարելով, նա չէր ունենալու ոչ մի զաւակ եւ ոչ մի ժառանգ, եւ նրանց ցեղի իմաստութիւնը, անտարակոյս, կորչելու եւ անհետանալու էր աշխարհի երեսից։ Նա չը կամենալով մի

Digitized by Google

օտարական մարդու հաւատալ իրանց գաղտնիքը, — նա շուտով վճռեց թողնել անապատը եւ դառնալ դէպի աշխարհ։

Ցայտնի չէ, թէ ինչ եղանակով բախտը նրան հանդիպեցրեց օրիորդ Թարլանին, այն հրաշագեղ աղջկան, որին ջերմ սրտով սիրեց նա, շուտով կապելով նրա հետ իւր ամուսնական պսակը։ Բայց երկար տարիներ, նրանք ապրելով խաղաղութեամբ, չը հասան իրանց նպատակին. պատճառ, Աստուած չուզեց սրբել նրանց աչքերի արտասուքը եւ պարգեւել նրանց մի զաւակ։ Դրա համար վարպետ-Պետրոսը միշտ տրտմութեան մէջ էր, թէ Ծէրը պատժեց նրան, իւր անապատը թողնելու եւ աշխարհ մտնելու համար։

Վարպետ-Պետրոսը մի ջլուտ, երկայն եւ բարակ տղամարդ էր, նիհար եւ գունատ երեսով, խորն ընկած եւ շիջած աչքերով։ Նրա կերպարանքը սառն որպէս մարմարիոն, կարծես թէ, ցոյց էր տալիս, թէ նրա կեանքում միշտ չէր հեռացել նրանից անգութ հիւանդութիւնը։

Բայց թողնելով անապատը, թողնելով Սաղմոսը եւ Նարեկը, եւ գալով իւր հօր տունը, վարպետ-Պետրոսը՝ մի առանձին սիրով խորամուխ եղաւ այն բազմաթիւ կիսամաշ եւ քրքրուած գրչագիր մատեաններրի մէջ, որ մնացել էին նրա պապերից։ Այդ թիլսմայական գրքերի մէթին առեղծուածները շուտով գրաւեցին նրա խելքը եւ նա կրկին անձնատուր եղաւ խստակեցութեան։ Ամբողջ շաբաթներ, ամբողջ ամիսներ, առանձնացած իւր մռայլոտ աղջամղջին սենեակում, վարպետ-Պետրոսը, անտանելի ճգնութիւններով չարչարելով իւր մարմինը, ծոմով եւ պահեցողութեամբ մաշելով իւր անձը, այդ բրահմանական

Digitized by Google

միայնակեցութեամբ, անցուցանում էր իւր կեանքի ամենապատուական ժամերը։

Այդ մարդը կախարդ էր։

Նրա առանձնարանը նոյնպէս անտանելի էր, որպէս նրա տարապայման կեանքը։ Ո՞վ կարող էր առանց սոսկալու մտնել այնտեղ, ինչքա՛ր չէր տեսնելու նա այդ դժոխանման բնակարանում։ Աշխարհում ամենայն առարկաներ, որոնք բերում են զարհուրանք, որոնք բերում են սարսափ, բոլորը գտնվում են այնտեղ. — բուերի, չղջիկների չորացած մարմիններ, կապիկների, շների կառափներ, որոնց սպիտակ մակերեւոյթի վրայ սեւ դեղով գծած են դեւերի, սատանաների պատկերներ՝ այլանդակ եւ զարհուրելի կերպարանքներով։

Ոչ ոք այնպէս մեծ համարում չունէր վարպետ-Պետրոսի արուեստի եւ գիտութեան մասին, ոչ ոք այնպէս չէր աստուածացնում նրան, որպէս նրա կինը՝ Մելեանդա Թարլանը։ Դա մի երկիւղած եւ բարեպաշտ կին էր, որ ապրում էր միայն Աստուծոյ համար, հեռու իւր ամուսնի այրի խորհրդական առանձնարանից, իւր անձնական սենեակում, որ իւր ներքին կերպարանքով բացատրում էր նրանում բնակուող տիկնոջ բնաւորութիւնը եւ նրա կրօնամոլական ձաշակը։ Այդ սենեակի մի անկիւնում, պատուհանի հանդէպ, որ վարագուրած էր չքնեղէն քողով, քարշ էր ընկած մի կանթեղ, որ ծխրտում էր աղօտ լուսով։ Այստեղ, այդ ուխտեալ պատուհանի մէջ, դրուած են առանձին սրբութիւնները՝ — տ ն ա յ ի ն թ ե ր ա փ ի մ ն ե ր ը։ — Ի՞նչ։ — Սատանան գիտէ թէ ինչ... "Ծիծեռնակի կաթը միայն այնտեղ պակաս է„...։ Այնտեղ կը տեսնես մի մխիթարեան պատառի վրայ նկարուած գեղարդը եւ մի կեղտոտ հին Սուրբ Սարգսի պատ-

կեր, որ ձիաւորուած յափշտակում էր յոյնի աղջիկը։ Այլ եւ մի քանի ձիւղ ծաղկազարդի օրհնած ուռենի, մի փոքրիկ սրուակում լցուած ծննդեան աւուր խաչաջուր, մի այլ սրուակում Անգեղ-Աստուածածնայ տաճարի քարաժայռից ինքնաբուխ ձէթ, մի քանի հատ անապատների նշխարներ, խաչելութեան պատկերներով, Սուրբ Երուսաղէմի հող, Սուրբ Կարապետի մեղր ու ծամոն։ Մի քանի հատ օրհնութեան թղթեր, որ տ. Թալալեանը ուխտաւորներին փող տալով, բերել էր տուած Ս. Էջմիածնից եւ այլ վանքերից։

Բացի վերոյիշեալ սրբութիւնները՝ այդ խորհրդական պատուհանի մէջ՝ գտնվում էր եւ մի հին գրչագիր Աւետարան, մագաղաթի վրայ գրուած։ Ուխտաւորներին, որոնք գալիս էին համբուրելու այդ սուրբ գիրքը, տ. Թալալեանը միշտ պատմում էր, — թէ այդ Աւետարանը գրուած էր մի սուրբ անապատական ճգնաւորի գլխով, որ իւր բոլոր անտանելի ապաշխարութիւններով՝ երեք օրը մի անգամ ուտում էր մի հատ ցամաք հացի նշխարք։ Այդ սուրբ գիրքը մեծ հմայաւ, մեծ համարում ունէր ծաղկաւանի եւ նրա շրջակայ գիւղօրայքի մէջ։ Նա ձրի չէր ստացաւ իւր Ղեւոնդ-յոբոյց մականունը եւ այն քանի քանի տանեակ մեռաքսեայ թաշկինակները, որոնց փաթոթներով այնքան հաստացել էր նա, որ ոչ միայն մի քրդի էշերաթի գլուխը կը լինէր նրա չափ, այլ դժուար կը հասներ նրա մեծութեանը մի թափառական մանրավաճառ ջհուտի կապոցը, որին հազիւ հասնում էր նրա այծը՝ շալակել, եւ ըստ մարգարէական անէծքին, դռնից դուռ մուրացիկ ածել[1]։

---

1 Կարծես, այդ ազգի վրայ կատարուել է Դաւթի անէծքը, որի համար պօղոս եւս խօսում է. Հռոմ. ժա գլուխ, 10 համար. "խաւարեսցին

— Ի՞նչ է գրուած այդ գրքի մէջ, կարդա՛մ են, կը հարցնէ մէկը։

— Հը՛մ... կարդալ, անիծո՛ւմ ես, ո՛վ է այն Աստուծոյ մարդը, որ նրա գրող սուրբ ճգնաւորի նման, երեք օրն մի նշխարք ուտելով, եօթն տարի պաս եւ ծոմ պահելով, երկար աղօթքներից եւ վշտակրութիւնից յետոյ, արժանաւորութիւն ստանայ՝ մերձենալ նրան։

Տ. Թարլանը, իւր այնքան երկարամեայ ապաստաւորութեամբ, հազիւ թէ, երազում մի փոքր շնորհ էր գտել Սուրբ գրքի առջեւը, ամէն մի շաբաթ երեկոներ խունկ ծխելու, ամէն օր կանթեղը վառելու, եւ հարկաւորուած միջոցներում, նրա թաշկինակների եօթն փաթոթներն արձակելու, երբ պէտք էր մի մարդու երդում տալ նրանով, կամ դնել մի հիւանդի վրայ։

Տ. Թարլանը եւ նրա ամուսին վարպետ-Պետրոսը, ասես թէ, մի հատ ձու էին միջից կիսած։ Այդ երկու յար ու նման բնաւորութիւնները, կարծես յատուկներից նշանակուած էին միմեանց համար։ Մի զարմանալի համակրութիւն միաւորել էր երկուսի սրտերը, որ միմեանց համար այնպէս ջերմ եւ այնպէս ախտաբորբոք կերպով զարկում էին։

Տ. Թարլանը, այդ Պիւթիաս մարգարէուհին, էր որպէս իմաստնուհին Ծաղկաւանի բոլոր կանանց մէջ։ Նա, իւր լռին, ծածկամիտ եւ հանդարտ բնաւորութեամբ, էր միշտ անքննելի եւ խորախորհուրդ։ Նրա երկաթի հաս-

---

աչք նոցա, զի մի տեսցեն, եւ ձիւկուն նոցա հանապազ կոբացո՛ց։ Եւ արդարեւ, Իսրայէլացւոց ազգի մէջքերը, մի ժամանակ ծառած եգիպտացւոց քթոցների տակ, այժմ եւս գազում են իրանց վաճառքների ծանր շալակների տակ, որ նրանք ոտքոտքաւոր մեռ են ածում դէնից դուռ, քաղաքից քաղաք եւ գիւղից գիւղ։

Digitized by Google

տատուԹեամբ կամքը, նրա անդրդուելի համբերուԹիւնը, տուել էին նրա բնաւորուԹեանը միշտ անպղտոր եւ անփոփոխ յատկուԹիւններ։ Բայց նա՝ իւր չոր ու ցամաք ատնասրտուԹեան հետ՝ ունէր եւ մի բարի եւ ջերմեռանդ սիրտ դէպ Աստուծոյ կրօնքը եւ նրա պաշտօնը։ — ՍրբուԹեամբ պահում էր Տիրոջ շաբաԹները եւ կիւրակէները։ Սուրբ տօների օրերում միշտ նուիրում էր քաւուԹեան պատարագներ, զոհելով մատաղներ, բաժանելով աղքատներին եւ վարձատրելով Աստուծոյ սեղանի սպասաւորին, որ իւր համար բարեխօսական աղօթքներ կարդար սուրբ պատարագը մատուցանելու միջոցին։ Այդ բոլոր կրօնական ծախսերը լրացնում էր հաւատաւոր տիկինը իւր ձեռքի վաստակներով, Աստծուն առաւել հաճելի լինելու համար։

Տ. Թարլանը ունէր մեծակշիռ հաւարում իւր գիւղի կնիկների մէջ։ Ընդանց ամէնը՝ հարկաւորած դիպուածներում, դիմում էին նրա օգնուԹեանը եւ ամէնքը գնում էին նրանից խորհուրդ հարցնելու։ ԹէպէԹ գրուածք չէր նրա ծննդեան տարեԹիւը, բայց միտ դնելով նրա կերպարանքին, չէր կարելի համարել նրան աւելի քան երեսուն եւ հինգ տարեկան կին։ Նրա հասակը տակաւին բարձր եւ ուղիղ էր, նրա դէմքը՝ պատկառելի եւ վսեմ։ Մօրշոմը ԹէպէԹ խաղել էր մի քանի բարակ գծեր նրա լայն ճակատի վրայ, բայց անգուԹ ժամանակը, ասես ԹէԹ իննայել էր նրա, Թէեւ ցամաքած, բայց բոլորակ Թշերի վրայ՝ այն նուրբ վարդագոյն կարմրուԹիւնը, — նրա մանկուԹեան գարնան գեռ եւս անծերանալի գեղեցկուԹեան առհաւատչեան։ Նրա խելացի խաժ աչքերը տակաւին պահպանում էին իրանց վառվռուն փայլը։ Առհասարակ, մի կախարդական գրաւիչ արտասանուԹիւն, իւր վսեմ

Digitized by Google

բացատրութիւններով, արտափայլում էր նրա խորհրդա-
կան դէմքի վրայ, որ պարզ երեւացնում էր պատկերը մի
ջերմեռանդ եւ կրօնամոլ հոգու։

Թէպէտ մի բախտով, Ծոփան իւր կործանիչ ոտքը
տակաւին կոխած չէր այդ երկրի վրայ, բայց այսուամե-
նայնիւ, տ. Թարլանը ամենայն բանով որոշվում էր բոլոր
կնիկներից, որ բնակվում էին Ծաղկաւանում։ Նրա հա-
գուստները էին միշտ միօրինակ եւ հնամաշ, բայց մաքուր
եւ ատեպ լուանալուց կորուսած ծաղկանկարները։ Տ. Թար-
լանը, կարծես թէ, կշտացել էր աշխարհից։ Նա չէր
սիրում այն շռայլ կանացի պճրանքները եւ այն աւելորդ
զարդարանքները, որոնց այնպէս ջերմ սիրով անձնատուր
են արեւելեան կանայքը։ Նա չէր կրում իւր գագաթի
վրայ արծաթեայ բոլորակ պսակը (գօտին), որ դնում են
Ասիայի հայ կնիկները եւ ոչ նրա կրծքի վրայ փայլում
էր լանջաստղը՝ զարդարած գոհարներով։ Եւ ոչ նրա վզից
քարշ էին ընկած մանեակները, շարած գոյնզգոյն ուլունք-
ներով եւ զարդարած ոսկի եւ արծաթի դահեկաններով։
Նա չէր կրում իւր ձեռքերի վրայ ապարանջաններ, մատ-
ների վրայ՝ մատանիներ, եւ ոչ ականջներից գնդեր, եւ
ոչ քթիցը՝ օղակ։ Նրա թեւքերը չունէին բազեանդներ,
յուռուբթուլունք, այնպէս սիրուն զարդարած ուլունք-
ներով[1]։ Նա մեղք էր համարում որպէս մի կուռք զար-

---

[1] Ով որ կամենում է ստոյգ գաղափար ունենալ մեր Պարսկաստանի հայ կնիկների զարդարանքների վրայ, թող ուշադրութեամբ կարդայ Եղէկիէլի ԺԶ. գլխում 11 համարը։ "Եւ քեզ զարդարելով զարդարեցի, ու ձեռքերիդ վրայ ապարանջաններ դրի, պարանոցիդ վրայ մանեակ դրի։ Եւ քո քթիդ՝ օղակ, ականջներիդ՝ գնդեր, ու գլուխդ՝ պարծանաց պսակ դրի։ Եւ դու ոսկով եւ արծաթով զարդարուեցար"։ Այդ խոսքերից բոլոր զարդարանքները երեւում են հայ կնիկների վրայ։

Digitized by Google

դարել իւր անձը եւ խրատում էր միշտ ապրել չափաւորութեամբ։

Հասնելով մինչ այն հասակին, տ. Թալալեանը ապրել էր միշտ սրբութեամբ, նրա ձայնը չէր լսել մի այլ մարդ եւ ոչ նրա երեսը տեսել էր մի անհաւատարիմ աչք։ Նա իւր աշխիւ բնաւորութեամբ՝ միշտ եղել էր մի բարի օրինակ կանացի պարկեշտութեան եւ իւր անարատ բարք ու վարքով՝ մի խելացի խրատ իւր դրացի կնիկների համար։ Նա խիստ նախանձաւոր կերպով պահպարակում էր այն կնիկներին, որոնք փոփոխում էին իրանց հագուստների ձեւերը եւ չէին ամաչում տղամարդկանց հետ խօսելուց։

Digitized by Google

Բ.

ՈՒԽՏԵԱԼ ՀԱՐՄՆԱՑՈՒՆ

Մեզանում աղջիկները եւ ազատ տղամարդիկ չը գիտեն սէր եւ համարձակութիւն չունին իրանց համար ամուսնացուներ ընտրելու։ Նրանց սէրը, նրանց ընտրութիւնը ծնողների կամքն է։ Հայրը եւ մայրը իրանց աղջիկները որ տղային կամենան՝ կը տան, եւ իրանց տղաներին ինչ աղջիկ որ ուզեն՝ կը բերեն։ Նրանք լեզու չունին խօսելու կամ ընդդիմութիւն գործելու...։ Բայց աւելի ցաւալի է, երբ շատ անգամ այդ որդեվաճառ, անագորոյն ծնողները ոչ թէ մի աղջկայ գեղեցկութեանը, խելքին նայելով են բերում իրանց տղային, կամ մի պատանիի կատարելութեան նայելով են տալիս իրանց աղջկը, ոչ, այդ իրողութեան նրանք ամենեւին ուշադիր չեն լինում, այլ, հայրը մտածում է, այս ինչ մարդը լաւքաջ մարդ է, կարող է իրան շատ գործերի մէջ օգտակար լինել, թեւ ու թիկունք դառնալ եւ այդպէս, իւր ցաւերին կարեկից, իւր գինու ֆելլային[1] ընկեր գտնելու մտքով, իրանց անմեղ աղջիկները եւ տղամարդիկը գործիք ընտրելով՝ բարեկամութիւն եւ խնամութիւն են հաստատում։ Այսպիսի հանգամանքներում շատ անգամ պատահում է, ծնողները՝ իրանց անձնական փափագը լցնելու եւ իրենց նպատակին շուտ հասնելու համար, չը

[1] Ֆէլլա, գաւառ։

Digitized by Google

սպասելով մինչեւ իրանց զաւակները հասունանան՝ — երբեմն մի անչափահաս հինգ տարեկան աղջիկ պսակել են տալիս մի տարիքը առած տղամարդի հետ, եւ ընդհակառակն, մի հասուն օրիորդ պսակում են մի երեխայի հետ, եւ կամ երկու սեռի անչափահաս երեխայք — միմեանց հետ։ Ամենեւին չեն մտածում, թէ ինչ սարսափելի խռովութիւններ են պատահում մի զոյգ այր եւ կնոջ մէջ, երբ նորա առանց իրանց կամքի յօժարութեան, յիմար ծնողների ստիպմամբ էին մտնում ամուսնական լուծի տակ։ Մի չար բախտով, Պարսկաստանում կայ այն վատթար սովորութիւնը, որ մի աղջիկ եւ մի տղայ նշանադրվում էին միմեանց համար ծնողների կողմից, երբ նրանք դեռ օրօրոցում ծիծ էին ծծում, այլեւ՝ ծիծաղելի խնամութիւն՝ երբ դեռ եւս իրենց մօր արգանդումն էին...։ Թէպէտ շատ անգամ պատահում էր, որ ծնողները չէին հասնում իրանց նպատակին, որովհետեւ ծնուածները կամ երկուսն էլ արու էին լինում կամ էգ։

Հայաստանի սուրբերից ոմանք՝ որոնց անունով շինուած կայ մի վանք կամ մի եկեղեցի՝ — նշանաւոր են կացուցել իրանց համարումը ինչ-ինչ յատուկ հրաշագործութիւններով. բարեպաշտ ուխտաւորները գնալով նրանց դուռը՝ բժշկութիւն էին գտնում կամ ստանում էին իրանց փափագելի ֆօ-ըտտը[1]։ Օրինակ. Կորդուաց սարերի մէջ, վաստրականի կողմերում, դէպի Սուրբ Ծիրամօր վանքը ջերմ յոյսերով դիմում են ամէն կողմերից ուխտաւորներ, որ ցաւագարուած են բորոտութեան եւ մարմնի փտութեան ախտերով։ Այնտեղ են տարվում անդամալոյծները եւ տեսակ տեսակ խոցեր եւ ապականուած վէր-

[1] Ֆ-ը-ւ-տ = բաղձանք, փափագ։

քեր ունեցողները։ Այդ վանքի սրահներում գտնվում են բազմաթիւ այդ տեսակ հիւանդներ, որ ամբողջ տարիներով ճնում էին այնտեղ կերակրուելով վանքի հացով։ Նաեւ ամուլ կանայք գնում էին այնտեղ որդեծնութիւն հայցելու։ Հայկայ ձորի մէջ, Անգեղ գետի ափի մօտ հաստատուած է Սուրբ Աստուածածնին վանքը, որտեղ գնում են աչքացաւով տկարացած ուխտաւորներ, եւ այդ վանքի մէջ գտնուած ապառաժից "ինքնաբուղխ" ձիթով օծելով իրանց աչքերը, յոյս ունէին բժշկութիւն գտնել։ Փութիկու Սուրբ Գէորգ վանքը Մոգաց կողմերում նշանաւոր է դիւահարներ բժշկելու մէջ։

Մենք միտք չունինք գրելու վանքերի հրաշագործութիւնների մասին, միայն չէր կարելի մի քանի խօսք չասել Մշու դաշտի մէջ գտնուած Գլակայ Սուրբ Կարապետ վանքի մասին։ Իւր հրաշագործ զօրութիւններով՝ հայոց մէջ մեծ համարում ունի այդ վանքը։ Հայոց երգիչ "աշղները" ռամկաբանօրէն կոչում են այդ վանքը Ս֊ա֊պ֊ո֊ Ջանգէ Ա֊ղ֊ան Սուրբ Կարապետ։ Առաջին ածականը բարդուած է թուղքերէն եւ հայերէն երկու բառից. "մուրատատու" նշանակում է շնորհաբաշխ կամ փափագակատար։ Բայց չը գիտենք ինչ յարմարութիւն ունէր Սուրբ Կարապետին տալ երկրորդ ածականը — "Ջանգէ Ա֊ղ֊ան", այսինքն պատերազմող թագաւոր։

Շատ տեղերում հայերի մէջ կայ այն սովորութիւնը, որ մի տղամարդ չէ պսակվում մինչեւ Սուրբ Կարապետ գնացած չը լինի, իսկ պսակուելուց յետոյ անզաւակութեան դէպքում նա կրկին դիմում է Սուրբ Կարապետի դուռը եւ երբ իր նպատակին հասնում է՝ իւր առջնեկին անուն է դնում Յովհաննու եօթն անուններից մինը։

Digitized by Google

Աշուղները համարում են նրան իրենց քանքարի Մուսան. նրանից ոչ մինը համարձակութիւն չունէր սաղ վեր առնել եւ "մէյդան„ (հրապարակ, հանդէս) դուրս գալ՝ մինչեւ գնացած չը լինէր այդ վանքը, եւ երաղի մէջ ստացած չը լինէր Սուրբ Կարապետի ձեռքից մի գաւաթ էլեքի (աշխուժի) ըմպելի, եւ մինչեւ նրա սազը օրհնած չը լինէր վանքի վանահայրը: Նրա դուռը սիրով դիմում են իրենց արհեստը կատարելագործելու — լարախաղացներ, ըմբիշներ, եւ տեսակ տեսակ նուագածուներ, ոչ միայն հայ, այլ եւ թուրք եւ պարսիկներ: Կանանց արգելուած է այդ վանքը գնալ, որովհետեւ Սուրբ Յովհաննու գլխատման՝ մի տուփոտ կին էր պատճառ եղել, իսկ գնացողները չեն կարող գերեզմանի մատուռը մտնել եւ գերեզմանը համբուրել:

Ամէն մարդ, որ ուխտել է Սուրբ Կարապետ գնալու, պէտք է եօթն տարի շարունակ, Հոգեգալստից սկսած մինչեւ վարդավառ, եօթն շաբաթ պաս պահէ, որ արժանանայ նրա դուռը գնալուն: Սրանց ամէն մինի ուխտը ընդունելի էր, երբ Մուրատ գետի ափի մօտ քնելով այնպիսի մի երազ են տեսնում, որը որեւէ առնչութիւն ունի իրենց ուխտեալ նպատակի հետ: Թերեւս այդ իսկ պատճառով յիշեալ գետը (որ Եփրատի ճիւղերից մինն է) ստացել է "Ֆոլպա„ խորհրդական անունը, որովհետեւ, նրան հասած՝ ուխտաւորները Սուրբ Կարապետուց առնում էին իրանց Ֆոլպաները:

Վարպետ-Պետրոսը եւ նրա կին տ. Թարլանը, հասնելով իրենց կեանքի միջասահմանին՝ դեռ զաւակ չունէին, որ իրենց մահից յետոյ թող չը տար, որ տան ճրագը մարի եւ տան ծուխը կտրուի: Այդ հոգեմաշ տրտմութիւնը պղտորել էր նրանց պարզ եւ խաղաղ օրերը, նրանց կեանքի

Digitized by Google

ամենապատուական ժամերը։ Առաւել եւս այնպիսի մի երկրում, ուր հրէական հետեւողականութեամբ ամբողջ թիւնը Աստուծոյ առանձին պատիժ էր համարվում, եւ այդ նախատինքը տանջում էր խղճալիներին։

Վարպետ-Պետրոսը հարուստ չէր, բայց իւր արհեստով ոչ միայն երջանիկ պահպանում էր իւր փոքրիկ ընտանիքը, այլ եւ իւր համար փառաւոր տուն-տեղ հաստատելուց յետոյ՝ տէր եղաւ մի մեծ այգիի, որ կարող էր մի գիւղացիի տան ապրուստի բոլոր պիտոյքները հոգալ։ Նրա կինը, տ. Թարլանը ոչ կարդացել էր եւ ոչ էլ համարում ունէր դէպի կարդալը կամ ուսում կոչուած բաները. նրա կարծիքով բոլոր "կարդացուորը„ ժարդիկ չարագործ եւ մեղաւորներ են, նրանք դասվում են սատանաների կարգում։

Կամենալով շարժել Աստուծոյ եւ նրա սուրբերի գութը, նրանք բաշխում էին աղքատներին իրենց ցանքի եւ այգիի բերքի արդիւնքի մի որոշեալ մասը։ Տօն օրերին մատաղներ էին զոհում, այցելում էին հրաշագործ ուխտատեղիները, եւ ամէն կիւրակէմոի երեկոյ, լուսաւորում էին իրենց գիւղի եկեղեցին բազմաթիւ մոմերով, որպէս զի Աստուծոյ "սիրտը քաղցրանայ„ նրանց վրայ եւ բախտաւորէ նրանց ծերութիւնը — մի զաւակ բաշխելով։

Արդէն եօթնեւորդ տարին լրանում էր, վարպետ-Պետրոսը եւ իւր կին տ. Թարլանը սրբութեամբ պահում էին Սուրբ Կարապետի պասը։ Վալդավառից մի ամիս առաջ ուղեւորուեց բազմաթիւ ուխտաւորների քարաւանը դէպի Մուշ։ Նոյն ժամանակ վարպետ-Պետրոսը իւր կնոջ հետ ընկերակցելով Տէր Առաքելենց Մահտեսի Աւետիսին, որ իւր մտերիմ բարեկամն էր՝ ուխտաւորների հետ ճանապարհ ընկան։ Այդ անբախտ մարդը՝ Մահտեսի

Աւետիսը նոյնպէս անզաւակ կնոջ այր էր, որ դիմում էր Սուրբ Կարապետ նոյն յուսով, որ նրան մի որդի պարգեւէր:

Ուխտաւորները կրօնական խորին հոգեզմայլութեամբ ճանապարհին հանդիպում էին Հայաստանի բազմաթիւ վանքերին, որ այնքան բազմութեամբ հայոց մոլեռանդ ազգը շինել է ամէն մի սարի վրայ, ամէն մի ձորի մէջ, կղզիներում — ի զուր վատնելով իւր հարստութիւնը...: Այդ նանէպալճանանէզոմ — ծոյլերի եւ տխմարների բնակարաններում — հաւաքուելով ազգի մի կէսը-աջ եւ անպէտն մնալը, սեւ մազէ հագուստով սովոր են հրապուրել եւ թովել ջերմեռանդ ուխտագնացների սնահաւատութիւնը եւ դատարկել նրանց քսակները...:

Տանեւհինգ օրուայ ճանապարհորդութիւնից յետոյ, ուխտաւորները անցնելով Հաղբակ, Վան, Բաղէշ՝ ոտք դրին Մշոյ դաշտի հողի վրայ: Շրջ նրանք անցել էին Մուրատ գետը, որ երկու ժամուայ ճանապարհ է մինչեւ Սուրբ Կարապետի վանքը, ջերմեռանդ ուխտաւորները ձիուց վայր իջան, եւ սկսեցին բոբիկ ոտով, արտասուք թափելով, աղօթք մրմնջալով, երկրպագութիւն տալով — գնալ մինչեւ վանքը:

Վանքի սրահների, գաւիթների բոլոր իջեւանները լի էին ուխտաւորների բազմութեամբ: Վարպետ-Պետրոսը ներսը տեղ չը գտնելով՝ իւր ընկեր Մահտեսի Աւետիսի հետ — իրանց վրանը կազմեցին վանքի շրջապատից դուրս — մի բարձր սարաւանդի վրայ:

Մի օր, արեւածագից խիստ կանուխ, երբ օդը թարմ էր ու զովացնող, երբ նա ծորում էր թփերի տերեւների վրայ անուշահոտ եւ քաղցրահամ մեղը (կազպ), երբ մի բարեբոյր բուրմունք շնչում էր ամենուրեք՝ վարպետ-Պե-

Digitized by Google

տրոսը լռռվաճ գիշերային երաշներով՝ դուրս եկաւ վրանից, քայլերը ուղղեց դէպի սարը — իւր սրտի մէջ կուտակուած տխուր-տրտում զգացումները պատմելու ծառերին, ծաղկներին եւ հողմին։ Մի ամբողջ ժամ անձնատուր եղած դառն մտածումների, լուռ-մունջ թափառում էր նա մացառների մէջ, մինչեւ յոգնեց, եկաւ նստեց Լուսաղբիւրի մօտ, որի ափերը հովանաւորուած էին ուռենիներով։ Ձեռքերով գրկելով իւր ծնկները, նա նստած ականջ էր դնում ջրի կախարդական քչքչալուն-փչփչալուն, որ այնպէս հիանալի կերպով լսել էր լինում գիշերային խորին լռութեան մէջ։ Լուսինը վառեց իւր պայծառ ճրագը՝ հսկելու աշխարհի խաւար տան մէջ։ Բնութեան օրհնեցգունելը հնչեցրին անտառի խուլ լռութիւնը՝ փառաբանելով գիշերուայ լուսատուն։ Բայց վարպետ-Պետրոսի սիրտը չէր զգում ոչ մի ուրախութիւն, նա ընկղմուած էր դառն, մելամաղձային տխրութեան մէջ։

Ներեմն նա իր հետաքրքիր աչքերը դարձնում էր դէպի վանքի արեւելեան կողմը — Աւետեաց բլուրի վերայ, իւր մտքի մէջ պատկերացնելով այն կրօնական ժամանակների հոգին, երբ այդ սարի վրայ բնակվում էին վրանների մէջ չորս հարիւրի չափ ճգնաւորներ։ Ներեմն նայում էր Աւետեաց բլուրի հիւսիսային կողմը, դէպի Հաւատամ բլուրը, որից, Սուրբ Լուսաւորչի հրաշքով՝ լինն աղբիւրներից պարզ եւ յստակ ջուր է վազում, այդ առուակները միախառնուելով անցնում են վանքի միջով։ Ներեմն էլ նրա տեսողութիւնը հրապուրում էր վանքի հարաւային կողմում մի փոքրիկ մատուռ, ուր ճգնում էր եօթն խոտաճարակ աբեղաների միաբանութիւնը, այստեղ այժմ էլ կարելի էր տեսնել Անտոնի եւ Կլոնիդէսի դամբարանները։

Digitized by Google

Այդ հրաշալի տեսարանը, որ ամէն մի լոպէ հազարաւոր սրբազան զգացմունքներ էր ծնում նրա հոգու մէջ՝ պատկերացնելով նրա ուղեղի մէջ բազմաչարչար Հուսաւորչի եւ նրա հզօր օգնականի ծաղկաւէտ աշխատութիւնները քրիստոսական կրօնի համար — երբէք չը կարողացան ցրուել տխլութեան սեւաթոյր թուխպերը, որ կիտուած կուտակուած էին վարպետ-Պետրոսի սրտի վրայ:

Երկար ժամանակ նա նստած էր այսպէս եւ դառն կերպով լաց էր լինում, մինչեւ մի անհանգիստ քուն, որ աւելի նման էր մի ջերմախտական թմրութեան — տիրեց նրան, նա այնպէս, բաց ընկողմանեցաւ արձակ օդի մէջ:

Արդէն լուսոյ աստղը — Արուսեակը փողփողում էր դեռ եւս նոր բարձրացնելով իւր գլուխը սարերի գագաթներից: Թռչունների հազարաւոր տնտակները պատրաստվում էին փառաբանելու տունչեան լուսատուն: Վարպետ-Պետրոսը զարթնում է քնից: Այժմ նրա դէմքը արտայայտում էր ուրախութիւն, նա հանդարտ էր որպէս պայծառ երկինքը: Յանկարծ նա լսում է մի ձայն. —

— Բարեւ եղբայր:

— Աստծոյ բարին քեզ, Մահտեսի Աւետիս, հազար բարի, պատասխանում է վարպետ-Պետրոսը ուրախութեամբ ողջունելով:

— Երեւի շատ ժամանակ է, որ այստեղ նստած էք, աւելացրեց Մահտեսի Աւետիսը. — ես զարմացայ, երբ զարթնելով ձեզ չը գտայ վրանի մէջ:

— Դուք տակաւին քնած էիք, երբ ես կէս գիշերին զարթեցայ քնից. խառնափնթոր երազներ խռովեցրել էին իմ միտքը, եւ իմ սիրտը սաստիկ վշտովուած էր: Երկար նստեցի անկողնիս մէջ, կարդացի իմ առաւօտեան աղօթքները, բայց եւ այնպէս որեւէ թեթեւութիւն չը զգացի,

Digitized by Google

աւելի եւ աւելի անհանգիստ էի լինում: Կրկին գլուխս բարձին դրի, բայց քունը վաղուց փախել էր իմ աչքերից: Ես վճռեցի դուրս ելնել վրանից, մի փոքր ազատ շունչ առնել եւ կազդուրել իմ զօրութիւնը: Երկար, ես անխորհուրդ եւ անննպատակ թափառում էի գիշերային խաւարի մէջ մինչեւ եկայ այս աղբիւրի մօտ, դրա սառն ջրով լուացի երեսս. հոգիս մի փոքր զուարթութիւն զգայ: Ես ախորժանօք լսում էի թռչունների տաղերգը, որ եղանակում էին ուռենի ճիւղերի վրայ նստած: Այդ քաղցրալուր ձայները կախարդական զօրութեամբ թովեցին իմ ուշադրութիւնը, ես յափշտակուեցայ մի անբացատրելի հոգեմտյլութեամբ, եւ շուտով իմ աչքերը ծանրացան քնով:

Մինչ վարպետ-Պետրոսը պատմում էր իւր գիշերային անցքը, Մահտեսի Աւետիսը զարմանալի համակրութեամբ, աչքերը լարած, ականջ էր դնում, թէ ինչ պիտի լինի իւր բարեկամի զոյգների վերջը: Վարպետ-Պետրոսը շարունակեց:

— Երբ ես խորին քնի մէջ էի, մի նոր տեսիլք հրապուրում է երեւակայութիւնս, զգում եմ ինձ մի ընդարձակ անտառի մէջ. կարծես թէ մի բան որոնում էի այնտեղ, ուր օդը արբուած էր հիանալի անուշահոտութեամբ, եւ առաւօտեան ցօղը, որ հազարաւոր գոհարներով զարդարել էր խոտաբոյսերի եւ ծաղիկների գլուխները՝ թրջում էին իմ ոտերը: Ես աքանչանօք դիտում էի եղեւիններուի հսկայական բարձրութիւնները եւ նայելով այն ահագին, փտած եւ ապմատներից գետին գլորուած ծերունի մայրածառերին՝ զարհուրելով նկատում էի մահի անյաղթելի իշխանութիւնը, որ տիրում է բոլոր տիեզերքի վրայ: Մի քարաժայռի բարձրութիւնից տեսանելի էր մի

Digitized by Google

ջուվէժ, որ սարագագաթից հոսելով ձեւացնում էր մի հիանալի, ապակենման կամարակապ, որ այնքան գեղեցիկ փայլում էր հեռուից իւր թափանցիկ պայծառութեամբ։ Պարզ եւ ջինջ, մանիշակագոյն երկնքի վրայ փողփողում էր փայլուն գոյներով ծիածանը։ Մի ալեւոր եղջերու իւր մանուկ ձագերի հետ խմում էր սպիտակ փրփուրների միջից, որը, առաջանալով՝ ձեւացնում էր մի պայծառ առուակ, որ եւ ուղիղ ներս էր հոսում անտառի խորքում։ Ներք ես զմայլուած բնութեան այդ աքանչելի պատկերներով դիմում էի ուղիղ դէպի այդ տեսարանը՝ յանկարծ քարայրից դուրս եկաւ իմ հանդէպ մի ալեւոր անապատական մարդ։ Նա նմանում էր մի խստակեաց ճգնաւորի, որը իւր հոգու հանգստութիւնը գտել էր այդ անտառի լռութեան մէջ։ Նրա ուղտի բրդից յօրինած վերնազգեստը ծածկում էր սպիտակ քթանից շապիկը, որ իւր քղանցներով հասնում էր մինչեւ նրա բոբիկ ոտները։ Նրա մէջքը ամրացրած էր սեւ մաշկէ գօտիով։ Մի երկաթէ խաչ հաստ շղթայից քարշ էր ընկած նրա մերկ, արեւից սեւացած, թաւամազ կուրծքի վրայ։ Անապատականը մի բարձրահասակ եւ բարակ ծերունի էր։ Սպիտակ մօրուքը հասել էր մինչեւ մաշկեայ գօտին։ Նրա գլխի անհիւս ծամերը արծաթաջրած ալիքներով, անփոյթ, խառնափնթոր — ծածանվում էին մերկ թիկունքների վրայ։ Նրեսը՝ գունատ, նիհար, երկայնաձեւ՝ բայց պատկառելի, պարզ եւ զուարթ էր. ճակատը՝ լայն եւ բարձր, աչքերը խոժոռ եւ կրակոտ, որոց կենդանի արտափայլութիւնը պարզ տեսանելի էր թաւաւիսիտ յօնքերի տակից։ Իւր ձեռքին բռնած գլուխը կեռ գաւազանը, որ նմանում էր հովիւների ցուպին, նա մեզ գետնին եւ կանգնեց իմ առջեւ։ Այդ միջոցին, ով Մահտեսի, մտա-

Digitized by Google

բերում եմ՝ որ մենք երկուքս միասին էինք, դուք եւս ինձ մօտ էիք: Նա հանդարտ կերպով այսպէս խօսեց.

Ես մի ճգնաւոր եմ, ինձ անուանել են "Անապատում հնչող ձայն": Ես կերակրվում եմ մեղրով, որ օդը առատօրէն թափում է այս անտառի տերեւների վրայ[1], ես ուտում եմ եւ մարախ: Բայց որովհետեւ ձեր բախտը առաջնորդել է ձեզ ինձ հանդիպելու իմ լռին առանձնութեան մէջ, ահա հիւրասիրում եմ ձեզ մի զոյգ կարմիր խնձորներով, որ այդ անտառի ազնիւ պտուղներիցն են, եւ դուք բախտաւոր կը լինիք դրանցով: — Այս խօսքերը ասելուց յետոյ նա իւր կողքին քարշ ընկած մախաղից, որ աւելի նմանում էր հովուական պարկին, դուրս բերեց մի զոյգ կարմիր խնձոր, որոնք, կարծես թէ Եդեմի ծառերից քաղուած լինէին: Մինը տուեց ինձ, միւսը — քեզ, Մահտեսի Աւետիս. այնուհետեւ անհետացաւ նա ուռենեաց ծառաստանի մէջ: Թէպէտ մենք շատ աղաչեցինք որ կանգնէ, որ համբուրենք նրա ոտերը, նա ուշադրութիւն չը դարձրեց, գնաց —. հեռացաւ մեզանից: Այնուհետեւ ես իմ խնձորի կարմիր մասկերեւոյթի վրայ նայեցի ուրախութեամբ, եւ չը կարողացայ զսպել իմ զարմացքը՝ տեսնելով նրա կեղեւի վրայ ոսկէ տառերով գրուած "Սալըի" անունը: Դուք եւս, ոչ սակաւ զարմանալով, ցոյց տուիք ձեր ձեռքի խնձորի վրայ մի երկրորդ անուն, նոյնպէս ոսկէ տառերով գրուած "Ծովհաննէս": Մինչ մենք աքանչացած աչխատում էինք բացատրել այդ խորհրդական անուննելի գաղտնիքը, եւ

[1] Տարօնում, Սուրբ Կարապետի վանքի շրջակայ սարերում, թփերի տերեւների վրայ գոյանում է մի տեսակ մեղր որ կոչվում է "գէղէնգէտի" կամ "կազզ":

թէ ո՛վ էր այն երկնաւոր ալեւորը՝ յանկարծ զարթեցի եւ զգացի — երազ էր։

Երբ վարպետ-Պետրոսը աւարտել էր իւր երազի պատմութիւնը, զարդարած արեւելեան գեղեցկախօսութեան պաճուճանքով, Մահտեսի Աւետիսի կնճռոտ երեսը պարզուեց. նա փոխաբերուեց վարպետ-Պետրոսի վզով, գրկախառնուեց նրա հետ, ասելով.

— Ախ, իմ սիրելի բարեկամ, մինթէ չը գիտէք թէ ո՛վ է եղել այն երկնային ալեւորը — Սուրբ Կարապետը, իմ բարեկամ. փառք տուէք Աստծուն, մեր ուխտը ընդունելի է եղել երկնքում...։ Ցերը Սուրբ Կարապետի բարեխօսութեամբ կը կատարէ մեր փափագները...։ Ապա ինչ են նշանակում այն երկու անուննները — երկու խընձորների վրայ։

Վարպետ-Պետրոսը տեսաւ, որ իւր բարեկամի ասածները հեռու չէին ճշմարտութիւնից, եւ իրօք նրա սրտում տպաւորուեց այն միտքը, թէ իւր երազը մի այլ խորհուրդ չունէր քան թէ իւր լսածները Մահտեսի Աւետիսից։

— Շիշտ է ձեր խօսքը, Մահտեսի, կրկնեց վարպետ-Պետրոսը. ճշմարիտ, դուք մի կատարեալ երազահան էք։ Նըբայր, ես մտաբերում եմ երեխայութեանս ժամանակ լսած հէքեաթները իմ պառաւ տատիցս, որպիսի են Թրհարի եւ Զօհրայի, Շահ-Սմայելի եւ այլ սիրավէպերը։ Նրանց ծնողները, որ անժառանգ եղբայրներ են եղել, երազում տեսնում են մի դէրվիշ, որ նրանց տուել է խնձոր եւ դրանով նրանք ծնել են զաւակներ՝ առաջուց ուխտելով ամուսնացնել միմեանց հետ ծնուածները, եթէ նրանք երկսեռ լինէին։

Digitized by Google

— Ախ, եղբայր, այդ ուխտը մենք եւս անենք, նրա խօսքը կտրեց Մահտեսի Աւետիսը։

— Շատ բարի, շատ լաւ, ուրախանալով պատասխանեց վարպետ-Պետրոսը. մեր հաւատարիմ բարեկամութիւնը թող լինի յաւիտենական։

— Իմ ձորների վրայ գրուած "Ծովհաննէս" — "Սալքի" անուննները նոյնպէս ցոյց են տալիս, թէ ծնուածները տղայ եւ աղջիկ են լինելու...։

— Անտարակոյս... անտարակոյս...։

Աստուծոյ լոյսը բացուեց։

Վանքի զանգակների խուլ եւ ձգական ձայնը լսելի եղաւ թփապատ բլուրների մէջ։ Ժամհարները սկսեցին հրաւիրական կոչ կարդալ ուխտաւորների իջեւանների առջեւ, որ աղօթքի գան։

Երկու բարեկամները լի բախտաւոր յոյսերով գնացին վանք։ Միաբաններից մի սրբակրօն վարդապետի (որ այն օր պատարագիչ էր Տիրոջ Սեղանի վրայ) առաջարկեցին առատ "յիշող" — մի քանի աշրաֆի[1], որ նրանց ուխտադրութեան հաստատութեան համար աղօթէր պատարագի միջոցին։ Այն օր նրանք մատաղ մորթեցին, բաժանեցին աղքատներին, եւ հրաւիրեցին պատարագիչ վարդապետին ճաշելու իրենց վրանում։ Վարդապետը ճաշից յետոյ օրհնելով մի կտոր հաց տուեց Մահտեսի Աւետիսի եւ վարպետ-Պետրոսի ձեռքը, նրանք կտրեցին հացը, կերան, գոհացան՝ կրկին ուխտելով իրենց խնամութեան մասին։

Արդարեւ տուն դառնալուց յետոյ՝ մի որոշեալ ժամանակից յետոյ վարպետ-Պետրոսին ծնվում է մի աղջիկ,

[1] Աշրաֆի = պարսկական ոսկեդրամ, որ հաւասար է մօտ 2 րուբլու կամ 4 շիլինգի։

Digitized by Google

որի անունը դնում են Սալքի, իսկ Մահտեսի Աւետիսին ծնվում է մի արու զաւակ, որ կոչեցին Յովհաննէս, որ եւ իւր պատանեկութեան հասակում վայելչագեղ եւ քաջ տղամարդ լինելուն համար ստացաւ Փրիդովսիի հերոսի անունը — Ռուստամ: Սրանք օրօրոցում նշանագրուեցան լինելու միմեանց հարս ու փեսայ...:

Գ.

ԼԻԼԻԹ Ը

Ծովասաբենց վարպետ-Պետրոսը եւ նրա կինը՝ տիկին Թարլանը ծնողական բարեխնամ հոգաբարձութեամբ անուցանում էին իրենց մի հատիկ զաւակը՝ փոքրիկ Սալբին, որի քնքոյշ եւ ազնիւ կազմուածքը, հրեշտակային դէմքը — առիթ էին տալիս գուշակելու, թէ նրա պատանեկութեան գարունը ծաղկելու էր գեղեցկութեան բոլոր անուշահոտ վարդերով։ Փոքրիկ Սալբին ունէր սեւ մետաքսանման մազեր, թուխ վառվռուն աչեր, նուրբ-կամարաձեւ յօնքեր, բոլորակ եւ լիքն երես, փափուկ վարդագոյն թշեր։ Նա աճում, մեծանում էր անհամեմատ արագութեամբ։ Նրա ուղիղ հասակը ձգվում էր դէպի բարձր, որպէս մի միշտականաչ սալքի ծառ (նոճի)։

Նրա դաստիարակութիւնը, սկսեալ մանկութիւնից՝ առաջ էր գնում նրա ծնողների գաղափարների եւ ձաշակի համաձայն։ Բայց ի՞նչ օրինաւոր ուսում եւ դաստիարակութիւն կարող էր ստանալ խղճալի Սալբին մի այնպիսի՛ հօրից եւ մօրից, որոց խելքը-միտքը վարակուած էր կախարդական առեղծուածներով, որոց բոլոր ու վարքը ցոյց էին տալիս մոգական մոլեկրօնութիւն, որոց բնաւորութիւնը, խօսակցութիւնը, օրինակները եւ ուսմունքը՝ որ ամէն օր տեսնում եւ լսում էր Սալբին՝ բաւական էին մանկութիւնից տպաւորելու նրա մաքուր սրտի վրայ

Digitized by Google

յիմար անուտիապաշտութիւնը եւ մոլեկան անահաւատութիւնը։

Մի գիշեր վարպետ-Պետրոսը եւ տ. Թարլանը՝ երկուսը միասին՝ նստած խօսում էին եւ փոքրիկ Սալքին նրանց ականջ էր դնում։

— Վայ խեղճիկ, ինչպէս մեռաւ Մեհրապենց հարսը, ասաց յանկարծ տ. Թարլանը ափսոսելով։

— Մեհրապենց հա՞րսը, մեռա՞ւ, հարցրեց վարպետ-Պետրոսը զարմանալով։

— Հա՛, այսօր իրիկնապահին. բայց ափսո՛ս, ինչ աղնիւ հոգի էր այդ չքնաղագեղ կնամարդը։ Այ՛ն, նա մեռաւ իւր ծաղկափթիթ հասակում...։

— Ափսո՛ս, ափսո՛ս, կրկնեց վարպետ-Պետրոսը. վայ նրա անբախտ տղամարդին... բայց չը գիտէք նրա մահուան պատճառը։

— Իւր տղայի ծնունդը. չը կարողացաւ ազատուել։

— Ախ, որքան անմեղ տղաներ եւ որքան խղճալի մայրեր փչացրել են եւ պիտի փչացնեն այդ անգութ մանկաբարձ պառաւները իրանց յիմարութեամբ...։

— Մանկաբարձ պառաւը մեղ չէ ունեցել. ասում են, որ հանգուցեալի լերդը գողացել էին "Դեղնէց աղէնէրը,, (դեւերը), առարկեց տ. Թարլանը, երեսը խաչակնքելով։

— Մի այդպիսի դիպուածում գալեհաս մեղը մանկաբարձին է, որովհետեւ նրանք կարող էին գործ դնել ծննդականներին հարկաւոր զգուշութիւնները։

— Որպիսի՞ զգուշութիւններ։

— Ահա այդպիսի. — շուրջանակի խաչել տան մէջ, չորս պատերի երեսին, մի սեւ գիծ, եւ մի գիծ եւս դրան շէմքի առջեւ, կարգալով այդ դործողութիւններին

պատշաճ աղօթքները՝ որ բոլոր մանկաբարձները գիտեն։ Այդ նախազգուշութիւնները կ՚արգելեն դեւերին երդիկներից կամ դռնից մտնել եւ մերձենալ Ծննդկանին։ Բայց շատ անգամ պատահել է, որ նախազգուշութիւններ կատարելուց առաջ, ներս մտած են լինում "ըսբ+եբը,,։ Այդ ժամանակ պէտք է դնել Ծննդկանի չորս կողմը մերկ դաշոյններ, պողովատից շինած գործիքներ եւ արձակել մի հրացան։ Ինչ երբ ազատուել է Ծննդկանը՝ պառկած տեղը, գրելու է նրա վերմակի չորս անկիւնների վրայ երեք հրեշտակների խորհրդական անուննները — Սանվի, Սանսանվի, Սամանկալֆ, եւ "ի բաց լեցի Լիլիթ,,։

— Ո՞վ է այդ "Լիլիթը,,, նրա խօսքը կտրեց տ. Թարլանը։

— Մի՞թէ չը գիտէք, խօսեց վարպետ-Պետրոսը. Լիլիթը է դեւերի մի նշանաւոր ցեղի նահապետուհին, որ մարդկային ազգի հետ հին ժամանակներից պատճառով՝ ուխտել է միշտ մահ նիւթել Ծննդականներին եւ նրանց տղաներին։ Դրա համար է, որ վերմակի անկիւնների վրայ գրուում են այն երեք հրեշտակների անուննները, որոնցից հալածվում է չար Լիլիթը։

— Ի՞նչ գաղտնիք կայ դրա մէջ. դուք չէք պատմել մինչեւ այսօր մի այդպիսի բան[1]։

Վարպետ-Պետրոսը կարեւոր համարեց պատմել իւր կնոջը Լիլիթի պատմութիւնը, եւ սկսեց այսպէս.

— "Շատ նախամօրից առաջ՝ Աստուած ստեղծեց հայր Ադամի համար ընկեր — Լիլիթը. դա Ադամի մօտ

---

1 Բացի զանազան կախարդական եւ անապաշտական արարողութիւններից, որ հայոց կանայք գործադրում են Ծննդականների վրայ, Պարսկահայոց մէջ նոր Ծննդականները մինչեւ քառասուն օր — իրանց երեխայի ծնունդից յետոյ — տանից դէպի լոյս դուրս չեն գալիս, արեւի երեսը չեն տեսնում. Ծննդականը իւր խուցից միայն գիշերներն է դուրս գալիս։

Digitized by Google

երկար չը մնաց, այլ խոովելով հեռացաւ նրանից, "ՏԿը,, բողոքեց նախահայրը, "կինը, որ ինձ տուիր՝ չէ հնազանդւում. նա թողեց եւ հեռացաւ ինձնից,,: Այն ժամանակ Աստուած ուղարկեց երեք հրեշտակներ — Սանվէ, Սասանվէ եւ Սամանկալէֆ, որ հաշտեցնեն Լիլիթը Ադամի հետ: Հրեշտակները գտան Լիլիթին այն ծովի վրայ, ուր կորաւ Փարաւոնը իւր զօրքերի հետ. յայտնեցին Աստուծոյ հրամանը, թէ, եթէ նա չը հնազանդուէր Ադամին եւ չը հաշտուէր նրա հետ՝ Տիրոջ անէծքով օրը նրա որդիներից հարիւրը պիտի մեռնէին: Լիլիթը չը յօժարեց վերադառնալ Ադամի մօտ: Հրեշտակները կամեցան ձգել նրան ծովի ալիքների մէջ: Լիլիթը պաղատեց որ չը նեղեն եւ չը չարչարեն իրան, եւ երդուեց, ասելով. — Թէպէտ ես մտադիր էի այսուհետեւ վնասել ադամորդիների արու տղաներին՝ նրանց ծնունդից ութ օր յետոյ, եւ էգերին՝ երեսուն օր յետոյ, բայց ես դաշն եմ կապում ձեզ հետ, եւ անկեղծ երդումով հաստատում եմ իմ պայմանները՝ այլ եւս չը վնասել մարդոց որդիների տղայոց՝ երբ տեսնէի ձեր անունները արձանագրուած նրանց վերմակների անկիւնի վերայ,,: (Ու այսպէս, ամէն օր մեռնում են նրա ծնունդներից հարիւր հոգի:)

Քանի այդ թալմուտական[1] առասպելը մտնում էր իւր վերջին, փոքրիկ Սալքին դողում էր վախից: Լիլիթի եւ դեւերի պատմութիւնը զարթեցրին նրա սրտում մի անսովոր երկիւղ: Նա չը կարողացաւ աւելի դիմանալ եւ խնդրեց մօրը, որ քնացնէր իրեն: Բայց խեղճ երեխան չը

[1] Այդ հրէական աւանդութիւնը, որ նրանք մինչեւ այսօր գործադրում են ծննդկանների վրայ՝ հայերի մէջ ընդհանուր սովորութիւն չէ. բայց շատ անգամ կախարդ գիտնականները դուրս են գնում, երբ մի կնոջ երեխաները մեռնում են ծնելուց յետոյ:

Digitized by Google

կարողացաւ քննել. ամբողջ գիշերը նա անցրեց մի անհանգիստ դրութեան մէջ: Ծառն եւ զարհուրելի երազները խռովում էին նրա քունը. նա շատ անգամ քնաշորերից ցատկում եւ փախչում էր կոչելով. "վայ դեւերը... դեւերը,,: Վարպետ-Պետրոսը եւ տ. Թարլանը գործադրեցին իրենց կախարդական բոլոր գիտութիւնը, բայց չը կարողացան հանգստացնել երեխային. արեւաբացին նա մի փոքր քնեց, բայց այնուհետեւ չը կարողացաւ վեր կենալ մահճից, որովհետեւ սաստիկ վառվում էր ջերմախտով:

Փոքրիկ Սալբիի հիւանդութիւնը ծանր հարուած պատճառեց իր ծնողների սրտին: Վարպետ-Պետրոսը եւ տ. Թարլանը անհնարին տխրութեան մէջ, բոլորովին յուսահատուած երեխայի միւսանգամ առողջանալու մասին՝ միշտ լաց էին լինում: Նրանք ամենեւին չէին մտածում, թէ նրա հիւանդանալու պատճառը եղել է իրանց գիշերային խօսակցութիւնը դեւերի մասին, այլ առաւել կարծում էին թէ անպատճառ այն չար Լիլիթը պիտի վնասած լինի երեխային՝ իւր անունը յիշելու համար:

Առաւօտեան, լսելով Սալբիի հիւանդութիւնը, Ծովասաբենց տունը մտան նրանց դրկիցները՝ Ծերունի Մկրտիչը իւր կնոջ Մարթայի հետ. — "բարձը բարի լինի..., Աստուած հիւանդութիւն չը տայ,, ասելով գնացին նստեցին հիւանդի մահճի մօտ:

— Քանի՞ օր է, որ հիւանդ է Սալբին, հարցրեց պառաւ Մարթան առժամանակեայ լռութիւնից յետոյ:

— Գիշերուանից, պատասխանեց տ. Թարլանը վշտալի ձայնով:

— Մինթէ այսքան ժամանակ անհնա՞ր էք թողել, եւ մի ձար չէք արել:

Digitized by Google

— Ի՞նչ ձայ... իմ ձայը փնացել է Աստուած... բայց այն հնարները, որ կարող է գործադրել ադամորդու խելքը՝ բոլորը գործ եմ դրել:

— Ի՞նչ էք արել, կրկնեց հետաքրքրութեամբ պառաւը:

— Հիւանդութեան սկզբում, կարծելով որ "լաթ ապով պոռ-ին,, իմ երեխային, առաւօտեան թոնրում հաց թխելու միջոցին՝ ալիւրի անխմոր շաղախից շինեցի փոքրիկ գնդակներ եւ "սոմոռնի,, ասելով ձգեցի թոնրի մէջ, կրակի վրայ, եւ իրաւ, գնդակները սաստկութեամբ տրաքեցան՝ չար աչքերն էլ նրանց հետ:

— Այլ եւս ոչի՞նչ:

— Երբ տեսայ գնդակները օգուտ չարեցին, առաջ տարաւ հիւանդի մայրը, իսկոյն մի մարդ ուղարկեցի Չհուդ Խախամ-Շմէնթօյի մօտ. նա գրքին նայելով ասել է՝ "լաբնց,, է, թշնամի ոգիներից հարուածէ ստացել. նա հաւկիթի վրայ, սեւ հաւի արիւնով գրել էր մի բան՝ պատուիրելով, որ թաղենք գերեզմանատան ճանապարհի վրայ:

— Ինչո՞ւ դուք "մէօհտաջ„ (կարօտ) եղաք Չհուդին, միւս կողմից նրա խօսքը կտրեց Ծերունի Մկրտիչը — այդ կարող էր անել եւ ձեր ամուսին այրը, նա այդ գիտութեան (կախարդութեան) մէջ գերազանց է բոլորից:

— Այդ ճիշտ է, պատասխանեց տ. Թալալեանը — բայց չէք լսել որ "Մարդ իւր մեռելը չէ կարող թաղել„. բացի այդ, ինձ ասացին, որ Ծնողների "թղթերը„ չեն ներգործում իրենց զաւակների վրայ. այդ պատճառով մի այլ "ֆննկ„ տուի տէր Աբրահամը գրեց. գիտէք, նրա գիրը սարը կը ձեղքէ...: Այդ ֆննկը տէրտէրի պատուէրով, եօթն աղբիւրի ջրով տրորեցինք եւ թասի մէջ,

Digitized by Google

գիշերը "ասպղ=նէ„ դրինք, առաւօտեան լուսաբացին տուինք խմեց: Բայց եւ այնպէս, այդ բոլոր զօրաւոր արարողութիւնները ոչ մի օգուտ չարեցին իմ երեխա:

— Զարմանալի է, իրաւ զարմանալի, գլուխը շարժելով կրկնեց Ծերունի Մկրտիչը:

Այդ միջոցին վարպետ-Պետրոսը հիւանդի մօտ չէր: Նա իւր առանձնարանում, ով գիտէ, ինչ գործողութեամբ էր զբաղուած՝ իւր երեխան մահից փրկելու համար: Բայց պառաւ Մարթան երկար լուսակցութիւնից, երկար խորհրդակցութիւնից յետոյ — պատուիրեց, որ առաւօտեան ժամ եւ պատարագ անել տան, աղքատներին հաց բաշխեն եւ շահեն սրբերի կամքը: Այնուհետեւ դուրս գնաց իւր ծերունի ամուսնու հետ՝ մաղթելով հիւանդին առողջութիւն:

Յաջորդ օրուայ առաւօտեան Ծաղկաւանի Սուրբ Գէորգ եկեղեցու մէջ հիւանդի համար պատարագ մատուցվելուց յետոյ, բոլոր ժողովուրդը երեք անգամ "Տէր ողորմեա„ ասելուց յետոյ, երբ ժամը դուրս եկաւ, բոլոր եկեղեցականները հասարակ ժողովրդի հետ միասին՝ գնացին Յովասաբենց տունը: Այստեղ տիկին Թաղլանը կէս գիշերից հոգացել էր առատ եւ ճոխ "ժամուհաց„: Երբ բոլորը կերան-լիացան, ոտքի եղան, եւ մի մի վառած մոմ ձեռքերին բռնած "պաշտում„ կատարեցին, եւ հիւանդին առողջութիւն լնդրելով, Յովասաբենց ննջեցեալներին հանգիստ, արքայութիւն, եւ կենդանացը բարի յաջողութիւն մաղթելով՝ դուրս գնացին: Բայց Տէր Մարուքը՝ Յովասաբենց ծխատէր քահանան եւ Մահտեսի Աւետիսը՝ նրանց խնամին, մի քանի ծերերի հետ, մնացին վարպետ-Պետրոսի մօտ եւ նրան միխիթարելու եւ տխրութիւնը ցրուելու համար խօսակցում էին այս ու այն պատարիկ առարկաների վրայ:

Digitized by Google

Բայց կից սենեակում, որտեղ պառկած էր հիւանդը, շրջապատուած մի քանի հնացած եւ փտած հասկացողութեամբ պառաւներով, որոց թիվումն էին Հուրի Յովհաննայան՝ Մահտեսի Աւետիսի մայրը եւ Մարթան՝ Ծերունի Մկրտիչի կինը — ծանր ու բարակ մղեռանդ կերպով խօսակցում էին զանազան լինդիրների մասին։

— Աստուծով... այս աւուր "պաշտում-պատարագը„ եւ մեր զօրաւոր Սուրբ Գէորգը կ'ազատեն Սալբին հիւանդութիւնից, խօսեց պառաւ Մարթան։

— Այդ ճիշտ է, նրա խօսքը կտրեց Հուրի Յովհաննայան. — բայց Ղալ... գիւղի Ղէչկճաճան, այլ հրաշալի եկեղեցին բոլորից զօրաւորն է. մի անգամ իմ փոքրիկ պօղոսը հիւանդ էր. մենք յոյս չունէինք նրա կեանքի մասին. բայց ես վերցրի մի լոյս մատաղայուս, գնացի նրա դուռը՝ երեխաս հետս տանելով։ Մատաղը կտրել տուինք, փառաւորուի Տէր Օհանը, մատաղի արիւնից խաչաձեւ դրոշմեց երեխիս ճակատին, օրհնեց... եւ մենք տուն դարձանք. այնուհետեւ, որպէս սատանի չարիքը ձեզանից հեռու, իմ երեխան նոյնպէս փարատուեցաւ ցաւից։

— Աղքիլիսայի գործը բոլորովին հրաշք է, ասաց պառաւ Մարթան. — չորս տարի առաջ (ես մի քանի տարի շարունակ հիւանդ էի ջերմախտով), Տէր Մինասն էր քահանայ այնտեղ. Աստուածծ իւր կարգն օրհնէ. յաւուկ Աստուածոյ մարդ էր։ Մի գիշեր "Աղքիլիսան„ երազում խնձոց է տալիս նրան, որ ես իւր տաճարի համար մի վարագոյր կարեմ, եւ այնուհետեւ ուխտ գնամ նրա դուռը. եւ խոստանում է փրկել իմ ջերմախտը։ Ես առանց ուշացնելու կատարեցի Սրբի հրամանը եւ իսկոյն փարատուեց իմ ցաւը։

Digitized by Google

— Ինչու՞ էք այդ ասում, աւելացրեց Հուրի Յովհաննէսեան, գլուխը շարժելով. ես հասակով բոլորիդ մեծ եմ, ես անցրել եմ աւելի շատ սեւ եւ սպիտակ օրեր, քան թէ դուք. ես աւելի շատ բան եմ լսել ու տեսել Աղքիլիսայի մասին։ Հին օրերում, մի քուրդ գողանալով նրա դրսի գաւթի դուռը, իւր շալակն է առնում եւ սկսում է իւր տունը տանել. հասնելով իւր տունը, երբ կամենում է իւր գողացածը վայր դնել՝ չէ կարողանում, որովհետեւ դուռը նրա մէջքին կպած լինելով չէ շարժվում։ Ողքան քաշում եւ շարժում են, չեն կարողանում դուռը պոկել։ Քուրդը ճարահատեալ, մի քանի օրից յետոյ, դուռը ուսին, մի քանի մատաղ իւր հետ բերելով, գալիս է Աղքիլիսա. մի քանի օր ման է գալիս նրա համար եւ դուռը պոկ է գալիս նրա քամակից։ Էհ, նրա հրաշքները անթուա են...։ Դուք լսել էք, թէ ուրպէս կատաղեցաւ այն վայրենաբարոյ Յովանը, որ կտրեց այդ եկեղեցու անտառի ծառերից՝ իւր տունը ծածկելու համար. եւ այն, որ արիւն էր թորում ծառերի բունից, երբ կտրում էին կացինով...։

— Դուք տ. Թարլան, ուխտեցէք Աղքիլիսային մի քան Սալթիի համար, առաջարկեցին հիւանդի մօրը։

Ես խոստացել եմ, պատասխանեց տ. Թարլանը — տասն եւ երկու լիտր վառելու ձէթ. բացի դրանից մեր երեք տարեկան երինջի ականջի ծայրը կտրեցի, ուխտելով, որ Սալթին ինքը առողջանալուց յետոյ տանէ նրա դուռը։

Մինչ կանայք տաքացած անապաշտական ոգեւորութեամբ լսում էին սուրբերի, եկեղեցիների եւ ուխտատեղիների հրաշքների մասին, յանկարծ ներս մտան մի քանի ծեր մարդիկ Ծովասաբենց բարեկամներից՝ ինքը

Digitized by Google

վարպետ-Պետրոսը, նրա խնամին՝ Մահտեսի Աւետիսը, Տէր Մարուքը եւ մի քանի այլ մարդիկ։

Երիտասարդ կանայք խակոյն, որպէս դեւերը խաչանշանից՝ փախան աներեւութացան մարդիկը տեսնելով. միայն մի քանի հնացած պառաւներ, որոնք, առանձնանալով սենեակի անկիւնում, բոլորը միաժողով նստեցին աչք ու երեսները ծածկելով իրանց սպիտակ լաչակներով։

Հկուորները պատեցին հիւանդի չորս կողմը, ամէնքն էլ գդակները վերցրին՝ երբ Տէր Մարուքը սկսեց կարդալ "պահպանիչը„. այնուհետեւ բոլորը նստեցին հիւանդի մահճի մօտ։

Հիւանդը անզգայ թմրութեան մէջն էր. նրա թոյլ շնչառութիւնը ցոյց էր տալիս թէ նրա դրութիւնը վատ է։ Վարպետ-Պետրոսի սիրտը չը դիմացաւ. նա՝ աչքերը լցուած արտասուքով՝ դուրս գնաց։

— Տէր հայր, ծառայ եմ աջիդ, ասաց ծերերից մինը. — ի հարկէ "ինչ որ քո ոտքը գիտէ, մեր գլուխը չը գիտէ„, բայց եւ այնպէս ներեցէք համարձակութեանս... ինձ երեւում է, թէ հիւանդը վատ դրութեան մէջ է. լաւ չէր լինի մի փոքր, եթէ բժշկութեան Աւետարան կարդայիք վրան։

— Լաւ ես հրամայում, պարոն Թորոս, Աւետարանը եւ հոգեւոր եւ մարմնաւոր կերակուր է, պատասխանեց քահանան, ամենեւին չը հասկանալով իւր սերտած բառերի իմաստը, եւ հրամայեց իւր տիրացուին, որ բերէ Յովհաննէս Մեռել-յարոյց Աւետարանը։

Երբ Աւետարանը բերեցին, բոլորը գդակները հանած՝ ոտքի կանգնեցան։ Քահանան ձայն տուեց. — "Ալելուիա„ բերէք. ծերերից երկու մարդ բռնեցին ալիւրի մաղը

Digitized by Google

հիւանդի գլխի վրայ, եւ Տէր Մարուքը Աւետարանը նրա վրայ դնելով սկսեց, շարական ասելով մէկ մէկ բաց անել Աւետարանի վրայից փոշոտած, ծխում-ւխում սեւացած աղուհները։ Յաջաղի Տէր Մարուքը, որ չը գիտէր մի այլ երգ, տասն անգամ կրկնեց զանազան եղանակներով նոյն երկտող շարականը, բայց Աւետարանի վրայ փաթաթած աղուհները տակաւին չէին վերջացած։ Վերջապէս երեւան եկաւ մի հաստ կազմով գիրք, մագաղաթի վրայ կարմիր, կապոյտ եւ զանազան ներկերով գրուած. նրա մաշկեայ կողերը զարդարած էին հաստարակ ակներով եւ մի պղնձեայ խաչով, որ ամրացուած էր նրա կողքի վրայ։

Բոլորը երկիւղածութեամբ երկրպագութիւն տուին, երեսները խաչակնքեցին՝ տեսնելով Աստուծոյ գիրքը, որ Տէր Մարուքը բացելով սկսեց կարդալ "բժշկութեան" Աւետարանները, որոնց կենսատու զօրութիւնը "Աքսմաղի" ծակերից առատապէս մաղուելով՝ թափվում էր հիւանդի վրայ...։ Աւետարանը վերջացնելուց յետոյ, քահանան աւելի քաղաքավարութիւն գործ դնելով (շատ կարելի է, իւր նիւթական օգուտը մտածելով)՝ հրամայեց, որ ջուր բերեն։ Տիրացուն թասի մէջ ջուրը բերեց նրա մօտ։ Տէր Մարուքը սկսեց "Յաչալուայ" անել, վերցրեց փոքրիկ պղնձեայ խաչը, որ դրած էր Աւետարանի մօտ, եւ մի քանի խառնիխուռն աղօթքներ կարդալով՝ երեք անգամ խաչանիշ արեց օրհնած ջուրը, որից յետոյ տուեց թասը տիրացուին, որ իւր ձեռքումն բռնելով՝ կանգնեց քահանայի մօտ։

Փառաւորուի՛ Տէր Մարուքը. առաւ պղնձեայ խաչը, թաթխեց օրհնած ջրի մէջ եւ նրանով խաչաձեւ գծեց հիւանդի ճակատը ասելով. "Սա եղիցի բժշկութիւն եւ

Digitized by Google

վարատուԹիւն ցաւոց քոց„. երեք անգամ կրկնեց գործողուԹիւնը, քահանան "խաչալուայ„ ջրից սրսկեց հիւանդի երեսի վրայ, ապա ասաց բոլորին. — դէ՛ որդիք, դուք էլ մին մին եկէք, Սուրբ Աւետարանը համբուրեցէք եւ օրհնած ջրին մանանակից եղէք։

Նոյն ժամանակ բոլորը մէկ մէկ առաջ գալով համբուրում էին Սուրբ Խաչը եւ Սուրբ Աւետարանը, դնում նրա կազմի վրայ արծաԹէ դահեկաններ. եւ քահանան տեսնելով մի րոպէի մէջ կիտուած արծաԹը Սուրբ Գրքի վրան՝ եռանդագին հաճուԹեամբ օրհնած ջրով օծում էր նրանց ճակատները եւ խմեցնում նրանց։

Երբ ամէն ինչ վերջացած էր, տէր Մարուքը խորին զմայլանքով գլուխը լեցնելով սիմոնականուԹեան արծաԹը եւ նկատելով հիւանդի ծանր եւ թոյլ ընչաուԹիւնը, կասկածեց, Թէ մի գուցէ տարաժամ նա մեռնէր։ Այդ պատճառով հանեց ծոցից մանանատուփը, (որ առաջ մի հանգուցեալի քԹախոտի տուփն էր, եւ իբր կողոպուտ հասել էր տէր Մարուքին) եւ. հաղորդեց հիւանդին Տիրոջ սեղանի փշրանքով։

Նոյն միջոցին վարպետ-Պետրոսի աչքերը լցուեցան արտասուքով, տեսնելով, որ տէր հայրը վատ կարծիք ունէր հիւանդի մասին։

Հոգս մի անիր, որդի, ասաց նա վարպետ-Պետրոսին. այդ «ըէ»-ն-ի-նը առողջուԹեան գլխաւոր դեղն է հիւանդների համար. դա Թեթեւացնում է ամէն տեսակ ցաւեր։

Արդարե՛ս, ամենակեան լցուած հոգեւոր ջերմեռանդուԹեամբ, սպասում էին, Թէ ինչ ներգործուԹիւն կ'անէին հիւանդի վրայ սուրբ ալարողուԹիւնները. բայց տէր Մարուքը այդ իրողուԹեանը ամենեւին ուշադրուԹիւն չը դարձրեց. նոյն րոպէում նա զբաղուած էր մի

այլ բանով. նա չը կարողանալով արձակ-համարձակ տեսնել խալահոդէոյշնէրի հաշիւը, մի ձեռքը գրպանը տարած՝ կամաց կամաց համարում էր արծաթներըն։

Քահանան վերկացաւ, եւ բոլոր բազմութիւնը նրա հետ դուրս գնաց։ Հիւանդի մահճի շուրջը պատեցին դարձեալ պառաւ խմաստնուհիները եւ սկսեցին խօսել իրանց առասպելաբանական խորհրդածութիւնները։

Մի քանի շաբաթից յետոյ տէր Մարուքի շնորհիւ (?) եւ Աստուծոյ ողորմութեամբ, փոքրիկ Սալբիի տկարութիւնը հետզհետէ ուղղուելով՝ նա բոլորովին առողջացաւ ի մեծ ուրախութիւն իւր ծնողներին։

Digitized by Google

Գ.

ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՒ ՎԱՐԴՈՒՀԻՆ

Վարպետ-Պետրոսը երկար չը վայելեց իւր զաւակի ուրախութիւնը, որ Սուրբ Կարապետը բաշխել էր նրան: Նա վախճանուեց, անմխիթար սգի մէջ թողնելով իւր կինը՝ տ. Թարլանը եւ իւր հինգ տարեկան աղջիկը՝ Նազելի Սալբին: Սալբիի մայրը, ամուսնու մահից յետոյ բարեխնամ կերպով հոգեբարձու եղաւ փոքրիկ Սալբիի կրթութեանը: Ծօթին տարեկան հասակում Սալբին յանձնուեց Ծովասաբենց դրացի Մարթային, խելացի եւ բանագէտ պառաւին, որի լուհեմութեան եւ շնորհալիութեան մասին տ. Թարլանը մեծ համարում ունէր: Պառաւ Մարթան ինքը կարդացած չէր եւ ոչ իսկ տ. Թարլանը իւր աղջիկը յանձնեց նրան այն մտքով, որ գիր, կարդալ եւ ուսում սովորէ: Դրագիտութիւնը այն ժամանակ մի չար բախտով՝ նովորութիւն չէր, ոչ միայն աղջիկների, այլեւ տղայոց համար: Բայց տ. Թարլանը յանձնեց Սալբիին իւր նոր վարժուհուն, որ նրան ծառայելով՝ կար եւ ձեւ, խելք-հլամանք եւ ազնիւ ու առաքինի բարք ու վարք սովորէ:

Տունը, որի մէջ բնակվում էր Մարթա պառաւը իւր ալեւոր ամուսնի՝ Մկրտչի հետ, արժանի է հարցասիրութեան, ոչ նրանով միայն, որ նա մի զոյգ արդար եւ բարեպաշտ ամուսնակիցների բնակարանն էր, այլ առաւել նրանով, որ այդ տունը պահում էր իւր մէջ

Digitized by Google

մեր պապերի հին տների շինուածքի բոլոր ձեւերը, ներքին եւ արտաքին բոլոր սարք ու կարգը, բոլոր կահ-կարասիքը, տներ՝ որոց մէջ նրանք անցրել են իրանց ցաւալի կեանքը Պարսկաստանում։

Դրան առջեւ, երկու կամ երեք թզաչափ բարձրութեամբ ձգած է կովերի "կոշ„ (աղբը), որպէս զի փողոցի միջից անցուդարձ անողների ոտերի տակ պնդանալով "պաթ„ (տօզ) դառնայ, յետոյ կտրեն թոնրի վառելիքի համար։ Այդ ապականութիւնը անձրեւային օրերին ձեւացնում է մի գալշահոտ ճահիճ, որի մէջ մինչեւ ծնկները թաթախուելով, ոտերդ եւ "ասլերդ„ (կօշկներդ) մի լաւ ներկելով այդ հինայի մէջ, ներս ես մտնում՝ գլուխդ խոնարհեցնելով մի նեղ դռնից. քո առջեւ բացվում է նախագաւիթը, իւր ցածրիկ, քայքայուած շրջապարիսպներով, շինած պնդացրած կաւից, որ, երկար ժամանակ "տօլայի„ կամ "ատաղ„ երես չը տեսնելով՝ համարեա կիսամաշ էին եղել անգութ անձրեւից, ձիւնից եւ կարկուտից։ Այդ նեղ եւ անձուկ բակի տարածութիւնը հազիւ իւր մէջ կարողացել է տեղաւորել աղբանոցը, ուր թափում էին ամէն օր վառած աթարի մոխիրը, եւ ապական շրջապատած ճիւղերից հիւսած ցանկապատով։ Հարկաւորութեան այդ երկու գլխաւոր տեղերում, որ միանգամայն բակի միակ զարդարանքն էին կազմում, ժամանակի ընթացքում ամենայն տեսակ ապականութեանց՝ աղբի եւ մոխրի՝ բաւական մթերք հաւաքուելով, կուտակվում, բարձրանում՝ կազմում էին մի քանի բլուրներ, որ ոչ սակաւ ձեռնտու էին լինում տանտիրոջ օգտին, երբ երկրագործը գնելով այդ ապականութիւնը, տանում էր իւր հողերը պարարտացնելու, նրանց ոյժ եւ զօրութիւն տալու համար։ Այդ օրհնեալ գնողի շնորհիւ

մի քանի օր բակը ազատվում էր ժահահոտութիւնից, եւ մարդ կարող էր, առանց պնչածակերը երկու մատերով պինդ փակելու՝ բակի միջով անցնել եւ մտնել Ծերունի Մկրտչի տունը — եթէ նրա հետ գործ ունենար:

Առաջին շինուածքը բակի հարաւային ճակատում՝ է պահը, մի երեք կուսից պարսպով պատած, առջեւը կամ երեսը բաց, փայտեայ վանդակապատով չափարած ծածկոծ, որը մինչեւ այսօր պահում է իւր հին անունը: Այստեղ բնակում են ամառը, կամ եղանակների տաք օրերին: Սրահի միջից բացվում է մի նեղ դուռն, որ ներս է տանում դէպի խրճիթը՝ գլխաւոր տաք բնակարանը, որի մէջ անց են կացնում ձմեռը: Այդ քառակուսի խուղը[1] շուրջանակի չորս կաւեայ խարխուլ պատերի վրայ պահում էր ցածր, ծխից-մխից սեւացած առաստաղը, որ գմբէթաձեւ բարձրանալով, իւր գագաթում թողնում է մի բոլորակ ծակ, որին անուն են տալիս "էջդէ+„: Այդ նեղ բացուածքից կախում էր մի աղօտ լոյս, որ հալածում էր խրճիթի խորին, մեղամաղձական խաւարը: Բոլորովին մերկ, որպէս դուրսը — գետնի մէջ, խրճիթի կենդրոնում փորած է "ըանդըջ„, մի բոլորակ խոր կամ փոս, որի մէջ ամէն օր վառում են եւ նրանում եփում են տան համար հարկաւոր բոլոր ուտելիքը: Աթարի թանձր եւ կծու ծուխը սեւ ամպերի նման բարձրանալով թոնրից՝ հաւաքվում է գմբէթայարկ առիքի[2] մէջ եւ, որպէս վուլկանի բերանից — քուլայ-քուլայ դուրս է գնում եւ սեւ վիշապների նման գալարվում է օդի մէջ:

---

[1] Խուղը = խուցը:

[2] Առիք = առաստաղ:

Digitized by Google

Ամէն օր հարկաւոր է վառել թոնիրը կերակուրի եւ տաքանալու համար, եւ այդպէս, ամէն օր Ծերունի Մկրտչի խրճիթը ձեւացնում է մի մեծին ծխի ովկիանոս, որի մէջ լող են տալիս տանտէրերը, հազալով, փռշտալով — իրանց արտցունքոտած աչքերը ճմռելով եւ տրորելով. մինչեւ Աստուծոյ շնորհիւ աթարի մէջ սպառվում է վառվող նիւթը, սեւ թուխպերը կամաց-կամաց դուրս են գնում, խաւարը հալածվում է եւ մռայլի միջից սկսում են տեսանելի լինել խրճիթի նկուղին առարկաները. Պառաւ Մարթան՝ տնարար տանտիկինը, պպզած թոնրի շրթան մօտ, շերեփը ձեռքում, խառնում է իրանց համար եփած ապուրը, իսկ Ծերունի Մկրտիչը, նոյնպէս կրկզած թոնրի մօտ, մի կոտրած պտուկի կաորի մէջ բռվում է իւր համար սեւի կորիզներից "աղանձ" եւ թէպէտ նրա բերանում միայն մի քանի ատամ էին մնացել, բայց աղանձը լցնում է իւր դրպանը եւ մինչեւ իրիկուն ծուլօրէն սկսում է "ջլինել,,: Այդ էր նրանց միակ սենեակը, որը, չը նայած որ շատ ընդարձակ չէր, բայց Ծերունի Մկրտիչը նայելով իւր դրացիների անձուկ խրճիթներին, որոց մէջ նրանք խեղդվում էին, նա գոհունակ սրտով ամէն օր "քաղք լայն,, դէմ փառք է տալիս Աստծուն, խնդրելով որ լուսաւորէ իւր հանգուցեալ պապի հոգին, նրան հանգիստ արքայութիւն պարգեւէ՝ իրան մի այդպիսի մեծ եւ ընդարձակ տուն թողած լինելու համար, որի նմանը չունէին բոլոր գիւղացիք ծաղկաւանի մէջ: Այդ տան մէջ բնակվում էր Ծերունի Մկրտիչը իւր առաքինի կնոջ եւ ընտանի անասուններուի հետ:

Խրճիթի վերնակողմում դրուած է "ֆեղնակը,՝ մի մեծ փայտեայ արկղ, բաժանուած զանազան պահարաններուի, որոց մէջ լցրած են ալիւր, ցորեն, լաւաշ եւ տան-

Digitized by Google

բոլոր պաշարեղէնը։ Փեթակի վրայ դրուած են քնաշո-
ղերի, սիրոցների եւ կապերտների ծալքերը։ Դրան աջ
կողմում մեծ-մեծ թխած էլիպներ եւ տառեթերը պա-
րըսպաձեւ մի մեանց վրայ շարած՝ թումբի նման բար-
ձրանալով, բաժանում են խրճիթի մի փոքրիկ մասը,
ուր լեցրած է աթարներով, ոչխարի գնդաձեւ պոպո-ը-
ներով, չոր ու ցամաք տերեւներով, որոնք գործ են
ածվում թոնրի ամենօրեայ վառելիքի համար։ Դրան
ձախակողմում այդպիսի նիւթերով կտրած մի անկիւն
էր կացուցանում մալասգը, ուր լեցրած է դարման (յարդ),
իսո՝ չորքոտանիների ձմեռուայ ապրուստի համար։ Դրանց
մօտն է եւ հաւերի թառը։ Խրճիթի մի անկիւնում
շինուած է չորքոտանիների մուրը, որի վրայ կապած են
ի-ղաբեթը՝ պառաւ Մարթայի գէր ու պարարտ կովը, իւր
սիրուն խայտաբղետ հորթի հետ, որի մարմնի սպիտակ
գծերը կամ "գօլերը,, նա ներկել էր հինայով. նրա
մօտ՝ կովի մատաղահաս երինջը, որ տալիս էր լի յոյսեր
իւր գալ տարուայ մէջ յղի լինելուն։ Մի փոքր հեռուն,
կանգնած է, ականջները ծուլօրէն վայր կախած — մոխ-
րագոյն էշը՝ — "Ծերունի Մկրտչի ոտերը,, — որպէս կոչում
էր նա։

Կարծես թէ երկար տարիների կենակցութիւնը սո-
վորեցրել էր այդ օրհնեալ անասուններին կարեկցաբար
մանանակից լինել իրանց տէրերի ուրախ եւ տրտում զգաց-
մունքներին։ Երբ պառաւ Մարթան շատ անգամ իւր
վշտերը եւ տխրութիւնը հալածելու համար՝ մօտենում էր
իւր մտերիմ ուղաբերին, քորելով, փայփայելով նրա սի-
րուն գլուխը, եւ կամ գրկում էր նրա կայտառ հորթը,
սկսում էր համբուրել նրան, կոմն էլ, ուրախու-
թեամբ իւր պոչը շարժելով, գլուխը թափ տալով, դուրս

Digitized by Google

հանելով իւր խարտոցի նման լեզուն՝ սկսում էր լիզել իւր տիկնոջ խորշոմած երեսը։

Ամէն օր, երբ Ծերունի Մկրտիչը *ոտքով* ձեռքում սկսում էր գովաբանելով քորել իւր իշու մարմինը, նրա խեղկատակ գլաստը չէր դադարում իւր Ծերունի տիրոջ հետ խաղալ իւր ամենօրեայ կատակելագուխիւնը, նա շատ անգամ իւր ատամներով ձիգ էր տալիս նրա հանդերձի փէշերից, ծլունկ լինում, տուտիկ տալիս, քացի քցում, եւ վեր-վեր թռչում, մինչեւ արձակելով իւր յետքից մի սաստիկ տրխկոց՝ շարժում էր իւր տիրոջ սառն երեսի չոր ու ցամաք խորշոմները մի անսովոր ծիծաղով։

Իւղաբերը իւր անունի համեմատ ամէն օր առաւ կաթ եւ իւղ էր տալիս։ Պառաւ Մարթայի դրացի կա-նայք մախանօք[1] նայում էին մի այդպիսի բախտին, տես-նելով, որ իրանց երեք կամ չորս կովերը հազիւ էին տա-լիս Իւղաբերի չափ կաթ։ Մի այդպիսի անսովոր բան առիթ տուեց նրանց կարծելու, թէ պառաւ Մարթան գործ էր դնում կախարդական զօրութիւններ։ Ու այդա-րեւ, թէեւ պառաւը ոչ ոքի չէր յայտնել, բայց մենք գիտենք, որ ոչ սակաւ նշանակութիւն ունէր կաշուի մէջ կարած այն եռանկիւնի թուղթը, որ քարշ էր տուել նա Իւղաբերի երկու լուսնաձեւ կոտոշների մէջտեղում — ճակատի վրայ։ Այլ եւ շատ անգամ Համբարձման գի-շերին պառաւը լեռը մի կուժ ջրով դնում էր թուղթերի գիւղախանայում նրանց գերեզմանների մէջ. առաւօտեան լուսաբացից առաջ, առանց խօսալու, առանց ետեւ մտիկ տալու՝ տանում էր տուն եւ այն կժի ջրով հարում ծծումը, եւ. ծծմի մէջ բոլոր մածունը կարագ էր կտրում։ Այլեւ, նրա ծծումի կանթից միշտ քարշ էր ընկած շորի

[1] Մախանօք = նախանձով։

Digitized by Google

մէջ կարած մի քանի հատ չորս տերեւանի խոտ, որ թիւլիսմանական զօրութիւն ունէր։

Ե՛ւ այդպէս — խրճիթի մի կողմում ահագին փեթակը, միւսում կովի եւ իշի ախոռը, դրան աջակողմում վառելիքների ամբարը, ձախակողմում դարմանոցը եւ հաւերի թառը, խրճիթը չորեք կողմից այդպէս նեղնալով — թոնրի շրթերի մօտ մնում էր մի քանի թիզ արձակ գետին, ուր փռած էր երկու հասիր (փսխաթ), որոց վրայ նստում էին երկու ալեւոր ամուսինները իրանց ոտերը թոնրի մէջ մեկնելով։

Ծերունի Մկրտիչը վաղուց հետէ, երբ նրանց զաւակ չէր ծնվում, պահում էր մի քանի հատ անօրիկ (ընտանի) աղաւնի, այն մտքով, որ դրանցով կը շահէր նա Աստուծոյ Հոգին եւ կը ստանար Ներանից որեւէ վարձատրութիւն։ Այդ պատճառով նրանք մեղք համարելով թափել այդ արդար թռչուններին արիւնը, ոչ մորթում էին, եւ ոչ ուտում նրանց միսը։ Առաւօտները քնաթաթախ վեր է կենում պառաւ Մարթան, դուռը բաց անում, դուրս գալիս. "ճո՛ւ-ճո՛ւ-ճո՛ւ„ ձայն է տալիս նա։ Ու նոյն րոպէին դուրս են թափվում հաւերը եւ աղաւնիները։ Նա ցրվում է նրանց առջեւ կուտը, եւ հաւերը, ուրախ — ուրախ պառաւի չորս կողմը պտըտելով, կաչկաչելով — սկսում են կոցել հունդերը։ Բազմաթիւ ճնճղիկներ եւս, իրանց ամենօրեայ սովորութեան համաձայն վայր են իջնում եւ նրանց հետ խառն սկսում են քաղել կորեակի, ցորենի հատիկները։ Պառաւը ամենեւին չէ հալածում չար ճնճղիկները, թոյլ տալով, որ երկնքի թռչուններն եւս կերակրուին իւր հունդերով։

Ծերունի Մկրտիչը թէպէտ իւր տարիքը առած՝ բայց տակաւին մի ժիր եւ աշխատասէր մարդ էր։ Նա ամբողջ

ամառը անցնում էր մշակելով իւր երկու օրավար հողը, եւ աշնանը քաղում էր գետերի եզերքից ու ճախիններից բաւական ընկ (գզեր), ժողովում էր իւր տան մէջ եւ ձեռքով նրանցից հաւկիթներ էր գործում: Բացի դրանից նա հաւաքում էր բաւականաչափ ճապուկ ուռի ճղեր, նրանցից քթոցներ, զամբիւղներ հիւսելու համար: Պառաւ Մարթան եւս շատ գործունեայ եւ տնարար կին էր. նա ամէն օր, թոնիրը վառելուց եւ տունը կարգի դնելուց յետոյ, իւր բամբակ մանելու ճախարակը առջեւը դրած մինչեւ իրիկուն աշխատում էր նրանով: Այդ համեստ արհեստներով, նրանք ոչ միայն վաստակում էին իրենց ապրուստի պիտոյքները, այլեւ իրանց դրացիների մէջ, ուր աղքատութիւնը ճնշել էր իւր ծանրութեան տակ բիւրաւոր խղճալի հայերի գերդաստաններ — նրանք համարւում էին հարուստ:

Փոքր Աստուծոյ, ծերունի Մկրտչի փեթակը լի էր ալեւրով, ախոռի մէջ կապած էր գէր եւ պարարտ կովը իւր սիրուն հորթի հետ, նրա մօտ կապած նորահաս երինջը եւ ուժեղ էշը, թառը տան հատ հատերով, ծալքը լի էր շորերով: Դրսում ցանած հողը. բացի դրանից նա վճարել է տան եւ գլխի հարկը, քահանայի եւ վանքի պտղին, այնուհետեւ նրա դռնից կանչող չկայ. ոչ մի մարդ նրանից առնելիք չունի: Ինկ նրա դրացիք ընդհակառակն հառաչում են Ծանի Փէրրաշների վարոցների[1] տակ եւ չեն ազատվում ծանր հարկերից:

Հայց խօսքը մեր մէջ թող մնայ — ծերունի Մկրտիչը մի քանի արծաթ կռան[2] թագցրած հոգեթաժին եւս ունէր, որ նա խնայողութեամբ աւելացնելով իւր

---

[1] Վարոց = գաւազան (Ծան. հբատ.):

[2] Կռան = պարսկական դրամ:

Digitized by Google

վաստակներից, պահել էր իւր վերջին օրերի համար, որ այդ արծաթով պատարագ մատուցել տային իւր հոգու համար, եւ ժամով-քահանայով թաղէին իրան։

Ծերունի Մկրտիչը գիւղի մէջ բոլոր ամենօրեայ պատահական դէպքերի կենդանի օրագիրն էր. նա գիտէ՝ թէ այս ինչ մարդը ինչ զարմանալի երազ է տեսել, ում որդի ծնել, ով պսակուեց, որին նշանեցին, կամ ով քանի օրից յետոյ հարսանիք ունի։ Նաեւ լսօսում է հոգեւորական բաների վրայ, թէ եկեղեցում ինչ կարգացին, այս ինչ տէրտէրը քանի սխալ ասաց։ Շատ անգամ նա լսօսում է նաեւ տէրութիւնների եւ պատերազմների վրայ, եւ հաստատում է գլքերի ու Սրբերի խօսքով, թէ խեղճ հայ-քրիստոնեային պիտի "մի լոյս ծագէ,,, որով նրանք ազատուելու են անօրէնների բռնութիւնից։ Բայց թէ ո՞րտեղից էին հասնում նրան այդ լուրը, ստոյգ էին թէ սուտ՝ ո՛չ ոք չը գիտէր։

Ժամատան կոչնակները զարկում են։ Առաջին մարդը, որ երեւան է լինում բեմի առջեւ՝ Ծերունի Մկրտիչն է։ Նա, չը սպասելով լուսարարին, վառում է կանթեղները եւ ջահերը, գլքակալը դնում է սեղանի առջեւ, կարգի է բերում բեմի վրայ գլքերը եւ խաչերը, պատրաստում է բուրվառի մէջ շիկացրած ածուխ, եւ իւր քթի աղլուխով սրբում է պատկերների փոշին, մոմեր վառելով նրանց առջեւ, համբուրելով, երկրպագութիւն տալով՝ հեռանում է։

Գալիս են քահանաները։ Ծերունին շտապելով բերում է փիլոնները, ձգում տէրտէրների ուսի վրայ, եւ գրպանից հանելով քթախոտի պարկը՝ ժպտալով, շախա-շուխայ անելով, նրանց մեծարում է, ձեռները պաչում եւ բաղում օրհնութիւններ ստանալով՝ գնում կանգնում է

Digitized by Google

իւր տեղում։ Սկսվում է ժամերգութիւնը։ Շկեղեցին լցվում է հաւատացեալ գիւղացիների բազմութեամբ։ Ծերունին դարձեալ հանգիստ չէ, նա անդադար ցատկում է այս ու այն կողմը, կարում է պատրոյգների ծայրերը, լուսաւորում է կանթեղները, որի իւղը պակաս էր՝ լցնում է. երբէ պատկերների մինի մոմը հանգած ծխատում է՝ իւր մատներով սպառում է ծուխը, որ անախորժ հոտ չարձակէր դէպի Սուրբ պատկերը։ Ոչ նա կանգնած էր իւր տեղում, նրա սրատես աչքերը նայում են դէպի ամէն կողմ։ Երբէ տէրտէրի շուրջառի կամ փիլոնի փէշերից ծալուած էին, եւ կամ մի տեղ կծկուած էին, շուտով գնում եւ ուղղում էր այն։ Քահանան կարդում է Սուրբ Աւետարանը։ Մի մանուկ տիրացու լուսաւորում է Աստուծոյ գիրքը՝ սխալմամբ իւր ձախ ձեռքով։ Ծերունին նշմարում է այդ, բարկութեամբ գնում է, խլում է մոմը եւ աջ ձեռքով է բռնել տալիս, ապա նայում է դէպի դասերը. երբէ փոքր երեխաներից մինը մի անկարգութիւն էր գործում, մօտենում եւ նրա գլխին մի ապտակ է թխկացնում, ականջն մի լաւ ձիգ է տալիս եւ մրմռալով յետ է դառնում, կանգնում է իւր տեղում։ Ոչ նա հանգիստ կանգնած "տէրողորմեայի,, հատիկները ձեռքում չհաշիկացնում եւ համարեա լսելի ձայնով կարդում է ժամերգուների հետ, բայց միաժամանակ յուշարարի նման նա չէր դադարում հեռուից նշան տալ այս կամ այն քահանային կամ տիրացուին իրանց կարգը պահելու եւ ընթերցուածքի մէջ իրանց սխալը ուղղելու։ Թէպէտ նա ինքը կարդացած չէր, բայց երկար տարիների ժամ գալու սովորութիւնը սովորեցրել էր նրան անգիր սերտել եկեղեցական աղօթքներից, երգերից եւ այլ ուսմունքներից շատերը։ Այդ պատճառով, շատ անգամ,

Digitized by Google

քահանան պատրաստ չէղաճ ժամանակ նա էր օրհնում ժամը "Հայր Մեր,, եւ ուրիշ աղօթքներ ասում, այնէս Սուրբ Աւետարան կարդում, դրա համար Ծերունի Մկրտիչը ստացաւ "կէս տէրտէր,, մականունը։

Այդ բոլորը թէպէտ խիստ ծանր էր եկեղեցական-ներին, բայց նա ամենեւին ուշադրութիւն չէր դարձնում նրանց տրտունջին, այլ սիրով շարունակում էր կատարել Աստուծոյ տան սպասաւորութիւնը։

Ծերունի Մկրտչի, որպէս մի անահաւատ եւ մոլեռանդ հայի — ոչ միայն տարապայման բնաւորութիւնը, առաքինի բարք ու վարքը արժանի էին հարցասիրութեան, այլ ե՛ւ նրա հագուստը առաւել գրաւում է մեր ուշադրութիւնը իւր խորհրդական ձեւով։ Այդ հագուստը կարող էր մի ճիշտ օրինակ տալ մեր պապերի հին զգեստաձեւերի, որոց վրայ մի ասեղի չափ չէ նորոգծել "Տոպան,,։ Նրա գրպաններում, ծոցում եւ գլակի մէջ կարելի էր գտնել ամենայն ինչ, որ այնքան հին տարինների մեծ զգուշութեամբ պահվում էր որպէս սրբութիւն։ Նրա ամենասիրելի կինը անգամ չէր կարող ձեռնամերձ լինել նրա հագուստի ուխտեալ պահարաններին, որոց մէջ գտնվում էին — մոմի կիսավառ կտորներ, մի նշանաւոր վանքից նրան ուղարկուած նշխարքի պատառներ, օրհնութեան թղթեր, Սուրբերի փոքրիկ պատկերներ, զանազան խաչեր պղնձից եւ սպաղից։ Այլ եւ նա իւր գլակի մէջ, գլխի վրայ պահում էր չորս մատնաչափ լայնութեամբ եւ երեք անգամ իւր հասակի երկայնութեամբ մի մագաղաթի վրայ գրուածք, որին անուն է տալիս "ՃՈՐ,,։ Նրա վրայ զանազան փայլուն ներկերով նկարուած են հրեշտակապետների — Սերովբէք եւ Քէրովբէքի եւ Սուրբերի պատկերներ, ամէն մինի ներքեւ մի

աղօթք նոյն Սուրբի անունով, որ վերջանում էր հետեւեալ լուսքերով. — "Նա եղիցիս պահապան ծառայիս Աստուծոյ Մկրտչին եւ կողակցի նորին Մարթային,,: Մնապաշտ մարդիկ պատմում են, որ այդ հաստ մագաղաթի վարթոթը, ծուխի եւ մուխի մէջ սեւացած, քրտինքի մէջ եղուսած, ցեցակեր եղած՝ շատ անգամ, տեսել են, որ նա մութ տեղում լոյս էր տալիս, եւ զարհուրելի ձայներով մէկ տեղից դէպի միւսը թռչկոտում: Ուրիշ ինչ բաներ չէր կարելի գտնել այդ մարդու հագուստի գաղտնածածուկ ծալուածքի մէջ: Նրա "Արխալուղի,, ստջ թեւի ներսի կողմից, 'զատաքի,, մէջ, եռանկիւնի ձեւով միմեանց մօտ կարած են զանազան փոքրիկ եւ մեծ "ֆլիկներ,, գրուած անհասկանալի նշանագրերով:

Միեւնոյն բնաւորութիւնն ունէր եւ նրա կինը, պառաւ Մարթան, ջերմեռանդ եւ կրօնամոլ կնամարդը: Կարծես թէ Աստուած դրանց ստեղծել էր միմեանց համար, երկուսը իրր մի մարմին, կապուած էին կրօնքով, եւ երկուսի մէջ բնակվում էր մի հոգի: Պառաւ Մարթան աւելի սնապաշտ էր քան իւր ամուսինը. նա հաւատալով հայերի մէջ եղած այն աւանդութեան թէ դեւերը եւ աստանաները վախենալով խոյս են տալիս պողովատից, որովհետեւ պողովատը լուծում է նրանց անելութեան լինելու կարողութիւնը, այդ աւանդութեան հիման վրայ, նա մի պողովատէ օղամանեակ էր անցրել իւր պարանոյին, բազուկներին ապարանջաններ եւ մատին մի հատ մատանի — նոյն մետաղից: Նա իւր հարսանիքի հագուստի կապոցի վրայ նոյնպէս շարել էր սեղնելու, որպէս զի դեւերը նրանց չը մերձենային եւ գիշերները հաճելով հարսանիք չանէին: Բացի դրանցից, պառաւ Մարթան

Digitized by Google

իւր անձը պատսպարել էր զօրաւոր գրուածքներով, մանր ուլունքներով զարդարած նրա թեւերի վրայ կապած "քաղքանդնէզը", պարունակում էին իրենց մէջ "թիլիսիմներ": Մի արծաթայ կիսալուսին, խաղաց անհասկանալի նշանապիւրով՝ քարշ էր գցած իւր պարանոցի մանեակի շաղկից: Նա իւր վզին կապել էր մէկ մատնաչափ երկայնութեամբ արծաթեայ խողովակ, ուր աւելի նմանութիւն ունէր թնդանօթի խողովակին: Դրա մէջ ամփոփուած էր մի թղթէ փաթոթ. ո՞վ գիտէ ինչ լեզուով գրուած: Այդ թողել էր նրան իւր հանգուցեալ մայրը, որ մեռնելու ժամանակ դողդոջուն ձեռքով մեկնեց դէպի իւր աղջիկը, ասելով. — "Ա՛ռ, Մարթա՛, անգրու պահպանողդ այդ յուշարձքը, դա կը պահպանի քեզ ամենայն չարից...": Նրա երեսի երկու կողմից, ականջների վրայ, գնդերու հետ միասին կախուած էին գոյնզգոյն մետաքսեայ գործուածքներից մէջ կարած քառանկիւնի ձեւով փոքրիկ փլնիներ, որ հայոց լեզուով նշանակում է կախարդական բժժանքներ:

Մենք աւելորդ ենք համարում ձանձրացնել մեր ընթերցողին, մի ըստ միոջէ նկարագրելով պատուս Մարթայի բոլոր զարդարանքը, որ շնչում էին կախարդական եւ կռապաշտական ոգով: Բայց չէ կարելի մի քանի խօսք չասել նրա անհատականութեան մասին կրօնական իրողութեան մէջ:

Մի օր նրանց տան մէջ մի մեծ դժբախտութիւն պատահեց. առաւօտեան Մարթան վերկացաւ, թոնրի խուփը վեր առաւ եւ զարհուրեց տեսնելով թոնրում սատկած իրանց կատուն: Նա սկսեց ցաւակցաբար եւ ողորմելի եղանակով հառաչել, ոչ նրա համար միայն, որ նա կորցրեց իւր սիրելի կատուն, այլ աւելի այն պատճառով, որ կա-

Digitized by Google

տուն թոնրի մէջ սատկելով՝ պղծել էր նրան: Նա շուտով կանչեց իւր ամուսինը, երկուսը միասին դուրս քաշեցին սատկած կատուն եւ ձգեցին նրան իրանց տանից հեռու, գիւղից դուրս: Այնուհետեւ կանչեցին քահանային, որը օրհնեց թոնիրը, մաքրեց՝ "խաչալուայ„ ջուր սրսկելով նրա մէջ, եւ պատուիրեց քառասուն օր վառելուց յետոյ միայն նրա կողերի վրայ լաւաշ թխել:

Ահա մի այդպիսի գերդաստանի մէջ, մի այդպիսի վարժապետի եւ վարժուհու հոգաբարձութեան յանձնուեց Ծովասարենց Սալբիի, մեր վիպասանութեան հերոսուհու կեանքի առաջին դաստիարակութիւնը եւ ուսումը:

Բայց ինչ ուսում, ինչ դաստիարակութիւն: Ի նկատի ունենալով այն չարչարանքները, որ խղճալի աղջիկը կրում էր պատաւ Մարթայի ձեռքում, սխալ չէր լինի ասել, որ Սալբին մի ժիր ազախին էր այն տան մէջ: "Սալբի, աղբիւրից ջուր բեր... թոնիրը վառէ... տունը աւելէ... կովը կթէ... հաւերուն կուտ, ջուր տուր... այս վեր առ... այն վեր դիր...„: Այդպիսի հրամանները նա լսում էր առաւօտից մինչեւ իրիկուն պատաւ Մարթայից:

Ծերունի Մկրտիչը եւս, իւր հերթում, չէր թողնում, որ խեղճ աղջիկը հանգիստ ճնայ: "Սալբի, չերքուխս լցրու, կրակ զարկ, հասիրների ջելերը թրջէ, որ կակղեն, էշուն ջուր տուր„: Շատ անգամ հրամայում էին նրան մաքրել ախոռը, կովի եւ էշու աղբը քթոցով շալակին առնել եւ դուրս տանել, կամ թոնիրի մոխիրը կողովի մէջ լցնելով՝ տանել աղբանոցը: Այդ բոլոր ծառայութիւնը խղճալի աղջիկը կատարում էր առանց դժգոհութեան, որովհետեւ նա միշտ աշխատում էր շահել ծե-

Digitized by Google

լուն Մկրտչի եւ պառաւ Մարթայի սիրտը, որպէս զի նրանք չը գանգատուէին իւր անագուոյն մօրը, թէ Սալըին խելքը չէ, ականջ չէ դնում, որպիսի դէպքերին Թարլանը խիստ սաստիկ ծեծ տալով պատժում էր իւր աղջիկը, պատուիրելով, որ նրանք նոյնպէս ծեծէին նրան, միան առնէին, ոսկրը թողնէին, աչքը հանէին՝ ափի մէջ դնէին, որ խելօքանայ, բան սովորէ եւ օրինաւոր կին դառնայ . . . :

Ե.

ԼԷՅԼԻ ԵՒ ՄԱՋՆՈՒՆԻ ՀԱՄԱՍՏԵՂՔԸ

Ամառնային գիշերներին, երբ սովորաբար քնում են կատուների վրայ արձակ օդի մէջ, արեւելքի մայրիկները պատմելով իրանց հարցասէր զաւակների Լէյլիի եւ Մաջնունի սիրոյ վէպերը, մատով ցոյց էին տալիս այն երկու պայծառ աստղերի վրայ, որ այնպէս հիանալի փայլում էին գեղեցիկ երկնակամարի վրայ։ Լէյլիի սիրով գժուած-ցնորուած Մաջնունը, այդ անբախտ տարփածուն, այս չար աշխարհի մէջ չը կարողանալով հանգիստ ըղձին, Աստուած փոխադրում է նրանց համաստեղների կարգում։ Այնտեղ, ազատ եւ արձակ երկնքի մէջ դարձեալ իրար անողորմ գտնուեց դէպի նրանց սիրահարութիւնը, որովհետեւ նրանք անչափելի տարածութեամբ միմեանցից հեռու, այլեւս վառվում են սիրոյ կրակով։

Բայց տարին մի անգամ, Սուրբ Համբարձման գիշերը Ցիրօջ հրամանով Լէյլին ու Մաջնունը անչափելի ճանապարհ կտրելով՝ մօտենում են միմեանց, գրկախառնվում եւ առնում են իրենց կարօտը . . .։

Պառաւ Մարթան քանի՛ քանի՛ տարիներ այն կախարդական գիշերին, շատ անգամ իրանց կտուրի վրայ անքուն հակել է, սպասելով այն ուխտեալ րոպէին, երբ այդ երկու աստղերը՝ անբախտ Լէյլին եւ Մէջնունը — մերձենալով կը համբուրէին միմեանց։ Բայց միշտ մի ակամայ թմրութիւն տիրելով նրան, անմասն էր կացուցել

Digitized by Google

խզճալի Մարթային այն դիւթական ժամի բոլոր գաղտնիքից։ Այնուհետեւ պառաւ Մարթան անձնատուր եղաւ տեսակ-տեսակ ճգնութիւնների, եւ սկսեց աղօթքով, ծոմով եւ պահեցողութեամբ մաշել իւր անձը։ Մի գիշեր Ս. Տիրամօր ընորհիւ տեսնում է՝ յանկարծ անհուն երկնքի երեսը շառագունեցաւ. լսելի եղան հրեշտակային տաղերգներ քաղցրաձայն նուագների հետ, բնութեան խորին լռութիւնը կենդանացաւ թռչունների անոյշ մեղեդիներով, աստղերը սկսեցին երկնքից վայրկեր թափել. օդի մէջ բուրեց անոյշ խնկահոտութիւն, եւ պառաւ Մարթան, զգաստանալով այդ նշաններից, աչքերը դէպ երկինք բարձրացրեց, տեսաւ այն երկու հրաշալի աստղերը չափազանց պայծառացած՝ որպէս երկու արեգակ՝ միմեանց մօտեցան...։

Նոյն րոպէին բոլոր առարկաները, բոլոր ծառերն ու ծաղիկները, հանքերը, սարերը եւ քարերը — բոլորը լեզու ստացած սկսեցին ընորհաւորել նրանց տեսակցութիւնը, պատմել բոլոր գաղտնիքները, որ բնութիւնը թագցրել էր իրանց մէջ, թէ, իրանք ինչպիսի ցաւի դարման կարող են լինել եւ ինչ էր իրենց գոյութեան խորհուրդը։ Ահա այդպէս պառաւ Մարթան ճանաչելով մի քանի բժշկական խոտեր, այնուհետեւ սկսեց յայտնապէս, առանց որեւիցէ վարձատրութեան՝ օգնութիւն հասցնել անճար հիւանդներին, եւ բժշկել թեթեւ ցաւեր։ Բայց այն ընչին վարձատրութիւնը, որ նա պարսկերէն կոչում էր "նխոշ", պառաւ Մարթան ընդունում էր ոչ թէ իւր նիւթական օգտի համար, այլ, որպէս հաւատացնում էր նա, թէ առանց նխոշի բժշկական դարմանները իրանց զօրութիւնը կը կորցնէին։ Օրինակ, տեսնում ես մի օր ծերունի Մկրտչի խրճիթը ներս է մտնում մի կին, իւր գրկում մի փաթաթած երեխայ է, հնձեկ բարեւ տա-

Digitized by Google

լով, գնում, նայում է պառաւ Մարթայի կողքին։ Ծերունի Մկրտիչը հիւսում է փսխաթ՝ իւր սովորական երգը երգելով։ Շկող կինը, ծերունուց ամաչելով, երեսը իւր թանձր եւ անթափանցիկ երեսաքօղով ծինչեւ կուրծքը ծածկելով՝ լուռ եւ մունջ նստած է։ Ծերունին նշմարելով, որ իւր ներկայութիւնը արգելք է լինում նորեկ հիւրին, վեր է կենում, եւ իշու "նո-խօխչ„ բառնելով՝ դուրս է տանում գետի եզերքում արածացնելու պատրուակով։

— Բարով, Յաթուն-Բաջի, ասում է Մարթան։

— Աստծոյ բարին քո արեւին, պատասխանում է եկուորը։

— Ի՞նչ կայ, բարի լինի, հարցնում է պառաւը։

— Աստուծով բարի է... բայց Մարթա, իմ աչքի լոյս, երեխէս ահա մի ամիս է ցաւից աչք չէ բացում։

— Հա՛, քոյրիկ, այս տարի չար տարի է, ցաւ ու չօռն շատ է. տէրտէրն էլ այդպէս է վկայում գլխի խօսքով...։ Հարբուխ, խորուզակ, տաքոտք, համարեա ամէն տան մէջ տանջում են երեխաներին։

— Բայց իմ երեխու ցաւը մի՛ւսների նման չէ. նրանց շատերի վիզը եւ կոկորդը ուռչում է, կամ հազում են. "Յաչէցն„ է ասում են. այդ պատճառով Սուրբ Յաչ ուխտ գնալով — փրկվում են։ Բայց իմ երեխու ջոջ ադով պոռին եւ այդպէս, օրըստօրէ հալվում եւ մաշվում է։

— "Ձար աչքում չար փուշ„ — ասաց պառաւը, եւ երեխայի ձեռքը բռնելով եւ նրա երեսին նայելով։

— Բայց ես վախենում եմ "չարոց„ լինի, առաջ տարաւ Յաթուն-Բաջին։

Digitized by Google

— Բա՛, "Չարոց„ է, Երեխի վրայ սաստիկ վախ նստելով, չէք տուել շուտով "աղօթեն„, դլուա հանալու ո–պ–ի (բարեկացաւ) է բռնել։

— Իրա՛ւ, այդպէս է, մեր հացթուխը, այն անիծեալ Նուբարը՝ անցեալ օրը երեխիս վախեցրեց "Մալադագալի„ անունով։ Հապա դրան ձայր չը կայ։

— Ինչո՛ւ չէ. ուզո՛ւմ ես դիւրին լինի բանը, Սուրբ Սարգսին ուխտ տուր։

— Տալոյ, բայց բժշկութիւն չեղաւ... պատասխանեց Յսահակ-Բաջին յոգոյ հանելով։ — Ո՛հ, քոյրիկ, ժամանակը փոխուել է, ասես թէ սրբերը քարտարուել են. նրանք առաջուայ նման քաղցր աչքով չեն նայում մարդոց վրայ։

— "Կոյրը որպէս փակած աչքով նայում է Աստծուն, Աստուած էլ նոյնպէս է նայում կոյրին, ասում է թուլքի առածը, պատասխանեց պառաւ Մարթան ծանրութեամբ։ — Սուրբերը միեւնոյն բարի Սուրբերն են. բայց ադամորդիների բարքը ապականուել է, նրանք իրանց մեղքերով բարկացրել են երկինքը։

— Հա՛ մեր մեղքից է ամենայն պատիժն ու պատուհասը, որ Աստուած բերում է մեր գլխին...։ Ա՛խ երեխէս, ա՛խ իմ ազնիւ աղաւնեակս...։ Ինձ էլ իւր հետ կը տանի...։

Յսահակ-Բաջին սկսում է դառն կերպով լացկանել, բայց պառաւ Մարթան մխիթարեց նրան ասելով — Աստուած ողորմած է, յոյսդ մի կտրիր, Յսահակ-Բաջի. Ցէրը ծաղկեցնում է կիսավառ ախոյեանը եւ մեռած սաբին-քուրին շունչ է պարգեւում. երեխիդ դարման տալու ժամանակը անցել է, բայց այժմ մի թեթեւ կերպով

"կ'աղօթեմ„ եւ վախն կը բռնեմ. Աստուծոյ եւ Սուրբ Հոգիին բարեխօսութեամբ կը լաւանայ։

Այնուհետեւ պառաւ Մարթան պատկեցուց հիւանդը քահանայի վրայ, բացեց նրա փորը եւ կուրծքը, եւ սկսեց թղով չափել սրտի բոլորտիքը, որ իմանայ սրդեւոք սիրտը իւր տեղումն է թէ ոչ։ Նա ստուգեց, թէ սիրտը չորս մատնաչափ ցած էր իջել եւ երեւան աստիճ վախեցած է եղել։ Դրա համար նա վերցրեց մի կտոր ածուխ, պճեց նրա ճակատի եւ երկու թշերի վրայ փոքրիկ խաչ, երկուսն էլ նրա սրտի եւ պորտի վրայ, մինն էլ ձախ ձեռքի վրայ — իւր շրթունքների միջից փիփիացնելով մի քանի անհասկանալի եւ խառնափնթոր աղօթքներ։ Ծետոյ հրամայեց Սալբիին, որը նրա առջեւ դրեց մի թաս լի ջրով։ Նա բռնեց հիւանդի գլուխը խորհրդական թասի վրայ, երեսպայի երեսը պատկերացաւ ջրի հայելու մէջ. պառաւը անխօս նայում էր ջրի մակերեւոյթին, նրա խորշոմած եւ ցամաք շրթունքը դալձեալ շարժվում էին. երեւում էր թէ նա մի բան էր կարդում։ Այդ գործողութիւնից յետոյ, նրա ձեռքը տալիս է մի կշիռ, պառաւը թասը դնում է կշռի թասի մէջ եւ սկսում է բուլվառի նման, խաչաձեւ շարժել հիւանդի վրայ՝ անլսելի ձայնով կարդալով իւր "ասմունքները„։ Յաթուն-Բաջին զարմանում էր, տեսնելով, որ թասի միջի ջուրը չէր թափվում, որքան եւ կշռի թասը պատվում էր։

Վերջապէս, պառաւ-Մարթան դադարում է. օրհնած ջրից սրսկում են հիւանդի երեսին, մի փոքր խմեցնում են եւ մնացեալը թափում են դէպի արեւելք։

Գուցէ սառը ջրի գրգռումից հիւանդը մի փոքր զուարթութիւն զգաց, սկսեց շարժուել, աչքերը բացել, հազալ, ապա երկու անգամ փռշտաց։

Digitized by Google

— Փառք Աստուծոյ, "Լահպ քեզբեց,,[1] (այսինքն երկու անգամ փուշտաց) ասայց պատաւ Մալթան ուրախանալով։ Աստուծով կէյր է, երեխադ կը փրկուի Սուրբ Տիրամօր շնորհիւ։

— Սուրբ Տիրամօր ձեռքը թող ամէն անձայներուն վրայ լինի, ասայց Ղաթուն-Բաջին։ — Աստուած քեզ կ՚հանգիստ, ալքայութիւն թող պարգեւէ, քոյր Մալթա... Նուբարի երեսը թող սեւանայ, որ այդ չարը բերաց երեխս գլխին...։

— Ի՞նչ է պատճառը Նուբարը, հարցուց պատաւը։

— Հէ որ ասացի, թէ վախեցուց երեխս մարդագայլի անունով։

— Ի՞նչ մարդագայլ։

— Բա՛, չէ՞ք լսել, ասում են գիշերով մարդագայլը մեզ է գալիս։

— Տէ՛ր ողորմեա՛, գլուխը շարժելով կրկնեց պատաւը։ — Դեռ եւս շատ այդպիսի բաներ կը լսեն մեր մեղաւոր ականջները...։ Բայց դուք երբ էք լսել Ղաթուն-Բաջին, խօսքը փոխեց պատաւը։

— Արդէն մէկ շաբաթ է, այդ զարհուրելի լուրը պտտվում է, շարունակեց Ղաթուն-Բաջին. — ասում են մի քանի գիւղերից մարդագայլը յափշտակել է գառ-

---

[1] Մի անգամ փուշտալը հայոց մէջ նշանակում է մի չար նախադատաստանը. Պարակատանում այդ կոչում են Սաթէ, այսինքն համբերութիւն։ Այդ պատճառով, ով որ մի գործի եւ մի խորհրդի սկզբում ինքը, կամ իւր մօտ մի այլ մարդ մի անգամ էր փուշտում, խոկում Սաթէ է անում, համբերում է, յետաձգում է իւր գործը եւ խորհուրդը։ Մինչ մի անգամ փուշտալու միջոցին ամէն կողմից ասում են նրան "առողջութիւն,, կարծելով, միեւնոյն բոլորին մի բան էր պակասում նրա կեանքից։ Բայց երկու կամ երեք անգամ փուշտալը գուշակում է յաջողութիւն, գրան ասում են Լահ, այսինքն փոյթ եւ հոգս։ "Ջահա անել,, ասել է՝ փոյթ ունենալ, հոգս տանել եւ սկսել գործը։

Digitized by Google

նել, ոչխարները, այլ եւ, քար դառնայ նրանց ծնողների սիրտը... — խլել է օրօրոցներից տղաները...:

Պառաւ Մարթան վերջին խօսքը լսելով զարհուրեց:

— Այդ Աստուծոյ պատիժն է, որով կամենում է խրատել մեղաւոր մարդոց, ասաց նա. — մի անգամ եւս մարդապայլը երեւաց, երբ ես իմ հօր տանը աղջիկ էի:

— Բայց այս վերջինը խիստ շատ կատաղի է, պատասխանեց Յամթուն-Բաջին:

— Անտարակոյս, դա մի դեւ է լինելու, որ մի Սուրբի անէծքով ստացել է գայլի կերպարանք: Քրխաստոն էլ հրամայեց, որ դեւերը մտնեն խոզերի մէջ:

— Չէ, Մարթա, հոգիս, ասում են մարդապայլը եղել է մի վանքի վարդապետ, Կ.... գիւղացի Թոմաս անուամբ: Այդ պատճառով նա խօսում եւ. խաբում է մարդկային լեզուով: Մի գիշեր նա մի ջրաղացի դուռն է բաղխում. "բաց արէք, խնդրէ ճանապարհորդ եմ,, ասում է նա. "բուքը եւ բուրանը ինձ խեղդում են, ողորմած Թիւն արէք, հոգի ազատեցէք, ես մի հայ մարդ եմ...,, Ջաղացպանը բացում է դուռը, եւ զարհուրում է, տեսնելով ահագին մարդապայլը ներս մտած: Այս խօսքերը պառաւ Մարթայի վրայ սարսափ են ազդում. նա սկսում է մունջ խաչակնքել իւր երեսը եւ աղօթք կարդալ:

— Մարդապայլը վնաս չէ տալիս Ջաղացպանին, որովհետեւ նա վառում է թոնիրը եւ սուաց մարդապայլի համար "շօթեր,, է թխում: Նա անյագ կերպով ուտում է: Եւ որովհետեւ երկար ժամանակ նրա մարմնի վրայ բոյն էին դրել լուերը, ոջիլները եւ անիծները, նա մերկանում է իւր գայլի մուշտակից, որ այն փոքրիկ ուտող-մաշող գազանները թօմափէ թոնրի կրակի մէջ:

Ջաղացպանը զարմանում է տեսնելով թոռների շրթան մօտ նստած մի սեւ վարպապետ գայլը մուշտակը ձեռքում։ Սա յարձակվում է նրա վրայ, որ իւղէ մուշտակը եւ կոխէ թոռների մէջ, որ այրուի։ Բայց մարդագայլը իսկոյն անհետանում է...։

— Վայ քո հոգուն, վարպապետ, ոյնքան նա սիրում է գայլը մուշտակը... որ մարդկութիւնից գազանի փոխուելով՝ յափշտակէ եւ ուտէ մարդոց եւ ոչխարների միս..., ասաց պատաւ Մարթան անկեղծ պարզամտութեամբ[1]։

Համարեա ամէն օր ծերունի Մկրտչի տանը տեղի էին ունենում այդ օրինակ կախարդական տեսարանները, եւ ամէն օր, փոքրիկ Սալբին լսում էր այդպիսի առասպելաբանական զրոյցներ իւր վարժուհուց, եւ նրա այցելուներից։ Եւ այսպէս անոտիապաշտութիւնը, իւր բոլոր այլանդակ կերպարանքներով, սկսուած մանկութեան մատաղ հասակից նրա յստակ եւ մաքուր սրտի վրայ խոր կերպով տպաւորւում էր։

Բոլոր այցելուներից աւել, պատաւ Մարթայի գիտութեան մասին նրա ամուսինը մեծ համարում ունէր։ Այս պատճառով, նրա առանին հասարակ խօսակցութիւնը իւր կնոջ հետ աւելի հետաքրքիր էր իւր անհատատութեան յատկութիւններով։ Օրինակ, շատ անգամ, ծերունի Մկրտիչը, եկեղեցուց կիւրակէ օրերը տուն դառնալով, երբ ճանապարհին գլուխը մի փոքր տաքացած է լինում "արաղ,,ով, ներս է մտնում եւ իւր խռպոտ ձայնով

---

[1] Այդ առասպելականացրած զրոյցը առնուած է մի պատահական անցքից, որ առ այժմ հեղինակը աւելորդ է համարում բոլորովին մերկացնել իւր ընթերցողի առջեւ։

Digitized by Google

"ողորմի Աստուած,, ասելով՝ նստում է թոնրի մօտ իւր կնոջ կողքին։ Նա լուռ է. նրա երևոյթ խորհրդաւոր գծագրութիւնը ցոյց է տալիս, թէ նա մի բանի մասին խորին կերպով մտածում էր։ Լռութեան մէջ նա տաղտկանում է, եւ բերանը մինչեւ ականջները բանալով յօրանջում է, ալձակելով մի դառն հառաչանք։ — "Ախ, էյ, վայ... Աստուած,,։ Այնուհետեւ ուշի գալով ծոցի գլպատնից դուրս է բերում քթախոշու դեղին պարկը եւ լի բուռով, մանրած խոտը վեր է քաշում պնչածակերից։ Քթախոտը, իւր կծու ներգործութեամբ գրգռում է նրա քթի մկնակաները, նա հազում է, կոկորդն մաքրում եւ թքում է։ Եթէ Աստուծոյ յաջողութեամբ նա փռշտում է՝ նա բոլորովին զգաստանում է եւ երեսին խաչ հանում. "նահլան քիզ չար աւտանայ,, վրայ է բերում եւ աջ քերը ուշադրութեամբ լարում է իւր կնոջ վրայ, ասելով.

— Մի բան հարցնեմ քեզ, Մարթա։

— Ի՞նչ, ասա։

— Մեղքը պա՞ս է, թէ ոչ։

Պատաւ Մարթան պատասխանում է թէ պաս է, որովհետեւ նա դոյանում է մեղրաճանճերից, որ արիւնաւոր կենդանիների դասից են։ Իւր խօսքը հաստատելու համար աւարկում է թէ, եթէ մեղրը պաս չը համարուի՝ հաւկիթն եւս պէտք է ուտուէր, որպէս բանջար. աւելացնում է, թէ շաքարը նոյնպէս պաս է եւ ուտելը մեղք, որովհետեւ պղծուած է անասուննների ոսկրանիւթով։

Այդ միջոցին ծերունին բունելով փոքրիկ Սալբիի ականջից ձիգ տալով նատեցնում է իւր կնոջ մօտ. — Լսիր Սալբի եւ բան սորվէ, ասում էր նրան։ Շատ ան-

Digitized by Google

գամ պատահում էր, որ Ծերունին, խռոված գիշերուայ երազներով՝ առաւօտեան զարթնում է սովորականից կանուխ, նստում է իւր քնաշորերի մէջ, եւ երկար ու ձիգ խօսքերով սկսում է Մարթայից հարցնել իւր երազի մեկնութիւնը։ Ապա սկսում է տեղեկանալ այլ երազների գաղտնիքները, թէ ինչ էր նշանակում երազի մէջ սեւ խաղող ուտելը, հարսանիքի եւ թմբուկի ձայն լսելը, սառն ջրի մէջ լողանալը, կամ ինչ խորհուրդ ունի ձախ աչքի վերնակոպի, աջ ականջի ծայրի խաղալը եւ այլն։ Որոց պատասխանը ստանալուց յետոյ շարունակում է, երբ "ղպչան,, կոխում էր մի քնած մարդ, "ղպչան,, հալածելու համար "Հայր մեր,, պէտք է ասել, Յիսուս-Քրիստոսի անունը արտասանելու է։

Պառաւ Մարթան ահ ու դողով խօսում է Ծերունի Մկրտչի հետ "մահտարաժամներ,,ի մասին, թէ ինչ խորհուրդ ունէին իօլևրան, ժանտախտը, կամ ոմքեր էին գրողները։ Նա յայտնում է, թէ այս ինչ գիւղում, այս ինչ պառաւը մեռ է գալիս գրողների հետ, եւ թէ գրողները կամեցել են զարկել Աւազակեանց Մելիք-Պիղատոսին, բայց պառաւը բարեխօսել է իշխանի կնոջ համար։ Դրա համար Մելիքը նրան երկու բեռ ցորեն էր բաշխել։

Փոքրիկ Սալբին իւր վարժուհու մօտ ոչ միայն կար ու ձեւ էր սովորում, այլ եւ կարում էր գեղջկուհի աղջնակագործած նկարները, պատրաստում էր իւր հարսանիքի հագուստը, որ նրա կեանքի հանդիսաւոր օրերի փառաւոր զգեստը լինելով՝ լինելու էին — նրան գերեզմանի պատանքը։ Սոյնպէս պառաւը սովորեցնում էր նրա բարոյական եւ իմացական իրաւանները, որ անհրաժեշտ էին ամէն մինի առօրեայ կեանքի մէջ։ — Օրիորդ, ասում էր նա

Digitized by Google

— մի շուն, որ երկար ժամանակ ծառայում էր մի տան մէջ, երբ սատկում է, նրա գլուխը բակի դրան շէմքի տակ թաղելը օղո-ղով է (բարեյաջող է)։ Ծուռաճ մազերը ոտքի տակ ձգես — գլուխդ կը ցաւի, պէտք է ջրի մէջ գցել։ Կորած եղունգները մի բանի մէջ փաթաթած պատերի ճեղքում դնելու է, որովհետեւ միւս կեանքում կը պահանջեն։ Կրակի վրայ սառն ջուր ածելը մեղք է։ Տաք ջուրը դետնի վրայ ածելու լինիս — դեւերը կը բարկանան, պատահմամբ կը թափուի նրանց երեխաների վրայ, որոնք աներեւութապէս մեզ են գալիս տան մէջ։ Ագռաւի կռնչալը արեւամուտից յետոյ՝ չար բան է գուշակում։ Շների տխուր ոռնալը մահաբեր է։ Թռչնի կրակի բոցերի կամ թխած լաւաշի սուլելով ձայն հանելը — սով կը բերէ։ Բայղուշի (բու) ձայնը — աւերում է գուշակում։ Մարին երբ աքաղաղի պէս է խօսում, եթէ նրա գլուխը չը կտրես — տէրը կը մեռնի։ Պառաւը շատ անգամ ասում էր իւր աշակերտուհուն զանազան սովորական բաների մասին. թէ կաչաղակին ով է իմաց տալիս, երբ նա խաբարներ (լուրեր) էր բերում. աղունակի (աղաւնու) միս ուտելը ինչո՞ւ է մեղք. ճնճղուկին ով անիծեց. կամ Սողոմոնը ո՞րտեղից էր սովորել թռչունների լեզուն, եւ ի՞նչ գաղտնիք ունէր նրա մատանին։

Պառաւը երկար խօսել գիտէր հրեշտակների, Սերովբէների, Քերովբէների, դեւերի, սատանաների եւ "մեզնից աղէկների,, մասին։ Նա պատմում էր խիստ զարմանալի բաներ այլայութիւնից եւ դժոխքից, թէ արքայութեան ճանապարհի վրայ մի մեծ հրեղէն գետ կայ, որ վառվում է ծծմբով եւ նաւթով (քարիւղ), նրա վրայ կայ մի մազէ կամուրջ, այդպիսները առանց վնասի

Digitized by Google

անց են կենում, բայց մեզաւորնելի ոտերը սայթաքում են եւ նրանք գլորվում են հրեղէն գետի մէջ, որ տանում էր դէպի դժոխքը։

Նա ասում էր, եթէ մի երիտասարդ աղջիկ խօսում եւ ծիծաղում է մի նորահաս երիտասարդի հետ, որ նրա աղգակից չէր, եւ կամ իւր երեսի եւ մարմնի վրայ արուեստական խալեր էր շինում՝ նա երբեք չէր կարող անցնել մազէ կամուրջից, այլ ընկնելով հրեղէն գետի մէջ, օձերի եւ կարիճների բաժին պիտի դառնայ։

Պառաւը սովորեցնում էր նրան եւ շատ "դլոց,, բաներ, թէ ժրպէս Քրիստոսին տուին մի բաբիին աշակերտելու, եւ Քրիստոս առանց այր եւ բնը սովորելու՝ կարդում էր Թովրաթը. բարի մօտից արտաքսուելով՝ աշակերտում է մի ներկարարին, եւ միւնոյն կարասի մէջ ներկում է ամէն գոյներով կտաւներ։ Ուրիշ շատ բաններ է պատմում Յիսուսի եւ Յովհաննէսի մանկութիւնից, եւ նրանց կատարած հրաշագործութիւններից, որոնցից եւ ոչ մինը չէ գտնվում մեր ընդունած Աւետարանի մէջ. նա շատ անգամ՝ ծիծաղելի եղանակով պատմում էր, թէ ինչպէս մի օր Քրիստոս եւ Մուհամմէդը դաշն կապեցին, որ գետնից կաթի աղբիւր բղխեցնեն. Մուհամմէդը դիշերով գետնի մէջ թաղել տուեց կաթով լեցը տիկերը, եւ մի հնար բանեցրեց, որ գաւազանը զարկելուն պէս դուրս հոսեր կաթը։ Առաւօտեան երբ գնացին որոշուած տեղը, Քրիստոս գաւազանը գետնին զարկելուն պէս կաթ բղխեց. բայց Մուհամմէդը ոչինչ չը կարողացաւ անել, որովհետեւ լսողները գիշերով պատռել էին իւր թաղած տիկերը, այդ պատճառով Մուհամմէդը պատուիրեց մուսուլմաններին խոզի միս չուտել։ Նա պատմում էր խոտաճարակ ձգնաւորի, անառակ որդու եւ "աճուճ-

Digitized by Google

պճուճնելի,, մասին: Յօրատուամ էր նրան չուտել թուղթի հացը եւ թուղթի մորթած միսը. մի ամման, որի մէջ թուղթը մի բան էր կերել — պիղծ է մինչեւ լուացուէր ''հաչալուայ,,[1] ջրով:

---

[1] Հայերի այնքան երկար ատրիճների կենակցութիւնը պարսիկների եւ թուղթերի հետ, չէ դրել նրանց այդ ազգերի հետ սերտ յարաբերութեան մէջ. ընդհակառակն նրանք ամենաատելի կերպով խուսափում են մահմետական հանեներից, նրանց միանգամայն գարշելի համարելով: Այդ համարումը թէպէտ առաջացրել է նրանց մէջ մոլեռանդութիւն, բայց մի ամբողջ ազգ ազատել է մահմետականութեան ճարակ լինելուց եւ նրանց հետ ձուլուելուց:

Digitized by Google

2.

ՄԵՐ ՀԵՐՈՍԸ

Տէր Առաքելենց տունը, իւր պարզ, անխարդախ նահապետական բնաւորութեան յատկութեամբ ձեւացնում էր մի օրհնեալ գերդաստան, որ արտացոլում է մեր արժանայիշատակ նախնիքների առաքինի կեանքի բոլոր անմեղ եւ անպարտ պատկերները։ Այդ տունը միշտ ունեցել է կարդացող եւ գիտնական տղամարդիկ։ Տէր Առաքելենց տոհմից, Ծաղկաւանի գերեզմանատունում շատ թուով եպիսկոպոսների, վարդապետների եւ քահանաների գերեզմաններ վկայում էին, թէ եկեղեցական ծառայութիւնը, ժամանակի խորին հնութիւնից ղեւտական կարգով միշտ շարունակվում էր այդ ցեղի մէջ, մինչեւ՝ հասնելով Մահտեսի Աւետիսին, ծոյլ եւ անգրագէտ գիւղացուն — իսպառ վերջանում է։

Այդ գերդաստանի գլխաւոր անդամներն էին — Հուրի Խան-Դայան՝ ութսունամեայ պառաւը, Մահտեսի Աւետիսի մայրը, Մահտեսիի կինը՝ Տիկին Սկուհին, նրա որդին՝ փոքրիկ Ռուստամը — Սալբիի ուխտեալ նշանածը։ Բացի դրանցից նրանց տանը ապրում է օրիորդ Սալաթինը՝ տ. Սկուհու կրտսեր քոյրը, որ մի որբ աղջիկ լինելով, Մահտեսի Աւետիսը պահում էր իրանց մօտ։ Ծառայողների կարգին էին պատկանում — Նազլու աղախինը եւ հաւատարիմ հակայամարմին Խաչօն։

Digitized by Google

Ծաղկաւանը լինելով մի սարին մերձակայ գիւղ, հա-
րուստ էր իւր ջրալրի հողերով եւ պտղատմարգերով,
հնար էր տալիս գիւղացիներին, ոչ միայն երկրագործու-
թեամբ, այլ եւ խաշնարածութեամբ պարապել: Ամէն
տարի, գարնան սկզբին, երբ մեծ Աղուանը ձիւնի սպիտակ
ծածկոցը թօթափելով — ամբողջ սարը հիանալի կեր-
պով կանաչազարդվում էր, Ծաղկաւանից հարիւրաւոր
գերդաստաններ — զուգուած-զարդարուած, սազ ու
քամանչա, դըհոլ եւ զուռնա ածելով, նստած սիգա-
պանձ երիվարների վրայ, հարս, աղջիկ, կին եւ տղամարդ,
զինուած, ուրախ-ուրախ, երգ երգելով, իրանց հովիւների
հետ, վրանները էշերին ու եզներին բարձած — գնում
էին սարը, մի քանի ալեւորներ եւ պառաւներ մնում էին
իրանց տանը, որպէս զի մշակների հետ հոգա տաներին այգի-
ների եւ ցանելի հողերի տնտեսութեանը:

Ծաղկաւանի ամառը եւ աշունը խիստ տխուր են:
Շինական կեանքի ժրաջան եւ արդար վաստակարարութիւն-
ները, այստեղ ներկայացնում են իրանց դժոխքները եւ
ստրկական պատկերները: Ոզձալի գիւղացին այստեղ հան-
գիստ չունի գործելուց. — նրա ընտանիքի ապրուստի
պիտոյքների վրայ ծանրանում են աւելի Ոանի անտանելի
հարկերը. ստիպում են նրանց գործել, եւ գործել չա-
փից դուրս . . . , իրանց անձերը մաշելու եւ սպառելու չափ:

Ոչ ոք առանց արտասուքի չէ կարող նայել այդ-
պիսի բազմաթիւ աշխատաւոր հասարակութեան վրայ, որ
հեծում եւ հառաչում էին աղքատութեան ըծի տակ:
Ինչո՞ւ, մինչեւ Աստուած անիծել է նրանց: — Այդ չը
գիտենք մենք . . . միայն այդ յիմար մարդերի բազմութիւնը
իրանց տխմար կամքի յօժարութեամբ, տանում են
ստրկութեան եւ գերութեան բոլոր դժնդակ եւ անարգ

Digitized by Google

ծառայութիւնները: Նրանք մշակում են ուրիշի հողը, նրանք իրանց արիւնախառն քրտինքով՝ վաստակում են ուրիշի հացը, նրանք իրանց աշխատութիւններով լցնում են ուրիշի քսակը: Ցեանում ես այն երկրագործը, որ այնպէս պարծանօք կիտել է իւր կալի մէջ ցորենի ահագին շեղջը, այդ՝ իրեն չէ պատկանում, այդ պիտի լցնէ Ծանի ամբարը... եւ խղճալի շինականը, տխուր եւ յուսահատ, անվարձ եւ դատարկ, "քառեշտը,, (հեծանոցը) թեւին դրած, դառնում է տուն...:

Այդ երկրի մէջ, այն գերդաստաններն են աւելի հարուստ համարվում, որ թուով շատ աշխատաւոր ձեռքեր՝ այսինքն գործող տղամարդիկ ունին: Մահտեսի Աւետիսը անբախտ էր այդ նկատմամբ, այն պատճառով, որ նա չուներ ո՛չ բազմաթիւ եղբայրներ, եւ ո՛չ էլ հասուն որդիք: Նա ինքն միայնակ, մի քանի վարձկան ծառաների հետ, ստիպուած էր իւր անդադար աշխատութեամբ լցնել իւր վրայ դրած բոլոր ծանր կարիքները:

Ամէն օր, Մահտեսին մէկ րոպէ անգամ հանգիստ չունի իւր բերանը մի պատառ հաց դնելու, ինչ անէ խղճալին. միայնակ եւ անօգնական մարդ է, բայց դաշտում մի տեղ բանում է գութանը, մի տեղ "ոսկին,, (ալօրը), մի այլ տեղ կալ են կասում, մի տեղ արտ են հնձում, մի տեղ խոտ են քաղում... բացի դրանցից, այգի կայ, ոչխար կայ, տաւար կայ...: Ամէնի վրայ պէտք է վերահասու լինել, ամէնի համար հոգս տանել. բոլոր աշխատողները օտար մարդիկ են, օտար հայրերի որդիք են, մէկ րոպէ գործը թողնէր՝ — ահա մնաց գործը. որովհետեւ մշակը հոգս չունի, նա իւր կերակուրի եւ վարձքի տէրն է. նկատելով այդ հանգամանքները, պէտք է մտածել, թէ ինչ դրութեան մէջ կը լինէր Մահտեսի Աւետիսի խղճալի

Digitized by Google

ընտանիքը, երբ ստիպուած էին ամէն օր կերակրել այդքան բազմաթիւ վարձկան աշխատողներ։ Հուրի Յովհաննէսեան, չը նայելով նրա ուժասունամեայ ծերութեանը, տակաւին ժիր եւ վաստակարար — մէկ րոպէ դադար չունէր աշխատելուց։ Տ. Սկուհին, այն օրհնեալ տնարար կինը, արեւածագից մինչեւ կէս գիշեր, բնաւ հանդիստ չունէր։ Նա ոչ միայն իւր գերդաստանի տան տիկինն էր, այլ իւր տան հացթուխը, խոհարարը, մատակարարը, իւր տղայոց ատեանն, այլեւ իւր ընտանիքի դերձակը լինելով՝ կարում էր բոլորի հագուստը։ Բայց ամենայն դառն աշխատութիւնները քաղցրանում են՝ երբ վայելում ենք նրանց պտուղները. իսկ երբ մեր աշխատութիւնը դառնում է ուրիշների վայելչութեան նիւթ՝ մեզ միայն ունայն չարչարանքն է մնում...։

Ժամեռն է գիւղացիների հանգստի միակ ժամանակը. երբ նրանց արտերը եւ այգիները, նրանց մարգերը, արօտները՝ անհոգ քնած են սպիտակ ձիւնեղէն վերմակի տակ, երբ նրանց տաւարները, նրանց ոչխարները տաք գոմերի մէջ հանգստօրէն վայելում են իրանց համար պատրաստուած պաշարը։ Դատարկապորտ գիւղացիք հաւաքուած փարախներում, իրանց անասուններին մօտ, շատախօսում են դատարկ զրոյցներ, եւ պատմում են միմեանց իրանց գլխին եկած հետաքրքրական անցքերը, կամ թէ, գնում են մի աշըղ, որ նրանց համար երգում եւ սազ է ածում, թագաւորների եւ սիրողների հէքեաթներ է պատմում։

Բայց այդ զուարճութիւններից, այդ զբօսանքներից զուրկ էր Մահտեսի Աւետիսը. — նրա մենակութիւնը, ընտանիքի հոգսը, թոյլ չէին տալիս նրան մինչեւ անգամ ձմեռը անգործ մնալու։ Նա իւր անասունների ախոռի մի

Digitized by Google

կողմում, շինել էր մի փոքրիկ ωωթωω, որ տաքացած էր ջրքուտանիների ջնշով։ Այստեղ էր նա հաստատել իւր ջուլհակի (ոստայնանկի) մեքենան եւ կէս գիշերից սկսած այդ մեղսամաղձական բնակարանի մէջ լսելի էր լինում Մահտեսիի Նωթωω-ի եւ դՓայի տխուր եւ դաշնակաւոր ջակջակոցը։ Ներա կինը, տիկին Սկուհին կամ պատրաստում էր թեղի մուսուրաներ եւ կամ յարդարում էր հինածը. երբ նա իւր ամուսնուն օգնելու պէտք չէր, հեռու նստում էր իւր պեωպճեհի մօտ, Նազլուի հետ միասին հինում էին չալեղէն եւ աստեղէն գործուածքները, որոց թեղերը նա ինքը իլիկով ամառը սարում մանել էր՝ իրանց հովիւների կանանց հետ։ Գեղեցիկ է նայել այդ ժրաջան կանանց վրայ, երբ սարերում՝ հեռու իրենց վրաններից, կանգնած մի բարձր քարաժայրի գլխին, կամ մի յստակ աղբիւրի մօտ, երգելով, պտտեցնում են իրենց իլիկը։ Բանաստեղծական այդ տեսարանը երեւան է հանում հովուական կեանքի անմեղ եւ անզարդ բնաւորութիւնը։ Բայց աւաղ հայոց հովուհիների իլիկը նրանց համար չէ մանում...., նրանց ազնիւ եւ նուրբ գործուածները իրանց կիսամերկ զաւակները չեն հագնում, այլ, վաճառելով՝ վճարում են անգութ պարտատիրոջ տոկոսիքը, կամ աւելի վատթար, շատ անգամ բարբարոս քուրդը աւազակաբար կողոպտում է նրանց բոլոր գոյքը՝ նրանց ոչխարների հետ։ Մահտեսի Աւետիսի միակ հանգստի եւ օրհնութեան ժամերը լինում էին աւագ պասին։ Այդ ապաշխարհական օրերին միջօրէից առաջ ժողովրդի ծեբերը հաւաքվում էին եկեղեցու բակում մի խուցի մէջ, քահանան նրանց համար կարդում էր Այսմաւուրքը, Սրբոց վարքը, եւ նրանք ախորժանօք լսում էին Աստուածոյ եւ կրօնքի խօսքերը։

Digitized by Google

Հուրի Յան-Դայան, որպէս բոլոր անապաշտութիւն-
ների կենդանի օրինագիրքը, որպէս Տէր-Առաքելենց տոհմի
հնամոլ պատրիարքը, իւր ձեռքում ունէր տնտեսական
կառավարութեան ղեկը, ընտանիքի միւս անդամներից ոչ
ոք համարձակութիւն չունէր գործել նրա կամքին դէմ,
այլ պահպանում էին իրանց տան ծերի պատիւը եւ նրա
ծանրակշիռ համարումը։ Տիկին Սկուհին, որ արդէն քանի
որդոց մայր էր, առանց նրա խորհրդի՝ չէր կարող մի
պատառ հաց իւր բերանը տանել, նա չափազանց պատ-
վում էր իւր պառաւ կեսրոջը գիշերները, երբ նա անկո-
ղին է մնում, տիկին Սկուհին նրա մօտ նստելով՝ մա-
ժում էր նրա ոտերը, իւր ձեռքերով տրորում էր նրա
մէջքը, եւ չէր հեռանում նրա կողքից մինչեւ նա չը
քնէր։

Ռուստամը, մեր վիպասանութեան նազելի հերոսը,
որպէս մի օրհնեալ գերդաստանի զաւակ, ուր նահապե-
տական անզարդ կեանքի պարզութիւնները դեռ եւս
պահպանում էին իրանց ծաղկափթիթ քնքշութիւնը,
Ռուստամը, որպէս մի յանդուգն եւ մեծահոգի մանուկ,
իւր կեանքի ազատ շնչի հետ ներս էր շնչել մի ախտա-
բորբոք եւ դիւրագրգիռ հոգի, մի՝ երկաթի պնդութեամբ
կամք եւ աներկիւղ սիրտ — ալժանի է հարցասիրու-
թեան իւր բնաւորութեան մի քանի անզուգական յատ-
կութիւնների համար։ Նրա երեսի մի փոքր սեւակարմիր
գոյնը, թուխ գանգուրների հետ՝ մի առանձին վայելչու-
թեամբ՝ գեղեցկացնում էին նրա զուարթ եւ սիրուն
դէմքը։ Լայն եւ բարձր ճակատը, սահմանափակվում է
ներքեւից սեւ-թաւախիտ յօնքերով, որոնք երկու կողմից
կամարաձեւ գալով քթի վերնակողմում միաւորվում էին,
միւս ծայրերը երկարելով մինչեւ ականջները — ձեւաց-

Digitized by Google

նուամ են երկու սեւ աղեղնաձեւ գծեր, խազած մէկ կոնքից մինչեւ միւսը։ Նրա աչքերը, այն թուխ, վառվռուն աչքերը՝ նապաստակի երկչոտ աչքերի նման դուրս ընկած չեն, այլ՝ առիւծի հպարտ նշաձեւ աչքեր, նեռի պէս երկայն թերթերուններով՝ փայլուն են երկու աստղերի պէս։ Նրա քիթը, իւր բոլորակ վերջաւորութեամբ, համեմատելով երեսի լայնութեան հետ — կարելի է ասել փոքր էր, բայց այդ նրա դէմքին մի գրաւիչ քնքշութիւն էր տալիս։ Նրա խելացի երեսը, այն պարզ հոգու հայելին՝ չունէր ոչ մի խոժոռութիւն. նրա գորշ եւ մի փոքր նիհար թշերը, որոց վրայ չէին երեւում մազի հետքեր, աւելի էին փայլում ողորկութեամբ, միայն վերնաշուրթը դեռ նոր էր սկսել ղողջղալ դեռաբուսիկ սեւ մազերով։ Նրա ուղիղ եւ վայելչագեղ հասակը, ուռած կմբաւոր կուրծքը, նրա լայն թիկունքը, գրաւիչ՝ սեգ հայեացքը, մարմնի հպարտ եւ անհոգ շարժուածքը, այդ բոլոր բարեգուշակ նշանները, առիթ էին տալիս ամէն տեսնողներին յուսալ, թէ մի օր այդ նորահաս պատանին լինելու էր մի հոյակապ պարթեւաձեւ տղամարդ հսկայատիպ մարմնով եւ ահաւոր կազմուածքով։

Մանուկ Ռուստամը կարդացած չէր. նրա հայրը այդ մասին հոգս չը տարաւ նրա համար, եւ ինչ որ կարդում է տէրտէրը եկեղեցու մէջ, նրանցից մի բան չէ հասկացել։ Այդ պատճառով, նա չը գիտէ Տիրոջ օրէնքը։ Բայց նա ունի իւր յատուկ օրէնքը, որ բնութիւնը գրել է նրա սրտի վրայ։ — Դեռ մանկութիւնից սկսեց եփ գալ նրա հոգու մէջ քաջասիրական ոգին եւ նա — մի գաղտնի համակրութեամբ սկսեց սիրել զէնքերը։ Իւր տասնեւչորս տարեկան հասակում՝ հօրիցը թաքուն՝ նա գնեց մի հրացան, մի հատ Մօրատանի ընտիր թուր, եւ մի զոյգ ատրը-

Digitized by Google

ճանակ, եւ այնուհետեւ նա կարող էր միայնակ, որպէս մի խաշնարած ցեղի հզօր պարոն — վերակացու լինել իրանց ոչխարներին եւ հովիւներին — սարում։

Դեռ իւր պատանեկան հասակում նա ցոյց տուեց իւր ընդունակութիւնները այլ տեսակ պարապմունքների մէջ, որոնք ազատ չէին ահարկու վտանգներից։ Մի անգամ երբ քրդերի աստպատակները յարձակուելով ծաղկաւանցոց վրանների վրայ՝ կամենում էին նրանց հօտերը աւար տանել, Ռուստամը աւազակների հետ քաջութեամբ պատերազմելով, խլեց նրանց ձեռքից իրանց ոչխարները, ստանալով երեսի աջ կողմում, ականջի եւ աչքի մէջտեղ — գլխից ուղղաձիգ դէպի ներքեւ այն խոր սպին, որ կտրելով ճակատի աջակողմը, յօնքի մի ծայրը՝ հասնում էր մինչեւ ականջի վերջը, ամենեւին չը վնասելով նրա գեղեցկութեան, այլ տալով նրա դէմքին ահարկու բացատրութիւններ։

Մի այդպիսի կեանք, պաշարուած բարբարոսների յափշտակութիւններով, աւազակութեամբ՝ ընդ միշտ պատերազմի աղմուկների մէջ, պատանի Ռուստամի բնաւորութեան տուեց վայրենի եւ կատաղի յատկութիւններ։ Նա խիստ դիւրագրգիռ էր եւ բարկացոտ, եւ ունէր անողոքելի եւ աներկիւղ սիրտ, պողովատի կարծրութեամբ հաստատ կամք։ Նա չէր կարող տանել որեւէ անարգութիւն — իւր ազատութեան իրաւունքը, իւր մարդկային պատիւը անարատ պահելու համար, նա պատրաստ էր նահատակուելու։ Առաջին աչքաբացին տեսնելով իւր շրջակայքում իւրայիններին գերիացած եւ ստրկական վիճակը, միշտ լսելով նրանց ախ ու վախը, նրանց դառն հառաչանքները, ամէն օր տեսնելով հազարաւոր անբախտների անտանելի չարչարանքները, նա ստացաւ մի նախան-

Digitized by Google

ձոտ աղգասիրական ոգի, որով նա միշտ պատրաստ էր իւր արիւնով սրբել նրանց աչքերի արտասուքը։ Ո՞րտեղ էր ծնուել Ռուստամը, որ այդպէս չը լինէր. նրա խանձարուրը եղան անուշահոտ ծաղիկները, նրա օրօրոցը կանաչ խոտերը եւ թաւշեայ արօտամարգերը, նրա առաջին լալաւ արձագանգը — չը կրկնեցին շքեղազարդ դահլիճի պատերը — այլ մի պարկեշտ հովուական վրան, ահագին քարաժայռերը, սար, ձոր եւ անտառը։ Վարժատան մէջ չը մաշուեց նրա կեանքը։ Ղեւոնդեանի բնութիւնը՝ ինքն էր նրա վարժապետը։ Անուշահոտ ծաղիկներից, կանաչ փթթերից, խոտաւէտ մարգերից ստացաւ նա իւր հոգու ազնուութիւնը։ Պարզ եւ կապուտակ երկինքը, վարդագեղ արշալոյսը, ոսկէ արեւը, արծաթեայ լուսինը, բիւրաւոր փայլուն աստղերը, ներշնչեցին նրա հոգուն կրօնի եւ Աստուծոյ գգացումը։ Շրջող փետրազարդ թռչուններըը, հեզիկ շշնջող զեփիւռը, ծառերի եւ թփերի խըշխըշոցը, նրանց տերեւների կախարդական սօսափիւնը, պարզ եւ յստակ աղբիւրները, նրանց — խոտերի եւ ծաղիկների միջից կարկաչելով եւ սուլելով — հոսանքը, արարչագործութեան այդ բոլոր հրաշալի պատկերները վառեցին նրա երեւակայութիւնը գերբնական կրակով, եւ բաշխեցին նրան մի ազնիւ եւ գեղեցկասէր ճաշակ, մի աշխուժոտ եւ զգացմունքով լի — սիրտ։ Ամպերի սոսկալի որոտումը, սեւ թուղպերի բոմբիւնը, կայծակի ահեղ ճարճատիւնը, ահագին լեռնաժայռերի ճաքճքուելով, թնդալով — սարերի գագաթներից դէպի վայր գլորուելը, հեղեղատի պղտոր ալիքների գոռոցը, մրրիկի զարհուրելի մռնչիւնը՝ մինչ այն աստիճան աներկիւղ, մինչ այն աստիճան ամրապինդ էին արել նրա սիրտը, որ նա առանց սոսկալու, առանց ահ ու դողի, ուրախ եւ զուարթ, իւր օրհնութեան երգերը խառ-

նում էր սոսկալի մրրիկի սուլելու եւ փըշփըշոցի վայրենի ձայների հետ։

Երբ Ռուստամը իւր կրնմեան հլացանը ուսին, խորին կէսգիշերային պահուն, միջնիկ - միայնակ հսկում է իրանց ոչխարների փարախի եւ վրանների չորս կողմը, իրանց ոչխարները բարբարոս քիւրդերի եւ խորամանկ գայլերի բերանից ազատ պահելու համար — երբ նա յանկարծ լսում է հեռաւոր սարից մի սուաձ արջևի, մի ահագին քաւթառի կամ մի կատաղի վագրի սոսկալի մռնչիւնը, նրա հոգին վառվում է ուրախութեամբ. նա արիաբար դիմում է դէպ չարագուշակ ձայնը, իսկ երբ դարանամատած մի քարի ետեւը՝ նա յաջողում է զարկել եւ գետին գլորել վհիխարի գազանը, այլ եւս նրա հրճուանքին սահման չը կայ։ Նա ցնծութեամբ կրում է իւր շալակին — ահագին որսը, բերում, դնում է իրանց վրանի առջեւ։ Առաւօտեան, նրա հասակակիցք պատանիները ամաչելով նայում են նրա երեսին, բայց մանուկ աղջկունքը — գովաբանում են նրա քաջագործութիւնը, եւ նրանց կուսական սրտի մէջ ծնվում են սիրոյ զգացմունքը։

Աներկիւղ քաջասրտութեան հետ նրա բնաւորութիւնը ունէր հեզ, մաքուր, ազնիւ եւ քնքոյշ կողմեր եւս։ Արտեղ էր մեծացել նա, որ այդպէս չը լինէր — նա բնութեան հարազատ որդին էր, վաճառականոցներում եւ առեւտրական խանութներում չէր դեղնել նրա դէմքը արծաթասիրութեան նախանձից եւ հոգեմաշ յուսահատութիւնից։ Նրա հպարտ, կրակով լի սեւորակ աչքերը չէին մեռել, չէին նուաղել — ամէն ժամ նայելով ապրանք գնողի ճանապարհը։ Նրա անխարդախ եւ անկեղծ սիրտը — չէր թունաւորուած շահասիրութեան ախտով, եւ նա երբեք որպէս վաճառողների որդիքը — իւր լեզուին

Digitized by Google

թոյլ չէր տուել անուղղել բան խօսել, որպէս զի՝ պէսպէս կեղծաւորութեամբ, հազար եւ մէկ երդումով, բիւրաւոր սուտ վկայութիւններ բերելով՝ աշխատէր մի ծանր գնով վաճառել մի աժանագին ապրանք, եւ այնպիսով աւելի հմտանալ խաբեբայութեան կեղտոտ արուեստին:

Ռուստամը ոչ մի վատ համարում չունէր մարդկանց վրայ: Նա չէր ճանաչել նրանց չարութիւնները. նա բոլորին համարում էր իւր հայրը, մայրը, քոյրը եւ եղբայրը: Նա այնպէս էր հասկացել, թէ ամէն սիրտ այնպէս մաքուր եւ պարզ էր, որպէս այն յստակ աղբիւրները: Նա այնպէս էր հասկացել, թէ ամէն ոք այնպէս ազնիւ, այնպէս սուրբ է որպէս այն անուշահոտ նախշուն վարդերը: Նա այնպէս էր հասկացել, թէ մարդիկ այնպէս բնրի եւ այնպէս առաքինի էին՝ որպէս այն անմեղ եւ անարատ գառները:

Սիրոյ ախտը որ բոլոր կրքերից առաջ վառվեց նրա մանուկ հոգու մէջ — աւելի զգալի էր նրան: Աշղներից "մէջլիսներում,,, երբ նա լսում էր Քեասրամի եւ Ասլուի, Աշըղ-Ղարիբի ու Շահանամի, Թըհարի եւ Զօհրայի սիրավէպերը, նրա արիւնը բորբոքվում էր, նա ասպետական նախանձախնդրութեամբ պատկերացնում էր իւր մէջ իւր սիրուհին՝ մի սիրուհի, որին ուխտել էր նա իւր կեանքի ամենապատուական ժամերը: Բայց երկրի սովորութիւնները, ազգային խորթ եւ օտարոտի բարք ու վարքը, երբեք չէին թոյլ տալիս նրա գոնէ մի անգամ տեսնել իւր սիրուհու երեսը եւ նրա բերանից՝ մի քանի բառ լսել:

Ծանեւհինգ տարեկան էր Ռուստամը, երբ մի օր, Աղուանայ սարերում, ուր իջեւանել էին ծաղկաւանի բոլոր խաշնարած գերդաստանները, առաւօտեան հովին, արեւածագից առաջ, նատած սարի վրայ, մի աղբիւրի մօտ, նա իւր քաղցր հրեշտակային ձայնով՝ երգում էր իւր Աէրը,

Digitized by Google

յանկարծ տեսաւ նա մի նաղելի աղջիկ, կուժը ուսին, եկաւ աղբիւրից ջուր տանելու։ Նա մոտածեց ինքն իրան "իրաւ, դա է լինելու իմ սիրոյ կոյսը, որ Սուրբ Կարապետը բաշխել է ինձ„։

Արդարեւ նա էր, չքնաղագեղ Սալբին, որ լսելով Ռուստամի առաւօտեան երգը, ջուրը պատճառ բռնելով՝ եկել էր տեսնելու այն սիրուն տղամարդի երեսը, որը այնքան սրտմտում եւ խորովմում էր իւր սիրով։ Ռուստամը, բռնելով նրա ձեռքից, յայտնեց իւր սէրը, հարցրեց թէ նա եւս կամենո՞ւմ էր սիրել իրան. աղջիկը կարմրելով՝ հնչեց այն սուրբ բառը — "այո„ եւ մէկ զոյգ համբոյր կնքեց նրանց ուխտը . . .։

Այնուհետեւ ժամադիր եղան նրանք այն նուիրական աղբիւրի մօտ՝ երբեմնապէս միմեանց տեսնելու։

Մենք կը դնենք այստեղ սիրոյ առաջին երգը, որ Ռուստամը երգեց Աղուանայ սարերի մէջ։

Սէր իմ, ով սէր, սէր,
Ա՛խ, դու անգութ սէր,
Տարար խելք-միտքըս՝
Գլխիս եղար աէր։

Մինչ ե՞րբ դու այդպէս
Ինձ պիտի տանջես.
Մինչ ե՞րբ, դու՛ ճրագ —
Այրվող թիթեռն՝ ես։

Ո՛վ իմ սիրոյ կոյս,
Հատոր իմ հոգւոյս,
Առանց քե՛զ, մի ժամ
Կեանքից չունիմ յոյս։

Եւ՛ առ իս, եւ՛ առ իս,
Գոնեա՛, ա՛ռ հոգիս,
Սիրով կը բաշխեմ՝
Քեզ իմ հրեշտակիս։

Մարդիկ անհամար
Ինձ խենթ, խելագար՝
Կոչում են այժմուս՝
Դու՛ եղար պատճառ։

Գուցե քե՛զ համար՝
Գրիչն արդար՝
Ինձ՝ նշանակեց —
Ջոհուել չարաչար։

Digitized by Google

Ասա, դուռ, Լոկմանն,
Գիտես դու դարմանն
Սիրահար սիրտը
Բուժելու միայն։

— "Ո՛հ, չունի՛, չունի՛,
Նա դարմանն չունի։
Սիրահար սրտին՝
Սէրը դեղ կ՚անի„։

Սուրբ ես դու ոմ սէր՝
Քեզ ստեղծող Ցէր —
Երկնից եւ երկրի՝
Արեց հէր եւ մէր։

Ես էլ քո պաշտօն՝
Առի անտրտունջ,
Միշտ սէրը պաշտել
Մինչեւ վերջի շունչ։

Digitized by Google

Է.

ՍՆԱՀԱԽԱՏ ԹԱՍՏԻԱՐԱԿԶՈՒՀԻՆ

Կիւրակէմուտ իրիկուն էր։ Մահտեսի Աւետիսը իւր մօր հետ գնացել էին ժամ, բայց նրա կինը տիկին Սկուռհին՝ իւր քրոջ — օրիորդ Սալաթինի հետ մնացել էին տանը, որովհետեւ, այդ երկրի սովորութեան համեմատ, պառաւները եւ ծերունիները պէտք է ամէն օր շարունակ ժամ գնան, բայց երիտասարդ կանայք, նորահարսերը, եւ մատաղ օրիորդները եկեղեցու երես են տեսնում ամբողջ տարուայ ընթացքում՝ միայն երկու անգամ, այսինքն Մեծ եւ Փոքր Զատիկներին, որ «պըջո-Ընկ-ն» առնեն եւ հաղորդուին Քրիստոսի հետ։

Բայց տիկին Սկուռհին տանը մնալով՝ բոլորովին հանգիստ չէր — նա անդադար աշխատում էր այս եւ այն առտնին գործերով, զգուշանալով՝ չը լինի թէ նրա սկեսուրը ժամից դառնալուց յետոյ, տան մէջ մի չնչին անկարգութիւն գտնելով՝ սկսէր նրան նախատինք տալ։

— Աղջի, Նազլու, վերջապէս ձայն տուեց տիկին Սկուռհին իւր աղախնին, գնա փարախի գաւիթը — հաւերը թառը քշիր, ծառանեղին պատուհիրիր փարախի երդիկները փակեն։ Ուշ ժրքան ցուրտ է այսօր։ Չը մոռանաս դառնալու ժամանակ Պօղոսին վախեցնել, որովհետեւ նա անդադար լացում է . . . ։

Նազլուն դուրս գնաց, բայց փոքրիկ Պօղոսը աւելի եւ աւելի էր լաց լինում, ով գիտէ թէ ինչ բանի համար։

Digitized by Google

Մի քանի րոպէից յետոյ, դրան յետեւից լսելի եղան զարհուրելի կրամրռալու ձայներ։

— Հ՜-շ-շ-շ ... Հ՜-շ-շ-շ ... ձայն տուեց տիկին Սկուհին — ապ֊ջմապօղը ... ապ֊ջմապօղը ... սո՜ւս ... սո՜ւս ... ։

Բայց Նազլուի զարհուրելի կրամրռոցը դարձեալ լսելի եղաւ։

— Վո՜ւյ ... ամա՜ն ... արջմալօ՜զը ... եկա՜ւ, եկա՜ւ, Պօղոս, եկա՜ւ, որ քեզ ուտի — կրկնեց մայրը։

Բայց յանկարծ Նազլուն ներս մտաւ։ Վա՛յ, հարսի՛կ, ես մեռա՛յ ... սիրտս տրաքեց ... լեղիս պատռուեց ... ամա՜ն, ես մեռա՛յ։

— Ա՛ղջի՛կ, Նազլու՛, սեւ հագնես, ի՞նչ է, ի՞նչ պատահեց քեզ, հարցրեց տիկին Սկուհին՝ զարմացած ձեւացնելով։

— Ամա՜ն Աստուա՛ծ ... առաջ տարաւ Նազլուն կցկտուր ձայնով, ո՜ւհ, երբ միտքս բերում եմ, մարմինս սարսռում է, ալոռատան բակում՛, տեսայ մի զարհուրելի հրէշ, պոչը երկայն, ինքը մազոտ, աչքերում կրակ էր վառվում՛, գլխի վրայ երկու եղջիւր ունէր ..., նա իւր ճանկերի մէջ բռնած՝ ուտում էր մեր մշակ Յաչօյի տղան — փոքրիկ Սահակը ..., ա՜խ ինչպէս ցաւագին լայց էր լինում խեղճ Սահակը ...։

— Է՛հ, հողը քո գլխին, Նազլու, ասաց տիկին Սկուհին, իրաւ դու տեսել ես մարդագայլը, բայց նրան ասէիր, թէ իմ փոքրիկ Պօղոսը այլ եւս լաց չի լինում։

— Հա՛, ես այդպէս էլ ասացի, բայց մարդագայլը ասաց եթէ Պօղոսը էլի այնպէս լաց կը լինի՝ ես կը գամ նրան էլ կ՛ուտեմ։

Digitized by Google

Յեղձ Պօղոսը զարհուրելով այս խօսքերից մի քանի րոպէ լուռ կացաւ, մինչեւ քունը նրան բոլորովին հանգըստացրեց։ Նրա մայրը ուրախ էր, որ կարողացաւ խաբել իւր երեխային[1]։

Նոյն ժամուն Ռուստամը տաւարների փարախում, ծառանների մօտ էր. այնտեղ վերահասու էր լինում իրանց անասուններին եւ նրանց հետ միասին մաքրում էր կովերի, եզների եւ գոմէշների աղբը, խոտ եւ դարման էր տալիս, եւ ուրախանում էր, տեսնելով թէ նրանցից ոմն է շատ գիրացել։ Վերջացնելով իւր գործը, աշխուժաւոր պատանին, եկաւ իւր չորս տարեկան մանուկ քուռակի մօտ, եւ պտոյտ գալով նրա շուրջը՝ հիանում էր նրա գեղեցկութեան վրայ։ Նա առեց քորոցը (ղաշովը), եւ սկսեց քորել իւր քուռակը, հեզիկ շրթունքների միջից եղանակելով մի երգ։ Ամեռուայ սկզբից, ինքը, պատանին, իւր ձեռքով հոգս է տանում իւր ձին դարմանելու, որ նա աւելի դիրանայ, զօրանայ եւ մեծանայ։

— Յաչօ, ասաց նա իւր մտերիմ ծառային, — տեսնո՞ւմ ես, քուռակը աշունքից սկսած ոլքան մեծացել է. հաւատա, գարունքին ծաղկաւանի փարախներից ոչ մի ձի դրա նման չի դուրս գալու։

— Անտարակոյս, այդպէս է, նրա խօսքին հաստատութիւն տալով պատասխանեց Յաչօն. — քո ձիու հատը ոչ միայն մեր գիւղում, այլ մեր ամբողջ մահալում չը

---

[1] Հայոց մանուկների ընտանեկան դաստիարակութիւնը ընդհանրապէս անկարգ է՝ առանց այդ մասին տարակուսելու. բայց աւելի վատթար է այն սովորութիւնը, որ ծնողները կամենալով յետ պահել իրանց երեխաները չարութիւն անելուց, եւ կամենալով, որ նրանք լինին կարգապահ եւ պատշաճ, միշտ զարհուրեցնում են նրանց սարսափելի առասպելներով։ Այդպիսով նրանց երեխաները մեծանում են ոչ միայն թուլասիրտ, վախկոտ եւ երկչոտ, այլ՝ մանկութիւնից ուսած յիմար նախապաշարմունքներով։

Digitized by Google

կայ։ Ճանճակերենց Ցարուքիւնի տղան էլ պարծենում է, թէ ձի ունի. անցեալ օր նրանց փարախը մտայ, տեսայ, ինչ ձի, մեր կարմիր կովի՝ հորթը — քեզ օրինակ։

— Դու գիտե՞ս սա ինչ ցեղից է... ամ ղրա "ասլան" ը-ըչան... սա արաբների փեհլաննէրի ամենաազնիւ արիւնից է. Մահմուդ-բէկը իւր եղբօրը չէր բաշխի մի այդպիսի քուռակ. բայց նա իմ բարեկամն է, ինձանից անց չը կեցաւ։

— Բայց մի բան եմ լսել, Ռուստամ, նրա խօսքը կտրեց Խաչօն։

— Ի՞նչ խօսք, ինչ բան, հարցրեց շտապով Ռուստամը։

— Վախում եմ. ասեմ, սիրտդ կոտրուի։

— Չէ, ասա, իմ սիրտը կոտրուող սիրտ չէ։

— Ասում են, Մելիքը՝ Խանի մօտ սատանայութիւն է արել քո ձիու մասին, եւ Խանը ասել է՝ "կ'առնեմ Ռուստամի ձեռքից. հայն ինչ է, որ լաւ ձի նատի, հային՝ էշն ու իւր խղճութիւնն էլ է բաւական...",

— Ա՛յ տղայ, ուրքան միամիտ ես դու, խօսեց պատանին արհամարհանքով. ես քեզ այդքան երկչոտ չէի կարծում, Խաչօ. ասենք թէ ես մի լաւ ձի չունեմ, մի սիրուն կնիկ ունեմ. Խանը պիտի իմ ձեռքից առնէ, մի՛թէ կարող է մի այդպիսի բան անել։

— Հա՛, Ռուստամ, քանի որ մենք այդպէս գերի կը մնանք այդ անօրէննէրի ձեռքում, որ ո՛չ Աստուած ունին, ո՛չ խղճմտանք՝ — մեր տունը, մեր տեղը, մեր գոյքը, մեր ապրանքը՝ ինչ խօսքս երկարացնեմ, նոյն իսկ մեր կինն եւ որդիքը — մերը չեն... ինչ որ ուզեն՝ կ'անեն, ինչ որ կամենան՝ կը կատարեն...։ Տեսաւ անցեալ օր, որպէս անիրաւութեամբ խլեցին տարան Միհրապի Թոռը, այն

Digitized by Google

աննման աղջիկը։ Նրա ծնողները բացի լալուց՝ ոչինչ չը կարողացան անել։ Նրա այնքան բազմաթիւ դրացիները, բոլորը երկիւղից փախան, իրանց տներում թագնուեցան եւ դռները փակեցին։ Ղազարի Նարկիզը, որպէս մի անմեղ գառն՝ մնաց գայլերի ճանկերի մէջ...։

Այդ խօսքերը վառեցին դիւրագրգիռ պատանու սիրտը. ցաւակցութեան զգացողութիւնից՝ մի քանի կաթիլ արտասուք երեւաց նրա տխրած երեսի վրայ։ Նա շրջեց երեսը եւ արագութեամբ սրբելով արտասուքը՝ ասաց. —

— Այդ իրաւ է, Ղազո, մի այսպիսի երկրի մէջ հայի աստղը խաւար է..., բայց հաւատացնում եմ քեզ, քանի որ իմ գլուխը կենդում է այս ուսերի վրայ, չը կարծեմ մի մարդ կարողանայ իմ տնից բռնութեամբ մի բան տանել։

Ղեւոնդ Ղազօն ոչինչ պատասխան չը տուեց։ Նա գիտէր, որ մի տալապայման տենչ՝ աներեւոյթ կերպով եփ էր գալիս այդ մանուկ սրտի մէջ. բայց անհնարին տխրութեամբ կրկնեց իւր պապերի ասածը. "Մի ձեռքը ծափ չէ զարկում,,։

Ռուստամը կրկին մօտեցաւ ձիուն, ձեռքը քսեց նրա պարանոցին, յարդարեց նրա նորաթոյս բաշը եւ կամենում էր դուրս գալ փարախից, երբ նրան կանգնեցրին մի քանի հոգի։

— Աղա՛, ասացին նրանք, այս օրուայ փոթորիկը մեզ հնար չը տուեց փարախից դուրս գալ եւ մեզ համար ուտելու հաց մուրալ. ի սէրն Աստուծոյ պատուիրեցէք, որ այս գիշեր կերակրեն խեղճերիս։

— Մի՛թէ դուք գնում էք դռներից հաց մուրալու, եւ դրանով ամօ՛թ բերում մեզ վրայ, մի՛թէ իմ հայրը եւ ես չէ՞նք պատուիրել, որ ամէն օր ձեզ օրական պատ-

Digitized by Google

շաճաւոր կերակուր տան, հարցուեց տհաճութեամբ Ռուստամը։

— Ճիշտ է, աղա, պատասխանեցին նրանք միաձայն, բայց մենք չնորհակալ ենք եւ նրա համար, որ դուք տուել էք մեզ տաք օթեւան ձմերելու։ Այդ բաւական է. դրանից աւել պէտք չէ ծանրութիւն տալ։

— Ո՛չ, ո՛չ, ես կը վշտանամ, եթէ ձեղնից մինը բախէ ուրիշի դուռը. քանի այստեղ էք, դուք Աստուածոյ հիւրն էք, մեր պարտականութիւնն է հոգս տանել ձեր ապրուստի համար. — հացը մերը չէ, Աստուածոյ տուածն է։

Այնուհետեւ Ռուստամը առանց ուշանալու դուրս գնաց փալախից, մտաւ իւր մօր մօտ, եւ բարկանում էր նրա վրայ, թէ ինչու՞ օրինաւոր կերպով հոգս չէր տանում անբախտներին՝ որ ապաւինած էին իրանց ողորմութեան։ Դրանք մի հայ գերդաստանի ընտանիքն էին, որոնց գիւղը բոլորովին կողոպտել էին քուրդերը, եւ բնակիչները ապրուստի համար ոչ մի հնարք չունենալով՝ ցիրուցան էին եղել զանազան կողմեր, եւ բարի քրիստոնեաները ընդունելով նրանց իրանց տները՝ պահպանում էին։ Մահտեսի Աւետիսը տեղ տուեց իւր փարախում՝ այդ անբախտ ընտանիքներից երկուսին։

Դրան մուրճը զարկեց։

— Էյ, Նազլու, ձայն տուեց տիկին Սկուհին, ժամաւորքը եկան, գնա՛, դուռը բա՛ց արա։

Թեթեւաշարժ աղախինը վազեց, դուռը բաց արաւ, ներս մտան Հուրի Խան-Դայան եւ նրա որդի Մահտեսի Աւետիսը։

Հուրի Խան-Դայան, կռացած իւր գաւազանի վրայ, դողդողալով, ոտքերալով առաջ էր գնում, հանելով

տան շէմքի վրայ, "ի մուտս իմոյս սենեկիս գծագրեա՛ զո՛ արեամբդ„, ասելով նե՛րս մտաւ։

Այդ մոլեռանդ պառաւը, որի ամէն մի քայլը, ամէն մի շարժուածքը — ունէին մի-մի խորհրդական գաղտնիք, խրճիթը ներս մտնելուց յետոյ, սկսեց կատարել իւր սովորական ծէսերը։ Նա ջերմ հաւատով, երկրպագութիւն տալով, երեսն խաչակնքելով՝ մօտեցաւ խրճիթի արեւելեան անկեանը, ուր պատուհանի մէջ դրած էին մի քանի «ըբո-ՆԽ-Ն+ եւ մի սրբի պատկեր։

Այստեղ, այս ուխտեալ պատուհանի հանդէպ, երկար, կանգնած աղօթում էր նա, ստէպ ստէպ ծունր դնելով, երեսին խաչ հանելով եւ "տէր ողորմեայի„ հատիկները ամէն մէկ անգամ տէր ողորմեա՛ ասելու ժամանակ՝ դարձնելով։ Վերջապէս, "զի քո է պէքայութիւն եւ զօրութիւն„, ասելով, ուսերի վրայ նստած բարի եւ չար ոգիներին դէպի աջ եւ դէպի ձախ կողմերը գլուխ տալուց յետոյ, եւ խրճիթի չորս անկիւններում նստած պահապան ոգիներին նոյնպէս երկրպագութիւն տալուց յետոյ, — մի առանձին ջերմեռանդութեամբ "ողորմեա՛ Աստուած„ ասելով՝ գնաց նստեց +ո=ըոո= մօտ։

Խրճիթը, ուր հաւաքուել էր նոյն ժամանակ Ծէր Առաքելենց փոքրիկ գերդաստանը — խորին մելամաղձական լռութեան մէջ էր։ Տիկին Սկուհին, քուրսուց հեռու, մի անկիւնում առանձնացած, օրօրում էր իւր փոքրիկ Պօղոսը։ Նա չէր համաձակվում գնալ թոնրի մօտ, ուր այն ժամանակ նստած էր իւր սկեսուրը։ Նազլու աղախինը՝ ձեռքը ծնօտին դրած՝ նստել էր տիկին Սկուհու մօտ։ Պատանի Ռուստամը, ձեռքերը սրտին դրած՝ կանգնել էր հօր սպասին, հնազանդութեամբ սպասելով — երբ նա կը հրամայէր վառել ծխափողը եւ կամ մի այլ

ծառայութիւն: Հուրի Յան-Դայան մէջքը տուաճ քնաշորերի ծալքին, ոտքերը մեկնել էր +ո—ըոոո— տակ, որ դրուած է թոնրի վրայ: Մահտեսի Աւետիսը միայն նստած էր մօր մօտ՝ լուռ եւ անխօս:

Հուրի Յան-Դայայի դէմքը ձեւացնում էր մի տխուր եւ տրտում պատկեր, որի կծու արտայայտութիւնը՝ բարկութեան սաստիկ բորբոքումն էր բացայայտում, որ նոյն րոպէին խառնում էր նրա սիրտը: Մոխրագոյն կատուն, նրա սիրելի կենդանին, կռմըռալով՝ քծնում էր իւր պառաւ տիկնոջ չորս կողմը, բայց եւ այնպէս չը կարողացաւ իւր քնքոյշ հաճոյամոլութեամբ ամրքել նրա ճակատի կնճիռը: Ներկայ լռութիւնից յետոյ, յանկարծ, որպէս մի սեւ թուխպ, որ ծածկում էր երկնքի աւելի մեծ տարածութիւնը՝ որոտաց, թնդաց եւ խորշոմած աչքերից կայծակներ արձակելով, պոռաց նա իւր ժանգոտ ձայնով դէպի Տիկին Սկուհին. —

— Տօ՛, փուչացած, այս տան սուրբը-սրբութիւնքը դու իսպառ խափանեցիր, քեզնով մեր քրիստոնէութիւնը կորաւ: Ձէ՞ որ այսօր կիւրակէմուտ իրիկուն է, քանիցս պատուիրել եմ այսպիսի գիշերներին խնկածխութիւնը անպակաս լինի այս տան մէջ, եւ ոո—ըէ պոպոո—հանի առջեւ, բացի ամենօրեայ կանթեղից, նաեւ վառուեն եօթն մեղրամոմի պատրոյգներ: Դրանցով մեր տան բարի ոգիները կ'ուրախանան, իսկ չարերը կը տրտմին: Խաղաղասէր տուն է, այդպէս պէտք է կատարել Տիրոջ օրէնքները: Էհ, ինչ խորհուրդ ունի հայ-քրիստոնէութիւնը. ինչ է այն բարի հրեշտակների վարձը, որ միշտ պահպանում են մեզ. — այն մի բուռն սուրբ խունկը, որի անուշահոտութեամբ զուարճանում են նրանք: Ինչու՞ չըն ուրախացնենք, որ Ասըն տրտմէ եւ մեր ձախ թեւի

վրայ սատանան նստած գլուխ մեր մեղքերը իւր պատմութիւն (տետրակ) մէջ։ Ը՛հ. "սեւին սատան ինչ անէ. խեւին խրատը,,։ Այդ առաջին անգամը չէ... ես մինչեւ այսօր քեզանից մի խելացի բան չեմ տեսել։

Յոզճալի Սկուհին, թէպէտ մի հասունացած կին էր եւ երկու երեք զաւակների մայր, միտ դնելով լուսթիւն պահելու եւ ծերերի խօսքը պատուելու կանոններին, ոչ միայն օրինաւոր կերպով իւր իրաւունքը կարող չէր պաշտպանել նրա առջեւ, այլ եւ թոյլատրելի չէր նրան իւր կեսրոջ մօտ համարձակ խօսել։ Այդքանը միայն կարողացաւ ամօթխած ութեամբ իւր երեսքօղի տակից Նազլուի լեզուով ասել նրան.

— "Թող ներէ բարի սկեսուրը, հաւատացնում եմ բոլոր սրբերի անունով, որ այդ գործի մէջ մի մազաչափ մեղք չունիմ։ Որովհետեւ մեր տանը խուճկը վերջացել էր, ուղարկեցի պատուա Մարթայից փոխ առնելու, նրանք էլ հազիւ թէ այս գիշերուայ համար ունէին, եւ մոռացայ շուկայից բերել տալու,,։

— Հոգեշահ եւ աստուածահաճոյ գործերը կը մոռանաս, գիտեմ, կրկնեց պատուաբը գլուխը շարժելով. բայց ուտելու համար չամիչ կամ խաղող լինէր, երբեք չէիր մոռանայ շուկայից բերել տալու։

Տիկին Սկուհին չը կամենալով սկեսուրի աչքի առջեւ կանգնելով՝ աւելի բորբոքել նրա բարկութիւնը եւ առիթ տալ նոր տժգոհութեանց, դուրս եկաւ խրճիթից, գնաց հոգալու անբախտ ընտանիքներուի ընթրիքի մասին, որի համար պատուիրել էր իրան Ռուստամը։

Մահտեսի Աւետիսը, գիտնալով իւր մօր տրտնջոտ եւ քրթմնջոտ բնաւորութիւնը, ոչ ինչ չը խօսեց, գլուխը քարշ ձգած տնից դուրս եկաւ, գնաց անասուններուի

Digitized by Google

փարախը չորքոտանիներին վերահասութիւն անելու համար։

Հուրի Յան-Դայան միայնակ մնաց խրճիթում, նստած ⁂ մօտ։ Այնտեղ մնաց Նազլու աղախինը, որ լուռ կանգնած էր մի անկիւնում մռայլ աղջամղջի մէջ։ Հուրի Յան-Դայային խիստ զգալի եղաւ իւր որդու եւ հարսի այդպիսի վարվեցողութիւնը։ Նա, առժամանակեայ լռութիւնից եւ ծանր մտածմունքից յետոյ, գլուխը խոնարհեցնելով, ձեռքը ծնօտին դրած, սկսեց ինքն իրան խօսել, մտաբերելով իւր հանգուցեալ ամուսինը՝ քահանայ Տէր Միհնասը, եւ իւր օրհնեալ տունը, որ նրա օրով մի նոր Երուսաղէմ էր։ "Քո հոգին թող միշտ լուսի մէջ լինի, բարի քահանայ...", ասաց նա ինքն իրան. "քանի դու կենդանի էիր, այս տունը ունէր հայ-քրիստոնէութեան համ ու հոտ. բայց երբ որ Տէրը մեզ զրկեց քեզանից եւ դու մեզնից հեռացար դէպ երկնքի լուսեղէն պալատները, բոլորը քեզ հետ տարար։ Ու մեր աստղը խաւարեցաւ, եւ մեր բախտը կուլացաւ, մեր տան սրբութիւնները պղծուեցան, անօրէնութիւնը համարձակ ոտք կոխեց մեր շէնքի վրայ։ Ըստ այսմ ամենայնի Աստծոյ ողորմութիւնը անչափ է... լաւ է, որ քարը քարի վրայ մնում է դեռ, որ երկինքն փուլ գալով մեզ տակով չէ անում, եւ անդունդը պատառուելով մեզ կուլ չի տալիս։ Փառք քեզ Տէր, փառք քեզ, քո բարութիւնը անչափ է...։ Ա՛խ, յուսահոգի քահանայ... — նորից կենդանանում է նրա ուղեղի մէջ հանգուցեալի յիշատակը — դու միայն էիր իրրեւ տան պահապան ոգի. ո՛ր գիշերը առանց "եկեսցէ" ասելու, առանց Սաղմոսը եւ Նաւեկը ծայրէ ի ծայր կարդալու, առանց եօթանասուն ծունր իջնելու, քունը տիրում էր քո աչքերին։ Քո

Digitized by Google

սուրբ աղօթքներուն շնորհիւ, մեր խրճիթին չորս կողմը կանգնում էին ամրոցի նման բարձր աշտարակներ եւ շրջապարիսպ. — քանիցս անգամ գիշերին այդ տեսնելով գողերը չէին համարձակվում մեր տունը մտնելու: Քո ժամանակ մեր տան սրբութիւնները խաւարի մէջ լոյս կը տային եւ պահպանող ոգիները խունկերի անուշահոտ բուրմունքից ուրախանում էին: Բայց երբ դու մեռար, բոլորը քեզ հետ վերջացաւ եւ մենք մնացինք անմխիթար տխրութեամբ՝ իբրեւ գերի մի մոլորեալ գիրքաստանի մէջ:

Մինչ Հուրի Խան-Դայան այդօրինակ խորհրդածութեանց մէջ էր, նրա մտածմանց ամբոխմունքը ցրուեց փոքրիկ Պօղոսի լացի ձայնը, նա հրամայեց Ծաղկուհին, որ իւր մօտ դնէ իւր թոռան օրօրոցը եւ իւր թոյլ ձեռքով սկսեց օրօրել նրան: Իւր ամուսնի յիշատակը, իւր տան վաղեմի օրերի անմեղ, կրօնական կեանքն, որ նոյն րոպէում վառել էին նրա երեւակայութիւնը, առիթ եղան բորբոքելու նրա սառը սրտի մէջ բանաստեղծական շիջած կայծերը եւ նա ջերմ ոգեւորութեամբ սկսեց երգել հանդարտ շարժելով իւր թոռան օրօրոցը.

Քնէ, քնէ, սիրուն թոռնեակ,
Քնէ, անուշ դու քնով
Օրօրոցդ հանդարտ կը շարժեմ
Ես մայրական ջերմ սիրով:

Քնէ, քնէ, անմեղ հրեշտակ,
Քնէ, անուշ դու քնով.
Քեզ ծր կ'ասեմ, քաղցր ծր ծր . . .
Քեզ ծր կ'երգեմ մեղմ ձայնով:

Digitized by Google

Աչքդ փակիր, իմ աղաւնեակ.
Ա՛յդ աչքերդ վառվռուն.
Քաղցր քունը վերադ սփռէ՝
Իւր թեւիկները նաշխուն։

Աչքդ փակիր, իմ սիրեկան.
Քնէ, որ շուտ մեծանաս.
Քո վաստաբախտ ծնողաց համար
Խելօք տղայ դու դառնաս։

Երբ մեծացար, իմ նազելի,
Մանուկ եղար դու քնքոյշ.
Ցէրտէրի մօտ կ՚ուղարկեմ քեզ
Սերտել տաղեր, եւգ անոյշ։

Քեզ կը սորվեցնէ տէր Հայրիկը՝
Սազմոս, ժամագիրք, Նարեկ
Փառաբանել Աստծոյ անուն՝
Ամբողջ գիշեր ու ցերեկ։

Երբ որ ծաղկին սեւ մօրուքով՝
Այդ լուսափայլ լեզբը թշեր,
Անապատը կ՚ուղարկեմ քեզ,
Ճգնել անդ օր ու գիշեր։

Քնէ, քնէ, սիրուն որդեակ,
Քո մօր սրտին մխիթար.
Քնէ եւ շուտ մեծացիր դու,
Ինձ քո ձեռքով հողը տար։

Digitized by Google

Այդ հրեշտակի սուրբ լեզուովդ՝
Ազօթք կարդա ինձ վըրայ.
Ցերը շուտ կը լսե քեզ,
Ցատիդ հոգւոյ ճարն արայ։

Իմ հոգւոյս դու նուիրէ
Քո առաջինն պատարագ,
Որպէս Ռէքէլ[1] արիւն ծովէն,
Ինձ մեղքից փրկէ, որդեակ։

---

[1] Հաւրի խան-Դպյան օրօրոցից պատարաստում է իւր թոռան ապագան. նա օր առաջ ցանկանում է, որ իւր թոռը լինէր մի քահանայ, մի ճգնաւոր, նորագէր Ցէր-Աստքելենց առհմի զեւտական կարգը եւ յիշելով այն աւանդութիւնը, որ գրուած է Ցէր Ցուսկան որդի Սուրբ Սահփանոսի մասին, թէ ինչպէս նա իւր առաջին եւ միակ պատարագը նուիրելով աղօսաց Ռէքէլ — թաւրիզցի պռոնիկ կնոջ — արեան ծովից, այսինքն իւր մեղքերից, Հաւրի խան-Դպյան եւս ցանկանում է, որ իւր թոռը եւս քահանայ լինելով իւր առաջին պատարագը նուիրէր նրա մեղքերի թողութեան համար։

Ը.

Մի ծագիկ խեզդող փոխշեւրի մէջ

Մի օր, մի անճանօթ հիւր յայտնուեցաւ Տէր Առաքինոյ տանը, մի տղամարդ, երեսուն հինգ տարեկան, վայելուչ հասակով եւ եւրոպական հագուստով։ Նրա անունն էր Արամ Աշխարհունի, բնիկ պարսկաստանցի, որը բարեբախտութիւն էր ունեցել իր տասնեւչորս տարեկան հասակում հանդիպելու մի ամերիկացի ճանապարհորդի եւ նրա հովանաւորութեամբ տարվում է Նոր Աշխարհը ուր իւր բարերարի շնորհիւ ընդունվում է որպէս աշակերտ Սիւ-Նօրքի մի աստուածաբանական ճեմարանի մէջ։

Իւր ուսումն աւարտելով՝ պարոն Աշխարհունին ստանում է Աստուածաբանութեան վարդապետի տիտղոս. դուրս գալով ճեմարանից՝ մտնում է միսիօնարական կարգը եւ որպէս առաքեալ Աւետարանի քարոզութեան՝ ուղարկվում է Հնդկաստան։ Այնտեղ հինգ տարի շարունակ Աստծոյ խօսքը բարբարոսներին քարոզելով եւ միանգամայն լեռնաբնակներից սաստիկ վէրքեր ստանալով, պարոն Աշխարհունին հիւանդ տարվում է Ամերիկա։ Բայց առողջանալուց յետոյ իւր կեանքի մնացեալ օրերը իւր ազգին պիտանի կացուցանելու մտօք, նորահաս քարոզչէը, աշխարհի երեսին երկար թափառելուց յետոյ՝ դարձար է գանում Պարսկաստան։

Տեսնելով իւր ազգակիցների ցաւալի վիճակը՝ "խեղճը եկաւ նրանց վրայ, որ աշխատած եւ ցրուած էին,

Digitized by Google

ինչպէս ոչխարներ, որ հովիւ չունին,,։ Ընդունվելով Տէր-Առաքելենց տանը՝ պարոն Աշխարունին մի քանի օրից յետոյ յայտնեց Մահտեսի Աւետիսին, թէ ինքը պատրաստ էր բոլորովին ձրիարար ծառայել նրա զաւակների ուսման եւ կրթութեան։ Մահտեսի Աւետիսը սիրով յօժարութեցաւ այդ առաջարկութեան։ Եւ շուտով պարոն Աշխարունին աշակերտներ ունեցաւ յանձին պատանի Ռուստամի եւ նրա մօրաքոյր օրիորդ Սալոմէինի։ Բայց տարուայ ընթացքում նա ունեցաւ եւ այլ աշակերտներ եւ աշակերտուհիք, որոնց ծնողները աղքատ մարդիկ լինելով եւ օգուտ քաղելով ձրի դասաւանդութիւնից, իրանց երեխաները դուրս բերելով տէրտէրների եւ տիրացուների անից՝ յանձնում էին պարոն Աշխարունուն։

Պարոն Աշխարունին տեսնելով իւր գործի յաջողակ ընդունելութիւնը եւ այն, որ օրէցօր բաւական աւելանում էր նրա աշակերտների թիւը, մտածեց աւելի կազմակերպել իւր վարժարանը։ Տէր-Առաքելենց վրայ ծանրաբեռնութիւն չը լինելու համար, նա վարձեց մի այլ տուն, ուր հաստատեց երկու սեռի մանկանց համար երկու առանձին դպրատներ։

Բայց նրա գործին աւելի շատ ուժ եւ զօրութիւն տուող մեկենասը Մահտեսի Աւետիսն էր։ Իսկ երբ պարոն Աշխարունու հեռաւոր բարեկամները հասկացան նրա յաջողակ գործունէութիւնը Պարսկաստանում, խոստացան նիւթապէս օգնել նրան, որով ժրաջան վարժապետը միտք ունէր առաւել բարեկարգել իւր վարժարաններին դրութիւնը։ Բայց յանկարծ մի փոթորիկ բարձրացաւ խառնիճաղանճ տգէտների կողմից եւ "նրա սերմերը փուշերի մէջ բուսան, եւ փուշերը խեղդեցին նրանց„։

Digitized by Google

Ծաւարասէր տէրտէրները, որկրամոլ տիրացուները՝ զրկուելով արտաղի (օղի) եւ գինու սրուակներից, քուֆտայի եւ տոլմայի ամաններից, եւ այն բոլոր պատիւներից, որ նրանք ստանում էին իրանց աշակերտների ծնողներից, որպէս երկրորդական վարձք, սկսեցին չարաչար նախանձիլ, եւ հրէական աղմուկներ բարձրացնելով ասել, թէ "դա մոլորութիւն է ուսուցանում„: Օգնական գտնելով իրանց վիճակային առաջնորդ Տէր Սուրմակեան Արքեպիսկոպոսին եւ Ծաղկաւանի Աղա Մելիք Պիղատոս Աւագակեանցին եւ մի քանի վաստակներին եւ Մեհրուժաններին, իրանց բոլոր կատաղութեամբ մղեգնած ամբոխը, մի բան կաշառք տալով Ծանին, փակեցին պարոն Աշխարունու վարժարանի դռները արգիլելով ժողովրդին իրանց որդիքը նրա մօտ ուսանելու ուղարկելուց:

Պարոն Աշխարունին մնաց դարձեալ առանց աշակերտի, տխուր եւ յուսահատ, իւր պարապմունքը նուիրելով միայն Տէր-Առաքելենց Ռուստամի եւ նրա մօրաքոյր օր. Սալաթինի կրթութեան եւ մի քանի այլ աշակերտներին, որոնք գաղտնապէս ուղարկվում էին նրա մօտ:

Պէտք է չը մոռանալ Մահտեսի Աւետիսի ազգասիրական ջհաբերութիւնները, որ չը նայելով թէ այն տարին նրա այգին շատ վնաս էր բերել, նա միշտ պաշտպան կանգնեց գիտնական վարժապետին, ամենեւին չը թուլացնելով իւր մէջ ուսումնասիրութեան եռանդն ու փափագը:

Բայց օր. Սալաթինը աննկատելի կերպով աճում եւ հասունանում էր, նրա մտաւոր եւ բարոյական կրթութեան հետ՝ օրէցօր նրա գեղեցկութեան վարգերը ծաղկում՝ փթթում եւ անոյշահոտվում էին: Բայց պարոն Աշխարունին չը գիտէր եւ նրա գլխով չէր անցել այն միտքը, որ Մահտեսի Աւետիսը եւ նրա կին տիկին Սկու-

Digitized by Google

հին վաղուց իրանց մտքում գրել էին, որ պարոն Արամին իրանց փեսայ դարձնեն։ Երբ յայտնեցին նրան այդ մասին, նա համարեց մեծ սրբապղծութիւն՝ ամուսնանալ իւր աշակերտուհու հետ, որի վրայ մինչեւ այն օր նայել էր եղբօր աչքով, որպէս իւր հարազատ քրոջը։

Երկար ստիպմունքներից, երկար թախանձմունքներից յետոյ, պարոն Աշխարունին, իւր նպատակները իրագործելու հեռատեսութեամբ, թէ վատ չէր լինի այդ երկրի մէջ հաստատուել, վերջապէս, անհնարին տհաճութեամբ՝ ընդունեց օր. Սալաթինի ձեռքը։

Տիկին Սալաթինը, ուսած լինելով ոչ միայն հայերէն լեզուն, այլ եւ բաւական անգղիերէն եւ ֆրանսերէն եւ մանաւանդ ուսումնասիրած լինելով մի քանի արհեստներ եւ առաւելապէս կրթուած լինելով Աստուածաշնչի գիտութեամբ, կարճ ժամանակուայ մէջ հաւաքեց մի քանի աղջիկներ իւր բարեկամներից եւ նրանց կրթութեան հոգսը իւր վրայ առաւ։

Այդ մի քանի աշակերտուհիները, որ տիկին Աշխարունին պահում էր իւր մօտ կալ ու ձեւ սովորեցնելու անուամբ, իւաւարասէրների կողմից չարուցին ոչ սակաւ հալածանք դէպ նրանց ծնողները. շատ կարելի էր, միւս անգամ ցրուէին տիկին Սալաթինի աշակերտուհիների փոքրիկ ժողովը, եթէ նրանց չօգնէր պարոն Յովսէփ Մելիքզադէն, մի հարուստ տղամարդ իւր խելքով, ուսմամբ եւ արծաթով։

Իւր նոր մեկենասի՝ պարոն Մելիքզադէի շնորհիւ, տիկին Աշխարունին բաւական հաստատելով իւր վարժարանի դրութիւնը, իւր ուշադրութիւնը դարձրեց դէպ օր. Սալբին՝ իւր քրոջ տիկին Սկուհու որդի Ռուստամի նշանածը, մտածելով, թէ մեծ անյարմարութիւն էր մի շատ

Digitized by Google

ու քիչ ուսեալ տղամարդին ունենալ մի անկիրթ կին։ Այդ պատճառով նա շատ աշխատութիւն թափեց, մինչեւ կարողացաւ նրա մոլեռանդ մօրը՝ տիկին Թալալեանին համոզել, որ նա իւր աղջիկը դուրս բերէր հնահոլ եւ անահաւատ Մարթայի տնից եւ իրան յանձնէր ճշմարիտ ուսում ստանալու։

Տիկին Թալալեանը, ոչ միայն աղջիկներին կրթութիւն եւ ուսում տալը համարում էր մի աւելորդ բան, այլ աւելի վնասակար, որովհետեւ, նրա կարծիքով, աղջիկները կարդալ ուսանելով մի աւել բան չէին աւելացնել, այլ կը լինէին խորագէտ դեւիկներ, կորցնելով իրենց մաքուր եւ առաքինի վարքն ու բարքը։ Բացի դրանից նա չէր յօժարում իւր աղջիկը մօտեցնել այն տանը, ուր ուսանում էր եւ նրա հանդերձեալ (ապագայ) ամուսնացուն։

Օր. Սալբիին բնական ընդունակութիւնը, տիկին Սալաթինի անդադար ջանքը, պատճառ եղան, որ նա կարճ միջոցում սովորեց ոչ միայն հայոց հին ու նոր լեզուները, այլ բաւականաչափ դաղղիերէն եւ անգլիերէն։

Պարոն Աշխարունուն չը ճնաց եւ ոչ մի աշակերտ բացի Ռուստամից, բայց դժբախտաբար, Ռուստամը զուրկ էր այն ընդունակութիւններից, որ կարողանար ըմբռնել իւր վարժապետի սերմանած ազատ գաղափարները, ազատ եւ լուսաւոր մտքերը կրօնքի մասին։ Նաեւ թոյլ էր նա արհեստներ եւ լեզու սովորելու մէջ. նա ուսաւ միայն հայոց հին լեզուի քերականութիւնը, որով կարողանում էր հասկանալ իւր կարդացածը ու գիտէր մասամբ դաղղիերէն։ Միւս առարկաների մէջ նա առաւելապէս սիրում էր բանաստեղծութիւնը եւ հին ու նոր ազգերի պատմութիւնը, մանաւանդ Յունաց եւ Հռոմայեցւոց։ Նա խիստ աւում էր մաթեմատիկան. եւ թուաբանութիւնից՝ առաջին չորս գոր-

Digitized by Google

ծողութիւններից աւել բան չը գիտէր: Նա աւելի ախորժանօք կարդում էր դիւցաղնական բանաստեղծութիւնը. Հոմերոսի աշխատութիւնները նրա ամենասիրելի գրքերն էին: Ինքը նոյնպէս վատ չէր գրում եւ ոտանաւորներ ու երգեր շարադրելու տաղանդ ունէր:

Ճշմարիտ կրօնապիտութիւնը, որ նա սովորեց Աւետարանի լուսով, չենք կարող ասել, թէ բոլորովին մեղմեց եւ թուլացրեց նրա մէջ ընդարձոյս վայրենի բնաւորութիւնը, այլ նրա փոխարէն ներշնչեց նրա մէջ քաջալեզնական կոչուած առաքինութիւնը: Նա չէր մեղադրում Մովսէսին՝ իւր ազգակիցը չարչարող եգիպտացին սպանելու համար, գովում էր մանուկ Դաւթի քաջագործութիւնը, գողիաթին սատակելու համար: Նա երբեմն հակառակում էր Փրկչի այն խօսքերին, թէ մի երեսին զարկելու ժամանակ՝ միւսը պէտք է դէմ տալ. առաւել հաւանութիւն էր տալիս մովսիսական փոխարինութեանը. "աչն ընդ ականի„ — "Ատամն ընդ ատամանի„:

— Ինչո՞ւ, հարցնում էին նրանից:

— Որովհետեւ, պատասխանում էր նա, քանի մարդիկ պատրաստուած չեն Աւետարանի սրբազան դաղափարները ընդունելու, քանի նրանց խղճմտանքը մեռած է, քանի նրանց սրտի մէջ չարութիւն կայ, անկարելի է այդ կերպով վարուել նրանց հետ. որովհետեւ, երբ նա զարկում է իմ ձախ երեսին, եւ ես դարձնում եմ եւ աջ երեսս, նա՝ իմ հնազանդութիւնը՝ խոնարհութեան տեղ դնելով՝ չէր դադարելու չարութիւնից, այլ կ'ասէր "դէ, գլուխդ էլ...„: Բայց մենք մարդիկ ենք, Աստուած ստեղծել է մեր գլուխը ուղղաբարձ դէպ վեր, ամօթ է մեզ, երբ մենք, անասուններին հաւասարուելով ընդու-

Digitized by Google

նենք այդ անարգութիւնը, մեր գլուխը խոնարհեցնելով եւ ուրիշի ոտքի տակը տալով։

Ըրան ասում են թէ քրիստոս հրամայել է, ով որ շապիկդ ուզէ, ապադ (վերարկու) էլ տուր։

— Ծօ անխելք տնաքանդ, ասում է նա, դու կարծո՞ւմ ես, թէ վերարկուս տալով գո՞հ էր լինելու նա, ոչ, ամենեւին ոչ. դուք չը գիտէք թէ մարդիկ ո՛րքան անյագ եւ չը կշտացող էակներ են... Եթէ վերարկուս տամ, կ՚ասէ՝ "փոխանդ էլ տուր„։ Այդ եւս տուի... Դու կարծում ես ձեռք կը վեր առնի, մինչեւ բոլորովին չը մերկացնէ եւ կաշիս էլ չառնէ։ Բայց "ինչո՞ւ ես փրթեմ, ուրիշը քերթէ„. — "ջաֆէն ես քաշեմ, ձուածեղն Գասպարն ուտէ„։ Այս աշխարհում ամէն ինչ պարտք է, ո՛չ ոք չէ ցանում իւր սերմը՝ ուր յոյս չունի հնձելու. ոչ ոք չէ տալիս, երբ յոյս չունի առնելու. միով բանիւ, այս աշխարհում ո՛չ ինչ բան ձրի չէ, ո՛չ միայն մարդկանց ընկերակցութեան մէջ, այլ եւ Աստծոյ մէջ։ "Շնորհ եւ զօրութիւն չունեցող սրբին մատաղ չեն կտրում„։ — Ես երբեք Աստծուն երկրպագութիւն չէի տալու, երբ գիտենայի, թէ նա ալքայութիւն եւ դժոխք չունի, կամ իմ ապրուստի խնամքը նրա ձեռքում չէ...„։

Այդ խօսքերը ոչ թէ բղխում էին նրա սրտի ներքին զգացմունքներից, այլ նայելով մարդկանց չարութեանը՝ ամէնքը կամենում են իրանցից տկարները միանգամայն գերի, ստրուկ եւ աւանակ շինեն՝ իրանց հանգրստութեան եւ վայելչութեան համար. — այդ պատճառով մեր ոգեւից հերօսը տեսնելով մարդկանց մէջ եղած եսականն անիրաւութիւնը, տխուր յուսահատութեամբ կրկնում էր, "թէ քրիստոնէութիւնը տակաւին աշխարհի վրայ չէ եկել. մարդիկ ապրում են բարբարոսութեան մէջ„։

Digitized by Google

Ռուստամը կրօնքի եւ Աստծոյ պաշտօնի մասին իւր հասկացողութիւնների մէջ նոյնպէս նախանձոտ եւ յանդուգն եղաւ, որպէս իւր նախկին վայրենութեան մէջ: Նա նայում էր իւր դրացիների անապաշտութեան եւ մոլեռանդութեան վրայ ինկվիզիտորի աչքով. նախատական կերպով ալհամալհում էր նրանց անհաւատութիւնը, վճռելով ոչ միայն հասարակ ժողովրդականների՝ այլ եւ եկեղեցականների հետ: Ռուստամի մի այդպիսի համարձակութիւնը վշտացնելով շատերի սիրտը՝ յարոյց նրա դէմ հասարակաց ատելութիւնը, եւ այսպիսով նա ունեցաւ բազմաթիւ թշնամիներ:

Մահտեսի Աւետիսը նոյնպէս չը մնաց իւր նախկին գռեհկութեան մէջ: Պարոն Աշխարունին բազում ստիպմամբ համոզեց նրան՝ ուսանել իւր մայրենի լեզուի գրագիտութիւնը եւ նա մի կարճ ժամանակում ոչ միայն ազատ կարդում էր Աստուածաշունչը, այլ եւ բացատրում էր նրա բազմախորհուրդ մեկնութիւնները: Բայց տիկին Սկուհին մնաց իւր նախկին հասկացողութեան մէջ, նա տակաւին հետեւում էր փտած հնութեանը, եւ միշտ են թակայ լինելով իւր մոլեռանդ սկեսուրի ազդեցութեանը, նրա երկիւղից, նրա նախատինքների տակ լեռնձ կինը ոչինչ չը կարողացաւ սովորել եւ ըստ հայկական առածի "Աղբիւրի մօտ ծարաւ մնաց„:

Հուրի Յան-Դայեան՝ Ծէր Առաքելենց գերդաստանի մէջ մի սեւ անձն էր, որ չէր կարողանում տանել պարոն Աշխարունիի եւ նրա ամուսնու ներկայութիւնը, նրանց, ըստ նրա ասութեան, մոլար վարդապետութիւնը, որ ուսանդում էին իրենց "Ջհո-պէ վինէյարդ„ մէջ, այդ պատճառով նա անհնարին տհաճութեամբ հալածում էր նրանց: Նա չէր կարողանում սառն աչքով նայել օրիորդ

Digitized by Google

Սալբիի վրայ, երբ նա շատ անգամ արձակ համարձակ անցնում էր նրա առջևից առանց ամաչելու, առանց պատիւ տալու նրա ծերութեան: Նա չէր կարողանում համբերել իւր թոռան, որպէս կոչում էր "լրբութիւններին", երբ նա իւր աչքի առջեւ խօսում էր իւր նշանածի հետ, առանց իւր պառաւ տատիցը պատկառելու: Հուրի Յան-Դայեան մահու չափ վշտացել էր, տեսնելով իւր տան մէջ իւր պապերի հին սովորութիւնները խախտուած եւ ոտնակոխ եղած, երբ նրա ընտանիքը այլ եւս ուշադիր չէր պաս ու ծոմ պահելու, երբ նրանք այլ եւս յարգանք չէին մատուցանում սրբերին եւ նրանց պատկերներին. այդ պատճառով նա աւելի յօժար էր մեռնել, քան կենդանի աչքով տեսնել իւր տան մէջ այդպիսի «բէ-ապղծո-ւիւն»:

Մի գիշեր, երբ Տէր Առաքելենք բոլորը հաւաքուել էին միասին, եւ Հուրի Յան-Դայեայի դէմքը մի գոհունակ հանդարտութիւն էր ցոյց տալիս, Մահտեսի Աւետիսը ժամանակը յարմար գտնելով, ուզեց հասկանալ նրա կարծիքը իւր որդու հարսանիքի մասին:

— Մայր իմ, ասաց նա, ահա Զրօյհնեաց (Ծննդեան) զատիկն անցաւ, Սուրբ Սարգիսն էլ նրա հետ. մի քանի օրից յետոյ՝ կը գայ բարեկենդանը. եւ նրա յետեւից կը գայ երկար ու ձիգ մեծ պասը: Այն ժամանակ՝ մեր հայրապետադիր կանոնների համեմատ, այլ եւս պակ չէ լինում: Էլ երբ պէտք է կատարենք Ռուստամի հարսանիքը:

— Հարսանիք... կրկնեց խորհրդական ձայնով պառաւը գլուխը շարժելով. այդ բառը պատկերացնում է իմ գլխի մէջ անցած գնացած ժամանակների քնքոյշ յիշատակները... եւ համեմատելով այդ՝ այս նոր եւ ցաւ ժամանակի հետ, ես ակամայ ստիպուած եմ իմ թոռան

Digitized by Google

հարսանիքի մասին բոլորովին լուռ մնալ...։ Որդի, ես "իմ ձեռքերը լուացել եմ,, այդ գործից եւ բոլորը յանձնում եմ ձեր կամքին։

Մահտեսի Աւետիսը գիտէր իւր պատասխանատուութիւնը. նրան յայտնի էր, թէ նա ինչպիսի աչքով էր նայում իւր տան մէջ կատարուած մանուածոր վերանորոգութիւնների վրայ. յամենայն դէպս նա պատուելով նրա ծերութիւնը ոչ միայն նրա կամքի դէմ չէր գործում, այլ եւ միշտ պատուիրում էր իւր զաւակներին, հնազանդ լինել իւր մօրը եւ շահել նրա սիրտը։ Նա աւելի փաղաքշաբար առաջ տարաւ.

— Իմ լուսահոգի հօրս մահից յետոյ, ես միշտ հետեւել իմ ձեր կամքին, այս մեծահարուստ ընտանեկան հարցի մէջ եւս պէտք է որոնել ձեր հաճութիւնը եւ ձեր ընտրողութիւնը։

— Ես չեմ կամենում խօսել մի հարցի մասին, որի մէջ մինչեւ այսօր չէ եղել իմ կամքը, սառնութեամբ պատասխանեց պատասխանեց պատասխանեց

բալիք ու վալիքով, իրենց համարձակ եւ անամօթ վարուեցողութեամբ՝ աւերեցին, փչացրին այն մանուկը, վաեմ եւ պատկառելի օրէնքը, որ կար մանուկ տղամարդերի եւ նորահաս աղջիկների մէջ։

Մահտեսի Աւետիսը լուռ լսում էր, իւր մտքի մէջ ծիծաղելով իւր մօր հնոտի նեղսրտութեան վրայ, որի համար սրբազան մի բան էր իւր պապերի անասնական կեանքը։

— Ես անցրել եմ աւելի շատ օրեր քան թէ դուք, առաջ տարաւ պառաւը. — եւ ես տեսնում եմ արեւի լոյսը աւելի հին տարիներից... մեր պապերի բալիք ու վալիքը այսպէս չէր. մեր օրերում կոյս աղջիկները եւ ազատ տղամարդիկը չը գիտէին թէ ինչ է սէրը. երբ նրանք լսում էին հարսանիքի, պսակուելու անունը, ամօթխածութեամբ կարմրում էին եւ նրանց աչքերը լցվում էին արտասուքով։ Բայց այժմ... — վայ մեր մեղաւոր հոգիներին — աղջիկը, զուգած-զարդարած իւր մարմնի հազար ու մի պչրանքներով, հալվում, մաշվում է հաճոյամոլութեամբ զինքը սիրել տալու համար։ Իսկ տղամարդը այրվում եւ վառվում է իւր փրուհու կրակով...։ Ի՞նչ ասել է այդ — չէ՞ որ դա ազգային կեանքի մէջ մի ժանտախտ է, որ ապականում, փտեցնում է առաքինութիւնը, որ մահացնում է պարկեշտութիւնը եւ ողջախոհութիւնը...։

— Մայր իմ, խօսեց Մահտեսի Աւետիսը, ինչո՞ւ էք դուք այդպէս ծուռն աչքով նայում ձեր թոռան եւ նրա հարսնացուի միմեանց հետ համարձակ վարուողութեան վրայ. չէ՞ որ Աստուած ինքը դրեց այդ սուրբ սէրը նրանց սրտերի մէջ՝ երբ դեռ նրանք իրանց մայրերի արգանդումն էին։ Մէկէն մեղաւոր պիտի համարուին նրանք,

Digitized by Google

որ հակառակ մի կեղտոտ եւ տարապայման ասիական սովորութեան՝ համարձակվում են յայտնի կացուցանել իրանց սիրահարութիւնը։

— Ի՞նչ ասել է սիրահարութիւն, այդ ինչ օտարոտի բառ է, կոչեց պառաւը բարկացած — ինչ է նշանակում մի սէր այլ եւ կին մարդերի մէջ, որ չեն կապուած որեւիցէ Աստուծոյ օրէնքով, եթէ ոչ — լկտի ցանկութիւն, լրբութիւն եւ հեշտախտութիւն։

— Ուրեմն ձեր կարծիքով աշխարհում չը կայ եւ չը պիտի լինի Աո—չէ «էչ, հարցրեց Մահտեսի Աւետիսը։

— Երբ մի բարի բանի գործադրութիւնը՝ միւս շատ չար բաների առիթ է տալիս, լաւ է խափանել այդ բարին. մի կաթիլ քաղցր ջուրը չէ կարող փոխել մի դառն ծովի տարիպ համը։ Երբ իմ դուռը բաց թողնելով՝ շատ բարի մարդերի հետ ներս են մտնում շատ չարեր, գողեր եւ աւազակներ՝ լաւ է — փակուի այդ ճանապարհը։ Ահա, որդի՛, դրանք անհերքելի ճշմարտութիւններ են։ Եւ այսպէս, մի Աո—չէ «էչ, որպէս դուք անուանում էք, երբ թոյլատրուի ճանապարհ կը բանայ անթիւ խարդախ եւ պիղծ սէրերի..., եւ այդ նկատումով իսկ՝ խելացի Ասիան ամենայն զգուշութեամբ արգելում է մարդկանց հաղորդակցութիւնը կանանց հետ, եւ այդ պիտով պահպանում է մարդկութեան սրբութիւնը եւ մաքրութիւնը։

Մահտեսի Աւետիսը ոչինչ չը պատասխանեց, այլ գլուխը քարշ գցած լուռ դուրս գնաց։ Բայց Ռուստամը, որ մինչեւ այն րոպէն դրան ետեւից ականջ էր դնում՝ ներս մտաւ, եւ ասաց.

— Մայրիկ, դուք սխալ նախապաշարման մէջն էք, պէտք է հետեւել լուսաւոր ժամանակի պայմաններին եւ պահանջներին, պէտք է...

Digitized by Google

— Լաւ կաց, մի խօսիր, լակօտ, գոռաց պառաւը — այդ խօսքերը ժանտախտ են, մահացու են, դրանք թունաւորում են իմ օրհնեալ գերդաստանի անմեղ պարզամտութիւնը: Իսկ քո հոգին ապականուած է այդ ազգակործան գաղափարներով՝ ընկերանալով Արամի եւ Մեսրոպադէյի նման վտանգաւոր մարդոց հետ. քո թոքերի մէջ նրանց շունչն է փչում, դու հեռու ես հարց օրէնքներից, քո մէջ մոլութիւն կայ, դու մի՛ակ պատիժն ու պատուհասն ես, որ նիւթում ես իմ տան կործանումը...:

Թ.

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ

Մի օր Ծովասաբենց տանը ներս է մտնում մի պառաւ, իւր հետ բերելով իւր եօթն տարեկան թոռը, խնդրում է տիկին Թարլանից բժշկել նրան, որովհետեւ ֆալախո՜ղ էր եղել, այսինքն՝ ամբողջ մարմինը կարմիր բորոտած՝ սաստիկ քոր էր գալիս։ Տիկին Թարլանը մերկացնում է մանուկը եւ մի կոշտ մազէ լաթի կտոր ձեռքն առնելով՝ սկսում է թքել նրա մարմնի կարմրած տեղերի վրայ, եւ այն լաթով սաստիկ քսել եւ սրբել՝ չը դադարելով միեւնոյն ժամանակ մունջ աղօթքներ կարդալուց։

Երեխան ճչում էր, ցաւից՝ լաց էր լինում։ Նրա ձայնը ներս բերեց օր. Սալբիին, որը չը կարողանալով զսպել իւր ծիծաղը եւ մի հեգնական հայեացք ձգելով դէպ մօր գործողութիւնը ասաց.

— Մա՛յր, փոխանակ այդ խեղճ երեխան սպանելու, այդ կոշտ մազով նրա մարմինը շփելով՝ հրամայեցէք դրան լուծողական տան, կամ երակներից արիւն բաց թողնեն, այդ աւելի օգտակար կը լինի։

— Ըրբ հերթը ձեզ հասնի՝ պատասխանեց տիկին Թարլանը բարկութեամբ — դուք այդպէս արէք . . . բայց ես քանի կենդանի եմ, ձեռքիցս չեմ թողնի իմ գիտցածը։

Digitized by Google

Օր. Սալբին ոչինչ չը խօսեց, այլ հեռացաւ նրանից։

Մի քանի րոպէից յետոյ, տիկին Թալբանի մօտ մնաւ պառաւ Մարթան. Ծովասարենց տիկինը պատմեց նրան իւր աղջկայ յանդգնութիւնը, որ համարձակվում էր իրան բան սովորեցնել։

— Աստուած աւելի վատթարիցը ազատէ, ասաց պառաւ Մարթան վշտացած ձայնով. ձեր աղջկայ այժմեան աւերուած բալիք ու վարքը գուշակում է մի ցաւալի ապագանութիւն նրա բարոյականութեան մէջ։

— Հա՛, իմ քոյր, հա՛, ճշմարիտ է ձեր ասածը. հաստատեց տիկին Թալբանը — բայց մեղաւորը ես եմ... ես իմ ձեռքով իմ տունը քանդեցի եւ իմ Աստուծոյ գառ աղջիկը գազան դարձրի — տալով նրան այն մոլորեցուցիչների (Աշխարհներից) ձեռքը, որոնք իմ աղջկան խելքից, ամօթից եւ շնորհքից դուրս բերին։

— Իրա՛ւ, այդպէս է. երբ Սալբին իմ աշակերտուհիս էր, տեսնում էիր, թէ որքան խելացի եւ հնազանդ էր նա, բայց այժմ, ո՛ւհ, նա արժանի չէ մինչեւ անգամ սատանայ կոչուելու ... ոչ մեծ է ճանաչում, եւ ոչ փոքրը, բոլորին անպատուում է։

— Միթէ մեր պապերը անխելք էին, որ իրենց աղջկներին կարդալ չէին սովորեցնում. չէ՛, իմացիր են, թէ կարդալ ասած բանը ինչ սեւ կը բերէ իրանց գլխին։

— Ըհ՛հ, պապերին ո՛վ է նայում, առարկեց Մարթան — այժմ "նոր հաւեր են եկել, երկաթէ ձուեր են ածում,,։

Այսպէս, օր. Սալբիի ոչ միայն կծու եւ համարձակ խօսքերը, այլ եւ նրա խորթ եւ օտարոտի վարմունքը, միանգամայն դէմ էին նրա նեղսիրտ մօր բնաւորութեանը, եւ շատ անգամ առիթ էին տալիս նրա դժգոհութեանը

Digitized by Google

գրգռելով նրա անտանելի տհաճութիւնը։ Օրինակ, տեսնում ես մի գիշեր, օրիորդը ճրագի առջեւ հայելուն նայելով՝ սանդրում էր իւր ծամերը, մայրը բարկանում էր, թէ գիշերը վնասակար է այդպէս անել, եւ ստիպմամբ խլում էր աղջկայ ձեռքից սանդրը։ Ելր օրիորդը հարցնում էր դրա պատճառը, մայրը այնպիսի հեթանոսներ էր պատմում, որ նրա աղջիկը թուլանում էր ծիծաղելուց։ Այդ արհամարհական ծիծաղները աւելի էին վշտացնում մօր սիրտը, որովհետեւ օրիորդը ոտնակոխ էր անում մօր խրատները, որոնց մասին, ուրիշները այնքան մեծ կշիռ համարում ունէին։

Ծերունի Մկրտիչը եւ նրա կին Մալթան, որպէս մօտիկ դրկիցներ՝ աւելի գնալ դալ ունէին Ծովասաբենց տան հետ, քան ուրիշները։ Շատ անգամ Ծերունին, ոգեւորուած Ջերմեռանդութեամբ, պատմում էր "Մանուկ աւետարանից,, մի դիպուած, եւ շրջապատողները խորին զմայլանքով լսում էին — յանկարծ՝ միւս կողմից, օր. Սալթին հեգնական ոճով ձայն էր տալիս — "Էհ, գլուխներս տրաքեց . . . դարձեալ առասպել . . .,,։

Ծերունին իւր բարկացոտ հայեացքը ձգելով նրա երեսին, ասում է.

— Աղջի՛ քո մշտական այդպիսի անհաւատ խօսքերը առիթ են տալիս կարծելու, թէ՛ անտարակոյս Նեռի մայրը դու ես լինելու . . . քեզնից պիտի ծնուի աշխարհ ապականողը . . .։

— Ինչո՞ւ, հարցնում է օրիորդը բոլորովին սառնութեամբ։

— Որովհետեւ դու չես հաւատում Սուրբ պատմութիւններին։

Digitized by Google

— Ես չեմ հաւատում այն պատճառով, որ մեր ընդունած Աւետարանի մէջ այդպիսի բաներ չեն գրուած։

— Միթէ սակա՞ւ են այն բաները, որ գրուած չեն Սուրբ Աւետարանի մէջ։ "Եթէ ամէնը գրուած լինէին՝ աշխարհս բաւական չէր լինի այդ գրքերը տանելու„, պատասխանում է Ծերունին հեղինակաւոր ոճով։

— Ուրեմն մենք պիտի բաւական լինինք գրուածը նելով միայն, կրկնում է օրիորդը հաստատ կերպով։

— Լուռ կաց, ա՛նհաւատ, միւս կողմից սաստում է նրան մայրը — քո չար լեզուին թոյլ չէ տուած վճճել քեզնից հաստակաւոր մարդերի. հետ։

Շատ անգամ, օր. Սալբին, բամբասանքի տեղիք չը տալու համար, ամենևին ուշադրութիւն չէր դարձնում տան մէջ կատարուածի մասին։ Բայց պատահում էր, որ նա բաց գլխով սառը ջուր էր խմում, կամ բաց գլխով դուրս էր գնում մութ ժամանակ, կամ ծամոն էր ծամում գիշերը, այդ բոլորի համար նրան յանդիմանում էին ասելով — "եթէ բաց գլխով մութի մէջ դուրս գաս՝ լոբ+եղը կը զարկեն„ գլխիդ. բաց գլխով սառը ջուր խմես՝ ջուրը կը թռչի դէպի ուղեղը, մարդ կը մեռնի եւ երբ գիշերապահին ծամոն ծամես՝ մեռելները կը նեղանան, իբր թէ նրանց միան ես ծամում։ Իսկ նրանց ազախին Նազլուն գիշերը տունը աւելելու միջոցին՝ շատ անգամ անզգուշութեամբ՝ մոռանալով տիկին Թարլանի այդ մասին պատուէրը — մոռանում էր նախապէս աւելը բռնել ճրագի վրայ եւ ծայրը այրել "հարսանիքի տուն եմ աւելում„ ասելով. եւ տիկին Թարլանը նշմարելով աղախնի մի այդպիսի սխալմունքը, աւելը խլում էր նրա ձեռքից եւ սկսում է նրանով զարկել խեղճի գլխին։ Ի՞նչպէս կարող էր օր. Սալբին զսպել իւր ծիծաղը։ Եւ այդ լուին, խայ-

Digitized by Google

թող ծիծաղը բաւական էր՝ մօր բարկութիւնը բորբոքելու, եւ նրա հայհոյանքների կարկուտը թափելու իւր գլխին։

Վերջին օրերը օր. Սալթիի եւ նրա մօր մէջ մի նոր վէճ ծագեց, որ ամենօրեայ խռովութիւնների պատճառ էր լինում։ Օր. Սալթին ասում էր, թէ իրանց սառն եւ խոնաւ խրճթի մէջ ապրելը՝ իրանց առողջութեան համար վնասակար էր. ասում էր, թէ ինքը չէր կարող այլ եւս տանել Թոնրի ամենօրեայ վառելու չարչարանքը, բացի այդ՝ Թոնրի դժոխային ծուխը, մուխը, որ մի քանի ամբողջ ժամ էր տեւում, շատ վնասակար էր իւր աչքերին եւ թոքերին։ Նա ստիպում էր իւր մօրը, մի փոքրիկ սենեակ շինել տալ եւ նրա մէջ դնել մի եւրոպական երկաթէ վառարան, որ բացի իրանց սենեակը լաւ տաքացնելուց, կը պատրաստէր նրանց ամենօրեայ կերակուրները եւ հացը։ Օրխորդը հաստատում էր, որ մի այդպիսի վառարան մաքրութեան եւ շնորհալութեան հետ միասին աւելի տակաւ ծախքի էր կարօտ քան Թոնիրը, որի համար ամէն օր հարկաւոր էր հինգ քթոց ցան եւ ցախ, եւ չը նայած դրան՝ խրճիթը միշտ ցուրտ էր լինում։

Տիկին Թարլանը ամենատաստիկ կերպով ընդդիմանում էր այդ խնդիրներին ասելով՝ թէ իրանք սովոր չէին այդ եղանակով կեանք վարելու, եւ թէ ինքը չէր կարող լքել եւ թողնել իւր հարց նուիրական օջախը[1] (կրակարանը), որ կերակրել էր իրան եւ Ծովասաբենց պապերին։

---

[1] Օջախ ասվում են այն փոքրիկ, շատ անգամ փլատակուած մատուռները, ուր կարծվում է թէ անթերեւութապէս բնակվում էին Սրբերը։ Օջախ ասվում է եւ մի հատուտ գերդաստան, որ ունէր ամէն օր վառ կրակ։ Ա.յդ բառը ապրում է կրակապաշտական ժամանակից եւ թոնիրները եւ այլ կրակարանք մինչեւ այս օր ունին իրանց սրբազան յարգութիւնը մեր քրիստոնեայ հայերի մէջ։

Digitized by Google

Վերջապէս օր. Սալքին, հակառակ իւր մօր կամքին, հում ադիւաններով շինել տուեց մի փոքրիկ սենեակ, եւ պարոն Աշխարունու միջնորդութեամբ՝ Ամերիկայից մի երկաթեայ վառարան բերել տուեց խոհարարութեան բոլոր անհրաժեշտ պիտոյքներով։ Այդ սենեակը ասիական ճաշակով չէր շինուած։ Նա աւելի նման էր մի եւրոպացի կնոջ առանձնասենեակին. մի քանի աթոռ, մէկ գրասեղան եւ սօֆայ՝ բռնել էին իրանց պատշաճաւոր տեղերը. մի կողմում գրած էր օրիորդի պէրանքի սեղանը, նրա հանդէպ մի մեծ հայելի, սանդր, եւ այլ կանացի պաճուճանքների գործիքներ։ Պատերի վրայ ամրացրած՝ երեւում էին նշանաւոր մարդոց պատկերներ, որ ազգերի գրականութեան մէջ երեւելի են եղել իրանց տաղանդով։ Նրա մատենադարանը եւս աղքատ չէր — մի քանի գրքեր, հայրենի եւ այլազգի լեզուներով, գեղեցիկ՝ ոսկեզօծ կազմերով՝ գրած էին մի անգոյն փայտից շինած ապակեկազմ պահարանի մէջ։ Պատուհաններում եւ լուսամուտներում կարգով շարուած էին խեցեայ ամաններով ծաղիկներ. նրանց վրայ, վանդակների մէջ ճրվիլներում էին երկու հատ դեղձանիկ։ Այդ սենեակը շինուելուց յետոյ տիկին Թարլանը մի անգամ եւս չէր մտել այնտեղ, ոչ այն պատճառով, որ դա շինուել էր իր հաճութեան ընդդէմ, այլ՝ որովհետեւ նրա մէջի կահ-կարասիքը միանգամայն ատելի էին նրան։ Նա չէր կարողանում անտարբեր աչքով նայել իւր աղջկայ շատ ու քիչ շռայլութիւն ցոյց տուող առանձնասենեակին։

— Ինչո՞ւ, հարցնում էր նրան աղջիկը։

— Որովհետեւ, պատասխանում էր մայրը — մեր դրացիները, աղքատ թէ հարուստ, բոլորը միօրինակ՝ բնակվում են մրոտ եւ գծուծ խրճիթների մէջ, իրանց՝ աղքատ եւ խեղճ մարդիկ ցոյց տալու համար, որպէս զի

կալուածատէր Յովանը, կամ միւս թուրքերը՝ նրանց փողատէր չը համարին, եւ գիշերով չը կողոպտեն նրանց տները։ Բայց մի այսպիսի շռայլութիւն՝ գողերի եւ աւազակների վտանգներից մեր տունը հեռու չէ պահելու։

Բայց օրիորդ Սալբին այդպիսի կասկածներից երկիւղ չէր կրում. "կամ ապրել լաւ եւ մարդկօրէն՝ կամ ամենեւին ոչ...,, կրկնում էր նա Ռուստամի սովորական առածը։

Մի օր տիկին Թարլանը գնաց մի մօտիկ պիւղ, իւր հիւանդ աղգակցի տեսութեան։

Ծովասաբենց տանը ոչ ոք չը մնաց բացի օրիորդ Սալբին եւ աղախին Նազլուն։ Ծանկարծ երեւան եկաւ Ռուստամը, եւ օրիորդ Սալբիի հետ մնաւ նորակառոյց սենեակը։

— Բարով, շնորհաւոր լինի, ասաց պատանին ուրախութեամբ, քնքշաբար սեղմելով օրիորդի ձեռքը։ Բարով վայելես, Սալբի, ահա մարդավարի բնակարան, ես շատ եմ հաւանում։

— Ի՞նչ արած... մաշուեցանք խլուրդների նման խրճիթի ծակամուտներում՝ ծուխ ու մուխ կուլ տալով. գոնեա՝ այսուհետեւ կարող ենք ազատ շունչ քաշել։

— Իսկ ձեր մայրը։

— Իմ մայրը իր հին գուռնան է փչում... նա տակաւին այստեղ չէ մտել. նա չէ ուզում հեռանալ իւր նուիրական խրճիթից։

— Էհ... ահա ինչ է նշանակում կոյր նախապաշարմունք...։

— Հայ, Ռուստամ, քնքշաբար աւելացրեց սիրուն օրիորդը — դա է ամենաճանր եւ ամուր շղթաներով կաշկանդում թոյլ մտքերը։

Digitized by Google

Պատանին հեգնականապէս ժպտաց։

— Լաւ, ինչ լուսաւոր զգացումներ կարող էր ունենալ մի մարդ, որ երեխայութիւնից բնակվում է խաւար մտքով, խաւար հոգով, խաւար շրջակայքի մէջ, խօսեց Ռուստամը։

— Ո՛չ մի . . . ։ Բայց երբ մարդ ունենայ փառաւոր բնակարան, իւր շքեղ սենեակներով, ծաղկիներով, կահ-կարասիքով եւ քաղցրաձայն սոխակներով, այնպէս չէ՞, Ռուստամ, նա իւր կեանքի սկզբից կը սկսի ծանօթանալ եւ սիրել այն, որ գեղեցիկ է, այն՝ որ վսեմ եւ ազնիւ է։

— Հա՛, իմ նազելի, նա ապրում եւ շնչում է պօեզեայ . . . Նրան մենք աստւմ ենք բախտաւոր, բայց հայերի կեանքը մռայլուած է տխուր եւ սեւ պաօլայի մէջ . . . ։

Այդ խօսքերի վրայ ոգեվից պատանիի երկաթէ պնդութեամբ սիրտը ակամայ վրդովուեց, եւ նրա թշերի վրայ երեւեցան մի քանի կաթիլ արտասուք. օր. Սալբին չը նշմարեց այդ սրբազան կաթիլները, եւ խօսեց.

— Իմ մայրը ասում է, թէ մեր այսպիսի տուն ունենալը մեզ կարող է վտանգի ենթարկել, իբր թէ թուրքերը մեզ հարուստ համարելով, երկիւղ կայ, որ մտանեն կողոպտեն մեզ ։ Բայց ես կարծում եմ, թէ այս խօսքերով նա կամենում է ինձ վախեցնել ։

— Չէ՛, Սալբի, նա ձեզ չէ՛ խաբում, պատասխանեց պատանին խորին զգացողութեամբ ։ — Այդ ճշմարիտ է . . . գերիների համար օտար աշխարհում ոչ մի վայելչութիւն չը կայ. նրանց աղքատը եւ հարուստը ապրում են միօրինակ դժբախտութեան մէջ. հարուստը իւր արծաթը խորում է հողի տակ եւ ինքը մեռնում է գալիս հնոտի հագուստներով եւ բորիկ ոտներով. երբ մինը ունի, եւ չէ՛

Digitized by Google

կարողանում վայելել, այդ աղքատութիւնից աւելի ցաւալի է . . . :

— Ինչու՞, միթէ Աստուած անիծել է մեր ազգը, հարցրեց օրիորդը տխրելով :

— Չէ, Աստուած չէ անիծել, բայց հայերի վիճակը խիստ նման է անառակ որդու առակին, նրանք թողնելով իրանց հօր տունը, իրանց հայրենիքը, եւ ցրուեցան օտար աշխարհներ. եւ պանդխտութեան մէջ՝ նրանց մեծ մասը միւս ազգերի անդնդին կուլ գնալուց յետոյ, մնացածների վիճակը տեսնում ենք. նրանց օրը միշտ սեւ կը լինի, մինչեւ կրկին չը դառնան դէպ իրանց հօր տունը, եւ նորոգեն իրանց բաժանուած ոյժը եւ զօրութիւնը :

— Միթէ կարելի՞ էր այդ :

— Ինչու՞ չէ : Հայերին ոմն է արգելում դառնալ դէպ իրանց հայրենի երկիրը, կամ աշխարհի երեսին մի կտոր հող գտնել եւ բնակուել նրա վրայ — ազգովին :

— Աշխարհի երեսին մի կտոր հո՞ղ, նրա խօսքը կտրեց օրիորդը քնքշութեամբ. բայց Ռուսաստա՞մ, իմ կարծիքով, մի տունկ չի զօրանալու իւր կլիմայից դուրս՝ օտար հողի վրայ. մեր հայրենիքի սուրբ հո՞ղը, սուրբ ջո՞ւրը եւ սուրբ օ՞դը միայն կարող են զօրացնել հայոց որդիքը, ուժ, կեանք եւ հոգի ներշնչել նրանց երակներում :

— Հա՛, իմ Նազելի, կրկնեց պատանին — ես գաղթականութիւն չեմ քարոզում. ես մեր սիրելի եղբայրներին չեմ առաջարկում Նոր Հոլանդայի ափերը եւ Նապօլիայի կղզիները . . . ի հարկէ, պանդխտի վիճակը ցաւալի է — նրա աչքը չէ չորանում արտասուքից. նրա սիրտը միշտ կոտրած է, մանաւանդ, երբ նա ապրում է ուրիշի դրօշի տակ, կամ թէ մի այնպիսի եգիպտական

Digitized by Google

ծառայութեան եւ մի այնպիսի փարաւոնեան գերութեան մէջ, որպէս մենք . . . : Ծգիպտոսի բռնակալը Իսրայելի արուներըը հրամայում էր գետը նետել, բայց մեր կանայք, մեր սիրուն-սիրուն մատղահաս աղջիկները իրանց պատուով, իրանց մաքուր կուսութեամբ՝ ող են գնում մեր բռնակալների հեշտախտութեանց[1] . . . :

— Մի Մովսէս պէտք է, իմ սիրելի, ասաց օրիորդը անձկանօք. մի Մովսէս՝ որ առաջնորդէր գերիները դէպի նոր Քանան:

— Չէ, Սալեխ, իմ կարծիքով Աստուած այժմ դադարել է հրաշք գործելուց. մեզ պիտի է — առաջնորդ ընտրել մեր բանականութիւնը, մեր խելքը. եւ իմանական լուսաւորութեան հրեղէն սիւնը մեր առջեւից տանել. մեր ազգայնութիւնը, մեր կրօնը եւ մեր լեզուն պահպանելու եւ աշխարհի երեսին իբրեւ մարդ ապրելու համար — ձեռք բերել մեր հայրերից անիրաւութեամբ յափշտակուած հողերը, որոնց վրայ մենք եւ մեր որդիքը կարող էինք ազատաբար արմատ ձգել, աճել եւ ղօրանալ:

— Ախ, երանի էր այն ժամանակ, բացականչեց օրիորդը լի զգացողութեամբ, բայց հնարաւոր կը լինի՞ . . . :

— Ինչո՞ւ չէ . . . երբ աշխարհի մէջ առաջ կը գայ արդարութիւն եւ իրաւունք, երբ յաղթահարուածներին, բռնադատուածներին եւ գերիներին կարեկցութիւն կը ցոյց

---

1 Պարսկաստանի մէջ խիստ զգալի է մի մեր արածը իւր սիրուն աղջկան: Խանի ներքինիները գիւղ գիւղ ման են գալիս, սիրուն աղջիկներ գտնելու. մայրը մեր քանդով աղջկայ երեսին, աչխատում է տգեղացնել նրան, որպէս զի ներքինիները հաւանելի չը լինի. «Հո՞գը քո գլխին, ծայն իակ այդ մեր բակ քո երեսը չէ կորցնում իւր գեղեցկութիւնը», կրկնում է մայրը տհաճութեամբ եւ սկսում է ածիլով կտրատել եւ այլանդակել աղջկայ թշերը: Ծաւալ դրութիւն. մայրերը ասում են՝ երբ նրանց դստերը ձնվում են հալածանք եւ արտասուք խոստանում...:

տայ համաշխարհական մարդասիրութիւնը, այն ժամանակ — ամէն մի ազգ կը ստանայ իր կորցրած ժառանգութիւնը։

— Այդ դժուար է . . ., տխրութեամբ կրկնեց օրիորդը, եւ սկսեց երգել.

"Հայաստան, Հայաստան
Դու եդեմեան շքեղ բուրաստան.
Արդեօք կը լինի՛, որ քեզի տեսնեմ,
Քո պայծառ օդը մի րոպէ շնչեմ.
Ինձ համար այն ժամ դառն չէ մահը՝
Երբ քո սուրբ հողում հանգիստ կը գտնեմ„։

— Ռուստամ, դուք սիրո՞ւմ էք այդ երգը, հարցրեց օրիորդը, դադարելով երգելուց։

— Հա՛, պարոն Յոսրով Մէլիքզադէն, այդ նազելի մանուկ բանաստեղծը վատ չէ գլուխ, նրա տաղերը ազգու եւ ոգեւից են, պատասխանեց Ռուստամը։

Ծանկարծ ներս մտաւ միջահասակ մի պատանի, նիհար եւ գունատ երեսով, խնլացի եւ փայլուն աչքերով, սեւ, մետաքսանման ծամերով։ Դա՛, պարոն Յոսրով Մէլիքզադէն էր։

— Բարով, ասաց նա ծիծաղելով. "գնդը՝ ամպ օր կ'ուզէ, գողը՝ մութ գիշեր„. տիկին Թարլանի բացակայութիւնը հնար է տուել ձեզ այդպէս հանգիստ եւ անվըրդով միասին նստելու եւ զրուցելու։

— "Գնդի անունն տաս, ականջները տրար կը գայ„, պատասխանեց Ռուստամը կատակով — Յոսրո՛վ, այս րոպէիս քո մասին էինք խօսում։

— Արդարեւ, ասես թէ մի այդպիսի բան ազդեց իմ սրտին. դռնից անցնում էի, երբ լսեցի օրիորդ Սալբիի

Digitized by Google

երգը. իսկոյն հասկացայ, թէ տիկին Թարլանը տանը չէ լինելու, որ դա այդպէս համարձակ երգում է. մտածեցի չը փախցնել յայտող առիթը։

Օրիորդ Սալբին դուրս գնաց, հրամայեց Նազլուին, որ գար իրանց մօտ, ղահուէ եւ ղէյլան պատրաստէր հիւրերի համար։ Բայց աղախինը հրաժարուեց, ասելով, թէ ինքը կ'ամաչէր մտնել տղամարդկանց մօտ։ Օրիորդը ստիպուած էր իւր ձեռքով պատուասիրել իւր հիւրերը՝ մատուցանելով նրանց ղահուէ եւ ղէյլան։

— Դուք նեղութիւն մի կրէք, արգելում էր նրան պարոն Մէլիքզադէն։

— Ապա ո՛վ պիտի կրէ, երբ մեր յիմար աղախինը չէ կամենում երեւալ տղամարդկանց, պատասխանեց օրիորդ Սալբին։

— Նա ձեր մօր հաւատարիմ աշակերտուհին է, նրա մէջ տեղ են բռնել ձեր մօր բոլոր վարդապետութիւնները, ասաց մանուկ բանաստեղծը։

Մինչ սրանք այսպէս ծանր ու բարակ զրուցում էին, Տէր Առաքելենց տան մէջ տեղի էր ունենում հետեւեալ խօսակցութիւնը։

— Դուք ո՛րքան անհոգ էք, այ մարդ, ասաց տիկին Սկուհին իւր ամուսնուն. չէ՞ որ մեծ պասը եկաւ, բայց դուք ձեր որդու հարսանիքի մասին չէք մտածում։

— Ի՞նչ մտածել, պատասխանեց Մահտեսի Աւետիսը սառնութեամբ. առաւօտեան Տէտէ-ընդառաջ է. գիտեմ, որ դու այս երկրի սովորութեան համեմատ գնալու ես խնամախեօ. իսկոյր տիկին Թարլանի հետ, որ նա եւս հաճութիւն տայ, այս շաբաթ հարսանիքը կատարենք վերջացնենք։

Digitized by Google

— Դուք, ճշմարիտ, երեխայի նման էք խօսում. ձեր աչքին հարսանիքը մի թեթեւ բան է երեւում. չէ՞ որ պատրաստութիւն պէտք է։

— Ի՞նչ պատրաստութիւն, կնոջ խօսքը կտրեց Մահտեսի Աւետիսը. ոչինչ պատրաստութիւն պէտք չէ։ Ես մի քանի բարեկամներով, առանց ղալմաղալի, առանց ղոհապղի, իմ հարսը պսակից յետոյ եկեղեցուց տուն կը բերեմ, մի թեթեւ ղահուէով պատուելով իմ հիւրերը։

— Չօ՛... աչքներս լոյս, որդի ենք պսակում, հեգնարար կրկնեց տիկին Սկուհին, որդի մեծացրինք, որ նրա հարսանիքի ուրախութիւնը վայելենք, իսկ սա ասում է՝ առանց դահօլի, առանց զուռնայի, առանց հաց ու գինի տալու՝ մի դառն ղահուէյով պիտի հարսանիք անեմ։

— Ապա ինչ ես մտածում, յիմար, բարկութեամբ խօսեց Մահտեսին. դու տնտեսագէտ չէս, չես հասկանում ինչ ասել է եօթն օր, գիշեր ու ցերեկ շարունակ, գիւղի ամբողջ բնակիչներին հիւրասիրել. դրա համար բաւական չեն լինի տասն կարաս գինի, եօթն բեռ ալիւր, մի կարաս արաղ եւ հինգ եզ մսացուի համար. այլ եւս ոչքան բրինձ, ոչքան եղ ... Ա՛խ, այդ նոր եւ տուն քանդող սովորութիւնը՝ շաքարի եւ չայի գործածութիւնը՝ Աստուծոյ մի մեծ պատիժ է ...։

Տիկին Սկուհին վշտանալով, ոչինչ չը պատասխանեց. նա լուռ դուրս գնաց իւր ամուսնու մօտից։

— Բայց դուք, աղա, Հուրի Ղան-Դայայի մասին չէք մտածում, որը բոլորովին հակառակ է հարսանիք կատարելուն, ասաց Նազանին, որ կանգնած էր այնտեղ։

— Գիտեմ, նրա ներկայութիւնը կը թունաւորէ հարսանիքի եղած չափաւոր ուրախութիւնն եւս, պատասխանեց Մահտեսի Աւետիսը։ Բայց նրա անտանելի

տրտունջներից ազատուելու համար, նրան ուխտ կ'ուղարկեմ Բարդուղիմէոս Առաքեալի վանքը։ Երկար ժամանակ է, որ նա այդ մասին խնդրում է ինձ։ Մինչեւ նրա դառնալը, ամենայն ինչ վերջացած կը լինի։

— Բայց, աղա, դուք ընդունեցէք իմ տիկնոջ խնդիրը, հարսանիքը թող զուռնայով լինի, ասաց աղախինը։

Մահտեսի Աւետիսը ծիծաղեց։ — Որ դու պար գաս, հա, հարցրեց նա։

ժ.

ՆՈԽԻՐԱԿԱՆ ԿՐԱԿԸ

Տօները, կիւրակէները եւ բարեկենդան օրերը, առաւել քան միւս ժողովրդակարգերը՝ մի առանձին դիւրացուցիչ եւ ուրախառիթ զօրութիւն ունին՝ մանաւանդ գիւղացիների համար: Ղազալի գիւղացիները, միշտ ծանրաբեռնուած իրանց ապրուստի դժուարին հոգսերով, Ղանի եւ կալուածատիրոջ անտանելի ղ-ճպանէրով, ճէգպ-նէրով (անվարձատրելի աշխատութիւններով), ոչքան ուրախութեամբ անձնատուր են լինում այն անդորրացուցիչ եւ անդարդ զուարճութիւններին եւ զբօսանքներին, որ պարգեւում են նրանց Տիրոջ հանգստի օրերը: Այդ նուիրական օրերին, որ նրանք գողանում են իրանց կեանքի գերութիւնից, գիւղացիք նորոգում են իրանց սպառուած եւ մաշուած զօրութիւնը, կազդուրում են իրանց տկարացած անձը, եւ Ղանը՝ իւր բոլոր բռնակալական բնաւորութեամբ՝ չէ խլում հայ ցոյսինից այն մխիթարութիւնը, որ պարգեւել էր նրա կրօնը:

***** Թուականի փետրվար ամիսն էր.*

Ձմեռնային ալեւոր արեւը, հաւաքելով իւր վերջին թոյլ ճառագայթները, մնաւ Դուշմանաց սարերի ետեւը, թողնելով ամպերի վրայ մի քրքմագոյն շառաւիղ:

Երեկոյացաւ:

Ատրպատականի ծաղկաւան գիւղի մէջ, Սուրբ Գէորգ եկեղեցում, երեկոյեան հասարակ ժամասացութիւնը վեր-

Digitized by Google

Ջանալով՝ քահանաները եւ տիրացուները՝ ժողովրդի հետ՝ դուրս էին գալ բակը — Տեառընդառաջի տօնախմբութիւնը կատարելու։ Շկեղեցու գաւթի մէջտեղում, դրան առջեւ, դիզած էր վառելի նիւթերի մի մեծ կոյտ, որոնցով պիտի վառուէր Նոէլպաման կրակը։ Վառելիքի արեւմտեան կողմում, երեսը դէպ արեւելք դարձրած՝ քահանան բարձր եւ ձգական ձայնով՝ կարդում էր Տեառընդառաջի Աւետարանը[1]։ Տիրացուներ, ոմանք ձեռին բուլվառ, ոմանց՝ քշոց, եւ ոմանց էլ փոքրիկ զանգակներ, իսկ ժողովրդի ձեռքերին վառած մոմեր, — բոլորել էին վառելիքների շուրջը։ Ներանց եռեւը, երեսներըը ծածկած, փաթաթուած իրանց սպիտակ չարսաւների մէջ՝ կանգնել էին կանայք. եւ այստեղ ու այնտեղ՝ խառնիխուռն վազվզելով՝ աղաղակում էին երեխաները։

Սուրբ Աւետարանի ընթերցուածը վերջացաւ. քահանան դպիրների հետ միաձայն սկսեցին երգել "Քրիստոս փառաց Թագաւոր„ շարականը. քշոցները զընգզընգացրին, փոքրիկ զանգակները ճրնգճրնգացրին եւ այդ անախորժ նուագի հետ միախառնուելով ժամասացների անձեւ-անկանոն երգեցողութիւնը, ժողովրդի անխորհուրդ աղաղակը, — թնդեցնում են օդը խառնափնթոր ներդաշնակութեամբ։ Շկեղեցու բակում ձեւացել է մի բաբելոնեան քէքեաց[2]։

Քահանան բարկութեամբ, ձեռքով նշան է անում, վայրկենապէս տիրում է խորին լռութիւն։ Տէր Մարկոսը,

[1] Երբ քահանան կարդում է Սիմէօն Ծերուկնու առաքը Մարիամին ասած այն խօսքը թէ "Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր„, — ժողովուրդի ամէն մի անգամ, դանակով կէս է կարում իւր ձեռքի մոմը, որ խնամքով պահում է իւր մնտ, որպէս մի կախարդական զօրութիւն՝ մինչեւ յաջորդ Տեառընդառաջ։

[2] Բէքեաց կամ բէքեացնել — բառը գործածական է Պարսկաստանի հայերի բարբառում, — նշանակում է՝ լեզուն խառնել։

— այսպէս էր տէրտէրի անունը, — մեքենաբար երեսը դարձնում է դէպ բազմութիւնը, եւ մի ճարտար քարոզողի ոճով խօսում է նրանց մի "Ծանուցում", թէ ինչ խորհուրդ ունէր այն աւուր տօնը.

Այսօր, իմ սիրելիք, ասում է նա, այսօր սուրբ Եկեղեցին հանդիսիւ կատարում է Տեառընդառաջի խորհրդական տօնը: Այսօր Քրիստոսի Ծնողքը՝ օրէնքին համեմատ տանում են Յիսուս մանուկը տաճարը ներկայացնելու Տիրոջ առջեւը: Այսօր ինքնին բացվում են Աստուածորդու առջեւ այն դռները, որ հին ժամանակներից փակուած էին Չգեկիէլ մարգարէի ձեռքով: Եւ Սիմէօն ծերունին, երեք հարիւր վաթսուն եւ չորս տարի աղօթքով եւ ճգնութեամբ տաճարի մէջ ապրելով, վերջապէս իւր գիրկն է ընդունում Իսրայէլի եւ հեթանոսների Փրկիչը, գուշակելով՝ թէ որպիսի սրերով էր խոցուելու նրա խեղճ մօր՝ Մարիամի սիրտը: Եւ Աննա մարգարէ կինը, շարժուած Սուրբ Հոգիից, խօսում է բազմութեանը եւ նրա ծնողներին, թէ նա է աշխարհի Փրկիչը եւ մարգարէների ակնկալութիւնը: Բայց նոյն ժամուն ամբողջ Երուսաղէմը դղրդվում է, մարդկանց մէջ մի անհասկանալի խռովութիւն է ընկնում: Մարդկանց անթիւ բազմութիւնները, գլգոթուածի գաղտնի ազդեցութիւնից, ջահերը, լապտերները, մոմերը եւ կրակ վառած՝ կոչում, աղաղակում էին. "գնանք Տէրին ընդ առաջ". այդ պատճառով մեր սուրբ Հայրերը այդ տօնին Տէառընդառաջ անունն են տուել, որի յիշատակը կատարում ենք, վառելով այդ սուրբ կրակը, այն կրակավառութեան փոխարէն, որ հրեաները կատարեցին:

Տէր Մարկոսի հրամայելով, վառելիքի շուրջը բոլորեցին տանեւհինգ նորահաս տղամարդիկ, հարսանիքի հա-

Digitized by Google

գուսաններով. դրանք նոյն տպաւորայ նորապատակ փեսաներն էին, որոնց ձեռքով սովորութիւն էր վաստկել տուրբ կրակը։

— Բայց եկեղեցին, առաջ տարաւ քահանան, այդ տուրբ կրակը, այդ աշխու զոհաբերութիւնը, որոյ այդ միակ օրինակը եւ նշանը, նուիրուած է իւր երկնաւոր փեսային յիշատակին, որ այսօր խնամարհուել է՝ կապելու իւր պսակը իւր նորահարսի — Եկեղեցու հետ, Տիրոջ համար արդար ծառաներ բազմացնելու համար։ Ես դուք, իմ սիրելիք, գտնում է նա դէպ կանգնած նորափեսաները, դուք եւս այս տարի առեցիք ձեր պարանոցի վրայ այն քաղցր լուծը՝ ընդունելով ամուսնական խորհուրդը։ Այդ պատճառաւ, դուք նմանութիւն ունէք երկնաւոր Փեսային. ուրեմն ձեզ, նորապատկներիդ է միայն արժան վաստկել այդ տուրբ կրակը, եւ ձեր մաքուր ձեռներով նուիրել սիրոյ Աստծուն։

Երբ նորափեսաները մօտեցան կրակ տալու՝ քահանան արգիլեց նրանց ասելով. — դուք եկեղեցու կանոնները չը գիտէք։ Չէ որ պէտք է առաջուց յայտնել թէ ինչ են ձեր ընծաները եկեղեցուն, որով ձեր զոհաբերութիւնը կը լինի Աստծուն ընդունելի եւ մարդկան հաճելի։

Մինչ նորափեսաները ամօթխածութիւնից կարմրելով՝ ամաչում էին պատասխանել շահախնդիր քահանայի հարցին՝ ահա եկեղեցու դռնից դուրս եկաւ, պատառոտած մուշտակը հագին, մի կեղտոտ մարդ։ Ամէնքին ծանօթ ժամկոչ Մրիամն է նա, որ միանգամայն կատարում է երեց-փոխանի եւ զանձապետի պաշտօնները։ Մրիամն, — նրա մկրտութեան անունը Մխիթար էր, — ուսերը շարժելով, գլուխը քորելով, եւ մի բուռն դեղին քթախոտի փոշի իւր պարկի միջից դէպ պնչածակերը ուղարկելով՝

Digitized by Google

եւ մի առողջ փռշտալուց յետոյ, փաղաքշաբար մօտեցաւ քահանային, եւ ասաց. — Ծէրուեր Ջան, քո հոգուն մատաղ, դու քո գործին կաց, այդ պարոններին ընծաների մասին հոգս մի անիր, քո Մըխօ ծառան այնքան յիմար չէ, իւր գործը գիտէ... դեռ դուք ժամը չը մտած՝ ես իմ հաշիւս վերջացրել էի այդ պարոնների հետ:

Ծրաջան ժամկոչը իւր լուսքը վերջացնելով, գլուխը քարշ ձգած, փսփսալով՝ կամենում էր կրկին եկեղեցին ներս մտնել, որպէս թէ մի մեծ գործով էր զբաղուած, բայց յանկարծ նրան կանգնեցրեց անհամբեր Ծէր Մարկոսի ձայնը. — Դու ո՛չ մեռնես Մըխօ, ուր ես այդպէս մինի նման շուտ ծակը մտնում. մի ասա, լսենք, լեզուդ հօ չէ՞ ցաւում, արդեօք ինչ է նորափեսաներից քո ստացածը, թող ես էլ հասկանամ, ժողովուրդն էլ:

"Ես ուզում եմ բանը ծածուկ մնայ, ասաց Մըխօն իւր մտքի մէջ. — գիտեմ, էգուց միւս օր կ'ասես՝ — Մըխօ, դաշտարումը կէս-կէս գրէ: Բայց քանի որ դու այդքան միամիտ կը լինես, ինձ էլ դժուար չէ ասելը„:

— Ի՞նչ ես շըշկլած, քեզանից բան են հարցնում, կրկնեց քահանան:

— Ի՞նչ... հա... տասնեւհինգ նորափեսայ չէ՞ն մի, ուշի գալով հարցրեց ժամկոչը:

— Հրամեր էք, աղա ժամկոչ, կատակելով պատասխանեց քահանան:

— Ահա քեզ հաշիւ. — ղասաբ Առաքելենց տղայ Կիկօն տուել է մի ոչխար եւ մի թուման փող: Լաք Արզումանի տղայ Ոսկանը՝ մէկ տիկ գինի եւ եօթն ղուռն փող. կռնատ Սիմոնի տղայ Քոչարը՝ երկու աման արաղ եւ չորս հատ ապխոր: Դօղօշենց Միրզօն՝ չէն ճնայ, երեք թուման փող եւ տասն դրամ վառելու ձէթ:

Digitized by Google

Տէր Մարկոսը, որ ախորժանօք լսում էր ընծանելոյ անուններըը, ուշի գալով հասկացաւ իւր սխալմունքը, եւ չը կամենալով, որ դրանց մասին իւր ընկեր Տէր Մարուքը տեղեկութիւն ստանայ՝ ասաց ժամկոչին. — բաւական է, բաւական, ինչպէս երեւում է քո հաշիւը միեւնոյն կէս գիշեր վերջանալու բան չէ. այսու ամենայնիւ երեսդ թող սպիտակ լինի, շատ ապրիս, իմ աշխատասէր Մխիթար. քո շնորհիւ, բարեկենդանին կ'ունենանք մի ճոխ ու բարիքներով լի խնջոյք... այլ եւս ի՞նչ է պակաս ճեացել... — ոչխար, գինի, ալիւր, փող... ալիւրաբեր ցանկալի բաներ. դրանց անունը միայն — զուարճութիւն է բերում...:

Մի փոքր ծիծաղելով, մի փոքր կատակելով, երբեմն Մըխոյի հետ, երբեմն իւր մօտ կանգնած մարդկանց հետ, Տէր Մարկոսը, իւր կեղծաւոր զուարճախօսութեամբ շահում էր ամենի սրտերը, եւ բոլորեքեանք շնորհակալ եւ գոհ էին նրանից, որ այնպէս ուրախ եւ ծիծաղադէմ քահանայ ունին:

— Դէհ, որդիք, առաջ եկէք, ասաց քահանան, իւր ձեռքի օրհնած մոմով վառելով նրանց պատրոյգները. — դէ, հրամայեցէք եւ կրակը վառեցէք: Աստուած քո որդուն էլ փոխ անէ, պարոն Թորոս, բարով քո որդու ձեռքն էլ այս կրակը վառէ, պարոն Սարխոշ, ասում էր անդադար Տէր Մարկոսը, գիւղի իշխաններուի սիրտը շահելով, որոնց որդիքը առաջնակայ տարին պիտի պսակուէին:

Քահանայի ասելն եւ ցամաք վառելիքի գոռալը մէկ եղաւ: Թանձր ծուխը, կանաչ-կալմիր բոցերի հետ բարձրացաւ մինչեւ ժամատան կամարագլուխն: Ծառնիձաղանձ ամբոխը միմեանց դիպաւ: Կրկին տիրեց լսառնակութիւն...: Սնոտիապաշտութիւնը մի վայրկեան եւ կատաղի հոգեզմայլութիւն ազդեց ռամիկներուի սրտի վրայ: Հայ...

Digitized by Google

հրէայ . . . հարայ . . . հրոյց, ծիծաղ, աղաղակ, երգ եւ շա-
րական, բոլորը միմեանց խառնուեցան . . . : Տէր Մարկոսի
զգուշացուցիչ աղաղակները այլ եւս չէին օգնում եւ երէկ
ժամկոչ Մրլուն այնքան ճարտար եւ աչքաբաց մարդ չը
լինէր՝ եւ շուտով չը հաւաքէր սրբութիւնները, շատ կա-
րելի է, գիրք, գրքակալ, խաչ, աւետարան, շարական եւ
մաշտոց, բոլորը միասին՝ նուիրական կրակի առողջ կերա-
կուր կը դառնային . . . : Մոլեռանդութեան լոկ կատաղի
երեւոյթները չէին հանդիսանում այստեղ. այլ կրօնը
ձեւացնում էր մի կախարդական կատակերգութիւն՝ երբ
ժողովուրդը դիւրական եւ մոգական զգացողութեամբ
ոգեւորուած՝ պատրաստ էր խարոյկի չորս կողմով եւ
կամ լոք էր տալիս եւ թռչկոտում էր նրա վրայով :

Սուրբ Ցեսարընդառաջը այդքանով միայն չէ վեր-
ջանում : Այնուհետեւ ամէն մի գիւղացի ջերմեռանդու-
թեամբ վառում է իւր ձեռքի մոմը "նուիրական կրակով „,
որ այդ մոմով, նրանցից ամէն մինը վառէ իւր տան կտուրի
վրայ պատրաստ խարոյկը :

Շրթ ամենից առաջ այր մարդկանց բազմութիւնը,
շտապելով՝ միմեանց խթելով, դուրս էին գնում եկեղե-
ցու բակից, եւրոպական թխագոյն հագուստով մի կին,
երեսը կանաչ շղարշով վարագուրած, հեռուն կանգնած՝
արհամարհանքով նայում էր, կարծես իւր մոքի մէջ
պախարակելով ռամիկների մի այդպիսի անոտիապաշտու-
թիւնը : Նրան մօտեցաւ մի այլ կին, նրա երէց քոյրը,
տիկին Սկուհին, ասիական հագուստով, եւ ասաց. —
Ցեսայի, Սալամէին, հոգիս, ո՞րքան լաւ անցաւ այս տարի
Ցեսարընդառաջը :

— Փառաւորուի՛ Տէր Մարկոսը, պատասխանեց տի-
կին Սալամէինը կատակելով. — քանի այդ աստուածա-

Digitized by Google

հաճոյ քահանան կ'ընդանի է՝ չէ՛ եկեղեցին կ'ունենայ քրիստոնէական համ ու հոտ...։

— Ինչու չե՞ը, հարցրեց տիկին Սկուհին վշտանալով. մի՛թէ դու եւս մեր եկեղեցուն չե՞ս պատկանում։

— Հա՛, այնպէս լեզուիս վրայ եկաւ այդ խօսքը... բայց, Սկուհի, դու գիտես, ես չեմ սիրում այդ ծէսերը. դրա համար, ինձ ախորժելի չէ միշտ ծէր Մարկոսի երեսը տեսնել...։ Այս երեկոյ ժամ եկայ՝ լոկ հետաքրքրութիւնից դրդուած։

— Ո՛չ, ո՛չ, ծէր Մարկոսը մի օրհնեալ քահանայ է. նրա իմաստութիւնը՝ չափ չունի. լսեցի՛ր թէ ինչպիսի աքանչելի ոճով էր պատմում Սիմէօն Ծերունու եւ Աննա մարգարէուհու մասին։

— Հա՛, նա ամբողջ Աստուածաշունչը իւր փորումն ունի, կատակեց տիկին Սալաթինը. — նա պատմում է սուրբ գլուածքը՝ խառնած անտեղի աւանդութիւններին հետ։

— Ազգային աւանդութիւններն էլ՝ չը պէտք է կորցնել, ասաց տիկին Սկուհին չը հասկանալով իւր խօսքը։

— Չը պէտք է կորցնել այն մասքով, որ աւանդութեանց եւ ծէսերի մէջ կարելի է գտնել ազգերին յատուկ նշաններ, նրանց բնաւորութիւնը եւ նրանց կեանքի պատմութիւնը — մանաւորապէս։ Բայց երբ աւանդութիւնները մոցվում են եւ կրօնական կեանքի մէջ, ուր միկը արթաղնացնում է նրանց եւ այդ աւանդութիւնները դառնում են հաւատքի էական մասեր։

Այսպէս խօսելով երկու քոյրերը հանդարտ կերպով առաջ էին քայլում, մինչեւ հասան գիւղամիջում մի տեղ՝ որ բաժանվում էր երկու ճանապարհի։

— Ծկ այս փողոցով գնանք Սալաթին, քոյրս, նրա ձեռքից բռնելով ասաց տիկին Սկուհին։

Digitized by Google

— Ի՞նչ առիթ ունինք այն կողմ գնալու, հարցուց տիկին Սալամիինը։

— Այս Ճանապարհը տանում է դէպ Ծովասաբենց տունը. եւ ե՛ս պէտք է այս երեկոյ այնտեղ գնամ "խնամատես". խնդրում եմ, դուն եւս ինձ հետ եկ։

— Ի՞նչ հարկ կայ այսօր խնամոնց տուն գնալու։

— Չը գիտե՞ս, որ Տեառընդառաջին սկեսուրները գնում են խնամիների տուն, իրանց հարսնացուները հանում են կտուրի վրայ, որ կրակ տեսանեն։

— Ուրեմն դուք եւս միտք ունիք օրիորդ Սալբին՝ ձեր Ռուստամի նշանածը հանել իւր հօր կտուրի վրայ, եւ հաղորդ կացուցանել ռամիկների ուրախութեանը։

— Ի՞նչ արած, մեր պապերի սովորութիւնն է, պատասխանեց տիկին Սկուհին — պէտք է կատարել, թէպէտ օրըստօրէ մեր ազգային այնքան գեղեցիկ, այնքան խորհրդաւոր աւանդութիւնները կորչում — անհետանում են . . . : Մինթէ այսպէս էր կատարվում Տեառընդառաջը հին օրերին . . . : Այժմ մարդկանց սրտերը սառել են. բոլորը թերահաւատ են դարձել եւ սուրբ բաները չեն ընդունում։

Տիկին Սալամիինը նշմարելով, որ իւր քոյրը այդ խօսքերով մասամբ իրան էր կշտամբում, չը կամեցաւ աւելի դիպչել նրա նախապաշարուած կարծիքներին, որ չը կոտրէր իւր երէց քրոջ սիրտը՝ որին այնքան սիրում էր։ Մանաւանդ, որ նա նոյն լուպէին ցանկանում էր գնալ Ծովասաբենց տունը օր. Սալբիին տեսնելու։

— Ես յօժար եմ քեզ հետ Ծովասաբենց տունը գնալու, ասաց տիկին Սալամիինը. միայն թէ դուք էլ պարտաւոր էք այսօր վարուել Տեառընդառաջին յատուկ սովորական վարք ու կարգով։

Digitized by Google

— Որպէս, հարցրեց տիկին Սկուհին, չը հասկանալով իւր քրոջ ասածը։

— Տեառընդառաջին խնամիները ընծաներ են տանում հարսնացուի տունը. դուք ուղարկե՞լ էք։

— Ի հարկէ, համարեա թագաւորի արժան բաներ։

— Ջոր օրինակ։

— Օրիորդ Սալբիի համար մէկ կարմիր մեշադու մետաքսէ քող, մէկ թանգագին քիշմիրեան շալ, մի գեղեցիկ պարանոցի մանեակ մարջանով եւ ոսկի դահեկաններով շարած, մի հատ Փէրուզայ մատանի, մէկ զոյգ ադրի ասլեր։

— Իսկ քաղցրաւենիք դրե՞լ էք դրանց հետ։

— Ի՛նչպէս չէ. նարաթ, նօղուլ, շաքար, ամէն տան մէջ այսօր բովում են միմիայն խարրուզակի եւ սեխի սերմեր, կարկաթ (աղանձ) են շինում, եւ չամչախուառն ուղարկում են խնամատես. բայց դրանց փոխարէն՝ ես բովել եմ տուել նշի, ընկուզի, Ծիրանի կորիզի եւ սիսեռի կարկատ, եւ զանազան ազնիւ մրգեղէններով՝ ուղարկել եմ Ծովատաբենց տունը։

— Այո, դուք յատկացեալ սովորութիւնից ո՛չ մի բան բաց չէք թողել, պատասխանեց տիկին Սալաթինը, խորհրդաւոր եղանակով։

— Սէրը սիրուց կը ծնի, քոյրիկ, բացատրեց տիկին Սկուհին անկեղծ կերպով. ի՞նչ արած, խնամիներս արժանաւոր մարդիկ են. իմ հարսնացուի, օրիորդ Սալբիի համար եթէ գլուխս վէր դնեմ, եթէ հոգիս մատաղ անեմ՝ կորած չէ. գիտես նա ի՛նչ ազնիւ պատուղ է...։ Իմ Ռուստամի խելքը տարել է, գիշեր-ցերեկ դադար չունի նրա պատճառով։

Digitized by Google

— Մի՛թէ այդպիսի նիւթական բաներո՞վ պէտք է ձեր սէրը խնամոնց ցոյց տաք։

— Հայ-քրիստոնեան դրանից աւել ի՞նչ կարող է անել. մեզ հնարաւոր է՝ սիրել, բարեկամութիւնը՝ սրբութեամբ պահել, միմեանց բարիին խնդալ, չարին տրտմել, որ Աստուծոյ ահեղ դատաստանի առջեւ սեւերես չը մնանք։

— Բայց մի խօսք մոռացար ասել։

— Ի՞նչ խօսք։

— Խնամոնց "բաժինքը, ամէն հանդիսաւոր օրերին ուղարկելը։

— Հաւատացնում եմ, որ սկսեալ այն օրից, երբ խնամութեան անունը մտել է մեր եւ Ծովասաբենց տան մէջ, ես՝ ամբողջ տարուայ ամէն մի տօնախմբութեան սովորութեան համեմատ, Աստուծոյ տուածից՝ իմ հարսնացուի "բաժինքը„ չէմ խնայել. օրինակ՝ Պաւասարգի գիշերը՝ ձմերուկ, խարբուզակ, միլաղ եւ զանազան ծառերի պտուղներ. առաւօտեան՝ արդար իւղով եփած հարիսայ. ամէն մի մեծ եւ փոքր զաւակներին՝ փառաւոր եւ թանկագին խալաթներ, քաղցրաւենիքներով եւ ընտիր մրգերով. Նաւասարդ օրերին՝ ինչ որ մեր սովորութիւնների համաձայն պատշաճ է։

Տիկին Սալաթինը զարմանում էր իւր քրոջ պարզամտութեան վրայ, որ նա գիւղական սովորութիւնները համարում էր մովսէսադիր օրէնքներ կամ քրիստոնէական հաւատքի մի մասը՝ որից մի չնչին բան պակասեցնելը — իրան մեղք էր համարուելու։

— Դու կարծում ես ձեր հարսնացու օրիորդ Սալբին դրանցով ուրախ կը լինէր, հարցրեց տիկին Սալաթինը։

Digitized by Google

— Ինչո՞ւ չէր լինի, զայմանալով պատասխանեց տ. Սկուհին։

— Սրա համար, որ նա մի "նոր մարդ„ է։

— Ի՞նչ ասել է "նոր մարդ„։

— Մի մարդ, որ ունի առողջ խելք, գիտէ ճշմարիտ կերպով մտածել, եւ ունի խելացի կերպով ընտրութիւն անելու ընդունակութիւն։

— Ուրեմն մենք չը գիտենք մտածել, եւ մեր ընտրութիւնները անխելք են, նրա խօսքը կտրեց տիկին Սկուհին։

— Դուք մտածել չը գիտէք, եւ չունէք խելացի ընտրութիւն, որովհետեւ դուք հետեւում էք հնութեանը, ինչ որ տեսել եւ սովորել էք ձեր պապերից՝ ձեզ համար սուրբ է։

Տիկին Սկուհին չը գիտէր, թէ ինչ պատասխանէր եւ կամենալով կրճատել այդ խօսակցութիւնը, ասաց.

— Բաւական է քոյրիկ, կանանց արժան չէ խօսել այդպիսի խորունկ առարկաների վրայ, որոնց նրանց միտքը չէ կարող հասնել։

— Ինչո՞ւ, կնիկները մարդ չե՞ն, կնիկները միշտ իրանց խաւար տգիտութեան մէջ պէտք է մնան։

— Կանանց տրուած է գիտնալ իրանց տնտեսական գործերը եւ իրանց տան կառավարութիւնը։

— Այսինքն թէ ինչպէս պէտք է թոնիրը վառել, հաց թխել, կերակուր եփել, այդպէս չէ՞, կատակելով աւելացրեց տիկին Սալամեանը։



Digitized by Google

ԺԱ.

ՆԻՆԹԱՊԱՇՏՈՆԹԻՆԸ

Երկու քոյրերը, այնքան հակառակ իրենց գաղափարներով, այդպիսի խօսակցութեամբ տաքացած՝ տեսան իրանց առջեւ Ծովասաբենց տան դուռը։ Երեք անգամ զարկեցին մուրճը։ Աղախինը՝ հասուն եւ լկքը հասակով մի աղջիկ, բացեց դուռը, եւ ուրախութեամբ ներս վազեց, խնամիների գալուստը իւր տիկնոջ յայտնելու։

Տիկին Թարլանը, այսպէս էր հարսնացուի մօր անունը, իսկոյն ընդ առաջ գնաց հիւրերին, եւ իւր երկրի գեղեցկախօսութեան ոճով, սկսեց բարեւել նրանց գալուստը.

— Բարով, բարով, իմ թանկագին բարեկամներ, ասաց նա գրկախառնուելով — այս մի անսպասելի ուրախութիւն է ինձ համար, երբ ես բախտաւոր եմ գտնուել վայելելու ձեր այցելութեան շնորհքը, հաւատացնում եմ ձեզ սիրոյ անունով, որ իմ լեզուիս պակասում են այն կենդանի բառերը, որոնցով կարող լինէի բացատրել իմ հոգեզմայլութիւնը եւ իմ ուրախալի զգացմունքները... Իսկապէս երջանիկ է իմ տան շէմքը՝ երբ ձեր ոտները կոխում են նրան. ձեր առաջ պէտք էր մատուցներ զոհել[1], բայց ներեցէք, պաս օր է. դրանց փոխարէն

---

[1] Պարսկաստանում սովորութիւն է մատաղ մորթել շահզադաների, խաների եւ դասաւորների առջեւ, քաղաքից ներս մտած ժամանակ. նաեւ այսպէս պատվում են երեւելի հիւրերին, երբ մտնում են իրանցից ստորադաս մարդկանց տուն։

Digitized by Google

իմ հոգիս ձեզ մատաղ, զաւակս ձեզ ծառայ, տուն ու տեղս ձեզ ընծայ . . . : Ահնչափ բարի է ձեր գալուստը, հազար բարի . . . իմ աչքիս, իմ գլխիս վրայ տեղ ունիք, ապրիք խնամիներ. համեցէք, համեցէք, խնդրեմ, Սկուհի, Սալաթին, սիրականներս:

Սիրալի գրկախառնութիւնից եւ ջերմ համբոյրներից յետոյ, տիկին Սկուհին, որ իւր լեզուի արեւելեան քաղցրախօսութեան արուեստով իւր խնամիից պակաս չէր, այսպէս խօսեց.

— Այդ ձեր անուշ, անուշ խօսքերը, ազնիւ խնամի, ճշմարիտ, մեղրից ու շաքարից համեղ են . . . : Ինչ պէտք է մատաղը, երբ անկեղծ բարեկամութեան մէջ, անկեղծ սէրը՝ միշտ իւր աստուածահաճոյ զոհաբերութիւնն ունի. սուրբ եւ անխարդախ սէրը, որ այնքան՝ քաղցր եւ ախորժելի է, որ մարդ չէ կշտանում նրանից՝ միակ երկնային բարիքն է: Դա աստուածեղէն է, դա Աստուծոյ հոգուց է կաթել մարդկանց սրտերի մէջ, եւ շաղկապում է մեզ, որպէս միմեանց՝ նոյնպէս եւ երկնքի հետ:

— Սուրբ Գէորգը, երդուեց տիկին Թալլանը — իմ սրտի ուրախութիւնը, իմ հոգու հանգստութիւնը, բոլորը, բոլորը՝ ձեզնից է կախուած: Ես ձեզնով եմ շնչում, ձեզնով եմ ապրում . . . առանց ձեզ՝ իմ օրը, իմ արեւը սեւ է, առանց ձեզ՝ իմ կեանքը խաւար է:

Տիկին Սալաթինը, որ հեռուն կանգնած, լուռ եւ անխօս, զարմանում էր նրանց այնքան աւելորդ սեթեւեթանքի վրայ, որով արեւելքին գիտէ յեղյեղել իւր զգացումները, իւր սրտի ջերմ եւ կրակոտ կլքները, կտրեց նրա խօսքը, ասելով — Խնամի Թալլան, տարակոյս չը կայ, որ դուք եւ իմ քոյր Սկուհին անչափ սիրում էք

միմեանց, որպէս ձեր սրտի համակրութիւնը ցոյց է տա-
լիս . . . բայց կարծեմ ձեր ժամանակը անցնում է, պէտք
է ձեր կտուրը բարձրանալ եւ կրակը վառել . . . :

— Հա՛. ուշ է, միայն ես ձեզ էի սպասում, որ միա-
սին վառենք կրակը, պատասխանեց տիկին Թարլանը:

— Բայց հրամայեցէք, որ օրիորդ Սալբինն այստեղ
կանչեն, որ մեզ հետ միասին կտուրը բարձրանայ, ասաց
տիկին Սկուհին:

Տիկին Թարլանը հրամայեց Նազանինին՝ բարձրահասակ
օրիորդ աղախնին, որ գնայ օրիորդ Սալբին կանչէ:

Օրիորդ Սալբինն, ամենեւին ուշադրութիւն չը դար-
ձնելով, թէ ինչ էր կատարվում իւր շրջակայքում —
գիւղի մէջ, միայնակ առանձնացած իւր սենեակի մէջ,
նոյն ժամանակ խորին ուշադրութեամբ մի գիրք էր կար-
դում, երբ Նազանին ներս մտաւ, յայտնեց, թէ մայրը
եւ հնամիները դրսում սպասում էին նրան:

— Ի՞նչ են կամենում նրանք, հարցրեց օրիորդը
սառնութեամբ:

— Մի՛թէ չը գիտես, Սալբի, պատասխանեց Նա-
զանին ծիծաղելով — այսօր Տեառընդառաջ է, կտուր-
ների վրայ կրակ են վառում, եւ նորահարսերը եւ հարս-
նացու աղջիկները կրակի շուրջը մեն են ածում . . . :

— Գիտեմ . . . միայն, Նազանի, ես զրադաշտական
մոգպետի պաշտօն չեմ կամենում կատարել: Գնա՛, ես
չեմ գալու, թող իրանք վառեն այդ կրակը . . . դու գի-
տես, ես կռապաշտութիւն չեմ սիրում . . . :

— Ամա՛ն, Սալբի, քո հոգուն մատաղ, քեզ սպա-
սում են, մայրդ կը բարկանայ, եթէ չը գաս: Գնանք, թէ
ինձ կը սիրես, ի՞նչ վնաս ունի, երբ նրանք շնորհակալ
կը լինին քեզնից: Տիկին Սալբինը եւս այնտեղ է:

Digitized by Google

— Տիկին Սալաթինը այնտեղ է, ուրեմն կը գամ, ասաց օրիորդ Սալբին, եւ վերկացաւ, որ գնայ։

— Այսպէս չէ՛ կարելի, նրան կանգնեցնելով ասաց Նազանին. դուք ձեր գլխի վրայ գոնէ մի քողձգեցէք, այդպէս բաց երեսով ամօթ է[1]։

— Հա՛, նրանք սիրում են տեսնել ամէն ինչ վառագուրած, պարուրած եւ կապկապած, ասաց նա խորհրդական ոճով, եւ ձգելով իւր գլխի վրայ մետաքսէ կարմիր քողը, դուրս եկաւ՝ մինչեւ կուրծքը ծածկած երեսով։

Հնամիները եւ Սալբիի մայրը, բակում սպասում էին նրան։ Երբ տիկին Սկուհին հեռուից տեսաւ իւր հարսնացուին, իւր սիրելի որդի Ռուստամի նշանածը — "Ծ՛կ, համբուրեմ քեզ, իմ սիրական, ասաց նա մօտենալով — ե՛կ, մի ամաչիր, քեզ մատաղ լինիմ"։ Այս խօսքերով, նա բռնեց օրիորդ Սալբիի ձեռքը, մօտ քաշեց, եւ բարձրացնելով նրա երեսի քողը, երկու ջերմ համբոյր քաղեց նրա փափուկ, վարդակարմիր թշերից, որոնք նոյն րոպէին, ո՛չ այնքան ամօթխածութիւնից, որքան մի գաղտնի տհաճութիւնից էին շառագունած։ Օրիորդը փոխարէնը համբուրեց տիկին Սկուհու ձեռքը եւ մօտենալով տիկին Սալաթինին՝ չը համբուրեց, այլ բարեկամաբար բռնեց եւ սեղմեց նրա ձեռքը։

— Հնամի Թաալան, հարսնացուն այս տարի բաւական մեծացել է, ասաց տիկին Սկուհին, ոտքից մինչեւ գլուխ չափելով օրիորդ Սալբիին՝ որ անշարժ եւ լուռ կանգնել էր նրանց առջեւ։

---

[1] Պարսկաստանում մանուկ օրիորդները մեն են գալիս երեսները բաց, մի տեսակ, արեւելեան նման գգակ իրանց գագաթին գրած, բայց նշանուելուց եւ պսակուելուց յետոյ, այլ եւս չէր կարելի նրանց երեսները տեսնել, մինչեւ հաղը նրանց ծածկէր եւ անհետացնէր աշխարհի երեսից...։

Digitized by Google

Տիկին Թարլանը չը կարողանալով զսպել օրիորդ Սալբիի նկատմամբ իւր տհաճութիւնը եւ անգոհութիւնը՝ ասաց.

— Ըհ, ինչ օգուտ մարմնի չափազանց աճելութիւնը, երանի խելքով մեծացած լինէր:

— Ձեզ դիւրին է մի այդպիսի անտեղի կարծիք ունենալ Սալբիի մասին, խնամի, նրա խօսքը կտրեց տիկին Սալլաթինը — որովհետեւ "ձեր երկուսի ջուրը մի առուով չէ գնում,,:

— Ի՞նչ էք կամենում ասել, հարցրեց տիկին Թարլանը:

— Դուք նայում էք երկու հակառակ ծայրերից, առաջ տարաւ տիկին Սալլաթինը — ձեզ դժուար է հաշտուել միմեանց հետ. նա՝ կրթեալ է եւ նոր, իսկ դուք անուս էք եւ հին . . . :

— Ինչ կամենում էք՝ ասացէք, նրանց խօսքը կտրեց տիկին Սկուհին — բայց "քուրդը իւր թանին թէթու չի ասիլ,,. իմ Սալբին, իմ նազելի հարսնացուն, իմ սրտի ուզածին չափ լաւ է. խելօք, ազնիւ բնաւորութեամբ, պարկեշտ եւ ամօթխած է:

Տիկին Թարլանը վշտանալով տիկին Սալլաթինի կծու խօսքերի համար, խօսքը փոխեց ասելով.

— Հաւատացնում եմ ձեզ, խնամի Սկուհի, այդ քաւաը, որով դուք կոչում էք իմ աղջիկը ձեր հպանոցո՝ բոլորովին անարժան է նրան, որովհետեւ ես իմ աղջիկը այն մտքով չեմ տուել, որ ձեր որդու հարսը դառնայ. այլ իմ յօժար կամքով եմ նուիրել՝ որ ձե՛զ համար լինի սուրբ աղախին, եւ սորուկ ծառայ, ձեր ոտքերի ազ եւ ձեռների մահրամայ[1]:

---

[1] Անագորոյն մայրը կանխատես էր կարգում իւր անբախտ աղջկայ

— Չէ, չէ, նրա ձեռքը բռնելով ասաց տիկին Սկուհին, ես նրան կը պահեմ իմ աչքի լոյսի պէս. Սալբին հրեշտակ է, թէ հոգով եւ թէ մարմնով։

Օրիորդ Սալբին, այդ մեծահոգի եւ յանդուգն բնաւորութեամբ աղջիկը, եթէ իւր երկրի սովորութեան համեմատ՝ դատապարտուած չը լինէր լռութեան, հաղթելու եւ ամօթխածութեան՝ անպատճառ կը պատասխանէր — "բաւական է, ես չեմ կարող տանել այդպիսի անտեղի գովասանքներ,,. բայց նոյն լոպէին նրա ընդունելութեան վրայ մի սիւթագորեան վճռականութիւնը. նա դժուարութեամբ զսպեց իւր անհամբերութիւնը, մինչեւ բոլորը դէպ կտուրը տանող սանդուխտով — վեր բարձրացան։

Դիւղի բոլոր տանիքների վրայ տեսանելի էր կրակավառութեան արարողութիւնը[1]։ Թվում է, իբր բոլոր

գժնդակ ճակատագիրը... Աբգարեւ Աթիայի կանայք, ուրիշ ոչինչ չեն քան անտեսական ծառայութեանց մէջ մի անարգ գործիք։

1 Աբեւելքի տարածայ նշանաւոր փափախութեանց մէջ, միշտ ամբոխութիւն ունին իրանց արախութիւնը բացայայտել կրակով — սիրոյ միակ նշանով։ Պարսիկները եւ Թուրքերը ձմեռան վերջին ամիսն, ամէն մի չորեքշաբթի երեկոյ, մինչեւ նովրուզի (գարնանամուտի) առաջին օրը՝ կտուրների վրայ խարոյկ են վառում եւ հրացան գործիքներ արձակում։ Հայերը հին տարուայ վերջին գիշերը թէպէտ կրակ չեն վառում, բայց մի ազգերախտ անգգուհանութեամբ, հրացաններով հալածում՝ փախցնում են հին տարին առանց լսելու նրա բարեկամական "մնաք բարեաւ,,։ — Ինչմ։ Ընդունք տեսում են՝ այն հին տարին չը տարի էր, իրանց համար լաւ չանցաւ, եւ ուրախութեամբ ընդունում են նորը, լի յոյսով, թէ գա բերելու էր իրանց նոր բախտ։ Բայց յաջորդ գեկտեմբերի վերջին գիշերը, դրան եւս նոյն ժխտհուհութեամբ են արտաքսում, աքսորում, համարելով դրան ասելի վատթար քան անցեալը... Բայց տարինէրն են միշտ, թէ հայերը։ Նոր տարին հին տարուց մի այլ զանազանութիւն չունի բացի այն, որ տարեթուից փոխում է մի թուանշան, եւ այդ թուաբանական թուանշանը ոչ մի բարի կամ չար ներգործութիւն չէ կարող անել աշխարհի եւ մարդկութեան վրայ։ Ուրեմն հայերն են ծոյլ եւ անմտոր։ Ընդունք "չեն գործում եւ ոչ կարող են ուսոել,, Թող հայերը բարեաղեն իրանց աւերուած դրութիւնը, ուղղեն իրանց կեանքն յիմար ընթացքը, եւ տարիները նրանց համար միշտ բախտաւոր կը լինեն, եւ կը բերեն նպատակութիւններ։

շրջակայ գիւղօրայք, Տիրոջ բարկութիւնից՝ զարհուրելի հրդեհներով — անխնայ այրվում, կրակվում եւ ծխրտում էին։ Ծաղկաւանը հին Սոդոմ-Գոմորն էր յիշեցնում։ Թէպէտ մութը պատել էր աշխարհը, բայց այստեղ, խարոյկների բոցերը — գիշերը ցերեկի էին փոխում։ Կրանների գոռոցի հետ խառնուելով հրացան գործիքների որոտը, դէպ երկինք բարձրացող շառաչուկների ճարճատիւնը, նրանց օձանմման գալարուելը, ճայթելը օդի մէջ — միւս կողմից, մեծ-մեծ կուժերի միջից ածխախառն վառօդի, վուլկանեան լավայի նման — թնդալով փըշփըշալով — արտահոսուելը — այդ բոլոր հրարու եստական գործողութիւնները խորտակում, թնդեցնում էին երկինքը, դղրդեցնում էին շրջակայ սարերը — երկրի վրայ՝ ահ եւ զարզանք տարածելով։ Դրանց հետ միասին ոռնասէր գիւղացիների ուլուխալի աղաղակները, նրանց խառնաձայն տաղերգութիւնները, կրակի չորս կողմով կատաղած նրանց յիմար պարն ու կաքաւը՝ այդ բոլորը ի մի առած՝ այնքան ծիծաղելի էին, որքան մոլեկան եւ կատաղի։

Այդ հետաքրքրական տեսարանները աւելի կենդանացնում էր պատանեան, որ իւր զիլ եւ բարակ ձվվուն ձայնով, իւր հասատարիմ ընկերների՝ դափի, դահոլի եւ դարիայի հետ — նուագվում էին այդ տարօրինակ նորափեսանների կտուրների վրայ։

Այդ աղմկալի հանդիսակատարութեան մէջ միակ ահաճ եւ խոոված արարածները — մեծ-մեծ շներն ու փոքրիկ լակոտներն էին, որ զարհուրելով եւ սասանելով մի այդպիսի յանկարծակի դղրդումից, դուրս գալով գիւղից՝ թափառական — վազ էին տալիս դաշտերի մէջ — իրանց հաջելու տխուր եւ տրտում հեծկլտոցը խառնելով հասարակաց ուրախութեան հետ։

Digitized by Google

Ծովասաբենց տունը, որպէս մի հասարակ գիւղացու բնակարան, զուրկ էր շռայլ փառահեղութիւնից, այդ պատճառով, տիկին Թալընը չէր կարողացել աւելի մեծահանդէս տօնել Սուրբ Տեառընդառաջը։ Այստեղ, մի ոչ այնչափ ընդարձակ կտուրի վրայ, կրակավառութեան արարողութիւնը խիստ պարզ էր եւ աղքատին։ Վառելիքների փոքրիկ կրակաշեղջից բարձրանում էին վառուող նիւթերի թոյլ եւ կանաչագոյն բոցերը. ինքը տիկին Թալընը, անվրդով ձեռքում, խառնում էր կրակը, աւելի զօրութիւն տալով նրա բոցերին, եւ լուռ փսփսացնում էր աղօթքի նման մի բան։ Նրա իննամիներից տիկին Սկուհին օգնում էր նրան, խարոյկի վրայ վառելանիւթ աւելացնելով, իսկ տիկին Սալաթինը հեռուն կանգնած, իսում էր օրիորդ Սալբիի հետ, անլսելի ձայնով։

— Տեսնո՞ւմ ես Սալբի, ասաց տիկին Սալաթինը մատով ցոյց տալով, — մի ժամանակ, մեր քաջ Վարդանի եւ Վահանի օրերին, այդ մոխրաբլուրների[1] վրայ, զրադաշտական ատրուշանների անշէջանելի կրակներն էին վառվում, բայց մեր արժանայիշատակ նախնիքը իրանց արիւնով մարեցին այն կրակը, որ սպառնում էր լափլզել, այրել եւ անհետացնել Սուրբ Քրիստոնէութիւնը։ Բայց այսօր, ինչ ցաւալի տեսարան է այդ ... այսօր վառվում են նրանք ամէն մի քրիստոնեայ կոչուած հալստի

---

[1] Աւրպատականը, հրապաշտութեան այդ օջախն ու գերեզմանը, մինչեւ այսօր պահպանում է հին ատրուշանների յիշատակարանները։ Նրա գաղթ նահանգների մէջ տեսանելի են մոխրից ձեւացած ահագին բլուրներ. Թէպէտ շատերը, երանգում գտնուած անթիւ մեռելների ոսկորների պատճառով անհետացել են գործածուելով արտերը պարարտացնելու համար, բայց այն նահանգում, ուր կատարվում է մեր վէպը, այդպիսի բլուրներ եւ հայոց գերեզմանատներ շատ կան, գրանցից մինը դեռ պահում է իւր նշանաւոր անունը՝ Թաւթ-Ամին։

Digitized by Google

եւ աղքատի, մեծաշէն ապարանքների, գծուծ խուղերի եւ խրճիթի կտուրների վրայ . . . :

— Այդ նշանակում է, պատասխանեց օրիորդ Սալբին ցածր ձայնով, կրակապաշտութիւնը, որ Զրադաշտի մոգերը չը կարողացան ներմուծել հայոց մէջ, ներս բերին մեր յիմար տէրտէրները՝ քրիստոնէական փաթոթով պատրուած . . . :

Դրանց խօսակցութիւնը ընդհատեց տիկին Թալլանը, որ մտնելով՝ բռնեց օրիորդ Սալբիի ձեռքը եւ մտեցրեց կրակին.

— Դու, ասաց նա, ամէն օր տրանջում ես, թէ գլուխդ ցաւում է. սպասիր, ես կը բժշկեմ քո գլխացաւը:

Այնուհետեւ մոլեռանդ մայրը, մի քանի անորոշ եւ անհասկանալի բառեր եւ ոգիների անուններ արտասանելով, Սալբիի ճամերի հիւսերից մինը դուրս քաշելով քողի տակից՝ կամենում էր խանձել ուներկով բռնած կրակով. օրիորդ Սալբին իւր վհուկ մօր կախարդական խորհուրդը հասկանալով՝ դուրս քաշեց իւր ձեռքը նրա ձեռքի միջից, եւ արհամարհական կերպով մի կողմ քաշուեց, այս խօսքերը արտասանելով. —

— Գիտես ինչ է գրուած սուրբ գրքի մէջ, ասաց նա. "բոլոր կախարդների եւ կռապաշտների բաժինը՝ կրակով եւ ծծմբով վառած լճի մէջ պիտի լինի, որովհետեւ կախարդները պիղծ են Աստուծոյ առջեւ„:

Այդ խօսքերը մահուշափ ազդեցին տ. Թալլանի սրտին. բայց իւր աղջկայ պատիւը չը կամենալով ոտքի տակ տալ իւր խնամիների առջեւ, մի այլ ժամանակի թողնելով իւր տհաճութեան թոյնը՝ մեծ դժուարութեամբ զսպեց իւր բարկութիւնը:

Digitized by Google

Բայց տիկին Սկուհին, այդ պարզամիտ կինը, ամենևին չը հասկանալով իւր հարևանուհի եւ նրա մօր մէջ անցածը՝ նոյն միջոցին համոզում էր մի այլ թիւրիմանական գործողութիւն։ Նա իւր մատներով մի բամբակեայ թել էր ոլորում, որն երկքսակելով՝ բռնում է իւր բերանի առջեւ (այդ ժամանակ նրա շրթունքները շարժվում են, կարծես թէ մի բան է կարդում)՝ եւ երեք անգամ փչում է նրա վրայ, այնուհետեւ այրելով թելի երկու ծայրերը, նորահարսի նարօտի նման, շապկի տակից երեք անգամ փաթաթում է իւր վզով, յօսալով, որ դրանով բժշկուելու էր իւր եռօրեայ տենդացաւը։

Օրիորդ Նազանին, նոյն րոպէին հեռուն կանդնած՝ մի այլ դիւթական թիլիսմ էր կատարում. — նա կրակով այրում էր իւր գլխին ծածկած քողի ծայրերը։ Այդ նա անում է հաւատացած լինելով՝ թէ այդպիսով իւր անձը ազատ կը պահուի աչահարութիւնից (բադ նազարից)։

Օր. Սալբին հեռուից նշմարելով այդ, մօտեցաւ նրան, եւ ասաց. —

— Նազանի, քո ո՞րտեղն է ցաւում, որ այդպէս ես անում։

— Ը՛հ, տրաքեն չար աչքերը, պատասխանից նա. — մեր գիւղում աչքով սարը կը ճեղքեն։

— Դա կ՚ազատէ՞ քեզ աչքով տալուց, հարցրեց օր. Սալբին։

— Հա՛, Սալբի, մի՞թէ դու չը գիտես։

— Ես գիտեմ... բայց դո՛ւ այն պտուղը չե՛ս, որ քեզ աչքով զարկեն. աչքով զարկում են սիրուն աղջիկներին միայն, եւ ամէն բան, որ գեղեցիկ եւ հրաշալի է, պատասխանեց նա կատակով։

Digitized by Google

— Լաւ, լաւ, Սալթի, դիտենք, որ դու սիրուն ես. Աստուած քեզ չար աչքից պահէ. բայց ես էլ իմ տեղը ունիմ... մի ծիծաղիր ինձ վրայ, ասաց Նազանին վշտա-նալով:

— Ուրեմն քեզ համար մի քափնազլիք[1] աղօթք գրել տուր եւ միշտ քեզ մօտ պահիր:

Մինչ դրանք այդպէս խօսում էին, յանկարծ մեր-ձակայ տանիքից, որ կից էր Ծովասաբինց կտուրին, լսելի եղան խառնաձայն աղաղակներ. —

— Վայ... վայ... ամա՛ն... ի սէր Աստուծոյ... օգնութեան հասէք... աղատեցէք... էյվայ... էյվայ... վայ... ողորմութիւն արէք... աղատեցէք... մեռա՛...:

Տիկին Թարլանը իւր խնամիների հետ, եւ միւս կտուրներից շատ մարդիկ շուտով այնտեղ հաւաքուեցան եւ տեսան, որ իրանց դրացիի տունը մի մեծ հրդեհով անխնայ վառվում էր: Օգնութեան հասնող մարդկանցից ոմանք սկսեցին հրդեհը շիջել, եւ մի քանիսը՝ բոցերի միջից դուրս քաշեցին Ծովասաբինց բալի դրկից խղճալի Հայրապետին:

— Հայ, ջուր բերէք, ջուր բերէք, աղաղակեցին մի քանի մարդիկ:

Թէպէտ շուտ կարողացան հանգցնել Հայրապետի վրայի այրուող հագուստը, բայց չը կարողացան յետ դարձնել նրա կեանքը, որովհետեւ ողորմելու ամբողջ մար-մինը միանգամայն խորոված լինելով՝ մի փոքր անցած՝ նրա ձեռքերն ու ոտները կծկուեցան, եւ նա մեռաւ:

---

[1] Առհասարակ, հայերն ու պարսիկները սովորութիւն ունին քափնազլիք աղօթքներ կարել տալու իրանց ալ թեւի վրայ: Ա.յդպիսի թղթերը, կանայք պատելով արծաթի մէջ՝ իրանց վզից են քաշել տալիս: Պարսիկները քանդել են տալիս այդ աղօթքները իրանց մտաւանիներին հագեցից առնելի վրայ:

Digitized by Google

Ի՞նչ հրեհ էր այդ։ — Երանց տանիքի վրայ վառած նուիրական հուրից մի կայծ, քամու զօրութեամբ տարուելով, աննկատելի կերպով հրդեհում է ախոռատան բակում դիզած այօտները, եւ այնտեղից անցնելով, այրվում է մի փոքրիկ տնակ, ուր, նոյն միջոցին քնած է լինում խղճալի Հայրապետը, խորին թմրութեան մէջ՝ հարբած լինելով Բաքոսի ընպելիքով։

Տիկին Սալաթինը, նշմարելով այրուածի կնոջ դառն հառաչանքը, սկսեց նրան մխիթարել այս խօսքերով. —

— Մի լար, ախ կին, թէ եւ քո մարդը այլ եւս արեւի լոյսը չէ տեսնելու, դարձեալ նա բախտաւոր է, որ յաջողեց մեռնել սակաւ մարդկանց համար վիճակուած մի փառաւոր մահով։ Ուր կեանքը զոհելով նուիրական կրակի բոցերին՝ նա դասուեցաւ ելյանելի մարտիրոսների եւ սուրբ նահատակների կարգը։ Դրա փոխարէն միւս կեանքում պսակ կ'ընդունէ գուցէ Որմզդի ձեռքից . . .։

Սգաւորը չը հասկացաւ այդ հեգնական խօսքերի իմաստը եւ աւելի դառնագին՝ սկսեց լալ։

Բայց օրիորդ Սալբին, մօտենալով, կամաց ասաց տիկին Սալաթինի ականջին. —

— Շատ կարելի է, որ պատուելի այրուածը փոխանակ փառաւոր պսակ ընդունելու Որմզդի ձեռքից, արդէն հիւր գնաց Արհմնի մօտ։

— Դու սխալւում ես, Սալբի, պատասխանեց տիկին Սալաթինը, — լսում ես, ինչ է խօսում այնտեղ ամիկը։

Եւ իրաւ, բազմութեան մէջ մի մարդ ասում էր իւր ընկերներին.

— Այ տղերք, տեսաք, ինչ բախտաւոր էր այդ մարդը. հնաց, հնաց, վերջը մի այդպիսի բարի մահով

վախճանուեց... Ճշմարիտ, նրա տեղը ալքայութեան մէջտեղն է: Ի՞նչ օգուտ, քանի որ մեր աչքը հաւատ եւ յոյս չունի. եթէ մահմէտական մէկը լինէր, հիմա թուրքերը կամ պարսիկները դրա վրայ մի գոմբեզ (մաուռ) էին կանգնել: Ինչո՞ւ մուհալլէմի կռիւներում, Քալբալայի ճանապարհում եւ Մեքքայի անապատներում մեռածներըը ճէննաթի մէջ, Մահմէդի մօտ պիտի գնան, բայց մեր այսօրուայ օրում նահատակուածը՝ ալքայութիւն չի՞ գնալու:

— Խօսքդ շաքարով մուղդուսի Պրրրօ, ասաց մի ուրիշը. — ճշմարիտ, աւետարանի միջնեն ես խօսում, եւ խօսքերդ ջաւահիր են, բայց ի՞նչ անես, լսող չը կայ:

— Ալդէն սրբացրին, ասաց օրիորդ Սալբին. ե՛կ գնանք, ես մրսում եմ:

— Ո՞ւր գնանք, չէ՞ս սպասելու մինչեւ մայրդ էլ ցած իջնի, հարցրեց տ. Սալամբինը:

— Ո՛չ, նրանք դեռ շատ գործ ունեն, կ՛ուշանան, մենք գնանք, մի փոքր տաքանանք:

Նրանք երկուսը միասին ցած իջան կտուրից: Տիկին Թարլանը իւր սրտի մէջ զայրացաւ, որ նրանք մինչեւ վերջը չը սպասեցին: Տիկին Սալամբինը օրիորդ Սալբիի հետ մնան վերջինիս սենեակը, ուր նոյն րոպէին վառարանում փայտ էր վառվում: Ո՛րքան մեծ եղաւ նրանց ուրախութիւնը, երբ տեսան, որ Ռուստամը, մի լայն վերարկուի մէջ փաթաթուած, դռնից ներս մտաւ:

— Սալբի, ես լսեցի ձեր դրկիցներից մի մարդ է այլուել, ասաց նա, առանց բարեւելու, անփոյթ կերպով գալով նստելով տիկին Սալամբինի մօտ:

— Հա՛, Հայրապետը, ցածր ձայնով պատասխանեց օրիորդ Սալբին:

Digitized by Google

— Դու չէիր տրտմի, եթէ այրուողը քո լուսահոգի մայրը լինէր, հարցրեց պարոն Ռուստամը ծիծաղելով։

— Ինչու՞ չէի տրտմի, հարցրեց օրիորդ Սալբին։

— Որովհետեւ կ'ազատուէինք, որպէս դու, նոյնպէս եւ ես։

— Մինթէ մենք գերի՞ ենք։

— Դեռ մի բանով պակաս գերիներից... պատասխանեց պ. Ռուստամը։

— Ահա մի քանի լոպէից յետոյ նա վայր կ'իջնէ կառքից, եւ ես ստիպուած կը լինիմ, ականջ քեզ թողնել եւ փախչել. իսկ այժմ ներս մտայ, դիտնալով, որ նա տանը չէր։

— Ինչո՞վ է մեղաւոր տիկին Թալլանը, հարցրեց տիկին Սալլաթինը, երբ մեր երկրի ու մեր ազգի սովորութիւնն է, որ երիտասարդ աղջիկները ոչ մի կերպ չը պիտի լինին օտար մարդկանց հետ։

— Զարմանալի հրէշներ են այդ ասիական ազգերը, պատասխանեց Ռուստամը բարկանալով։ Ներանք առանց ամաչելու գործում են ամէն անվայել բան, որ երբեք Աստուած չէր հրամայել, բայց ամաչում են յայտնի կացուցանել սուրբ սէրը, որ Աստուծոյ օրէնքով էր օրհնուած։

— Պարկեշտութիւնը, պատկառանքը եւ ամօթը մարդկային բնութեան ազնիւ եւ անուշահոտ ծաղիկներն են, ասաց տիկին Սալլաթինը։

— Թո՛ղ տուր, թէ Աստուածդ կը սիրես, մօրաքոյր. այդպէս չեն քո գաղափարները, ես գիտեմ. դու կամենում ես բարկացնել ինձ։

Իսկապէս տիկին Սալլաթինը հեգնաբար էր խօսում. այլապէս՝ նա սիրում էր ազատութիւն, այդ խորհրդական բառի մեր դարու հասկացողութեամբ։

Digitized by Google

— Սալբի, դու բարկացա՞ր, որ այդպէս համարձակ խօսեցի. հա՞, հարցրեց Ռուստամը։

— Դու չափազանց յանդուգն ես, Ռուստամ, պատասխանեց Սալբին։

— Ի՞նչ արած... ահա Տեառընդառաջը անցաւ, եւ մի քանի օրից յետոյ կ'անցնի բարեկենդանն էլ...։ Մեծ պասին միշտ լօբի կեր ու երդիկին մոխիկ տուր[1], մինչեւ այդ Աստուծոյ պատիժը վերջանայ... մինչեւ Համբարձումից յետոյ մեր պարոն տէրտէրները ասեն՝ թէ կարելի է պակաս կատարել։

Այդ խօսքերը Ռուստամը արտասանեց այնքան տաքացա՛ծ եւ կրքով, որ տիկին Սալաթինը եւ օրիորդ Սալբին թուլացան ծիծաղից։

— Դու շա՛տ ես շտապում, Ռուստամ, ասաց տ. Սալաթինը։

— Նա գուցէ երկիւղ է կրում, որ ձեռքիցը խլեն, հեգնեց օրիորդ Սալբին։

— Ինձ մի մեղադրէք, իմ նազելիներ, առաջ տարաւ Ռուստամը. սէրը մի դժուար բան է, դա ամենակատաղի կիրքն է մարդկային բնութեան մէջ... մ'թէ, Սալբի, մի եւ նոյնը չէ՞ զգում եւ քո սիրտը... մ'թէ դու էլ գիշեր ու ցերեկ չե՞ս մաշվում այդ մոլեկան ցաւով...։

Օրիորդ Սալբին գլխով "այո՛„-ի նշան արեց, որ չը նշմարեց տ. Սալաթինը։

---

1 Մեր գիւղացիները մեծ պասին երդիկներից մի բարակ թելով կախում են մի գլուխ սոխ, որի շուրջը ցցում են աքաղաղի թեւերից հանած երկու հատ փետուր։ Մեծ պասից ամէն մի շաբաթ անցնելու ժամանակ՝ փետուրներից մէկը դուրս են քաշում, մինչեւ վերջին շաբաթ ուրախութեամբ դուրս են քաշում վերջին փետուրը։ Այսպէս են նրանք պահում շաբաթների համարը։

Digitized by Google

ՄՈԳՊԵՏԸ

Նուիրական կրակները արդէն մարել էին բոլոր կտուրների վրայ, բայց նրանց փոխարէն լոյս էին տալիս բիւրաւոր ճրագներ: Այլ եւս լսելի չէին լինում հրճիգ գործիքների որոտը, շառաչուկների ճարճատիւնը, ո՛չ էլ մարդկանց կատաղի աղաղակները: Բայց գիշերային խորին լռութիւնը կենդանացնում էին երգերի եւ նուագարանների հիանալի ձայներ, որ լսելի էին լինում տանիքների վրայ դրուած խնջոյքներից:

Տիկին Թալլանը իւր խնամիի հետ տակաւին տանիքից ցած չէր իջել. նրանք անհամբեր սպասում էին քահանային, որ գար կրակը օրհնէր, այնուհետեւ ամէն ինչ կը վերջանար:

Յանկարծ յայտնուեց նա:

Ծերունի տէր Մարուքը, նոյն աւուր տօնի իմաստուն Մոգպետը, Յովասաբենց տոհմի ծխատէր քահանան, իրան վիճակուած ժողովրդի հարուստների կրակը առաջ օրհնելով եւ նրանց ցեառընդառաջը շնորհաւորելով՝ հերթը ստորին ժողովրդին հասնելով՝ մտաբերեց Յովասաբենց տունը: Սրա տիրացուն, որ իւր երէց որդին էր, շնջած բուրվառը ձեռքից քարշ գցած — հետեւում էր հօրը: Նէ՛ւ միևնոյն կամենար գինեմոլի մի պատկեր՝ իւր անձուկի եւ այլանդակ կերպարանքով, մի այլ աւելի յարմար օրինակ չէր գտնի, բացի այդ մի գոյգ հայր ու որդուց: Տէրտէրը, գլուխը երե-

Digitized by Google

ըելով, գլորուելով, պատերին եւ ցեխերին երկրպագութիւն տալով, իւր փիլոնը կիսաքարշ՝ գետնից տանելով, վարագայլի դրօշակները աղբերի եւ ցեխերի մէջ աղտոտած, գդակի վրայ մի կոյտ հող ու մոխիր, աչքերը կարմրած, երեսը թռթշնած, որպէս մի կատաղած արջ կամ քաւթառ — վայրենի կերպարանքով, հազիւ հազ բռնելով իւր դողդոջուն իրանը երկու ցեխոտ ոտների վրայ — մօտեցաւ, կանգնեց կրակի մօտ: Նրա որդին աւելի վատթար դրութեան մէջն էր: Ի՞նչ մեղ ունէին նրանք...: Ի՞նչ անեն, որ չը հարբեն. այդ երեկոյ ամենաքիչը հարիւր տուն էին ման եկել՝ կրակ օրհնելու համար, եւ ամէն տեղ մեծարել էին քահանային օրհնեալ ըմպելիքով: Եթէ տէր Մարուքը ամէն մի տան մէջ, չափաւորութիւն պահելով կէս-կէս բաժակ անգամ խմած լինէր — յիսուն բաժակի գումարը ո՛ւմ չէր հարբեցնի: Բայց նա, եթէ կը ներէ մեզ տէրտէրը ճշմարիտն ասելու՝ ամէն տան մէջ յետ չէր ձեռւմ չորս — հինգ բաժակից: Ի՞նչ անէ տէր Մարուքը, ո՛ւմ սիրտը կոտրէ չը խմելով. ժողովուրդ օրհնելը նրա պաշտօնն է. չէ՞ որ օրհնութիւնը անհրաժեշտ պէտք է կատարել գինու բաժակի վրայ...: Բայց եւ այնպէս, տէր Մարուքը իւր քահանայական պարտաւորութիւնը վերջացրել, եւ հայերի աստուածեան ոճով, այդ գրութեան մէջ "իւր էշը ցեխից հանել է„: Բոլոր հարուստների կրակները օրհնած վերջացրած լինելով, ձեռւմ էին մի քանի աղքատ մարդիկ, դրանց համար լոկ մի խաչակնքուածն էլ բաւական էր, փոխանակ այնքան օրհնութիւնների եւ արարողութիւնների, որ կատարվում էին սուրբ կրակի շուրջը:

— Բարի ողջոյն, ասաց քահանան, մաշտոցը թեւքի տակից դուրս հանելով:

Digitized by Google

— Օրհնեա՛ Տէր, ձայն տուին ամէն կողմից, եւ մոտեցան համբուրելու նրա աջը։ Քահանան նրանց գլուխները վրայ ձեռք դնելով ասում էր.

— Աստուած օրհնեսցէ, շատ ապրիք, շատ ապրիք, որդիք։

Տէր Մարուքը սկսեց օրհնել մոխիրը, մի քանի գլխից-պոչից կրճատած աղօթքներով, եւ կամենալով աւելի քաղաքավարութիւն գործադրել, մաշտոցը երկու ձեռքով վեր բարձրացրեց, իսկ տիրացուն հանդիսակաց կողմից բուրվառը դէմ արեց — սկսեցին "անդաստան„ (թափոր) անել, եւ մոխրի շուրջը պտոյտ գալ։ Բայց յանկարծ, չը գիտեմ ինչ պատահեց, տէր Մարուքը, կարծես մի աներեւոյթ հարուածից, գետին գլորուեց, սկսեց թաւալուել մոխիրների մէջ։ Դիւնարքութեան ախտը մինչ այն աստիճան աստկացել էր այդ մարդու մէջ, մինչեւ պատճառել էր մոլարբեցութեան խելացնորութիւն։ Բայց տիկին Թաթլանը, չը հաւատալով, որ Տիրոջ ապաստաւորներին մի այդպիսի ցաւ կարող է հանդիպել, դարձաւ, եւ ասաց տիկին Սկուհուն.

— Գիտե՞ս լինա՛մի, ինչ պատահեց տէրտէրին։

— Ի՞նչ պատահեց, զարհուրելով հարցրեց տիկին Սկուհին, որ հեռուն կանգնած, դողում էր երկիւղից։

— Հրեշտակ տեսաւ, իմ քոյր, պատասխանեց տիկին Թաթլանը։

— Հապա, հրեշտակ տեսաւ, միւս կողմից փաստաբանեց տիրացուն — իմ հայրը միշտ խօսում է ոգիների հետ։

Ո՛չ այս եւ ո՛չ այն — տէր Մարուքը նոյն րոպէին սովորական կերպով հարբած էր։ Թէպէտ տիկին Թաթլանը, նրա չորս կողմով մի բոլորակ խաչ էր գծում կտուրի

վրայ, որ ոգիները թող տային նրան եւ քահանան զգաստանար, բայց գուցէ ցրտի ներգործութեամբ, մի քանի րոպէից յետոյ նա ուշի եկաւ, վեր կացաւ, եւ մտաբերելով, որ կրակի օրհնութիւնը թերի էր մնացել, բռնեց մաշտոցը, եւ խաչանիշ անելով կրակի վրայ, ասաց.

— Այս գրքի միջի բոլոր աղօթքները եւ օրհնութիւնները քեզ վրայ լինի, ով սուրբ կրակ:

— Վերջացաւ, գնաց..., միւս կողմից կրկնեց տիրացուն — այլ եւս ինչ պէտք ծանր ու բարակ կարդալ ամէն մի աղօթք, երբ մի համառօտ խօսքով վերջանում է ամէն ինչ:

Թէպէտ այդ միջոցին տէր Մարուքի երեւակայութիւնը պղտորուած, եւ լեզուն ծուլացել էր աղօթքների համար, բայց այնուամենայնիւ նա չը կարողացաւ մոռանալ իւր սուրբ պարտականութիւնը — աջահաջ ընկատմամբ: Երկու ձեռքով մաշտոցը պինդ բռնեց իւր առջեւ. ամենից առաջ տիկին Թարլանը մօտ գնաց, համբուրեց գիրքը, ձգելով նրա կազմի վրայ գամած բոլորակ պղնձեայ խաչի վրայ երկու արծաթի դրամ, այնուհետեւ միւսները, նոյնպէս համբուրելով, տալիս էին արծաթ, բայց ոչ այն չափով, որքան տիկին Թարլանը բաշխեց, թէպէտ խղճալի տէր Մարուքը անդադար յորդորելով ասում էր.

Օրհնածները, որքան կարող էք շատ տուէք. քանի շատ տաք, այնքան առաւել վարձք կ'առնուք, այնքան առաւել հոգու փրկութիւն կը լինի ձեզ:

Մաշտոցի վրայ դիզուած արծաթները գրպանը լեցնելով, կարծես թէ տէր Մարուքը գնալով աւելի եւ աւելի էր զգաստանում. մանաւանդ, երբ նա մի կողմ քաշուելով վեր ածեց այն բոլորը, որ մինչ այդ ամբարուել եւ ծանրացել էր նրա ատամների մէջ... Օրիորդ

Digitized by Google

Նազանին ջուր աճեց, տէր Մարուքը լուաց երեսը եւ ապականուած մօրուքը։ Այնուհետեւ նա բաւական սթափուեց, խելքի եկաւ, եւ կրկին կրակի մօտ գալով, վեր առաւ մի բուռն մոխիր, ցրուեց տանիքի չորս կողմը, եւ, ճնացածը պատուիրեց տիկին Թարլանին — ամիսփել մի պարկի մէջ, ասելով.

— Յետևացի տիկին, պինդ պահիր քո ականջների մէջ քահանայի խրատները, որ կամենում է յայտնել քեզ, թէ ինչ խորհրդով հրամայել են մեզ մեր արժանայիշատակ պապերը մինչեւ միւս Յետառնդառաջը սուրբ մոխիրը խնամքով պահելու։ Այդ հրաշալի մոխիրը, իւր աքանչելի զօրութեամբ օգտակար է լինում տնտեսական ամէն բաների մէջ։ Օրինակ, եթէ դրանից ցանելու լինիս տաւարների եւ ոչխարների վրայ, նրանց այլ եւս ցաւ չի պատահի, միշտ առողջ եւ պարարտ կը լինին, առատ կաթ եւ իւղ կը տան։ Եթէ դրանից ցրուելու լինիս այգիի ծառերի եւ որթերի տակ՝ կ'ազատուին թրթուրից, ճեպասակար ճճիներից, կարկուտից եւ առատ արդիւնք են բաշխում։ Այդ փոշուց ցանում են ալտերի, առուոյտների, հնձելու խոտի մէջ, որ մարախը չուտի, ժանգը չը չորացնէ, եւ ազատուին խորշակից եւ այլ պատուհասից։ Դրանից ցրվում են մի գոյգ ամուսնակիցների անկողնի մէջ, երբ թշնամի վհուկների դիւթելով նրանց մերձաւորութիւնը արգելուած է, երբ նրանք ամուլ են եւ կամ նրանց զաւակները ծնուելուց յետոյ շատ չեն ապրում։ Այդ բոլորից զարմանալի զօրութեամբ փրկում է, ազատում է . . . ։ Մի այլ ժամանակ ես կը պատմեմ ձեղ, թէ այլ եւս քանի քանի զօրութիւններ ունի այդ սուրբ մոխիրը։

Քահանայի խօսքերը արդար իւղի նման հալվում էին տիկին Թարլանի ականջներում. նա իւր մտքի մէջ զար-

Digitized by Google

մանում էր նրա անչափ իմաստութեան եւ այնքան բաներ գիտնալու վրայ։ Տէր Մարուքի գործած այն անքաղաքավարութիւնը, նրա մոլութիւնների մասին ոչ մի տհաճութիւն չը յարոյց տիկին Թարլանի սրտի մէջ։ Բայց տիկին Թարլանը շատ ուրախ էր, որ տիկին Սալլաթինը եւ օրիորդ Սալբին այնտեղ չը գտնուեցան եւ ականատես չեղան քահանայի անկարգութեանը, որ իրանց համար կատակի եւ ծիծաղի առարկայ շինէին։

Գիշերը տարաժամեցաւ. բոլորը միասին կտուրից ցած իջան։

Մի ընդարձակ սենեակ, իւղային ճրագներով լուսաւորուած՝ համեստ կերպով զարդարած էր, մի ոչ հարուստ, այլ միջասահման գիւղացու կարողութիւնը ներածին չափ։

Սփռոցի վրայ, սենեակի միջավայրում, դրուած էին զանազան ուտելիքներ, եւ սրուակներով գինի։ Տէր Մարուքը նստում է իւր համար պատրաստուած փափուկ օթոցի վրայ, սեղանի պատուաւոր գլխում։ Նրա տիրացու որդին, հօր հրամանով, նստում է հեռու, ներքեւ, սեղանի միւս ծայրին։ Տիկին Թարլանը, որպէս չափահաս կին, համարձակվում է նստել քահանայի մօտ, թէպէտ ամաչում է ուտել, բայց տէրտէրին գինի է տալիս "անուշխմէք„ մատուցանելով սեղանի ազնիւ պատառներից։ Իսկ տիկին Սկուհին, հեռուն, երեսը ծածկած միայնակ նստած է մի անկիւնում։ Տիկին Թարլանը լեցնելով մի մեծ գաւաթ կարմիր գինի մատուցանում է քահանային, ասելով.

— Համեցէք, Տէր հայր, այդ գինին շատ անուշ է, համեցէք մեր այգիի խաղողներից է։

— Թող օրհնուի դրա այգին, միշտ թարմ եւ կանաչ ճնան ողկուզենիքը, ասաց տէր Մարուքը, ընդունելով գինին, եւ իւր ուրախալի հայեացքը ձգելով գաւաթի կարմիր

Digitized by Google

մակերեւոյթի վրայ, առաջ տարաւ. — Թող օրհնեալ լինի մեծ նահապետի յիշատակը, նա այնքան բարեբա-նուաճ չէ մարդկութեան երկրորդ նախահայր լինելու հա-մար, որքան աւելի շնորհակալ պէտք է լինել նրան, որ մարդկանց ուսոյց գինի շինել. այս երկնային աղնիւ ըմպե-լիից աւել մեր Փրկիչը մի այլ արժանաւոր բան չը գտաւ կանայում իւր առաջին հրաշքը ցոյց տալու համար. այլ եւ հաստատեց իւր սուրբ արիւնի փոխարէն... Այդ դատողութիւնից յետոյ տէր Մարուքը իւր ձեռքի գաւաթը դեռ չը խմած՝ մի երկար, անհամ եւ տաղտկալի օրհնու-թիւն սկսեց.

— Հաւատարական կենդանութիւն... Թալլան, քոյ-րիկ, շատ ապրիս, քեզ արքայութիւն. Տէր ամենակալը քեզ անթառամ պսակին, լուսեղէն պատմուճանին, վերին Երուսաղէմի երանութեանց — արժանացնէ. Տէր Քիսուս այս օջախը միշտ շէն ու հաստատ պահեսցէ. այն մի հա-տիկ սիրուն աղջիկդ ծաղկեցնէ եւ իւր սրտի բարի խոր-հրդի կատարումն տայ: Քիսուս միածին, տիկին Թալլանի հանգուցեալ ամուսին ողորմած Ռւստա-Պետրոսի հոգին լուսաւորեսցէ: Սկուհի, դէպ նրան դառնալով ասաց — շատ ապրիս, Տէր Աստուած այդ ձեր ա-թե-պա-ղին — այսինքն խնամութեան — փոշիմանութիւն (ապաշաւանք) չը տայ. բարով Ռուստամի կանաչ-կարմիրը (նարօտը) կա-պես. կարմիր հարսդ տուն բերես, որդիքով, թոռներով ու ճառներով ուրախանաս: Տէր, դու երկրիս՝ խաղաղու-թիւն, թագաւորաց՝ հաշտութիւն եւ մեր խեղճ հայ աշ-գին՝ սէր ու միաբանութիւն, եւ այս օրհնեալ ըմպելիքին՝ յաջող ճանապարհորդութիւն տուր: Նազանի, Աստուած քեզ էլ մի բախտ տայ, բարով սիրուն փեսայ ու-նենաս:

Digitized by Google

Տէր Մարուքը, որպէս օրէնքն էր, մաքրազարդեց գաւաթը։

— Անուշ, անուշ, ձայն տուեց միւս կողմից տիկին Թարլանը, նրան ուտելու մի բան մատուցանելով. նա էլ ընդունելով այդ եւ դէպ բերանը տանելով, աւելացրեց.

— Աստուծոյ բարին թող չը պակսի ձեռքիցդ, շէն ու հաստատ մնաս։

Այսպէս, գինու գաւաթները սկսեցին դատարկուել. տիրացուն եւս, իբր թէ հօրիցը ամաչելով, երեսը դէպ մի կողմ շուռ տալով, գաղտնի մի քանի բաժակ կոնծել էր։ Երբ քահանայի գլուխը մի փոքր տաքացել էր, տիկին Թարլանը նրան հարցրեց.

— Տէր հայր, ծառայ եմ սուրբ աջիդ, ասացէք խնդրեմ, ի՞նչ գուշակեց այս տարի "սուրբ կրակը"։

— Որքան ասես, շատ բարի բաներ, պատասխանեց խմաստնաբար տէր Մարուքը։ — Մի՛թէ չը նշմարեցիք ժամատան բակում, թէ ինչպէս բոցերը, աբեղեան ողջակիզի նման՝ ուղղակի դէպ երկինքն էին ձգվում, եւ որքան փառահեղութեամբ պայծառ լուսինը դուրս եկաւ սարերի յետեւից Տեառընդառաջն տօնը օրհնելու եւ սուրբ հրավառութեանը սպասաւորելու, իսկ արեւը մտնելու ժամանակ, որքան հիանալի տեսարան ձեւացաւ կապոյտ երկնակամարի վրայ. կարծես, բոլոր ամպերը ջուտ ոսկի լինէին քրքումի գունով ներկուած։ Ահա այդ բոլորը՝ բարեգուշակ նշաններ էին։

Այս խօսքերը, որ տէր Մարուքը արտասանեց մի փոքր բանաստեղծական ոճով, հալիւրաւոր անգամ, նոյն ոգեւորութեամբ պատմել էր հարցասէր կանանց։

— Այդ երեւցած նշանների մասին, տէր հայր, դուք "գրքին,, նայեցիք, հարցրեց տիկին Թարլանը։

Digitized by Google

— Ինչպէս չէ, այս տարի կլիման լինելու է առողջարար, ջուրը առատ, ցանքերը եւ այգիները պտղաւէտ, աժանութիւն երկրի, ու թագաւորաց խաղաղութիւն, պատասխանեց տէր Մարուքը։

— Կովերի եւ հաւերի մասին մի բան գուշակում է սուրբ կրակը։

— Հա, ինչպէս չէ ... աւելի գլխով, քան լեզուով, պատասխանում է գուշակողը. կովերը այս տարի առատ կաթ են տալու, որով, այս տարի ունենալու էք շատ եղ եւ պանիր։ Բայց չը մոռանաք սուրբ մոխրից մի փոքր ցրուել գոմի մէջ ... ։ Հաւերդ էլ ալդիւնալի կը լինին ձուերով եւ ճուտերով. բայց չը մոռանաք տէր Մարուքը վարձատրելու մի քանի տասնեակ նոր ձուերով, որով ես առիթ կ'ունենայի "աղօթել" ճուտերը, եւ կապել քօղքօրայի (ցինի) բերանը, որ չը համարձակուի յափշտակել փոքրիկ վառեակները։

Տիկին Թարլանը ուրախացած այդ օգտաւէտ նախագուշակութիւններով, համբուրեց քահանայի աջը։

— Հա այդպէս ... մեռնիմ բերնիդ, ասաց նա — ձուն մի ոչինչ բան է, իմ գլուխը, իմ տունը տեղը, բոլորը ձեզ փէշքաշ (ընծայ) է. բաւական է, որ ձեր սուրբ աղօթքը մեզ պահապան լինի եւ մեզ օրհնող լինէք, մենք ինչպէս էլ լինի կ'ապրինք եւ Աստղծողին փառք կը տանք։

— Հանգիստ եմ անում Թարլան բաջի, խօսեց տէր-տէրը ծիծաղելով. ես ձեր ողջութիւնը կը ցանկանամ, որ միշտ շէն ու պայծառ լինիք։ Ի հարկէ դուք որ կայք՝ մեր սիւրուն (հօտն) էք, իսկ մենք ձեր չոպանը, պէտք է ձեր կաթից ուտենք, ձեր բուրդից հագնենք, որ ձեզ էլ գայլերի բերանից ազատենք, եւ խոտաւէտ արօտներում արածացնենք։

Digitized by Google

Տիրացուն, որ այդ ժամանակ ոտքի վրայ կանգնած, մեքենաբար շարժում էր բուրվառը, եւ գլուխը դմբացնելով, խլինքը վեր քաշելով, ծոծրակը քորելով, բերանը մինչեւ ականջները բացած յօրանջելով, մտաւոր յափշտակութեան մէջ խորասուզուած, աւելի գինու ազդեցութեամբ քան թէ մի այլ խորհրդով, այսպէս խօսեց.

— Մեր սուրբ Էջմիածինը, մեր սուրբ Հռիփսիմէ... մեր սուրբ Մեռոնը... մեր... մեր... մեր... այլ եւս նրա պղտորուած երեւակայութիւնը չը կարողացաւ ժողովել խօսքերի յետքը։

Բայց տիկին Թարլանը կարդալով նրա միտքը, աւելացրեց.

— Ի հարկէ, առանց նրանց հայ-քրիստոնեայի վիճակը վատ կը լինէր։ Մենք նրանցմով ենք ապրում, եւ նրանք են, որ միշտ բարեխօս են Աստուծոյ աթոռի մօտ — քրիստոնեայ ազգի համար...։

Տէր Մարուքի ստամոքսը արդէն լցուել՝ նախկին աստիճանին էր հասել։ Նա վեր կացաւ, եւ գլորուելով կամենում էր հեռանալ, բայց մի նոր միտք արգելեց նրան։

— Գիտէք, առաւօտեան պատարագ պիտի լինի եւ ես պատարագիչ եմ, ասաց նա։

Տիկին Թարլանը հասկացաւ, թէ ինչ էր կամենում քահանան ասել. մօտ գնաց, թաղուն դրեց քահանայի ափի մէջ մի հատ արծաթի դրամ, որպէս "յիշոց", որ նա իւր մեղքերի համար բարեխօս լինէր Տիրոջ սեղանի վրայ։

Մոգպետը հեռացաւ։

Օրիորդ Սալբիի առանձնասենեակում, Սալբին, Ռուստամը եւ տիկին Սալամբինը — տաքացած խօսում էին, երբ ներս մտաւ օրիորդ Նազանին եւ յայտնեց թէ տիկին

Սալաթինին կանչում են։ Տիկին Աշխարունին, այսպէս էր նրա աղգանունը, վերկացաւ, որ գնայ։

— Սիրելի մօրաքոյր, ասաց Ռուստամը — խօսիր օրիորդ Սալբիի մօր հետ, որ քանի պատը չէ եկել՝ բարեկենդանին հարսանիքը վերջացնեն։

— Ես այս գիշեր յատկապէս այդ նպատակով մնալու եմ տիկին Թալլանի մօտ — գուցէ համոզեմ նրան, որ աւել չուշացնէ, պատասխանեց տիկին Աշխարունին։

— Ինչո՞ւ էք այդպէս շուտ գնում, հարցրեց օրիորդ Սալբին։

— Ձեր երկուսի մէջ անպատշաճ է լինել ֆահրապոփ չալին. մնացէք Ռուստամի հետ միայնակ, գոնեա մի քանի րոպէ սիրախօսելու, պատասխանեց տիկին Սալաթինը։

Բայց Ծովասաբենց օրիորդը այն թեթեւ, անպարկեշտ աղջիկներից չէր, որ իւր նշանած տղամարդի հետ՝ միայնակութեան յաջող րոպէները անցնէր հեշտախտային զուարճութեամբ։ Նա իւր ծանրաբարոյութեան հետ ուներ եւ այն սառնասրտութիւնը, որ ակամայ ամաչեցնելու էր Ռուստամին մի այդպիսի լկտի ցանկասիրութիւն պահանջելու։ Օրիորդ Սալբին իւր սովորական համեստութեամբ, գլուխը քարշ գցած, առանց վեր նայելու, խօսեց.

— Դու չափազանց շտապում ես հարսանիքի համար, այնպէս չէ՞, Ռուստամ։

— Ի՞նչ պէտք է անել. մեռանք — մաշուեցանք ծակամուտից գողունի միմեանց մօտ գալով գնալով, այդ եւս՝ հարիւրից մի անգամ միայն հազիւ է յաջողվում։ Մինչեւ ե՞րբ պէտք է կրենք այդ անտանելի ցաւերը, ասաց Ռուստամը։

— Ու դու կարծում ես, թէ ես քո հօր տան մէջ լինելով՝ դու առիթ կ'ունենայիր ինձ սիրելու։

Digitized by Google

— Ինչո՞ւ չէ։

— Երեւակայիր, Ռուստամ, ծանրութեամբ առաջ տարաւ օրիորդը — ոչքան էլ իւր արիւնախում եւ եղեռնաւոր բռնակալութեամբ անտանելի լինի բարբարոսական բռնակալութիւնը — հազարապատիկ դժնդակ եւ վատթար է այն բռնութիւնը, որ ասիական կեանքի մէջ ոտնակոխ է արել կանանց սեռի արդար իրաւունքը, ճնշել ու կաշկանդել է նրանց ազատութիւնը եւ թունաւորել է նրանց հիւանդոտ դրութիւնը։ Մտածիր, ինչ վայելչութիւն, ինչ քաղցրութիւն ունին այստեղ երկու սիրողները սիրոյ վայելքի մէջ՝ երբ նրանք չեն կարող միմեանց հանդիպել արձակ եւ համարձակ, երբ նրանց յայտնուած սէրը, որպէս մի անուռոր միջադէպ՝ հասարակաց բամբասանքի, չարախօսութեան եւ զրուանքի նիւթ է դառնում։

— Թէպէտ ամէն տեսակէտերով ազատութիւնը գովելի է, թէպէտ բռնակալութեան մէջ ճնշվում, խեղդվում եւ ոչնչանում են մարդկութեան բարի ձգտումները, բայց, Սալքի, մի հին բանաստեղծական ոգով մտածելով, ինձ թվում է, որ սէրը աւելի է քաղցրանում եւ ախորժելի դառնում — երբ մարդ շատ դժուարութիւններով է որսում նրան։ Դա մի բնական օրէնք է։ Մեղ համար, կախարդիչ եւ առասպելաբանական վայելչութիւն ունին այն բաները, որ միշտ մեր աչքից ծածկուած եւ հազուագիւտ են, եւ որ ձեռք ենք բերվում շատ չարչարանքների հնարներով։ Բայց ամենօրեայ կեանքի մէջ սովորաբար հանդիպած բաները, որ միշտ տեսնում, լսում եւ զգում ենք, ոչքան էլ ախորժելի եւ հաճոյական լինին նրանք՝ կորցնում են իրանց իսկական համը, հոտը եւ քաղցրագոյն ճաշակը, որովհետեւ մեր զգայարանները կշտանում են նրանցից։

Digitized by Google

— Դէհ, սիրելիս, այդ երկար խօսքերով՝ կամենում ես բացատրել հայերի այն առածի իմաստը, թէ "երբ շատ շաքար ուտես՝ սոխի-սխտորի համ կը տայ,,, աւարտեց օրիորդ Սալքին ժպտելով: — Բայց սխալվում ես, Ռուստամ. սէրը իւր երկնային, ազնիւ, քնքոյշ եւ լուսեղէն կերպարանքներով՝ մարդկային հոգու սուրբ եւ մաքուր զգացումներից — ամենագեղեցիկը, ամենաքաղցրը եւ աստուածեղէնն է: Մարդ նրանից երբեք չէ կշտանում եւ չէ տաղտկանում: Նա այն առասպելաբանական անթառամ ծաղիկն է, որ մնում է միշտ թարմ, դեռատիթիթ եւ անուշահոտ. եւ ոլքան շօշափում ես նրան՝ այնքան արծածվում, բորբոքվում եւ անշիջանելիօրէն բոցավառվում է . . . :

— Ստոյգ է քո ասածը, պատասխանեց Ռուստամը առժամանակեայ մտածումից յետոյ. — բայց եւ այնպէս, ես սիրում եմ արեւելքի կանանց փակուած դրութիւնը, հարեմխանաների մէջ նրանց արգիլուած կեցութիւնը, որովհետեւ այսպիսով աւելի է պահպանվում նրանց սեռի պարկեշտութիւնը եւ նրանց անապականելի ողջախոհութիւնը:

Մի հեգնական ծիծաղ շարժեց օրիորդի վարդագոյն շրթունքը, իւր սիրածի դեռ եւս տղայական հայեացքի համար, եւ նա ասաց.

— Պահպանել մարդկութիւնը իւր օրինաւոր դրութեան մէջ ինկվիզիտորի իշխանութեամբ, պահպանել կանանց սեռի պարկեշտութիւնը եւ, որպէս ասացիր — նրանց անապականելի ողջախոհութիւնը՝ ընդդիմադիր արգելքների պայմաններով՝ հարեմխանայի պատերի մէջ — չէ՞ որ այդ, դարձեալ բռնութիւն է: Պէտք է մարդկութեանը տալ այն ինքնակամ հնարը, այն մաքուր համոզացումը, սրտի եւ հոգու այն սուրբ ձգտումները՝

Digitized by Google

որ նրանք ինքնաբերաբար, որպէս մի ներքին, աստուածային ձայնի դրդմամբ, ինքնուրոյն ճանաչէին իրանց արդար պարտքը, իրանց վայելուչ պատշաճը եւ անմեղադրելի բարին: Այդ կը լինի ոչ այլ եղանակով՝ քան, երբ մարդկութիւնը ստանայ կանոնաւոր ուսում, լուսաւոր դարի խելացի գաղափարներով եւ աստուածեղէն վարդապետութեան պայմաններով Աւետարանի մի առաքինական կրթութիւն: Այն ժամանակ ամբողջ մարդկութիւնը այնչափ կատարելագործուած կը լինի, որ ուշ ոք չէր ասի իւր ընկերին, թէ դու մեղք գործեցիր, այլ ամէն անհատ ճանաչելու էր իւր սրբազան պարտաւորութիւնը:

Ռուստամը նկատեց, որ իւր նշանաճի դատողութիւնները զուտ ճշմարտութիւն են:

— Դու այդպէս խելացի ես մտածում, Սալբի, իսկ քո մոլեռանդ մայրը, հարցրեց նա:

— Մենք վաղուց արդէն կարդացել ենք խաւար հնութեան "հրաժարիմքը", մենք պէտք է համակերպինք նոր ժամանակի պահանջների հետ, որպէս մեր կեանքի գոյութեան անհրաժեշտ կարիք: Հները մեզ պէտք չեն. ամէն հնութիւն դիմում է դէպ ոչնչացումը. բնական օրէնք է այդ:

Այդ րոպէին ներս մտաւ աղախինը՝ օրիորդ Նազանին, եւ յայտնեց թէ մոգպետը հեռացել էր, իսկ տիկին Թալալանը սպասում էր օրիորդ Սալբիին՝ հիւրերին սպասաւորելու համար:

— Նազանի, դու հակիր բակում, որ ինձ չը տեսնեն, ես կամենում եմ գնալ, ասաց Ռուստամը:

Նազանին դուրս գնաց եւ յայտնեց, թէ երեք անգամ հազալը նշան էր բակում մարդ չը լինելուն, եւ Ռուստամը թող անմիջապէս դուրս գայ, երբ լսէ այդ նպատակաւոր հազը:

Digitized by Google

— Ծ՞րը կարող ենք տեսնուել յաջորդ անգամ, հարցրեց Ռուստամը բռնելով օրիորդի ձեռքը:

— Մի օրից յետոյ ես սկսելու եմ իմ դասերը. դու կը տեսնես ինձ քո մօրաքրոջ՝ իմ վարժուհու — տիկին Սալլաթինի տանը:

— Շատ լաւ, կրկնեց ախտաբորբոք պատանին, եւ գրկելով օրիորդի բարակ մէջքը, պինդ սեղմեց իւր կրծքին, միաժամանակ նրանց բոցավառուած շրթունքները սկսեցին շփուել, եւ անխօս ու անբարբառ՝ էլէկտրաբար յայտնել միմեանց նոյն րոպէին՝ իրանց սրտի անբացատրելի համակրութիւնը . . . : Այդ կախարդական գրկախառնութիւնը մարդկային խօսքերով արտասանելու բազմիմաստ եւ խորհրդական բառերը՝ մինչեւ այսօր չեն գտել գրիչները:

Արդէն երեք անգամ դրսում հնչուել էր օրիորդ Նազանիի նշանաւոր հազալու ձայնը. բայց մեր հերոսը եւ հերոսուհին, նոյն րոպէին խորին հոգեզմայլութեամբ յափշտակուած՝ չէին լսել: Տիկին Թարլանը, երկար ժամանակ իւր դստերը սպասելով, համբերութիւնը կտրած՝ անձամբ է գալիս նրան կանչելու: Երբ մտաւ օրիորդ Սալբիի սենեակը, ու նրանց այդ բանաստեղծական դրութեան մէջ գտաւ՝ անտանելի տհաճութեամբ աչքերը խփեց եւ յետ դարձաւ, իւր մտքի մէջ անիծելով, ըստ նրա հասկացողութեան — իւր դստեր լրբութիւնն ու անամօթութիւնը: Դառնալով իւր խնամիների մօտ, նա ծածկեց իւր վրդովմունքը, մի յարմար միջոցի թողնելով՝ իւր դստեր գործած անբարոյականութիւնը կշտամբելն ու յանդիմանելը:

Digitized by Google

ԺԳ.

ՀԱԿԱՌԱԿ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Աստուածոյ լոյսը բացուեց։

Տիկին Թարլանը իւր իննամի հիւրերի հետ զարթեցան քնից։ Օրիորդ Նազանին ջուր ածեց, նրանք լուացուեցան։ Տիկին Թարլանը եւ տիկին Սկուհին մի կողմից իրանց երեսները չորացնելով՝ մի կողմից իրանց գլխի շորերը ուղղելով, այդ անհանգիստ դրութեան մէջ, միւս կողմից էլ կարդում էին իրանց առաւօտեան աղօթքները "Հայր մեր„ եւ "Տէր ողորմեա՛„ ասելով, իսկ տիկին Սալաթինը սենեակի մի անկիւնը առանձնացած՝ չոքած՝ լուռ եւ անլսելի ձայնով էր աղօթում։

Գիշերուայ հրացանների որոտմունքը, զուռնայի ճվվոցը, գիւղացիների խառնաձայն աղաղակները դեռ անախորժ արձագանգ էին տալիս նրանց լսելիքների մէջ։

Աղօթքից յետոյ, բոլորը նստեցին գորգերի վրայ փռած սփռոցի շուրջը։ Օրիորդ Նազանին թէյ էր պատրաստում։ Նախաճաշիկի համար դրուած էր կաթ, սեր, կարագ իւղով թխած հայեր եւ այլ ուտելիքներ։ Տիկին Թարլանը թէյը մեղրով էր խմում, ոչ թէ տնտեսական խնայողութեան համար, այլ մեղք էր համարում իւր հոգուն շաքար գործածելը՝ կարծելով, թէ նրա մէջ պիղծ անասունների ոսկրանիւթ էր գտնվում։

Digitized by Google

Տիկին Սալամբինը պարմացաւ, թէ ինչու՞ օրիորդ Սալբին չը յայտնուեց թէյի. քնից զարթնելով այդ առաւօտ չէր տեսել նրան:

— Խնամի՛, հրամայեցէք կանչեն օրիորդ Սալբինին, որ մեզ հետ միասին թէյ խմէ, ասաց նա տ. Թարլանին:

— Դուք վաղուց իմ բնաւորութեան հետ ծանօթ լինելով, գիտէք, որ ես ատելով ատում եմ ամէն տեսակի կանացի համարձակութիւն. մանուկ աղջիկների ամօթն եւ նրանց համեստ եւ հեզ բարք ու վարքը՝ սուրբ են ինձ համար. ես չեմ կարող թոյլ տալ, որ Սալբին անպատկառ կերպով նստէ իրանից հասակաւոր կանանց հետ եւ բաժակ բաժակի չըրխկացնէ:

Ամաչելու կամ պատշաճի համար չէր, որ օրիորդ Սալբին չերեւեց իւր լինելի սկեսուրի եւ բարեկամ տիկին Սալամբինի մօտ. այդ ի բնէ յանդուգն, կամակոր եւ ազատամիտ աղջիկը երբեք չէր խոնարհվում իւր երկրի անպիտան եւ անխորհուրդ սովորութիւններին: Խնձլացի օրիորդի չերեւալու պատճառը՝ իւր մօրից ամենաաստիկ կերպով վշտացած լինել էր, նրա համար, որ տիկին Թարլանը, հիւրերը քնելուց յետոյ, գիշերապահին ծածուկ մանելով օրիորդ Սալբիի ննջարանը, անպատիւ կերպով կշտամբել էր նրա անպարկեշտութիւնը, նրան միայնակ Ռուստամի հետ տեսնելու ժամանակ, եւ վարհուրելի խօսքերով անիծել էր նրան:

— Բայց Եւրոպայի նման լուսաւոր աշխարհի ուսեալ եւ կրթուած ժողովուրդը մի՛թէ անիմո՞ք է այդ սովորութիւնները չը պաշտելու համար, հարցրեց տիկին Սալամբինը:

— Ը՛հ, նրանց գլուխն ուտէ իրանց կրթութիւնը..., երեսը թթուեցնելով պատասխանեց տիկին Թարլանը. —

Digitized by Google

բայց դուք գիտէք այն աշխարհի կանանց բարոյականութիւնը։

— Այո՛..., Եւրոպայի կանայք իրանց լուսաւորութեամբ եւ մաքուր բարոյականութեամբ — պակաս չեն մարդկանցից։

— Լաւ եւս ասել՝ իրանց լրբութեամբ եւ իրանց փտած ու ապականուած բարոյականութեամբ, նրա խօսքը կտրեց տիկին Թարլանը։

— Ողորմութիւն արէք, խնամի, այդպիսի արատաներով նրանց բանբասելը պատշաճ չէ. նրանք շատ խելօք եւ ուսեալ են, կրկնեց տ. Սալաթինը։

— Ի՞նչ օգուտ... սատանաներն եւս շատ խելօք են, բայց այլվում են դժոխքում։

Սատանայի անունը տալուն պէս, տիկին Թարլանը երկիւղած սրտով խաչակնքեց իւր երեսը, եւ աղօթքի նման մի քանի խօսք շշնջացին նրա շրթունքները։

— Այդ համեմատութիւնը բոլորովին անտեղի եւ սխալ է, խօսեց տ. Սալաթինը։

— Ներեւի դուք շատ բան չէք լսել Եւրոպայի կանանց մասին, խնամի Սկուհի, դարձաւ դէպ նա տիկին Թարլանը, իբր թէ չը լսելով տ. Սալաթինի խօսքերը։ — Ախ. որքան անամօթ եւ համարձակ են նրանք... եւ ինչպէս աչք, բերան, երես, գլուխ, բազուկներ, կուրծքն ու ուսերը բոլորովին մերկ ու բաց՝ ման են գալիս փողոցների մէջ։ Շռայլաբար զուգուած, զարդարուած, հագար ու մի պչրանքով պճնած, գրեթէ որսում են իրանց սիրելի եղած տղամարդիկը, նրանց հեշտախտութեանց եւ լկտի ցանկութիւններին՝ — իրանց անձը վաճառելու...։ Այդ է պատճառը, որ նրանք առանց զանազանութեան, կեղծաւոր հաճոյամոլութեամբ՝ խօսում, ծիծաղում են

Digitized by Google

ամէն մի անծանօթ մարդու հետ, որ նրանց ուշ բարեկամն է եւ ուշ էլ ազգակիցը, որպէս զի թովէն, կախարդեն նրանց սէրը, եւ ձգեն մեղքի ու դժոխքի անդունդի մէջ...:

— Ո՛ւֆ, հոգը նրանց գլխին, ասաց տիկին Սկուհին, մեր ամուսին չունե՞ն այդտեղի կանայք:

— Ի՛նչ ամուսին, առաջ տարաւ տիկին Թարլանը, — Դուք կարծում էք ամուսին այրերը այնտեղ այնպէս են, որպէս մեզանո՞ւմ... բոլորովին ոչ...: Մի չար խօսք, որին նրանք ապտապո-ՐԻ-ն անուն են տուել, պատճառ է դարձել սանձարձակ, իրանց կամքին ձգելու կանայք, որ նրանց սիրելի եղածների հետ աւելի տափուին եւ լքրա-նան: Մարդիկ եւրոպական կեանքի մէջ մի այլ նշանա-կութիւն չունին, քան թէ իրանց կանանց կամքի գերիներ եւ ստրուկ ծառաներ լինելը: Դուք յաճախ կը տեսնէք, նրանք փողոցներում եւ վաճառանոցներում միասին գալիս իրանց տղամարդկանց հետ, եւ որպէս հմայել (բեռնա-կիր), նրանց կրել են տալիս այն բոլոր բանները, որ գնել են իրանց մարմինը այլոց աւելի հաճելի դարձնելու հա-մար...:

— Թէ ասա, մի խօսքով, նրանց երեսի մեռոնը գնացել է, պատասխանեց տիկին Սկուհին, չը հաւատա-լով իւր ականջներին: Վայ, սէր հագնեն նրանք. մինէ նրանց սրտերում ամօթ չը կայ...: Մինէ նրանք Աստուած չունին. Թող այսուհետեւ մեր տղամարդիկ լա՛ւ ճանաչեն մեր արժանաւորութիւնները եւ մեր պատիւը. — մի ընդդիմութիւն, մի համարձակ կամ անպատշաճ խօսք բաւական է, որ փայտն առնեն եւ մեր խղճալի գլուխը ծեծեն...: Բայց ասացէք, խնամի Թարլան, ձեր խօսքերի գեօրայ (համեմատ), նրանք իրանց տնտեսական գործերը եւս չե՞ն կատարում:

Digitized by Google

— Ի՛նչ ես խօսում, Տէրը ողորմի քո հօրը. — նրանք իրանց երեխայքն անգամ չեն սնուցանում. բաւական է որ ծնեցին՝ — իսկոյն պահ են տալիս դայեակներին։ Իսկ թէ մօր կաթով չը մեծացած երեխան ինչ կը դառնայ՝ այդ գիտէ ամէն մի խելացի մարդ։

— Ապա ինչ են գործում, աւելի զարմացած հարցրեց տիկին Սկուհին։

— Ո՛չինչ չեն գործում, բացի նրանից, որ միշտ զբաղուած են իրանց զարդարանքով, պչրանքով, կեր ու խումով, որ իրանց անձերը մոլի ախտերի մի գործարան շինեն։

Տիկին Սալամֆինը, այդ առողջամիտ կինը, որ ուշադրութեամբ լսում էր իւր պարզամիտ քրոջ եւ մոլեռանդ տիկին Թարլանի զրոյցները, թէպէտ վաղուց արդէն կորցրել էր իւր համբերութիւնը, բայց որովհետեւ կարեւոր խօսելիք ունէր Ռուստամի հարանիքի մասին՝ չուզեց կոտրել տիկին Թարլանի սիրտը եւ բարկացնել նրան, մանաւանդ, որ կամենում էր մի հնարքով ձեռք բերել նրա համաձայնութիւնը. եւ որպէս զի իւր առաջարկութիւնը ընդունելութիւն գտնէ նրա մօտ, ծանրութեամբ եւ հանդարտ եղանակով խօսեց. —

— Աւելի լաւ չէր լինի, սիրելիք, կարճել այդ զրոյցների ընթացքը եւ հաւատալ թէ բանբասանքը մեղք է, եւ թէ մենք, ասիացի կանայքս, քանի՛ քանի՛ հազարաւոր մղոններ յետ ենք մնացել նրանցից։ Նրանք միշտ առա՛ջ, դէպ առաջ են դիմում, բայց մենք մնում ենք դարաւոր անշարժութեան մէջ, կապուած, կաշկանդուած տգիտութեան շղթաներով...։

Տիկին Թարլանը, այդ խօսքերի նշանակութիւնը համարեա՝ չը հասկանալով՝ գլուխը հեգնական կերպով շարժեց եւ հրամայեց հաւաքել թէյի սփռոցը։

Digitized by Google

— Ինամի Թարլան, խօսեց տիկին Սալաթինը, — մինչեւ բարեկենդանը երկու շաբաթ է միայն մնում. ժամանակը նեղցել է, ի՞նչ էք հրամայում հարսանիքի մասին։

— Ի՞նչ պէտք է ասեմ, պատասխանեց առժամանակեայ մտածումից յետոյ տիկին Թարլանը. — Այն, որ Աստուած է կամեցել, կը կատարուի. եւ ես չեմ կարող իմ հանգուցեալ ամուսնի ուխտը գետնին զարկել։

— Աստուած քեզ հանգիստ արքայութիւն տայ, խնամի, միւս կողմից առարկեց տիկին Սկուհին. — ես իմ հօգիս, բերան չէ, — տաճար է։ Ճշմարիտ, մեղք է, որ մենք դարձեալ թողնենք, որ ձեր աղջիկը ու մեր Ռուստամը այսուհետեւ աւելի մաշուեն միմեանց համար. դուք գիտէք, թէ նրանք որքան սիրում են միմեանց։

— Ես գիտեմ... պատասխանեց տիկին Թարլանը խորհրդաւոր եղանակով. — եւ նրանց անպարկեշտ սէրը, միանգամայն ատելի է ինձ։

— Հէ, այդպէս մի խօսիք, նրա խօսքը կտրեց տիկին Սալաթինը. աշխարհս լուսաւորեալ է. եւ սիրոյ աստուածուհին դուրս գալով ամօթխածութեան վարագոյրի ետեւից՝ — մերկացել է իւր նախկին քողածածկոցից. այժմ նա մերկ հանդէս է մտել մարդկային կեանքի մէջ որպէս ճշմարտութեան աստուածուհի...։

Տիկին Թարլանը չը հասկանալով վերջին խօսքերը, աւելացրեց.

— Աշխարհս լուսաւորուել է... լաւ է ասէք՝ ըմբռնել է. եւ մեր ազգային սուրբ եւ ազնիւ բարոյականութիւնը, իւր արդար եւ անարատ սովորութիւններով՝ ապականուել է. Վերջ երեւալու ժամանակը մօտեցել է, որովհետեւ մեր նորահարսերը այլեւս ոչ ծերերի աչքին են պատուում, ոչ էլ նրանց խրատները լսում։

Digitized by Google

Այդ խօսքերով հնամոլ տիկինը կամենում էր իւր սրտի թոյնը թափել, որ կուտակել էր երեկոյեան Ռուսաստանին միայնակ օրիորդ Սալթիի մօտ գտնելը։

— Թող այդ ձեզ չը վշտացնէ, ասաց տիկին Սալտիքինը. նոր ժամանակը ընտրել է իւր համար մի նոր ընթացք, որ տանում է իւր հետ մարդկութիւնը... ով որ դուրս մնայ այդ ճանապարհից՝ կը մոլորուի եւ դէպ յաւիտենական կորուստը կը գնայ...։ Վերանորոգութի՛ւն... ազգաշինութի՛ւն... այդ խօսքերն է հնչեցնում մեր ականջներին հայոց հրեշտակը...։

— Բայց ամէն տեսակ վերանորոգութեան հետ անհրաժեշտ կապակից է մի ապականիչ կործանում։

— Գիտէք, այդ կործանման փլատակների միջից են ծլում, ծաղկում մի նոր, թարմ եւ պնդակազմ կեանքի անուշահոտ վարդերը։ Ամէն հին բաները յաւիտենական մահուան կերակուր են դառնում, եւ մահը, մարսելով իւր կերածը, մի նո՛ր կեանք, մի նոր գոյութիւն է առաջացնում։

— Դուա՛նք մէին եւ խորին ջրոյցներ են. թո՛ղ տուէք թէ Աստուած կը սիրէք, նրանց խօսքը կորեց տիկին Սկուհին. ի՞նչ մեր գործն է վարդապետութիւն անել. լա՛ւ կը լինի, որ մենք մեր խելքից դուրս բաներ չը մտածենք։

— Ես ի՞նչ մեղ ունիմ, պատասխանեց տիկին Թալալանը. ձեր քոյրն է սկսել փիլիսոփայութիւններ կարդալ մեր ականջներին։

Տիկին Սալտիքինը լռեց եւ այլ եւս չը խօսեց։

— Թող մնան այդ խօսքերը, շարունակեց տիկին Սկուհին — մե՛ղք է թերահաւատ ջրոյցներ անել, այժմ դառնանք մեր առաջուայ խորհրդին։ Ինամի Թալալան,

Digitized by Google

դուք իմացէք, մենք երկուշաբթի օրից հալսանիքը սկսելու ենք. դուք էլ պատրաստ եղէք, որ աւելի չուշանայ, հինգ օր հալսանիք կը լինի եւ բարեկենդանի շաբաթ օր, Աստուծոյ կամքով՝ հարսը տուն կը տանենք։

— Շատ բարի, պատասխանեց ցածր ձայնով տիկին Թարլանը. ես ձեր կամքին հնազանդ եմ։

— Այժմ մնաք բարով, շատ լուսացինք, շատ գլխացաւանք տուինք, ներեցէ՛ք. մնաք բարով ասացին երկու քոյրերը եւ համբուրելով տիկին Թարլանի ձեռքը՝ հեռացան։

Բակը դուրս գալով, երկու քոյրերը մտան օրիորդ Սալբիի սենեակը։ Նա այդ միջոցին խորին ուշադրութեամբ՝ մի գիրք էր կարդում։ Տիկին Սկուհիին տեսնելով՝ նա քողը երեսի վրայ քաշելով, գիրքը ձգեց եւ ոտքի ելաւ։

Տիկին Սկուհին համբուրեց օրիորդի գլուխը, եւ ուրախ եղաւ այնպէս քաղաքավարութեամբ իրան ընդունելու համար։ Տիկին Թարլանի երեկոյեան տհաճութիւնը — Սալբիի մասին — լսած լինելով՝ նա ուղղեց նրան այս առասպելաբանական խրատները։

— Իմ սիրելի հարսնացու, սովորիր պարկեշտութիւնը սրբութեամբ պահպանել քեզ օրինակ առնելով այն երկնային հրաշագեղ հարսնացուն — Լուսնեակը։ Դա մի լուսեղէն յաւերժահարս օրիորդ է, որի հարսնութիւնը յաւիտենից նշանադրուած է արեգակի՝ այն լուսադէմ պատանեակի հետ։ Նրա հարսանիքը մնացել է "վերջին օրին,,, երբ այս աշխարհը այլ եւս չէ լինելու։ Լուսնեակի դէմքը աւելի փայլուն է քան արեգակինը, բայց տեսնո՞ւմ ես, ինչպիսի ամօթխածութեամբ է վարագուրել իւր դէմքը. այդ է պատճառը, որ շատ թոյլ լոյս է արձա-

Digitized by Google

կում։ Նրա երեսքողի միջից մենք հազիւ ենք նշմարում նրա սեւորակ աչքերը։ Յաւիտենից այդ երկու երկնային տարփածուները՝ անձկալի կարօտով վազում են միմեանց ետեւից, եւ կարծես, մի աներեւոյթ ձեռք վանում, հալածում է նրանց երկնքի ճախարակի չորս կողմով... Բայց, երբեք չէ պատահել, որ նրանք հանդիպէին միմեանց, առնէին իրանց կարօտը, լցնէին իրանց փափագը մինչեւ յաւիտենականի ձեռքով նրանց պակը չը կատարուի...։

Այդ աւանդական խրատը տիկին Սկուհին նրա համար էր տալիս, որովհետեւ ինքն եւս, տիկին Թարլանի նման, չէր սիրում օրիորդ Սալբիի եւ իւր որդու շատ անգամ միմեանց հանդարձակ այցելութիւնները։ Կամենալով օրիորդի կամակորութիւնն էլ խրատել, որ նա հնազանդէր իւր մօրը՝ տիկին Սկուհին շարունակեց.

— Մանաւանդ աշխատիր խոնարհութեամբ հնազանդել քո մօրը, որ քեզ Աստուծոյ ընծայիւ — կինագործել է, մեծցել է իւր ծծերով։ Նայիր պլպո-ին (յոպոպ). դու տեսնել ես այն խայտաճամուկ փետուրներով սիրուն թռչնիկը. նա եւս մի օր քո նման մանուկ աղջիկ էր։ Մի օր նրա մայրը, մի փայտեայ տաշտի մէջ լուանում էր նրա գլուխը եւ սանդրում ծամերը, անհնազանդ աղջիկը յիմարութեամբ չարախօսում է մօր դէմ, մայրը անիծում է նրան, եւ անէծքը տեղ հասնելով՝ աղջիկը ծիրօղ հրամանով ձեւափոխվում եւ դառնում է պիպու թռչունը։ Մինչեւ այսօր, այն սանդրը, որով մայրը սանդրում էր իւր աղջկայ ծամերը՝ գտնվում է պիպուի գլխի վրայ, որպէս նշան եւ խրատ, անհնազանդ աղջիկներին։ Պիպուն անիծուած է. բոլոր թռչուններից միայն նրա բոյնն է ժահահոտութիւն արտաշնչում։ Մին-

Digitized by Google

չեւ այսօր, նա իւր թլուատ լեզուով կոչում է փո՛-փո՛, որ նրա մօր անունն է, կամենալով թողութիւն խնդրել մօրից. բայց Աստուած չէ լսում նրա ձայնը։

— Եթէ դո՛ւ, քոյրիկ, յոպոպի գլխի վրայ եղած հովհարանման փետուրների պատճառով ապացուցանում ես, թէ նա անիծուած աղջիկն է, նրա խօսքը ընդհատեց տիկին Սալաթինը — ուրեմն այս օրերին ռամիկների կարծիքը, թէ կիվ-կիվը (մի թռչուն) իւր գլխի պոպոզի պատճառով համարվում է անիծուած վարդապետը՝ զուրկ չէ ճշմարտութիւնից։

— Հա՛, այդ էլ սուտ չէ, պատասխանեց տիկին Սկուհին հաստատ հաւատքով — կիվ-կիվը առաջ մի վարդապետ է եղել, մինչեւ այսօր տեսնվում է նրա գլխի վրայ վարդապետական սեւ վեղարը։

Օրիորդ Սալբին չը կարողացաւ իւր ծիծաղը զսպել։

Ժամացոյցի զանգակը ընդհատեց նրանց խօսքերը։ Տիկին Սալաթինը բարեկամաբար սեղմելով օրիորդ Սալբիի ձեռքը, կամաց շշնջաց նրա ականջին.

— Ձը մոռանաս սկեսուրիդ խօսքերը...։

Երկու քոյրերը դուրս գնացին Ծովասաբենց տնից։

Մօտենալով Աշխարհունիի դրանը, տիկին Սալաթինը քաշեց իւր քրոջ ձեռքը.

— Մտիր մեր տունը մի քանի րոպէով, ասաց նա — Արամին էլ կը տեսնես։

— Չէ. ուշ է, մեր տանը ինձ սպասում են, պատասխանեց տիկին Սկուհին հրաժարուելով։

— Ի՞նչ վնաս ունի, եթէ մի քանի րոպէ ուշանաս։

Մտնելով պարոն Արամ Աշխարհունիի (տիկին Սալաթինի ամուսնու) դռնից, նրանք անցան մի ընդարձակ բակի միջով եւ քարէ սանդուխներով բարձրանալով, նրա

Digitized by Google

մոան մի ոչ այնչափ մեծ սենեակ, որ աւելի նմանուած էր մի մատենադպրանի: Շուրջպատով մի վայելչակազմ երիտասարդ, նստած ընդարձակ գրասեղանի հանդէպ՝ գրում էր: Ծեռնելով տիկինները, նա ոտքի ելաւ եւ ուրախութեամբ բարեւելով ասաց կատակով.

— Բարով, տիկին մոգուհիներ, շնորհաւոր լինի ձեր հրաւառութիւնը:

Երկու քոյրերի երեսները շառագունեցան, նրանք չը պատասխանեցին այդ հեգնական խօսքին:

— Խօսեցէք հարսանիքի մասին, խօսքը փոխելով՝ հարցրեց պարոն Արամը:

— Խօսեցինք, պատասխանեց տիկին Սալաթինը. խնամի Թարլանը համոզուեց. երկուշաբթի կը սկսուի հարսանիքը:

— Ուրեմն պէտք է աչքալուսանք տալ պարոն Ռուստամին. ա՛յսքան երկար սպասելուց՝ խեղճ տղան մնաշուեցաւ . . . : Բայց, Սկուհի, հարսանիքը հին կարգով պիտի անէք[1]:

---

[1] Ատրպատականի գիւղօրայքում, հայերի մէջ, մի օրինաւոր հարսանիք տեւողը հօթն օր եւ հօթն գիշեր է տեւում: Հարսանիքից մի քանի օր առաջ, փեսայի հայրը մի քանի ծերերի հետ — գնում են հարսի հօր տունը փաթ֊ման անելու, այսինքն կարականապէս որոշելու, թէ ո՛րքան ետաղ (գլխագին) կամ գրամ պէտք է տալ հարսի հօրը, նրա ազգական համար: Ջուտ գրամի հետ տրւում է մեծ քանակութեամբ — գինի, մեղ, եղ եւ բրինձ: Հարսանիքի նախընթաց երեկոյեան, փեսայի հօր գրան առջեւ մորթւում է ոչխար — մէկ կամ երկու եզ, նաւագրւում է գըշհօր եւ զուռնա, հարսները եւ աղջիկները մատուռի չորս կողմը պար են գալիս, եւ ապա գրացիքը այնտեղ հաւաքուելով՝ մի մի բաժակ գինի են խմում մեղրելով "Առաւած բարի ահաճի անէ եւ շնորհաւոր լինի„: Մինչ գիշերն են եփում — պատրաստում են գօլմայ, շօրբայ, խաշ եւ այլ կերակուրները: Ձեռքերն հինայով ներկել. Հայերը այդ սովորութիւնը անտարակոյս պարսիկներից առած պիտի լինին: Այդ մարգկանց բազմութիւնը ցրւում է՝ հարսանիքի մասնաւն

Digitized by Google

— Ի հարկէ, այսքան տարի որդի եմ պահել, մեծացրել, որ նրա հարսանիքի ուրախութիւնը վայելեմ յետոյ մեռնեմ, պատասխանեց տիկին Սկուհին։

մորթելուց յետոյ։ Բայց մեկ ազատ աղջիկ, սկուտեղի մէջ մի քանի քսակ հինայ գլխի վրայ բռնած՝ շատ աղջիկների եւ հարսերի հետ, դէհօր — զուռնա ածելով եւ պար գալով — գնում են հարսնացուի տունը։ Նոյն գիշեր այստեղ տեղի է ունենում հարսանիքի պարահանդէսը, որի սատարին՝ հորթնածայ հարսնացուին առանձին պար են ածում՝ երկու լաւաշ խաչածեւ դնելով նրա գլխի վրայ։ Պարից յետոյ աղատ աղջիկները այդ լաւաշները բաժանում են իրանց մէջ, որ Աստուած իրանց եւս ղժդի անի (բաշխէ) այդ բախտը — հարսանիքի թագն ու պսակը։

Գիշերը, քնելու ժամանակ շազախում են հինան. երանով առաջ ներկում են հարսնացուի ձեռքերը, այնուհետեւ ազատ աղջիկներ եւ տղամարդկանց ձեռքերը, շատերը միմիայն իրանց ճկոյթին են թաթախում հինայի մէջ, որպէս զի իրանք եւս մասնակից լինին այդ ուրախութեանը։

Երկրորդ օրուայ առաւօտեան կանուխ, փեսայի բարեկամներից մի հատակաւոր կին, ձեռքում մի մեծ փունջ ծաղիկ բռնած, եւ մի տղամարդ մի լաւ-լիքն գինի վերցրած՝ սազանդարի (երաժիշտների) հետ, դէհօր-զուռնա ածելով, մտնում են գալիս անից տուն։ Փեսայի բարեկամ կինը մտնում է ամէն մի տան ալէւորին, մատուցանում է մի ծաղիկ, իսկ մեսը՝ մի բաժակ գինի, եւ խնդրում են, որ "Աստուած ներանց արդուն եւս փոխ անէ այդ ուրախութիւնը"։ Տան ծերունին ընդունելով ծաղիկը եւ գինին, խմում է՝ մաղթելով հարս ու փեսայի համար — բախտաւորութիւն։ Այնուհետեւ հրաւիրում են նրան ճաշելու հարսանիքի տունը։ Այս կերպով ճաշին հրաւիրւում են միայն մարդիկ. իսկ կէսօրից յետոյ — կանայք։ Երեք օր շարունակ յերեկը ճաշկերոյթ է լինում։ Պարահանդէսները կատարւում են գիշերները։ Հատանիքի տան կենդրոնում կանգնած՝ "սազանդարները" (երաժիշտները) նուագում են. տունը լիքն է մինչեւ բերանը խառնիճաղանճ բազմութեամբ։ Ներանք բռնել են "ֆօանդը", որ մի տեսակ պար է — տղամարդիկ միմեանց ձեռքը բռնելով շարւում են եւ այդ շղթայակապի մէջ, այստեղ եւ այնտեղ, երեւում են բաց երեսներով աղջիկներ եւ կանայք. բայց այդ բացառութիւնը թոյլ է տրւում, երբ ներանք իրանց ազգականիցների ձեռքն են բռնում, ընդհակառակն՝ մի կնոջ օտար տղամարդի ձեռք բռնել շատ ամօթ բան է։ Պարի ձեւերը որոշւում են տաքերի զանազան տեսակ շարժումներով — ներանք առաջ են գնում կազդէ-կոզդ, զանազան ոլոր-մոլոր բոլորակներ եւ շարամանութիւններ կազմելով։ Մի տղամարդ, աղուէսը ձախ ձեռքով երեսին՝ առանում է պարագլուխը։ Ֆօանդը յետոյ, առհասարակ ամէն գիշեր, յոգնած բազմութիւնը նստոտում է հարսանիքի տան մէջ, պատերի տակ։ Տիրում է ընդհանուր լռութիւն։ Տան միջավայրում մի ընդարձակ տեղ է բացվում. այդտեղ, որպէս թատրոնի բեմի վրայ՝ յան-

Digitized by Google

— Իմ սիրելի քոյրը ձեռք չի վերտառնի հին սովորութիւններից, Արամ, առաւլկեց տիկին Սալլախինը,

---

կարծ յայտնվում են ազանդարները՝ հագնուած անճոռնի, այլանդակ եւ ծիծաղաշարժ կերպարանքներով: Սրանք սկսում են անամօթ խեղկատակութեամբ զաւեշտութիւններ ձեւացնել: Այդ բոլորը, թէպէտ անկատար եւ անկանոն, բայց ազատութեամբ են, որ թատերական գործողութիւնները վաղուց արդէն ծանօթ էին եղել հայերին:

Զորբորդ օրը փեսայի տանից ուղարկում են հարսի տունը "նան-փաչը" — այսինքն հաց եւ միս, նրա հետ — գինի, իւղ, բրինձ եւ այն արծաթը որ խոստացել էր փեսայի հայրը: Այնուհետեւ բազմութիւնը հաւաքվում է հարսանիքի տանը, եւ մի ճոխ հացկերոյթից յետոյ քահանան օրհնում է փեսայի հագուստը, որը հագցնում են եւ ապա բոլորը, դէպի-ղուռնայի ուղեկցութեամբ գնում են հարսնացուի տունը: Այստեղ եւս հացկերոյթ եւ ուրախութիւն է լինում: Հացի սեղանը հաւաքելուց յետոյ, մէջ են բերում մի սկուտեղի մէջ, մրգեղէնների եւ քաղցրավէնիքի վրայ գրուած հանապազօրեայ "հալալ-ը" (հագուստը): Քահանան մաշտոցով օրհնում է հարսնացուի զգեստները եւս, եւ յետոյ, սկսում են մրգերը եւ քաղցրավենիքը բաժանել բազմութեանը, որը ստանալով, բարեմաղթում են հարսն ու փեսային երկար օրեր, բախտ եւ քաղցրութիւն: Հարսանիքի զգեստները հարսին հագցնում է այն կինը, որ հարսնացուի վարժուհին է եղել. սա իբր այս գործի համար մի անհնազանդ վարձատրութիւն է առնում փեսայի հօրից: Հետաքրքրութեան արժանի է այդ խորհրդական զգեստաւորութիւնը, որ այլ խօսքով կարելի է անուանել "հարսի ձեռնադրութիւն ին լինելու", այդ բառի (ին)' ընդարձակ նշանակութեամբ — ասիական կեանքի նկատմամբ: Վարժուհին մի քանի խորիմաստ խրատներ տալուց յետոյ, կապում է նրա ականջներին երկկողմանի իլոնիան անկոչով, ապա կապում է նրա բերանը լոռնիան օշմոչվ, հագցնում է նրա գլխին ալի-խոհոնիան խալաճը, դնում է նրա գագաթի վրայ խոշոր գօրէն (մի արծաթեայ բոլորակ պսակ, որ գոյք շատ հին ժամանակներից կրում են հայոց կանայք, որպէս թագ իրանց գլխին). ապա գցում է նրա երեսի եւ աչքերի վրայ ոսկեխաչանիւն փոդը եւ այնուհետեւ նրա երեսը ծածկվում է բոլոր տեսանողների աչքերից . . . : Բոլոր հագուստները հագցնելուց յետոյ, որոնցից ամէն մէկը մի խորհրդական գաղտնիք ունէր հարսի ապագայի համար, նրա մէջքը պնգում են փեսայի հօր — հարսի սկեսարի, — որպէս նոյն գերդաստանի նահապետի՝ — գօտիով: —

Ներողութիւն խնդրելով բոլոր բարեկամներից, հարսը ընկնում է հօր եւ մօր ոտքերը, համբուրում է, աղաչելով՝ որ նրանք իրանց կամքը, աղն ու հացը հուլ անէին: Երեք անգամ պտոյտ է գալիս թոնրի չորս կողմը, համբուրում է թոնրի շուրթը, եւ արտասուք թափելով բաժանվում է

Digitized by Google

— ասացէ՛ք, թէ Աստուած կը սիրէք, ի՞նչ մի հաճելի բա՛ն է այն զո՛ռ-հա-զո՛ռը, այն աստելի դրհօլ - զուռնան, այն ղալմաղալը, այն բաբելոնեան խառնակութիւնը։

հօր անկից։ Նայն ժամանակ մի գառն եզանակ է նուագվում, որ աւելի թագաւորական եզանակներին է նմանում։ Փեռայի բարեկամները ուրախ են. Ներսիք բազմութեամբ, հարս, ազջիկ, կանայք եւ մարդիկ — յուռնախառ են անում հարսի առջեւ եւ հանդարտ քայլերով առաջ ընթանում։ Ցանկերի վրայից հարսի գլխի վրայ ածում են ծաղիկներ, մրգեղէններ, իսկ փեռայի մտերիմ բարեկամները՝ արծաթի մանր գահեկաններ։ Կէս ճանապարհին, մի կին հարսի առաջ է բերում փեռայի ասկից գլխի վրայ դրած մի սկուտեղի մէջ կրակ, վրան խունկ ծխելով։ (Այդ, իմ կարծիքով, փեռայի սիրոյ նշանն է — իւր անուշհոտութեամբ)։ Անյուհետեւ երեւան է գալիս փեռան՝ շրջապատուած ազգականներ բազմութեամբ։ Նա խաչաձեւ կապել է իւր վրայ մի կանաչ-կարմիր մետաքսեայ կերպաս, ցցել է իւր գդակի վրայ գեղեցիկ փետուրներ եւ մի խնձոր ազուխի մէջ դրած՝ բռնել է իւր բերանի դէմ։ Քաւորը ձախ կողմից ասում է «աա-ՅԸդ», — մի խաչաձեւ գօշ, խնձորներով, չամիչներով եւ այլ մրգեղէններով — զարդարուած։ Ամէն քայլափոխին՝ փեռային մատուցանում են մի բաժակ գինի, բարձր ձայնով գոռալով "անո՛ւշ, անո՛ւշ"։

Փեռան առաջ ընկած, նրա յետեւից հարսը բերելով, գալիս հասնում են հարսանիքի տան գրանը։ Այստեղ կանգնեցնում են հարսը. դըհօլ-զուռնայի ձայնը լսվում է. մի մարդ առաջ է գալիս եւ սկսում է բարձր ձայնով կանչել, թէ ով ինչ բան կամ ոչքան արծաթ է այդ միջոցին պարգեւում հարսանիքի տէրոջ։ Այդ մարդասիրական օգնութիւնը ոչ միայն տղաստում է խեղճ գիւղացիները հարսանիքի ծանր ծախքերից, այլեւ, շատ անգամ, նրանք շահում են մեծաքանակ արծաթ։

Նայն գիշերը կատարվում է պսակը։ Այդ կրօնական օրէնքը, որ պիտի լինի հրապարակով՝ համայնքա գաղտնի է կատարվում։ Փեռայի բարեկամներից մի քանի հոգի, քաւորը, հարսն ու փեռան՝ քահանայի հետ գնում են եկեղեցի կէս գիշերին։ Քահանան եկեղեցու կանանցից համաձայն՝ վերջացնում է պսակը։ Պսակը։ Պսակը։

— Առաւել լաւ կը լինի, առանց աւելորդ աղմուկի, մէկ օրուայ մէջ վերջանայ պսակը եւ հարսանիքը մի չափաւոր եւ համեստ ճաշկերոյթով վերջացուի, յորդորեց պարոն Աշխարուհին։

— Տեսնենք... ի հարկէ, առանց խորհրդի չը լինելու. ինչպէս արժան կը դատէք, այնպէս էլ կ'անենք, պատասխանեց տիկին Սկուհին եւ ողջունելով նրանց, հեռացաւ։

ԺԳ.

ԽՈՐՀՈՒՐԴ

— Այ տղայ, Միւռ, Յաչօ, ձայն տուեց Մահտեսի Աւետիսը իւր ծառաներին. շունը հաչում է, դուռը զարկում են, գնացէք բա՛ց արէք. երեւի հիւրերը գալիս են։

Մահտեսի Աւետիսը ինքը ընդ առաջ դուրս եկաւ մինչեւ բակը, եւ բարեւեց եկող հիւրերը, որ փաթաթուած իրանց թանձր ապանէքի մէջ, ծանրաքայլ եւ ուռած՝ առաջ էին գալիս։ Սրանք ներս մտան իրանց համար պատրաստուած սենեակը. ամենից առաջ երկու քահանայ "բարի ողջոյն„ ասելով, նստեցին սենեակի բարձր եւ պատուաւոր տեղում. նրանց մօտ նստեց տանուտէրը. այնուհետեւ մնացածները, իրանց փառքի եւ աստիճանի յարմար բարձի տեղ գտնելով, "բարի իրիկուն,, ասելով, զուգահեռաբար շարուեցան սենեակի պատերի չորս կողմով։

Մահտեսի Աւետիսը, որ դեռ ոտքի վրայ էր կանգնել — նրանց սպասին՝ քահանաների թոյլտութեամբ նստեց բոլորից ներքեւ, եւ իւր երկրի սովորութեան համեմատ՝ սկսեց կրկին ողջունել նրանց գալուստը. —

— Բարով էք եկել, հազար բարով... իմ աչքի եւ իմ գլխի վրայ..., Տէրն մեր Յիսուս Քրիստոս ձեզ մեր դրկիցութիւնից միշտ անպակաս անէ, որ այսպէս միմեանց հետ սէր վայելենք, բարիին ուրախանանք եւ

Digitized by Google

չարին տրտմինք. միշտ միաբան եւ միահոգի լինինք՝ որ միմեանց թեւ ու թիկունք դառնանք։

Մահտեսի Աւետիսը դեռ շատ պիտի երկարէր իւր այդ սերտած խօսքերը, եթէ միւս կողմից նրան չընդհատէր տէր Մարկոսը, ասելով.

— Աստուած բարին տայ Մահտեսի, թէ Աստուածդ կը սիրես ասա մի տեսնենք, թէ դարձեալ ի՞նչ փորացաւ ունիս. քո մեզ այստեղ հրաւիրելը առանց պատճառի չէ ... օրհնած, լա՛ւ է, որ դու էլ մեզ մտաբերեցիր, "սատանացի աչքը քօռ„. գիտես, ի՞նչ. մեծ վատկին եմ ձեր շէմքը կոխել, գոնեա՛ այնպէս տա՛ր, բե՛ր, որ քո տան ճամբան չը մոռանանք։ Օրհնա՛ծ, ի՞նչ ես այդպէս քսակիդ բերանը պի՛նդ պի՛նդ հուփ տուել. դիցուք այնքան հաւաքեցիր, որ Ղարսուն դարձար. մի ասա՛, լսե՛մ, այս փուչ աշխարհից ի՞նչ պիտի տանէք. չէ՞ որ երկու կամ երեք կեազ (արշին) կտաւ է ձեր բաժինը։

— Չէ՛, չէ՛, մեռնիմ սուրբ աջիդ, տէրտէր Ջան. դո՛ւք մեր գլուխն էք, իսկ մենք ձեր ոտքի հո՛ղը, պատասխանեց միւս կողմից Հուրի Յօան-Դայան ջերմեռանդութեամբ — իմ տուն տեղս բոլորը ձերն է, իմ ընտանիքս ձեր ծառաներն են. ձեզ ո՞վ է արգելում բարի ոտքերով մեր շէմքը կոխել, միթէ այդ մի կտոր հացը, որ ուտում ենք, ձերը չէ, միթէ ձեր շնորհը չէ՞, որ մեզ պահպանում է ...։

— Աստուած հաւատքդ օրհնէ, մայրիկ, ասաց տէր Մարկոսը։ — Երանի՛ բոլոր մարդիկ քո սիրտն ունենային, որովհետեւ դու գիտես Աստուծոյ քահանաները պատուել. Տէրը փոխարէնը կը վարձատրէ քեզ միւս կեանքում։

— Իմ որդիս, Մահտեսի Աւետիսը, շարունակեց պառաւը — թէպէտ Տիրոջ սպասաւորների վրայ մի փոքր

Digitized by Google

սառն աչքով է նայում՝ բայց դուք, տէր հայր, պէտք է նկատէք, նրա սիրտը շատ բարի է։

— Ամէն ինչ կարելի է ներել, բայց միանգամայն անտանելի է այն՝ որ Մահտեսին չամչի արաղը մինակ մինակ գաղտուկ խմում է, ամենեւին չը մտածելով մի սլուակ տէրտէրին բաժին հանել, բայց մի այսպիսի չար ժամանակ, ով է քահանային պատիւ դնողը, երբ նա նրանց պէտք չէ . . . այն ժամանակ են տէրտէրին միայն մտաբերում, երբ մինին պակ, կնունք կամ թաղում է պատահում։

— Դրանում իրաւունք ունիք, տէր հայր, հաստատեցին մի քանի հոգի։

— Չէ, հանաք եմ անում, խօսքը փոխեց տէր Մարկոսը — ես իմ ժողովրդի լուծթիւնն ու հանգստութիւնը կ'ուզեմ։

— Հաւատա՛, տէր հայր, մի փոքր սիրտ առած խօսեց Մահտեսի Աւետիսը — եթէ ամէն օր հազար անգամ փառք տամ Աստծուն, դեռ բաւական չէ։ Ձեր սուրբ աղօթքով լինչս է պակաս — ծառադ (Ռուստամը) հասել է, Աստուած մի կտոր հաց է բաշխել, կարօտութիւն չունիմ, այլ եւս աւելի ոչ մի բան չեմ խնդրում Աստծուց, միայն թէ դուք եւ մեր բարի դրացիքը կենդանի լինիք, որ միասին ուտենք, խմենք եւ փառք տանք Ծուղրին, մինչեւ Նա եւս իւր ա—անդը յետ առնէ այնուհետեւ, ի՛նչ ես տանելու այս փուչ աշխարհից, ողորմելի մարդ . . . երկու բանից միևը — բարի կամ չար գործ։

— Հա՛, բարի կամ չար գործ եւ մի քանի բուռն հող, ձայն տուեցին միւսները։

Միւս քահանան, տէր Մարուքը, որ լուռ, ականջ-նելը կախած, չէր խօսում, մէջ մտաւ այս խօսքերով.

Digitized by Google

— Ի հարկէ, ի հարկէ, դուք, որ կաք՝ մեր աւազանից ծնուած եղբայրներն էք. ձեր մէջ խղճ-տանջանքն պիտի չը լինի, ձեր դռները միմեանց առջեւ բաց պիտի լինի եւ ձեր սեղանը՝ միշտ ափռուած: Գիտէք, ուրքան մեծ բարեգործութիւն է հաց տալն եւ քաղցած փորեր կշտացնելը . . . : Ախ, հացը, հացը, մանաւանդ գինին . . . դրանց սուրբ ընորհներին մատաղ — յատուկ արքայութեան բանալիներ են. այդ է պատճառը, որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս իւր մարմնի եւ արեան փոխարէն դրեց այդ երկու նիւթերը. իսկ ահեղ դատաստանի օրը, մեղաւորներին այս յանդիմանութիւններն է տալիս — "քաղցած էի — հաց չը տուիք, ծարաւ էի — ջուր կը խմացրիք,,, բայց այդ վերջին բառի փոխարէն՝ լաւ կը լինէր եթէ ասէր — "ծարաւ էի — գինի չը տուիք,,. գինի եղած տեղը մարդ ջուր չի խմի, այդպէս չէ՞, հարցրեց նա կատականօք տէր Մարկոսից:

— Հա՛, այդ ղուտ ճշմարտութիւն է, պատասխանեց տէր Մարկոսը հեղինակաւոր ձայնով — Մի՛թէ չէս կարդացել՝ "գինի ուրախ առնէ, իւղ զուարթ, հաց հաստատէ զսիրտ մարդոյ,,:

— Բայց ձեզ մի բան ասեմ, տէր հայր, շարունակեց տէր Մարուքը — թէպէտ մեր սուրբ հայրերը հաստատում են թէ Ադամը թուղ ուտելու համար դրախտից արտաքսուեց՝ բայց իմ կարծիքը այդ մասին — տարբեր է, ես հաւատում եմ, որ Ադամը ցորեան կերաւ, որպէս եւ վկայում են պարսիկները իրանց Հանդիսանէյի մէջ:

— Ի՞նչ խորհուրդ ունի այդ:

— Այն՝ որ ցորեանի պատուղով դրախտից դուրս ընկանք եւ ցորեանի պատուղով պիտի ներս մտնենք, քանի որ Քրիստոս դրաւ իւր մարմնի փոխարէն:

Digitized by Google

— Ծէրտէր Ջան, նրանց խօսքը ընդհատեց եկեղեցու երեցփոխանը — իրաւ, դուք իմ սրտիցն էք խօսում. ճշմարի՛տ որ հաց բաշխելու նման մի այլ բարեգործութիւն չը կայ, դրա համա՛ր է, որ Հայր Աբրահամի նման, ինչ օր որ հիւր չունենամ՝ ճաշով հաց ներս չի գնայ: Ամէն կողմից պատահական վարդապետ, վանքական ժողովարար, օտարական քահանայ, կամ ով որ մի փոքր սեւը սպիտակից որոշել գիտէ՝ ճանչելով երեցփոխի տունը, գալիս են, շաբաթներով, ամիսներով մնում են ինձ մօտ, ինձ գործից հանում, իրանց գործը վերջացնում եւ ապա մեկնում են՝ իրանց սուրբ օրհնութիւնը ինձ վարձք թողնելով:

— Բայց, պարոն Երեցփոխ, հեգնական ոճով խօսեց տէր Մարկոսը — մինակ հացը բաւական չէ. այդպիսի հանգամանքներում մի մոռացէք մի քանի դահեկան նրանց ափը կոխել:

— Ճշմարիտ է, եկեղեցականին տուածը չի կորչի, աւելացրեց տէր Մարուքը:

— Ի հա՛րկէ, անողորմ-Պիրոսի մի հատ հացի կո՜ւպը նրան արդարութիւն համարուեց, իսկ եկեղեցականին փող տալը, նրա սիրտը շահելը ունայն բան է:

— Ո՛ր անողորմ-Պիրոսը, հալցրին հիւրերը, խնդրելով, որ տէր Մարկոսը այդ առակը պատմէ նրանց:

— Ապա չէ՞ք լսել, ամէն օր կարդում ենք Աւետարանի մէջ՝ անողորմ-Պիրոսը այն անգութ եւ անխիղճ ագահն էր, որ իւր կեանքում ո՛չ մի աղքատի մի պատառ հաց, եւ ո՛չ մի քահանայի մի փարա փող — չէր տուել: Մի օր մուրացկանի մինը մտնում է նրա տունը, երբ նա թոնրում հաց էր թխում: Անողորմը բարկացած ձայն է տալիս մուրացկանին — դո՛ւրս գնա, եթէ չես ու-

Digitized by Google

զում ծնծուել։ Մուրացկանը աղաչում եւ խնդրում է մի պատառ հաց. անողորմը վեր է ցատկում, որ թակելով նրան արտաքսէ։ Աղքատը փախչում է, անողորմը, իւր բարկութիւնը հանգստացնելու համար մի այլ բան չը գտնելով՝ վեր է առնում այրուած հացի կ՚ոտը եւ քարի տեղ — ձգում է աղքատի վրայ, իսկ մուրացկանը, միջոց գտնելով, խլում է այրուած հացի պատառը եւ շարունակում իւր փախուստը։ Այժմ, ականջ դիր, Մահտեսի, գիրքը վկայում է, թէ այդ ողորմութիւնը՝ թէեւ ակամայ՝ բայց արդարութիւն համարուեց նրա համար... եւ Անողորմ-Պիրոսը դառնալով՝ գտաւ իւր թոնրի շրթան մօտ կիսավառ ածխոցը (քօսաւը) — կանաչացած եւ ծաղկած։

"Ո՞ր գիրքը... Աւետարա՞նը...,, կամենում էր հարցնել Մահտեսի Աւետիսը. "այդպիսի առասպել չը կայ Աւետարանի մէջ...։,,

Մահտեսի Աւետիսի հիւրերը, բոլորը որպէս "մի սանդրի կտաւ,,, մի Ֆաբիանոս-Ֆեան անդամ էին — առաքինութիւն քարոզելը, բարեգործութիւն ուսուցանելը — նրանց նպատակը չէր, այլ՝ ճանաչելով Մահտեսի Աւետիսի սրտի պնդութիւնը, գիտնալով որ նա իւր դէպ քահանաները տածած սառնասրտութեամբ — Անողորմ-Պիրոսից պակաս չէր, նրանք ամենայն խորամանկութեամբ, խելք-խելքի տուած՝ աշխատում էին թովել Մահտեսու միտքը, որպէս զի նրանցից ամէն մինը կարողանայ մեծ չափով դուրս հանել Մահտեսիից իւր ստանալի արծաթը՝ օգտուելով այդ գիշեր հոգեանկէ խոշհոդը[1] լինելու պատեհ առիթից։

---

[1] Հոգեանկից մի քանի օր առաջ լինում է խուհոդը, ուր, բացի հոգեանկի տիրոջ մերձաւոր բարեկամներից, անպատճառ պիտի գտնուին գիւղական գործերի մէջ պաշտօն ունեցող մարդկանցից մի քանիսը, որպէս

— Դէ, Մահտեսի, առաջ տարաւ տէր Մարկոսը ծանրութեամբ — "փլաւ, փլաւ, կանչելով, չես կշտանայ, եղ ու բրինձ պիտի,,: Քսակիդ բերանը բաց արա, այս մարդիկը առատապէս բաւականացրու, որ կարողանաս կարմիր հարսը տուն բերել:

— Ի հարկէ, պատասխանեց Մահտեսի Աւետիսը — ինչ որ մեր երկրի սովորութիւնն է՝ ես պատրաստ եմ վճարել:

— Լաւ, օրհնած, հիմայ սովորութիւնից անց է կացել, առաջ տարաւ տէր Մարկոսը — տեսնում ես, ամէն բան այժմ թանգ է, միթէ մենք միայն արժան պիտի ծախենք ձրի: Այստեղ պնդութիւն պէտք չէ. պէտք է տաս, օրհնած, որդի պսակելը դիւրին բան է:

— Լաւ. ասենք թէ արտերը այս տարի մարախը կերաւ, եւ այդ պատճառով ցորեանը թանգացաւ. իսկ եկեղեցական խորհուրդներին ինչ պատահեց, որ նրանց գները թանգացրիք: Մենք, մեր հանգուցեալ Գէորգ, Իսրայէլ եւ Սիկողայոս եպիսկոպոսների ժամանակներից գիտենք թէ մրքան արծաթ պէտք է վճարել մկրտութեան, պսակի, թաղման, հաղորդութեան, խոստովանութեան՝

ծխական տէրտէրը, դիւղի տանուտէրը, եկեղեցու երեցփոխանը, առաջնորդի գործակալը, ժամհարը եւ գիլերը: Խոչհոդուի առաջին խօսելի նիւթը այն էր, որ հարսի եւ փեսայի մէջ արիւնի մերձաւորութիւն չը լինէր, եւ եթէ կար, մերձ ազգակցութեան պէս մի բան՝ նրանք վճռում են, թէ պսակի հրամանն առանալու համար մրքան փող պէտք է տալ առաջնորդին: Երկրորդ, որոշում են թէ մրքան քուլըղ (գլխագին) պէտք է վճարուի հարսնացուի ծնողներին: Ապա հետեւեալ, ծխատէր քահանան՝ առանալով իւր պսակի գրամը, տանուտէրը առանալով իրան եւ Մելիքին հասանելի ընծաները, երեցփոխանը՝ եկեղեցու լուսադինը, առաջնորդի գործակալը՝ ամուսնահարկը եւ պսակի հրամանագրամը, ժամհարը իւրը ... գիլերը իւրը ..., ծխատէր քահանան մի "յայտարարութիւն,, է գրում թէ հարսի եւ փեսայի մէջ չհայտնուեն չը կայ. իսկ առաջնորդի գործակալը՝ առանալով այդ "յայտարարութիւնը,, տալիս է պսակի հրամանագիրը:

Digitized by Google

եւ այլ հոգեւոր խորհուրդների համար։ Բայց այժմ — Աստուած ձեզ լուշմանք տայ, մկկի փոխարէն տան էք առնում, եւ դեռ գոհ չէք։

— Էհ, որդի, պատասխանեց տէր Մարկոսը խորհրդական ձայնով — ամէն ժամ, ամէն ժամանակ իւր յատուկ պահանջներն ունի. "այժմ աքլորը ամէն օր հազիւ թէ մկկ շահիով կարողանում է ջուր լամել„։ Չէ՞ որ մենք եւս ադամորդիք ենք. Աստուած մանանայով չէ կերակրում մեզ՝ որ կարօտութիւն չունենանք, մեզ միւում են՝ մեր ժողովուրդը եւ մեր եկեղեցին, դրանք են մեր արտերը եւ մեր հունձքը՝ որ ապրուստ հայթայթեն մեզ։

— Բայց չէ՞ որ սրբազան առաջնորդը հարուստ է, հազարներով ոսկիներ ունի, առարկեց Սահակեան Աւետիսը։

— Օրհնա՛ծ, ի՞նչ կը դիմանայ այն ծախսերին՝ երբ ժողովուրդը նրան չօգնէ իւր զոհաբերութեամբ։

— Ուրեմն առաջնորդը իւր շուայլութեան համար պիտի ուտէ, մաշէ՞ ժողովուրդը։

— Դու. սխալւում ես, Մահտեսի, այդ ամենեւին շուայլութիւն չէ. այդ ազգի պարծանք է՝ որ մենք մի այդպիսի փառաւոր առաջնորդ ունինք։ Մեր առաջնորդը մի այնպիսի երեւելի անձն է՝ որ Տէրութեան բոլոր մեծամեծ պաշտօնակալների հետ — ծանօթութիւն ունի։ Դուն, որդի, ոչ մի քաղաքականութիւն չը գիտես. Պարսկաստանը՝ արտաքին փառահեղութիւն է սիրում. դրա համար էլ՝ մեր մեծաւորը պիտի ինքը իրան այնպէս պահէ, որ նրանցից պակաս չը մնայ։ Քո յիշած առաջնորդները, որ մի սակաւ բանով էլ էին բաւականանում — աննշան մարդիկ էին, որ եկեղեցու գաւթից չէին դուրս գալ, եւ ժամհարից աւել մարդ չէին ճանաչում։ Բայց

Digitized by Google

այժմեան առաջնորդը, փառք Աստուծոյ, սարկաւարի եւ շահզադաններու մօտ բարձի տեղ ունի, ով ասես նրան չէ պատվում։

Ծանկարծ ներս մտան եւրոպական ձեւով հագնուած երկու նորահաս տղամարդիկ, եւ անփոյթ, անհոգ կերպով "բարի իրիկուն„ ասելով անցան, կոչնականներից վերեւ նստեցին։

Տէր Մարկոսի երեսը մռայլուեց. նա տհաճութիւնից կրծում էր իւր շրթունքը. նա աւելի կատաղեց այն բանի համար, որ եկուորները ուշադրութիւն չը դարձրին այնտեղ հեգեւոր անձինք լինելու վրայ եւ չասացին "օրհնեցէք Տեարք„։ Նա աւելի ուրախ կը լինէր, եթէ երկու սատանայ մտնէին նրանց ժողովը, քան այդ երկու՝ նրա համար անտանելի անձերը։ Բայց միւս կողմից նա խիստ ուրախ էր, որ նրանք եկան խորհուրդը վերջանալուց յետոյ, եթէ ոչ, չարաչար կը միւսէին նրանց օգտին։ Տէր Մարկոսը իւր սեւ փիլոնի հետ ստացած լինելով եւ մի սեւ ու կեղտոտ հոգի, մի կեղծաւոր մարդահաճութիւն, ծածկեց իւր սրտի ոխը, ակամայ մի փաղաքշական կերպարանք ընդունեց, եւ սկսեց առանձին-առանձին բարեւել եկուորներին՝ եւ նրանց առողջութիւնը հարցնել.

— Պարոն Մելիքզադէ, ուր էիք այդքան ժամանակ, պոչաւոր աստղերի նման՝ հազիւ հազ էք երեւում. այս քանի օր է, ձեզ չը սեսնելով — կարգս է վկայ — իմ մէջ մեծ ցաւ էի զգում։

— Գնացել էի Թաբրիզ զանազան գործերի համար, սառնութեամբ պատասխանեց պարոն Մելիքզադէն։

— Ի՛հ, օրհնածներ, ինչ էք այդչափ փողի եռեւից վազ տալիս, եւ ամենեւին չէք կշտանում. մինչեւ յաւիտեան ապրելու յոյս ունիք։ Չէ, չէ, որդիք, այս

Digitized by Google

աշխարհը մի փուչ եւ անցաւոր բան է, իսկ մեր կեանքը՝ մի երազ։ Տէր Մարկոսը այդ սերտած խօսքերը կրկնակի արտասանում էր անխտիր բոլոր դասակարգի մարդկանց մօտ, կարծելով, որ բոլորի նպատակը միայն փողն է, եւ նոյն իսկ տիեզերքը փողի համար է շարժվում. աւելի վստահօրէն նա շարունակեց. — Աւելի լաւ չէր լինի, եթէ անցաւորի փոխարէն հոգս տանէիք յաւիտենական երջանիկ կեանքի համար։

— Ի՞նչ բանով եւ ինչպէս, հարցրեց պարոն Արամ Աշխարհունին։

— Ի՞նչ բանով... հեզնաբար կրկնեց քահանան. դո՛ւք, պարոն, կարդացուր մարդ էք. ամէն չէ՞ ձեզ համար չը գիտնալը։

— Բայց ամէն չէ՛ եւ հարցնելը։

— Պարոն, վերջին ռամիկն էլ գիտէ, որ մի մարդ յաւիտենական կեանքը շահում է — եկեղեցիներին եւ եկեղեցականներին դրամական օգնութիւն անելով, նրանց պակասութիւնը հոգալով, վանքերին եւ վանքականներին հոգեւոր ընծաներ ուղարկելով, գլխաւոր ուխտատեղիները գնալով, պատարագ մատուցանել տալով, աղքատներին հաց բաշխել տալով, այլ եւս ո՞ր միսը ասեմ, եթէ չը գիտէք, գոնեայ հայրերից տեսած կը լինէք։

Մանուկ տղամարդիկը բացասական կերպով ժպտեցին։

— Գամ թէ ինչ է արգելում մի հայ-քրիստոնեայ մարդու, առաջ տալու տէր Մարկոսը — որի հասակը եւ կարողութիւնը ներում է, իւր կեանքում մի անգամ Սուրբ քաղաքը (Երուսաղէմ) գնալ եւ "մահտեսի" դառնալ։ Միթէ մենք թուղթերից էլ պակաս ենք, որոնց կրօնը անհրաժեշտ պարտք է դրել ամէն մի մահմեդա-

Digitized by Google

կանի վրայ՝ իւր կեանքում մի անգամ Մէքքա գնալու եւ "հաջի" դառնալու։

Տէր Մարուքը եւ միւս կոչնականները լուռ զարմանում էին տէր Մարկոսի ճոխ ճարտարախօսութեան վրայ, մտածելով, թէ նա ոչ միայն հասարակ ժողովրդի առջեւ մեծ համարում է վայելում իւր գիտութեան համար, այլ եւ իմաստուններին կարող է պատասխանել։

— Ինչո՞ւ չէք պատասխանում, պարոններ, հարցրեց տէր Մարկոսը. միթէ իմ խօսքերը ձեզ դիւր չե՞ն գալիս։

— Այո՛, մենք համաձայն չենք, որ հայերը իրանց արծաթը փշացնէին այդպիսի անպիտան ծախսերի համար, պատասխանեցին երիտասարդները։

— Անպիտան ծախսե՞ր... այդ ինչ էք խօսում, հարցրեց քահանան բարկանալով։

— Այո՛, դեռ անպիտանից էլ աւելի վատթար։

— Դուք մոլորուած էք։

— Իսկ դուք խենդացած...։

Տէր Մարկոսը խսպառ կատաղեց։

Մահտեսի Աւետիսը նկատելով, որ նորահաս պարոնների "ջուրը տերտէրի առուով չէ հոսում", իւր որդի Յոհաննէսին ականացի արեց, որը բռնեց պարոն Արամ Աշխարունու եւ պարոն Յոսրով Մելիքզադէի ձեռքը եւ իւր սենեակը տարաւ։

Նրանց հեռանալուց յետոյ, սիրուեց հացի սեղանը, տէր Մարկոսը, իւր հակառակորդներից ազատուելով եւ արձակ միջոց գտնելով — դարձեալ հանդէս մտաւ, եւ իւր շաղակրատ լեզուի հաճոյամոլութեամբ՝ սկսեց թովել նրանց սրտերը։

Նէս գիշեր էր։ Ընթրիքը վերջացաւ եւ կոչնականները ցրուեցան։ Տէր-Առաքելենց տան դիմաց, նրանցից

Digitized by Google

քաժանուեց մինը, եւ որպէս չարութեան դեւ, միայնակ, լուռ խլրտում էր ոլոր-մոլոր փողոցներով։ Դիւային ոչ մի յատկանիշ չէր բացակայում նրանից — հասակը՝ երկայն, բարակ եւ ջուտ, դէմքը՝ մթնած եւ նիհար, սեւ կանգրուած մօրուքով. նեղ եւ խոր գնացած աչքերը փայլում էին լի խորամանկութեամբ. նրա անբարիշտ բիբերը այնպիսի սաստկութեամբ էին յարձակվում դէպ աչքի աղբիւրները, կարծես, քիթը, որպէս միջնապատ եթէ գոյութիւն չունենար՝ նրանք միատում էին միմեանց հանիլ — մի մեծ կռուի համար։ Առհասարակ այդ իսրայելեան նենգաւոր դէմքը մի դիւական բնաւորութիւն եւ ամէն չարութիւններով լի մի սեւ հոգի էր արտայայտում։

Յաւարի մէջ երկար շրջակայութիւնից յետոյ, նա մի հոյակապ ամրոցի դրան առաջ կանգ առաւ, բաղխեց մի քանի անգամ, դռները ահաւոր շառաչմամբ յետ գնացին, եւ նա, երկայն պալաննէրի միջից անցնելով՝ բարձր սանդուխտներով սկսեց վեր բարձրանալ։ Ամբողջ ամրոցի մէջ, մթին խաւարի հետ տիրում էր խորին լռութիւն։ Միայն մի պատուհանից էր լոյս երեւում։ Նա մտաւ այդ սենեակը։ Պարսկական ճաշակով ճոխ զարդարուած այդ սենեակը փայլում էր եւ զանազան նկարներով։

— Վերջապէս, եկաք, ասաց թանկագին եւ փափուկ մահճի վրայ թեք ընկած նորահաս պատանին։

— Այո՛, ներողութիւն, հազար անգամ ներողութիւն, որ ես ձեզ սպասել տուի, ասաց քաղաքավարութեամբ եկուորը, որ կանգնել էր ոտքի վրայ։

— Այդ ոչինչ... միայն ասա՛, ի՞նչպէս վերջացաւ գործը։

Եկուորը սկսեց պատմել Տէր-Առաքելենց տան մէջ կատարուած ամբողջ անցքը։

Digitized by Google

— Ուրեմն մեր յոյսը կորած է, հարցրեց նորահաս պատանին անհուն տխրութեամբ։

— Ի՞նչ ասեմ, աղա... պատասխանեց հկուորը ուսերը շարժելով։

— Ինչս, ես տհաճութենից կը մեռնիմ. ինչ հնար ունիս՝ բանեցրու։

— Ժամանակը նեղ է. էգուց երեկոյեան պակը կը կատարուի. ինչ կարելի է անել մի քանի ժամուայ ընթացքում։

— Ես դրանք չեմ ընդունիլ... գործ դիր քո բոլոր խորամանկութիւնները։

— Բայց գիտէք, խորամանկութեան շարժող մեքենան — արծաթն է։

— Ահա՛ քեզ. եւ պատանին տուեց նրան ոսկինեղով լի մի քսակ։

— Բարի գիշեր, էգուց ճաշին իմացում կը տամ, ասաց եղեռնագործը եւ հեռացաւ։



ԺԵ.

ՀՈԳԵԽՈՐ ԱՒԱԶՆՈՐԴԻ ՏԵՂԱԿԱԼԸ

Հ... գիւղի եկեղեցու բակում, ախոռատան վրայ, շինուած էր մի փոքրիկ սենեակ, իւր փոքրիկ նախասենեակով եւ նեղ լուսամուտներով: Վառելանիւթի սակաւութեան պատճառով, ախոռի տաքութիւնը ներս բերելու համար բացած ծակերից փչում էին ժահահոտ շոգիներ, որ չափազանց ծանրացրել էին սենեակի օդը:

Այդ սենեակի բնակիչը Ց... վարդապետն է, Ատրպատականի վիճակային հոգեւոր Առաջնորդի այդ նահանգի տեղակալը: Դա մի ալեխառն մօրուքով, գլխի երկայն ծամերով ծերունի էր:

Տեղակալ վարդապետը, այդ նահանգի գիւղերից մինի եկեղեցու երեցփոխանի հետ նստած՝ ծանր ու բարակ — հաշիւ էր տեսնում:

— Աչքներս լոյս... ասաց վերջապէս վարդապետը տհաճութեամբ, հարիւր տուն ժողովրդով մի գիւղի մէջ, ամբողջ մէկ տարուայ ընթացքում ընդ ամէնը — ի՞նն մկրտութիւն, տասներկ պսակ եւ վեց թաղում...:

— Ի՞նչ արած, վարդապետ, պատասխանեց ճարահատեալ երեցփոխանը — դժբախտաբար մեր ձեռքում չէ ծնո-ցանել եւ մեռո-ցանելը...:

— Իրա՛ւ է, ձեր ձեռքում չեն դրանք, խօսքը փոխեց վարդապետը, բայց այնպիսի հնարներ կան ձեր ձեռ-

Digitized by Google

քում՝ որ կալող են հոգեւոր արդիւնքները առատապէս բղխեցնել։

— Որպիսի՞ հնարներ, հարցրեց երեցփոխանը, աչքերը լայն բացելով։

— Օրինակ, գերեզմանաքարերի վրայ լսաչ օծել տալ, պատարագ մատուցանել տալ, ահա այսպիսի բաներ կարող էք ժողովրդին խրախուսել եւ յորդորել՝ կատարել տալու։

— Ըհ՛հ, Հայր սուրբ, ասաց երեցփոխանը ափսոսալով — այդ ինչո՞ւն որը կոտրուէր՝ մեր երկիրը չը գայինդրանք խլեցին մեր ժողովրդից՝ յոյս, հաւատ եւ ամէնսուրբ բան. դուք կարծում էք այն առաջուայ ջերմեռանդութիւնը մնացել է մեր ժողովրդի մէջ, ա՛յ..., այժմ բոլորի սրտերը սառել են։

— Վնաս չունի՛... դժուար չէ կրկին վառել նրանց ջերմեռանդութիւնը եւ ջերմացնել նրանց սրտերը, պատասխանեց Ծանրութեամբ վարդապետը։ Լսի՛ր, երեցփոխ, առաջ տալաւ նա աւելի ազդու ոճով. — Դու եւս, որպէս հոգեւոր գործերի մի Աստուծոյ պաշտօնեայ, պէտք է միշտ ջանադիր լինիս եկեղեցու նիւթական շահերի համար։ Ես ցաւակցաբար վաղուց եմ նկատել, ի՛նչպէս ժողովուրդը սկսել է սառն աչքով նայել հոգե՛ւոր պէտ՛նէրի վրայ, այդ մոլորութեան առաջացնացութեան դէմ դնելու համար, ես սովորեցրել եմ հոգեւոր գործերի իմ ստորադրեալ պաշտօնեաներին այնպիսի հնարքներ, որով նրանք յաջողէին յետ դարձնել ժողովրդի կորած հոգեւոր ջերմեռանդութիւնը։ Դու եւս այդ կարգի մարդկանցից մինը լինելով, աւելորդ չեմ համարում մի քանի խրատներ տալ, նախապէս հաւատացնելով, որ երբեք մեղք չէ, երբ մինը եկեղեցու օգտի համար խօսում է այն՝ որ կոչում

Digitized by Google

են քաջի առաքեր։ Դու ասացիր, թէ ժողովուրդը այլ եւս չէ կամենում մեռելների համար իսիչ օրհնել տալ եւ պատարագ մատուցանել տալ։ Ի՛նչ միտաս ունի, եթէ ջերմեռանդութիւն շարժելու եւ խրախոյս տալու համար, գործադրուէր այսպիսի մի թեթեւ եւ պարզ հնարք։ — Դանել մի պատաւ, որին կարելի լինի վստահիլ գաղտնապահութեան համար, եւ սովորեցնել նրան, որ ժողովրդի մէջ տարածէ, իբր թէ ինքը տեսել է մի այսպիսի երազ. "մի աներեւոյթ զօրութեամբ տարուելով այդ գիւղի գերեզմանատունը, նա տեսնում է գերեզմաններից շատերի բերանները բոլորովին բաց, առանց քարերի. նրանց մէջ թաղուած մեռելները երեւում են. շուն, գայլ, օձ, կարիճ եւ ամէն տեսակ գազաններ՝ արձակ համարձակ մնում են գալիս նրանց մարմինների վրայ եւ ապականում են նրանց ոսկորները։ Նա տեսնում է եւ մի քանի այլ գերեզմաններ, ըստ կարգին, իրանց քարերով, գազանները ամենեւին մօտ չեն գնում նրանց, որովհետեւ վախենում էին այն լոյսերից, որ արեւի նման ցոլում էին խաչերից։ Նա հարցնում է մինին, որ կանգնած է լինում այնտեղ, թէ ի՞նչն է պատճառը, որ գերեզմաններից մի քանիսը վառվում են արեւի նման, իսկ միւսները բաց են, եւ պատասխան է առանում, թէ այդ լոյսերը ցոլում են այն գերեզմանների խաչերից, որ հոգս են տարել օծել տալ մեռոնով, իսկ միւս բաց գերեզմանները օծուած չեն,,։ Թող պատաւը պատմէ, թէ ամէն գիշեր կրկնվում է այդ երազը, թող նա ժողովրդի աչքին խելքը տարուածի պէս իրան ցոյց տայ, եւ իբր թէ միշտ խօսում է եւ աներեւոյթ էակների հետ։ Դու, պարոն երեցփոխան, իմ ասածները կատարիր եւ կը տեսնես թէ քանի՛ քանի՛ մարդիկ կը ցանկանան գերեզմանների քարերի վրայի խաչերը օծել տալ ...։

Ամբողջ այդ խօսակցութեան միջոցին, մեղ նախաճանօթ մարդը՝ սեւ դանգրուած մօրուքով, մռայլոտ եւ խորամանկ դէմքով, շիլ աչքերով, որպէս մի դեւ, նախասենեակում կուչ եկած՝ դրան ձեղքից ականջ էր դնում։ Վարդապետի ճիզվիտական խրատները լսելով, նա իսկոյն կշռեց իւր որսը, ուշիկ դուռը բաց անելով ներս մտաւ եւ չափազանց քաղաքավարութեամբ գլուխ վեր բերեց եւ միայն ոտքի վրայ կանգնած։

— Ա՛... հրամայեցէ՛ք, հրամայեցէ՛ք, Ռէս, ասաց Առաջնորդի տեղակալը. — նստեցէ՛ք խնդրեմ։

Նա նստեց վարդապետից մի փոքր հեռու — գորգի վրայ։

— Բարի լինի... աւելացրեց վարդապետը. — ի՞նչ պէս եղաւ, որ ձանապարհներդ ծռեցիք դէպ մեր կողմը։

— Մեր բոլորիս պարտքն է միշտ ուխտ գալ ձեր սուրբ տեսութեանը, եւ վայելել ձեր օրհնութեան շնորհը, պատասխանեց Ռէսը։

— Շատ ապրիք որդի, ասաց վարդապետը ուռելով։

Միեւնոյն ժամանակ երեցփոխը, համբուրելով իւր Հայր սուրբի աջը՝ հեռացաւ։ Ռէսը եւ Առաջնորդի գործակալը — մնացին միայնակ։

— Բարի լինի, դարձեալ կրկնեց վարդապետը. — ի՞նչ բախտով։

— Փառք Աստուծոյ, բարի է, պատասխանեց Ռէսը. — ես շնորհ ունեցայ ձեզ մօտ մի կարեւոր գործի համար գալ։

Վարդապետը ուշադրութեամբ ականջները սրեց։

— Այսօր, առաւօտեան, դուք մի պսակի հրաման էք տուել. այնպէս չէ՞, հարցրեց Ռէսը։

Digitized by Google

— Հրամեր էք. Տէր-Առաքիլենց Ռուստամին՝ Ծովասաբենց օրիորդ Սալբիի հետ, պատասխանեց վարդապետը։

— Ծրբ պիտի կատարուի պսակը, եւ ո՞մ ձեռքով։

— Այս գիշեր տէր Մալուքի ձեռքով։

— Դուք կարո՞ղ էիք, Հայր Սուրբ, այդ պսակը մի քանի օրով յետաձգել։

— Ողբմութիւն արէք, Ռէս, ինչպէս կարելի է, դուք չէք իմանում ժամանակը նեղ է. այսօր ուրբաթ է, վաղը շաբաթ, միւս օր կիւրակէ. այս երեք օրը յետ ձգելով՝ պսակը կը մնայ "գինի յինանց„ — համարեա երեք եւ կէս ամսից յետոյ։

— Ինչո՞ւ, որպէս թէ չը հասկանալով հարցրեց Ռէսը։

— Օրհնած, չէք իմանում, երեք օրից յետոյ մեծ պահն է. իսկ մեծ պահին հարսանիք կամ պսակ չէ լինում, մինչեւ Հոգեգալստից մի քանի օր անցած։

— Այդ ճիշտ է, պատասխանեց կեղծաւորը մի քանի րոպէ մտածութիւնից յետոյ. բայց եւ այնպէս հնարաւոր չէ՝ երբ ձեզանից լսդրում էին, մանաւանդ՝ երբ լսդրում էր մի երեւելի իշխանաձին։

Հայր Սուրբի երեսակայութիւնը իսկոյն մակաբերեց Աւազակեանց Սոլոմոն-Բէկը։

— Ձէ՞ կարելի արդեօք գիտնալ այդ երբեմն եղած նշանաւոր անունը, հարցրեց նա։

— Ո՛չ, զանազան հանգամանքներ ստիպում են նրան ծածուկ պահել իւր անունը։

— Ի՞նչ նպատակ ունի այդ գործի մէջ պատուելի իշխանաձինը։

Digitized by Google

— Հաւատացնում եմ ձեզ, որպէս մի անկեղծ մարդ, որ նպատակը անվնաս է, եւ երաշխաւորում եմ պատուովս, որ այդ նպատակը չէ վտանգելու ոչ ձեր պատիւը եւ ոչ էլ նորընծայ ամուսնացուների պսակական-տալութեանը, եթէ նրանք երեք օր սպասեն:

Թէպէտ խորամանկ Ռիչը ուրան եւ կեղծաւոր խօսքերով աշխատում էր հեռացնել վարդապետի սրտից նրան տիրող երկիւղը՝ բայց եւ այնպէս, Առաջնորդի գործակալը մի խորին եւ վտանգաւոր գաղտնիք էր նկատում նրա խօսքերի մէջ:

"Արծաթը աւելի զօրաւոր է քան որեւէ փաստ, այդ յիմարը համոզելու„ բնաբանը ձեռք առաւ խաբեբան, ասելով.

— Կատարելով նուաստիս խնդիրը եւ պատուելով իշխանաձնի կամքը՝ դուք փոխարէնը կը ստանաք որպէս ընծայ — ահա՛ այս ոսկիները: Եւ նա լեցրեց վարդապետի առջեւ մի լի բուռն աշքաճիներ:

— Ներեցէ՛ք, պարոն, առարկեց վարդապետը — հրաժարուելով, ես առանց դրանց եւս պատրաստ եմ կատարել այդ իշխանաձնի հրամանը, միայն թէ խիստ անհնարին բան է առանց հիմնաւոր պատճառների արգելել մի պսակ, որ պատրաստ է այս գիշեր կատարուելու եւ որի համար ես հրամանագիրը արդէն տուել եմ:

— Առանց հիմնաւոր պատճառների՞... նրա խօսքը հեգնողաբար կտրեց խաբեբան. — Հայր Սուրբ, դուք կարծում էք թէ ամէն բանի հիմքը պէտք է անպատճառ քարի՞ վրայ դրուած լինի, ոչ, ամենեւին ոչ. Եղե+ օրո-այ համար՝ աւազի վրայ դնելը վնաս չունի, որովհետեւ մեր նպատակը պսակի բոլորովին արգիլումը չէ, այլ՝ երեք օրով միայն յետ ձգելը:

Digitized by Google

— Ըստ այմ ամենայնի, խիստ դժուար է, պատասխանեց վարդապետը յուսահատութեամբ։

Երբեք գործակալը այսպէս չէր անձարացել որեւէ գործի մէջ, որ այնքան առատ ոսկիներ էր բերում իրան, եւ ոչ մի օր նրա հնարագէտ հանճարը այնքան չէր բթացել — որքան այս անգամ։ Նրան տիրել էր մի դժնդակ կասկած, եւ նա շուարած՝ չը գիտէր ի՛նչ պատասխան տար Ռէսի խնդրին։

Ռէսի թափանցող հայեացքը նկատեց վարդապետի կասկածանքը եւ երկիւղը, եւ նրան վստահութիւն ներշնչելու համար, աւելացրեց.

— Հաւատացնում եմ ձեզ, դարձեալ հաւատացնում եմ ձեզ Աստծոյ ահաւոր անունով, Յիսուս-Քրիստոսի խաչելութիւնով եւ մեր բոլոր Սուրբերի շնորհով, որ իմ առաջարկութեան մէջ բնաւին կասկածելի ոչինչ չը կայ, եւ եթէ դուք լսէք իմ խորհրդին՝ խիստ դիւրին հնարներով մեր խնդիրը կատարուած կը լինի։

— Որպիսի՞ հնարներ, հարցրեց շուարած վարդապետը։

— Դուք, այս րոպէիս ձեր ծառան ուղարկելով Տէր-Առաքելենց Մահտեսի Աւետիսի մօտ, յետ կը պահանջէք պատկի հրամանագիրը, պատճառաբանելով՝ թէ նրա մէջ մի բան պէտք է ուղղել։ Այնուհետեւ տէր Մարուքին կը հրամայէք, որ պատկը չը կատարէ մինչեւ մի նոր հրաման ստանալը, յայտնելով՝ թէ այդ գործը մի նոր քննութեան է կարօտ այն հիման վրայ, որ իբր թէ լսել էք հարսի եւ փեսայի մէջ մերձաւոր արիւնակցութիւն է եղել, որ քահանաները "խորհրդէ,, գիշերը հարբած լինելով՝ չեն կարողացել որոշել։

— Այնուհետեւ։

Digitized by Google

— Այնուհետեւ, առաւօտեան քննութիւն պիտի լինի, ասելով, եւ այս առաւօտ հիւանդ եմ... Մնա էգուց, եւ մի երկու այդպիսի էգո-ցներ անցնելով՝ — երեք խորհրդական օրերը կ'անցնին, իսկ այնուհետեւ — բարով եկիր մեծ պաս...: Այլ եւս պսակ չի լինելու մեր օրհնեալ նահապետների դրած կանոնների համաձայն...:

Վարդապետն խելքին, ասես թէ, մի բան մտաւ, եւ նա յայտնեց Ռէսին իւր հաճութիւնը այն պայմանով՝ եթէ նա կրկներ ոսկիների թիւը: Ռէսը ճարահատեալ աւելացրեց մի քանի հատ ոսկի եւս:

— Մեզ մնում է, ձեզնից մի բան եւս խնդրել, Հայր Սուրբ, առաջ տարաւ Ռէսը գործապէտ մարդու եղանակով. — այս գործը, իմ խնդիրքը՝ երեք օրով պսակը յետաձգելու նկատմամբ, եւ իշխանաձնի դրա մէջ նպատակը, այդ բոլորը, խնդրում եմ մնան ձեզ մօտ որպէս խորին գաղտնիքներ:

— Անհոգ եղէք, անհոգ եղէք, պարոն, ես ձեզանից աւելի զղջշ եմ գործերի մէջ, պատասխանեց վարդապետը:

Ռէսը գլուխ տալով հեռացաւ վարդապետից, եւ դուրս գալով առաջնորդարանից, նա, լի հրճուանօք դիմում էր դէպ հոյակապ ամրոցը, երբ յանկարծ նրան հանդիպեց Մահտեսի Աւետիքը:

— Բարեւ, եղբայր, ասաց Ռէսը:

— Աստծոյ բարին քեզ, պատասխանեց Մահտեսին:

— Ի՞նչ եղաւ, օրհնած, աչքներս թռաւ սպասելով, թէ երբ պիտի լինի Ռուստամի հարսանիքը, որ քէֆ անենք եւ ուրախութիւն վայելենք:

— Այս գիշեր պսակ է, էգուց՝ հարսանիք:

Digitized by Google

— Աստուածով... Աստուած քեզ բարի աջողութիւն տայ, միայն՝ առաջուց քեզ ասեմ, Մահտեսի, եթէ դրհօլ-զուռնա բերել չը տաս, եթէ պար ու գուռանդ չը լինի, քաւ լեցի եթէ քո շէմքը ոտք կոխեմ. եզբայր, այս ինչ նոր սովորութիւն է՝ մի գաւաթ չայով որդի պսակել:

— Շատ բարի, Ռէս, որպէս դուք կը հրամայէք, որպէս մեր բարի դրացիքը կամենան՝ այնպէս կ'անենք:

— Ուրախութեա՛մբ... ասաց բանաստեղծը, եւ ձեռս բարեաւ ասելով՝ հեռացաւ, խորհելով. "ողորմելի մարդ, էգուց լաւ հարսանիք կը դայ քո գլխին":

Մի քանի րոպէից յետոյ նա հասաւ հոյակապ ամրոցին, որ պատկանում էր Մելիք Պիլատոս Աւազակեանցին, այդ նահանգի չափազանց հարուստ իշխանին, որին յանձնուած էր բոլոր հայերի կառավարութիւնը: Ռէսը մտնելով ամրոցը եւ մի քանի բակերի միջից անցնելով՝ ներս մտաւ մի չափազանց տաքացրած սենեակ, որի լուսամուտների առաջ դրուած էին մեծ եւ փոքր ամաններով ծաղիկներ եւ մշտականաչ կիտրոնի եւ նարնջի ծառեր: Այդ կախարդական սենեակի մէջ, որ ձմեռուայ ամենաստիկ ցրտերին պահում էր ծաղկեալ գարունքը, Սոլոմոն-Բէկը, իւր ամենօրեայ սովորութեան համեմատ՝ միայնակ նստած աթոռի վրայ, բարձր ալէանդրի ծառի տակ, որի ոստերից քարշ ընկած վանդակների մէջ երգում էին երկու դեղձանիկ՝ — ծխում էր ղէյլան եւ խմում ղահուէ: Ներս առջեւ, դրան մօտ կանգնել էր սպասաւորը՝ թանկագին հագուստներով:

Սոլոմոն-Բէկը, արծաթէ ժանգի մէջ մաշուած մի տղամարդ, էր բարակ եւ երկայն երեսով, պունատ՝ առանց կարմրութեան նշոյլի, սառն դէմքով՝ որպէս մարմարիոն: —

Digitized by Google

Նրա մի զոյգ խաժ աչքերը՝ շինջած եւ որպէս երկու սարդ՝ անխորհուրդ նայում էին իրանց խորքից։ Նրա այնքան փափուկ եւ այնքան նուազած փոքրիկ գլխի վրայի շէկ մազերը, ցոյց էին տալիս մի հիւանդոտ կազմուածք։ Ու, ալդարեւ, նրա ծուլօրէն շարժուածքը, նրա յիմար եւ անոգի դէմքը՝ արտայայտում էին մի թոյլ եւ կիսամեռ բնաւորութիւն, իւր թոյլ խելքով ու ստքով։

Ռէսը գլուխ տալով կանգնեց ծառայի մօտ։ Սոլոմոն-Բէկը ծխում էր, երբեմնապէս ղահուէի սեւ հեղուկը կուլ տալով. խորին մտածութեան մէջ խորասուզուած՝ նա Ռէսի վրայ ամենեւին ուշադրութիւն չէր դարձնում, կամ, որ աւելի հաւանական է, իւր ծառայի առջեւ նրան չէր կամենում իւր ուշադրութեան արժանացնել։ Իսկ երբ ծառան ղէլլանը դուրս տարաւ, նորահաս Աւազակեանցը բռնազբօսիկ ժպիտը երեսին դարձաւ դէպ Ռէսը.

— Բարով։ Ի՞նչ արեցիք, հարցրեց նա։

Ռէսը խոնարհութեամբ գլուխ տուեց։

— Մ'ծտ եկէք։ Նստեցէք, հրամայեց Աւազակեանցը։

Ռէսը կեղծաւորաբար հրաժարուեց, թէ չէր կարող ընդունել մի այդպիսի համարձակութիւն։

— Ո՛չ, դուք կարող էք նստել. ես այսուհետեւ ձեզ համարելու եմ ոչ թէ իմ ծառայ, այլ հաւատարիմ բարեկամ եւ հնարագէտ խորհրդակից։

Ո՛չ մի անգամ Ռէսը նրա բերանից Դ-ո-ւ բառը չէր լսել եւ ոչ մի անգամ նա չնորհ չէր գտել բարձի տեղ ունենալու նորահաս եւ փառասէր իշխանազնի մօտ։ Այդ մեծարանքները նրան իսպառ խելքից հանեցին, ո՛չ սոսկ իշխանազնի մօտ գտած պատուախնդրութեան՝ այլ աւելի նրա համար, որ նրա բարեսրտութիւնը եւ գութը գրաւելով, նա կարող էր այնուհետեւ համարձակ տիրել

Digitized by Google

նրա սրտին, ազատաբար ներգործել նրա մտածութեան եւ ընտրողութեան վրայ, եւ այսպիսով, դիւրութեամբ դուրս կորզել նրանից ողքան կարելի է շատ արծաթ, որ խաբեբայի միայն նպատակը, նրա հոգին եւ մարմինն էր։

Ռէսը նստեց աթոռի վրայ, Աւազակեանցի աթոռից մի փոքր հեռու։

— Ի՞նչ արեցիք, հարցրեց Սոլոմոն-Բէկը կրկին անգամ։

Ռէսը պատմեց Առաջնորդի գործակալի հետ ունեցած իւր ամբողջ խօսակցութիւնը, նրա խոստումը՝ պակը արգելելու, որը ոչ միայն երեք օր, այլ մինչեւ երեք ամիս կարող էր հեռու պահել Յովսաբեանց Սալբին Ռուստամի հետ պսակուելուց։

— Շա՛տ բարի. գործի առաջին յաջողութիւնը օգտաւէտ վախճան է գուշակում, ասաց Սոլոմոն-Բէկը ուրախութեամբ։

— Աղա, եթէ դուք ամէն ինչ տրամադրէք իմ կամեցողութեան եւ հաստատամտօրէն ապաւինիք իմ աշխատութեան՝ դուք չէք նպաստակին շուտ կը հասնէք, ասաց հանդարտութեամբ Ռէսը։

— Դուք գիտէք, որ այդ գաղտնիքը, ես բացի ձեզանից ոչ ոքի չեմ հաւատացել, եւ միանգամայն յանձնել եմ ձեր հմտութեան։

— Շատ լաւ. ես եւս բոլոր սրտով պատրաստ եմ ծառայել իմ տիրոջ կամքին, պատասխանեց խոնարհութեամբ Ռէսը. — միայն թէ նախապէս դուք ընդհեղէք ինձ ձեր ուշադրութիւնը՝ մի քանի ամենահարկաւոր խրատներ լսելու։

— Ասացէք, համաձայնեց Սոլոմոն-Բէկը։

Digitized by Google

— Մենք պիտի մեր ձեռքում եղած այդ երեք ամիսը արժան չը ծախենք. մեր ամենագլխաւոր աշխատութիւնը պիտի լինի այդ երեք ամսուայ ընթացքում չեզ ծպտըչեալ նպաստիկը ձեռք բերել. իսկ այդ նպաստիկը որսալու համար, մի քանի անհրաժեշտ հնարներ պէտք է գործածել: Նախ քան հնարների հետ ձեզ ծանօթացնելը, ես, աղա, հարցնում եմ ձեզ, ինչ է ձեր կարծիքը կեղծաւորութեան մասին:

— Կեղծաւորութիւնը մեղք է, կարճ պատասխանեց Աւազակեանցը:

— Ընդհակառակն մի բարի մտադրութիւն իրագործելու, մի անվնաս խորհուրդ առաջ տանելու եւ մի անմեղ նպատակ ձեռք բերելու համար, հարկ եղած միջոցին կեղծաւորութիւն, խաբեբայութիւն եւ տեսակ-տեսակ ծուութիւններ գործադրելը ոչ մեղք է, ոչ էլ մարդու պատիւն է ապականում: — Այժմ լսեցէք, սրանք են իմ խրատները, կամ առաջին դասը, որ տալիս եմ ձեզ, որպէս իմ աշակերտիս: Ծովասաբենց Սալբին — որին դուք այնպէս ախտաբորբոք սիրում էք — ձեր կինը լինելու եւ նրան իւր հանդերձեալ ամուսնացուի ճանկերից յափշտակելու համար, ձեր ամենամեծ ջանքը պիտի լինի մօտենալ օրիորդ Սալբիին եւ նրա հետ սէր գցել (սիրաբանել): Այդ հնարաւոր անելու համար, նախ պէտք է բարեկամանալ այն անձերի հետ, որոց հոգաբարձութեան ներքոյ է գտնվում օրիորդը, այսինքն՝ պարոն Արամ Աշխարունու եւ պարոն Յոսրով Մելիքզադէի հետ: Այդ պարոնների հետ բարեկամանալը աւելի հեշտութեամբ կը կատարուի, եթէ դուք բարեհաճէք դիմել նրանց կողմէ կամ ընդունել նրանց կերպարանքը, այսինքն՝ հարկաւոր կեղծաւորութիւնը գործ դնելով՝ նմանէք նրանց, ընդունելով այն

վարդապետութիւնը, որ նրանք ուսուցանում են, եւ հաւանութիւն ցոյց տալով նրանց բոլոր գաղափարներին. ձեր անելիքը հետեւեալը կը լինի, դուք կը սկսէք Աստուածաշունչ կարդալ, կիւրակէ օրերը կ'երթաք նրանց աղօթքի ժողովարանը, երբեմնապէս այցելութիւն կ'անէք նրանց աղջկանց եւ տղայոց վարժարաններին, մի քանի անգամ փոշ կը բաշխէք այնտեղ սովորող որբերին, այդ վարժապետների հետ խօսակցութեան ժամանակ, դուք նրանց գլուխները կ'ուռցնէք ունայն յոյսերի քամիներով, խոստումներ անելով ամէն կերպ օգնել դպրոցի եւ նրանց գործի օրըստօրէ յառաջադիմութեան համար: Ձեր քոյրը կ'ուղարկէք տիկին Սալլաթինի մօտ ուսանելու, այդտեղ է եւ օրիորդ Սալլին. ի հարկէ ձեր քոյրը կը բարեկամանայ իւր ընկերուհու հետ, եւ նրա լեզուով դուք կը սկսէք խօսել օրիորդ Սալլիի հետ: Այժմ, կարծեմ, բաւական բացայայտ են ձեզ իմ ծրագրները: Դուք այդ բոլորը կատարելուց յետոյ, ես էլ իմ պառաւ քոյրը կը սողեցնեմ աղջկանց վարժարանը, որպէս կամաւոր եւ անթոշակ աղախին: Իմ քոյրը աւելի խորամանկ է, քան այն օձը, որ խաբեց առաջին կինը դրախտում, եւ դուրս բերեց այնտեղից: Ու այդ կերպով, դուք՝ ձեր քրոջ միջոցով, ես՝ իմ քրոջ՝ կը սկսինք ներգործել օրիորդ Սալլիի մտքի վրայ: Այս թող լինի մեր առաջին փորձը: Նրանց խօսակցութիւնը ընդհատեց Ծառան, որ ներս մտաւ ղէյլանը ձեռին:

Digitized by Google

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Ո՛վ չէ սիրում բուն բարեկենդանը։ Ո՛վ չէ ուրախանում այդ օրը։ Այդ օրը յետին անճար աղքատն անգամ, իւր ամբողջ չքաւորութեամբ՝ կարողանում է մի չնչին արծաթ գոյացնել, որով գնում է մի քանի բուռն քրինձ, մի փոքր եղ, եփում է փլաւ, եւ արեւելքի այդ ազնիւ կերակուրով, ուրախ անցնում է բարեկենդանը։

Քանի՛ զուարճալի խաղերով են անցնում բարեկենդանը միւս պահեցող ազգերը. բայց հայը՝ իւր բարեկենդանի խաղերի մէջ անգամ ոչ մի ուրախալի իրողութիւն չէ հանդիսացնում, որովհետեւ աշխարհիս թատրոնի մէջ, նրա կեանքը անցել է ցաւալի եղերերգութեամբ, նրա օրը միշտ սեւ է եղել, նա չի՛ ճաշակել ո՛չ մի ուրախութիւն...։ Հայը, Ասիայում, բալբաթոս ազգերի գերութեան տակ միշտ ճնշուած լինելով, իւր բարեկենդանի խաղերի մէջ եւս ձեւացնում է այն տխուր եւ տրտում դէպքերի դառն յիշատակները, որ նրա համար հազարաւոր ախ-ու-վախի, բիւրաւոր արտասուքների պատճառ են եղել։

Զուռնայի բարակ եւ սուր ձայնը, դհոլի, դափ ու դարիայի տրմբտրմբոցը՝ ծաղկաւանի մէջ խաղեր սկսելու նախերգանն են։ Փողոցի մէջ ձիաւոր եւ հետեւակ մարդկանց խուռն բազմութիւն է արշաւում։ Քրդի էշերաթի փառաւոր հագուստով բոլորից առաջ ընթացող ձիաւորը՝ մի հզօր խան է ձեւացնում։ Նրա հալէպեան կերպասից

Digitized by Google

զօլ-զօլ ընկնէլ խայտաճամուկ դրօշակները՝ փողփողում են քամու յորձանքի դէմ, նրա փակեղի գոյնզգոյն փաթեթը՝ փայլում է հարիւրաւոր գոյներով։ Հպարտ, փքուելով, նատել է նա մի պատուական երիվարի վրայ, որի պարանոցը զարդարուած է արծաթի ռաշմայով (պալարակապով)։ Նա զինուած է այդ բարբարոս ցեղի հզօր իշխաններին պէս. արաբական կեռ թուրը քարշ է ընկած նրա կողքին, ձեռքին ունի եղէգնափայտից թեքուն մզրախ (նիզակ)։ Մի լայն հնդկական վահան՝ թափանցիկ, ապակենման կաշուց՝ գցած է նրա մէջքի վրայ, զանազան դաշոյնը մի զոյգ ատրճանակների հետ, թեք խրած են նրա քիրմանի շալէ հաստ գօտու մէջ, փորի վրայ։ Երէկ մենք վեր առնէինք այդ ծպտուած իշխանի երեսից նրա սարսափելի դիմակը՝ կը տեսնէինք մեզ ծանօթ նենգ պատկերը դրա տակ, իւր շէլ աչքերով, սեւ գանգրուած մօրուքով եւ ահաւոր մռայլոտ դէմքով ոչ այլ ոք էր, քան Ռէս Վասակեանցը, այսպէս էր Ռէսի տոհմանունը, որ իւր անհամեմատ ընդունակութիւնը կարող էր ցոյց տալ ամէն տեսակ գործերի մէջ։ Իշխանին հետեւող միւս ձիաւորները նրա թիկնապահներն եւ ծառաներն են ներկայացնում. սրանք բոլորը պարսից հին ձեւի զրահ են հագել. զլխներին թասանման սաղաւարտներ՝ սրածայր վերջաւորութեամբ, երկաթի օղակներից ցանցատեսակ հիւսած հագուստով զրահաւորուած, ձեռքերին նիզակ եւ թուր։

Հետեւակ բազմութիւնը քաղկանում է հետաքրքիր երեխաներից եւ դատարկապորտ մարդկանցից, որ միմեանց հրելով, աղաղակելով, ման են գալիս փողոցից փողոց, եւ ամէն մի դրան առաջ կանգ առնելով կոչում են — "Ա՜լա՛ն, Ա՜լա՛ն" — այսինքն պաշար, պաշար։

Digitized by Google

Տանտէրը դուրս է գալիս։ Մի լեզուանի ալտլի (շաթր) պատգամախօսում է — "Ահմատ խանը — որին Աստուած երկար կեանք, փառք եւ պատիւ տայ, որի թուրը Աստուած միշտ կտրուկ անէ, եւ իւր թշնամիների վրայ յաղթութիւն տայ — Ահմատ-խանը, մեր ամենակարող իշխանը, մեր գլխի տէրը՝ իւր թշնամիների հետ նոր պատերազմ ունենալու համար, դուք, ամենախոնարհ հպատակներդ պէտք է Աո-լօ-ղի տաք նրա քաջ, պատերազմող զօրքերին, որ այժմ հացի կարօտ են։ Եթէ մի անբախտ մարդ համարձակուի այդ բարձրագոյն հրամանին դէմ կենալ — նա իւր գլխի տէրը չէ"։

Ամէն տանից դուրս են բերում գինի, ալաղ, եղ, բրինձ, ձու, տալիս են այդ մարդկանց, որ դրանք հաւաքում են իրանց պարկերի մէջ եւ հայցելով խանի հզօր ձեռքի հովանաւորութիւնը՝ երկարակեցութիւն են մաղթում նրան։ Բայց խանը չէ կամենում հեռանալ, շաթիրը նրա կողմից ձայն է տալիս, թէ խանը պահանջում է պէլէ-էրտի, այսինքն՝ նրանց հացը ուտելու համար — պատմիների վարձ. տալիս են մի քանի աբասի փող եւս։

Այսպէս, գիւղի բոլոր տներից առատ պաշար հաւաքելով, գնում են գիւղից դուրս, մի առանձնացած տեղ եւ բոլոր ընկերներով, մինչեւ կէս գիշեր սկսում են կերու խում անել եւ ուրախանալ։

Մենք աւելորդ ենք համարում նկարագրել բարեկենդանի այն բազմաթիւ խեղկատակները, որ անճոռնի հագնուած եւ ծիծաղաշարժ ձեւերով, աւանակների վրայ նստած՝ այդ օր շուռ են գալիս փողոցէ փողոց։

Արեւը պնալով մտնելու էր իւր մուտքին։ Ժամատան կոչնակները ժողովուրդը եկեղեցի էին հրաւիրում։ Բայց, այդ օր ով է կոչնակի ձայն լսողը, կամ ժամ

ու աղօթք միտ բերողը, բոլորը հարբած՝ քէֆի մէջ են։ Ժամ էին եկել ժամհարը, եւ տարիքներով բեռնաւորուած, ամէն բանից զրկուած մի քանի ալեւորներ — պառաւների հետ։ Ժամհարը երկար սպասելով, երբ տեսաւ թէ տէրտէրներն եւս չեկան, անճարացած ինքն է օրհնում ժամը. "Հայր մեր„ ասաց, կանգնեց քահանայի տեղը, մի քանի ծունկ դրեց, երեսն խաչակնքեց. պառաւներն ու ծերունիները նրա օրինակին հետեւեցին եւ ժամը վերջացաւ։

Ժրագլուխ Մկոն — որ նախածանօթ է մեր ընթերցողին — եկեղեցու դռները շառաչմամբ փակեց, եւ ահագին ծանր բանալին գրպանը դնելով, դուրս եկաւ ժամատան բակից եւ քայլերը ուղղեց դէպ գիւղամէջը, այսպէս լսօսելով ինքն իրան — "ո՛րքան կամենում էք՝ կերէք, ո՛րքան կամենում էք՝ խմեցէ՛ք, ա՛յ յիմարներ, բայց առաւօտեան գարձեալ պիտի քաղցենաք, այնու հետեւ, յիսուն օր շարունակ ձեզ հետ եղբայր են ոսկն եւ լոբին։ Հոգիներդ կը դուրս գայ, ա՛յնքան կ'ուտէք, որ փորներդ կ'ուռչի, դըհօլ կը դառնայ։ Պասը եկել, գիւղի դրանն է հասել, շատը գնացել քիչն է մնացել. այժմ ի՛նչ ուզում էք արէք . . . ։ Առաւօտեան, երբ քահանան եկեղեցում կը կարդայ "Լուացարո՛ւք եւ սրբացարո՛ւք„, դուք շտապում էք տուն գնալ եւ կարասիքն ու զուտկի օրերը գործածած ամանները լուանում էք, որ պասուայ համար եղոտ չը լինին . . . ։ Արդեօք դուք մտածո՞ւմ էք լուանալ ձեր հոգու ամանը — ձեր սիրտը, որ ա՛յնքան ապականուել է կեղտերով . . . ։ Ո՛չ, ամենեւին ո՛չ . . . , որովհետեւ դուք չէք մտածում աղքատի եւ տնանկի մասին։ Ահա ես, օրինակի համար — մի ամբողջ գիւղի ժամհարն եմ. մի այսպիսի ուրախալի օր իմ ընտանիքս դեռ տեսած է, եւ

իմ ձեռքը մի բաժակ գինի տուող չէ եղել, իմ աղիքները ներսից աղաղակում են — այ մարդ, սովից կը մեռնիս, գլխիդ ճարը արա՛: Ախ, տէր Մարկոս, ուր է քո Տեառընդառաջի օրուայ խոստումը, թէ՝ բարեկենդանին մի լաւ քէֆ կ՛անենք„, բայց այսօր քո Մխօին չես ճանաչում. . . :

Այսպիսի տխուր տխուր մտածմունքներով լցուած, ժամհարը, իւր բախտից եւ իւր վիճակից գանգատուելով, իւր կեանքը անիծելով, գլուխը քարշ տցած, գնում էր փողոցի միջով չը համարձակուելով բարի գիւղացուդուռը բացելու եւ իւր փորին մի փոքր կեր տալու:

Ոյն միջոցին պարոն Արամ Աշխարունին եւ նրա ընկեր պարոն Յոսրով Մելիքզադէն, իրանց մելամաղձական բնակարաններից դուրս գալով գնում էին գիւղից դուրս — զբօսանքի եւ հասարակաց ուրախութեան մասնակից լինելու համար: Այստեղ — տափարակ դաշտի վրայ խաղում էին ամբողջ գիւղի տօնասէր մարդիկ. բայց ափսո՜ս, որ մի անբախտ սովորութեամբ՝ նրանց մէջ ոչ մի կին չէր երեւում, միայն այստեղ ու այնտեղ հեռուն, պատերի ետեւը կուչ եկած — գաղտուկ նայում էին մի քանի աղջիկներ, այն եւս, մի մարդ նրանց կողմը գնալիս — փախչում, անհրեւոյթանում էին:

Երկու բարեկամները երկար պտտելով, զարմացան, չը գտնելով Տէր-Առաքելենց Ռուստամը, նա, որ միշտ այդպիսի հանդէսների դիւցազն էր, նա՛, որ այնքան շատ էր սիրում ազգային խաղերը: Ներանք շարունակեցին որոնել, բայց ո՛չ ձիարշաւների, ո՛չ բռնցքամարտերի եւ ո՛չ էլ ըմբիշների մէջ չը կարողանալով նրան գտնել, յուսահատուած գիւղ դարձան: Ներանց հանդիպեց ժամհարը, որ թոնթորալով գնում էր.

— "Այս գիշեր միակ օգուտը, որ հասանելու էր ինձ, որպէս ժամհար, մի պսակից, այն եւս անիրաւները ալգեցին,,, ասաց նա իւր վերջին գանգատը։

— Ի՞նչ պսակ, հարցրեց նրան պ. Մելիքզադէն։

— Ծովասաբենց Սալբիին, Տէր-Առաքելենց Ռուստամի հետ, պատասխանեց ժամհարը։

— Ո՞վ ալգեցեց։

— Նա՛, որի ձեռքումն է կապելու եւ արձակելու օրէնքը, պատասխանեց ժամհարը խորհրդական եղանակով։

Նրանք թողնելի ժամհարի հետ աւելորդ հարցուփորձը, եւ շտապեցին Տէր-Առաքելենց տունը։

Առանց երկար ծանօթ լինելու Ռուստամի հետ, մի հարցասէր մարդ մտնելով նրա անձնական սենեակը եւ նկատելով նրա միջի կահ-կարասիքը, որ լիովին յատկանիշ էր նրա բնաւորութեան, կարող էր ստոյգ գաղափար կազմել նրա անձնաւորութեան մասին։

Ռուստամի առանձնարանը շինուած է պարսկական ճաշակով, եւ թոյլ լուսաւորուած երեք պատուհաններով։ Ներս մտածին պէս, տեսողութիւն հրապուրող առաջին առարկան հանդիպակաց պատի երեսից կպարտ քարշ ընկած եւրոպական երկփողանի հրացանն է։ Մի այլ հրացան, Ղուիմի գործ, եւ մի քանի զոյգ ատրճանակներ — կարգով դրուած են նրա մօտ։ Սենեակի պատի միւս ճակատից արծաթի գօտուց կախուած է ահագին Յօրասանի թուրը լեզգու երկսայրի խանջալի հետ, եւ զանազան ձեւերով վառօդի եւ գնդակների ամաններ։ Դրանցից ոչ այնքան հեռու, մի անկիւնում հանգարտ թեք են ընկած երկայն եղեգնափայտեայ նիզակը, նրա մօտ թափանցիկ կաշուց շինած լայնեզը վահանը, պատերազմական կացնի հետ։ Միւս անկեան մէջ, դրան մօտ տեղաւո-

Digitized by Google

րուած են նրա ձիու թամբը, սանձը եւ այլ պիտոյքները իրանց պարագաներով: Սենեակի պատերի վրայ — որ յատուկ է բոլոր ասիական տներին — կան զուգահեռաբար բաժանուած դալարանները, որ լի են տիրոջ ճաշակը ցոյց տուող այնպիսի առարկաներով, որոնց գլուխն են կազմում Ռուստամի ընթերցման ամենասիրելի գրքերի հատորները — Հոմերոսի Իլիականը եւ Ոդիսականը, Մովսէս Խորենացի, Ագաթէ, Հռոմմայեցւոց եւ Յունաց պատմագրեր, Փրիդովսու Շահ-Նաման, Թարգ-Նադրը, Հաֆիսի եւ Սադիի երգերը:

Ասիական սենեակների ամենազարդարուն կողմը վառարանի կողմն է: Կրակի սրբազան պատիւը, ո՛չ քրիստոնէական եւ ո՛չ էլ մահմեդական դարերին չէ կորցրել իւր նուիրական պաշտօնը: Ա՛յդ է պատճառը, որ վառարանը դրւում է սենեակի բարձրագոյն ճակատում, որ համարւում է սենեակի պատուաւոր նստատեղին եւ արժանաւոր հիւրերը միշտ հրաւիրւում են վառարանի աջ եւ ահեակ կողմերում նստելու: Ռուստամի վառարանի մի կողմում քարշ էր տուած Հայկի հսկայաձեւ պատկերը, իսկ միւս կողմում — Արամի: Նրանց մօտ կարգով շարուած էին մնացեալ հայոց քաջերի՝ Պարոյրի, Արշակի, Տիգրանի, Արտաշէսի, Վարդանի եւ այլոց պատկերները:

Ռուստամը բացի դրանից, այլ սենեակ չունի. նրա կեանքի բոլոր պիտոյքները գտնւում են այդ սենեակի մէջ: — Այդտեղ է նա գիշերները քնում, կարդում, երգում, եւ նուագում. այդտեղ է նա ընդունում իւր հիւրերը, այդտեղ է նա անցնում իւր կեանքի ուրախ եւ տրտում օրերը . . . :

Տիրուհեան ոգին սեւ թեւերով գրկել էր Տէր-Առաքելենց տունը: Նրանք ոչ միայն հարստանիքի պատրաս-

Digitized by Google

տուբիւն էին տեսել, այլ եւ հրաւիրել էին հեռու գիւղերից իրանց բոլոր մերձաւոր ազգականները, յուսալով շաբաթ գիշեր պսակը կատարել տալ, իսկ կիւրակէ, բարեկենդանի տօնախմբութեան հետ՝ վայելել հարսանիքի ուրախութիւնն եւս, երբ յանկարծ լսեցին այն բօթաբեր լուրը, թէ Առաջնորդի գործակալը հրամայել է պսակը չը կատարել, "որովհետեւ կարօտ է խորին քննութեան„:

Ռուստամը միայնակ նստած իւր սենեակում, անձնատուր եղած մտաւոր յափշտակութեան, իւր սիրածի կրակով վառուած, այդ միջոցին տխուր եւ յուսահատ ձայնով երգում էր իւր տաղը.

Երբ մանկութեան անցան օրերը,
Եւ պատանու ստացայ հասակ,
Անմեղ սրտումն դո՜ առաջին
Վառեցիր ջերմ սիրոյ կրակ:

Դո՜ առաջին միտքը մանկական,
Որ սիրում էր խաղերը անգէտ,
Ցափշտակած դէպ քեզ թովեցիր,
Եղար մտածմանցս միջակէտ:

Թուի թէ երազ առ աչք...
Ամէն վայրկեան, ամէն րոպէ,
Սիրուն պատկերդ աչքիս դէմ՝
Միշտ յարաժամ կը հանդիպէ:

Կարծես կախարդիչ զօրութիւն
Կամ թէ մի թիլիսմ դիւթական
Գրաւել են խելք ու միտքըս,
Միշտ +եղ սիրել, իմ անման:

Digitized by Google

Միշտ ինչ սիրել, միշտ ինչ պաշտել,
Դու՜ իմ աստուածդ, դու՜ իմ յոյս,
Միշտ ինչ գովել, միշտ ինչ երգել,
Քանի կայ կեանք, քանի կայ լոյս։

Գնում եմ արտ, հասկերը ոսկի,
Որ ցանեցի իմ ձեռքով,
Խշխշում են հով զեփիւռից,
Կալսում անուշ մեղմ ձայնով։

Երբ արշալոյսի պահուն՝
Մտնում եմ կանաչ այգին,
Ո՜հ, քնութիւնն էլ ինձ հետ
Ներդաշնակէ նազելին։

Առուակի կարկաչուն ձայն,
Կանաչ խոտեր, ծառ եւ ծաղկունք
Լսեցնում են ինձ ո՜ անուն՝
Հեզիկ հոդմեր, երգող թռչունք։

Այն ի՜նչ օր էր, օ՜ր երջանիկ...
Հազի՜ր անգամ տամ երանի.
Երբ ես տեսայ արձակ դաշտում՝
Այն երկնային սիրուն հուրի։

Ո՜հ, այն օրը նուիրուած էր
Ծաղիկներուն թագուհուն,
Որ նարկիզ, մեխակ, շուշան
Պէսպէս վարդերով անհուն —

Հիւսել էր մի պսակ նախշուն,
Պճնել գարունը հրաշափառ,

Digitized by Google

Եւ զարդարել Աստուծոյ տուն՝
կամ բնութեան շքեղ տաճար։

Երջանիկ էր, այն օր՝ եդեմ[1]
Գարնանամուտի նման,
Ան հիշատակ ես կը տանեմ,
Ինձի հետ խոր գերեզման...։

Երրորդ անգամն էր, այո՛,
Ես քեզ տեսայ, ով իմ հրեշտակ,
Դո՛ւ մի խումբ աղջիկներով՝
Նստած էիր այն ծառի տակ։

Նորաբոյս խոտերի վրայ
Ուրախութեան կազմած խրախճան՝
Ձեր սրտերը զմայլանքով լի՝
Վայելում էր սէր անվախճան։

Ես էլ իմ ընկերաց հետ,
Խնջոյքի մէջ հեռուն նստած՝
Ցանկարծ ստացայ գոյնզգոյն
Ծաղիկներով մի փունջ կապած։

Իակոյն հասկացայ ես շուտով,
Ան քո ձեռքերով քաղած էր.

---

[1] Ահեն տեղ՝ Թէ լուսաւոր, Թէ ամպիկ եւ Թէ վայրենի ազգերը միշտ հանգիստաւոր ուշադրութիւններով բարեւում են գարնան գալուստը։ Արեւելքում, առաւելապէս հայերը, որ միշտ գործ ունեն երկրի եւ հովի հետ, ուրախալի սիրակցութեամբ ասնում են նորեկ գաղուհը։ Երբ մանաւանդ կանայքը, նորահարսունքը, մանուկ աղջկերքը՝ ազատասիրով իրանց անուշիկ փակեալ բանաստեղծութիւնից՝ խումբ խումբ երգ երգելով, գոփ ածելով, դուրս են գալիս արձակ դաշտերում՝ հաճուրելու եւ զբոսելու գարնան ազիները։

Digitized by Google

Այն նորաբոյս ծաղիկները
Ինձ բուրեցին քո սուրբ սէր[1]։

Զորրորդ անգամն էր ես տեսայ,
(Տիրոջ Համբարձման օրն էր).
Շատ նայեցայ, գաղտնի, հեռուից,
Ո՛հ. չատ տանջեց ինձ քո սէրս։

Ժամտան այգիում աղջիկները՝
Ջանգի-լո-ն էրգում էին,
Եւ վիճակի սափորի մէջ՝
Իւրեանց բախտը կ'որոնէին։

Այո՛. դու էլ այդ դիւթական
Ամանի մէջ արկիր վիճակ,
Ու իմ սէրը այն սուրբ օրից
Սրտիդ հետը կապուեց անքակ[2]։

Այն սուրբ օրից Աստծոյ առջեւ՝
Մենք դրեցինք այդպիսի ուխտ. —

---

[1] Հայերը — առաւելապէս Պարսկաստանում, որպէս մի առանձնաբնակ ազգ, ընկերական կեանքից, զուրկ հասարակաց զուարճալի պատահարներից, — ամէն տարուայ որոշեալ օրերում, կարի սրբախուզութեամբ ընդունում են մի քանի տօներ, որոնք պատճառ էին տալու նրանց մեծանալ միմեանց։ Առաւելապէս գեղեցիկ տեսք միշտ անձկութեամբ տպաւորում է այդ սրբախոյզ տօներին, երբ նրանք միջոց էին գտնում առնել խրճիթց բարեկամներըը, իրանց սիրելիները եւ որսալ նրանց բերանից մի քանի սիրոյ խօսքեր ... : Այդպիսի տօներից մինն է Մէյլիւ-ը, երբ անգաստանում այցելութիւն է լինում։

[2] Համբարձումի վիճակը կամ վիճակախաղը պէտք չէ համարել մի յիշատակ վիճակաւ ընտրութեան Մատաթիա առաքելոյն, որ կատարուել է մեծ պենտեկոստէի վերջին, — այլ համարելի է մի առանգութիւն, հեթանոսական դարերից ժառանգած, որպէս եւ նոյն օրում լինում է ծաղկահմայութիւն։

Digitized by Google

"Ա՛ռնիլ միասին, ապրիլ միասին,
Ողբան կայ կեանք, ողբան կայ շունչ„:

Մի օր եւս կաթնաձորում՝
Աղբիւրները կը խաղային ջո՛ղնայ[1].
Հարսանիք էր խընկինելի[2].
Անտեղ նոյնպէս ես ինձ տեսայ:

Ես ինձ տեսայ, նազ նազելով՝
Շեագդ առիր դայիրան,
Եւ ածեցիր եւ պար եկար,
Քանի՛ սիրուն... աննման...:

Դու հեռուից ինձ նայեցար,
(Սիրտս ո՛ղբան այրվում էր...)
Լեզուդ մունջ էր, բայց աչերդ՝
Ցայտնաբարբառ խօսում էր:

Քանի՛ վարդեր դո՛ւ թափեցիր՝
Քո լուսափայլ թշերէդ.
Քանի՛ նետեր ինձ զարկեցիր՝
Այն սեւորակ աչերէդ:

Մի օր իւրեանց այգումը՝
(Չէր նա յաւերժահարս դաշտային.)
Գլխին դրած ծաղկեայ պսակ,
Մէրգ կը քաղէր զամբիւղ ձեռին:

Առաւօտեան բերկրարար հովին,
Նա երգում էր որպէս հրեշտակ,

---

[1] Ջո՛ղնայ — աղբիւրների պարահանգէս:
[2] Խընկին — կուկլա, պատուճառապատանք, շինծու տիկին:

Digitized by Google

Եամ թէ վարդի կանանչ թփին՝
Ուրախաձայն սիրուն առխակ։

Նա տեսաւ ինձ, ճկվլալով
Թռչնիկի պէս, ինձ մօտ վազեց,
Գրկեց քնքշիկ ձեռքերովը,
Իմ թուշը իւր թշին սեղմեց։

Ցանկարծ որպէս նոր գլորա՝
Նա ինձ տուաւ մի ծաղկեփունջ.
Եախարդուած ծաղկանց անուշ հոտը՝
Հոգուս միչեց նոր կեանք, նոր շունչ։

Այն ի՞նչ խօսք էր, որ նա ասեց.
—. "Այդ անուշահոտ վարդերը՝
Ու օրինակ քեզ սիրական,
Ծաղկի պէս միշտ թարմ թող լինի քո սէրը։"

"Բայց անհոգ կաց, իմ նազելի.
Ասացի ես հիացած.
"Դու իմն ես յաւիտենից.
Մեր ճակտին այսպէս է գրուած։

"Քանի արեւն երկնքից՝
Ծագում է ինձ պայծառ լոյս.
Քանի շունչս ունի եղումուռ,
Քո սուրբ սէրը կից է հոգուոյս։

"Քանի հողանիւթ մարմինս՝
Ծծում է պարզ օդ եթերին,
Այդ օրերի րոպէք ոսկի՝
Միշտ կը հնչուին մէջ իմ սրտին։

Digitized by Google

"Ձեմ թողլ տալ, սիրուն ձեռքդ
Բռնել մի այլ տղամարդ,
Ձեմ թողլ տալ ժանտ փուշի հետ՝
Ծաղկծկուի մի քնքոյշ վարդ։

"Բայց երբ որ կը գայ մահը,
(Ես հնազանդ եմ իմ օրհասին)
Քո ձեռքովդ այդ կաղնիի տակ՝
Ի՛ամփոփես իմ ցուրտ մարմին։

"Գլխիդ հիւսերն քամուն տուած՝
Դու հերարձակ մի սգաւոր,
Գերեզմանս կը լուանաս՝
Քու արտասուքներով յորդոր։

"Դու կատարէ, իմ բարեկամ,
Քո առ իս սիրոյ վերջին պարտքը,
Գերեզմանիս վերայ ծխէ՛
Քո ձեռքովդ անուշ խունկը։

"Ա՛յդ մեծ կաղնին մեր ըղձյներուն
Նուիրական սրբարան,
Ուր հովանոյ տակ Թողլ պահէ
Իմ ոսկերաց գերեզման։

"Նորա ոստից դու իմ սազը
Պահէ ինձ վերայ ուղղակի.
Թողլ զեփիւռից ձայն տան լարերն
Եւ հնչեցնեն՝ "Սալըխ,, — "Սալըխ,,։

Քաղցնեցաւ իմ նազելին,
Որպէս ահեղ հարուածքից,

Digitized by Google

Ձեռքս բռնեց կարեկցաբար,
Ինձի խօսեց նա այդպէս.

— "Այդ խօսքերը, իմ սիրելի,
Ինձ բերում են սարսափ, ահ,
Չի մահուան խօսքը խիստ տխուր է
Եւ խիստ արտում, որպէս մահ։

— "Մեր կեանքը, ինձ հաւատայ,
Որպէս պճնած մի գարուն,
Օր ըստ օրէ ծաղկեցնէ
Իւր վարդերը թարմ, սիրուն։" —

Ա՛խ ջո՛ւր այդպէս գուշակեցիր.
Բայց այժմ ինչո՛ւ ժանտ փուշեր
Վրդովում են մեր կեանքը,
Ծակոտում են օր ու գիշեր։

Digitized by Google

ԺԷ.

Ա Ր Գ Ե Լ Ք

Պարոն Աշխարունին, այդ նորահաս աստուածաբանը, չոր ու ցամաք զգացողութեան տէր մարդ լինելով, նրա հոգին ընդունակ չէր բանաստեղծութեան վսեմափառ գեղեցկութիւնները վայելելու, բայց եւ այնպէս, Ռուստամի երգը մի մոգական զօրութեամբ ազդեց նրա վրայ, եւ նա, պարոն Մելիքզադէի հետ երկար կանգնելով Ռուստամի դրան առջեւ, ականջ դնելուց յետոյ, ներս մտան։

— Ի՛նչ ես թուլասիրտ Պարիսի նման այդպէս մեղկութեամբ գեղգեղում, հեգնութեամբ ասաց պարոն Մելիքզադէն։

— Ա՛յժմ ինձ վրայ ծիծաղելը անտեղի է, Յոսրով, ասաց Ռուստամը, վշտահար ձայնով, — եթէ դուք գիտնայիք, ինչ դիւթեան մէջ եմ ես, շուտով կը յօժարուէիք մխիթարել ինձ։

— Փոքրիկ լճակները ալեկոծվում են նաեւ բարակ հողմերից, փոքրիկ սրտերն եւս ընչին ցաւերից են վրդովվում, ասաց պարոն Մելիքզադէն։ — Բայց դրանք ձեր մեծահոգութիւնից հեռու են. — դուք միշտ, որպէս ամէն մի տղամարդ, պարծենում էք ամուր եւ հաստատուն բնաւորութեամբ։

Եթէ պարոն Աշխարունին բացակայ լինէր այնտեղից, Ռուստամը մի կողմ դնելով ամօթխածութիւնը, պատաս-

Digitized by Google

խանելու էր, թէ "Սէրը յաղթում է բոլոր կրքերին, բոլոր հոգեկան զօրութիւններին„:

Պարոն Աշխարունին ընկզմուած խորին մտածութեանց մէջ՝ չէր խօսում: Նա, փորձուած մարդկանց հեռատեսութեամբ, մի վտանգաւոր գաղտնիք էր նկատում Ռուսաստանի պատկը արգելելու մէջ, եւ, քննութեան անունով պատկը մի քանի օր յետ ձգելու պատճառը մի միջոց էր համարում, երբ, ով գիտէ, ինչ սատանայական որոգայթներ պիտի լարուէին:

Մահտեսի Աւետիսը, լսելով պարոն Աշխարունու եւ պարոն Մելիքզադէի գալուստը, որդու սենեակը մտաւ — իւր լսուած սրտի դառնութիւնը նրանց առջեւ թափելու համար: Նա, սովորական ողջոյնը տալուց յետոյ, երկար, տխուր դէմքով լուռ նստած ծխում էր իւր երկայն ծխափողը: Հիւրերը նոյնպէս լուռ էին, տեսնելով Մահտեսի Աւետիսի տխրամած դէմքը, մինչեւ նա խօսեց.

— Ես ոչքան էլ սառնասիրտ էի դէպ հայոց եկեղեցականները, ես կարող եմ ասել՝ չարաչար ատում էի նրանց իրանց արատաւոր ընթացքի համար, բայց տակաւին մի հնամոլ ազգասիրական զգուշմունքով նրանց չէի կամենում միանգամայն ոտքի տակ առնել, որովհետեւ դեռ կասկած ունէի նրանց մասին իմ կազմած կարծիքների վրայ: Բայց այս պատկի գործը ինձ միանգամայն դուրս բերեց ամէն երկմտութիւնից, եւ յայտնի կացոյց իմ առջեւ նրանց բոլոր խաբեբայութիւնները:

Պարոն Աշխարունին ոչինչ չը խօսեց. նա լուրհլուդական կերպով շարժեց իւր գլուխը:

Նոյն միջոցին, մի մարդ միայնակ շարժվում էր նահանգապետի մռութեան մէջ, նա աւելի մօտ գնաց դրանը, եւ սկսեց ականջ դնել:

Digitized by Google

— Այդ պսակի համար այդքան հոգս քաշել բողոքովին աւելորդ էր, Մահտեսի, ասաց պարոն Մելիքզադէն վճռական եղանակով — ես վաղուց ասել եմ, եւ այժմ էլ կրկնում եմ, որ եկեղեցականները ազգի կռնակի վրայ մի աւելորդ բեռն են, եւ մենք երբեք պարտաւոր չենք անուցանել եւ գիրացնել անպիտան տէրտէրները, վարդապետները եւ այլն, եւ այլն, որովհետեւ քրիստոնէութիւնը չունի մի որոշեալ դաս ժողովրդականի՝ ծնուած հայր Բրահմայի գլխից։

— Ի՞նչ էք ուզում ասել, հարցրեց պարոն Աշխարունին հանդարտութեամբ։

Նախասենեակի մարդը ականջը աւելի մօտեցրեց դրան ճեղքին։

— Ես կամենում եմ ասել, մի յիմար տէր Մարկոս, մի անպիտան տէր Կիրակոս իւր նիւթական օգտի համար, կամ որեւիցէ այլ չարամտութեամբ — եթէ չէ կամեցել կատարել մեր բարեկամ Ռուստամի պսակը, այդ մեղ փոյթ չէ, եւ չարժի դրա համար անհանգիստ լինել, որովհետեւ ամուսնութիւնը, ըստ իմ կարծիքի, կրօնին ոչ մի վերաբերութիւն չունի, լինելով մի անկախ քաղաքական դաշնադրութիւն մի արուի եւ մի էգի մէջ, որով նրանք կապվում են, կամ լաւ եւս է ասել — ընկերանում են՝ իրանց սեռական խորհուրդը կատարելու՝ եւ իրանց կեանքը համաշխարհային մարդկութեան պիտոյքներին համակերպելու համար . . . ։

— Ցեռոյ։

— Եթէ ինձ կը լսէք, առաջ տարաւ նա — այստեղ կայ երկու օտար մարդ — դուք եւ ես. մի երրորդն եւս կը հրաւիրենք, այնուհետեւ բերել կը տանք օրիորդ Սալբին. երեք մարդ բաւական է վկայելու, որ օրիորդ

Digitized by Google

Սալքին դարձաւ պարոն Ռուստամի կինը, իսկ սա՝ նրա ամուսին այրը. եւ դա կը դառնայ մի արդարացի պսակ եւ ամուսնութիւն։

Նախասենեակի մարդը սկսեց աւելի անհանգստութեամբ շարժուել. վերջին խօսքերը կարծես անտանելի էին նրան. նա կծկուեց դրան ետեւ, որ աւելի պարզ լսէ, բայց յանկարծ երբ տեսաւ, որ Ծառան մի ճրագ ձեռքին իրան էր մօտենում՝ արագութեամբ վեր ցատկեց, եւ սենեակի դուռը բացելով՝ ներս մտաւ։

— Ահա ես, երրորդ մարդը, ասաց նա ծիծաղելով. բարի իրիկուն... Աստուած ձեր բարի խորհուրդը յաջողէ..., բայց ներողութիւն՝ պարոններ, բիւր անգամ ներողութիւն, պարոն Մելիքզադէ, ես յանկարծակի ընդմիջեցի ձեր խօսքը. ես բոլորովին բաժանորդ եմ ձեր կարծիքին. եղբայրներ, այդ ինչ Աստծոյ պատիժ են եղել մեր գլխին եկեղեցականք աստուածները... ինչ որ ուզում՝ անում են. եւ իրանց կամեցածի պէս՝ մեզ կապկի նման պար են ածում...։ Եթէ մենք, աշխարհականներս մեր իրաւունքը ցոյց չը տանք, թէ կարող ենք ապրել եւ կառավարուել առանց տէրտէրների եւս — ճշմարիտ եմ ասում, այդ փչացածները երբեք չեն ճանաչի իրանց պարտքն ու չափը։

Պարոն Աշխարուհին իսկոյն հասկացաւ, որ եկողը առաջուց իրանց խօսակցութեան ականջ էր դրել։ Ու իրաւ, եկողը այդպիսի ընդունակութիւններով օժտուած՝ Ռէս Վասակեանն էր, որ մի կերպ սողացել էր Տէր-Առաքելենց տունը, պահի արգելքից յետոյ նրանց վերջին դիտաւորութիւնը լսեսելու համար։ Յանկարծ, լսելով պարոն Մելիքզադէի վճիռը, նա կապկօրէն հետեւեց նրա կարծիքին, տեսնելու՝ թէ ո՞ւր կը հասնէր դրա վերջը։ Նա

Digitized by Google

մոտդիր էր, այդ առաջարկութիւնը ընդունելութիւն գտած֊ծին պէս, մի կերպով աշխատել հերքել նրան։ Բայց պարոն Աշխարունին նրան դուրս բերեց այդ դժուարու֊թիւնից — իր սովորական հանդարտ ձայնով առար֊կելով.

— Սկսեալ սաղմեան Մելքիսեդեկից եւ ղեւտա֊կան կարգից, քահանայութիւնը Քրիստոսի միջոցով ան֊ցել է եւ մեզ — քրիստոնեաներիս։ Մենք չենք կարող հերքել քահանայութիւնը, բայց կարող ենք մաքրել եւ սրբել նրան իւր այժմեան աւելորդ կեղտերից եւ համա֊ձայն կացուցանել նրան Աւետարանի վարդապետութեանը։ Իսկ, ամուսնութիւնը, որպէս քաղաքական մի օրէնք աշ֊խարհական մարդկանց ձեռքը տալուն ես համամիտ չեմ. — ամուսնութիւնը, որպէս մարդկային կեանքի մի ծան֊րակշիռ եւ խորախորհուրդ իրողութիւն, եւ որպէս մի սուրբ բան՝ պիտի մնայ Աստուծոյ եւ նրա կրօնքի ներ֊գործութեան տակ։

Վասակեանը իսկոյն զգաց իւր սխալը, եւ տեսնելով, որ պարոն Աշխարունին իւր դատողութեան ծանրութեամբ ծռեց կշռքի մի թաթը, ինքը անյարմար էր դատում թեթեւ կողմը մնալ. նա մոտածեց ցատկել այն կողմը, որ այդ ժողովի մէջ աւելի համարում ունէր։ Այդ դժուա֊րութիւնից նրան հանեց Մահտեսի Աւետիսը իւր հար֊ցումով.

— Ո՛ւս, դուք ինչ էք կարծում։

Կեղծաւորը օգտուեց յարմար պատեհութիւնից եւ խոհեմ պատասխանեց.

— Ճիշտն ասած, ես իմ հոգու բնական տրամա֊դրութեամբ մի մազաչափ եւս չեմ կարող ծռուել ճշմար֊տութիւնից — պարոն Աշխարունու ասածը ուղիղ է։

Digitized by Google

— Ասենք թէ ուղիղ է, նրա խօսքը կտրեց պարոն Մելքիզադէկն — բայց ինչ է մեր ձարը, յաւիտեան մենք գերի պիտի մնանք եկեղեցականների շահավաճառութեան:

— Ես ձեր ասածին համաձայն եմ. Առաջնորդի գործակալի միտքը, պարոն Ռուստամի պատկը յետաձգելու մէջ՝ ուրիշ ոչինչ չէ եղել՝ բայց սոսկ շահավաճառութիւն, պատասխանեց Ռէս Վասակեանը կամենալով վարագուրել այդ կործանման խորհրդի իր մասնակցութիւնը:

— Բայց, լսեցէք, պարոններ. ես, որպէս մի մարդ, որ արտով աւելի մօտ է ձեզ, ես, որպէս մի Ռէս[1], որ աւելի գործ ունիմ մեր հասարակութեան հետ, քերթուս աւելի ատոյգ քան թէ դուք՝ ճանաչում եմ մերայիններին հոգին եւ նրանց, այսպէս ասած — յիմար նախանձախնդրութիւնը: Ձեր այժմեան դրութեան մէջ ձեզ անվայել է այնպէս կտրուկ վարուել, որպէս պարոն Մելքիզադէկն էր խորհուրդ տալիս, որովհետեւ, մի այդպիսի տարապայման ձեռնարկութիւն այնքան խորթ է մեր ժողովրդի աչքին, որ նա իսկոյն կը կատաղեցնէ մոլեռանդ եւ անհաւատ ամբոխը, աւելի ատելութեան տեղիք կը տայ: Ուր մնաց, առանց այդ եւս, ձեր տարածած անաղօտ լոյսը, տեսնում էք, ոչպէս շլացնում եւ ծակոտում է ռամիկ խաւարասէրների աչքերը:

— Այդպէս է Ռէս, բոլորովին այդպէս է, կրկնեց Մահտեսի Աւետիսը:

— Առաջնորդի գործակալը պատճառ է գտել պատկը արգելելու, առաջ տարաւ Ռէսը — ասելով, թէ քննող քահանաները սխալված են եղել, օրհորդ Սալբին եւ պա-

---

[1] Ռէս կամ Ռայիս = հովիւ, գլխաւոր կամ իշխան. այսպէս կոչվում են հայոց գիւղերի տանուտէրերը, որ Մելքիզ. տոհմից են: Թուրքերէն կոչվում են փեհփայ կամ փոխոփայ:

Digitized by Google

րան Ռուստամի մէջ եղած խիստ մերձաւոր արիւնակցութիւնը չը նկատելով, որը, ըստ Հայաստանեայց հայրապետական կանոնադրութեան — արգելում է պսակը։ Բայց այդ անտեղի գիւտը, ուրիշ ոչինչ չէ, բայց լարուած որոգայթ, նիւթական օգուտ՝ կամ այլ խօսքով — շահավաճառութիւն որսալու . . . ։

— Աւետարանի մէջ չը կայ մի այնպիսի կանոն, թէ արիւնակցութիւնը ամուսնութեան արգելք է, բացի մի քանի կանոններից, որ մեզ յայտնի են հին կտակարանից, ասաց պարոն Աշխարունին հեղինակաւոր ձայնով. — Ուրեմն, Ռէս, ասացիք, "մեր Հայաստանեայց հայրապետական կանոնադրութեան համեմատ„. ուրեմն մենք պէտք է ընդունե՞նք բացի Քրիստոսից, մեր կրօնքի երկրորդ, երրորդ եւ այլն եւ այլն հեղինակներ, որպիսիքն են հայրապետները։

— Օրհնած, այդ ո՞ւր էք խօսում, նրանց խօսքը ընդհատեց Մահտեսի Աւետիքը. դիցուք թէ "հայրապետական կանոններ„ եւս լինին սուրբ Աւետարանի մէջ. այդ "հայրապետադիր կանոնները„ պիտի արգիլեն մերձ եւ արբայպղծական ամուսնութիւնները. բայց, ողորմութիւն արէք, իմ որդու արիւնը Ծովասաբենց արիւնից բաժանուած է՝ սկսեալ Նոյի օրերից։ Ամենեւին ձեր բացատրութեան հետ համաձայն չեմ, պարոն Վասակեան, ես, այս անհիմն արարքի մէջ մի թագնուած գաղտնիք եմ նկատում . . . ։

— Ես ոչ մի գաղտնիք չեմ տեսնում, պատասխանեց Վասակեանը. շատ է պատահում, որ վարդապետները, այդպիսի եւ դրա նման արգելքներ են յարուցանում՝ փեսայի հօրից կաշառքներ ստանալու համար։ Այս էլ դրանցից մինն է։ Բայց, ասում եմ ձեզ, խօսքը փոխեց նա. — քանի որ Ղեւ+ մի հաստատուն հիմունք չունինք,

Digitized by Google

քանի ձեզ գործի յառաջադիմութիւնը այս երկրում անկայուն դրութիւն ունի, ձեռ պարտաւոր ենք ստրկաբար վարուել այդ տէր Մարկոնների եւ տէր Կիրակոնների հետ, մինչեւ որ ձեռ ունենանք ձեզ սեփական եկեղեցին եւ ձեզ առանձին քահանաները. ահա իմ վերջին խօսքերը, մնաք բարեաւ, բարի գիշեր:

Ռիէսը հեռացաւ:

Իւր գնալուց յետոյ իւր մասին ոչ մի կասկած չը թողնելու համար Ռիէս Վասակեանը, գործածելով ձեռ եւ ձեզ բառերը, կամենում էր ցոյց տալ իւր միութիւնը, իւր գործակցութիւնը Աշխարունիի խորհրդի հետ: Բայց նրան չը յաջողեց որեւէ համակիր համարում վաստակել՝ — իւր հաւատարմութեան մասին:

Ռիէսի գնալուց յետոյ Մահտեսի Աւետիսն եւս, տրտում եւ տխուր, առաւ ծխափողը եւ դուրս գնաց:

Ռուստամը, որ հօր այնտեղ եղած միջոցին լուռ էր, նրա գնալուց յետոյ ասաց.

— Ինչ եղաւ՝ եղաւ. անցածի վրայ ափսոսալը՝ երկրորդ կորուստ է. եկէք բարեկենդանի ուրախութեամբ հալածենք այդ «ե՛ւ եղեւանեցի պատճառած անախորժութիւնները:

Պարոն Աշխարունին, իւր բոլոր սառնասրտութեամբ, դարձեալ չը կամեցաւ ընդդիմանալ իւր աշակերտի կամքին: Մինչ աշխոյժաւոր եւ զգայուն Մելիքզադէն՝ միւս կողմից ասաց.

— Ուրախութիւնը գինու մէջն է, եկէք ուրախանանք. ձմեռրիտ որ բարեկենդան է:

Հետ սփռոցի վրայ, սեղանակի կենդրոնում դրուեց ընթրիքի սեղանը. ասիական սովորութեան համաձայն — բոլոր կերակուրները մի անգամից սեղան մտան: Ապակիէ

Digitized by Google

մեծ սրուակների մէջ զանազան գինիներ դրուեցան պարոն Մելքզադէի մօտ։

Պարոն Աշխարունին, գլուխը քարշ գցած, աչքերը խուփ՝ մի սրտառուչ եւ ազդու աղօթքով օրհնեց սեղանը, իւր աշակերտի եւ աշակերտուհու պատկի խորհուրդը հոգւոյն Սրբոյ ընտրողութեանը թողնելով։

Հացկերոյթը մի ամբողջ ժամ տեւեց։ Ընդունք բաւական գինու բաժակներ դատարկեցին. աւելի խմում էին պարոն Մելքզադէն եւ Ռուստամը։ Վերջինն իւր վշտացած սրտի տխրութիւնը՝ գինու թմրութեան մէջն էր կամենում կորուսանել։ Երբ նրանց գլուխը բաւական տաքացել էր, պարոն Մելքզադէն մի մի բաժակ գինի նրանց տալով, ասաց.

— Խմենք մեր խեղճ ազգի կենացը։

— Խմենք, կրկնեց պարոն Աշխարունին, եւ աւելացրեց. — Տէր Աստուած, պահպանիր հայոց ազգը քո ամենահնամ աջովդ. ուր ուրեք որ կան նրանք աշխարհի երեսին՝ ուղարկիր նրանց քո Սուրբ Հոգւոյդ չնորհը, թող ծագէ նրանց հոգու մէջ Աւետարանի լոյսը։ Տէր Աստուած, հալածիր տգիտութեան խաւարը այդ թշուառ ազգից. փայլեցրու նրանց մէջ մտաւոր եւ բարոյական լուսաւորութեան արեգակը։ Տէր, դու օրհնէ մեր ազգը, մեր սուրբ հայրենիքը, եւ մեր ազգայնութիւնը անջնջելի պահպանիր՝ քանի արեւը լոյս է տալիս երկնակամարի վրայ։

Պարոն Աշխարունու խմելուց յետոյ՝ Ռուստամը բաժակը ձեռքն առաւ եւ օրհնեց. —

— "Տէր Աստուած, դու վէր կանգնացրու մեզանից մի ծիրանազգեստ հզօր իշխան. տուր նրան այժ եւ յաղթող գաւազան. թող նա ազատէ մեր ազգը գերութեան շղթաներից. թող նա վերականգնէ Հայաստանը իւր աւե-

Digitized by Google

բուաճ փոշիներից եւ ժողովէ մեզ, որպէս թխասմայր, իւր հանգիստ եւ ապահով թեւքերի տակ: Տէր, դու ազատիր մեր հայ ազգը իւր պանդխտութեան գերութիւնից, տուր մեզ Մովսէսներ եւ Յաւետան որդի Յեսուներ, որ առաջնորդեն դէպ նոր Քանանը՝ — դէպի Հայաստան „:

— Անուշ, անուշ, կոչեց պարոն Մելիքզադէն եւ իւր գլուխը վեր բարձրացնելով ասաց. — Տէր Աստուած, պահպանիր հայը իւր ազգային հիման վրայ. տուր նրան հանճար, լուսաւորութիւն եւ կրթութիւն, որպէս զի հայը, առանց ուրիշի կարօտութեան, ինքնուրոյն շինէ եւ նորոգէ իւր դրութիւնը, իւր կեանքը, եւ հետեւելով լուսաւոր ազգերի օրինակին՝ աշխարհի տան մէջ իւր հասարի ձեռք բերէ մի անկիւն, մի կտոր հող՝ իւր որդոց այսմատը նրա վրայ ձգելու համար:

— Բռավօ՛, բռավօ՛, կրկնեց Ռուստամը. — անուշ, անուշ, սա՛ր քեզ մնազա: Ես տուեց նրան մի պատառ խոլոված միս:

— Իսկ դու, Յաչօ, մի գլուխ պիտի չը խմես քո ազգի կենացը:

— Ինչո՞ւ չեմ խմի, աղա, ասաց նա, որ կանգնել էր ոտքի վրայ. — մինէ ես Հայկայ արիւնից չե՞մ: Յաչօն վերցրեց գլուխը եւ աչքերը վերեւ բարձրացնելով, ասաց. — Տէր Աստուած, մեր սուրբ Հայրերի բարեխոսութեամբ պահպանիր հայոց ազգը. առաջնորդէ նրան քո Սուրբ Հոգու շնորհիւ, որ անմոլար ընթանան իրանց հայրենական կրօնքի, Գրիգորիան սուրբ եկեղեցու ընթացքով: Տուր երկար կեանք եւ անփշրելի գլուխան ազգի հովուապետին, վեհափառ Կաթողիկոսին, նրա աթոռը միշտ հաստատ պահպանիր սուրբ Էջմիածնում, որով մեր սուրբ ազգը, եւ մեր սուրբ լեզուն մնայ անխափան . . .:

Digitized by Google

— Անուշ, անուշ, Մաչօ, կոչեց Ռուստամը նրա խմելուց յետոյ. — սա քեզ մաղա, քո խօսքերը լի հնամոլութեամբ են շնչում... իրաւ այդպէս են ռամիկների աղօթքները իրանց ազգի համար...:

Ռուստամը խիստ անուշ ձայնով երգեց "Տէր կեցո դու զՀայս„ երգը, որ իւր կախարդիչ զօրութեամբ ձնշեց պատանի Մելիքզադէի սիրտը, եւ նրա աչքերից գլորուեցան արտասուքի մի քանի սրբազան կաթիլներ:

Այնուհետեւ պարոն Աշխարունին եւ պարոն Մելիքզադէն "բարի գիշեր„ ասելով, ամէն մին գնաց իւր տունը:

Նրանց գնալուց յետոյ Ռուստամը երկար նստեց. քունը եւ հանգստութիւնը փախել էին նրանից: Նա սեղմեց իւր կուծքին սազը եւ սկսեց նուագել: Ասիական այդ նուագարանի ճկուն կոջնկոցը դարձեալ վառեց նրա երեւակայութիւնը. — նա տեսնում էր իւր առջեւ նազելի սիրուհին իւր հրեշտակային գեղեցկութեամբ: Նա երգեց. —

Արդեօք կը լինի՞ մինչ գալոց տարի՝
Աստուած տայ շնչել՝ ինձ կեանք բարի.
Իմ ձեռքս էլ վառէ այն Սոբի լոյսը[1],
Իմ սիրտս կատարէ իւր ջերմ փափագը:

Ինձանից հեռու կը փախչիս, անգութ լախտ,
Դու կը սիրես գգուել Հարուստների թախտ.
Մի օր էլ միտ բեր քո խեղճ Ռուստամ,
Որ քեզ պաշտող լինիմ, որ հոգիս քեզ տամ:

Ֆալաք[2], օրէնքներդ մի փարայ կ'արժէն. —
Ոսկի օրերդ մէկին տուիր բաժին,

[1] Ցեսարընգատաջի կրակը, որ վառում են նորափեսաները:

[2] Ֆալ- = երկինք, պարսից բանաստեղծները այդ արաբերէն բառը շատ անգամ գործ են ածում փոխանակ Աստուծոյ:

Digitized by Google

Մխւսին սեւ սուգ եւ դառն մրմունջ
Ախ ու վախ քաշել՝ մինչ իւր վերջին շունչ։
Թ՚արդար դատաստան Աստուած կ՚անէ՝
Սէր սիրուց բաժնել խիստ շատ մեղք բան է.
Ինչո՞ւ տեսնում չէ հրամայողն ամպերին,
Ո՛րքան տանջվում են Ռուստամն ու Սալբին։

Աշխարհիս միջում, կապոյտ երկնի տակ
Հատ հատ տեսել էք ածոյ կամ օդոպ[1],
Կամ թէ անտառում տատրակը բաժան
Մանգալու լինի՝ առանց վարուժան։

Ո՛րքան առաւել ունի սիրտ հոգի՝
Սալբիի սիրով՝ գերուած պատանի.
Պիտ թո՞ղ տալ գերուոյն մնշուիլ չարաչար,
Ցէր, չե՞ս խղճալու, չե՞ս անելու ճար։

Մի խանջալ տուէք, որ սիրտս բանամ,
Ի՛նչ կայ ներանում, բոլորն ձեզ ցոյց տամ.
Թունաւոր նետեր, գնդակներ, կապար . . .
Դուք կ՚ասէք դրան՝ վշտերու ամբար։

Ես սիրում եմ քեզ, Սալբի, իմ ազիզ,
Որքան մի հայ մարդ կը սիրէ իւր Մասիս.
Ես գիտեմ քո գին, բարի հրեշտակ,
Դու աննման ես բոլոր երկնի տակ։

Սալբի, իմ Սալբի, հրաշալի Սալբի,
Ե՞րբ Աստուած կը հասցնէ "նաւիքը նաւիքի"։
Մինչ այդ չը կատարուի, քանի թէ հրեշտակ
Կարէ պահանջել ինձանից հոգի։

---

[1] Ածոյ = էգ բազե, օդոպ = արու բազե։

ԺԸ.

ԵՐԱԶ

Ռուստամը ամբողջ գիշեր չը կարողացաւ հանգիստ քնել. նրա երեւակայութեանը աստիճ ջերմախտական խառնակութիւն էր տիրել, որով նա տանջվում էր սարսափելի երազներով — երբեմն նրան երեւում էր, թէ անթիւ, անհամար շներ, գայլեր, կապիկներ, իրանց յետքի ոտերի վրայ կանգնած, ականջները խլուզած, փիլոնի նման մի սեւ վերարկու իրանց ուսերի վրայ ձգած, անձռնի եւ ծիծաղելի կերպով — պար են գալիս եւ տեսակ տեսակ ծամածռութիւններ ձեւացնելով իրանց երեսի վրայ՝ իրան ջնդրեյնում էին: Շատ անգամ նրան զարհուրեցնում էր մի այլ տեսիլք, — իբր թէ քուրդերը թափուած իրանց գիւղի տների վրայ՝ թալան էին անում, տղաներ, փոքրիկ երեխաներ, կին եւ այր մարդիկ, իւր աչքի առջեւ մորթում էին եւ նրանց գլուխները ուղտի բեռներում լեցրած — տանում էին: Ինքը կամենում էր գնալ, Սալքին որոնել, բայց շղթաներով կապուած լինելով՝ չէր կարողանում շարժուիլ:

Բայց մի երազ, որ աւելի տպաւորութեցաւ նրա երեւակայութեան վրայ, մի երազ, որ նա կարող էր յիշել, եթէ հազար տարի եւս կեանք ունենայ՝ այսպէս էր. — երազում ձեւանում էին նրան Աղուանայ սարերը եւ ինքը ձիաւորուած՝ միայնակ մնան էր գալիս այդ սարերի վրայ: Ընդանք այնպէս տրտում եւ այրուած չէին, որպէս

Digitized by Google

լինում են ամեն տարի աշնան որսորդութեան ժամանակ, այլ հիանալի, այո, շատ հիանալի էին։ Այն ամուլ, չոր ու ցամաք ապառաժները եւ քարաժայռերը՝ ծածկուել էին կանաչ խոտերի թաւշեայ օթոցներով, եւ նրանց միջից վառվում էին ծաղիկների բիւրաւոր գոյներ։ Անտառը, որ ձգվում էր խիստ հեռու սարերի վրայ, իւր լիմոնի, նարնջի, մագնոլիայի, դափնիի եւ այլ միշտականաչ ծառերով — լցրել էր օդը անոյշ եւ թարմ քաղցրահոտութեամբ։ Փոքրիկ առուակները, գաղտուկ սողալով թաւախիտ թփերի միջից, իրանց կարկաչիւն ձայնը խառնում էին երգող թռչունների ճլվլոցի հետ։

Դեռ մութ էր, դեռ գիշերը բոլորովին չէր վեր քաշել իւր խորհրդական ծածկոցը երկրի վրայից. բայց արշալոյսը արդէն սկսել էր շառագունել, եւ այդ սարերի հրաշալի պատկերները, այնքան շռայլ եւ փառահեղ զարդարուած բնութեան գրչով — սկսում էին հետզհետէ տեսանելի լինել։

Ծանկալած ոսկի արեւը դուրս բզբզաց թուի ամպերի միջից։ Նա հրդեհեց հանդիպակաց լճակի երեսը, եւ սարերի ձիւնապատ գագաթները ներկուեցան ալ-վարդի գունով, եւ նրանց կանաչ կուրծքերը ոսկեզօծեց զառիկի փայլով։ Անկարագրելի է, թէ քանի զմայլեցուցիչ նուագներով թռչունների անհամար տեսակները սկսեցին բարովել տունջեան լուսատուի գալուստը։

Բայց արեւը գնալով բարձրանում էր դէպ հորիզոնի աւելի բարձր կամարակապը։ Ռուստամը թափառում էր սարերի մէջ, բայց տակաւին չէր գտել եւ ոչ մի որս։ Տօթը աւելի եւ աւելի բորբոքում էր, բոլոր առարկաները, որոնց բնութիւնը տուել էր տեղափոխուելու եւ շարժուելու կարողութիւն՝ սկսան փախչիլ կիզող արեւի

Digitized by Google

երեսից եւ թափանուել անտառի հովասուն խորքում, ուր նրա լոյսը չէր թափանցում։

Կէս օր էր։ Կրակոտ երիտասարդը անդադար քշում էր իւր ձին, եւ չը նայելով տօթի սաստկութեան՝ չէր կամենում դադարել առանց որսի։

Հովիւները հաւաքել էին իրանց հօտերը մի աղբիւրի մօտ, այն զովացուցիչ հովանիի տակ, որ լայն տարածել էր Ղարնիեարուղը։ Այդ հովանին գնալով ընդարձակվում էր, քանի որ արեւը դիմում էր դէպ իւր մուտքը։ Նրանց ոչխարները թուլացած տօթից, գլուխները միմեանց կողքին խթած, ծուլօրէն մակաղել էին։ Բայց հովիւները մի կողքի վրայ ընկողմանած, գլուխները ցուպի եւ մախաղի վրայ դրած — անհոգ եւ հանգիստ քնել էին, իրանց հօտերի պահպանութիւնը թողնելով ահագին գամիռ շներին, որոնք, լեզուները երկար դուրս պարզած, արագ արագ շունչ էին քաշում, եւ թոքին տալիս։

Հեռուն, հեղեղատի ափերի վրայ, կանաչ արօտատեղերի մէջ, երեւում էին խաշնարած ցեղի վրաններ։ Նրանց մատակ ձիերը արածում էին երկայն եղէգնաբոյսերի մէջ, որ այնքան խիտ աճել էին հեղեղատի եզերքին։ Թափառական ցեղի մանուկ օրիորդները նստած եղէգնաբոյսերի հովանիների տակ՝ մի կրակոտ, ախտաբորբոք եւ բաւբաւոտական մեղեդի երգելով, արմաւենու փափուկ ճիւղերից հիւսում էին զամբիւղներ։ Ռուստամը արեւի տաքութեանը այլ եւս չը դիմանալով, մտածեց գնալ հեղեղատի ափը, այն չքնաղագեղ ներէիդների (ջրային յաւերժահարսեր) մօտ, մի քանի րոպէ զով օդ վայելել եւ իւր արդէն յոգնած ձիուն հանգիստ տալ այն կանաչ խոտերի մէջ։

Digitized by Google

Նա անցաւ այն վրաններուն մօտիկ, բայց դլուխ ոչ մի մարդկային էակ չէր շարժուեր։ Վրաններուն մէջ, գրկախառնուած, քնած էին նրանց տէր պարոնայքը եւ տիկնայքը։ Գեղեցիկ, մանուկ աղջիկներ սիրամարգի փետուրներով հովահարելով՝ հալածում էին չար ճանճերը եւ հովացնում քնողների տօթից շառագունած երեսները, որպէս զի նրանց քունը անդորր եւ դիւրին լինէր։ Վրաններուն սիւներից քարշ էին ընկած քնած քաջերի զէնքերը. վրաններուն մուտքի առջեւ գետնի մէջ ցցուած տեւանելի էին նրանց երկայն նիզակները, որոնց գլխին փողփողում էին սեւ, փետրազարդ փնջեր։ Վրաններուն դրան առաջ կանգնած էին նրանց թամքած ձիերը, ուտելով մեծաքանման փափուկ խոտը, որ դրուած էր նրանց առաջ, եւ, ասես թէ, անհամբերութեամբ սպասում էին, թէ երբ նրանց հզօր տէրերը կը նստեն եւ կ՚երթան բերելու իրանց թշնամիների աւարը։

Ընջանիկ մարդիկ, ասաց Ռուստամը ցաւելով. այո՛, քաջերի վրանները այդպէս պիտի լինին... բայց մի թշուառ հայի վրանը այնչափ աղքատիկ եւ գծուծ է, որպէս ինքը, հայը...»։

Մի նեղ շաւիղ, որ հազիւ նշմարելի էր, տեղ տեղ կորուսանելով իւր հետքը թաւ խոտաբոյսերի մէջ, տանում էր դէպ հեղեղատի ափը։ Ռուստամը խորասուզուած ծանր մտածութիւնների մէջ, քշում էր իւր ձին։ Յանկարծ ստուերախիտ եղեգնաբոյսերի միջից երեւան եկաւ մի սիրուն եղջերու՝ նա, իւր գլուխը վեր թեքած քամակի վրայ, սկսեց փախչել դէպ մօտաւոր սալաձորը։ Որսորդը իւր ձին սաստիկ վազեցնելով, սկսեց հալածել կենդանին, քանիցս անգամ հասնելով նրան՝ չանք սրեց նիզակահար անել որսը, բայց ճարպիկ կենդանին միջոց էր գտնում

Digitized by Google

այնպէս սաստկութեամբ սողալ նիզակի տակից, որպէս սեւ օձը թովչի դիւթական գաւազանի տակից: Բայց դիւպուտածը ձեռնտու եղաւ. եղջերուն մտնելով այդչն միմեանց հետ փակուած թփերի մէջ, մի վայրենի տանձենի իւր ոստերով բռնեց նրա եղջիւրները: Ռուստամը չը կամեցաւ սպանել որսը, ձգեց պարանը նրա վզից, բայց յանկարծ ինչ սարսափելի հրէշ... — գեղեցիկ եղջերուն անբնութիացաւ, եւ թփերի միջից սողաց մի հսկայական վիշապ: Սարսափելի գազանը իւր թեքուն պոչը ամրացնելով գետնի վրայ, օղակ-օղակ պտտեցրեց աւագին գլուխը, եւ իւր ամեհի բերանը լայն բաց արած, սուր եւ թունաւոր ժանիքներով բռնեց Ռուստամի ծոծրակից եւ պոչը ձիու փորի տակով անց կացնելով, երկու փաթոյթ արեց նրա վրայ...: Մահը իւր սեւ դէմքով կանգնեց Ռուստամի առաջ: Ցաք արիւնը սկսեց ջերմացնել նրա քամակը. ձին՝ երկիւղից խրտնեց, եւ խռռալով, սաստիկ ֆնչալով գետին տապալուեց: Ձին, Ռուստամը եւ իւր հոգեառը — խառնուեցան միմեանց...:

Անգիտելի է, թէ որպիսի հոգեբանական հարուածունեցաւ այդ երազի սարսափելի ներգործութիւնը Ռուստամի վրայ, որով նա առաւօտեան ծանր հիւանդութեամբ բռնուած՝ իւր մահճի մէջ վառվռում էր տիֆուսեան ջերմախտով:

Մեծ պասի առաջին օրը լինելով, գիւղացիները՝ տէրտէրների հետ տունից տուն էին մտնում գալիս, պաս շնորհաւորում, եւ ուտելով, խմելով ուրախանում էին: Բայց Ծէր-Աւագեցնց տան մէջ ամէն ինչ միանգամայն փոխուեց: Ռուստամի ծանր եւ վտանգաւոր հիւանդութիւնը ձգեց բոլորին անասելի տխրութեան մէջ: Տիկին Սկուհին

Digitized by Google

դաղտնի լաց էր լինում. Մահտեսի Աւետիսը, ձեռքերը ծալած, լուռ ու մունջ նստել էր մի անկիւնում. Հուրի Յան-Դայան, այդ եփուն եւ փորձառու պառաւը, իւր երկաթի կարծրութեամբ սրտով, դա էր միայն հոգս տանում իւր բժշկական հնարներով հիւանդի ցաւին մի դարման անելու:

Մերձաւոր բարեկամներից եւ ղրացիներից մի քանի մարդ եւ կանայք եկել էին հիւանդի մօտ, եւ նստած՝ ընդհատել էին նրա մահճի չորս կողմը: Հիւանդը, ջերմի սաստկութիւնից, խորին անզգայութեան մէջ, կցկտուր բառերով խօսում էր:

"Դըհօլ-զուռնան ածվում է... հարսն ու աղջի պար են բռնել... ա՜հ. ի՜նչ ուրախութիւն է... հա՛, այդպէս վայել է իմ հարսանիքին... աղեղը, ձեր հոգուն մատաղ, ուրախութիւն արէք... հարսանիքը է... իմ հարսանիքն է... ահա ես նստած եմ թախտի վրայ... խաչեղբայրս կողքիս է... պսակի նարօտը իմ ճտովս գցած...: Սկսւհի, մայրիկ, սիրական, դու ասում էիր՝ ե՞րբ հարսանիք կը լինի... ահա քեզ հարսանիքը... դէ՛, մայրիկ, հոգիս, դու էլ պար բռնէ... ինչո՞ւ ես շփոթուած կանգնել...: Տօ՛, մի թո՛ղ տուէք ես ինքս պարեմ իմ սիրելի Սալբիի հետ... բա իմ ուրախութիւնը ո՞ր օրուայ համար է պահուած„:

Վերջին խօսքերի հետ հիւանդը վեր է թռչում մահճից, բայց չորս կողմից բռնում եւ պառկեցնում են. առ ժամանակ լուռ է մնում նա, թոյլ եւ անլսելի կերպով շունչ քաշելով: Նրա երեւակայական ցնորքները կերպարանափոխվում են եւ նա միւս անգամ սկսում է.

"Վա՛յ, վա՛յ... տարան, տարան... վա՛յ իմ գլխին... տարան. տանում են Սալբին...: Անդունդը պատա-

Digitized by Google

ուեցաւ. դժոխքի ոգիքն դուրս թափուեցան. խլեցէ՛ն. տանում են իմ Սալբէին... իմ հարսնացուն... իմ նազելին... քօղացէ՛ք աչքերը, Թող ես չը տեսնեմ...։ Թուրերը պսպղում են. խանջալները կայծակ են տալիս... արիւն է թափվում. մահ եւ կոտորած է...։ Ցօ, բերէ՛ք իմ զէնքերը, ես դրանց հետ կը կռուեմ... ես դրանց կը կոտորեմ եւ իմ Սալբէին յետ կ'առնեմ...„։

Նա սկսում է արհամարհական եղանակով ծիծաղել, եւ Թոյլ, նուաղած ձայնով երգել. —

"Կռուի օրում քաջ տղամարդը ուրախ է.
"Փառք կ'որոնէ պատերազմի դաշտումը.
"Թուլասիրտը իւր արիւնից կը վախէ,
"Ես հիւանդ եմ ասելով, կը թագչի իւր տան ետե՛ւը„։

Հիւանդը դարձեալ լռում է։ Հուրի Խան-Դայան եւ շրջապատող պառաւները ուշայն անտիապաշտութեամբ երեսները խաչակնքում, աղօթքներ են կարդում, կարծելով, Թէ նա քո՛նո՛ւել էր դեւերից։

Այնտեղ են գալիս տիկին Թալլանը, տիկին Սալաթինը եւ մի քանի այլ բարեկամուհիներ, եւ շրջապատում են հիւանդի անկողինը։

— Ցիլուհի, այսպէս են կոչվում քահանաների կանայք, — ասաց տիկին Թալլանը Հուրի Խան-Դայանին, որ, երեսը Թթուեցրած, ձեռքերը ծալած, նստել էր իւր Թոռան բարձի մօտ. — քոյրիկ, չէ՞ որ դու աշխարհ ես տեսել, ծամ ես սպիտակացրել. հոգիս, հիւանդը այդպէս անհոգ Թողնելու չէ, դրան մի ճար անելու խնամք տարէ՛ք։

— Ի՞նչ ճար, ասաց Հուրի Խան-Դայան յոգւոց հանելով. — ճարս հատել է, խնամի, ես ինձ կորցրել

եմ, ինձանում իւրք չէ մնացել. մնաց, Աստուած ինքը մի ձար անէ։

— Ճշմարիտ, նրա խօսքը կտրեց դարձեալ տիկին Թարլանը. — առանց Աստուծոյ կամքին տերեւը ծառից չէ վայր ընկնի, բայց եւ այնպէս մարդիկ պիտի իրանց խելքը գործ դնեն։

— Աստծոյ կամքը թող օրհնուած լինի, պատասխանեց Հուրի Յան-Դայան լի հաւատքով։

Տիկին Թարլանը ոչինչ չը խօսից։

— Շատ անգամ Տէր ամենակալը մեզ փորձելու համար է ցաւ տալիս, խօսեց պառաւ Մարթան. — որպէս՞ Ցոր երանելին։ Բայց մենք փոխարէնը պէտք է փառք տանք Նրա ամենաողորմութեանը։

— Դրանք բոլորը աւելորդ խօսքեր են, նրանց խօսքը կտրեց տիկին Սալլաթինը, հիւանդի մօրաքոյրը. — իրաւ Աստուած ցաւ է տուել, բայց ցաւին էլ դարման է տուել։ Դուք փոխանակ այդպիսի ունայն խօսքերով ժամանակ անցնելու, աւելի լաւ է շուտով կանչել տաք մի բժիշկ։

Հուրի Յան-Դայան չէր կարող համբերել տիկին Սալլաթինի խօսքերին, իւր հնամոլ հայեացքով նրա խօսքերի մէջ խիստ անհաւատութիւն նկատելով, այդ պատճառով, ամենեւին ուշադրութեան չառնելով նրա ասածը — խօսեց. —

— Տէրը եւ նրա Սուրբերը թող ապատեն իմ թոռը այս հիւանդութիւնից. եւ ջերմեռանդութեամբ խաչակնքեց իւր երեսը։

— Դարձեալ սնոտի հաւատք..., ասաց տիկին Սալլաթինը։

Digitized by Google

— Ի՞նչ պէտք է արած, իմ քոյրեր, այն բոլորը, որ հայ-քրիստոնեայի օրէնքը հրամայում է՝ անթերի կատարել եմ: Տէրտէրին Նարեկ եւ Սաղմոս կարդալ տուել եմ, սուրբ պատկերների առաջ մոմեր վառել եմ... այլ եւս ինչ է մնացել, որ չեմ արել:

— Հիւանդութիւնը կրօնին ոչ մի վերաբերութիւն չունի, դարձեալ կրկնեց տիկին Սալաթինը տհաճութեամբ. — հիւանդութեանը համար եւ փորձառու բժիշկներ են պէտք:

— Վերին բժշկապետը գիտէ ամենայն ցաւի դարման տանել. նա աւելի հմուտ եւ փորձառու է, քան բոլոր ստեղծուածները:

— Այդ մի անօգուտ յոյս է, որ առ ժամանակ կը հրապուրէ ձեր անհաւատութիւնը, իսկ դուք յետոյ կը ստանաք ձեր կամակորութեան վարձը՝ մի անմխիթար փոշիմանութիւն...: — Մնաք բարեաւ, ասաց նա, եւ գնաց յայտնելու իւր ամուսնուն, պարոն Արամ Աշխարունուն, — իւր քեռորդու վտանգաւոր հիւանդութեան մասին:

Տիկին Սալաթինի մեկնելուց յետոյ մի նոր անապաշտական զրոյցների ասպարէզ բացուեց. Հուրի Յան-Դայան պատմեց, թէ ինչեր էր արել հիւանդի առողջութիւնը յետ դարձնելու համար:

— Զարմանալի է. ապա այդ բոլոր զօրաւոր ապրուստ-ննեղը ոչ մի օգուտ չարեցիր, հարցրեց տիկին Թարլանը:

— Ո՛չ... գլուխը շարժելով պատասխանեց Հուրի Յան-Դայան: — Ինամի, "Յաչը Տէրը զօրաւոր կ'անէ,, եւ "յուսով սեւ քարին ապաւինիս, քո ո՛ւրախը կը տայ,,: Բայց իմ թոռը մի կասկածոտ եւ անհաւատ տղա-

Digitized by Google

մարդ էր. նա հելքում էր ասելը պատրաստելիանելը: Չէ որ առածը ասում է. "երբ որ չունիս յոյս, բարին քեզնից կը տայ խոյս,,: Բայց դուք, իմ աչքիս լոյս բարեկամներ, առաջ տարաւ նա, — դուք չը գիտէք իմ ընտանեկան գաղտնիքը, թէ ինչ էր պատճառը, որ Աստուած այդպէս խէթ աչքով է նայում մեզ վրայ. ես կը պատմեմ, դուք կը հասկանաք, թէ ժրքան դժուար է կրօնքի եւ օրէնքի հակառակ կենալը:

— Պատմիր, պատմիր, ձայն տուին ամէն կողմից մոլեռանդ պառաւները:

— Դուք իմ քոյրեր, առաջ տարաւ նա, ձեզնից շատերը տեսել են իմ ամուսինը, այն բարի քահանան, իւր ժողովրդի այն բարեգութ նահապետը:

— Աստուած իւր հոգին լուսաւորեցէ, կոչեցին ամէնքը:

— Դուք գիտէք, շարունակեց Հուրի Յան-Դայան, — որ այդ Տիրոջ իմաստուն պաշտօնեան, միանգամայն իւր ժողովրդի հոգեւոր եւ մարմնաւոր միխիթարութիւնը, նրա բանգէտ խորհրդատուն, նրա տրտմութիւնների եւ ուրախութիւնների կարեկիցն էր: Այս գալիք մեծ պահոց միջնքին կը լրանայ քսան եւ հինգ տարին նրա վախճանից յետոյ: Բայց այս քսան եւ հինգ տարիների ընթացքում, թէպէտ նա գնացել, հեռացել է մեզանից, բնակելով երկնքում, հրեշտակների մէջ, բայց, հաւատացնում եմ ձեզ, նրա աւթուն հոգին էր իմ գերդաստանի պահապան հրեշտակը, որ խափանում էր մեզնից բոլոր չար պատահարները: Ի՞նչ էլ դրա պատճառը — այն լուսահոգին երբ տեսաւ թէ մօտ է մահը, մտածեց պատսպարել իւր ընտանիքի ապագան ջրաոտ գրաւածնէրով: Նա դրաւ իւր տունը եւ իւր ընտանիքը մի ընկոյզ ներգործութեան

Digitized by Google

տակ, որը իւր զօրութեամբ խափան էր ամենայն չարիքի։ Այդ թիլիսմանական թղթերը ապակեայ սրուակների մէջ դնելով՝ թաղեց տան դռների շէմքում, թոնրի շրթան մօտ, եւ ջրհորի ափում։ Բայց իմ թերահաւատ թոռը անարգեց իւր պապի խորհրդաւոր թղթերը, եւ ամենեւին չը նայելով իմ աղաչանքին եւ արտասուքին, կախարդական գլուաձներ համարելով, դուրս բերեց թիլիսմը եւ անինայ այրեց կրակում.... Ահա այդ դժբախտութիւնը հանդիպելուց յետոյ, ասես թէ, մեր աստղը խաւարեց. չարը համարձակ մուտք գործեց մեր օրհնեալ բնակարանը, վիշտ, նեղութիւն եւ հազարաւոր թշուառութիւններ անպակաս եղան մեզնից.... Մեր վարուցանքը անպտուղ եղաւ, մեր ասւարներն եւ ոչխարները արդիւնք չը տուին, եւ բախտը իւր աչքերը խփեց մեզանից։ Բայց այդ վերջինը... այդ վերջինը... անիրաւ կրօնափոխութիւնը... ահա՛ ճաշակել է տալիս իւր թունաւոր պտուղները... եւ այդ հիւանդութիւնը եւս նրա հետեւանքն է....

Հուրի Յան-Դայան, բոլորովին լքուած արտասուքով, նրա ձայնը խեղդվում էր սրտի զեղմունքից. երկար նա սկսեց հեկեկալ եւ դառնապէս լալ. միւսները նոյնպէս սկսեցին սուգ անել։

Ներս մտան մի քանի տղամարդիկ, որոնց թվում էին պարոն Արամ Աշխարունին, պարոն Մելիքզադէն եւ անգլիացի բժիշկ մըստըր Սէյսունը։ Բոլոր կանայք անհետացան։ Բժիշկը մօտեցաւ, բռնեց հիւանդի ընչերակը եւ սկսեց հարցափորձել Մահտեսի Աւետիսին։

Բայց հիւանդի զգայարանները անհանգիստ խառնակութեան մէջ էին, եւ նրա լեզուն չէր դադարում երեւակայական խառնափնթոր պատկերներ արտայայտելուց։

Digitized by Google

«Ահ... վհշապը... դարձեա՛լ այն սարսափելի վհշապը...: Աստուա՛ծ իմ. դա չէ հեռանում ինձնից...: Ահա Սալբին, ոլքան զուարթ է նա... նա աներկիւղ, մի քաջ աստուածուհու նման, եկել է օգնելու ինձ... եկ, Սալբի, եկ օգնիր ինձ...„:

Մի քանի րոպէ լռութիւնից յետոյ, զառանցանքը դարձեալ շարունակվում է:

«Դէ՛հ, իմ նազելի, դէ՛հ, մի հարուածէ՛ եւս... ահա սատակեց նա... սատակեց վհշապը... բեր համբուրեմ քո նուրբ ձեռքերը, իմ նազելի Պալլաս. դու քաջութեամբ կռուեցար...„:

Եւ նա սկսեց աւելի որոշակի ձայնով երգել: —

«Քնքոյշ ձեռքերը հարեմին սիրուն՝
«Հինան ներկում է վարդագոյն-կարմիր.
«Նա այդ ձեռքերով հրապուրել գիտէ՝
«Ամուսին՝ խանը, ջերմ, հեշտախնդիր:

«Թայց ես սիրում եմ արիւնով ներկուած՝
«Նուրբ մատիկները իմ սիրուհիս,
«Երբ որ նա ինձ հետ պատերազմում է
«Ոսխների դէմ իմ անբախտ ազգիս„:

Նա դարձեալ լռեց:

Բժիշկը, հեռուն, խորհրդակցում էր պարոն Աշխատունու հետ հիւանդի մասին. նա դուրս բերեց իւր փոքրիկ կաշեայ պարկից մի քանի տեսակ դարմաններ. պատուիրեց խմցնելու կերպը, եւ ինքը դուրս գնաց, խոստանալով գալ կէսօրուայ պահուն:

Միեւնոյն ժամանակ ներս մտաւ Ռէս Վասակեանը. նա թոյլ ձայնով սովորական ողջոյնը տալուց յետոյ, մո-

Digitized by Google

տեցաւ, ապշած կանգնեց հիւանդի գլխի վերը. նրա կեղծաւոր կերպարանքի վրայ ձեւացուած էր ցաւակցութեան պէս մի բան. նրա շիլ աչքերից գլորուեցան մի քանի հատ արտասուքի կաթիլներ, եւ նա իւր տգեղ նման սեւ շրթունքը շարժում էր, իբր թէ աղօթք էր կարդում:

— Այդ ինչ անբախտութիւն է, Մահտեսի, ասաց նա, դառնալով դէպի հիւանդի հայրը: Յատկապէս ինձ խիստ ցաւալի է տեսնել ձեր որդին, իմ սիրելի բարեկամը, այդ դրութեան մէջ:

— Աստծոյ կամքն է, պատասխանեց Ջերմեռանդութեամբ Մահտեսի Աւետիսը:

— Հա', Աստծոյ կամքն է, իմ բարեկամ ... բայց ինչ յոյս տուեց բժիշկը, կամաց շընջաց Ռէսը նրա ականջին:

— Բժիշկը մի ուրախալի յոյս չը տուեց ..., պատասխանեց տխրութեամբ Մահտեսի Աւետիսը:

— Մնաք բարեաւ. ես իմ հետ անչափ տրտմութիւն եմ տանում. երեկոյեան դարձեալ կը մտնեմ ձեզ մօտ, ասաց չարագործը եւ հեռացաւ: "Հա՛, բժիշկը մի ուրախալի յոյս չը տուեց ...,,, կրկնում էր նա իւր մտքի մէջ, գոհունակ սրտով:

— Պէտք է հեռու պահել հիւանդը տանեցի եւ դրացի այցելուներից, ասաց պարոն Աշխարունին. — դրանք կը ձանձրացնեն նրան իրանց շատախօսութեամբ եւ աւելորդ անապաշտական արարողութիւններով: Թող պարոն Յոսէփովը մնայ այստեղ. թող նա յանձն առնէ ծառայել հիւանդին, որպէս իւր մտերիմ բարեկամին: Առաւելապէս ջանացէք հեռու պահել հիւանդից ձեր մայրը, Հուրի Յոան-Դայան, որովհետեւ պարոն Ռուստամը իւր առողջ օրերում անգամ չէր կարողանում համբերել նրան:

Digitized by Google

Պարոն Մելիքզադէն գիտէ, թէ ինչպէս պէտք է գործադրել դեղերը։ Մնաք բարեաւ. առողջութիւն եմ մաղթում, Մահտեսի։

Ահա վաստակեանը, Տէր-Առաքելենց տանից դուրս գալով, իսկոյն յայտնուեց մեծ ամրոցում եւ մտնելով պատանի Աւազակեանցի սենեակը դիւական հրճուանքով ասաց. —

— Տէր աւետիս։

— Ի՞նչպէս, հարցրեց Սոլոմոն-Բէկը իւր խաժ աչքերը լայն բացելով։

— Ռուստամը ամենատաստիկ կերպով հիւանդ է. այս ժամիս ես նրա մօտ էի։

— Արդարեւ, աւետիս, կրկնեց պատանի Աւազակեանցը նոյնպէս ուրախանալով։

— Բայց գիտէք, ո՛րքան ձեռնտու է մեզ այդ բախտաւոր հիւանդութիւնը. մի կողմից հեռացնում է մեզնից, Մելիքզադէի խորհրդով, առանց քահանայի պսակ կատարելու խորհուրդի երկիւղը. միւս կողմից, օրիորդ Սալբին հեռու գտնուելով նոր ազդեցութիւնից, հիւանդութիւնը հնար է տալիս մեզ ազատաբար գործադրել մեր ծրագրները։ Եւ եթէ այդ հիւանդութեան վերջը Աստուծոյ յաջողութեամբ մի բարի մահով պսակուի՝ այն ժամանակ դուք ամենեւին տաւթի չէիք ունենայ գանգատուելու ձեր բախտից։

— Հա՛, մահը կ՚ազատէր մեզ երկար հոգածութիւններից, պատասխանեց Սոլոմոն-Բէկը բոլորովին սառնասրտութեամբ։

"Արդեօք չը փորձե՞. այդ կարելի կը լինի՞ բժշկի միջոցաւ. թեթեւամիտ անգլիացի, վողջ համար հոգի կը տայ . . .„ մտածում էր իւր մէջ հղեռնագործը։

Digitized by Google

— Լսիր, աղա, խօսեց նա լսելի ձայնով. ժամանակը թանգ է մեզ համար. պէտք է գործը սկսել. դարձեալ կրկնում եմ իմ դասը. — դուք կ'աշխատէք ձեզ ցոյց տալ պարոն Աշխարհունեան, որպէս նրա համախոհ եւ սրտակից բարեացակամը. եւ սկսեցէք բարեկամական յարաբերութիւն ունենալ, եւ նրանց բոլորովին կասկածներից դուրս բերելու համար, ձեր քոյրը կը յանձնէք ուսանելու տիկին Սալաթինի մօտ. ես էլ իմ քոյրը կը սողցնեմ այնտեղ, որպէս ձրի ծառայող աղախին: Նրանք երկու կողմից կը սկսեն հաւատալ օրիորդ Սալբիին: Ու դուք ձեր քրոջ պատճառով միշտ գնալ գալ կ'ունենաք աղջիկների մօտ, եւ կարող կը լինիք տեսնել օրիորդ Սալբին, եւ երբեմն գաղտուկ խօսել նրա հետ: Զը մոռանաք, առաջ բարեկամանալ, յետոյ քոյրդ յանձնել, այնուհետեւ սկսել երթեւեկութիւն կատարելը: Այդ կը լինի մեր առաջին փորձը: Այնուհետեւ՝ գործերի բերմունքի համաձայն կը լուրնք մեր որոգայթները: Այժմ մնաք բարեաւ:

Digitized by Google

ԺԹ.

ԿԵՂԾԱԽՈՐԸ

Առաւօտեան ութ ժամին, պարոն Աշխարունին միայնակ նստած իւր անձնասենեակում, սպասում էր ընդունել մի հիւր, որ յատկապէս խնդրել էր նրանից մի գաղտնի տեսակցութիւն։

"Այդ զարմանալի է, մտածում էր նա. պատանի Աւազակեանցը տեսակցութիւն է խնդրում ինձ մօտ գալու...։ Նա, որ իւր հօր հետ մեր վտանգաւոր թշնամիներն են, որ միշտ հալածել են մեզ եւ այնքան ցաւալի նեղութիւններ պատճառել, գրել է մեզ մի այնպիսի նամակ, որ արտայայտում է նրա անչափ ցանկութիւնը մեր գործի առաջադիմութեան համար,,։

Նա կրկին վերցրեց նամակը, եւ իւր ուշադրութիւնը դարձրեց հետեւեալ տողերի վրայ.

"Մի գաղտնի զրոյցութիւն իմ սիրտը քաշում է դէպ ձեր կողմը. երանի՛ թէ այդ լինէր Սուրբ Հոգու ազդեցութիւնը,,։ Մի քանի տողից յետոյ՝ "Սողոմին Դամասկոսի ճանապարհում կոչող ձայնը՝ իմ հոգու ներսից սպառնում է խղճմտանքիս, թէ 'Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ կը հալածես զիս,,,։ Եւ նամակը վերջանում էր այս խօսքերով. "պատիւ եմ համարում քրիստոսով մնալ ձեզ միշտ անձնուէր բարեկամ — Սողոմոն-Բէկ Աւազակեանց,,։

Մինչ պարոն Աշխարունին տարուբերվում էր խառն մտածութիւնների մէջ, ծառան յայտնեց՝ հիւրի գալուստը։

Digitized by Google

— Թող հրամայէ, ասաց նա։

Ներս մտաւ Մելքի որդին, փառաւոր հագնուածճ, իւր երկու ծառաներով. նա քաղաքավարութեամբ սեղմելով պարոն Աշխարունու ձեռքը, անցաւ եւ նստեց սօֆայի վրայ, իւր ծառաներին ականացի անելով, որ դուրս գնան եւ սպասեն դրան մօտ։

— Բարի է ձեր գալուստը, գլուխ տալով ասաց պարոն Աշխարունին, ասիական քաղաքավարութեամբ. — ձեր այցելութիւնն ուրախացնում է մեզ։

Սոլոմոն-Բէկը, ի նշան շնորհակալութեան, նոյնպէս շարժեց գլխով։

— Ի՞նչ լուր ունիք Թէհրանից, ձեր հօրից, հարցրեց պարոն Աշխարունին սովորական ընդունելութիւնից յետոյ։

— Վերջին սուրհանդակով նամակը ցոյց է տալիս, որ հայրս շնորհ է ունեցել տեսութիւն ստանալ Շահից. Թագաւորը խիստ շատ բարեպատութիւն է ցոյց տուել, եւ խոստացել է կատարել նրա բոլոր խնդիրները։

— Ուրախալի է... բայց ինչ նպատակ ունին խնդիրները։

— Ցեղոյս հայերի նեղութիւնների մասին. մի փոքր թեթեացնել հարկերը եւ խանների անտանելի բռնակալութեանց դէմը առնել։

Ծառան մատոյց ղահուէ շաքարով. եւ վերջացնելուց յետոյ տուին նրան ղէյլան. Աւազակեանցը մատուցեց ղէյլանը պարոն Աշխարունուն, բայց նա հրաժարուեց, ասելով թէ ծխելու սովորութիւն չունէր։ Աւազակեանցը միայնակ սկսեց ծխել։

— Բայց իմ հօր գլխաւոր խնդիրը ձեր մասին է, որ ես յայտնում եմ ձեզ որպէս գաղտնիք, խօսեց Սոլոմոն-Բէկը։ — Ատրպատականի գլխաւոր հոգեւոր Առաջ-

Digitized by Google

նորդի խորհրդով, հայրս պիտի բողոքէր Շահին, որ ձեր տունը արտաքսուի այս երկրից։

— Օհ՛օ . . . բացականչեց պարոն Աշխարունին ժպտելով. — յետոյ։

— Հօրս մի այդպիսի ձեռնարկութիւնը չափազանց ընդդէմ լինելով իմ կամքին, ես միշտ գրել եմ նրան, չլինի՛ թէ ձեր մասին բողոքաւոր լինի Թէհրանում. երկար թախանձելուց յետոյ, ահա այդ վերջին նամակը մի փոքր մխիթարեց ինձ։

Ես դուրս բերից իւր թղթերի կաշեայ պահարանից մի նամակ, որի վերջում գրուած էին այս խօսքերը. —

"Այն մոլորեցուցիչների մասին դու այնքան երկար գրելով, իրաւ, ձանձրացրիր ինձ. վերջապէս, պատիւ դնելով քո որդիական սիրուն, խոստանում եմ քեզ այլ եւս չը բողոքել նրանց մասին վաեմափառ Շահին, ամենեւին չը հասկանալով, թէ դու ինչ նպատակ ունէիր նրանց այդչափ պաշտպանելու„։

— Այդ կնիքը ձեր հօրն է, հարցրեց պարոն Աշխարունին, նայելով մեծ կնիքին, որ դրոշմուած էր նամակի վերջում թղթի վրայ։

— Հրամեր էք. որովհետեւ հայրս գրել չը գիտէ, նա սովորաբար դրոշմում է իւր կնիքը իւր ստորագրութեան փոխարէն։

Բայց սուտ էր խօսում կեղծաւորը. նամակը բոլորովին հնարուած էր Ռէս Վասակեանի ձեռքով. իսկ Մելիք-Պիլատոս Աւազակեանցը վաղուց էր խնդրամատոյց եղել Աշխարունու մասին Թէհրանում։ Բայց բարեսիրտ քարոզիչը իւր բոլոր պարզամտութեամբ միանգամայն հաւատաց, թէ իրաւ Սոլոմոն-Բէկը իրանց մի այդպիսի բարերարութիւն է արել։

Digitized by Google

— Շնորհակալութիւն, ասաց նա. ձեր բարեխօսութիւնը Աստուծոյ գործի համար, անվայել չի մնալ Ծիրոջ առաջ։

— Ճշմարիտ, ես չեմ կարողանում գտնել բառեր բացատրելու, թէ ինչ գաղտնի զօրութիւն է, որ միշտ գրգռում է իմ նախանձը, ո՛րքան կարելի է այժ տալ Աստուծոյ խօսքի քարոզութեանը, այս խաւար երկրի մէջ. եւ միշտ աշխատել մեր ազգայիններուն լուսաւորութեան եւ կրթութեան համար։

— Ի հարկէ, այդ ձեր պարտքն է. մարդասիրութեան եւ ազգասիրութեան պատուէրը աւելի ձեզնից է պահանջելի, քան թէ մի աղքատից, որ իւր գլուխը չէ կարողանում պահպանել։

Սոլոմոն-Բէկը սկսեց աւելի ուժով ծխել. ծխախոտի արբեցուցիչ ազդեցութիւնը սկսեց բորբոքել նրա ուղեղը, եւ նա աւելի ոգեւորուած՝ խօսեց.

— Ես վաղուց ալդէն, ողորմած տէր, սրբազան նախանձ ունէի լինելու մի զօրաւոր շարժառիթ Աստծոյ գործի յառաջադիմութեան — այս երկրի մէջ, եւ դրաւով կատարել իմ պարտքը դէպ Աստուած եւ դէպ մարդկութիւնը։ Բայց դժբախտաբար իմ հօր անտարի մոլեռանդութիւնը թոյլ չէր տալիս երեւան հանել այդ խորհուրդը, որ այնքան ծանր դրուած էր իմ սրտի վրայ։ Բայց այժմ, իմ հօր բացակայութիւնը հնար է տալիս ինձ իրագործել այն՝ որի համար վաղուց մտադրուած եմ — խոստովանելով ձեր առջեւ իմ անկեղծ համակրութիւնը, եւ խնդրելով, պարոն, ընդունել իմ ի սրտէ բարեկամական ջերմեռանդութիւնը դէպ ձեզ...։

Պատանի Աւազակեանցը մոլորուեց իւր սերտած խօսքերի լաբիրինթոսի մէջ, որ արտասանում էր նա, որպէս աշակերտը իւր դասը։

Digitized by Google

Իսկ պարոն Աշխարունին հասկանալով նրա միտքը, ասաց իւր սովորական սառնասրտութեամբ.

— Ես ուրախ եմ... եւ մեծ ուրախութիւն է՝ եթէ կը ներէք ինձ այսպէս արտասանել — Աստուծոյ հրեշտակների առաջ, երբ մի մեղաւոր դիմում էր դէպ ապաշխարութիւն:

Վարժատան ղանգակը ընդհատեց նրանց խօսակցութիւնը. վարժապետը ժամացոյցին նայեց — ինների կէսն էր:

— Իրա՛ւ, ժամանակը թանգ է ձեզ համար. ես ալգելք եղայ... խօսից կեղծաւորը, — միայն խնդրում եմ շնորհել ինձ մի քանի լուսէ եւս. մի այլ խնդիր ունիմ — ես մի քոյր ունիմ տասնեւինն տարեկան, որին շատ եմ սիրում, իւր խեղճի եւ սուր ընդունակութեան համար: Ես ափսոսում եմ, որ այդպիսի քանքարաւոր բնաւորութեան տէրը մնայ առանց ուսման եւ առանց կրթութեան: Երկար ստիպմունքներից յետոյ, վերջապէս կարողացայ համոզել մօրս. նա հաճեցաւ Ալմաստը, այսպէս է քրոջս անունը — յանձնել ձեր առաքինուհի տիկնոջ հոգաբարձութեան, որպէս ասացի, ուսում եւ կրթութիւն սովորելու: Այժմ այդ է իմ խնդիրը, եթէ դուք եւս կը շնորհէք ինձ ձեր բարի հաճութիւնը, ընդունելով իմ սիրելի քոյրս, դրանով չափազանց կը պարտաւորէք ինձ:

— Դուք կարծում էք, մեր վարժարանները այնքան բարեկարգ դրութեան մէջն են, որ նրանց մէջ կարելի լինէր ընդունել փափկասուն տան որդի, պատասխանեց պարոն Աշխարունին ցաւելով. — մեր վարժանոցի աղքատութիւնը հազիւ է ներում ուսանելու նրանց մէջ մի քանի անտէրունչ որբերի միայն:

Digitized by Google

— Արդարեւ, ձեր վարժարանի վիճակը այժմ ցաւալի դրութեան մէջն է. եւ դրա պատճառը, որքան յայտնի է ինձ — չարանախանձ խաւարամիտներուն հալածասիրութիւնն է: Բայց ես, պարոն, հաստատ յոյս եմ տալիս ձեզ, ոչ միայն այդ հալածանքները հեռացնել, այլ ձեր վարժարանի կատարեալ ազատութիւնը ապահովել, որ սկսի օրէցօր ծաղկել եւ կատարելագործուել:

Պարոն Աշխարունին խորին մտածութեանց մէջ ընկղմուեց:

— Ես իմ քրոջ վարձը, շարունակեց Աւագակեանցը — կը վճարեմ որքան կարելի է առատ քանակութեամբ, որ ոչ միայն նրա ուսման եւ օրինական պահպանութեան համար բաւականանայ, այլ եւ հնար կը տայ նրանով մի քանի խեղճ աղջիկներ կառավարել, որ դուք, չը նայելով ձեր այժմեան նիւթական անկարողութեանը — պահպանում էք ձեզ մօտ ձրիաբար:

— Ուրեմն դուք կամենում էք ձեր քոյրը գիշեր ցերեկով յանձնել մեր հոգաբարձութեանը:

— Հրամեր էք. ըստ իմ կարծիքի, միայն չոր եւ ցամաք ուսումը բաւական չէ մի օրիորդի կատարելութեան համար. գլխաւորը մի բարեկարգ կրթութիւնն է՝ Աւետարանի անաղօտ լուսով, եւ այդ, այլ եղանակով չի լինի, բայց միայն՝ երբ աշակերտը ամբողջովին է գտնվում իւր դաստիարակների աչալուրջ հսկողութեան ներքոյ:

— Ներէցէք, խնդրեմ, որ անմիջապէս չեմ կարող պատասխանել ձեզ, ձեր քրոջ մասին, ասայ պարոն Աշխարունին — ես կը յայտնեմ ձեզ վաղը առաւօտ:

Վարժատան զանգակները յայտնեցին դասերի սկսուիլը:

— Իրաւ, ես արգելք եղայ ձեզ, ոտքի վրայ կանգնելով խօսեց Աւագակեանցը. — բայց մոռացայ հարցնել.

ես լսեցի, Տէր-Առաքելենց պարոն Ռուստամը հիւանդ է, ինչպէս է այժմ նրա առողջութիւնը։

— Խիստ վատ, պատասխանեց իւր հիւրը ճանապարհ դնելով — պարոն Աշխարունին։ Թէև շուտով մի փոփոխութիւն դէպի լաւը չէ լինի, նրա կեանքին յոյս չը կայ։

— Ա՜հ. ցաւալի է, ցաւալի... բայց ես կ'ուզէի տեսնել ձեր գրատունը, ասաց նա կանգ առնելով նախասենեակում — ինձ պէտք է ձեզնից գնել մի հատ Աստուածաշունչ. խիստ շատ եմ սիրում այդ գիրքը։ Թէպէտ ես մի հատ ունիմ, բայց այն յիմար վենետիկցոց տպածն է, հին եւ մեռած լեզուով. բայց ինձ խիստ սիրելի է սուրբ գիրքը աշխարհաբար լեզուով։

Պարոն Աշխարունին բացեց սենեակին կից դուռը եւ առաջնորդեց հիւրը դէպի գրատուն։ Սոլոմոն-Բէկը անխորհուրդ կերպով, մեքենաբար նայում էր պատուհաններում դրած մեծ եւ փոքր գրքերի վրայ։ Նա վերցրեց մի հաստարակ կազմով Աստուածաշունչ, եւ տուեց ծառային, դնելով սեղանի վրայ հինգ հատ ոսկի։

— Դուք, պարոն, գնից աւել հատուցիք, ասաց պարոն Աշխարունին — դրա գինը հինգ կռան է։

— Դուք առհասարակ ձեր գրքերը էժան գնով էք վաճառում. եւ շատ անգամ, ինչպէս յայտնի է ինձ — ձրի էք բաշխում աղքատներին։

Այնուհետեւ նա խնդրեց, որ նրան ցոյց տային վարժարանը։

— Մեր վարժարանները այնպիսի բան չեն, որ արժանի լինէին ձեր հարցասիրութեանը, առարկեց պարոն Աշխարունին։

Digitized by Google

— Ո՛չ, ո՛չ, ես կը սիրեմ նրանց արդի չքաւորութեան մէջ եւս, պատասխանեց նա մեծահոգութեան հովեր առնելով — աղքատութիւնը պարսաւելի չէ։

Պարոն Աշխարունին ներս տարաւ նրան մի մերկ եւ սառն սենեակ, որ դասատունն էր կազմում։ Այնտեղ տասը նստարան կար աշակերտների համար, բայց նրանցից միայն մինի վրայ նստել էին եօթն աշակերտ։ Այդ փոքրիկ սենեակը միանգամայն եւ դասատուն էր եւ աղօթարան, որովհետեւ կիւրակէ օրերը այնտեղ ժողովում էին մարդիկ եւ կանայք աղօթքի եւ քարոզ լսելու համար։ Այնտեղ կար մի սեւ գրատախտակ եւ մի ամբիոն, սեւ փայտից, որի վրայ քարոզի եւ դասախօսութեան ժամանակ կանգնում էր պարոն Արամը։

Աշակերտները ոտքի կանգնելով, ցոյց տուին արժանաւոր յարգանք։ Սոլոմոն-Բէկը մօտենալով, նայում էր նրանց դասագրքերին։ Նա գնալով կանգնեց պատից կախ ընկած դասացուցակի առաջ, եւ սկսեց կարդալ ամէն մի ժամի համար որոշուած դասերը.

— "Աստուածարանութիւն... մեկնութիւն սուրբ գրոց... եկեղեցական պատմութիւն... բնական պատմութիւն... մաթեմատիկա...,, էլ ինչ չէք ուսուցանում. շատ զարմանալի է մի այդպիսի կարճ ժամանակում այդքան յառաջադիմութիւն, ասաց նա, դառնալով դէպ վարժապետը։

Այստեղից դուրս գնալով, վարժապետը նրան ներս տարաւ աղջիկների դասատունը։ Սոլոմոն-Բէկը հազիւ էր կարողանում բռնել իրան, այնտեղ մնած ժամանակ։ Այդ սենեակը իւր աղքատին կերպարանքով շատ նման էր տղայոց դասատանը։ Այստեղ, տիկին Աշխարունին միայնակ, ոտքի վրայ, կանգնած սեւ գրատախտակի առաջ թուաբանութեան դասն էր բացատրում։ Աշակերտուհի-

Digitized by Google

ներըը թուով երեք հոգի էին։ Հեռուն, լուռ եւ մունջ, նստել էր, արդէն իւր ուսումը աւարտած չորրորդ աշակերտը՝ օրիորդ Սալբին։ Պատանի Աւազակեանը շփոթուեցաւ տեսնելով չքնաղագեղ օրիորդին, որ իւր տխրամած դէմքով՝ աւելի եւս հիացուցիչ էր։

Աւազակեանը մտածեց հնար գտնել մի քանի րոպէ այնտեղ աւել մնալու. նա քաղաքավարութեամբ մօտեցաւ տիկին Սալտեփինին, եւ նրա ձեռքը քնքշաբար սեղմելով, հարցրեց.

— Ձեր սիրելի աշակերտուհիները միմիայն ուսմա՞մբ են պարապում։

— Ո՛չ. կէսօրից յետոյ ասղնագործութեամբ, պատասխանեց տիկին Աշխարունին։

— Դուք կը հաւանէք, պարո՛ն, երբ որ տեսնէք, թէ որպէս գեղեցիկ նկարներով ասղնագործում են աշակերտուհիները թղթի եւ կտաւի վրայ, աւելացրեց պարոն Աշխարունին։

— Ցոյց տուէք, աղաչում եմ, նրանց գործերից. ես շատ ուրախ կը լինեմ տեսնելու, ասաց Սոլոմոն-Բէկը։

Տիկին Աշխարունին դուրս բերեց ահագին փայտեայ պահարանից գոյնզգոյն թելերով նկարուած թղթերի եւ կտաւների մի ծալք, դրեց գրասեղանի վրայ եւ սկսաւ մէկմէկ ցոյց տալ։

Պատանի Աւազակեանցը, գեղեցիկ ձարտարութեանց մէջ առանց որեւէ ճաշակ կամ համազգացութիւն ունենալու՝ ամէն մինը նայելու ժամանակ, թէ լաւ եւ թէ վատ, առհասարակ բոլորի համար ասում էր.

— Ա՛խ. հրաշալի՛ է, հրաշալի՛... իմ քրոջ խելքը կը գնայ, երբ իմանայ թէ այստեղ ուսուցանում են այսպիսի գեղեցիկ ասղնագործական նկարներ։

Digitized by Google

վերջը նրա ձեռքը հասաւ մի յատկապէս պատրաստուած թուղթ, որ կարուած էր ծխածանի գուներով մետաքսեայ եղէգէ վրայ. թղթի վրայ գոյնզգոյն թելերով նկարուած էր մի բոցավառուած սիրտ, որ կրակի ճաճանչներ էր արձակում. նրա ամէն մի կողմը կարմիր սիրուն վարդ, եւ վերեւը՝ գեղեցիկ ասղնագործ տառերով գլուած էր. "Աստուած սէր է„. իսկ ներքեւը, զարմանալի ճարտարութեամբ՝ մանր, գոյնզգոյն տառերով "Ծովասաբենց Սալթի„:

Աւազակեանցը չը կամեցաւ ձեռքից թողուլ այդ հրաշալի նկարը, որ օրիորդ Սալթին էր ասղնագործել իւր սիրականին ընծայելու, դրքի մէջ դնելու համար. նա վերցրեց նշանիկը ասելով.

— Պատուելի տիկին, ես շատ յոյս ունիմ, դուք ինձ առաւել ուրախացնելով... յիշատակի համար կ'ընծայէք ձեր աշակերտուհիների ձեռագործերից մինը. այն թանկագին ընծան թող լինի այս գեղեցիկ նշանիկը...:

Տիկին Աշխարունին իւր հաճութիւնը ցոյց տուեց, եւ Սոլոմոն-Բէկը թաղցրեց խորհրդաւոր նշանիկը իւր թղթերի պահարանի մէջ:

Օրիորդ Սալթին, հեռուից նշմարելով, որ իւր նշանածի համար նկարած նշանիկը ուրիշի ձեռքը անցաւ, տհաճութեամբ եռում էր:

Հազարաւոր կեղծաւորութեան ցոյցերով, պատանի Աւազակեանցը իւր ուրախութիւնն եւ բարեկամութիւնը կրկին եւ կրկին շեշտելուց յետոյ, հեռացաւ վարժատնից:

Ճանապարհին, մինչեւ իրանց տուն հասնելը՝ նա մի քանի անգամ դուրս բերեց "սիրոյ յիշատակարանը„, նայեց նրա վրայ, եւ կրկին տեղաւորեց պահարանի մէջ: Իսկ իւր սենեակը մտածին պէս՝ նա սկսեց խելագարի նման

Digitized by Google

համբուրել եւ սեղմել իւր սրտին, ասելով. "այդ քնքոյշ սիրտը, որ այդպէս բոցավառուած՝ ցոյց է տալիս սիրոյ վարդերը՝ նկարել են նրա սիրուն մատները":

Նա մօտեցաւ ահագին երկաթեայ արկղին, բաց արաւ, դուրս բերաւ այն տեղից հարիւր հատ ոսկի աշրաֆի, եւ ամէն մի յիսունը առանձին թղթի մէջ փաթաթելով, կնքեց. մինի վրայ գրելով "աղջիկներին", իսկ միւսի՝ "տղաներին": Ու յետոյ, մի նամակ եւս գրեց հետեւեալ բովանդակութեամբ.

"Պարոն,

Ձեր սիրելի աշակերտների եւ աշակերտուհիների գեղեցիկ աշխատութիւնները իմ մէջ մի անմոռաց սէր ազդելով, ես, ի նշան իմ շնորհակալութեան, իբրեւ ընծայ, ուղարկում եմ նրանց այդ չնչին արծաթը: Խնդրում եմ ընդունէք ներողամտութեամբ:

Սոլոմոն-Բէկ Աւազակեանց":

Նա յանձնեց նամակը ընծաների հետ — ծառային. ծառան հեռացաւ, եւ ինքը, յափշտակուած խորին հոգեզմայլութեամբ, ընկողմանեցաւ սոֆայի վրայ եւ սկսեց հրճուանքով նայել հրաշալի նշանիկին:

Յանկարծ ներս մտաւ Ռէսը:

— Ի՞նչպէս անցաւ, հարցրեց նա:

— Շատ լաւ. արդարեւ, շատ լաւ, Ռէս, պատասխանեց Սոլոմոն-Բէկը: — Բախտը ձեռնտու եղաւ ինձ, այնտեղից այս գեղեցիկ յիշատակարանը եւս բերելու:

Նա տուեց Ռէսին նշանիկը:

Ռէսը ուշադրութեամբ զննելով՝ ասաց.

— Նկարիչը չէ սխալուել. այո, "Աստուած սէր է...": Նւեւում է, օրիորդի թարմ ուղեղի մէջ երեւա-

Digitized by Google

կայութիւն է խաղում... սէրը, իւր կախարդական սլաքը դիպցրել է նրա սրտին: Շթէ ես էլ աստնագործել գիտենայի, այդ նշանիկի վրայ կ'աւելացնէի մի նազելի բանաստեղծի երգը:

— Ո՞ր բանաստեղծի, ինչ երգ, հարցրեց Սոլոմոնիկը:

— Մելքզադէի, ահա այս երգը.
Եւ նա սկսեց իւր խռպոտ ձայնով երգել:

"Ձի սէր է Աստուած,
Սիրով ստեղծեց՝
Աշխարհ հրաշակերտ":
Այսպէս մեզ խօսեց
Սէր քարոզողի
Իմաստուն աշակերտ:

Ջո հոգւոյ միջում,
Ո՛վ իմ հրեշտակ
Գտայ այդ սուրբ սէր.
Ուրեմն ես քեզ
Կոչեմ համարձակ՝
"Իմ Աստուած, իմ Ցէր":

Եթէ չես Աստուած,
Ինչո՞ւ ես կրում
Ջո հոգւոյ միջում
Այդ Աստուածութիւն:

Եթէ չես Աստուած՝
Ուրեմն չը կայ
Երկինք եւ երկրում —
Բնաւ Աստուածութիւն:

Digitized by Google

— Ճշմարիտ է ասել բանաստեղծը, առարկեց Սոլոմոն-Բէկը: — Երբ Աստուած սէր է, եւ սէրը Աստուած է, ուրեմն, ուր կայ սէր, այնտեղ կայ եւ Աստուածութիւն: Կարծեմ, Ռէս, ես չը սխալուեցայ իմ տրամաբանութեան մէջ:

* * *

Նոյն օրուայ իրիկնապահին, օրիորդ Սալքին, ախուր եւ սրտաբեկ, մտաւ տիկին Սալլաթինի սենեակը, եւ գտաւ նրան նոյնպէս տխրամած դէմքով, նստած իւր գրասեղանի առաջ: Ծաղկալի օրիորդը դեռ նոր էր լսել Ռուստամի հիւանդութիւնը: Սա երկար, լուռ նստած նայում էր յատակին, ամաչելով խօսել եւ հարցնել իւր սիրականի հիւանդութեան մասին: Տիկին Աշխարունին նկատեց այդ:

— Լսե՞լ ես, Սալքի, Ռուստամը հիւանդ է, ասաց նա:

Օրիորդը պատասխան չը տուեց. նրա սիրտը լցուած էր:

Դու գնա նրա մօտ, Սալքի, դու կը թեթեւացնես նրա հիւանդութիւնը, աւելացրեց տիկին Աշխարունին:

— Ես շատ եմ ցանկանում, պատասխանեց օրիորդը, — բայց կարելի է այդ, մի այնպիսի երկրում, ուր այնքան չարաչար դատապարտուած է կանանց սեռի ազատութիւնը:

— Ուրիշ մարդկանց հիւանդի մօտ գնալը — արգելուած է. պարոն Մելիքզադէն է մենակ նրա մօտ. ես նրան իմաց կը տամ քո մասին, եւ նա կը գտնէ մի արձակ միջոց, քեզ հիւանդի մօտ գաղտնի ներս թողնելու:

— Ես շնորհակալ կը լինիմ, պատասխանեց օրիորդը, — միայն, որքան կարելի է զգուշութեամբ, իսկոյտառակ չը լինիմ, երէ տեսնեն մեզ:

— Այդ մասին ինքը, պարոն Մելիքզադէն կը հոգայ: Դու սպասիր քո սենեակում, մինչեւ քեզ իմաց տամ:

Digitized by Google

Գիշերուայ տասն եւ մէկ ժամից անց էր։ Օրիորդ Սալբին, Տէր-Առաքելենց տանը, միայնակ նստած էր մի մերկ եւ ցուրտ սենեակում, մթին խաւարի մէջ։ Չը նայելով, որ դուրսը կատաղի մրրիկն էր մռնչում, չը նայելով, որ ցուրտը, անվառ սենեակում սառեցնում էր, բայց եւ այնպէս, օրիորդը այնքան բորբոքուած եւ լցուած սրտով՝ չէր զգում ոչ մի սարսուռ։

Յանկարծ լսելի եղաւ բանալիի շարժուելու ձայնը, դռները յետ գնացին, ներս մտաւ պարոն Մելիքզադէն, միայնակ, եւ ճրագը ձեռին։

— Ներողութիւն, ասաց նա — ես ձեզ երկար սպասել տուի. այս գիշեր պարոն դռքտորը չը կամեցաւ շուտ գնալ։

Մերձակայ սենեակում ժամացոյցը զարկեց տասնեւերկու։

Ներանք դուրս եկան սառցատնից։ Պարոն Մելիքզադէն կրկին հանգցրեց ճրագը։ Ներեցէք, ասաց նա — մութի մէջ եւս կարելի է գնալ. բայց ես չեմ ուզում, որ տեսնեն ձեզ։

Օրիորդ Սալբին, որպէս ուշակորոյս, ոչ մի պատասխան չէր տալիս, մի միայն մեքենաբար հետեւում էր իւր առաջնորդին, եւ նրանք, մթին, ոլոր-մոլոր սանդուխտներով բարձրանում էին դէպ հիւանդի քնարանը։ Պարոն Մելիքզադէն բաց արեց մի սենեակի դուռ, ուր աղօտ լուսով վառւում էր ճրագը, եւ ներս թողեց օրիորդ Սալբինին ասելով.

— Դուք, պատուելի օրիորդ, այստեղ կը գտնէք հիւանդը։ Բայց ինքը, դուռը կողպելով հեռացաւ։

Դեղերի, դարմանների սուր հոտաւէտութիւնը, որով լցուած էր հեղձուցիչ սենեակը, բաւական էր զարկելու օրիորդի սրտին այն սաստիկ հարուածը, որ զգաց նա...։

Digitized by Google

Նա, հազիւ հազ զսպելով իւր սպառուած զօրութիւնը, մօտեցաւ մահճակալին, ուր դրուած էր հիւանդը՝ բոցավառուած կրակի մէջ։ Նրա դէմքը գունատ եւ նուաղած չէր՝ մաշուած հիւանդների նման, այլ սաստիկ շառագունած, վառվռում էր, որպէս լցացած լուսինը։ Նրա մեծ սեւորակ աչքերը՝ բալուկացաւ ունեցողների պէս մեռած եւ խոր գնացած չէին, այլ կարմրած՝ փայլում էին լի կրակով։ Ինչ նրա արագ արագ շնչառութիւնը էր — լիքը, զօրաւոր եւ սարսափելի։

Ղազարի օրիորդը, Ղևսէի նման, իւր մարմինը տարածեց հիւանդի վրայ, բերանը՝ բերանին դրեց, երեսին քսեց, սիրտը՝ սրտին շօշափեց, եւ այսպիսով, ասես թէ իւր բոցավառուած սիրոյ ելքերտականութեամբ, կամենում էր նրան նոր շունչ տալ եւ կենդանութիւն ներշնչել։ Բայց հիւանդը չը զգաց այդ մարգարէական հոգու ներշնչութիւնը, որպէս Սունամացի կնոջ զաւակը... նա չարթնացաւ իւր անզգայութիւնից։

Ռուստամը վառվռում էր սաստիկ տաքութեան մէջ։ Նրա խօսքերի մէջ, որ անգադար զառանցում էր իւր երեւակայական ցնորքներում, միայն բացորոշակի, հասկանալի էին — "Սալբի„ — "իմ սիրական„ — բառերը։

Օրիորդը ծունկ չոքեց յատակի վրայ, եւ իւր քնքոյշ ձեռքերը փակելով կրծքի վրայ, իւր ոգեւորուած հայեացքը բարձրացրեց դէպի վեր, եւ սկսեց խորին ջերմեռանդութեամբ աղօթել... եւ աղօթել այնքան երկար, մինչեւ լուսաբացին պարոն Մելիքզադէն ներս մտաւ, բռնեց նրա ձեռքից եւ վեր կանգնեցրեց ասելով.

— Այժմ, իմ բարեկամ, հեռացէք, բժշկի գալու ժամանակն է։

Digitized by Google

Ի.

ԴԷՐՎԻՇԸ

Կէս օր էր։

Պարոն Աշխարունիի տանը, տղաներուն դաստիարակ, տասը նստարաններուն հինգը ամբիոնի աջ, իսկ հինգը՝ ձախ կողմնակին էին տեղաւորուած — կարգով։ Ձախ կողմի նստարանները, բոլորը բռնուած էին կանանցով եւ վարժատան աղջիկներով, որոնց թիվը մ, զուգուած-զարդարուած նստել էր առաջին նստարանի վրայ Աւագակեանց Ալմաստը՝ Սոլոմոն-Բէկի քոյրը, որ քանի օր առաջ, ընդունուել էր իբր աշակերտուհի տիկին Աշխարունու մօտ։ Ներա կողքին նստել էր միականի պառաւ Դօզէն, քառասուն եւ հինգամեայ աղջիկը՝ Ռէս Վասակեանի քոյրը, որի ծաղկահար եղած եւ թըռթըռնած մեայլոտ դէմքը աւելի նման էր աբեթի կամ սարադի (խարբալի)։ Օրիորդ Դօզէն իւր անհամեմատ տգեղութեան պատճառով, — ուր մնաց, որ անգութ ծաղիկը տարել էր ներա աչքերից մէկը, — մնաց միշտ աղջիկ։ Ոչ ոք չը կամեցաւ խնդրել նրա ձեռքը, թէպէտ նրա եղբայրը շատ աշխատեց մոլորեցնել մինը իւր քրոջ որոգայթի մէջ։ Նա, մտադրուած լինելով՝ — որպէս հաւատացնում էր նրա եղբայրը — առանձնանալ մի վանքում, եւ իւր անձը նուիրել ճգնութեան եւ ապրել Աստուծոյ համար, նախամեծար համարեց որպէս կամաւոր աղախին, ձրիաբար,

Digitized by Google

իւր հոգու համար, ծառայել Աւետարանի դուստրներին՝ Աշխարհունու տան մէջ։

Ամբիոնի աջ կողմի նստարանները, բոլորը բռնուած էին մարդկանցով, որոնց թիւում, առաջին նստարանի վրայ, փաթաթուած իւր թանկագին մուշտակի մէջ, նստած է Սոլոմոն-Բէկ Աւազակեանցը, թիւին տուած յետակայ նստարանին, ձեռքը ծնօտին դրած, միակողմանի թէք նստած, իւր աչքերը ջրած՝ — անդադար նայում էր իւր սրտի ամենասիրելի առարկային — օրիորդ Սալբիին, որը բոլորի յետեւը, նստած լուռ եւ տխրամած դէմքով, ասես թէ նրա ուշքը ու միտքը բարձրացած, խելքը յափշտակուած՝ տարու՛ել էր մի այլ աշխարհ, եւ այնտեղ ողբում էր մի բոլորովին այլ առարկայի համար . . . ։

Տիրում էր խորին լռութիւն։ Քարոզիչը ամբիոնի վրայ կանգնած թերթում էր Աստուածաշունչը, նշանակելով իւր քարոզութեան հարկաւոր վկայութիւնները Սուրբ Գրքից։

Շուրջ այդ փոքրիկ եկեղեցու բոլոր անդամները հաւաքուած էին, քարոզիչը ժամացոյցին նայելով յայտնեց երգուելիք երգի գլուխը։ Ժողովրդի ամէն մինը իւր ձեռքի երգարանի մէջ բաց արին ցոյց տուած երգը եւ բոլորը, այր եւ կին, տղայ եւ աղջիկ, սկսեցին միաձայն, ջերմեռանդ եւ քաղցր եղանակով ներդաշնակել հոգեւոր տաղերգը։

Երգից յետոյ կրկին տիրեց լռութիւն։

Քարոզիչը ոտքի ելաւ, իւր ջերմեռանդ հայեացքը դէպ վեր բարձրացնելով, աչքերը խփած, մտքով երկինքը վերացած, սրտաուչ եւ ազդու եղանակով — կարդաց մի հրաշալի ազօթք։ Բոլոր ժողովուրդը բերանքով ընկած՝ խորին հոգեւոր մտածութեան մէջ էր։

Digitized by Google

Աղօթքից յետոյ քարոզիչը բացեց Նոր Կտակարանում երկրորդ Կորնթացոց ժա. գլուխ 29 համարը, եւ սկսեց կարդալ. "Ո՛վ կը տկարանայ, ու ես չեմ տկարանար. ո՛վ կը գայթակղի, ու իմ սիրտը չ'այրիր,,: Եւ Պօղոս Առաքեալի այդ խօսքը իբրեւ բնաբան ընտրելով, պարոն Արամը առաջնախօսեց: Նրա շրթունքներից մեղր ու կաթ էին ծորում, եւ քաղցրալուր ու գրաւիչ խօսքերով յեղյեղում էր նա Աստծոյ բանի քարոզութիւնը: Նրա արտասանութիւնը, ճարտասանական ձեւերը, նրա բոլոր խորհրդական շարժմունքների հետ զուգաւորուած՝ հաճում, թափում էին Աւետարանի խրատները ունկնդիրների գլխի մէջ:

Բայց այդ հռետորի ատենախօսութիւնը ոչ մի ազդեցութիւն չարեց Սոլոմոն-Բէկի բթացած եւ սառած ուղեղի վրայ, որ նոյն րոպէում, ով գիտէ որպիսի երեւակայական ցնորքներով էր հրապուրուած: Նա, իւր ապառնի յոյսերով ոգեւորուած, աչքերը անթարթ լարած՝ նայում էր օրիորդ Սալբիի վրայ:

Քարոզից եւ կրկին տաղերգութիւնից յետոյ, պարոն Արամի նշանի վրայ, եղբայրները ոտքի եկան, եւ պարոն Մելքոզադէն սկսեց աղօթել, միեւնոյն ժամանակ խնդրելով Աստծուց առողջութիւն իրանց եղբայր Ռուստամի համար:

Այդ աղօթքը դառնացրեց Սոլոմոն-Բէկի սիրտը. նա չէր ուզում աղօթէին այն մարդու համար, որի կեանքը այնքան անտանելի էր իրան. այնքան վայրենի եւ անգութ սրտով նրա մահն էր ցանկանում:

* * *

Digitized by Google

Միեւնոյն ժամուն, երբ Քրիստոսի այդ փոքրիկ հօտը հաւաքուած անցնում էին Տիրոջ շաբաթը աղօթքով եւ Սուրբ Դրքի ընթերցանութեամբ, տիկին Թարլանը, իւր փեսայի տեսութեան գնալով, նստած Հուրի Յան-Դայայի մօտ՝ ծանր ու բարակ խօսում էին։

— Այդ յիմարների բոլոր գործերը այնքան անխելքութեամբ են, որպէս իրանց բռնած ճանապարհը (կրօնքը), ասաց վերջապէս Հուրի Յան-Դայան։ — Էլ ի՞նչ ասեմ, խնամի, սիրտս այրւում կրակվում է, չեմ կարում խօսել... մնաշեցին, սպանեցին իմ խեղճ Թոռնիկը, տալով մի ցնդած ինկլիզ բժիշկի ձեռքը, որ ոչ լեզու է իմանում եւ ոչ էլ խօսք հասկանում։

— Հա՛, այդպէս է, խնամի, պատասխանեց տիկին Թարլանը։ — Բայց նրանց ականջ դնելու չէ. դու քո գիտցածը ձեռքից մի թողուր. Թոռիդ ճարն արա։

— Էհ, եթէ ինձ իմ կամքին թողնէին, հիմա Ռուստամը տան անգամ առողջացած կը լինէր։ Բայց այժմ, ո՛վ է ծերին պատիւ դնողը, ո՛վ է նրա խրատը լսողը. ամէն մարդ ինքնագլուխ է դարձել. — ինչ որ խելքին փչում է՝ անում է. աշխարհս փոխուել է. — յոյս, հաւատ չէ մնացել. ոչ Աստուած են ճանաչում եւ ոչ Սուրբը. ոչ խունկ են իմանում՝ եւ ոչ մոմը, ոչ խաչը եւ ոչ պատկերը, ոչ մատը եւ ոչ էլ մատունքը... ամէնքը դարձել են անաստուած։

Ներս է մտնում Նազլու աղախինը։

— Աղջի, ի՞նչ եղաւ, չեկաւ Դէրվիշը, հարցրեց Հուրի Յան-Դայան։

— Դէրվիշը դրանը սպասում է, պատասխանեց աղախինը։

Digitized by Google

— Ասա՛, թոզ գայ, հրամայեց տան տիկինը։

Մի քանի րոպէից յետոյ ներս մտաւ Դէրվիշը. — մի բարձրահասակ, եւ նիհար մարդ. նրա դէմքը սոսկալի էր, եւ արեւից այրուած. աչքերը վառվռում էին կատաղի կերպով։ Նա հագած ունէր մի սպիտակ շապիկ, որ իջնում էր մինչեւ նրա մերկ ծնկները։ Կուրծքը բաց, նոյնպէս այրուած արեւից. գլուխը առանց գդակի, երկայն ծամերը կապած էր մազէ թելերից հիւսած վարսակալով։ Նրա հոլանի, բոլորովին մերկ թեւերի բազուկների վրայ՝ փաթաթած էին նրա սեւ ղատֆահնէրը։ Ուսին գցած ունէր իւր փօստ փալանդին (ընձու կաշին)։ Ձախ բազուկից քարշ էր գցել խալկո-ը. կշտից կախել էր իւր նաֆիէրը (եղջերափողը) եւ ջո-ըեանդը (մախաղը), որի մէջ դրած էին մի քանի գրքեր։ Նա, ձեռքին բռնած իւր հաստ գաւազանը, առաջ եկաւ, եւ իւր սովորական եղանակով ողջունեց, ասելով. —

Ղա՛-հա-հա՛։

Հուրի Ջան-Դայան եւ տիկին Թալլանը տարան նրան հիւանդի մօտ։ Դէրվիշը նստեց հիւանդի մօտ եւ աչքերը պղտցած՝ սկսեց նայել նրա երեսին. յետոյ ականջը դնելով նրա սրտին, խորին ուշադրութեամբ սկսեց լսել։

— Դա խօսում է ինքն իրան, հայտնեց նա։

Հա՛, Բարա-Դէրվիշ, պատասխանեցին պառաւները. — հիւանդը ամենեւին դադար չունի խօսելուց։

Դէրվիշը դուրս բերաւ մախաղից ֆաղը[1] եւ սկսեց գցել նրան պղնձի սկուտեղի վրայ։

— Հիւանդը բռնուած է դեւերից. չար ոգիները չարչարում են դրան, ասաց իսլամի ճգնաւորը, ֆաղը գցելուց յետոյ։

[1] Ըստ մի տեսակ գուշակի է, մեռաղից շինած, գրուած հնդկական թուանշաններով, որով հմայում են։

Digitized by Google

— Մենք էլ գիտենք, այդպէս է, պատասխանեցին պառաւները. — միայն դրա ճարը քեզանով է, աղա Դէրվիշ։

— Տուէք ինձ տասը կրան, այնպէս անեմ, որ առաւօտեան, ձեր հիւանդը վեր կենայ մահճից։

— Մենք չենք խնայի քսան կրան եւս, միայն թէ մեր որդին առողջանայ։

— Ուրեմն բերէք ինձ ալիւր, մի թասի մէջ պաղ ջուր, մի լայն բերանով սրուակ, եւ մի սեւ գոյնով կըշկշոպ։

Երբ տուին նրան խնդրած բաները, Դէրվիշը վրանաձեւ ծածկուեց կըշկշոպով եւ չոքեց, կզուեց բերանքվայր, տանելով իւր ծածկոցի տակ ալիւրը, ջուրը եւ սրուակը։ Կէս ժամի չափ զարհուրելի արտասանութեամբ նա կարդում էր մի արաբերէն գիրք. այնուհետեւ լսելի եղան խառն ձայներ, որ նման էին բոլոր կենդանիների ձայների, եւ ահ ու սարսափ էին ազդում։

— Լուռ, անիծուածք, լուռ ով լերը, ասում էր Դէրվիշը կոչելով ոգիների անծանօթ անուններըր։

Մի քառորդ ժամ է տեւում Դէրվիշի կռիւը ոգիների հետ, մինչեւ նա, ձգելով ծածկոցը, վեր է բարձրանում, ձեռքին բռնած սրուակը, որի բերանը պինդ կալած էր մատով։

— Ահա այդպէս, գարշելիներ, խօսեց Դէրվիշը. դուք կը մնաք բանտարկուած այս սրուակի մէջ մինչեւ իսլօքանաք։

Հուրի Ջան-Դայան եւ տիկին Թարլանը հետաքրքրութեամբ նայեցին սրուակին։ Բայց ինչեր չը կային նրանում։ Թափանցիկ ապակիից երեւում էին — փոքրիկ դեղին եւ կանաչ գորտեր, փոքրիկ մկներ, մի քանի

հատ մանրիկ օձեր, կարիճներ, խեցգետին, մարախ — ինչ որ ուզես։ Դէրվիշը սկսեց սրուակի դրսից մատով ցոյց տալ, թէ այդ կենդանիներից որը՝ ո՛ր դեւն էր։

— Ահա այդ կանաչ գորտը՝ Ինքնէն ոչխին է, այդ կարմիր օձը՝ Քեվքեաբն է. այդ դեղին կարիճը՝ Վեգեանն է. եւ այլն, եւ այլն։

Բայց երբ նա մոմով կալում էր սրուակի բերանը՝ յանկարծ մարախը թռաւ։

— Դու փախա՞ր, անբարիշտ, ասաց նա, — վնաս չունի, քո ընկերները այստեղ են, դո՛ գնա, դու մենակ ոչինչ չես կարող անել։

Պառաւները շատ տրտմեցան, երբ փախաւ դեւերից մէկը։ Դէրվիշը նկատելով նրանց վրդովմունքը, սիրաթարեց նրանց, տալով մի թիլիսմանական թուղթ, որ դնեն հիւանդի բարձի տակ, եւ կապեց նրա բազուկին բամբակե մի թել, որը մի քանի րոպէ բերանի դէմ բռնած՝ աղօթք էր կարդում նրա վրայ։ Այնուհետեւ առնելով տասը կրանը, Դէրվիշը հեռացաւ միամտացնելով պառաւներին, թէ այդ թուղթը եւ թելը հեռու կը պահեն հիւանդը այն մի հատ դեւից, որ փախաւ, եւ կնքելով սրուակի բերանը մոմով, դրեց իւր մախաղի մէջ։

Երեկոյեան պահուն, բժիշկը գալով հիւանդի մօտ, երբ շօշափեց նրա զարկերակը, զարմացաւ, տեսնելով նրա բազուկի վրայ փաթաթուած թիլիսմանական թելը։ Նա ժպտաց, ասելով.

— Կախարդութիւնը դեռ չէ կորցրել իւր յիմարական հետքերը խաւար ազգերի միջից . . . ։

Բայց եւ այնպէս, Ռուստամի հիւանդութիւնը նոյն երեկոյ բաւական փոփոխութիւն էր արել — դէպ լաւը։ Նա կամաց կամաց խօսում էր, եւ հասկանում էր, ինչ

որ ասում էին նրան: Եւ Հուդի Յան-Դայան, առանց տարակուսանքի հաւատում էր, թէ Դէրվիշի ջանքերը ի զուր չանցան:

Դեռ մըստր Սէյսունը նստած էր հիւանդի մօտ, երբ ներս մտան տէր Մարկոսը եւ Սոլոմոն-Բէկը՝ Ռէս վաստակեանի հետ: Յետոյ եկան պարոն Արամ Աշխարունին եւ պարոն Յոսիով Մելիքզադէն:

Տէր Մարկոսը առանց լռելու խօսում էր: Ռէս վաստակեանը հանդէս էր մտել իւր կեղծաւոր զուարճախօսութեամբ: Հիւանդը գանվում էր իւր հոգու բարեղ տրամադրութեան մէջ: Ինքնաեռը եփ էր գալիս սեղանի վրայ: Պարոն Մելիքզադէն ընտանեբար թէյ էր պատրաստում:

— Դէ՛, բաւական է, օրհնած, ողբան քնէք, ասաց քահանան հիւանդին. — հիմայ, փառք Աստուծոյ, ձեր առողջութիւնը լաւ է:

— Եթէ կարողանայի ի հարկէ, ինձ ախորժելի չէ մնալ այս տխուր ու տրտում մահճի մէջ, պատասխանեց հիւանդը թոյլ ձայնով:

— Շնորհակալութիւն մըստր Սէյսունին, միւս կողմից ասաց Սոլոմոն-Բէկը ստորագրող մարդահաճութեամբ:

— Իրաւ, այդ մարդը հրաշք գործեց. պարոն Ռուստամի համար ես շատ յուսահատ էի:

Բժիշկը համարեա չը լսեց այդ գովասանքը. նա խօսում էր պարոն Մելիքզադէի հետ:

— Գիտէք պարոններ, ո՛րքան թշուառ էր մեր հիւանդների դրութիւնը, քանի որ մըստր Սէյսունը չէր եկել մեր երկիրը, նրանց խօսքը կտրեց Ռէսը. — ախ. քանի՛ հազարաւորներ մեռնում էին անօգնական:

Տէր Մարկոսը նկատելով, որ անգլիացու գովասանքը չափից, պատշաճից անցաւ, ասաց.

Digitized by Google

— Ինչո՞ւ, մենք եւս ունէինք հմուտ բժիշկներ, որոնք իրանց իմաստութեամբ յետ չէին մնում Լոկմանից։

— Արդարեւ, պատասխանեց Ռէսը կատակով, — նրանց էլ շնորհակալութիւն, որովհետեւ նրանց շնորհիւ ամէն տարի, թուով շատ մարդիկ էին գնում դէպ Պլուտոնի թագաւորութիւնը։

— Ամենայն ճշմարիտ հայ-քրիստոնեայ, ասաց քահանան, չը պիտի հաւատայ, թէ բժիշկները կարող են փոխել օրհասը, որովհետեւ, ինչ որ գրուած է մարդու ճակատին, այն կը կատարուի։ Բայց ներողութիւն, մրատր Սէյսուն, իմ կարծիքը թող չը վշտացնէ ձեզ։

Բժիշկը արհամարհական կերպով ժպտաց։

— Ըստ ձեր կարծիքի, ասաց նա — ճակատագիրը, որպէս նախասահմանեալ դատաւճիռ, առանց փոփոխութեան, առանց մի կէտ զանց առնելու իրականութիւնից — եթէ կատարւում է, ուրեմն այլ եւս ինչ հարկաւոր է հոգալ մեր կեանքի համար։

— Ի հարկէ, ինչ հարկաւոր է հոգալ, պատասխանեց քահանան։ Մի՞թէ չե՞ս կարդացել, ինչ է ասում Քրիստոս Մատթէոսի Աւետարանի վեցերորդ գլխում. "Մի հոգայք վասն կենաց ձերոց . . . ։ Իակ արդ, ո՞ի ձէնջ առ հոգալ իւրում յաւելուլ կարիցէ ի հասակ իւր գկանգուն մի„։ Ե այդպէս, մեր կեանքը Աստուծոյ ձեռքումն է. առանց նրա կամքի մենք չենք կարող մեր գլխից մէկ մազ սպիտակացնել կամ սեւացնել. որովհետեւ, առանց Աստուծոյ ո՛չ մի տերեւ չի ընկնում ծառից։

Բժիշկը դարձեալ ծիծաղեց։

— Հայր, ասաց նա իւր սովորական հանդարտութեամբ, երեխայութեանս օրերին կարդացել եմ, եւ տակաւին իմ մտքումն են այդ խօսքերը. կարծեմ, Մատ-

թէոսի միեւնոյն վեցերորդ գլխում գլուած է, որ մենք մեր ապրուստի, մեր ուտելու եւ հագնելու մասին եւս հոգս չունենանք։

— Ճշմարիտ, այդպէս է պատասխանեց քահանան. — "Մի այսուհետեւ հոգայցէք. եւ ասիցէք, ընչ կերիցուք, կամ ընչ արբցուք, կամ ընչ զգեցցուք . . . : Հայեցարուք ի թռչունս երկնից, զի ոչ վարեն, ոչ հնձեն, եւ ոչ ժողովեն ի շտեմարանս եւ Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա . . . : Ու վասն հանդերձի մի հոգայք, հայեցարուք ի շուշանս վայրենի, որպէս աճէ, ոչ ջանայ եւ ոչ նիւթէ,,։

Բժիշկը իսկոյն չափեց հայ քահանայի հասկացողութեան սմբողջ սահմանը։

— Արդարեւ, ասաց նա — եթէ Աստուած ստեղծած լինէր մեզ երկնքի թռչունների նման, եւ եթէ մեր արմատը դնէր գետնի մէջ վայրենի շուշանների նման, մենք խիստ սակաւ հոգս կ'ունենայինք մեր կեանքի եւ մեր ապրուստի համար։

— Ի՞նչպէս, աչքերը լայն բացելով հարցրեց քահանան։

— Այնպէս որ բնութիւնը ինքը բուսցնում է վայրի շուշանները գետնից — իրանց սմբողջ զգեստաւորութեամբ։ Սրանց հանդերձները աճում, կատարելագործւում են նրանց կեանքի հետ. այդ պատճառով նրանք կարօտութիւն չունին ոչ գործուածքի — հագուստի համար, եւ ոչ դերձակի — կարելու համար։ Բայց մարդը, բոլոր կենդանիներից ամենատկարը Աստուծոյ ձեռքով ստեղծուած լինելով, կարօտ է իւր կեանքի եւ իւր ապրուստի հոգածութեանը։ Ինչո՞ւ, որովհետեւ նրա լերկ եւ մերկ մարմինը զգում է եղանակների բոլոր փոփոխութիւնները

— արեւի տօթը այրում է նրան, ցրտի սաստկութեանը չէ դիմանում, որովհետեւ մարդուս մարմնի մերկութիւնը՝ կաթնակեր անասուններուն նման՝ բրդով կամ մազով չէ պատած, եւ ոչ երկնքի թռչուններուն նման՝ փետրով, որ առանց հոգածութեան, ինքնուրոյն փոխուէր եւ նորոգուէր որոշեալ ժամանակներին։ Ուրեմն մենք չենք կարող չը հոգալ թէ "ինչ պիտի հագնենք,,։ Իրաւ, երկնքի թռչունները չեն վարում, չեն հնձում, ոչ էլ ժողովում են իրանց ամբարներում, որովհետեւ բնութիւնը — Աստծոյ այդ համատարած ամբարը — ձրիաբար եւ անաշխատ՝ բաշխում է նրանց կեանքի բոլոր պիտոյքները։ Բայց մարդը սովոր չէ ուտել խոտ, բանջար, եւ կերակրուել հունդերով, որ ամենուրեք պատրաստի դրած են բնութեան սեղանի վրայ. նա պիտի ճակատի քրտինքով վաստակէ իւր հացը։ Ու մարդը մեքենաբար այնպէս չէ կազմուած, որ իւր մարմնի զէնքերով կարողանայ պաշտպանել իւր անձը — նա իւր եղունգներով եւ ատամներով — առիւծի եւ արծուի նման — չէ կարող պատերազմել իւր թշնամիների հետ։ Ու նրա ուղերը այնչափ ամուր չեն, որպէս ձիու եւ իշի սմբակները, որ կօշիկի կարօտութիւն չունենային եւ աքացիով պաշտպանէին նրան։ Բայց այդ ֆիզիքական տկարութիւնների փոխարէն՝ ստեղծողը իմացական կարողութեամբ կատարելագործեց մարդը, ներշնչելով նրանում բանական հոգի եւ խելք կամ հանճար։ Ու կարիքը՝ եղաւ մարդկութեան առաջին վարժապետը, որ ուսոյց բանեցնել խելքը — այդ աստուածային ճանրակշիռ պարգեւը, եւ նրանով գտնել մեր կեանքի բոլոր պիտոյքները։

Բայց տէր Մարկոսը չը հասկանալով մըտաւ Սէյսունի ասածները՝ հարցրեց.

Digitized by Google

— Ուրեմն Քրիստոս խաբել է մեզ։

— Քրիստոս չէ խաբել մեզ, միւս կողմից պատասխանեց պարոն Աշխարունին. եթէ մենք ճշմարիտ քրիստոնեաներ լինէինք, իրաւ, մենք սակաւ հոգս կ'ունենայինք մեր կեանքի եւ մեր ապրուստի համար, ինչպէս էին առաջին դարու քրիստոնեաները — Քրիստոսից յետոյ։

— Հրաշքների ժամանակները անցել են, ասաց մըստր Սէյսունը — այժմ ով չը գործէ՝ չէ կարող ուսել, եւ ով չուտէ — կը մեռնի։

Քահանան իւր կամակոր հակաճառութեամբ, կամենում էր առաջ տանել վէճաբանութիւնը, բայց տեսնելով որ Սոլոմոն-Բէկը վերկացաւ, նա եւս, հիւանդին առողջութիւն մաղթելով, միասին հեռացաւ։

— Ռէս, ասաց Սոլոմոն-Բէկը, երբ տէր Մարկոսը բաժանուեց նրանցից — հիւանդը ոչ մի վտանգ իւր կեանքի դէմ՝ չէ ցոյց տալիս, մեր յոյսը դալձեալ կորած է . . .։

— Մեր յոյսը կորած չէ, պատասխանեց Ռէսը իւր անդրդուելի հաստատամտութեամբ. բայց, առ ժամանակ կորած է մեր հանգստութիւնը — նրա մահը կը դիւրացնէր գործը, բայց նրա կեանքը մի փոքր երկար աշխատել կը տայ մեզ։

— Բայց չէ՞ կարելի պէ—պացնել գործը նրա մահուամբ։

— Ինչո՞ւ չէ կարելի. ամենայն անկարելիին՝ արծաթը կարելի է դարձնում. . . ես այդ մասին մի բան մտածել եմ. . . միայն դուք շնորհեցէք փող, որքան հարկաւոր լինի։

— Ես չեմ խնայում իմ արծաթը. միայն, Ռէս, պզտուշացնում եմ քեզ, այդպիսի հանգամանքներում ամենեւին եւ երբեք չը յիշել իմ անունը. չասել՝ թէ

Digitized by Google

ես նոյնպէս խորհրդակից էի քեզ, որովհետեւ, երբ գործը ընդունէր հակառակ ընթացք՝ մեր օգտին ընդդէմ — այն ժամանակ ես չեմ կարող անպատուութեան տանել, իսկ դու՝ անարգանքները կրել սովորել ես . . . :

Ռէսը մի քսակ ոսկի ստանալով դիմեց դէպ մըստր Սէյսունի տունը: Առաջին խաբողը, իւր խորամանկութեամբ ոգեւորուած՝ այնպիսի ուրախութեամբ չը սողաց նախաստեղծների անմեղ բնակարանը — դրախտը, որպէս Ռէս Վասակեանը, չարութեան մտքերով լի՝ մտաւ բժշկի տունը: Այդ եղեռնագործը կարծում էր, թէ արծաթի մէջ կայ այն ոյժը եւ կարողութիւնը՝ ինչ որ չը կայ Աստծոյ մէջ: "Թէ՛ութեւամիտ անգլեացի է. մտածում էր նա հաստատ յոյսով — ես նրա համոզումը կ'որսամ այս քսակով . . .„:

Նա գտաւ բժշկին իւր դեղարանում միայնակ նստած:

— Դոկտոր, դուք կարո՞ղ էք լինել այնքան ողորմած, որ շնորհէք ինձ մի քանի րոպէ ձեզ հետ գաղտնի խօսելու, հարցրեց նա փաղաքշաբար բռնելով բժշկի ձեռքը:

— Խօսեցէք, պատասխանեց նա սառնութեամբ. ոչ ոք ձեզ չի արգելի:

— Բայց նախապէս, ինձ պէտք է ստանալ ձեր խոստումնքը, որ իմ ասելիքս կը մնայ ձեզ մօտ իբրեւ գաղտնիք, եթէ ես չը կարողանամ օգտուել ձեր հաճութիւնից:

— Դժուար է խոստանալ մի բանի մասին, որ մեզ յայտնի չէ:

Ռէսը մտածութեան գնաց: Բժշկի սառնասրտութիւնը փակել էր նրա բերանը: Նա չէր համարձակվում վստահանալ եւ խլոյն յայտնել իւր նպատակը, բայց նրա անամօթութիւնը խրախոյս տուեց նրա սրտին. "ինչ վնաս

ունի, եթէ գործը անյաջող ելք ստանայ,, մտածեց նա, ասելով.

— Բարեհաճեցէք դոկտոր, լսել այդ՝ թէեւ անտանելի — հարցուցը. կարող էիք դուք ձեր դեղերը որեւիցէ հիւանդի համար գործադրել դէպ վատը, այսինքն՝ դէպ նրա մահը:

Մըստր Սէյսունի սիրտը դողդեց այդ օտարոտի հարցումը:

— Ես բժիշկ եմ, եւ ոչ դահիճ, պատասխանեց նա շփոթուելով:

— Բայց երբ հարկադրում էր ձեզ դէպ այդպիսի մի ձեռնարկութիւն մեծակշիռ նիւթական օգուտը, օրինակ, ահա, այս ոսկիներով լի քսակը: Եւ Ռէսը դրեց բժշկի առաջ յուդայեան արծաթները:

Մըստր Սէյսունի աչքերը վառուեցան անսովոր բարկութեամբ.

— Հեռացէք, դաւաճան, կոչեց անգղիացին, ոտքով դէն գցելով քսակը, — դուք կամենում էք կաշառել ինձ եւ մա՞հ գործել տալ: Կորէք այստեղից, ես չեմ կամենում տեսնել ձեզպիսի նենգաւոր:

— Փա՜հ, փա՜հ, կատակը դիպաւ իւր նպատակին..., ասաց Ռէսը ծիծաղելով եւ միաժամանակ ծածկելով իւր խորին վրդովմունքը: — Պարոն Դոքտոր, դուք խիստ շուտ բարկացաք, բայց վնաս չունի, ազգային բնաւորութիւն է այդ — անգլիական արիւնը դիւրագրգիռ է...: Բայց բարեհաճեցէք հաւատալ, որպէս անկեղծ խօսքի, որ իմ առաջարկութիւնը ոչինչ չէր, բայց միայն փորձ:

— Որպիսի՞ փորձ, հարցրեց բժիշկը, դեռ չը հանգըստացած իւր բարկութիւնից:

Digitized by Google

— Մի քանի օր առաջ ես գտնուեցայ մի տան մէջ, որտեղ կային մի քանի անձինք. այնտեղ խօսք բացուեց ձեր մասին. մինը սկսեց չարաչար բամբասել ձեզ, այլ եւ ամբաստանել կեղտոտ արատներով, թէ դուք Պօղսում, քանի քանի անգամ կաշառուած լինելով, շատ հիւանդները էք սպանել, եւ թէ մեծ անխելքութիւն էր վստահանալ ձեր բժշկական օգնութեանը: Բայց իմ խղճմտանքս չէ ներում ստախօսութիւններ լսելու, իսկոյն այն ստախօսին հակառակ դուրս եկայ, եւ երկար հակաճառութիւններից յետոյ, պայմանադրուեցաւ փոքչել ձեր հաւատարմութիւնը. այժմ, պարոն, ես շատ ուրախ եմ, որ տարայ մրցանակը, որովհետեւ սխալուած չեմ եղել իմ կարծիքի մէջ:

Այդ ճարտար գիւտը, որ վայրկենապէս ստեղծեց Վասակեանի հնարագէտ խելքը, բոլորովին հանգստացրեց բժշկին, եւ նա, պղջալով իւր շուտափոյթ բարկութեան համար, բռնեց Ռէսի ձեռքը, ասելով.

— Ներողութիւն, Ռէս, հազար անգամ ներողութիւն:

— Վնաս չունի, որպէս ասացի՝ ազգային բնաւորութիւն է, բայց ես գիտեմ ձեր բարեսրտութիւնը:

— Բայց ես խնդրում եմ, եթէ կարելի է, յայտնեցէք այն մարդու անունը, ասաց մրստր Սէյսունը:

— Այդ չեմ կարող անել. բայց դուք, երկմտութիւնից բոլորովին դուրս գալու համար՝ կը սուտգէք այդ խօսքերի ճշմարտութիւնը Սոլոմոն-Բէկից, որովհետեւ այդ խօսակցութիւնը տեղի է ունեցել նրա տան մէջ: Այժմ ինձ բաւեաւ:

Ռէսը հեռացաւ, վշտացած իւր ձեռնարկի անյաջողութեան վրայ: Նա շատ ուրախ էր, որ չը յիշեց Ռուս-

Digitized by Google

տամի անունը։ Յորին մեռայուզուԹեան մէջ, նա դիմեց դէպի Աւազակեանց տունը, որպէս զի Սոլոմոն-Բէկին յայտնէ այդ օրուայ անցքը, եւ պատուիրէ նրան, որ նա եւս, պատահած ժամանակ, երբ բժիշկը հարցնելու լինէր՝ իւր խօսածին վկայուԹիւն տայ։

Բայց նոյն րոպէին նրա գլխում լոյս ընկաւ մի նոր միտք, եւ նրա սեւ դրեհի գունով կնճռուած երեսը պարզուեց։ "Այն, որ չընդունեց կատարել մարմնաւոր բժիշկը, անշուշտ կը կատարէ — հոգեւոր բժիշկը . . .", ասաց նա իւր մտքի մէջ — դիւական հրճուանքով։

Digitized by Google

ԻԱ.

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՈՒԱԾ

Այն նահանգը, որտեղ կատարվում է մեր վիպապրութեան նիւթ ծառայող անցքը, տեղաւորուած էր Աորպատականի այն մասին մէջ, որի արեւմտեան սահմանակից սարերի մէջ բնակում էին քրդերի թափառական ցեղերը, որոնք, որպէս պատերազմասէր բարբարոսներ, շատ անգամ աւազակաբար յարձակվում էին նրա բնակիչների վրայ, կողոպտում, աւար տանում նրանց ոչխարները, տաւարների նախիրները եւ շատ անգամ չարաչար սպանելով բնակիչները: Այս պատճառով, այն սարերը, որտեղից նրանք դուրս էին գալիս, կոչվում էին պռոշեանայ սարեր, այսինքն թշնամեաց սարեր:

Օսման-աղա քուրտը, անխնայ ասպատակում էր երկիրը: Բոլոր Զարեհաւանը լցուել էր Շիկակների, Ռաւանդների, Հարքինների եւ քրդերի այլ բարբարոս ցեղերի աւազակներով: Բնակիչներից ոմանք Ծովատար եւ Շարայ բերդերը փախչելով հազիւ ազատուեցան: Իսկ մնացեալները՝ իրանց կեանքով զոհ գնացին թշնամու անգութ սրին . . .:[1]

---

[1] Ազրանքի եւ գոյքի կողոպտուիլը, այդպիսի միջոցներին մի բարի բան է անբաժան հայերի համար, եւ շատ անգամ, յոյժ ձեռքը գերի գնալը նոյնպէս սւրախացրել է նրանց: Բայց այն չար գէպքերը՝ երբ, շատ անգամ հայերը իրանց գլուխներով են զոհ գարձել թշնամու սրին — միեւնոյն յաւիտեան մոռնալ են ամբողջ գերդաստանների սուն ծուխը . . .: Անգութ թշնամիները, կողոպտելով իրանց զոհերը բոլոր ընչից, մի բան՝ որ

Digitized by Google

Տէր-Առաքելենց տանը, Ռուստամի սենեակում, արեգակը ճառագայթում էր թոյլ եւ աղօտ լուսով։ Հիւանդի մօտ նստած էին՝ տէր Մարկոսը եւ Հուրի Յօան-Դայան։ Քահանան պատմում էր, թէ ուրբան վեանները են գործել քուրդերը, եւ թէ շատ երկիւղ կար, որ նրանք յարձակուէին ծաղկաւանի վրայ եւս։ Այդ դիպուածին, տէր Մարկոսը խորհուրդ էր տալիս, որ ժողովուրդը հաւաքուէր եկեղեցում, եւ նրա տունիքից, հարկաւորած ժամանակ, կռուէին թշնամիների հետ։

— Դերձիների վիճակը միշտ այդպէս է . . ., կրկնեց հիւանդը դառն եղանակով։ — Մի թոյլ, փոքրոգի եւ երկչոտ ազգ միշտ ապրում է հալածանքի մէջ։

Քահանան կրկնում էր, թէ այդ հալածանքները ուրիշ ոչինչ չեն, բայց միայն Աստուծոյ բարկութիւն, որով կամենում է պատժել հայերը, իրանց մոլութիւնների համար։

— Ո՛չ, տէր հայր, մէջ մտաւ Հուրի Յօան-Դայան — դւրանք բոլորը ուղիղ նշաններ են, որ ցոյց են տալիս, թէ աշխարհիս վերջը հասել է։ Դեռ ուր է . . . շատ չարիք պիտի տեսնեն մեր մեղաւոր աչքերը — սով, սրաճութիւնք, մահտարաժամք, սուտ մարգարէներ, սուտ քրիստոսներ, — իսկ բոլորից յետոյ կը յայտնուի Վերջը, նստած իւր ահագին, խայտաճամուկ իշու վրայ, որի ականջների մէջի տարածութիւնը երեք մղոն է։ Ներա քամակը կը նմանի մի ընդարձակ դաշտի, որի վրայ հոսում էին ջրի առուակներ. այլ եւ այդ ղարհուրելի անասունի մէջքի վրայ կազմուած են հայց թխելու թոնիրներ եւ

Նրանց կարող էր մի քանի կրան օգուտ բերել — այդ եւս չէին խնայում — այդ՝ նրանց գլուխներն էին, որ կարում, ատամում էին, իրանց մեծաւորները ընծայում՝ եւ նրանց թուով ատամնաւոր արծաթ . . .։

Digitized by Google

ցորենի ամբարներ։ Բոլոր ազգերը, նեղուած սովից, կը դիմեն դէպի Եհովա. "Ինձ հաւատացէք, ինձ երկրպագութիւն տուէք„ կ'ասէ նա. "ես ձեզ կը կերակրեմ հացով, եւ սառն ջուր կը խմեցնեմ ձեզ„։ Եւ երկրպագողները կը տանէ իւր մօտ, աւանակի վրայ։ Նոյն օրերին կը յայտնուին Եղիա-Լաղիա-Ընդը. նրանք ունին մէկ թզուկ հասակ, բայց այնպիսի երկար եւ լայն ականջներ, որ գործ են ածում որպէս սփռոց գետնի վրայ նստելու ժամանակ, իսկ քնելու միջոցին՝ փաթաթվում են նրանցով, որպէս վերմակներ . . .։

Մնահաւատ Հուրի Յան-Դայայի այդ առաստղական զոյգները զարթեցրին քահանայի մտքի մէջ Աւետարանական բանի յիշողութիւնը, եւ նա ջերմեռանդութեամբ սկսեց կարդալ այս խօսքերը.

— Ծարիցէ ազգ յազգի վերայ, եւ թագաւորութիւն ի թագաւորութեան եւ եղիցին սով եւ սրածութիւնք, եւ սասանմունք ի տեղիս տեղիս . . .։ Եւ բազում սուտ մարգարէք յարիցեն եւ զբազումս մոլորեցուսցեն . . .։ Եւ վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ արեգակն խաւարեսցի եւ լուսինն ոչ տայցէ զլոյս իւր . . .։

Հուրի Յան-Դայան երկիւղածութեամբ խաչակնքեց իւր երեսը, եւ ջերմեռանդութեամբ աղօթում էր Աստծուն, որ ազատէ իրան այդ օրերի նեղութիւններից, որովհետեւ նա ստուգիւ հաւատում էր՝ թէ աշխարհի վերջը հասել է։

— Էլ ինչ մնաց պակաս, խօսեց նա — արդէն մարդկախից յետոյ սովը մեր աշխարհից չէ վերանում. սրածութիւնն էլ վրայ հասաւ. իսկ սուտ մարգարէքը . . . ահա այդ անիրաւ մոլորեցուցիչները՝ . . . մեր միջումն են . . . մեր տներումն են բոյն դրել. բայց մենք չենք հասկանում։

Digitized by Google

Հուրի Յան-Դայայի վերջին խօսքերը պարոն Աշխատունու եւ նրա կոմինակիցների համար էին։

Ռուստամին խիստ վատ ներգործեց մի այդպիսի զրպարտութիւն։

— Հայոց ազգի անբախտ պատմութիւնը, ասաց նա, մեզ պատկերացնում է այդ ազգի կրօնամոլական թուլութիւնները... մի այդպիսի հանգամանքներին, երբ կոտրում՝ գերի էին վարում նրանց, միշտ կարծել են տալիս, թէ ահա հասել էր աշխարհիս վերջը... Բայց, երբեք չեն մոռացել իրանց սրով, իրանց քաջութեամբ — պահպանել իրանց գլուխները...

— Քաջութիւնը եւ սուրը ինչ կարող են անել Աստծոյ պատժին, ասաց տէր Մարկոսը։

Ռուստամը ոչինչ չը պատասխանեց, երեսը թեքեց դէպի պատը, եւ միեւնոյն ժամանակ արտասուքը հեղեղի նման սկսեց թափուել նրա լցուած աչերից։

Հուրի Յան-Դայան եւ տէր Մարկոսը, զգալով հիւանդի խռովութիւնը, եւ թէ իրանց ներկայութիւնը ծանր եւ անտանելի էր նրան, վեր կացան եւ դուրս գնացին։

Երեկոյ էր. հիւանդի սենեակի մէջ տիրում էր խոր լուռին խաւար. բայց շուտով հակայամարտին Յաչօն ներս բերաւ ճրագը։

— Ի՞նչ լուր կայ, Յաչօ, հարցրեց հիւանդը։

— Շատ ցաւալի լուրեր, պատասխանեց քաջասիրտ ծառան. — Աւղանայ եւ Արաւուլ սպերի մօտ եղած բոլոր հայերի գիւղօրայքը աւերել են... եւ քառասուն ուղտի բեռ, հայի գլուխներով լիքը, սպանուածների գոյքի եւ ոչխարների հետ՝ Թշնամին տարաւ դէպ Հախպակ...։

Digitized by Google

— Այդ մի նոր բան չէ հայերի կեանքում..., պատասխանեց հիւանդը դառն եղանակով։ Յաւէս, հայերը սովորած են սեւ օրերի...։ Այլ եւս ինչ լուր ունիք։

— Նայիր ու-Սալթանան գնաց քրդերի վրայ. Հախպակայ եւ Հայոց Ձորի գերիները վերադարձրել է[1]. բոլորը հայ նորահաս պատանիք եւ մանկահասակ աղջիկներ են...։ Մեր գիւղացիներից շատերը արծաթով գնեցին այդ գերիներից, մէկից մինչեւ տասն թուման...։

— Այդ եւս նոր լուր չէ, Յաւէս, պատասխանեց հիւանդը ցաւակցաբար. — գերութիւնը՝ մեր պապերի միակ աւանդն է, որ թողել են մեզ...։ Բայց դու չը մոռանաս գնել մի քանի հատ այդ գերիներից, ահա քեզ արծաթ։

Ռուստամը դուրս բերեց իւր բարձի տակից արծաթով լի մի քսակ, տուաւ ծառային՝ եւ նրա աչքերը դարձեալ լեցուեցան արտասուքով։ Նա դառն եղանակով երգեց.

"Սիթէ արիւնո՞վ գրուեցաւ՝
Ձակատագիրդ — անբախտ հայ.
Հայրենիքդ՝ քեզ բանդ դարձաւ.
Օտար աշխարհն էլ բերեց վայ...,,

— Այլ եւս ինչ կայ, Յաւէս, հարցրեց հիւանդը։

— Աստւա՛մ են, Հախպակը թալանեցին, եւ տուրբ Բարթուղիմէոսը քարուքանդ արին։

---

1 Շնորհակալութիւն Զաքեհաւանի հայերին. այդ մեծ գերութեան ժամանակ նրանք ցոյց տուին իրանց ազգասիրական նախանձը՝ պարսիկներից գնելով գերիների մեծ մասը։ Հայի միտը — այն եւս մանկահասակ — արժեցել է միչեւ հինգ կրան (պարսկական մէկ եւ կէս մանէթ.)։ Ի՜նչ ընչին արծաթ... Թշուառական հայ. միչեւ մի առաքման կորցրել ես դու քո արժէքը...։

Digitized by Google

— Թող Ցեան դրանք, թէ Աստուածդ կը սիրես. դու վշտացնում ես ինձ, Յաչօ, նրա խօսքը կտրեց Ռուստամը — ասա՛ խնդրեմ, դու տեսա՞ր նրան։

— Հրամեր էք, աղա, պատասխանեց Ծառան, — նա ասաց, "ես կը գամ կէս գիշերուայ պահուն„։

— Ուրեմն արթուն եղիր, բակի դռները բաց թող. եւ երբ գայ՝ առաջնորդիր դէպ իմ սենեակը։

Ծառան հեռացաւ։

Դրսում մրրիկը կատաղաբար մռնչում էր. լուսամուտի ապակիները զարհուրելի ձայներ էին հանում. վառարանում կրակը սկսել էր հանգչել. մի քանի ածուխներ հազիւ պլպլում էին իրանց թոյլ կանաչագոյն բոցերով։ Ահա աքաղաղները խօսեցան։ Կէս գիշեր է։ Հասաւ ուխտեալ ժամը, բայց նա տակաւին երեւան չեղաւ։ Հիւանդը, իւր քնաշորերում անհանգիստ, անքուն, սպասում է՝ մի կողմից դէպ միւսը շրջուելով։ Ճրագը ծխրտում էր իւր աղօտ լոյսով։

Քնարանի դուռը հեզիկ զարկեցին. րոպէական լռութիւնից յետոյ՝ մինը ներս մտաւ, փաթաթուած մի լայն ֆէշէդեան շալով. նրա փափուկ թշերը լըվացել էին ցրտից. — այդ օրիորդ Սալբին էր։

— Դու երկար սպասել տուիր ինձ, իմ հրեշտակ, նրա ձեռքը բռնելով, ասաց Ռուստամը։

— Ի՞նչ պիտի արած . . . դեւերը քնեցին, սատանայք ննջեցին, բայց իմ մոլակրօն մայրը դեռ անքուն նստած՝ տակաւին խաղում էր իւր պատկերների եւ իւր խաղերի հետ . . . , պատասխանեց ծիծաղելով օրիորդ Սալբին։

— Ախ, այդ մոլեռանդ ծնողները . . . , կրկնեց հիւանդը խորհրդական ձայնով։

Digitized by Google

— Ի՞նչպէս ես զգում այժմ քեզ, հարցրեց օրիորդը։

— Ո՛չ բոլորովին լաւ... միայն այժմ մեռնելուս երկիւղը անցել է։

— Ասա, Ռուստամ, ի՞նչ էր քո հիւանդութեան պատճառը։

— Ճշմարիտն ասած՝ ստոյգ չը գիտեմ... միայն, գլխաւոր պատճառն համարում եմ այն զարհուրելի երազը, որ տեսայ ես բարեկենդանի գիշերը։

Օրիորդը արհամարհաբար ծիծաղեց։

— Դու մի երազ տեսար, եւ մի երազ է պատճառ եղել քո հաւանդութեանն, ասաց նա արհամարհութեամբ. — ֆո՛ւ, այդ ներելի չէ քեզնից լսել։

— Հա՛, երազ, այն սարսափելի երազը, կրկնեց հիւանդը առաջին եղանակով։

Օրիորդը չը կարողացաւ զսպել իւր զարմացքը։

— Պատմի՛ր, Ռուստամ, պատմի՛ր խնդրեմ, որպիսի՛ երազ, հարցրեց նա հետաքրքրութեամբ։

Ռուստամը սկսեց մանրամասնաբար պատմել երազը, որ այնքան ուժգին պաշարել էր նրա միտքը։ Միեւնոյն ժամանակ օրիորդը չէր դադարում յոգւոց հանելուց. նա, ականջները լարած, խորին ուշադրութեամբ լսում էր։

— Թէպէտ ես մի հմուտ հոգեբան չեմ, ասաց օրիորդ Սալբին, բայց այսքանը գիտեմ, շատ անգամ, երեւակայական խառն պատկերները, ուղեղի ուժգին գրգռումները՝ ծնեցնում են զարհուրելի երազներ, որոնք սաստիկ ներգործելով մեր հոգու վրայ, պատճառում են հոգեկան հարուածներ, որոնք չարաչար հիւանդութիւններ են բերում։

— Հա՛, Սալբի, մեր պապակի յետ ընկնելը խիստ սաստիկ կերպով պաշարեց իմ միտքը, որով երեւակայու-

Digitized by Google

թիւնս վառուած էր տխուր եւ տրտում մտածութիւն-
ներով, եւ մի անտանելի կասկածանք, մի տարապայման
երկիւղ՝ ինձ անգամ անհասկանալի — մաշում էին իմ
անձը. եւ այժմ իսկ, այդ դժնդակ երկիւղը եւ կասկա-
ծանքը — ինձնից չեն հեռանում:

— Ինչո՞ւ, այդ՝ թուլասրտութիւն է:

— Ա՛խ, վհշապը... այն կատաղի վհշապը... միթէ
չէ՞ ցոյց տալիս, որ մի թշնամի ձեռք հսկում է մեր վրայ:

Օրիորդը համակրաբար նայում էր իւր սիրողի երե-
սին, ասես թէ, միեւնոյն կասկածանքը նկարուած էր նրա
աչքերի մէջ եւս: Այո՛, եւ մի այդպիսի երկիւղ թագ-
նուած էր խեղճ օրիորդի սրտում...:

— Պէտք է հեռու դնել այդ ունայն եւ սրտամաշ
տրտմութիւնները, իմ սիրելի. մխիթարական կերպով
խօսեց օրիորդ Սալքին, առանց դրանց, դարձեալ մեր
կեանքը լի է տառապանքներով:

Ռուստամը մտածութեան գնաց, ոչինչ չը պատաս-
խանեց:

— Արդարեւ. գրքան քաղցր է մահը, երբ այս կեանքը
լի է ցաւերով, ասաց օրիորդը:

— Մահը հանգստացնում է մարդու դժբախտու-
թիւնները, պատասխանեց Ռուստամը:

— Ա՛խ, գրքան կը փափաքէի ես շուտ մեռնել,
եթէ քեզ, Ռուստամ, չը թողնէի այս աշխարհում
միայնակ:

— Ինչո՞ւ, քո անձը դեռ լի է դալար եւ թարմ
կեանքով:

— Չէ՛, իմ սիրելի, որպէս ասացիր — մահը հան-
գըստացնում է մարդկանց դժբախտութիւնները, — ասաց
օրիորդը:

Digitized by Google

— Ուրեմն ես կը հետեւեմ քեզ դէպ յաւիտենական կեանքը, պատասխանեց Ռուստամը։

Օրիորդ Սալքին, երեսը մի կողմ շրջեց, եւ սրբեց աչքերի արտասուքը, խղճալու սիրտը նոյն րոպէին, զարձել էր որոմնութեան մի ծով...։ Մի ցաւալի էրոլոգնէն, որ այնքան ծանր դրուած էր նրա սրտի վրայ, կամենում էր յայտնել, բայց չէր հանդգնակվում։ Նա մոռաձեց յայտնել այդ — հարեւանցի կերպով։

— Այսպիսի անմխիթար խօսակցութիւնները, ասաց օրիորդը, — դարձեալ կ'աւերեն քո առողջութիւնը. լաւ է խօսենք մի փոքր ուրախալի բաներ։

— Լեզուն արտասանում է այն՝ ինչ բանով որ լցուած է սիրտը, պատասխանեց Ռուստամը։

— Բայց եւ այնպէս, ես կ'երգեմ քեզ մի ուրախալի տաղ։

— Շրգիր, խնդրեմ, ես շնորհակալ կը լինեմ քեզանից։

Օրիորդը սկսեց ազդու եւ գրաւիչ ձայնով երգել այն սարսափելի երազը, որ ինքն էր տեսել մի քանի գիշեր առաջ։

Կարծես եդեմի ճեմելիքներով
Մենակ, միայնակ զբօսնում էի.
Բիւր ծաղիկների վառ վառ գոյներով
Խապուռ հիացած՝ զմայլում էի։

Անթիւ թռչուններ, մին մինից սիրուն,
Լսեցնում էին ինձ՝ իւրեանց երգեր.
Եւ փերոբէներ, անհամար, անհուն,
Գեղգեղում էին սրբազան երգեր։

Digitized by Google

Այդ մի երազ էր... Բայց կախարդական...
Թողեց իմ սրտում վշտեր անհամար...
Կամ թէ առ աչք Թիւլիսմ դիւթական,
Որ կրակ վառեց հոգւոյս մէջ անմար:

Ինձ այն ժամանակ՝ քանի՛ գեղեցիկ
Երեւեցաւ նա այն ծառերի տակ.
Ձեր նա հողէղէն — մարմնազգեցիկ,
Որպէս հրեղէն՝ էր սիրուն հրեշտակ:

Նրա կիսամերկ մարմին ծածկում էր
Շղարշի թեթեւ սփածանելիք.
...Պայծառ երեսի վերայ խաղում էր
Մի սիրտ գրաւող եւ ուրախ ժպիտ:

Նրա այն մեծ մեծ սեւ աչիկները
Փայլէին որպէս մի վառած ղամբար,
Եւ փղոսկրեայ պարանոցի վրայ
Թուխ գանգուրները՝ բռնել էին պար:

Նա թեթեւ, որպէս մի բարակ զեփիւռ,
Վազեց, կանգնեցաւ ինձ խիստ մերձակայ:
Հազար պէրանքով՝ հազար հրապոյր
Արտափայլում էր երեսի վերայ:

"Ուսկի՞ց յայտնուեցար դու այդ երկնաճեմ
Զբօսարանում միշտ — անմահների,
Ո՞ր ձեռքը բերաւ քեզ աստ ի յեդեմ.
Պատմի՛ր, խնդրեմ, ով իմ նազելի „:

Նա այդպէս խօսեց, բայց մեղը կաթեց
Նուրբ շրթունքներէն վարդագոյն կարմիր.

Digitized by Google

Ա՛լ ծանօթ ձայնը ինձ քաջալերեց,
Եւ յառաջ տարաւ այդպէս իմ խնդիրս։

— "Ուժգին հողմբրի թնդերի վերայ՝
Զափեցի անհուն այդ տարածութիւնն.
Ես քո տեսութեան այս տեղում եկայ.
Ինձի պաշտպանեց գաղտնի Զօրութիւնդ"։

— "Ա՛յստեղ ես եկայ, ուվ իմ հրեշտակ,
Ցեանել, արդեօք, թէ յաւիտենից
Մեր ճակատագիրը, մեր բախտ եւ վիճակ
Ո՞րպէս են վճռուած նախախնամողից"։ —

"Ե՛կ ինձ հետ, ցոյց տամ այն տխուր հանդէսը
Մեր ճակատագրի, Սիրելիդ անգին.
Եթէ սիրտ ունիս, դու նայի՛ր եւ տե՛ս
Ցաւալի պատկերը մեր դառն վիճակին"։

Ա՛յդպէս նա խօսեց, բայց իսկոյն փոխուեց
Սիրուն երեսի այն կարմիր գոյնը.
Փայլուն աչերէն արտասուք թափուեց.
Բռնեց իմ ձեռքէն, տարաւ միւս կողմը։

Ա՛յն մի պարտէզ էր, ուր նա ինձ տարաւ,
Թարմ ծաղիկներով զարդարած հմայիկ.
... "Ա՛հա՛ այդ վարդը", նա ինձ ցոյց տուաւ,
"Է մեր վիճակի ստոյգ օրինակ"։

Աչքերուս առջեւ մթնեց, սեւացաւ.
Ցրտում տեսարան խռովեց իմ հոգին.
Սիրտս պաշարեց հազար ու մէկ ցաւ,
Գլուխս բորբոքեց մի կրակ ուժգին։

Digitized by Google

Ես տեսայ մի վարդ, ինչ քնքշիկ վարդ...
Դեռ նոր էր փթթել ծաղիկ ու սաղարթ,
Դեռ նոր էր օդը ներանից ծծում
Իւր եթերական անուշհոտութիւն:

Տեսայ ես վարդը ...ո՜հ, զզուելի բու
Դեղին թաթերով էր նրան գրկել.
Գրկել էր վարդը... ո՜հ դէպք ահարկու,
Եւ իւր ժանտ կուրծքին նրան պինդ ճնշել:

Ջրքրում էր թերթերը... բերում էր սարսափ,
Ստուերախիտ թուփը կ'անէր տերեւթափ.
Ջրքրում էր թերթեր, թափում էր գետին,
Խառնում էր նրանց հետ սեաւ հողին:

Աչքերս խփեցի, շուտով անց կացայ,
Այլ եւս չը տեսնեմ այդպիսի եղեռ.
Նորան չեռ հեռու, այլ խիստ մերձակայ՝
Տեսայ ես մի այլ սգաւոր պատկեր. —

— Ցխո՜ւր անապատ... տատասկի մացո՜ւռ,
Ուր բուսել էին փուշեր հոգէառ.
Փուշեր թունաւոր, փուշեր ծակատող...
Ո՜հ, ես զգացի սառսուռ, ահ եւ դող:

Մի սիրուն սոխակ, վարդի ջերմ երգակ,
Փուշերու վերայ, թռչոտում էր միակ.
Թռչոտում էր նա, լալով, ճզալով,
Ցոգնած թեւիկներ հեզիկ շարժելով:

Դէպ վարդ գնալու կ'ունէր նա միշտ փոյթ,
Գոգցես արգելէր ձեռք աներեւոյթ.

Digitized by Google

Գուցէ թէ նորան աւերակաց ժառանգ՝
Սպառնում էր շատ սարսափ ու զարհանգ։

Ծակում էր փուշը խղճի նուրբ դօշը,
Ջէր կարում թառիլ ձայնով անուշը.
Այնպէս թռվռաց, երկար ճկվեաց,
Աչերէն թափեց շատ արտասուք, լաց։

Նուաղած թեւիկներ՝ կախեց, վայր ընկաւ,
Իւր փափուկ կուրծքը փուշերուն զարկաւ,
Նետեր ցցուեցան սրտում սոխակին,
Վա՜րդ, վա՜րդ, կոչելով փչեց սուրբ հոգին...

Երկինքը գոռաց, մրրիկը սուլեց,
Կայծակ եւ կրակ միմեանց հետ խառնեց.
Ծառաւ արեգը՝ ամպերու տակը՝
Անիրաւ գործի չդառնալ վկայ։

Ճզացի որպէս կատղած խելագար,
Ցարձակեցայ շուտ՝ գէթ հասցնել մի ճար.
Արդէն մեռած էր... տաք արեան բոսոր
Ներկել էր կարմիր՝ կուրծքը փառաւոր։

— "Ա՛յս ի՞նչ օրէնք է, այս ի՞նչ գատաստան„ —
Գոռացի յայնժամ. — "Ա՛յս ո՞ր անպիտան՝
Բարի գործի մէջ՝ անարդար վճիռ
Խառնեց, կատարել այդպիսի ոճիր„։

"Ցե՛ս, այնտեղ նստած միակ ձեր մարդը„.
Մեկնեց նազելին նուրբ ցուցամատը.
"Նա իւր վիճակուած հօտերու անթիւ
Է կեղեքիչ գայլ, անիրաւ հովիւ։

Digitized by Google

"Այսպէս վճռեց, որ լինին բաժան
Երկու սիրահարք՝ միմեանց սիրարժան.
Այսպէս վճռեց. Ռոսոպա՛ եւ Սալքին՝
Զը հասցնին նասիք դիմանց նասիքին . . . „:

Աչքերս վառուեց, կայծակ փայլակեց,
Ա՛հ ու դող, զարդանդ՝ ինձի պաշարեց.
Ամպի գոռոցը, մրրիկն ահաբեկ
Միախառնուեցան՝ վերջին ձայնի հետ . . . :

Նրգեց սիրուհին, սիրողն վզին — փաթաթեց դալար թեւքերը կրկին: Նուաղեց խեղճի փայլուն աչքերը. թուլացաւ, ինաց՝ լանջացը վրայ: Ռուստամն էլ նոյնպէս, իրր անկենդան լէշ, ընչաստատ ընկել — գետնին էր կպել: Որպէս զոյգ շուշան, սիրոյ սերտ նշան, որպէս մանիշակ՝ գարնան հեզ գուշակ. անգութ գերանդին՝ տապալէ գետին: Որպէս զոյգ գառնուկ, դեռատին մանուկ, ամպի որոտը, կայծակի թունդը՝ գոռայ, դղրդէ, լեռներ սասանէ. զոյգն էլ ապիկար, սրտով թոյլ-տկար, ահով սարսափած, դողով սասանուած՝ անշունչ, անհոգի՝ թաւալվում են մէջ — կանաչ արօտի: Այսպէս երկնքին սիրողք կաթոգին՝ թուշ թշի դրած, միմեանց ճտով, ընկած անզգայ, խորին ուշագնացութեամբ ընկել էին սառն յատակի վրայ: Նրգը ամենասաստիկ հարուած ունեցաւ երկուսի վրայ եւս:

Իրապէս, առաւօտեան Ռուստամի հիւանդութիւնը կրկին վատթարացաւ: Մրստր Սէյսունը վերսկսեց իւր բժշկական հոգածութիւնը, եւ պարոն Յոսրով Մելիք-զադէն չէր դադարում իւր բարեկամական խնամատարութիւնը մատուցանել իւր ընկերին:

Digitized by Google

Տէր-Առաքելենց տունը ընդունեց իւր նախկին տրտում եւ տխուր կերպարանքը։

Բայց չարութեան դեւը թուխս էր նստել վաստակեանի սրտի մէջ. նա՝ իւր անաչող ձեռնարկութիւնից յետոյ մըստր Սայսունի տանում, օր ու գիշեր անհանգիստ մտածում էր նիւթել մի նոր հնար, կատարելագործելու իւր եզերնական խորհուրդը։ "Այն որ չուզեց կատարել մարմնաւոր բժիշկը, անշուշտ պիտի կատարէ հոգեւոր բժիշկը...„ դարձեալ կրկնեց իւր մտքի մէջ կատաղի ուրախութեամբ եւ սկսեց դիմել դէպ տէր Մարկոսի տունը։

Digitized by Google

ԻԲ.

ՀՈԳԵԽՈՐ ԲԱԽՇԿԸ

Տէր Մարկոսը կանուխ զգուեցաւ իւր կնոջից, որ չը թողեց նրա համար ոչ մի զաւակ, եւ հայ քահանաների դատապարտուած իրաւունքի համաձայն, նա չը կարողացաւ ունենալ երկրորդ կին. թէպէտ, այդ մասին նա օր հանապազ չարաչար այրվում էր, անիծելով իւր կոչումը, թէ ինչո՞ւ քահանայ եղաւ: Նրա ամբողջ ընտանիքը բաղկանում էր երկու հոգուց: — Ինքը տէր Մարկոսը եւ նրա խեղանդամ ծառան, որ երկու ոտքից կաղլիկ մի տղայ էր, որը, եթէ մի այլ տեղ կուշտ փորով ապրիլ կարողանար՝ երբեք յանձն չէր առնի ծառայել խստասիրտ տէր Մարկոսի մօտ առանց վարձի, տհաճութեամբ տանելով այն բոլոր նախատինքները, յիշոցները եւ հայհոյանքը, որ քահանան տեղում էր նրա գլխին՝ ամենափոքր սխալմունքների համար:

Նրա տանը չը կային ոչ շուն եւ ոչ կատու. քահանայի կարծիքով, սրանք կերածի չափ չէին ծառայում: Այդ պատճառով, չարագործ մկները, ազատ գտնուելով իրանց սատակչի աղեցութիւնից, ամէն գիշեր կատարում էին իրանց ուրախալի հարսանիքը, արձակ եւ համարձակ, — քահանայի մահճի չորս կողմը, եւ շատ անգամ՝ խաղ էին բռնում նրա փառաւոր մօրուքի եւ գլխի երկայն ծամերի հետ:

Digitized by Google

Նրա մնաղուած, հնացած տունը բաղկանում էր եր-
կու փոքրիկ մրոտ սենեակներից, որ դրած էին ցածրիկ
շրջապարսպի մէջ: Ոչ մի խելացի մարդ, երբեք չէր հա-
մարձակուելու բնակուել մի այնպիսի խարխուլ եւ փլփլած
շէնքի մէջ, որը, ուր էլ որ մարդ նայելու լինէր՝ նրա
աչքին կ'երեւային ծակոտիք, սալդի հնագարեան ոստայն,
հող եւ փոշի: Երբ հարցնում էին տէր Մարկոսին, թէ
ինչո՞ւ նա իւր տունը չէ նորոգում, սովորաբար պատաս-
խանում էր. — "Օ՛րհնած, մեր Փրկիչը չունէր իւր գլուխը
դնելու մի տեղ անգամ. ես նրանից աւել չեմ. այս դեռ
շատ է ինձ համար,,: Անտարակոյս, այդ համեստաբանու-
թիւնը չէր բղխում քահանայի ուղիղ եւ ներքին հա-
մոզմունքից. եւ եթէ մի մարդ նրան ձրի բաշխելու լինէր
մի փառաւոր ապարանք՝ տէր Մարկոսը երբեք չէր հա-
մաձայնի բնակուիլ աղքատին խրճթի մէջ:

Գիւղական տնտեսութեանց պայմանների նկատմամբ,
շատերը մտածում էին, թէ տէր Մարկոսի համար խիստ
դժուարին էր, միայնակ, իւր կուզ եւ խեղանդամ ծառայի
հետ կառավարել իւր ապրուստը: Որովհետեւ գիւղերը
քաղաք չեն, որ ամէն ինչ կարելի լինէր պատրաստի գնել
շուկայից: Այստեղ ամէն մարդ, իւր տան մէջ պիտի
հաց թխէ, կերակուր եփէ, գինի շինէ, եւ պատրաստէ
ամէն բան, որ մեր կենսական պիտոյքն է կազմում: Տէր
Մարկոսի համար՝ ոմն էր պատրաստում դրանք — ո՛չ
ոք: Նրա թոռները սառն էր՝ որպէս անապատի մէջ մի
գերեզման: Նրա տան գիշերները երբեք չեն լուսաւորուած
իւղային ճրագով, — եւ պէտք է՛լ չը կար, որովհետեւ,
սկսած այն երջանիկ օրից, երբ Նրա ուսերի վրայ ձգուցին
Քահանայական փիլոնը, հացի եւ կերակրի խնդիրը վերացաւ,
մնաւանդ, հիւր ընդունելու եւ աղքատ պատսպարելու

Digitized by Google

հարկադրիչ պարագաների չգոյութեան շնորհիւ, ուր որ կար հարթանիք, կնունքաճաշ, մեռելի հոգեհաց կամ որ եւ է այլ կոչունք՝ սեղաններուն առաջին տեղը բռնում էր տէր Մարկոսը, իւղալի բաժիններըը նրան առջեւ էին դրվում, եւ նրան էին մատուցանում լի լի բաժակները։ Ծօթն հարիւր տուն ժողովուրդ ունեցող մի գիւղի մէջ՝ — որպիսին էր Ծաղկաւանը — համարեա՝ ամէն օր պատահում են այդպիսի բախտաւոր դէպքեր։ Տէր Մարկոսի ծառան, որ "կ՚ե՛ս խոզը-ն՚ի՛նչ,, աւել բան չը գիտէր, սովորաբար, բուրվառը ձեռքից քարշ գցած, կաղկղալով՝ հետեւում էր քահանային, ուր եւ գնալու լինեը նա։

Փառք մատուցանելով այն երանելի հանգամանքներին, թէ "Պալպոյի եւ Տօնաց-ի„ շնորհիւ ոչքան օգտաշատ արտօնութիւններ էին վայելում հայ քահանաները — տէր Մարկոսը, ւ՚չ թէ մինչեւ տարեգլուխ մի փարա ծախս չունէր, այլ, ընդհակառակն, կարողանում էր բաւականաչափ արծաթ որսալ։ Մենք աւելորդ ենք համարում մի ըստ միոջէ թուել, թէ ոչքան արծաթ էր նա ստանում պսակի, մկրտութեան, թաղման, եւ այլ եկեղեցական խորհուրդների համար, բայց չէ կարելի չասել նրա շահախնդրութիւնը — խիստ մանաւանդ իրողութեանց մէջ։ Օրինակ, Ծաղկաւանում ամէն մի շաբաթուայ ընթացքում, քանիցս անգամ պատարագ էր մատուցվում։ Գիւղերի սովորութեան համաձայն՝ ժամհարը եւ տէր Մարկոսի ծառան, ամէն մինը մի մի ջոլ (պարկ) եւ տիկ գցած ուսերնին՝ դռնից դուռ մտն են գալիս, ալիւր հաւաքում նշխարի համար, եւ գինի՝ քահանայի համար։ Դժուար չէ երեւակայել, թէ ծօթն հարիւր տուն ժողովրդից՝ ամէն մի անգամ ոչքան կը հաւաքուի՝ երբ

Digitized by Google

ամէն մի տան պատաւ տիկինը, ջերմեռանդ անահաւա-
տութեամբ լեցնում է ժամհարի պարկը ալիւրով, եւ
նրանց մեծ տիկը — գինիով՝ աղաչելով՝ որ իւր տան
ալիւրից եւ գինուց միայն մատուցանէին սուրբ ընթրիքին
հարկաւոր նիւթերը. այդ անում էր նա՝ լի հաւատով,
թէ դրանով իւր տան ալիւրով լի փութակները եւ գինու
թակոյկները շնորհ եւ քաղաքեամն կը գտնէին: Կեղծաւոր
ժամհարը, լաւ ճանաչելով պատաւների թուլութիւն-
ները, բոլորին միաժամանակ յուսադրում էր, թէ նրանց
կամքը անպայման կը կատարէ . . . : Բայց ի զուր. բոլոր
մրթերքը խառնվում է միմեանց . . . եւ այդ բոլորի մէկ
հազարերորդ մասը բաւականանում է սուրբ խորհրդի
պիտոյքի համար, իսկ մնացածը լեցնվում է տէր Մար-
կոսի ամբարի մէջ, մի փոքր մասը միայն բաժին հանելով
աշխատասէր ժամհարին: Եւ այսպիսով, տէր Մարկոսը,
թէպէտ չունէր ոչ հունձքի արտեր, եւ ոչ խաղողաբեր
այգիներ, բայց ժողովրդից հնձում էր աւելի ալիւր եւ
գոբեան՝ քան թէ վաստակաւոր երկրագործը եւ նրա գինու
թակոյկները աւելի լիքն էին՝ քան թէ մի այգեգործին:

Մեծ պասի աւագ չորեքշաբթի երեկոյեան, եկեղե-
ցու մէջ, տէր Մարկոսը "ձանձոյոմ" է անում — "ժո-
ղովուրդ, գիտէք, առաւօտեան ոպնցոյ պիտի լինի, եւ
որպէս հրամայում է մեր սուրբ կրօնքը — պիտի իւղ
օրհնուի: Կանայք, ձեզ եմ ասում, ականջներդ բաց
արէք, լաւ լսեցէք. բուռներդ շատ հուպ մի տուէք —
ամէն տարուայ պէս. այլ այս տարի իւղն առատապէս
սեղան հանէք՝ որ մնանակից լինէք այն երանութեանը,
որ Քրիստոս տուեց Բեթանիացի կնոջ, որը օծեց Տէրը
թանկագին նարդոսի իւղով: Իսկ եթէ խնայողութիւն գործ
դնէք, ես անպարտ՝ դուք պարտաւոր, գիտցած լինիք, որ

Digitized by Google

ձեր կովերը կը ցամաքեն կաթ տալուց, եւ ձեր հաւաքած իւղը եւ կարագը — առատութիւն չի ունենալ»: Բայց անհաւատութիւնը, առաւել քան տէր Մարկոսի փաստերը — զօրաւոր էր՝ ժլատ պառաւների առատաձեռնութիւնը շարժելու: Այդ պատճառով, տօնատէր ժամհարը այսօր քարշ չէ գալիս դռնից դուռ: Ամէն մի բարի գիւղացի այսօր գիտէ իւր սրբազան պարտքը — աւագ հինգշաբթի օրերին, երեկոյեան ժամերգութեան միջոցին, եկեղեցում, Տիրոջ սեղանի վրայ ասեղ ձգելու տեղ չը կայ, ամբողջովին ծածկուած է լինում զանազան մեծ եւ փոքր ամաններով՝ լիքը կովի, գոմէշի եւ ոչխարի իւղով: Այդ ամաններից մի քանիսի իւղը բաւական էր բաժանելու ժողովրդին, որ իրանց գլուխը օծէին, եւ կանայք, իրանց տունը տանելով խառնէին իրանց իւղ հարելու ծծումի մէջ, — հետացրդը տէր Մարկոսի բաժինն էր:

Տէր Մարկոսը չէ մոռանում ամենայն տարի ի յիշատակ Քառասուն մանկանց ձէթ հաւաքել: Եւ նա, իւր ճարտարութեամբ, շատ անգամ զարմացնում է ժողովուրդը — մի «էհինի մէջ ջուր լեցնելով եւ նրա երեսին ածելով մի փոքր ձէթ, մի հնարքով վառում է «էհինի մէջ քառասուն ճրագ, որոնց ամէն մինը հանգչելու ժամանակ նշանակում էր, թէ մեռնում էր մանուկներից մէկը:

Այն բիբլիական օրէնքը, որով ամէն մի իսրայէլացի պարտաւոր էր իւր պտուղների երեխայրիքը Տիրոջ նուիրել, մի անապաշտական հաւատքով անցնելով եւ մեր մէջ, սուրբ Աստուածածնի Վերափոխման տօնախմբութեան օրում, ամէն մի բարի գիւղացի իւր խաղողի պտուղներից դնում է տաճարի սեղանի վրայ, քահանան օրհնում է խաղողը, այնուհետեւ ժողովուրդը կարող էր ուտել նրան,

Digitized by Google

որ պատ էր մինչեւ այն օր։ Տէր Մարկոսը շատ անգամ անիծուած էր այս ինչ այգեգործը, թէ նրա նուէրը պէտք պատրաստ էր համարուելու՝ խաղողի սակաւութեան կամ տեսակի վատութեան համար։ Խաղող-օրհնէնից աւելացուցած խաղողից տէր Մարկոսը ամէն տարի ունենում է մի փոքրիկ թակոյկի մէջ՝ դեռահաս գլանի [մանուկ]։

Այդպիսի արդիւնաւոր աղբիւրներից էին բղխում տէր Մարկոսի ապրուստի չորս գլխաւոր պիտոյքները — հաց, գինի, իւղ եւ ձէթ՝ վառելու համար, որոնք ուրիշների տնտեսութեան համար այնքան անհրաժեշտ էին, բայց տէր Մարկոսի համար բոլորովին աւելորդ լինելով դառնում էին վաճառքի նիւթ։ Տէր Մարկոսը զուրկ չէր մնում նաեւ առատ մսից, որ ամէն տարի, որոշեալ օրերին հասնում էր նրան միանգամայն ձրի։

Ծաղկաւան գիւղի մէջ, բացի սուրբ Գէորգ եկեղեցուց, կար մի այլ հին եկեղեցի — սուրբ Սարգիս անունով։ Այդ բոլորովին փլատակուած եկեղեցին ձեւացնում էր աւերակների մի բլուր, որի միջն կիսաթաղ սրբատաշ քարերը — խաչանիշ դրոշներով, եւ կիսակործան կամարները՝ մի հոյակապ շինուածքի մնացորդներն էին։ Մնահաւատ մարդկանց աւանդութիւնը պատմում է, թէ հարուստ իշխաններից շատերը, իրանց հոգւոյ համար, կամեցել են նորոգել այդ եկեղեցին, բայց սուրբ Սարգիսը նրանց երազում երեւալով յայտնել է, թէ ինքը ուրախ է բնակուելու մի այդպիսի աղքատ աւերակների մէջ, այդ պատճառով նրան անուանում են անփոփոխելի, ազնիւ սուրբ Սարգիս։ Ռամիկների մէջ այդ սրբազան աւերակները մեծակշիռ համարում ունին։ Կիրակէմուտ երեկոներին գիւղացի մոլեռանդ պառաւները նրա փլատակած

քարերի վրայ վառում են իրանց իւղային ճրագները, աթարի կրակի վրայ ծխում են լի բուռով անուշահոտ խունկեր, եւ իրանց երեկոյեան աղօթքը ջերմեռանդութեամբ կատարելուց յետոյ, թաւալվում են նրա սուրբ հողերի եւ փոշիների մէջ, եւ իրանց երեսները այն նուիրական քարերին քսելով, սրբազան զգացմունքներով լի՝ դառնում են տուն։ Ջերմախտով եւ այլ ցաւերով տկարացած բազմաթիւ հիւանդներ ամէն օր քնած են լինում այդ կիսակործան կամարների տակ, ջերմ յոյսով, թէ ղօրաւոր սուրբ Սարգիսը իրանց ապաքինութիւն կը պարգեւէ։

Սուրբ Սարգսի տօնախմբութեան օրին, ամէն տարի, Ջարեհաւանի բոլոր գիւղերից այդտեղ հաւաքվում են երկու սեռի անթիւ եւ անհամար ուխտաւորներ։ Ծաղկաբաշխում հանդիսանում է մի մեծ քանայչէ, ուր տէր Մարկոսը իւր բոլոր եկեղեցական խաբէութեամբ, մի մեծ եւ առատ վաստակ է ժողովում ամիկ խառնիճաղանճի անապաշտութիւնից։

Այդ սպանդարամետական հանդիսի մէջ հայ մարդը ձեւանում է իւր հոգեւոր եւ մարմնաւոր բոլոր խեղդութիւններով։ Բազմաթիւ նորահարսեր, աղջիկներ, սիրուն կանայք, տղամարդիկ, պառաւ տանտիկիններ, ալեւոր ծերունիներ, բոլորը զուգուած զարդարուած իրանց հարսանիքի հագուստներով, մի կողմից կատարում են սրբազան պաշտամունքներ, միւս կողմից՝ ամբողջ եօթն օր եւ եօթն գիշեր, տեսակ տեսակ նուագարանների, սազի, չօնգուրի, դըհոլի, զուռնայի ձայներով, խառնուած միմեանց, պարբռնելով, երգ երգելով, ուտում, խմում, ուրախանում են . . . ։ Շատ անգամ մի ախտալից, սիրաբորբոք պատանի, ոգեւորուած այն ռօմանական զգացմունքներով, թէ ինչպէս էր սուրբ Սարգիսը փախցրել Ցոյնի աղջիկը,

Digitized by Google

երբ տեսնում է մի գիւղացի սիրուն աղջիկ, որ իւր մօր հետ եկել էր ուխտ, իսկոյն նրա մէջ վառվում է սէրը..., նա պարի մէջ մօտենում է աղջկան... շշնջում է նրա ականջին մի քանի սիրոյ խօսքեր... այդ կախարդական խօսքերը հրապուրում են աղջկայ սիրտը... եւ՝ կէս գիշերային լռին եւ խաղաղ պահուն, երբ ուխտաւորներից շատերը հարբած, յոգնած, քնած էին իրանց վրաններում, տէր Մարկոսը միայնակ, լուսնի արծաթափայլ լուսով, մի քարի տակ, կատարում է երկու սիրահարների պսակը...: Մայրը երկար որոնում է կորած աղջկան, բայց առաւօտեան տէր Մարկոսը, նորահարսի եւ նորափեսայի ձեռքից բռնած տանում է նրանց նորահարսի մօր վրանը: Նորահարսը ամօթխածութեամբ կարմրած, երեսը ծածկելով՝ ընկնում է մօր ոտքերը...: Մայրը մի փոքր տհաճութիւն ցոյց տուած դէպքում՝ "դէ", օրհնած, ասում է քահանան — այսօր սուրբ Սարգիս է, "աբեղալոլ" է, սիրածը՝ սիրողինն է, փախցրածը՝ փախցնողինը... այսօր այդպիսի բաների համար չը կայ ոչ մի արգելք, այսօր ազատութիւն է...„: Մի քանի կաթիլ արտասուք գլորվում են մօր աչքերից եւ նա ակամայ օրհնում է նորապսակները:

Մի այդպիսի անհամար բազմութեան մէջ, իւրաքանչիւր ուխտաւորի մոլեռանդ մէկ, երկու կամ աւելի մատաղների ը-ը-բերը (զհստը), ղեւտական իրաւունքով — հանում էր տէր Մարկոսին. իսկ հայոց քահանան այդ իրաւունքի վրայ աւելացրել է մի երկրորդ բան — մատաղացուների կաշիները եւս...: Տէր Մարկոսի խեղանդամ ծառան, ժամհարի հետ, կաղկաղալով քարշ է գալիս ուխտաւորների մէջ մատաղների բուտերը եւ կաշիները հաւաքում:

Digitized by Google

Տէր Մարկոսը, շատ անգամ, կռիւ է անում այս ինչ ուխտաւորի հետ, թէ ինչմէ էր նա երկու կաշի առել, երբ մոլթել էր երեք մատաղ։ Ուխտաւորը չէ ուրանում, չէ ասում, թէ երեք մատաղ չէր, բացատրում է, թէ կաշիներից մինը շունն էր գողացել. քահանան պահանջում է կորած կաշուի արժէքը։ Այսպիսի վէճեր, յաճախ, հանում են տարաձայնութեան մինչ այն աստիճանը, որ պատճառ են տալիս քահանային եւ ուխտաւորին — միմեանց գլուխ կոտրելու եւ մօրուք փետելու։ Տէր Մարկոսը չէ նահանջում. հազարումէկ անէծք թափելով խեղճ ուխտաւորի գլխին, թող չէ տալիս նրան, մինչեւ կաշու գինը ստանում է։

Ստացած ոչխարների բուդերից տէր Մարկոսը պատրաստում է օրինաւոր ղաւրմա, իսկ նրա ծառան, ձմեռնային օրերում, երբ միսը թանգանում է, վաճառում է այդ ղաւուրման բազարում շահաւոր գնով։

Տէր Մարկոսի խորամանկութեամբ եւ հնարագիտութեամբ աւելի յորդացած այդպիսի եւ դրա նման առատաբուղխ աղբիւրները, բաշխում էին նրան ամէն տարի մեծակշիռ արդիւնքներ։ Դրա վրայ աւելացնելով տէր Մարկոսի ժլատութեամբ եւ չափազանց կծծութեամբ ապրուստը, հասկանալի է, որ նա կարողացել էր ժողովել քաւականաչափ արծաթ։ Նա իւր արծաթը փոխառութեան կամ շրջաբերութեան չէր դնում, ոչ՝ այդ արարքի աստուածային օրէնքով արգելուած լինելու պատճառով, այլ՝ իւր գանձը թաղում էր հողի մէջ, կամենալով ժողովրդի աչքին ձեւանալ աղքատ, ողորմելի եւ խեղճ քահանայ — աւելի աջահամբոյր ստանալու համար։ Այդ նկատումով նա միշտ մեն էր գալիս պատառոտած հագուստներով եւ բոբիկ ոտներով։ Նրա մահուդի վերար-

Digitized by Google

կուն, քրքրուած եւ եղտուած, կրում էր իւր վրայ նրա նորընծայութեան օրերի թուականը: Նրա մորթի գդակը, կորցնելով իւր բուրդը, նմանում էր գլխի վրայ դրած մի պարկի . . . :

Տէր Մարկոսը (քանի՛ հազար այդպիսի տէր Մարկոսներ ունինք մենք . . .), Մաշտոցին եւ Տօնացոյցին ծանօթ լինելը իւր քահանայութեան միակ նպատակը դարձնելով, եւ քրիստոնէութեան բուն խորհրդին մի տարապայման եւ խստորնակի կերպարանք տալով՝ — Փրկչի սուրբ Աւետարանը արել է մի ուրկան — իւր նիւթական օգուտը որսալու:

— Հըմ . . . , դո՞ւ էլ սկսեցիր մեր հոգեւորականների ջիղը ծամել եւ նրանց ոտից քարշ տալ: Իմ խօսքը կտրում է նեղսիրտ հնամոլը, երեսը խոժոռելով եւ աչքերից կայծակ թափելով:

— Ո՛չ, պարոն, պատասխանում եմ ես. — իմ ասածը տէր Մարկոսի համար էր . . . դուք կը ճանաչէք թէ ինչ պտուղ է տէր Մարկոսը . . . Հրամայեցէք, Ռէսի հետ, ձեզ ներս կը տանեմ նրա տունը, եւ աւելի լաւ կը ծանօթացնեմ նրա հետ:

* * *

Հարութեան դեւը մտած Ռէս Վասակեանի սրտի մէջ, չարաչար խռովում եւ ամբոխում էր նրա հոգին: Նա, միայնակ, վաղ առաւօտեան, գնում էր Ծաղկաւանի մի նեղ եւ ցեխոտ փողոցով, եւ նրա գլուխը նոյն րոպէին ծանրացած էր ամենազարհուրելի մտածութիւններով . . . "Այն՝ որ յանձնառու չեղաւ կատարել մարմնաւոր բժիշկը . . . անպատճառ կը կատարեմ հոգեւոր բժշկի ձեռքով . . . ", ստէպ ստէպ կրկնում էր նա իւր մտքի մէջ:

Digitized by Google

Վերջապէս նա կանգ է առնում մի դրան առաջ, որ ճխանի վրայ բաց էր, եւ առանց մուրճը զարկելու, կամ իմացում տալու, ներս է մտնում նախագաւիթը, եւ իւր յետեւից փակում է դուռը։ Նա, ոտքի մատների վրայ, ուշիկ ուշիկ, առանց մի ձայն հանելու, մտնում, կանգնում է սենեակի փակ դրան առաջ, որտեղից լսելի էր լինում հետեւեալ խօսակցութիւնը. —

— Ա՛յ տղայ, կարծ։

— Հրամմէ, տէր Հայր։

— Մոմերը հալեցիր. քանի՞ գլուխ եղաւ։

— Հրամեր էք, հալեցի, տասն եւ չորս գլուխ եղաւ։

— Ինչո՞ւ այդպէս քիչ... բեր մինը տեսնեմ։

Մի քանի րոպէից յետոյ. —

— Էյ դու գարշելի, գոռաց առաջինն ձայնը. — քանիցս անգամ պատուիրած եմ, որ մոմերի պրուաձքը կտրես, որպէս զի այդ սեւութիւնները չերեւէին. բայց դու անմիտ ես, առաւել քան մեր դրացու աւանակը։

Մի քանի րոպէ լռութիւն. առաջինն ձայնը դարձեալ կօչեց.

— Ահա քեզ եկեղեցու բանալին, կը մտնես այն խորանը, որ գիտես, նոյն արկղի մէջ դարձեալ կը գտնես կիսավառ մոմի պատրոյգներ. կը բերես, կը հալես...։

Ռիւսը իսկոյն հասկացաւ, թէ տէր Մարկոսը սովորութիւն է ունեցել եկեղեցուց գողանալ կիսավառ մոմերը, եւ հալել տալով, մեծ մեծ մոմի գլուխներ շինել՝ վաճառքի համար։ Բայց քանի որ նա մի այլ նպատակով էր եկել քան թէ լրտեսութեան համար, չը սպասեց նրանց խօսակցութեան վերջը լսելու, երեք անգամ հազաց, իմացնելու իւր մտնելը, դուռը հեզիկ բաց արեց եւ ներս մտաւ։

Digitized by Google

Ռէս Վասակեանը քաղաքավարութեամբ սովորական ողջոյնը տալով, նստեց քահանայի մօտ։

— Բարի լինի, Ռէս, խօսեց տէր Մարկոսը, ինչ բախտով. ձանապարհներդ ծռե՞լ էք, հա՛... փառք քեզ Տէր, երկու հակառակ ծայրերը միանում են...։

— Ի՞նչու հակառակ, տէր հայր, պատասխանեց Վասակեանը. ձեզ յայտնի է իմ դէպի ձեզ միշտ ի սրտէ բարեացակամութիւնը։

— Թող այդպէս լինի... բայց եւ այնպէս՝ տէր-տէրի ու Ռէսի ջուրը մի առուակով չի գնալ. մինը՝ դէպի մի կողմն է քարշում, միւսը՝ դէպ այլ կողմ։

— Ես գիտեմ, այդ բոլոր խօսքերը կատակ են, խօսեց Ռէսը գործատէր մարդու ոճով։ — Բայց թող առժամանակ հանաքը մնայ։ Տէր հայր, ես պիտի խօսեմ ձեզ հետ մի ամենակարեւոր գործի մասին. հրամայեցէք, որ ծառան հեռանայ։

Տէր Մարկոսը աչքով արեց. ծառան դուրս գնաց։ Ռէսը աւելի մօտեցաւ քահանային, եւ խօսեց։ —

— Հա՛յր, ինչ է ձեր կարծիքը սպանութեան մասին։

— Քրիստոնէութիւնը թոյլ չէ տալիս սպանութիւն գործել, կտրուկ պատասխանեց տէր Մարկոսը։

— Բայց եթէ այդ գործ դնէինք մեր թշնամիների դէմ, մի այնպիսի՛ թշնամու, որի մահը հաշարաւոր ազգայիններին կեանքը կորստից ազատելու պատճառ էր դառնում։

— Ով էլ որ լինի, թշնամի՛ թէ բարեկամ՝ արգելուած է։

— Ճիշտ է, որ մեր կրօնքի հեղինակը հրաման չէ տալիս սուր բարձրացնել մեր թշնամիների եւ մեր նեղիչների դէմ։ Բայց ազգասիրութեան եւ նախանձախնդրու-

թեան սուրբ ձգտումը, որով գրգռվում է մեր արիւնը, գործադրելու մեր սուրը, մեր իրաւունքը, մեր ազգայնութիւնը եւ մեր կրօնը պահպանելու համար, — այդ բնական զգացումը, որով ամէն մի անհատ պարտաւորվում է պահպանել իւր անձնական եւ իւր ազգակցի պատիւը՝ — այդ բնական սուրբ զգացումը, կրկնում եմ, — համարելու է զուտ ճշմարտութիւն եւ աստուածային օրէնք:

Տէր Մարկոսը ժպտաց: Նա Ռէսի բերնից լսում էր նոր խօսքեր, որոնք ամենեւին չէին համապատասխանում նրա մինչեւ այն ժամանակ ճանաչուած բնաւորութեան:

— Ռէս, որի՞ դէմ էք կամենում բարձրացնել ձեր վրէժխնդրութեան սուրը, հարցրեց տէր Մարկոսը ծիծաղելով:

Այդ սուր եւ կծու կատակը բնաւ չը կարողացաւ խախտել Վասակեանի երկաթի հաստատութեամբ մտադրութիւնը: Նա առանց շփոթուելու, սառնասրտութեամբ առաջ տարաւ իւր խօսքը, ասելով.

Պատուելի՛ հայր, իմ վրէժխնդրութեան սուրը ես չե՛մ բարձրացնում մի այլ ազգի կամ մի մեծ բազմութեան դէմ, այլ, որպէս քահանայ, խոստովանաբա՛ր եմ յայտնում ձեզ, որ ես չափազանց ոխ ունիմ դէպ մի մարդ, եւ կամենում եմ վրէժխնդիր լինել նրան մահուամբ. ո՛չ թէ նրա համար, որ այդ մարդը ինձ որեւէ անձնական վնաս է հասցրել, այլ, առաւելապէս այն պատճառով, որ իմ խղճմտանքս ինձ տանջում է, տեսնելով այդ մարդը ազգային մարմնի մէջ, որպէս սպանիչ եւ փտեցուցիչ կերպաս, օրէցօր աւերում է ազգային մարմնի շինուածքը, եւ, անտարակոյս, մի օր պատճառելու է նրա ցաւալի կործանումը . . . : Մովսէսի օրինակը

Digitized by Google

բաւական է ինձ՝ ազգասիրաբար վերջ տալու մի այդպիսի մարդու կեանքին։

Բայց տէր Մարկոսը դիւրաւ խաբուելու մարդ չէր. նա աւելի խորամանկ էր՝ քան հարիւր սատանայ։ Նա ակներեւ տեսնում էր Ռէսի խօսքերի մէջ մի թաղնուած գաղտնիք, որ Ռէսը կամենում էր վարագուրել կեղծաւոր խօսքերով։ Ալլապէս, նա քաջ ճանաչում էր Ռէսի հոգին, որը ոչ միայն հայոց ազգը, այլ բոլոր մարդկութիւնը պատրաստ էր վաճառել մի քանի փարայի, եթէ նրան արծաթ տային։

Տէր Մարկոսը բռնեց Ռէսի ձեռքը, համակրաբար նայեց նրա երեսին, եւ ասաց. —

— Պարոն Վասակեան, աւելի լաւ կը լինէր, եթէ դուք բոլորովին բացէիք իմ առաջ ձեր սիրտը, միանգամայն յուսալով, որ կը գտնէիք իմ կարեկցութիւնը եւ իմ հաճութիւնը։

Ռէս Վասակեանը մտածութեան գնաց, եւ ոչինչ չը պատասխանեց։

— Ո՞վ է ձեր ասած մարդը, հարցրեց տէր Մարկոսը։

— Մի՛թէ դուք չը գիտէք, թէ ո՞վ է մեր ազգի եւ կրօնքի թշնամին։

— Այդպիսի մարդիկ շատ ունինք. դուք ասացէք, թէ որի՞ մասին էք խօսում։

— Պարոն Ռուստամը, Տէր-Առաքելենց Մահտեսի Աւետիսի որդին։

— Նա արդէն հիւանդ է. դուք թողէք Աստուածոյ կամքին, գուցէ Աստուած ինքը վերջ տայ նրա կեանքին։

Բայց Ռէս Վասակեանը վստահ լինելով, որ արծաթը աւելի գործակատար է քան Աստուած՝ դրեց տէր Մար-

կոսի առաջ մի քսակ լի ոսկով, միեւնոյն քսակը, որ նա առաջարկել էր մըտեր Սէյսունին, անգլիացի բժշկին, որ նա իւր դարմաններով Թունաւորէր պարոն Ռուստամին, եւ որը չընդունեց առաքինի եւրոպացին։

— Ահա՛, այդ ոսկիները ձեզ պարգեւ. դուք կատարեցէք իմ խնդիրը, ասաց Ռէս Վասակեանը։

— Ի՞նչ է ձեր միտքը, հարցրեց քահանան շփոթուելով։

— Ձեր ձեռքով առաւել դիւրին է սպանել նրան. դուք կարող էք անել այդ սուրբ հաղորդութեան միջոցով։

— Սուրբ հաղորդութեա՞ն միջոցով... ո՞րպէս։

— Դրա օրինակները քիչ չեն մեր ազգային պատմութեան մէջ... օրինակ՝ թոյն խառնելով սուրբ հաղորդութեան մէջ, եւ այնպէս մատուցանելով հիւանդին։

— Այդ գարշելի սպանութիւն է... մեղք է...։

— Ես քանի՛ քանի՛ փաստերով ապացուցի, թէ մեղք չէ. դուք ընդունեցէք այդ ոսկիները։

Տէր Մարկոսը վերցրեց Յուդայի արծաթը, համբուրեց, այնուհետեւ ասաց.

— Բայց պէտք է, այդ գործը մնայ գաղտնի մեր երկուսի մէջ։

— Բերէք Աւետարանը, ես կ'երդուեմ, եթէ չէք հաւատում։

Տէր Մարկոսը դրեց գետնին Աւետարանը. Ռէս Վասակեանը սկսեց զարհուրելի երդումներով երդուել։

— Ես կը պատրաստեմ թունաւոր հաղորդութիւնը, միայն պէտք է մի հնար գտնել, որ նրանք, այսինքն Տէր-

Digitized by Google

Առաքեցնք ցանկանային հաղորդել իրանց հիւանդը, ասաց տէր Մարկոսը։

— Այդ հոգսը թողէք ինձ, պատասխանեց Ռէսը ուրախութեամբ. միայն դուք պատրաստ եղէք, երբ կանչեն ձեզ։

— Շատ բարի։

— Մնաք բարեաւ։

— Գնացէք խաղաղութեամբ։

Ռէս Վասակեանը հեռացաւ։

Digitized by Google

ԻԳ.

ՏԻՐՈՋ ՄԱՐՄԻՆԸ

Պարոն Ռուստամի հիւանդութիւնը օր ըստ օրէ ծանրանում էր։ Մըստր Սէյսունը բանացրել էր իւր բժշկական բոլոր հնարները — փնացել էր անճար։ Նկատելով իւր հիւանդի մէջ աւելի բարոյական ցաւեր քան թէ ֆիզիքական, նա պատուիրում էր հեռու պահել հիւանդից այն բոլորը, որ կարող էր նրան հոգեկան խռովութիւն պատճառել։ Մանաւանդ նա արգելում էր Ծէր-Առաքելենց բարեկամների անտանելի այցելութիւնները, որոնցից խորշում էր հիւանդը իւր առողջութեան ժամանակ իսկ։

Պարոն Մելիքզադէն, միայնակ հիւանդի մօտ, կատարում էր նրա բոլոր ծառայութիւնները։ Աշխարունիները գալիս էին երբեմն։ Մահտեսի Աւետիսը եւ տիկին Սկուհին չէին կարողանում ցամաք աչքով նայել իրանց որդու վրայ, այդ պատճառով գալիս էին նրա մօտ խիստ սակաւ։ Բայց Հուրի Յովան-Դայան իւր մի քանի պատանի ընկերուհիների հետ, չէին թողնում հիւանդին հանգիստ մնայ։ Նրանք շատ անգամ, մըստր Սէյսունից գաղտնի, միջոց գտնելով, մտնում էին պարոն Ռուստամի մօտ, եւ նիւթում նրա համար վտանգաւոր բժշկական հնարներ, գործ դնելով ուժ այնքան գայթակղներ, որքան կախարդական գործողութիւններ։

Մի օր, արեւածագից առաջ Հուրի Յովան-Դայան, նստած թոռների մօտ, խորին մտածողութեան մէջ — տա-

Digitized by Google

քանում էր։ Ծանկարծ ներս մոտաւ նրա մօտ միականի գօզէն, Ռէս Վասակեանի քառասունամեայ քոյրը, որի սպնգանման երեսը, ցրտից լըջացած՝ միեւնոյն ժամանակ խիստ անուանելի էր։

— Բարի լինի . . . ինչ կայ, աղջի, այսպէս վաղ առաւօտեան, հարցրեց Հուրի Ղան-Դայան, նրա երեսին նայելով։

— Փա՜ռք Աստուծոյ, բարի է, պատասխանեց օրիորդ Վասակեանը ծամծմելով։ — Նկայ ձեզ մի նեղութիւն տամ, յոյս ունիմ ընդունէք ձեր բարեսրտութեամբ, առաքինի մայրիկ. "պոտոս ընկել է,, քանի օր է, որ բոլորովին քուն չունիմ ցաւից, օր ըստ օրէ ակարանում եմ. ցերեկով ամաչեցի ձեզ մօտ գալ. առաւօտեան կանուխ եկայ, որ "աղօթել տամ,,։

Օրիորդը պէսպէս տարապայման շարժմունքներով կամենում էր ցոյց տալ, թէ իրօք փորի մէջ մեծ ցաւեր էր զգում։

— Ե՛կ, նատիր, խղճալի աղջիկ, ասաց պառաւը ցաւակցաբար. երեւի կարողութիւնից դուրս ծանր բան ես վեր առել եւ պորտդ վեր ես գցել, եկ, նատիր, մի կանգնիր, կրկնեց նա։

Գօզէն մօտեցաւ, նստեց Թոնրի ափին, Հուրի Ղան-Դայայի մօտ։ Նրա փոքր տաքանալուց յետոյ, պառաւը ձեռքը տարաւ դէպ նրա փորը եւ մի քանի րոպէ շօշափելուց յետոյ, ասաց.

— Վա՛յ խղճալի, մէկ թիզից աւել է իջել դէպի ցած. հո՛ղը քո գլխին. ինչո՞ւ շուտով խարար չը տուեցիր, որ մի ճար անէինք։

— Ա՛խ. ինչ անեմ, մայրիկ, քանի որ մտել եմ այդ անիծուած վարժարանը, գլուխս քորելու ժամանակ չունիմ, այնքան աշխատեցնում են . . .։

Digitized by Google

— Այդպէս է... Հէնց այն սատանայի բունի մէջ պիտի մի կտոր հաց ճարէիր, ասաց տհաճութեամբ պառաւը եւ հրամայեց Գօզէին պառկել քամակի վրայ։ Բոլորովին բաց անելով նրա փորը՝ նա սկսեց ձեռքերով ու մատներով զանազան շարժուձեւեր անել եւ մնժմնժել, միեւնոյն ժամանակ չը դադարելով կարդալ այնպիսի աղօթքներ, որոնք ոչ մի դէպքում գրուած չէին։

Պառաւ օրիորդը շուտով բարձրացաւ, մի քանի անգամ հազաց եւ Հուրի Յան-Դայայի ձեռքը պաչեց, ասելով.

— Մայրիկ, քո հոգին լուսի մէջ լինի. այժմ բոլորովին հանգստացայ։

Բայց Գօզէի ոչ պորան էր ընկել, ոչ մօրաը։ Նա մի ուրիշ փորացաւ ունէր...։

— Ի՞նչպէս է այժմ Ռուստամի հիւանդութիւնը, հարցրեց նա ցաւակցաբար։

— Ա՛խ. Ռուստամից ամենեւին մի հարցրու, քոյրիկ, հառաչանօք պատասխանեց պառաւը։ — Ռուստամը, դժուար մէկ էլ աշխարհ տեսնէ...։

— Վա՛յ, իմ աչիկս քոռանար, այդ ինչ եմ լսում, ձայն տուեց միականի օրիորդը եւ սկսեց լալ։

Պառաւի ցամաքած աչքերը նոյնպէս լցուեցան։

— Աստուած մեզանից առել է...։ Ասաց նա գլուխը շարժելով։

— Բայց դուք, մայրիկ, դուք այդպէս չէիք, դուք մեռելներ էիք ոզջացնում, այժմ ինչպէս է, որ ձեր թոռան համար միացել էք անձայն։

— Ժամանակը փոխուել է. այժմ ոմն է լսում ծերի խրատը...։ Մինէ ինձ իմ կամքին են թողնում.

Digitized by Google

մի քանի անպատուաճներ հաւաքուած, չեն իմանում ինչ են անում... մնչեցին, մեռցրին խեղճ երեխաս։

— Աստուած փրկեց նրանց, ասաց պառաւ աղջիկը աւելի եւս կեղծաւորութեամբ։ — Բայց, մայրիկ, խօսքը փոխեց նա, — երբ այդքան երկիւղ կայ Ռուստամի կեանքի համար, գոնեա դուք մոռացեցէք սուրբ Հաղորդութեան մասին։

— Բա՛ւ, սուրբ հաղորդութիւն... կրկնեց խորհրդական ձայնով պառաւը։ — Ախ, վաղուց արդէն Սուրբը եւ Սրբութիւնը վերացել են իմ տանից...։

— Բայց ինչ միտս ունի, հիւանդի համար հոգեւոր կերակուր է. մարմնին առողջութիւն եւ ցաւերին փարատութիւն կը տայ։

— Դժբախտաբար իմ տան մէջ մնուցանվում է մի այնպիսի կրօնք, որի համար ոչ մի հայ քահանայ յանձնառու չէ լինելու իմ տան մէջ կատարել իւր այդ սուրբ քրիստոնէական պարտքը։

— Բայց եթէ դուք կամք կը տաք, ես կը յայտնեմ իմ եղբօրը, նա կը խնդրէ տէր Մարկոսից, որ բարեհաճէ հաղորդել ձեր հիւանդը։

— Դուք չափազանց կը պարտաւորէք մեզ։

— Այժմ մեռաք բարեաւ։

— Տէր լինդ ձեզ։

Բանսարկուի քոյրը, ոգեւորուած ուրախութեամբ, դուրս գնաց Տէր-Առաքելենց տնից։ Նա գտաւ եղբօր սենեակում՝ Ռէսը տէր Մարկոսի հետ միասին։

— Ի՞նչ եղաւ, հարցրեց նրա եղբայրը։

— Հուրի Յան-Դայան սիրով ընդունեց իմ խորհուրդը, եւ նա հնորհակալութեամբ կ'ընդունէ քահանան,

Digitized by Google

եթէ կամենալ հաղորդել նրանց հիւանդը, պատասխանեց նրա քոյրը։

— Շատ բարի, ասաց Ռէսը սառնութեամբ, կամենալով ծածկել իւր ներքին ուրախութիւնը։ Շատ ուրախ եմ, որ այդպիսով մեր քրիստոնեայ եղբայրներից մինը չէ կորչելու... միայն թէ, Գօզալ, ասացէք խնդրեմ, Հուրի Յսան-Դայան ե՞րբ ժամադիր եղաւ քահանան ընդունելու։

— Արեւմուտից երեք ժամ անցած. որովհետեւ այդ միջոցին հիւանդի մօտ չեն լինելու իւր բարեկամները, որոնք կարող էին արգելք լինել։

— Շատ լաւ. դուք, քոյր իմ, այժմ կարող էք հեռանալ, ամենեւին ոչ ոքի չը յայտնելով, թէ դուք այսօր եղել էք Ծէր-Առաքելենց տանը, եւ կամ խօսացել էք մի այդպիսի առարկայի մասին։

Գօզէն դուրս գնաց։

— Գիտէ՞ք ինչ կայ, տէր հայր, խօսեց Վասակեանը, երբ նրանք մնացել էին միայնակ — լաւ է մտածել Հուրի Յսան-Դայան, այո, պէտք է մտնել հիւանդի մօտ մի այնպիսի ժամանակ, երբ բժիշկը, Աշխարհունիները, Մելքազադէն այնտեղ չը լինէին, եթէ ոչ՝ մեր բոլոր յոյսերը կորած են։

— Այդ առաւել լաւ է, պատասխանեց քահանան բանիմաց մարդու եղանակով — բայց միեւնոյն ժամանակ չունի, եթէ նրանք այնտեղ գտնուին, որովհետեւ թոյնը այնպէս է պատրաստուած, որ եթէ, Աստուծոյ յաջողութեամբ հիւանդը շնորհ տանէր դէպ ի ստորին աշխարհը, դարձեալ կասկածել չէր տայ մեր մասին։

Շուտով հասաւ անբախտ երեկոն եւ արեւմուտից անց երեք ժամը... Թանձր մութի մէջ երկու կէտեր շարժվում էին դէպ Ծէր-Առաքելենց տունը։

Digitized by Google

— Դուք ներս գնացէք, տէր հայր, ասաց մի ձայն, ես մի փոքր կը սպասեմ. թող չիմանան, մենք երկուս եկել ենք միասին:

— Լաւ, դուք մնացէք այստեղ, պատասխանեց երկրորդ ձայնը:

Բժիշկը կատարելով իւր երեկոյեան այցելութիւնը, հեռացել էր: Հիւանդի մօտ մնացել էր միայն պարոն Յոսրով Մելիքզադէն, երբ տէր Մարկոսը ներս մտաւ: Իսկ տանեցիք լսելով քահանայի գալուստը, շուտով բոլորը հաւաքուեցան հիւանդի սենեակը:

Կէս ժամից յետոյ յայտնուեց Ռէսը: Նա, մօտենալով հիւանդի մահճակալին, սկսեց նայել նրա նիհար երեսին:

— Մինչեւ երբ, Աստուած, պիտի թողնես գրան այդ տրտում մահճի մէջ, կոչեց նա հառաչանքով եւ սկսեց լալ:

Ռէսի երկայրի խօսքը նրա համար չէր, որ Աստուած հիւանդը վեր կանգնէր իւր հիւանդութեան մահճից դէպի լոյս աշխարհ, այլ՝ տանէր դէպ մահուան գերեզմանը:

— Դուք խիստ շուտ փղձկեցաք, օրհնած, ասաց Ռէսին տէր Մարկոսը, մխիթարելով — ինչ կայ եղել, Աստուծոյ չնորհիւ շուտով չենք տեսնելու մեր բարեկամը այդպէս պատկած հիւանդութեան մահճի մէջ: Տէրը կը յարուցանէ նրան . . . :

— Ո՛չ, տէր հայր, Ռուստամը . . . ահա Ռուստամը . . . մեր սիրելի բարեկամը . . . դա չը պէտք է այդքան մեշուէր . . . , կրկնեց նա հեկեկալով:

Վաստակեանի արտասուքը շարժեց բոլորի լացը, եւ տէր Մարկոսը նոյնպէս երեսը դէպ միւս կողմ թեքեց,

թաշկինակ քսեց երեսին, որպէս թէ չորացնում էր իւր աչքերի արտասուքը։

Պարոն Մելիքզադէն, հեռուից արհամարհանքով նայում էր դրանց վրայ, ոչինչ գլին չը դնելով նրանց սրտերի անտեղի զեղմունքին։

Միւեզնոյն միջոցին, Հուրի Յովան-Դայան, մօտենալով քահանային, սկսեց համբուրել նրա ձեռքերը, ասելով.

— Տէր հայր, ծառայ եմ ձուրբ աջիդ, մատաղ լինեմ ոտքիդ հողին, Աստծոյ սիրոյն, ողորմութիւն արէք, եւ մի թողէք, որ իմ թոռս մեռնի որպէս մի թուրք, առանց ձուրբ հաղորդութեան, առանց քահանայի։

— Դուք, մայրիկ, պիտի մտածէք, որ ձեր թոռը հրաժարուած է հայոց ձուրբ եկեղեցու հաղորդակցութիւնից, պատասխանեց քահանան սառնութեամբ։

— Ես աղաչում եմ, ես խնդրում եմ, եթէ հնար էր . . . ։

Նա սկսեց պառաւը թախանձել, նրա ոտքերը համբուրելով։

— Բայց գիտէք, ինձ արգելուած է իմ մեծաւորի կողմից, եւ գուցէ պատժի տակ կը գցէի իմ անձս, գործելով սրբազան Առաջնորդի հրամանի դէմ։

Ինկապէս, Ամրպատեանի սրբազան Առաջնորդը, նզովելով պարոն Ռուստամին իւր ընկերների հետ, հրաժարեցրել էր հայոց եկեղեցու հետ հաղորդակցութիւնից։ Նա տէր Մարկոսը, այդ իրողութիւնը պատճառ բերելով, աշխատում էր աւելի թանկ գնով վաճառել իւր ծոյնը։

— Ո՞նչ պէտք հիւանդին հաղորդել տիրոջ մարմնով, միւս՝ կողմից, նրանց խօսքը կտրելով, մէջ մտաւ պարոն Մելիքզադէն։

Digitized by Google

— Ի՞նչպէս պէտք չէ, պատասխանեց քահանան մի փոքր բարկացած. — Ցիրոջ մարմինը մեզ համար եւ հոգեւոր եւ մարմնաւոր կերակուր է. նա զօրութիւն է տալիս տկարացած մարմնին:

— Այդ յիմարութիւն է, կրկնեց մանուկ տղամարդը:

— Ի՞նչպէս յիմարութիւն. մի՞թէ սուրբ Աւետարանը ամէն օր այդպէս չէ՞ քարոզում մեզ:

Պարոն Մելիքզադէն կամենալով ճանաչել հայ քահանայի հայեացքը սուրբ գրուածքի գիտութեան վրայ, աւելորդ չը համարեց մի փոքր աւել խօսացնել նրան. այդ պատճառով հարցրեց.

— Դուք կարդացել էք, դուք գիտէ՞ք, ինչ է գրուած սուրբ Աւետարանի մէջ:

— Հա՛ . . . հա՛ . . . հա՛ . . . հա՛ . . . , սկսեց ծիծաղել տէր Մարկոսը: — Դուք, պարոն, հարցնում էք ինձ, որպէս մի վարժատան աշակերտի:

— Այո՛, հարցնում եմ. ի՞նչ է գրուած սուրբ Աւետարանի մէջ:

— Սուրբ Աւետարանի՞ մէջ — անթիւ եւ անհամար բաներ: Զոր օրինակ. Քրիստոսի կեանքի բոլոր պատմութիւնը. թէ ո՛րպէս նրան իւր երեխայութեան ժամանակ յանձնեցին հրէայ Ռաբբիի մօտ — դիր եւ գիտութիւն սորվելու, եւ նա, առանց այլ եւ բնը դաս առնելու՝ սկսեց կարդալ Թովրաթը: Այնուհետեւ, ո՛րպէս նա աշակերտ եղաւ մի հիւսան մօտ, եւ իւր վարպետի պատուէրին հակառակ՝ երեք կտոր կտրեց գերանը, որ պիտի երկու կտոր կտրէր, եւ թէ՝ ո՛րպէս զարմացաւ վարպետը, տեսնելով, որ գերանի երեք մասի ամէն մէկ կտորը նոյն չափը ունէր, որքան պէտք է ունենար գերանի կէսը: Եւ այնուհետեւ, ո՛րպէս նա աշակերտ եղաւ մի ներկարարի

մօտ եւ այնտեղ նոյնպէս ցոյց տուեց իւր հրաշքը — մի կարասի մէջից, որ կապոյտ էր ներկուած՝ դուրս բերելով անթիւ եւ անհամար գոյներով կտաւներ . . . : Ու թէ, ինչպէս նա ազատեց լճակում խեղդուող հեթանոս երեխայքը . . . :

Պարոն Մելիքզադէն նկատելով, որ տէր Մարկոսը իւր պատմութեանը վերջ չէ տալու, կտրեց նրա խօսքը, ասելով.

— Ներեւի դուք չէք հասկանում սուրբ Աւետարանը, որովհետեւ այդպիսի առասպելներ նրա մէջ գրուած չեն:

— Ապա "Մանուկ Աւետարանը„, հարցրեց քահանան:

— "Մանուկ Աւետարանը„ աւանդութիւնների լոկ ժողովածու է:

Տէր Մարկոսը, լսելով նրա կոշտ պատասխանները, չափազանց վշտացաւ եւ կամենալով պապանձեցնել նրան, մտածեց առաջարկել մի այնպիսի հարց, որին չը կարողանար պատասխանել նա:

— Դուք, որ այդպէս մեծ մեծ խօսում էք, պատասխանեցէք, եթէ գիտէք — ինչո՞ւ համար Քրիստոս աշխարհ եկաւ:

Պարոն Մելիքզադէն ակամայ ժպտեց:

— Քրիստոս իւր կամքով աշխարհ չեկաւ, որ հարկ լինէր քննել նրա նպատակը: Նոյնպէս, եթէ նա իւր կեանքի ասպարիզում ընտրել էր առաւել ուղիղ եւ ազնիւ պարտք — բարեկարգել եւ վերանորոգել աւերուած մարդկութիւնը — նրա հոգու մի այդպիսի ձգտումը, չենք կարող համարել մի գերբնական եւ նախասահմանեալ բան — այլ, բարի եւ խելացի մարդու գործ:

Digitized by Google

Ծէր Մարկոսը, հասկնալով իւր խօսակցի ասածը, առաջ տարաւ.

— Ձեր խօսքերը այնպէս մութ են, որպէս դրսում խաւար գիշերը: Բայց եթէ դուք կը խոստովանէք ձեր տգիտութիւնը սուրբ գրոց մէջ, ես կը պատմեմ, թէ ինչ պատճառով Քրիստոս աշխարհ եկաւ:

— Ի հարկէ, որպէս կարող է մի աշխարհական մարդ ձեր չափ տգիտութիւն ունենալ...: Կատակով ասաց պարոն Մելիքզադէն:

Ծէր Մարկոսը, իւր լսածը ուղիղ համարելով, ասաց.

— Քրիստոս աշխարհ եկաւ Ադամի սատանային տուած "ձեռագիրն„ ջնջելու համար:

— Ի՞նչ ձեռագիր էր այդ, հարցրեց նա ծիծաղելով:

— Սատանան, օձի կերպարանքով դրախտն մտնելով, խաբեց նախաստեղծ մարդիկը, նրանց ուտեցնելով թզենու արգելուած ծառի պտղից: Աստուած անիծեց Ադամին եւ Նւային, եւ արտաքսեց դրախտից այն ժամուն, երբ դրսում մութ էր: Նրանք, դրախտի մէջ միշտ լուսոյ մէջ բնակուած լինելով՝ շատ տխրեցան խաւարի համար: Սատանան, գիտնալով, որ լուսաբացին հազիւ մէկ ժամ էր մնում՝ մօտեցաւ նրանց, ասաց, թէ ինքը կարող էր նրանց համար լոյս բերել: Նախաճնողքը ուրախացան, աղաչեցին չար ոգուն: — "Ինձ ինչ վարձ կը տաք դրա համար,„ ասաց սատանան: — "Մենք մերկ ենք, մենք ոչինչ չունինք,„ պատասխանեցին նրանք: — "Ո՛չ, դուք ունիք մի բան, որ կարող էք տալ ինձ„ խօսեց սատանան. "խոստացէք ինձ տալ ձեր ու ձեզանից ծնուած սերունդի հոգիները„:

Ադամ ու Նւան, չը հասկանալով, թէ ինչ բան է հոգին՝ խոստացան նրան տալ: Նրանց խոստումը, վկայու-

Digitized by Google

թեան համար, գրուեցաւ մի քարեայ տախտակի վրայ, եւ այդ քարեայ տախտակը ձգուեցաւ Ծորդանան գետի մէջ։ Շատ չանցաւ, բնականապար արեւը ծագեց, որով հետեւ մօտ էր լուսաբացին։ Ահա այդ պատճառով մենք եւս մինչեւ այսօր արեւածագից մի ժամ առաջ եղած խաւարին՝ "Ընդմայ ֆո-ին„ անունն ենք տալիս։ Այդ անիծեալ ձեռագիրն մնաց Ծորդանան գետի մէջ, մինչեւ Քրիստոս աշխարհ եկաւ։ Մինչեւ այդ օրը սատանան տիրում էր մարդկանց հոգիներին, բայց երբ Քրիստոս Ծորդանան մտաւ, եւ սուրբ Յովհաննէս, քաւոր դառնալով մկրտեց նրան, այն ժամանակ նա՝ ոտքը կոխելով այն քարետախտակի վրայ՝ ջնջեց Ադամի տուած ձեռագիրը. իսկ իւր Յարութիւնից յետոյ, դժոխքն մտնելով՝ ազատեց արդար հոգիները, որոնք նոյն ձեռագրի զօրութեամբ սատանան գերի էր տարել։

— Այդ ձեր պատմածը նոյնպէս Աւետարանում գրուած է, նրա խօսքը կտրեց պարոն Մելիքզադէն։

— Ի հարկէ, օրհնած, արդեօք կայ մի բան, որ սուրբ Աւետարանում գրուած չը լինի։

— Վայ այն ազգին, վայ այն ժողովրդին՝ որ ունին ձեզ նման քահանաներ . . . , ասաց պարոն Մելիքզադէն վշտանալով։

— Այո՛, այդպէս է . . . , որովհետեւ գրուած է "մի արկանէք զմարգարիտս ձեր առաջի . . .„։ Ծէր Մարկոսը, ոչ թէ քաղաքավարութեան համար չը կամեցաւ արտասանել վերջին բառը՝ այլ մոռացաւ Աւետարանի խօսքը։

— Ասացէք "առաջի ոխոց„, կատակաբանեց պարոն Մելիքզադէն։

— Դուք արդէն իմանում էք, էլ ես ինչ ասեմ։

Digitized by Google

Պարոն Մելիքզադէն նայեց ժամացոյցին, տեսաւ գիշերից բաւական ժամանակ անցել էր։

— Որպէս ես նկատում եմ, ասաց նա — ձեր խօսակցութիւնը կ'երկարի. լաւ է, որ հանգիստ թողնէք հիւանդը. ես գնում եմ քնելու. դուք, տէր հայր, գնացէք միւս սենեակը, այնտեղ ձեզ ուղղիներ կը գտնէք։

Ռէս Վասակեանը իսկոյն որսաց յաջող միջոցը, մտածելով, թէ աւելի ձեռնտու էր իրանց խորհուրդին, երբ պարոն Մելիքզադէն գնար քնելու։ Իրանք միւս սենեակում ժամանակ անցնելով Հուրի Յան-Դայայի հետ, այնուհետեւ կարող էին գտնել հիւանդը միայնակ եւ անպաշտպան։

Երբ նրանք տեղափոխուեցան միւս սենեակը, տէր Մարկոսը, ազատուելով իւր հակառակորդի ձեռքից, եւ կամենալով աւելի ոգեւորել Հուրի Յան-Դայայի ջերմեռանդութիւնը ծուրբ Հաղորդութեան համար, ասաց.

— Դուք այժմ բաւական հասկացաք, թէ ինչ էր Քրիստոսի աշխարհ գալու խորհուրդը։ Բայց մնաց մի բան էլ ձեզ հասկացնելու, որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, իւր աշխարհ գալով եւ մարդա- կերպանալ ընդունելով, ոչ միայն ջնջեց Ադամայ ձեռագիրը եւ ազատեց մեր հոգիները սատանայի իշխանութիւնից, այլ եւ կենդանացրեց հոգիները, իւր սուրբ մարմինը եւ սուրբ արիւնը կերակուր եւ ըմպելի տալով նրանց, որ եւ մենք՝ քահանայքս, կատարում ենք սուրբ պատարագի խորհրդով, հացի եւ գինու օրհնականերով, որոնք, թէպէտ ձեր — աշխարհականներիս աչքին անտեսանելի են՝ բայց մենք՝ քահանայքս — տեսնում ենք՝ որ սկիհի մէջ ճշմարտութեամբ փոխվում են միս եւ արիւնի . . . ։

Այդ միջոցին Ռէս Վասակեանը անդադար խաչակնքում էր իւր երեսը, աղօթք կարդում, "փառք քեզ

Քրիստոս Աստուած մեր, փառք քո սքանչելիքներին,, — ասում էր նա կեղծաւորաբար։

Հուրի Յան-Դայան խնդրեց, որ աւելի պարզ կերպով մեկնաբանէ նրան սուրբ Հաղորդութեան խորհուրդը։

— Օրհնած, ինչ անհասկանալի բան կայ իմ ասածներիս մէջ։ Մարդ ասածդ բաղկանում է երկու բանից — մարմնից եւ հոգուց։ Մարմինը այն է, որ մենք տեսնում ենք. ունի ձեռք, ոտք, գլուխ եւ այլն, խօսում է, շարժվում է, գործում է, ապրում է, եւ իւր կենդանութիւնը պահպանելու համար, կարօտ է կերակուրների — հացի եւ ջրի։ Բայց հոգին՝ մի լուսեղէն էակ է, որ աւելի նմանութիւն ունի աղաւնիի, եւ դրած է մարդու սրտի մէջ՝ որպէս մէկ թռչուն վանդակի մէջ։ Ձեռքդ դիր սրտիդ վրայ, շօշափիր կուրծքդ, փսկոյն զգալու ես, թէ ւրպէս անդադար թռթռում է նա. այդ նրա հանապազօրեայ սաղմոսերգութիւնն եւ փառաբանութիւնն է Աստծուն՝ որ կատարում է ծնրադրութեամբ եւ երկրպագութեամբ։ Որպէս ասացի, մեր մարմինը կարօտ է կերակուրի. հոգին նոյնպէս այդ կարիքն ունի։ Դրա համար Տէրն մեր Յիսուս Քրիստոս սահմանեց սուրբ Հաղորդութեան խորհուրդը, իւր մարմինը կերակուր՝ եւ իւր արիւնը՝ ըմպելի բաշխելով մեր հոգիներին։ Իւրաքանչիւր տարի մի քանի անգամ սուրբ Հաղորդութիւն ընդունելը՝ բաւական է հոգին միշտ կուշտ պահելու համար։

— Ուրեմն, ով որ չընդունի սուրբ հաղորդութիւնը՝ նրա հոգին կը մեռնի, հարցրեց Հուրի Յան-Դայան։

— Ոչ միայն հոգին կը մեռնի, այլ եւ տկարանալով՝ կը մեռնի նրա մարմինը, որպէս օրինակը տեսնում էք ձեր թոռան մէջ, պատասխանեց տէր Մարկոսը։

Digitized by Google

Երկրորդ անգամն էր, որ Ռէս Վասակեանը մնալով հիւանդի մօտ, գոտւ նրան միայնակ, քնած: Իսկ պարոն Մելքզադէն հեռու, մի այլ սենեակում՝ խրոխտում էր խորին քնի մէջ:

* * *

Վաղուց արդէն աքաղաղները սկսել էին լսել:

Գիշերային լռութեան այդ պահուն, երբ բոլոր խրճիթների գերդաստանները գիշերուայ հանգիստն էին վայելում՝ Ծովասաբենց տան մէջ վառվում էր մի ճրագ: Օրիորդ Սալբին, տխուր եւ յուսահատ, միայնակ նստած էր իւր քնարանում: Նա անխորհուրդ կերպով ականջ էր դնում ժամացոյցի չըկչըկոցին, որ ահա զարկեց տասներկու:

Նրա ննջարանի դուռը ներսից կողպած էր: Բայց ոչքան մեծ եղաւ նրա զարմացքը, երբ ելւեսը թեքեց, տեսաւ դրան մօտ կանգնած մի բարձրահասակ, թխազգեստ կին: Սարսափը եւ զարհուրանքի սարսուռը ցնցեց խղճալի օրիորդի բոլոր անդամները, եւ նա զգաց մի անսովոր երկիւղ, կարծելով՝ թէ դա ղօ-յլաֆանին էր:

Մի քանի աղօթքներ կարդալով, օրիորդը զօրութիւն առաւ, եւ ժողովելով իւր ոյժը, հարցրեց. — Ո՞վ էք դուք:

Հակայամարմին ոգին շարժուեց դէպ առաջ, եւ միեւնոյն ժամանակ նրա երեսից վեր առաւ դիմակի տակից, երեւան եղաւ նրա թուխ, որպէս թէ արեւից այրուած — զարհուրելի կերպարանքը, որ լուսափայլում էր նրա ճրագի նման վառվող աչքերից:

Օրիորդ Սալբին իւր բոլոր հոգեկան կարողութեամբ դարձեալ դողդողում էր երկիւղից, կարծելով, թէ այդէն

մահը, իւր սեւ կերպարանքով՝ եկել է առնելու նրա հոգին։

— Ձգնաղագեղ օրիորդ, մի երկնչիք, խօսեց ոգին մեղմ եւ դրաւիչ ձայնով. արդարեւ, իմ արտաքին կերպարանքը զարհուրելի է, բայց, հաւատացնում եմ, որ այդ սարսափելի կերպարանքի մէջ, մի ամենաքնքոյշ սիրտ՝ ջերմ սիրով զարկում է ձեզ համար։

Օրիորդը, չը հաւատալով իւր ականջներին, պնդեց իւր սիրտը եւ միւսանգամ հարցրեց.

— Ո՞վ էք դուք։

— Ձեր ընտանեկան պատմութիւնը, ձեր Ծովասաբ նախապապի օրերից, ոչ բոլորովին ծանօթ է Թողնում մի ժամանակ ձեր տան մէջ ծառայող Խլվլկի անուն դեւիկի ցաւալի աւանդութիւնը։ Ահա կանգնած է նա ձեր առաջ, որպէս ձեզ ընորհապարտ աղախին։

— Ի՞նչ շնորհ եմ ցոյց տուել ես քեզ, երբ քո սարսափելի երեսը առաջին անգամն եմ տեսնում։

— Դուք այրեցիք իմ մօր ձեռքով ձեր տան մէջ Թողած իմ գլխի մազերից մի հիւս՝ որի չարաչար գործադրութեամբ Ծովասաբենք միշտ չարչարել են ինձ, բայց դուք ազատեցիք Խլվլկին իւր ծառայութիւնից, եւ այրելով այն խորհրդական մազերը՝ ջնջեցիք նրանց Թիլիսմը։

Օրիորդը իսկոյն մտաբերեց Խլվլկի մասին առասպելական պատմութիւնը, եւ Թէ որպէս ինքը այրել էր նրա մազերը, որ իւր մայրը գործ էր ածում զանազան կախարդութեանց մէջ։

— Այժմ ինչ ես դու կամենում, հարցրեց նա։

— Ես յայտնուեցայ յայտնելու, Թէ դեւերը նոյնպէս ունին բարի սիրտ, եւ Թէ՝ նրանք կարող են վարձատրել իրանց բարերարներին բարի գործով։ Բայց լսիր,

Digitized by Google

չքնաղագեղ օրիորդ. քո թշնամիները անթիւ են. նրանք ամէն ժամ եւ ամէն րոպէ զանազան որոգայթներ են լարում, քեզ որսալու համար: Նրանք հսկում են քո սիրած նշանածի կեանքի վրայ. այս րոպէիս մի սեւսիրտ քահանայ, թոյն պատրաստած հաղորդութեան սկիհի մէջ՝ պիտի մատուցանէ քո Ռուստամին: Դուք իմացում տուէք պարոն Մելիքզադէին՝ որ արգիլէ սպանութեան գործողութիւնը: Այդ լուրը ձեզ տալուց յետոյ, յայտնում եմ, որ, որպէս մինչեւ այսօր, այսուհետեւ նոյնպէս՝ Ղվլխկը միշտ պատրաստ է օգնել ձեզ փորձանքի ժամերին: Նա թողնում է ձեզ իւր մազերից մի պուրակ, որը՝ երբ երեք անգամ շարժէք դէպ արեւմուտք, իսկոյն Ղվլխկը երեւան կը գայ:

Այդ խօսքերի հետ նա վերցրեց օրիորդ Սալբիի պչրանքի սեղանի վրայից մկրատը, կտրեց իւր գլխի սեւ հիւսերից մինը եւ դրաւ սեղանի վրայ:

Ղվլխկը անհետացաւ:

Օրիորդ Սալբին, իւր տեսիլքը համարելով երեւակայական ցնորք, եւ ամենեւին չը հաւատալով իւր լսածներին, ծունկ իջաւ յատակի վրայ, եւ սկսեց ջերմեռանդութեամբ աղօթել:

Միեւնոյն րոպէին՝ մի ձեռք խթեց պարոն Մելիքզադէի կողքը: Նա աչքերը բաց արեց, իւր մահճի մօտ տեսաւ օրիորդ Նազանին, օրիորդ Սալբիի աղախինը:

— Վա՛յ կաց, ասաց նա — եւ հալածիր այդ չարագործները, որ հաղորդութեան մէջ թոյն են կամենում մատուցանել Ռուստամին:

Դա Ղվլխկն էր՝ օրիորդ Նազանու կերպարանք առած . . . :

Digitized by Google

ԽԱՉԱԳՈՂԸ

Ռէս Վասակեանի մինչ այժմ կատարած չարագործութիւնները անգամ բաւական կարող էին լինել բնութիւնը նրա նկարագիրը։ Մեզ ներելի կը լինի մի լրացուցիչ տեղեկութիւն եւս տալ նրա պատանեկական եւ երիտասարդական հասակում վարած կեանքի եւ արարքների մասին։

Ռէսը, իւր տանեւուրթ տարեկան հասակում, մի չնչին պատճառով՝ ծաղկաւանում մի մարդ սպանած լինելու համար՝ այլ եւս չը կարողացաւ գլուխ պահել այնտեղ, փախստական եղած, հեռացաւ դէպ օտար աշխարհները։ Թափառելով Եւրոպայի քրիստոնեայ տէրութիւնների մէջ, նա երկար ժամանակ ապրում էր մուրացկանութեամբ։ Բայց երբ մի փոքր ծանօթացել էր այդ ազգերի բնաւորութիւնների հետ՝ մի այլ դժնդակ միտք յղացաւ նրա մէջ։ Շղեռնական գաղափարը շուտով կերպարանագործուեցաւ նրա մտքի մէջ, եւ դրա իրագործման համար՝ նա անցաւ դէպ Ռուսաստան։ Այնտեղ նա գտաւ իւր երկրացի մի քանի շրջմոլիկ ծանօթներ, որոնք նոյնպէս ապրում էին մուրացկանութեամբ, եւ գրաւելով նրանց կամքը՝ իսկոյն որսաց դէպ իւր կողմը։

— Հունձքի ժամանակ է, եղբայրներ, ասում է նա իւր ընկերներին. — նայելով այս ազգի յիմարութեանը մեր գործը լաւ առաջ կը գնայ այս երկրում։

Digitized by Google

Ի՞նչ գործ էր այդ։

Ռէսը՝ իւր ընկերների հետ իսկոյն կազմեց աւազակների մի զարհուրելի խումբ, զինուորուած խաթերայութեան բոլոր հնարքներով, որոնց նպատակն էր՝ կողոպտել, յափշտակել, սպանել։

Նրանք հեռացան Ռուսաստանի այն գաւառները, որոնք աւելի հեռու էին մայրաքաղաքներից։ Բայց այնտեղ ճանաչելով ֆաժինեցի (ռամիկ) մոլեռանդութիւնը եւ նանլուհաւատութիւնը՝ նրանք իրանց գործին մի այլ կերպարանք տուեցին։ — Երուսաղէմից եկած յոյն աբեղաների անունով, սեւ մազից կոշտ հագուստներ հագած, նրանք սկսեցին մանգալ Ռուսների տները, եւ պատմելով Երուսաղէմի աղքատութիւնը, եւ նրա թշուառութիւնը թուրքերի ձեռքում, շարժում էին ֆանատիկոսների կարեկցութիւնը դէպի սուրբ վանքը՝ եւ աննկարագրելի խաթերայութիւններով — փող որսում։ Նրանք իրանց հետ շրջնցնում էին խաչեր, սրբոց մասունքներ եւ փոքրիկ պատկերներ . . . ։ Կարդում էին աւետարան եւ այլ հոգեւոր երգեր — իրանց հնարած լեզուով, եւ ծանր գներով վաճառում էին՝ իբրեւ սուրբ վանքի յիշատակներ, ձիթապտղի կորիզներից յօրինած տէրողորմեաներ, սադափեայ փոքրիկ խաչեր, որ իրանք էին շինում գիշերներով։

Եւ այդպէս, շուտով կազմուեցաւ աբեղայական մի կոչգ՝ կերպարանագործուած զարհուրելի խաթերայութեամբ։

Եթէ աշխարհիս մէջ անիրաւութիւնները եւ չարագործութիւնները արժան են որեւէ գովասանութեան՝ Ռէս Վասակեանը միայն իրաւունք ունի վայելելու այն սեւ փառքը, պարծենալով այդ կարգի հիմնադրի անունով։ Պարծա՛նք եւ հայելին. չէ՞ որ մենք էլ ենք ունեցել մեր . . . ։

Digitized by Google

Ասաբեանների կոչը՝ գնալով ընդարձակվում էր, եւ նրանք օր ըստ օրէ նոր անդամներ էին գտնում։ Նրանք տարածուեցան երկրագնդի այն անկիւնները, ուր աւելի տիրում էր մտաւոր խաւարը, ուր քրիստոնէութիւնը գտանվում էր մոռայլոտ հեթանոսութեան մէջ։

Հնարել էին նշանախօսութիւններ զանազան տեսակի։ "Գ-ելէ խոտ„ նրանց բառարանում նշանակում էր միս։ Շրջ կամենային հասկացնել թէ տանուտէրը չիմար մարդ է, կարելի է կողոպտել, նրանք՝ իրանց սուտ աւետարանը կարդալուց յետոյ, շատ անգամ երգում էին այսպիսի եւ սրա նման շարականներ.

"Ալէլուիա, ալէլուիա,
Վերնատունը դարտակ է,
Էշը մեզ հպատակ է,
Բարձիր, քանի ատակ է,
Երուսաղէմայ յիշատակ է,,։

Ինակ երբ կամէին յայտնել, թէ բանը անյաջող դրութեան մէջն է, կամ՝ իրանցից հեռու չէ վտանգը, պէտք է փախչել՝ երգում էին.

"Ալէլուիա, ալէլուիա,
Մեր տղայ, շունը հաջում է,
կծոտը մեզ ճանաչում է,
Աչքերդ շուտ թաց արա,
գնա դուռը բաց արա,։

Շատ անգամ երգում էին այնպիսի ջանգուլուՓեր, որ որեւէ իմաստ էին յայտնում։ Բայց նրանք աւելի յաճախ, իրանց միտքը յայտնում էին նշանախօսութեամբ, առանց որեւէ բարբառի — ձեռքով, ոտքով, աչքով,

Digitized by Google

յօնքով եւ այլն։ Ուրանք հնարեցին առանձին գիր, կարդալ եւ լեզու։

Ռուսաստանի անկարգ ոստիկանութիւնը, իւր թոյլ հետազօտութիւններով՝ երբեք չը կարողացաւ այդ չարագործներից մինն անգամ բռնել։ Շրջ մի տեղ նրանց խաբեբայութիւնը յայտնվում էր, եւ բռնուելու կասկած կար՝ նրանք շուտով փոխում էին իրանց եկեղեցական սեւ հագուստը. Աւետարան, խաչ, պատկեր եւ մասունքները պարկ էին դրվում, եւ այնուհետեւ, մի փոքրիկ արկղ շալակած՝ նրանք դռնից դուռ ման էին գալիս, եւ թափառաշրջիկ ջհուդների անուններով, վաճառում էին երեխաների խաղալիկներ, եւ զանազան մանրուք, որ միշտ իրանց մօտ պատրաստ ունէին։ Շատ անգամ եւս ձեւանում էին իբր օտարերկրեայ բժիշկներ, եւ վաճառում էին անօգուտ փոշիներ։ Իսկ եթէ այդ եւս չէր յաջողում, նրանք ընդունում էին թափառական բօշաների կերպարանք. գուշակութիւններ էին կատարում, հմայում էին, եւ զանազան նուագարաններ ածելով՝ պար էին գալիս եւ դրամ ժողովում։

Դրանց չը բռնուելու գաղտնիքներից մինը եւս արծաթի շնորհիւ Ռուսաց ոստիկաններից ազատուելու դիւրութիւնն էր։ Հակառակ դէպքում կոպէկ անդամները պատրաստ ունէին տարբեր տէրութիւնների, զանազան գործերով եւ անուններով անցագրեր, ուր եւ որը հարկաւոր էր լինում՝ այն էին ցոյց տալիս։

Եւ այդպիսով դրանք շահեցին մի քանի կեղտոտ անուններ. որպէս — "պոռ-ա- խեղդողնեբ,, — "քարշ-գողնեբ,, — "էշ նեբկողնեբ,, եւ այլն։

Այդ անուններըը առանց պատճառի չէին ընդունել նրանք։

Digitized by Google

"պատա՜ա խեղդող„ կոչվում էին նրա համար, որ շատ անգամ մի ջերմեռանդ եւ երկիւղած պառաւ կին, կամ աղեւոր մարդ, հրաւիրում է "Երուսաղէմի աբեղաներին„ իւր տունը — պատուաստիրելու համար: Իսկ գիշերը, երախտագէտ "աբեղաները„ խեղդում են հիւրընկալը եւ կողոպտում նրա տունը:

"խալտիպող„ կոչվում էին նրա համար, որ շատ անգամ նրանք իրանց ընկերներից մինը մեռած ձեւացնելով՝ դագաղի մէջ դնում են եկեղեցում: Մեռելը, գիշերուայ ընթացքում յարութիւն առնելով՝ գողանում է եկեղեցու թանկագին անօթները, արծաթի խաչերը եւ այլն: Պատահել են այնպիսի դէպքեր, որ եկեղեցու խաչերը իրանց դագաղի մէջ առած՝ միասին մտնում են գերեզման, այնուհետեւ գերեզմանից յարութիւն է առնում առաջակը իւր կողոպուտներով: Հրաշալի գողութիւն...:

"Ինչ նեղկող„ կոչվում էին նրա համար, որ շատ անգամ կոպեկ անդամները, գողանալով սպիտակ գոյնով աւանակներ եւ ձիեր, եւ մի այլ գոյնի ներկելով՝ վաճառատեղի էին դուրս բերում եւ ծախում, այնպէս, որ եթէ տէրերն անգամ իրանք եւս դնելու լինէին՝ դժուարութեամբ կարող էին ճանաչել իրանց գրաստները:

Վասակեանը Ռուսաստանում գտաւ առեւտրի մի նոր եղանակ: այսինքն, վաճառել իւր կրօնը եւ ընդունել յունա-սլաւօնական դաւանութիւն: Ընթրեմն՝ հայ եմ, ասելով, երբեմն՝ հրէայ, եւ երբեմն՝ թուրք եմ ասելով, խարում էր նա ռուսաց Տանաֆանէրէն (կուսակրօն) եւ մեծ արծաթ ստանալով՝ պարբերաբար ընդունում էր նրանց կրօնը: Այդ տեսակ կրօնավաճառութիւնը շարունակել է նա ամէն տեղ, ուր չէին ճանաչում նրան: Բայց այն միակ կարօտը մնաց Վասակեանի սրտում, եւ կը մնայ մինչեւ

նրա մահը՝ որ, չը նայելով նա Ռուսաստանում քան անգամ ուուս էր դարձել, քանի անգամ կաթոլիկ, քանի անգամ պրոտէստանտ — բայց Թուրքիայում չը յայտնեց երկու անգամ փող ստանալ եւ ընդունել իսլամը. որովհետեւ, երկրորդ անգամ, երբ կամեցան թլփատել նրան՝ տեսան, արդէն կտրած էր . . . : Վասակեանը երկար հաւատացնել էր ջանում թէ ինքը հրէայ է, եւ երեխայութիւնից ունի թլփատութիւն, բայց քանի որ նա առաջուց սխալուել էր ասելով, թէ հայ է — նրան չը հաւատացին:

Չը նայելով Վասակեանի ստոնայական խորամանկութեանը, նրա անսանձ յանդգնութեանը եւ ճարտարապետ հնարագիտութիւններին, նա մի անգամ բռնուեց, երբ իւր ընկերների հետ, նատած, կեղծ թղթադրամներ էին շինում: Դրանով նա ոչ միայն կորցրեց իւր ունեցած բոլոր հարստութիւնը, այլ եւ աքսորուեցաւ դէպի Սիբիրիայի հեռաւոր գաւառները:

Աքսորանքի մէջ նա երկար չը մնաց. շուտով փախչելու հնար գտաւ: Մտնելով Չինաստանի փակեալ կայսրութեան երկիրը՝ մի քանի տարի այնտեղ թափառելուց յետոյ, նա անցաւ Հնդկաստան: Այստեղ, նրա ժիր եւ գործունեայ հանճարը դարձեալ դատարկ չը մնաց: Գիտնալով մի քանի լեզու, նա շուտով պաշտօն ստացաւ Հնդկաց կուսապետ Թագաւորի մօտ: Ցայտնի չէ, ընդունե՞ց արդեօք նա բրահմինների կրօնը, թէ ոչ, բայց տարակոյս չունինք, որ նա իւր նիւթական օգտի համար պատրաստ էր ընդունել բոլոր կրօնները: Ցայտնի է միայն, որ կարճ ժամանակում, նա ժողովեց բաւական արծաթ: Այնուհետեւ, ասես թէ յոգնած իւր գործունէութիւնից, նա մտածեց դառնալ իւր հայրենիքը եւ հանգիստ անել:

Digitized by Google

Հնդկաստանից անցաւ Բաղդատ, այնտեղից Երուսաղէմ։ Կամենալով մոռացութեան տալ իւր գլխից անցածը, եւ ընդունել մի ուխտի զգեստ՝ Երուսաղէմում, իւր ձեռքը եւ բազուկները դրոշմեց Նահապետ-Ընեան նիւթով, եւ, մի նոր մարդ դարձած, իբրեւ կատարեալ Հայ-Կաթոլիկեայ, մի օր յայտնուեց Ծաղկաւանում, իւր հետ բերելով իւր մահուան պատանը։ Երկար տարիներ պանդխտութեան մէջ թափառելով՝ նա վերադարձաւ իւր հայրենիքը՝ արդէն հասակն առած։ Իւր ազգակիցներից նա կենդանի գտաւ միայն իւր քոյրը — միականի պառաւ Դօզէն, որը, իւր ամենազգուելի տգեղութեան համար, չը կարողացաւ ոչ մինի կին դառնալ։

Վասակեանը արդէն մտածում էր "պնա-պո-ել„ եւ հայերի ասութեան ոճով՝ ալեսրճ ծպնել։ Շուտով, իւր արծաթի շնորհիւ նա յաջողեց իրան կին բերել մի պարկեշտ եւ առաքինի մանկահասակ այրի, գեղեցիկ կերպարանքով։ Բայց ափսոս, որ "Մեղրը շան տիկի մէջ„ էր։ Անբախտ կինը, ոչ մի մխիթարութիւն չը գտնելով իւր մոլի եւ չարաբարոյ ամուսնուց, օրէցօր մաշուելով նրա անտանելի կենակցութիւնից, բարակացաւ ստացաւ, եւ ապա անգութ մահը հանգիստ տուեց խղճալուն սառը հողի տակ։

"Քամու բերածը՝ քամին կը տանէ„, ասում է հայկական առածը։ Երկար չը դիմացան Վասակեանի փայլուն ոսկիները եւ պսպղուն գոհարները, որ նա բերել էր Հնդկաստանից. բոլորը ճարակ դարձան նրա շռայլութեանը, եւ մի քանի տարուց յետոյ, նա նոյնպէս աղքատ էր, որպէս առաջ։ Նա մտաբերեց Եւրոպան . . . կոթեը . . . աբեղայութիւնը . . . աւազակութիւնը . . . , եւ կրկին կամեցաւ հագնել պանդխտութեան տրեխները՝ բայց արդէն

Digitized by Google

ուշ էր, նրա հասակը չէր նեղում այդ, նա արդէն անցել էր յիսունից։

Վերջապէս նա տաղտկանում է անգործութիւնից եւ աղքատութեան կարիքը ստիպում է նրան գտնել մի պարապմունք։ Նա, իւր ոսկիների ճեացորդը գործ դնելով, կարողացաւ կաշառել Զարեհաւանի տիրող խանը եւ ծաղկաւանի Մելիքը, որով ստացաւ իւր հայրենի գիւղի մէջ Ռէսի կամ Րայխի (այժմիքն տանուտէրի) պաշտօն։

Ռէսը դարձեալ համարում էր իրան հասած ծայրացեալ երջանկութեան։ Արդարեւ, ոդքան բախտաւորութիւն է չարագործ եւ կաշառասէր մարդկանց համար տանուտէր լինելը։ Ամէն մարդ նրան խոնարհվում է, ամէն մարդ նրան յարգում է, բոլորը նրանից վախում են, դողում են . . . ։ Ո՛ր տան մէջ խաշ կամ հալբասյ են եփել՝ ոմ կայտղ է առանց տանուտէրի մի պատառ բերանը տանել. ո՛րտեղ կնունքաճաշ են տալիս կամ ժամուհաց, եւ կամ — հալասանիք է՝ տանուտէրն է նստում աեղաննների պատուաւոր գլխում, լիքը բաժակները ստանում է տանուտէրը, գէր ու պարարտ բաժինները ուտում է — տանուտէրը։ Ամէն հանդիսի, ամէն մեջլիսի, ամէն ժողովքի մէջ՝ նա պատուաւոր բայձի տեղ ունի, եւ ծաղկաւանում ամենաճանրակշռից մինչեւ ամենանչնչին գործերը՝ կատարվում են տանուտէրի խորհրդով։

Ռէսը իւր պաշտօնով լինելով Մելիքի որպէս թէ օգնականը եւ նրա ստորադրեալը, նպատակ ունէր միշտ ծառայել իւր եւ նրա օգուտի համար։ Սրանք, երկուսը միասին պէտք էր իրանց որսացած կաշառքներից մի մաս հանէին Զարեհաւանի տէր խանին, որ կարողանային իրանց աւազակութիւնները առանց կասկածի եւ աներկիւղ առաջ տանել։ Դրա համար խղճալի գիւղացիք միշտ ստիպուած

են հաշտուել եւ բարեկամանալ Ռէսի հետ, որովհետեւ, վայ այն մարգու սեւ օրին, որին մի փոքր թեք աչքով էր նայում Ռէսը։

Տանուտէրին յայտում են աւելի անտերունչ եւ այրի կանայք, եւ կամ այնպիսիները, որոնց ամուսինները գնացել էին օտար աշխարհ պանդխտութեան։ Այսպիսի կանայք աւելի են կարօտ նրա կարեկցութեան, եւ առաւել չափէս են ենթարկուած նրա կամքին... ոչ միայն նրա համար, որ տանուտէրը պաշտպան էր նրանց խանի հարկերի ծանրութիւնից, այլ՝ որպէս զի պատկանածից աւել հարկ չը դնէր նրանց վրայ։

Ահա այդ հին գայլը, այդ զարհուրելի աւազակը, որ իւր սատանայական խորամանկութեամբ ամբողջ մարդկութիւնը համարում էր մի գործիք իւր օգտին ծառայեցնելու համար, այժմ, յուսահատուած, անճարացած, տխուր ու տրտում սրտով, միայնակ, նստած իւր տան մէջ, յուզեղում էր իւր սրտի մէջ այսպիսի մտածումներ.

"Այդ փորձը նոյնպէս անյաջող անցաւ..., ասում էր նա դիւական ափսոսանքով։ — Հոգեւոր բժիշկն եւս ոչինչ չը կարողացաւ անել... գուժաբեր ժամանակը հասնում է... Այո, անցաւ մեծ պասը, եւ այսօր Զատիկ է։ Ես նախանձով տեսնում եմ մարդկանց երթեւեկութիւնը միմեանց տները, եւ նրանց՝ ուրախ սրտով միմեանց շնորհաւորելը Տիրոջ յարութիւնը։ Բայց իմ դռները այսօր փակ են իմ բարեկամների առաջ, որովհետեւ իմ մէջ սիրտ չէ՛ մնացել — ուրախանալու...։

"Ես խիստ թանգ գնով գնեցի բարեկենդանից մինչեւ Զատիկ եօթն շաբաթը՝ այն յիմար վարդապետից... բայց, ինչ արինք մենք, ինչ գործ կատարեցինք — իսկապէս

Digitized by Google

— ոչինչ . . . : Մեզ մնում է քառասուն օր եւս, երբ, "դինի յիշնանց,, մեր յիմար պապերի աւանդութեան համաձայն — հարսանիք անելը թոյլատրվում է: Ա՛խ, եթէ այս քառասուն օրերը եւս անցնենք առանց որեւիցէ գործ կատարած լինելու, առանց պսակելու մեր նպատակը, ուֆ, այդ մա՛հ է, մա՛հ . . . : Ո՛հ, հեռացէք, գիշերապէմ մտքեր . . . : Ես մաղեցի բոլոր աշխարհը իմ օգուտը գտնելու համար, բեւեռից բեւեռ էի ես լարում իմ որսողութեան ուռկանները, բայց երբեք, եւ ո՛չ մի ժամանակ ես չը մնացի անձար, ամէն ինչ հնազանդում էր դառնում ինձ համար, ո՛հ, ասես թէ մի գերբնական զօրութեամբ՝ բոլոր բնութիւնը հնազանդում էր ինձ . . . : Բայց այժմ մնացել եմ անձար մի հպարտ եւ հաստատամիտ օրիորդի եւ մի յանդուգն, անագորոյն տղամարդի ձեռքում:

"Սոլոմոն-Բէկը յիմար է, որպէս գառնուկ: Նրանից կարելի է շորթել, ոլքան կամենաս . . . : Բայց վա՛յ թէ ես չը կարողանամ որսալ նրա սրտի սիրուհին. այն ժամանակ, ո՛հ, կորած են իմ բոլոր յոյսերը . . .,, :

Ռէս Վասակեանը երկար մտածելուց յետոյ կանչեց իւր մօտ իւր քոյրը:

— Քոյրիկ, ասաց նա կոտրած սրտով . քեզ յայտնի է այն նպատակը, որի համար քեզ յանձնարարեցի ծառայել պարոն Աշխարունու աղջկանց վարժարանում. բայց դու, մինչեւ այսօր չը բերիր մեզ մի յուսալի լուր օրիորդ Սալբիի մասին:

— Ա՛խ, եղբա՛յր, պատասխանեց հառաչանօք նրա քոյրը — օրիորդ Սալբին, ասես թէ, դեւերից եօթն օր առաջ ծնուած լինի, եւ սատանաների ծիծ է ծծել . . . դու կարծում ես, թէ նրա հետ համարձակ կարելի՞ է

խօսել. ոչ... արծուի նման ծուատուամ է եւ օձի նման թոյն է թափում...։

— Ուրեմն, ինչ ես կարծում դու, չէ՞ կարելի...։

Ռէսի ձայնը խեղդուեցաւ սրտի վրդովմունքից։ Նրա քոյրը հասկանալով, թէ իւր եղբայրը ինչ էր կամենում ասել՝ պատասխանեց.

— Ես ամենեւին յոյս չունիմ, որ այդ ապականչէ պօ—ղը համոզուի սիրել Սոլոմոն-Բէկին, քանի կենդանի է նրա նշանածը — պարոն Ռուստամը։

"Արդարեւ, նրա մայրը, մայրը կը պահէ մեր նպատակը... ա՛խ, իսկ այդ ցանկալի մայրը չէ՛ յաջողում մեզ...„։ Մտածեց նա դիւական ախորժանքով։

Քրոջ խօսքերից աւելի յուսահատուած, Ռէս Վասակեանը վեր կացաւ, հագուստը փոխեց, եւ գնաց Աւազակենց տունը Զատիկ շնորհաւորելու համար։

Սոլոմոն-Բէկը, այն օր հիւանդ ձեւանալով, չէր ընդունում աւելորդ այցելուները, բայց լսելով Ռէսի գալուստը, հրամայեց, որ իւր մօտ կանչեն։

— "Շնորհաւոր Զատիկ, Քրիստոս յարեա՛ ի մեռելոց„, ասաց Վասակեանը բռնելով նրա ձեռքը։

— Սէ՛ր եւ դժբա՛խտ Զատիկ, "զի Ռուստամ յարեաւ ի մեռելոց...„, պատասխանեց տրտմութեամբ Մելքի որդին։

Եւ իսկապէս, պարոն Ռուստամը միջինքից յետոյ, բոլորովին առողջանալով, վեր էր կացել իւր մահճից, եւ օրէցօր կազդուրուելով նրա կազմուածքը՝ խափանում էր նրանց յոյսը իւր մահուան վերաբերեալ։

Ծառաները իմացում տուին, թէ պարոն Ալամ եւ տիկին Սալաթին Աշխարունիները կամենում էին ներկայանալ։ Երանք իրանց խօսքը կիսատ թողին, եւ ընդու-

Digitized by Google

նելով մի փոքր ուրախ եւ զուարթ կերպարանք, պատրաստուեցան ընդունել պատուելի այցելուները։

Սովորական շնորհաւորութիւնից յետոյ, պարոն Արամը եւ նրա կինը, քնքշութեամբ համբուրելով Սոլոմոն-Բէկի եւ Ռէսի շրթունքը, քաղաքավարի կերպով նստեցին նրանց մօտ։

Ծաղկաւանում, մի ասիական կեղտոտ սովորութեան համաձայն, օրէնք չէր կանանց՝ մարդկանց այցելութեան գնալ, եւ նրանց հետ շրթունք շրթունքի հպեցնել։ Այդ պատճառով, տիկին Սալաթինի այսօրինակ համարձակութիւնը, եւ նրա տարապայման ընթացքը՝ խիստ խոտելի էր թվում ոամիկ ծաղկաւանցոց աչքին, ուր ճնաց, որ այդ նրանք համարում էին մի արտաքոյ կարգի լրութիւն։

Ռէս Վասակեանը նկատեց, որ Սոլոմոն-Բէկը չէր մտածում զբաղեցնել հիւրերին խօսակցութեամբ. ուր ճնաց, որ նա խօսել անգամ չը գիտէր։ Բայց քանի որ ինքը ձիւլք ունէր կոտրատել ամէն տեսակ նիւթերի մասին, քաշկռտուիլ ուսումնական խնդիրների մէջ, եւ երբեմն, որպէս հմուտ աստուածաբան՝ վերաբանալ մտքով դէպ վերացական գաղափարները — Ռէս Վասակեանը, պարոն Աշխարհունուն հաճոյանալու համար, ասաց.

— Թէպէտ Աւետարանի ճշմարիտ վարդապետութեան համաձայն, մեզ, քրիստոնեաներիս համար չը կայ — որոշուած տօներ, կիւրակէներ, ամամուտներ եւ այլ հանդիսաւոր օրեր, թէպէտ մեզ, քրիստոնեաներիս չէ թոյլատրուած աւետարանական կրօնի մէջ պաշտել հեթանոսական սովորութիւնները, բայց տօներին յարգ տալու սովորութիւնը ժամանակի խորին հնութիւնից, աւանդօրէն գալով՝ հասել է մինչեւ մեր օրերը, եւ մեր կեանքում, անուելով մեր շունչի, մեր արիւնի հետ, եւ միանալով

մեր հանճարի, մեր մտքի ու ամբողջ մեր իմացականութեան հետ — դարձել են, համարեա, մեր հոգու մի մասը, եւ չեն բաժանվում մեզանից: Մտածեցէք, արժանապատիւ պարոններ, թէ ոլքան անհեռատրելի է նախապաշարմունքը եւ կոյր հնամոլութիւնը . . . : Այսօր իմաստունը եւ յիմարը, լուսաւորեալը եւ խաւարամիտը, աղքատ թէ հարուստ՝ բոլորը ուրախանում են Ջատկի տօնախմբութեամբ . . . :

Ռէսի խօսքերի հեղեղը մինչ այն աստիճան պաշարեց պարոն Աշխարունուն, որ նա չը կարողացաւ ոչինչ պատասխանել: Եւ Ռէսը, առանց պատասխանի սպասելու — առաջ տարաւ.

— Քանի՛ աւետարանի ճշմարիտ լոյսը չէ ծագում մեր ազգի վրայ, քանի՛ նա հայերի համար դրուած է գրուանի տակ, քանի՛ ճշգրիտ ուսում եւ գիտութիւնը անմերձենալի են հասարակ ժողովրդին, եւ քանի՛ նրանք՝ թողնելով սուրբ գրքերի ճշմարտաքարող վարդապետութիւնը կը հետեւեն հայրապետական մոլորութիւններին — ճշմարիտ եմ ասում, այնքան ժամանակ կ'ապրեն նրանք իբրեւ լոկ նեւթական մարմիններ, զուրկ մտրդկութեան հոգեւոր մասնից:

Նա կտրեց իւր ուսած եւ սերտած ֆրազները, որոնցով, միեւնոյն բանը պատաբերում էր այլեւայլ դարձուածքներով, եւ աչքով արեց Սոլոմոն-Բէկին, որ մի բան ևս նա՛ խօսէ:

Պատանի Աւազակեանցը, ուշիմ աշակերտի նման, իսկոյն հասկացաւ իւր վարժապետի միտքը, եւ կարդաց իւր սերտած դասերից մինը.

— Ես շատ լաւ ունիմ, որ մեր սիրելի հայրենակիցները պատուելի Աշխարունիների շնորհիւ, միշտ զուրկ

Digitized by Google

չեն մնալու Աւետարանի լոյսից, եւ առաւելապէս յուսով եմ, որ ոչ միայն Ծաղկաւանը կը փառաւորուի նոր կրօնի լուսով, այլ բոլոր Պարսկաստանի մէջ պայծառապէս կը շողշողայ քրիստոնէական հաւատքի դրօշակը:

Թէպէտ պարոն Աշխարունին իւր մտքի մէջ ուրախանում էր կեղծաւորների մի փոքր առողջ դատողութեան վրայ, բայց նրան դիւր չը գալով Սոլոմոն-Բէկի առ երեսս գովասանութիւնը՝ կտրեց նրա խօսքը, ասելով.

— Մենք ոչինչ ենք, մենք եւս Քրիստոսի մեղաւոր պաշտօնեաներ ենք, Տէրը ինքը կ'օգնէ մեզ՝ ձեզանով, միւսներին հոգ տանել նրա եկեղեցու հաստատութեան համար:

Լսելով նրա ցամաք պատասխանը, Ռէս Վասակեանը խօսքը փոխեց.

— Բայց, ներողութիւն, պարոն, բիւր անգամ ներողութիւն. մենք զբաղելով այդ խօսակցութիւններով, որ այնքան մօտ են մեր սրտին, ալդէն մոռացանք՝ մի բանով պատուասիրել ձեզ, եւ ձեզ, պատուելի տիկին, գարձաւ նա դէպ տիկին Սալամէինը: — Հրամայեցէք խնդրեմ, ճաշակել մի փոքր այդ բիբլիական խորոված գառնից, կամ մի պատառ այդ իսրայելեան պաղպային. չէ որ Քրիստոս ինքը, իրրեւ մարդ, ենթարկուեցաւ հնամոլութեան ազդեցութեանը... բայց խնդրեմ ներել իմ այդ կատակը: Կամէք մի բաժակ օղի, կամ մի փոքր գինի:

Պարոն Աշխարունին յայտնեց, թէ ինքը սովորութիւն չունէր ոգելից ըմպելիք գործածելու: Նոյն ժամանակ հրամայեցին, որ շուտով թէյ մատուցանեն: Թէյից յետոյ Աշխարունիները հեռացան Աւազակեանների տանից, լի ուրախ մտքերով, որ այդ երկու անձինք, որ այդ երկրի մէջ մեծ համարում ունէին, միմեանց իւր իշխանութեամբ

եւ արծաթով, միւսը՝ իւր հնարագիտութեամբ եւ խելքով — այդէն իրանց կամակից եւ սրտակից էին։ Բայց ի զուր. պարոն Աշխարուհին խարուած էր — "արջերը ման էին գալիս փեթակի բոլորտիքը՝ այդ մեղրն սէրիցն էր„։

Ռէս Վասակեանը մի քանի ժամ եւս մնալով Սոլոմոն-Բէկի մօտ, մի փոքր յոյս տալով նրան, մի փոքր մխիթարելով, դուրս գնաց, ճանապարհին անիծելով իւր փոխադարձ բախտը, որով ոչինչ նրան չէր յաջողում, եւ ընդհակառակն, հանդիպում էին նորանոր արգելքների։

Digitized by Google

Ի Ե.

Գ Ա Ր Ո Ւ Ն

Ջարեհաւանի գարունը լինում է շատ գեղեցիկ։

Հին եւ պատմական անուն կրող Ջարեհաւանը հանդիսացնում է գարնան մի շքեղազարդ պատկեր՝ նկարած տխուր եւ տրտում յիշողութիւններով։ Ա յտեղ արեւը, ամէն առաւօտ, վսեմ փառահեղութեամբ երեւան է գալիս Ուրմիոյ լճակի միջից, եւ նրա կարմրագոյն երեկոյեան վերջալոյսի մէջ հիանալի նկարվում են մեծ Արաւուլը եւ Դուշմանայ սարերը՝ իրանց բարձր, ձիւնապատ գագաթներով։ Նե Սօլայի հեղեղատը, ընդունելով բիւրաւոր առուակներ նոր հալուած ձիւնի վտակներից, յորդանում է, բարձրանում է, եւ հազարաւոր ճիւղերի բաժանուած՝ — գոռալով, ֆըշֆըշալով, վազում է, ոռոգելով ամբողջ հովտի երեսը։ Նոյն ժամանակ, կարծես մի կախարդական զօրութեամբ, մեռած գետինը կենդանանում է, եւ շուտով կանաչէղէն սիսեռը, անթիւ գոյներով զարդարուած ծածկում է հարթ եւ հաւասար դաշտը։

Մշակը, լի ուրախութեամբ, դուրս է գալիս դաշտը. լսելի է լինում գութանի ճռնչալը խոր ակօսների մէջ. խոփի արծաթափայլ շողշողալը աչք է ծակում, եւ մածկալի կրակոտ երգերը — հիանալի են։

Բայց այստեղ, երկրագործի երգերը չունին այն ուրախալի եւ կենդանի զուարթութիւնը. նրանք երգվում են, ասես թէ — ակամայից։ Նրանք աւելի նման են թաղման

Digitized by Google

տաղտապագութիւնների . . . : Այստեղ, անբախտ երկրագործը հերկում է երկիրը տխուր եւ յուսահատ սրտով : — Նա երբեք յոյս չունի հաւաքել մի հատուն հունձք . . . , որովհետեւ, շատ անգամ, նրա կանաչ եւ դեռահաս հասկերը կկրակուր են դառնում բարբարոս ասպատակների ձիաներին. եւ շատ անգամ եւս, հնձած ցորենի դէզերը կրակի ճարակ են դառնում անգութ թշնամու ձեռքով, որ սովորաբար միշտ յարձակվում է այդ երկրի անբախտ բնակիչների վրայ, եւ կողոպտում է նրանց բոլոր ստացուածքը :

Այդպիսի անհանգիստ եւ անբախտ դրութեան մէջ գտնուելով, Զարեհաւանի բնակիչ հայերը, թողնելով օրհնեալ երկրագործութիւնը, եւ ընդունելով մի փոքր բարբարոսական բնաւորութիւն՝ իրանց կեանքը՛ ընծայեցին խաշնարածութեան : Դատարկաջղիկ խաշնարածը, որեւիցէ հաստատ կացութիւն չունենալով, աւելի նուաղ է ենթարկվում հալածանքի նեղիչ ազդեցութիւններին, եւ աւազակների ասպատակութիւններից շատ անգամ ազատվում է նա : Երբ չէր կարողանում դէմ դնել իւր թշնամուն, նա իւր հօտերով, իւր վրանները տեղափոխվում է դէպ սարերի աւելի խորին հեռաւորութիւնները : Այդ պատճառով, Զարեհաւանում, հայերը երբեք չեն աշխատել հաստատ տուն ու տեղ ունենալ : Իսկ վաճառականութիւնը մի երկրորդական բան է. ոչ ոք, աւազակների երկիւղից չէ կարող ցոյց տալ, թէ ինքը ունի արծաթ :

* * *

Կանաչ կիւրակէի երկու շաբթի օրն էր, երբ վաղ առաւօտեան, Ծաղկաւանի մէջ լսելի եղաւ զուռնայի սուր եւ ձգական ձվլոցը, եւ դրհօլի դաշնակաւոր դմփոցը :

Digitized by Google

Գիւղի ծերունիները անդադար երթեւեկում էին անում Տէր-Առաքելոյ տունը. երեւում էր, որ մի գործ հասնում էր խնդրում եւ յորդորում էին պարոն Ռուստամին, որը չէր կամենում յանձն առնել։ Վերջապէս ներս է մտնում մրսած Սէյսունը։

— Դուք ընդունեցէք գիւղացիների հրաւէրը, ասաց նա։

— Մ'իթէ իմ դէռ եւս տկար կազմուածքին յարմար է յանձն առնել մի այդպիսի ծանրաբեռն պաշտօն, պատասխանեց պարոն Ռուստամը։

— Բայց, ընդհակառակն, ասում եմ ձեզ, այդ անհրաժեշտ եւ կարեւոր է ձեր առողջութիւնը կազդուրելու համար։

— Այնուամենայնիւ դժուար է։

— Ո՛չ, դուք առանց դրան եւս այս տարի պարտաւոր էք եայլաղ գնալ՝ սարի մաքուր օդ շնչելու, կրկնեց բժիշկը։

Կամայ ակամայ պարոն Ռուստամը ընդունեց բժշկի խորհուրդը եւ յանձնառու եղաւ կատարել գիւղացիների խնդիրը, որոնք կամենում էին կարգել նրան իրանց գիւղի եւ Զարեհաւանի միւս գիւղերի իլիսթի վրայ էլչի, այսինքն՝ մի գլխաւոր, որ պիտի կառավարէր ասներում բոլոր խաշնարած եւ վրանաբնակ հայ ժողովուրդները։

Զուռնայի եւ դըհոլի ձայները գնալով աստիճանում էին եւ հովիւները ուրախ ուրախ դուրս էին բերում ոչխարների հօտերը, ձիանների եւ առանակների ջոկերը, կովերի եւ եզների նախիրները՝ իրանց ձմերանոցներից։ Այդ ջրբուսանիներից, որոնք ունէին պատկառոր եւ խայտաբղէտ մարմիններ, նրանց մորթերը ներկուած էին զանազան կարմիր, կապոյտ եւ դեղին գոյներով եւ նրանց եղջիւրներից ու պարանոցներից կախուած էին փոքրիկ բոժոժներ եւ

Digitized by Google

զանգակները, որոնց արուեստական զնկզնկոցը, խառնուելով գառների բառանչին, այծերի բզկըկալուն, կովերի բռռալուն, մատակների եւ նրանց նորածին քուրակների խրխնջալուն, էշերի զռոցին, շների ուրախաձայն հաջոցներուն, — այդ բոլորը կազմելով մի ներդաշնակութիւնը, բնականաբար եւ բարձրաձայն հնչեցնում էին հովուական կեանքի անմեղ եւ պարզ պօէզիան։

Ըրբ անասուններըը դուրս էին եկած գիւղից, նրանցից յետոյ քշեցին գրաստները, որոնք տանում էին վրաններ, պղնձեղէն կաթսաներ եւ ուտելու պաշարներ, որոնք սարում հարկաւոր էին։

Այնուհետեւ ճանապարհ ընկան նորահարսները, հարսանիքի հագուստներով, մանուկ աղջիկներ, մանուկ կանայք նոյնպէս գեղեցիկ զուգուած զարդարուած, եւ ամէն մինը նստած մի սիրուն ձիու վրայ, նրանց ետեւից հասակաւոր եւ պառաւ կանայքը՝ նստած աւանակների, եզների վրայ իրանց մեծ մեծ փաթաթած գլուխներով։

Բայց մանուկ տղամարդիկը եւ նորահաս պատանիք բոլորը վայելուչ կերպով ձիաւորուած, բոլորը միասին սպասում էին գիւղի մէջ մի լայն հրապարակի վրայ։ Ճանկարծ երեւեցաւ էլչեաին, այնպէս սիգապանծ եւ փառաւոր, որպէս մի շահ զաջարեան ցեղից։ Նրա արաբացի ֆահլան նժոյգը, ամբողջ ձմեռը վայելած տաք փարախի հանգստութիւնը, գիրացած եւ լցուած, որպէս մի ահարկու ժժդահայ, խաղում էր, տռտիկ տալիս եւ ծլունկ լինում։ Նրա փայլուն զէնքերը վառվում էին եւ բզըզում նոր ծագած արեւի լոյսով եւ նրա երկայն մզրախի գլխում փողփողում էին սեւ փետրազարդ փնջեր։

Ըրբ նա հասել էր Տէյրաանում, ուր սպասում էին նրան սպառազինուած բազմութիւնը, յանկարծ արձա-

Digitized by Google

կուեցան հազարաւոր թուանշանների բոմբիւնք ... հնչեցին նուագածութիւններ, եւ այդ լսառն որոտմունքի միջից գոռացին հարիւրաւոր ձայներ. — "թող կենդանի լինի մեր էլբակին ...": Երբ պարոն Ռուստամը ձեռքը շարժեց, կրկին տիրեց լռութիւնը:

Դատարկուեցան գինուոյ եւ օղիի գաւաթներ, Աստուածուց բարի երթ եւ բարի յաջողութիւն մաղթելով, քահանայք կարդացին "Ծէր, ուղեւ զճանապարհս դոցա": Էլբակին առաջ քշեց իւր ձին եւ բոլոր ձիաւոր բազմութիւնը հետեւեցին նրան:

Այդ միջոցում, երբ ամէն աղջիկ, իւր սրտում ցանկանում էր այդ քաջարի երիտասարդի հարսն լինել, երբ ամէն մայրերը անձկանօք ուզում էին նրան իրանց փեսայ լինել, օրիորդ Սալբին միայնակ իրանց դրացու կտուրին վրայ թաղնուած վերնապարսպի յետքում, վառվռուն աչքերով հետեւում էր իւր հերոսի շարժուձեներին: "Գնա, ով քաջ, Ծէրը քեզ հետ,,, ասաց նա խորին ոգեւորութեամբ, "քո ճակատին դրուած է ոսկի տառերով՝ միշտ գէնք կրել եւ առաջնորդել մի մեծ բազմութեան ...,,:

Ծաղկաւանը համարեա դատարկուած էր բնակիչներից. տներում մնացել էին միմիայն ալեւորներ եւ պառաւ կանայքը, մի քանի վարձկան գործաւորների հետ, որոնք մնացել էին հողերը մշակելու համար:

Աւազակեանց տունից այս տարի ոչ ոք սար չը գնաց. նրանք չէին կարող տանել իրանց ատելի տղամարդի գլխաւորութիւնը: Բայց ոչխարները հովիւներին յանձնեցուվ, իրանք մնացին գիւղում:

Մահուչափ հարուածք ունեցաւ այդ անգքը Սոլոմոնիչկի վրայ. նա չէր կարողանում տանել իւր սրտի կսկիծին. սեւ նախանձը ուտում մաշում էր նրա լերդը:

Digitized by Google

Նա կատաղի յուսահատութեամբ խելագարի նման մտաւ իւր առանձնասենեակը, եւ ամբոխուած, վրդովուած, տարուբերվում էր զարհուրելի մտածութիւնների մէջ։ Երկար այդ տենդանման բորբոքման մէջ չարչարվում էր նա, մինչ վճռեց իւր մտքի մէջ սպասափելի խորհուրդ, մի խորհուրդ, որով մտածից վերջ տալ իւր կեանքին...։

Նա առեց պատուհանից ատրճանակը եւ բերանը դրեց իւր սրտին, եւ քիչ էր մնում որ քաշէր բացէր նրա ձախմաղը. այդ միջոցին նրա յետեւից մի մարդ բռնեց նրա ձեռքից, ասելով — էյ, վայ, ինչ էք գործում։

Դա Ռէս Վասակեանն էր։ Այդ դեւը, էլիսաթը ճանապարհ դնելուց յետոյ, գուշակելով իւր տիրոջ ցաւալի դրութիւնը, քանի լուպէ առաջ, աննկատելի կերպով, սողացել էր Սոլոմոն-Բէկի սենեակը, եւ մունջ թագնուած էր մի անկիւնում, հետզհետէ հետազօտում էր նրա բոլոր կատաղի շարժուձեները, նրա երեսի վայրենի գծագրութիւնները։

— Այդ ինչ փոքրոգութիւն է, կրկնեց նա։

— Տուր ինձ ատրճանակը, ասաց պատանի Աւազակեանցը։

— Զգաստացէք, ուշի եկէք, Սոլոմոն։

— Ա՛հ, մահը, սիրելի մահը միայն ցանկալի է ինձ։

Պալոն Վասակեանը, մահու գործիքը պատուհանից գուրս նետելով, բռնեց նրա ձեռքից, նստացրեց աթոռի վրայ, յետոյ հրամայեց Ծառային, որ ղէյլան բերէր նրան։

Նա չը կարողացաւ ծխել թամբաքուն. նրա բոլոր մարմինը դողդողում էր տենդանման ջերմախտի մէջ, նրա ձայնը խեղդվում էր, նրա շնչառութիւնը այնքան զօրեղ էր եւ արագ, մինչեւ հաւաքուել էր նրա բերանում բաւականաչափ փրփուր։ Նրա վառուած աչքերը, երեսի կա-

Digitized by Google

տաղի գծագրութիւնները կասկած յարուցին պարոն Վասակեանին, թէ իրաւ ցնորուել էր նա, բայց շուտով պառկեց ասֆի վրայ, թմրութիւնը շուտով տիրեց նրան, եւ սկսեց արտախօսել խառնիխուռն զրոյցներ, որոնց միջից շատ անգամ պարզ որոշվում էին — "Ու թող կենդանի լինի մեր էլբակին...":

Պարոն Վասակեանը չը հեռացաւ նրա մօտից մինչեւ երեկոյ: Արեւը մանելէն յետոյ, նա զարթեցաւ մի փոքր զգաստացած:

— Ի՞նչպէս էք զգում ձեզ այժմ, հարցրուց Ռէսը:

— Ոչ շատ լաւ, պատասխանեց նա թոյլ ձայնով, միայն հրամայեցէք որ շուտ տան թէյ եւ մի փոքր արաղ (օղի):

Բանասարկուն մտածեց, թէ առաւել օգտակար է նրան նոյն ժամուն խառնուած դրութեանը, մի քանի ատեղով, մի քանի դատարկ յոյսերով, առ ժամանակ խաբելով, հրապուրել նրա միտքը, մինչեւ կը յայտնուէր գործի վերջը:

— Այսու հետեւ աւելորդ են ձեր տխրութիւնները, ասաց նա, որովհետեւ թէեւ մեր առաջին ձեռնարկութիւնները բոլորովին ի զուր անցան, բայց այսօր իմ քրոջմէն ստացայ խիստ ուրախալի լուրեր օրիորդի մասին:

— Ի՞նչ լուրեր, հալցրեց անհամբերութեամբ Սոլոմոն-Բէկը:

Օրիորդը այժմ համարեա թէ հաւռզուած է ձեզ իրան համար փեսայ ընտրելու, միայն մի քանի պատճառներով այժմ չէր կարող վճռականապէս խոստանալ եւ յայտնել իւր հաճութիւնը:

— Ի՞նչ պատճառներ են դրանք:

— Հանգամանքները չեն ներում այժմ յայտնել այդ պատճառները, միայն դուք միամիտ եղէք, որ մի ամսից յետոյ օրիորդ Սալբին տիկին կ'ունենաք այդ փառաւոր ամրոցում:

— Դուք միշտ յուսադրում էք, Ռէս:

— Ես հաստատ գիտեմ, եւ իմ յուսադրութիւնները անտեղի չեն:

Սոլոմոն-Բէկը մի քանի ուրիշ թէյ ընդունելէն յետոյ՝ սկսաւ անյագ կերպով ծխել ղէլեան, որ նոյն ժամանակ կարծես թէ նրան դուր եկաւ:

— Միայն դուք, աղա, առաջ տարաւ խաբեբան, մի՛ վշտանաք դրա համար, որ գիւղացիք յիմարութեամբ ընդդէմ ձեր յօժարութեան ընտրեցին Ռուստամին էլքակի, բայց ի նկատի ունեցէք, որ այդ նրանց ընտրութիւնը աւելի ձեռնտու է մեր նպատակի առաջադիմութեան, եւ մեզ համար շատ հարկաւոր է նրա բացակայութիւնը ծաղկաւանից, այդ դէպքում նա քանի ամիսներով հեռու կը մնայ մեզանից, մինչեւ որ մենք Աստուծոյ ողորմութեամբ կը կատարենք ձեր խորհուրդը:

Պարոն Վասակեանը ուռեցնելով Սոլոմոն-Բէկի գլուխը ունայն յոյսերով, հեռացաւ:

Բայց պատանի Աւազակեանցը բոլորովին ճշմարտութիւն համարելով Ռէսից լսածները, միւս օրուայ առաւօտեան պահուն՝ կանչեց իւր քոյրը Ալմաստին (որ գնում էր վարժարանը ուսանելու) եւ տուաւ նրան մի թանկագին մատանի, պատուիրելով որ տայ օրիորդ Սալբիին: Նրա քոյրը դժուարանում էր յանձն առնել այդ ծառայութիւնը, որովհետեւ նա վարժարանում եղած ժամանակները, քանի քանի անգամ խօսք էր բացել իւր եղբօր մասին, միշտ ատացել էր կոշտ պատասխաններ, բայց այս

Digitized by Google

անգամ նա սեխպուած՝ հնազանդուելով իր եղբօր հրամանին, մտածեց յանձն առնել եւ փորձել վերջին փորձը։

Գարունքը օրէցօր երեւան էր գալիս իւր շքեղ կերպարանքով. եզանակը գնալով տաքանում էր։ Պարոն Աշխարունիի տան բակի պարտէզը ստացել էր հիանալի գեղեցկութիւն։ Ամնական վարդը, սոխատեսակ ծաղիկները, զամբաղը եւ յասմիկը, բուրում էին անուշ հոտով։ Նշենին, ծիրանին զարդարուած էին իրանց սիրուն ծաղիկներով։ Տիկին Սալաթինի աշակերտուհիները, այդպիսի եղանակներում, ըստ մեծի մասին պարտիզում էին սովորում արձակ օդի մէջ, նստարանների վրայ, որոնք դրուած էին սաղարթախիտ եւ անթափանցիկ նարվանդի տակ։

Աշակերտուհիներից երկուսը՝ հեռացած պարտէզի մի անկիւնը՝ թագուն խօսում էին։

— Աղջի Սալբի, ասաց նրան բարեկամաբար Ալմաստը, ուրքան անգութ ես դու, եւ. գուցէ շատ հպարտ, որ չես կամենում ընդունել իմ սէրը եւ իմ բարեկամութիւնը։

— Չէ, Ալմաստ, երբեք յուսալու չէ իմ եւ քո մէջ մի ճշմարիտ սէր, երբ դու հարուստ ես, իսկ ես աղքատ, երբ դու կը հայիս խիստ բարձրից եւ ամենայն ինչ քո աչքին փուշի նման կ'երեւի, ասաց երգիծաբանութեամբ օրիորդ Սալբին։

— Ա՛խ, ուրքան ցաւեցնում իմ է սիրտը այդ պատասխանը, կրկնեց կեղծաւորաբար Ալմաստը, հաւատայ, սուրբ Տիրամայրը վկայ է, որ ես ամենեւին խտրութիւն չեմ դնում անձիս եւ քէ իմ ընկերներիս մէջ, մտածելով քէ նրանք ամէն բանով ատոր էին ինձանից։

Digitized by Google

— Թէպէտ դուք խորութիւն չը դնէք, բայց ստորնելին իրանց չափը ճանաչել ալժանի է. յարգել մեծութիւնը՝ սուրբ բան է: Ասաց դալձեալ կատակով օրիորդ Սալբին:

Ալմաստը աւելի մօտեցաւ նրան, եւ փաղաքշանօք բռնելով նրա ձեռքից, ասաց — Սալբի, Աստուած գիտէ, որ շատ եմ սիրում քեզ, եւ միշտ ցանկանում եմ ունենալ քեզ հետ թաւիմ սիրոյ յարակցութիւն:

— Ի՞նչ յարակցութիւն, հարցրեց սառնութեամբ օր. Սալբին:

— Ես կամենում եմ լինամանալ ձեզ հետ խըթնէնէլի (տիկնիկների) միջնորդութեամբ:

Մի քնքոյշ ժպիտ շարժեց օրիորդ Սալբիի վարդագոյն շրթունքները:

— Ձեզանից, որպէս մի չափահաս օրիորդից, նելուելի չէ լսել այդպիսի տղայական առաջարկութիւն, ասաց խստութեամբ օրիորդ Սալբին, որովհետեւ խրծիկները, որպէս երեխաների խաղալիկներ, չեն ծնուցանում ճշմարիտ սէր. իսկ սէրը բղխում է բարի եւ առաքինի սրտերից:

— Ես հաճախ (կատակ) արեցի, Սալբի, իւրաքանչիւրը երեխաների խաղալիկներ են. բայց ես ունիմ ոչ ատանձին պատճառ քեզ սիրելու, պատուելու եւ պաշտելու:

— Ի՞նչ պատճառ էր այդ, հարցրեց սառնութեամբ օր. Սալբին — բայց դուք հասկացէք, որ ես չեմ սիրում կեղծաւորութիւն:

Օրիորդ Աւազակեանցը շառագունեցաւ ամօթուց, իրաւ խօսակցի սառնասրտութիւնը կապում էր նրա լեզուն, նա չը գիտէր, թէ ո՛րպէս առաջարկէր նրան՝ իր եղբօր յանձնած մատանին:

Digitized by Google

— Սալթի, ես ուզում եմ մի առաջարկութիւն անել քեզ, միայն խնդրեմ երդուիր, որ ընդունելու ես իմ խնդիրը։

— Բոլորովին անկարելի է, որ ես խոստանամ ընդունել մի առաջարկութիւն, մի խնդիր, որ ինձ առաջուց յայտնի չէր, ուր միտք, որ երդումով հաստատէի նրան։

— Ուրեմն ընդունիր այդ մատանին եւ ամենայն ինչ յայտնի կը լինի քեզ։

— Ի՞նչ մատանի է այդ։

— Առէք ձեր ձեռքը, նայեցէք, յետոյ կ'ասեմ ձեզ։

Օրիորդ Սալթին մատանին առաց եւ հետաքրքրութեամբ սկսեց նայել նրա քարին (ակին), որի վրայ ճարտարապետութեամբ քանդակագործուած էր մի սիրտ, բոցավառուած կրակով, եւ նրա բոլորտիքը գեղեցիկ տառերով գրուած էր "Աստուած սէր է„։

— Այժմ ասացէք, ի՞նչ մատանի է այդ, հարցրեց օրիորդ Սալթին։

— Այդ մատանին իմ եղբայրը, Սոլոմոն-Բէկը, ուղարկել է քեզ, կարմրելով պատասխանեց Ալմաստը։

— Ծրեւի սիրուա՞մ է ինձ, հա՞։

— Հրաւէր էք, սիրուա՞մ է, եւ սիրուա՞մ է առաւել քան իւր հոգին։

— Բայց դժբախտաբար, ես չեմ կարող սիրել նրան։

— Ինչո՞ւ։

— Ներա համար որ, որպէս մի տէրութեան մէջ չեն կառավարում երկու թագաւորներ, նոյնպէս եւ մի սրտում չեն կարող լինել երկու սէր։ Ալմաստը շփոթեցաւ։ — Այդ ճշմարիտ է, ասաց նա, բայց պէտք է հմուտ ճարտարապետ ունենալ ընտրութեան մէջ, եւ վատը չը գերադասել լաւէն. իմ եղբայրս փառաւորուած է Աստուծոյ բոլոր

պարգեւներով — իշխանութիւն, հարստութիւն, ճոխութիւն, բոլորը ունի նա։

— Ես չեմ կամենում իմ անձս վաճառել, թէեւ գնողներն կամէին գնել նրան այն բաներով, որոնք աւելի փառաւոր եւ վառվռուն էին յիմար աշխարհի աչքերում, պատասխանեց օրիորդ Սալքին։

— Դուք սխալվում էք, քոյրիկ, ասաց նրան օրիորդ Աւազակեանցը խրատողի ոճով։ — Մի մարդ, որ հնար ունի բախտաւոր եւ երջանիկ լինելու, բայց երբ նա իր կամքով ընդունում է աղքատութիւնը, նշանակում է որ նա ինքն իրան դատապարտում է։

— Սէրը չէ որոշում այդ իրողութիւնները, նրա համար միեւնոյն է աղքատի խրճիթում բնակուել կամ վրանի տակը եւ թէ փառաւոր ապարանքում։

— Սէրը կոյր է։ Նրա խօսքը կտրեց Ալմաստը։

— Ու բախտը կոյր է, պատասխանեց օր. Սալքին։

— Բայց բախտի մէջ կայ վայելչութիւն, փառաւոր կեանք, երջանկութիւն եւ այն բաները, որոնց համար որ աշխատում է ամբողջ մարդկութիւնը. — հաւատացնում եմ ձեզ, որ դուք մի օր չարաչար կ'ապաշխարէք ձեր այդ սխալի համար. հաւատացնում եմ ձեզ, որ աղքատութեան մէջ, բացի տրտում եւ տխուր վշտերի, ոչ ինչ աւել գտնելու չէք. — հաւատացնում եմ ձեզ, որ իմ եղբայրս կարող է սիրել քեզ միշտ, եւ բախտաւորացնել ձեզ։

— Բայց ես հաւատացնում եմ ձեզ, Ալմաստ, որ ձեր եղբայրը մի դատարկ մարդ է, դարձեալ հաւատացնում եմ, որ արծաթի ժանգը, նստելով նրա սրտի վրայ, մաշել է նրանում ամենայն գեղեցիկ բան։

Օրիորդ Աւազակեանցը խիստ վշտացաւ այդ կծու խօսքերից. տոհմական անպատուութիւնը շարժեց նրա բար-

կութիւնը, եւ նա փոխելով իւր փաղաքշական ոճը, ասաց խստութեամբ. Ձեր չար լեզուն, Ձեր համարձակ եւ անպարկեշտ սովորութիւնները, Ձեր տարապայման քնաւորութիւնը, ի զուր չէ, որ Ձեր անձնաւորութիւնը ատելի է արել հասարակութեան աչքում, եւ ամէն մարդ պատճառունի համարել Ձեզ լիրբ եւ անամօթ:

— Ինձ ցաւ չէ ընդունել բանբասանք ոմի անկիրթ ամբոխից, բայց դուք չափ դրէք Ձեր լեզուին, եթէ կը կամենայիք պահպանել Ձեր պատիւը:

Այդ խօսակցութեան ժամանակ վրայ հասաւ տիկին Սալամբինը, — Սալթի, Ալմաստ, կոչեց նա, դասի ժամանակ է, ինչ էք խօսում այնտեղ:

Ալմաստը հեռացաւ, գնաց իւր վարժուհու մօտ, բայց օրիորդ Սալթին մնաց իւր տեղում անշարժ: Նոյն միջոցին մօտեցաւ նրան պատաւ Դօզէն:

— Արժանապատիւ աղջիկ պարոն, պէտք չէր որ այնպէս անքաղաքավարի կերպով վարուելով վշտացնէիք Մելիքի դուստրը:

Բայց օրիորդ Սալթին մինչ այն աստիճան բորբոքուած էր բարկութեամբ, որ առանց պատիւ դնելու պատաւ աղջկայ ծերութեան, իսկոյն իւր սրտի թոյնը թափեց նրա վրայ ասելով. — Հեռու կորիր դու սատանայ, եթէ չես ուզում, որ ես այդ միակ աչքդ հաւասարէի միւսին:

Դօզէն առանց մի բան խօսելու հեռացաւ նրա մօտից:

"Այժմ հասկանում եմ այն խօսքերի բոլոր խորամանկ խորհուրդը, որ այդ երկու սատանայի ծնունդները մինչեւ այս օր ասել եւ կրկնել են ինձ, — յիշեց իւր մտքում օրիորդ Սալթին. — հողը ձեր գլխին, յիմարներ... դրանք ուզում են խլել ինձնից իմ Ռուստամը, որի հոգին

Digitized by Google

կապուած է իմ հոգու հետ, որի աստղը, ճակատագրական նախասահմանութեամբ, միաւորուած է իմի հետ . . .»:

Ու արդարեւ, Ալմաստի սրտի մէջ նոյնպէս թագնուած էր մի գաղտնիք. նրա աշխատութիւնը ոչ այնքան նրա համար էր, որ իւր եղբօր սիրած աղջիկը միաւորէր նրա հետ. ո՛չ, այլ նա աշխատում էր ձեռք բերել իւր թագուն նպատակը, այսինքն, օրիորդ Սալբիին սիրել տալով իւր եղբայրը, ինքն հնար կ՚ունենար լսել նրա ձեռքից այն վայելչագեղ տղամարդը, որ մի օր առաջ այնքան փառաւորութեամբ դուրս եկաւ ծաղկաւանից:

Ալմաստի ծածուկ սէրը պարոն Ռուստամի հետ ունէր իւր ռօմանական հրապուրիչ կերպարանքները . . .:

ԻԶ.

ԹՈՒՏԱՄԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

“Գիտեմ, դու կը սիրես կարդալ, իմ նազելի Սալքի, թէ ուրպէս անցուցանում եմ ես ատրում իմ օրերը առանց քեզ, մեր պարզամիտ հովիւներուի հետ, արածացնելով մեր անասուններըւ

“Այսուհետեւ ամէն գիշեր իմ վրանի մէջ նստած, փոքրիկ լապտերիկի լուսով, գրելու եմ քեզ իմ օրագիրը. այն, որքան ուրախութիւն է զգում սիրտս, երբ մտածում եմ, թէ դու սիրով կարդալու ես այդ բոլորը։

“Գիշերը ծանր է եւ մթին. ահա վառվում են բոլոր հարևների առջեւ օջախները, եւ պղնձների մէջ եփ եկող կաթնի շոգիները՝ լցրել են օդը ախորժելի հոտով։ Հեռաւոր ատրերի լանջերում տեսանելի են հրավառ կէտեր, ինահաւատ ճանրորդը սալսափելով անցնում է դրանց մօտից։ Դրանք մեծաւոր հովիւների խարոյկներն են, որ նրանք վառել էին սարում, մի փոքր կաթ տաքացնելու եւ իրանց քաղցը յագեցնելու համար։ Բայց դու լսում ես, թէ ինչպէս անոտիսպաշտ պատանները պատմում են զանազան առասպելներ այդ հեռաւոր խարոյկների մասին՝ իրանց թոռնիկներին ասելով. կամ նրանք թագուցած գանձեր են, կամ այնտեղ մի սուրբի մարմնի մասը թաղուած է, եւ կամ պատառող գայլերը, քաւթառները գալիս են գողանալու ոչխարներ, եւ նրանց աչքերն այդպէս լոյս են տալիս։

"Բայց ես չեմ ախորժում լսել առասպելներ, ես նրա սիրում ենք հրաշալի բնութիւնը... Բայց գրքան գեղեցիկ և երեւացնում նա իրան այստեղ, այս սարերի մէջ... Այն իրողութիւնները, որ մինչեւ այսօր ես երեւակայութեամբ մտաբերում էի հովուական կեանքի մասին, այն երգերը, որ այնքան ոգեւորութեամբ փառաբանում են հովուի անմեղութիւնը, երբեք չէին կարողացել տալ ինձ մի ստոյգ գաղափար այդ օրհնեալ կեանքի մասին, որով ապրել են Աբրահամը, Իսահակը եւ Յակոբը: Բայց այժմ, սիրելի Սալբի, ափսոս, առանց քեզ ես վայելում եմ այդ բանաստեղծական կեանքի պարզ ու անմեղ պօէզիան: — Հովասուն եւ աստղազարդ գիշերները, վարդագեղ արշալոյսները, ջրվիւռաբեր եւ ոսկի առաւօտները, թարմ եւ կենսատու օդ, հոտաւէտ ծաղիկները, կանաչ մարգերը, երգող թռչուններ. — ամէն օր, ամէն ժամ գգվում են, փայփայում են, անուշանում են մեզ:

"Բայց ցաւալի սրտով ես նկատում եմ, որ մեր հայերը չունին գեղեցկասէր ճաշակ. նրանք դեռ չեն սովորած զգալ եւ պաշտել վսեմը եւ վայելուչը: Հրաշալի բնութիւնը իւր շքեղութեամբ չէ հիացնում նրանց եւ ոչ իւր կատարեալ կերպարանքներով՝ բերում է նրանց սարսափ: Ես զարմանում եմ, թէ ինչպէս դրանց սրտերը, դրանց հոգիները այդքան կոշտ են եւ անզգայ, եւ իրանց մտքերն այդքան մեռած են...:

"Ես ամենեւին չեմ տեսնում մի հասուն օրիորդ, կամ մի մանուկ տղամարդ, որ իրանց երգերով փառաբանէին արեւի առաւօտեան հրաշալի ծագումը, կամ թէ նստած լուռ եւ մունջ, խորին ոգեւորութեամբ, հիանային վսեմ յափշտակութեան մէջ, արշալուսի փառահեղ պատկերովը:

Digitized by Google

"Արեւմտեան պահուն, արեւի վերջալոյսը կայմիր, հրագոյն ներկերով նկարում է երկնքի վրայ հազարաւոր կախարդական պատկերներ, տարուբերական ամպերը մի րոպէում տալիս են այդ պատկերներին հազարաւոր հակայաձեւ կերպարանքներ. նրանք փոփոխվում են... փոփոխվում են... երբեմն զարհուրանք, դժոխք եւ վիշապներ ձեւացնում մեր աչքի առջեւ... իսկ երբեմն՝ դրախտ, անտառավարտ ծառեր եւ ծիծաղող հուրիներ...: Բայց հայ մարդը չէ նկատում բնութեան այդ հրաշարուեստ ճարտարութիւնները. նա միայն գգում է, որ արեւը մտնում է... արեւը գնում է հանգստանալու իւր գիշերային կայարանում..., որ առաւօտեան կրկին լուսաւորէ իրանց հովիտը: Ու հայ մարդը, իւր հորիզոնից դէպի միւս կողմը, իւր ծանօթ սարերի ետեւումը, չը գիտէ թէ ինչ կայ: Նա չը գիտէ, թէ այն տեղերում՝ նոյնպէս կան երկիրներ եւ այն երկիրների վրայ բնակուած են իւր նման հայեր, նոյնպէս ծառայութեան լծի տակ, նոյնպէս գերութեան մէջ...: Բայց հայ մարդը բոլոր աշխարհը կենդրոնացնում է իւր հովտի մէջ... եւ բոլոր մարդկութիւնը համարում է թէ ծնուած է միմիայն ծառայութեան եւ ստրկութեան համար...:

"Նա տեսնում եմ ամէն առաւօտ նորահաս օրիորդներ, մանկահասակ նորահարսներ, որ գնում են ջրօսնելու կանաչ արօտամարգերի մէջ: Առաւօտեան ցօղը իւր մարգարիտներով թրջում է նրանց ոտքերը, երգող թռչունները բարեւում են նոյն առաւօտը, անուշահոտ ծաղիկները բիւր հրաւէրք են կարդում նրանց...: Բայց հայ օրիորդների ականջները խուլ են լսելու այդ ձայներից մինը, նրանց աչքերը կուրացած են նկատելու բնութեան հրապուրիչ քնքշութիւնները, նրա գրաւիչ ծիծաղը. նրա

Digitized by Google

շռայլ եւ հրաշափառ պչրանքը . . . : Ես չեմ տեսնում այդ աղջիկներից ոչ մինը, որ իւր գլուխը, իւր կուրծքը զարդարած վարդերով՝ յետ դառնար զբօսանքից, եւ թագուն, իւր չադրի ետեւից սողցնէր իւր սիրոզի ձեռքում մի փունջ ծաղիկ . . . :

"Թէպէտ վայրենի կեանքի բնական ազդեցութիւնն այստեղ տուել է այդ մանուկ աղջիկների, այդ նորահաս կնիկների վարքին մի փոքր ազատութիւն, մի փոքր արձակ համարձակ ընթացք, եւ մարդ շատ անգամ տեսնում է յետ քաշուած քօղի տակից նրանց վարդ երեսները, նրանց անխորհուրդ ծիծաղը եւ լսում է մի քանի հատ ու կտոր բառեր նրանց խօսակցութիւնից, բայց այդ բոլորը առանց համակրութեան, առանց զգացողութեան, մեքենաբար, սառն եւ ցամաք . . . :

"Թէպէտ մեր վրաններն այստեղ շատ մօտ են կազմուած միմեանց եւ բոլոր խաշնարածների ընտանիքը, համարեա, կազմում են մի գերդաստան, բայց միեւնոյն այդ ամիոխուած եւ խառն կացութեան մէջ, ամէն մի հանգամանքներում, տեսանելի են՝ անմեղութիւնը, սրբութիւնը եւ յիմարութիւնը . . . :

"Այժմ հասկանում եմ ես, սիրելի Սալբի, այն խնդրի խորհուրդը, որ շատ անգամ քեզ հետ չենք կարողացել լուծել, թէ ինչու՞ հայերը չեն ունեցել ազգային բանաստեղծութիւն:

— "Ինչո՞ւ, կը հարցնես դու ինձանից:

"Ըրբ մենք մեր մտքին, մեր սրտին, մեր կրքերին, մեր զգացմունքներին, մեր բոլոր հոգեկան զօրութիւններին՝ տալիս ենք սանձարձակ ձգտողութիւն, համարձակ թռիչք եւ ազատ ներգործութիւն, նրանք գնալով աճում են, ընդարձակվում են եւ կատարելագործվում են: Նոյն ժա-

Digitized by Google

մանակ ֆանտազիան, որ բնական է մարդուն, ներշնչում է մեր հոգու մէջ մի մոգական զօրութիւն, եւ մարդկային միտքը, վառուած, բորբոքուած այդ աներեւոյթ կարողութիւնից, վերասլանում է բնական աշխարհից դէպի գերբնականը, վերափոխվում է մարմնաւոր դրութիւնից դէպի հոգեւորը, եւ այնտեղ, վերին, կախարդական երկնակամարում, հրճվում է, պքանչանում է, զմայլում է վսեմ զգացմունքներով։

"Բայց աւա՛ղ, հայ մարդու միտքը, սիրտը, կրքերը եւ բոլոր հոգեկան զօրութիւնները — յաւիտենից միշտ ճնշուած լինելով մշտնջենաւոր ստրկութեան լծի տակ, կաշկանդուած լինելով առօրեայ հոգսերից, վարակուած լինելով դարաւոր խաւարի մէջ, մեռած եւ սասանուած լինելով բռնաւորի ահից եւ նրա սրից — երբեք եւ մի րոպէ չեն ունեցել ազատ շունչ, եւ որպէս ասացինք, ազատ թռիչք եւ ձգտողութիւններ . . . : Ու բնականաբար մի բան, որ միշտ կենում է անշարժ դրութեան մէջ, նա ապականվում է եւ փտում է. մի բան, որ օր ըստ օրէ դիմում է դէպի նուազումն եւ դէպի տկարութիւն, նա վերջապէս սպառվում, ոչնչանում, եւ որպէս հասարակաբար ասում ենք՝ մեռնում է . . . :

"Բայց հոգին չէ մեռնում, կ'ասես դու, իմ Սալբի. մի կրօնական մտքով՝ նա ընդունակ է, որպէս ներբողելու իւր ուրախութիւնները, նոյնպէս եւ ողբալու իւր ցաւերը։

"Բայց թող ինձ այժ աւելի խոր գնալը հոգեբանութեան մէջ, որ վեր է մեր կարողութիւնից, մենք դառնանք դէպի մեր խօսքը։

"Ես փորձ փորձեցի, թէ արդեօք կարող էի զարթեցնել իմ այժմեան ընկերների հոգու մէջ հայկական նախնի քաջասրտութիւնը եւ տալ նրանց մի ստոյգ գաղափար

Digitized by Google

իրանց ազգի եւ իրանց հայրենիքի մասին: Այդ պատճառով իմ վրանում՝ որոշեալ ժամերում հաւաքում եմ մի քանի նորահաս տղամարդիկ. ես կարդում եմ նրանց Յոսրենացին, Ղեւոնդն եւ հայոց ազգի այլ պատմական գրքերը: Ես պատմում եմ նրանց, թէ հայերը նոյնպէս ունեցել են մի ժամանակ՝ տէրութիւն, թագաւորութիւն եւ զօրութիւն աշխարհի մէջ: Ես ցոյց եմ տալիս նրանց այն երկրները, որ առաջ պատկանում էին հայերին եւ որ այժմ այլք տիրացել են: Ես հասկացնում եմ նրանց, թէ մի ազգ, որ չունի երկրի վրայ մի կտոր հող եւ ապրում է օտարի հողի վրայ, այդ ազգը կը լինի այն հողատիրոջ ծառան, նրա ստրուկը, եւ այդ ազգի աչքերից երբեք չեն պակասելու արտասուք եւ լաց:

"Քանի օր է, որ շարունակում եմ իմ դասերը եւ իմ սիրելի ունկնդիրները խորին ուշադրութեամբ լսում են: Ես նկատում եմ մի բան, որ գաղտնի կերպով եփ է գալիս նրանց սրտի մէջ. նրանց ալիւնը բորբոքվում է, նրանց կրծքերը բարձրանում են, եւ ես տեսնում եմ հայասիրութեան սուրբ արտասուքն անձրեւում է նրանց աչերից . . . :

"Ի՞նչ անեն հայերը, ինչ հող ածեն իրանց գլխներին. մի՞թէ առանց ուսումի, առանց պիտութեան եւ առանց լուսաւորութեան մարդ կարող է կատարեալ մարդ լինել, իւր օգուտը ճանաչել, իւր վնասը հեռացնել, իւր ազգը սիրել եւ իւր հայրենիքը պաշտել:

"Հայը իւր աչքը բացում է՝ իրան ծառայութեան եւ գերութեան մէջ է տեսնում: Նա չէ հասկանում, թէ ինքը նոյնպէս մի մարդ է աշխարհի մէջ եւ ունի մարդկային իրաւունք, հաւասարաբար վայելելու այն բոլոր շնորհքները, որ Աստուած պարգեւել է մարդուն: Նա չէ

Digitized by Google

հասկանում, թէ Աստուած այդ երկիրը իւր բոլոր բարիքներով մարդու համար ստեղծեց, եւ ինքն իրրեւ մարդ, բաժին ունի դրանից։ Նա չէ հասկանում, որ բոլոր մարդիկ մի տեսակ են ստեղծուած, մի կերպարանք ունին, բոլորն էլ ազատ են եւ ամենևին մէկն իրաւունք չունի իշխելու միւսի վրայ։

"Բայց երբ ճշմարտութիւնը վարագուրվում է խաբէութեամբ եւ արդար իրաւունքը փշրվում է յաղթահարութեան ու բռնութեան ոտքի տակ, այն ժամանակ մարդը իւր իրաւունքը առաջ տանելու համար պարտաւորվում է գործ դնել իւր ֆիզիքական զօրութիւնը — իւր թուրը։

"Նա աշխատում եմ տալ իմ ընկերներիս տեղեկութիւն այդ բոլոր իրողութեանց վրայ։ Նա աշխատում եմ բաց անել նրանց միտքը, նրանց աչքը եւ նրանց ձեռքը։ Իմ դասերը լինում են գիշերներով, լուսնեակի կաթնագոյն լուսով, երբ բոլոր չադրների մէջ քնած են լինում հովիւները։ Բայց առաւօտեան եւ երեկոյեան պահուն իմ նորահաս աշակերտներիս պարապեցնում եմ զինուորական կրթութիւններով։ Ներանք այժմ խիստ վարժ են կառավարելու իրանց ձիաները եւ շարժելու զէնքերը։

"Նա եմ ուրախութեամբ նկատում եմ, որ քաջալանական արիւնը դեռ բոլորովին չէ սառած Հայկայ որդիների երակների մէջ։ Նա այս օրերում մի անգք փորձով ցոյց տուեց եւ նրանց արիութիւնը կռուի մէջ։ Մեզանից մի քանի մղոն հեռու Ճարայեան սարերի մէջ իջեւանել էին մի քանի չադրներ՝ քրդստանցի հայ խաշնարածներից։ Ճանկարծ մեզ լուր հասցրին, թէ Ռաւանդները կողոպտեցին նրանց չադրները եւ աւար տարան նրանց անասուն-

Digitized by Google

ներըս։ Մի ակնթարթում աւելի քան յիսուն սպառազէն-նուաճ տղամարդիկ գտնուեցան ձիաներուն վրայ. նրանք կայծակի արագութեամբ հասան աւազակներին ծաղկաձո-րում. կռիւն սկսուեցաւ մի նեղ փապարում։ Քրդերն աւելի քան երկու հարիւր ձիաւոր էին, նրանք կռվում էին զարհուրելի կատաղութեամբ։ Բայց մեր քաջերից ամէն մինը մի ապառն էր դարձած. ես զմայլած էի ուրա-խութիւնից, չէ՞ որ, Սալբի, երկար ժամանակ է, որ կռվում չէի եղած։ Ամբողջ մի քանի ժամ տեւեց կռիւը, որ եւ վերջացաւ մեր յաղթութեամբ։ Մենք թափեցինք աւարը, խլեցինք աւազակներից ձիաներ եւ ջէնքեր, սպանելով նրանցից տասն եւ երեք հոգի, մեսնները վերաւորուած՝ բոլորը փախան։ Բայց մեր ընկերներից սպանուեցաւ միայն Մուրադի որդի Քեալաշը եւ հինգ հոգի էլ ստացան անձնաս վէրքեր։

“Դու չես տխրելու, Սալբի, լսելով, որ ես մի թեթեւ վէրք եմ ստացել աջ թեւիս, դու կը մտածես, որ ան-ձնաս է դա, որովհետեւ այժմ համարձակ գրում եմ քեզ։ Բայց յայտնիր, խնդրեմ, մըսոր Սէյսունին, թող ուղարկէ իմ եւ ընկերներիս համար մի փոքր սպե-ղանիք։

“Բայց, իմ սիրելի, մի զարմանալի անցք, որ պատա-հեցաւ կռուի մէջ, մինչեւ այժմ ոլքան մտածում եմ, չեմ կարողանում ոչ մի կերպով մեկնել ինձ։ Դու գի-տես, անահաւատութիւնն ինձ համար ծիծաղելի բան է, դու գիտես, ես ամենեւին չեմ հաւատում այն գերբնա-կան կամ աներեւոյթ կոչուած զօրութիւններին։ Բայց եւ այնպէս, այդ գաղտնիքը մնում է ինձ համար անլուծելի, թէ ինչ էր այն, որ պատահեցաւ ինձ . . . ։ Մի ահարկու քուրդ, զարան մտած քարի ետեւում, ուղղեց դէպ ինձ

Digitized by Google

խր հրացանը, եօթն այլ զրդեր պաշարեցին իմ բոլոր-տիքը, վտանգը հեռու չէր ինձանից . . . : Հրացանները ճայթեցին, ես կորայ ծխի մէջ . . . բայց ինչ էր այն, չը գիտեմ . . . թէ որպիսի աներեւոյթ ձեռք ազատեց ինձ . . . մին էլ աչքս բաց եմ անում, տեսնում եմ՝ որ ես իմ ձիու վրայ, գտնվում եմ աւելի ապահով տեղում, իմ ընկերների մէջ . . . որոնք, ինձ միայնակ թողնելով, հեռացել էին դէպի քարափի միւս կողմը . . . : Թող ինայ այդ, գուցէ ծիծաղես ինձ վրայ, Սալբի, թէ երկիւղը ծնուցել է իմ գլխում երեւակայական ցնորք, դառնանք դէպի մեր խօսքը :

"Ահա այդպէս, իմ նազելի, նայիր, թէ կրթու-թիւնն ինչ հրաշքներ է գործում մի անուս ուսմիկ ամ-բոխի վրայ, եւ դու կը տեսնես, թէ մարդիկ միօրինակ ստեղծուածներ են, թէ նրանց մէջ մինը չկայ, որ ստեղ-ծուած լինի "անօթի ընտրութեան„ եւ միւսը՝ "անօթ ապականութեան„ :

"Ես իմ ընկերների մէջ ազգային սէրը զարթեցնելու համար, բացի այլ եւ այլ հնարքներ գործ դնելը, ուսում-ցել եմ նրանց մի քանի ազգային երգեր : Նրանք խորին ոգեւորութեամբ երգում են "Ա՛խ, թէ իմ ալեւոր հերքս սեւնային„ պարսկերէն երգը : Ես իմ հոգիս փառա-ւորվում է, երբ շատ անգամ կէս գիշերային պահուն, կամ արեւածագից առաջ, հեռու սարերի մէջ, լսում եմ մի հիանալի ձայն՝ "Ցէ՛ր, կեցցէ՛ դու զՀայս„ : Ահագին լեռնաժայռերը կրկնում են կախարդական երգի արձա-գանգը : Բայց մեր վրանարնակների սրտերն առաւել կարծր են քան թէ այն պինդ քարաժայռերը . նրանք չեն զգում եւ ոչ մի ինչ այդ երգից, նրանց համար այդպիսի ձայներ, ասես թէ չամիներ են հնչում . . . :

Digitized by Google

"Բայց նրանք մեղ չունին, երգերը յօրինած են այնպիսի լեզուով, որ անհասկանալի են ուժիկներին։ Այդ պատճառով ես մտածեցի յօրինել մի քանի տաղեր այդ երկրի աշխարհիկ բարբառով, որպէս զի մօտ լինեն ուժիկների սրտին եւ նրանց հասկացողութեանը. եւ այդ տաղերը, յոյս ունիմ, որ թէ կ'ազդեն եւ թէ կը ներգործեն նրանց սրտերին եւ զգացմունքներին։

"Բայց ես շատ ափսոսում եմ, իմ նաղելի, որ դու այստեղ չես. ես գիտեմ, որ դու էլ կ'աշխատէիր հաւաքել մի քանի նորահաս աղջիկներ եւ կ'ուսուցանէիր նրանց երգեր եւ իրանց ազգի պատմութիւնը։ Բայց սիրտս ճաքում է, երբ շատ անգամ լսում եմ, թէ ինչպէս այստեղ աղջիկները երգում են օտար ազգերի լեզուներով եւ մայրերը նանիկ են ասում օտար ազգի բարբառով։

"Բայց մի քանի օր առաջ, որսորդութեան համար, ես միայնակ, իմ ձիով, գնացել էի հեռու սարերի մէջ. այնտեղ, մի նեղ հովտում, հանդիպեցայ մի քանի աղքատիկ չադրներից, որ աւելի նման էին թափառական ղարաչինների չադրներին։ Աւազակները, կարծես թէ, դեռ նոր էին հեռացել այդ անբախտ չադրներից, այնքան տխուր եւ տրտում էր նրանց տեսքը։ Ես իմ ձիուց իջայ աղքիւրի մօտ՝ մի փոքր հանգստանալու. ինձանից ո՛չ այնքան հեռու կազմած էր մի վրան. արեւը խոր կիզող շողքերը ներս էր կաթեցրել նրա պատառոտած ճեղքերից։ Մի մանկահասակ կին, տխուր, բայց վայելուչ կերպարանքով, ճօճում էր իւր տղայի լանջիկը, որ քարշ էր տուած չադրի ելկաւ սիւներից։ Նա խիստ ցաւալի ձայնով եղանակում էր այս ողբալի օրօրոցի երգը։ Հնչող քամիները նրա ձայնը տանում էին հեռո՛ւ եւ խառնում մուզանների ձայնի հետ...։

Digitized by Google

"Նանիկ արա, սիրուն որդեակ,
Դու Նանիկ, Նանիկ, Նանիկ,
Նանիկ արա, շուտ մեծացիր,
Քեզ մատաղ է իմ կանիկ։

"Օրօրոցդ մոր ձեռքով՝
Մեղմիկ, հանդարտ՝ կը շարժեմ,
Քո մեռած հօր յիշատակը
Քեզ երգելով կը պատմեմ.

"Հայրդ էր հզօր Ռուբէն,
Այն քաջ — արին Երուանդ,
Նա ունէր դէպ իւր ցեղը՝
Շատ սէր, շատ գութ, շատ եռանդ։

"Մի օր հեծաւ իւր սեւ ձին,
Ելաւ նա դէմ ոսոխին,
Իւր հետ իւր քաջ ծառաներ՝
Գնաց վանել թշնամին։

"Թշնամին էր քաջն Ռավօ՝
Այն վիթխարի ժոդահան՝
Զարկեց հօրդ սրտի մէջ
Իւր նիզակը հոգեհան։

"Զարկեց հօրդ սպանեց,
Մեր հօտերն աւար տարաւ,
Վրաններըը կողոպտեց,
Նա մեզ ոչինչ չը թողաւ։

"Նանիկ արա, աչքի լոյս,
Նանիկ, որ շուտ մեծանաս՝

Digitized by Google

Ֆո անտերունչ քաջ ցեղին
Հօրդ փոխան տիրանաս։

"Մեր ծաղկաւէտ սարերը,
Մեր խոտաւէտ արօտներ,
Արածում են թշնամեաց
Եւ օտարներու հօտեր.

"Մեր պաղ, յստակ աղբիւրներ
Պղտորում են պիղծ շքթունք,
Մեր թշնամեաց կուրծքերը
Զարդարում են մեր ծաղկունք։

"Հպարտ, ազատ մեր ցեղը,
Անմթալի յիշատակ...
Ծռել է իւր պարանոց
Մեր յաղթողի լծի տակ։

"Իսկ մենք պանդուխտ, անտերունչ,
Թափառում ենք սարէ սար,
Օտար ձեռքերու կարօտ,
Հողէն եղած հաւասար։

"Անարգ, գերի, անպատիւ,
Որպէս պիղծ ազգ, անանմթի
Թքում են մեր երեսին,
Ապտակ զարկում մեր գլխին։

"Նանիկ կ'ասեմ, իմ հրեշտակ,
Նանիկ կ'ասեմ երգելով,
Նանիկ կ'ասեմ երգելով,
Ողբերգելով ու լալով...։

Digitized by Google

"Երբ մեծացար Աստուծով,
Ա՛ռ հօրդ նետ-աղեղը,
Հեծիր նրա նժոյգը,
Կրկին տիրէ քո ցեղը։

"Խնդրէ՛ հօրդ վրէժը
Այն սեգ, անգութ յաղթողէն,
Ա՛ռ նրանից հօտերը,
Արտաքսէ մեր սարերէն։

"Նորա երկաթի կուրծքի մէջ
Դու էլ ցըցէ՛ քո մըրախ,
Երկու բուռն արիւնից
Դու խմէ՛ ուրախ-ուրախ[1]։

"Խմէ՛, եւ թո՛ղ զովանայ
Քո մեր կրակուած սիրտը,
Խմէ՛, եւ թո՛ղ հանդարտուին
Հօրդ կարօտ ոսկերքը։

"Նանի՛կ կ'ասեմ, դու քնէ՛,
Ո՛վ իմ հրեշտակ արդար,
Քնէ՛, զի դու միայն ես
Մօրդ սրտին մխիթար . . . ։

---

[1] Խաչնարած ցեղերի մէջ արեան վրէժխնդրութիւնը մի սրբազան պարտք է համարվում եւ անցնում է սերնդից սերունդ։ Դա կատարվում է ազանէզու յետոյ՝ ոսոխի արիւնից խմելով, կամ ազանութեան գործիքը, եթէ արիւնոտ է, լիզելով։

Ի Է.

ՌՈՒՍՏԱՄԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

"Արդարեւ, դու իմ սիրելի Սալքի, կարդացիր այրի կնոջ օրօրոցի երգը, ես յուսով եմ, որ այդ կախարդական երգը միեւնոյն ազդեցութիւնն արած կը լինի քո սրտին, ինչ որ արաւ իմին. ես յուսով եմ, որ դու առանց արտասուքի, առանց սրտացաւութեան չես կարդացել այդ երգը:

"Բայց այդ ինչ ոգեշունչ երգ է, որ լսելի է լինում հեռուս, այս ասիական սարերի մէջ, այդ ինչ սգաւոր մայր է, որ այսպէս ցաւալի կերպով ճօճում է իւր որբիկի օրօրոցը, եւ այնպէս այրուած, կրակուած սրտով ցանկանում է՝ օր առաջ մեծանար իւր տղան եւ տիրէր իւր ցեղին ու հօր կորուսած երկրներին:

"Այդ հայէ մօր ձայնն է, Սալքի, այդ այն սգաւոր այրիի ձայնն է, որ այդպէս ցաւալի եղանակով հնչում է ասիական սարերի մէջ... բայց հայոց տիկնայքը ձայնակից չեն լինում նրան... եւ ա՛խ հայոց որդիների ականջներն են լսում այդ մոգական ձայնի ազդու հնչումները...:

"Ահա քեզ օրօրոցի երգ, ահա քեզ մի քաջազնական կրթութեան սկզբունք:

"Ամենից առաջ մայրը ցանում է իւր երեխայի ամուլ եւ դեռ բնութիւնից ոչինչ չընդունած գլխի մէջ ազատութեան սերմերը: Այդ բարեպատուղ սերմերը, — ոռո-

Digitized by Google

գուելով մայրական կաթինով, որ բղխում է մի ջերմ, ախտաբորբոք սրտից, — քաջազնական երակներից ծլում են, աճում են եւ հասունանում են երեխայի հասակի հետ:

«Առաջին խօսքերը, որ մայրը խառնում է իւր երեխայի օրօրոցի երգերի մէջ, չեն կրօնամոլական անհոգի եւ տաղտուկ քարոզներ եւ ոչ անապաշտական առասպելներ, այլ երեխայի հօր եւ նրա պապերի պատմութիւնը, իրանց կորուսած երկրների, սարերի, դաշտերի եւ հովիտների գեղեցկութիւնները, անտառների ու թփերի ծաղկաւէտ հոտաւէտութիւնները, իրանց հօտերի, անասունների կողպտուելը, թշնամու յաղթութիւնը եւ իրանց ցաւալի գերութիւնը . . . : Ամէն օր, ամէն ժամ, ամէն րոպէ երեխայի ականջները լսում են իւր մօր այդպիսի խօսքերը, եւ առաջին գաղափարը, որ կերպարանագործվում է նրա թարմ երեւակայութեան մէջ, է վրէժխնդրո-ւթեան կոպտագոյն ձեւը:

"Այդ մի սուրբ նախանձ է . . . Սալբի. այդ ազգասիրութեան աստուածեղէն նախանձն է, որ ամէն կրքերից առաջ պիտի բնաւորուի մեր երեխաների հոգիների մէջ:

"Բայց այս պաշտելի այրիի երեխան իւր առաջին աչքաբացից տեսել է իւր կողքին դրած հօր թուրը. այն միակ ժառանգական աւանդը, որ ձեռացել է իւր պապերից, իբրեւ մի նուիրական սրբութիւն: Այդ հզօր թրով կտրուել է երեխայի պորտը եւ նրա ազնիւ արիւնը խառնուել է իւր պապերի արեան հետ, որոնք անջնջելի նշաններով ճնացել էին այդ քաջութեան զէնքի վրայ . . . :

"Իմ սիրելի Սալբի, ես էլ քեզ հետ ծնուած ժամանակ, մեր մանկաբարձ դայեակը դողդոջուն ձեռքերով դրեց մեր խանձարուրի մօտ մի թուր . . . եւ այդ աւան-

դութիւնը մինչեւ այսօր կատարում են հայոց մանկաբարձները, բայց, ափսոս, ոչ իւր իսկական խորհրդով.... նրանք տուել են այդ խորհրդական իրողութեանը մի անապատական կերպարանք — որ դեւերը չը մօտենային նորածին մանկան եւ նոր ծննդականին: Ըստ այդպէս, իւր առաջին աչքաբացից՝ հայ մանուկն սկսում է սովորել անապատութիւն...:

"Բայց փափկութիւնը եւ անահաւատութիւնը՝ սկսեալ տղայութիւնից, չեն թուլացնում այդ այրւի որբկի հոգին ու մարմինը: Նա մեծանում է այնքան ամուր, այնքան անխորտակելի, որպիսի են ահագին որձաքարեայ ժայռերը, որոնք եղան նրա խանձարուրը: Նա մեծանում է այնքան ուղիղ եւ բարձրագլուխ, որպէս իրան շրջապատող բարձր եղեւիններըը: Աշխարհի փոթորիկները, կայծակների փայլատակումը, ամպերի բոմբիւնները երբեք չեն կարողանում խոնարհեցնել, խորտակել այդ ուղղաբարձ, բարձրադիտակ հասակը: Բայց երբ ճակատագիրը փոխում է նրա բախտը՝ նա աւելի սիրով գրկում է մահը, քան թէ իւր ոսոխի ոտքերը...:

— "Այդ այրին յիմար է, որ խօսում է իւր երեխայի ականջներին վրէժխնդրութեան խրատները, — ասում է ինձ մի քուրմ սեւ հագուստներով եւ սեւ սրտով, — որովհետեւ վրէժխնդրութիւնը մեղք բան է. պատճառ՝ մենք քրիստոնեայ մարդիկ ենք, մեր պարտաւորութիւնն այն է, որ չարութեան փոխանակ բարութիւն անենք եւ սիրենք մեր թշնամիներին:

"Գնա, կորիր, ասում եմ նրան բարկացած. թող վրէժխնդրութեան Աստուածը թափէ իմ գլխին կայծակ, կրակ, թող նա բանայ ինձ համար դժոխքի բերանը, բայց ես պիտի գոչեմ, աղաղակեմ այս անբախտ այրւի հետ՝

Digitized by Google

վըէժ, վըէժ . . . : Գնա՛, կորիր, սեւերես, կրկնում եմ ես. մի՛թէ այն վըէժխնդիրը Աստուածը, որ Ադամին դրախտից արտաքսեց արգելուած թուզն ուտելու համար եւ նրա գալոց սերունդը յաւիտենական դատապարտութեան տակ դրեց, աշխարհը չըհեղեղով կործանեց, Սոդոմն ու Գոմորը ծծումբով այրեց, իւր կամքին անհնազանդ լինողներուս համար վառեց գեհենի կրակը, մի՛թէ մի այդպիսի վըէժխնդիր Աստուածը կարո՞ղ է պատժել ինձ վըէժխնդրութեան համար: Ո՛չ . . . : Պատիւ եւ իրաւունք պաշտպանելը սուրբ բան է:

— "Ո՛չ, բարեկամ, դուք հետեւում էք հին օրէնքին՝ "Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման„: Բայց մենք, որպէս քրիստոնեայ մարդիկ, պիտի դալձնենք մեր աջ երեսը, երբ զարկեն ձախին. պիտի տանք եւ մեր վերարկուն, երբ պահանջեն մեր շապիկը . . . :

"Ցօ՛, մի թող տուր, էյ, թէ Աստուածդ կը սիրես, հէնց այդ խօսքերն նշան խեղճ հայի տունը քանդողները: Այսօր աշխարհում մի ազգ էլ չը կայ, որ հայի նման նեղութեան մէջ լինի: Շատ ազգեր, որ հայի կիսի չափ չը կան, ոչ մի ազգի առաջ չեն խոնարհեցնում իրանց անպարտելի գլուխը, այլ քաջութեամբ եւ թրի զօրութեամբ պահպանում են իրանց ազգային անկախութիւնը: Հապա հայը, միայն խեղճ հայը ամէն տեղ զերի, ամէն տեղ ոտքի տակ ընկած . . . հէնց հայը պիտի կատարէ իւր Փրկչի հրամանը. ով իւր թուրը բարձրացնէ, նա պիտի իւր անբասիր գլուխը դէմ տայ . . . :

— "Այդպէս է նրա հրամանը:

— "Շողայր, նա մի անտուն, անտեղ մարդ էր, եթէ դու էլ նրա նման լինես, քո որդիքդ սովից կը մեռնեն:

— "Նա ինքը կը պահէ իմ որդուց:

Digitized by Google

"Հա՛, կը պահէ, գնա՛ խաղաղութեամբ հողը մտիր, քո որդիքը միշտ կուշտ են... Հա՛, նա կը պահէ քո որդւոցը...:

"Կարճելով զըոյցներս իմ անտանելի խօսակցի հետ, դառնում եմ դէպի քեզ, իմ անգին Սալբի. բայց դու ներիր իմ մի փոքր անհաւատ խօսքերիս, ես կամենում եմ ասել՝ կրօնի ասած բանը չարաչար վնասել է մարդկութեանը եւ առաւելապէս հայերը կրել են քրիստոնէութեան վնասը:

"Արդարեւ, ես չեմ կարող ուրանալ քրիստոնէութեան օգուտները, որ նա հասոյց մեր ազգին, գիտեմ, քրիստոնէութիւնը եղաւ մի միջնապարիսպ եւ չը թողեց հայերը խառնուէին իրանց դրացի ազգերի հետ: Նա ազատեց հայերին կուռ գնալուց սասանեան պարսիկների մէջ, եւ Մուհամմէդի, Արաբիայի ախտալից որդու կրօնքը, ճարակելով բոլոր ասիական ազգերը, չը կարողացաւ ուտել, մարսել եւ հայոց ազգը. նա հեռու պահեց հայերին եւ խարեբայ Յոյների հետ խառնուելուց:

"Բայց հայոց աբեղաները մի այնպիսի խոտորնակի ընթացք տուին քրիստոնէական կրօնքին, եւ մի այնպիսի թոյլ, ստոր, փոքրոգի դիմակի մէջ պարուրեցին նրա ազատ հայեացքը, որով քրիստոնէութիւնը հայերի մէջ մի այլ հոգի չը կարողացաւ ներշնչել, քան թէ այն միակ ստրկութեան հոգին, որ եւ իրօք ստացան նրանք:

"Հայոց քահանայք միշտ քարոզեցին, թէ այս աշխարհս մի փուչ անցաւոր աշխարհ է, որ Աստուած ստեղծել է մարդու համար, որպէս մի բով, որի մէջ մարդը, ոսկերչի արծաթի նման, պիտի հալուի, մաշուի եւ զտուելով մաքրուի՝ մի նոր փառաւոր կեանքի համար մահից յետոյ...: Նրանք քարոզել են եւ այն առաստելական խօս-

քը, թէ հայոց ազգի վրայ լինելով մի անէծք իւր հին հոգեւոր հայրերից, նրա որդիներին այս աշխարհի մէջ չը կայ հանգստութիւն, այլ նրանք պիտի հալածուին, վիշտ ու նեղութիւն կրեն, տնից, տեղից, հայրենիքից պիտի զրկուին, միշտ գերութեան մէջ, միշտ թշնամու լծի տակ պիտի լինին, որպէս զի դրանցով ապաշխարութիւն լինի նրանց մեղքերին եւ ազատուին նրանց հոգիները:

"Ահա, այդպէս, իմ սիրելի, հայոց քահանայքը խոստանալով իրանց ժողովրդին մի նոր կեանք ամպերի միւս կողմում, միշտ հեռացրել են, միշտ սառցրել են նրանց սրտերն այս աշխարհից եւ չեն թոյլ տուել նրանց հաստատել իրանց համար երկրի վրայ հիմնաւոր կացութիւն, միշտ նրանց հրաւիրելով դէպի երկինքը: Ու այդպիսով, միշտ խոնարհութիւն քարոզելով, միշտ հեզութիւն քարոզելով, միշտ ազգատութիւն քարոզելով, թուլացրել են հայերի քաջալերական եւ աշխատասիրութեան հոգին:

"Աշխարհի երեւելի տիրապետողները չեն եղել քրիստոնեայ մարդիկ: Թէմուրլէնգը, Ատիլլան, Ջանգիսխանը, Նադր-Շահը, Աղէքսանդր Մակեդոնացին, — բոլոր հզօր աշխարհակալները մարդկութեան պատմութեան մէջ, — դու գիտես, Սալբի, ինչ հոգու, ինչ կրօնքի տէր մարդիկ են եղած: Բայց քրիստոնէութիւնն աշխարհ գալուց յետոյ դադարեցաւ ազգերի քաջագործութիւնները, քրիստոնէութիւնը կերաւ, մաշեց Հռովմայեցոց արեւելեան եւ արեւմտեան կայսրութիւնները:

"Մորամանկ Մուհամմէդը նոյնչափ Իսլամի հետեւողների մէջ պատերազմասէր եւ քաջութեան հոգի, խոստանալով իւր մարտիրոսներին ճէննաթի բանաստեղծական վայելչութիւնները. եւ շուտով Իսլամը տիրեց հին աշ-

Digitized by Google

խարհին։ Եւ հայոց քաջաղնական հոգին առաւել վառ-
վռուն փառքերով փայլում է նրա հեթանոսական դա-
րերում, որովհետեւ հին քուրմերը աստուածացրին վա-
հագնին, իսկ Տիգրանը, Արշակը եւ Մհերդատը դիւ-
ցազունք եղան, որովհետեւ պատերազմի դաշտերում սպա-
նուողները յոյս ունէին Օլիմպոսում ընդունել Աթենասի
եւ Արէսի ձեռքից նեկտար եւ փառաց պսակ։ Ահա այդ-
քան կրօնական քաջալերութիւն կար դէպի կռիւը։

"Հայոց եկեղեցին նոյնպէս երգում է իւր շարական-
ների մէջ անթառամ պսակ եւ անապական բաժակ ստա-
նալն այն քաջերի, որ նահատակուեցան Աւարայրի դաշ-
տումը։ Եւ հայոց եկեղեցին սրբոց դասն է դասում Վար-
դանին եւ նրա քաջ ընկերներին։ Եւ այդ կրօնական
ոգեւորութիւնը, այդ ջերմեռանդ քաջալերութիւնն էր,
որ պատճառ տուեց հայերին այնպէս միահոգի սպառա-
զինութեամբ մղել այն սաստիկ պատերազմը՝ Զրադաշտի
պաշտօնեաների հետ։ Բայց ես չեմ կարծում, թէ հայերն
այնպէս քաջութեամբ կարողանային կռուել, եթէ կռիւը
լինէր հայրենիքի եւ ազգի ազատութեան համար։ Բայց
այնտեղ թշնամին սպառնում էր նրանց կրօնքի կորուստը,
եւ կրօնասէր հայերն իրանց հաւատքի համար զոհեցին
այնքան շատ տղամարդիկ։

"Այդ խօսքերից, իմ Սալբի, դու կարող ես ապա-
ցուցանել, թէ կրօնքները եւ կրօնական պաշտօնեաները
կարող էին խլել ազգերից նրանց արիութիւնը եւ նրանց
քաջութիւնը եւ ընդհակառակը՝ կարող էին ոգեւորել
ազգերը դէպի քաջագործութիւններ։ Բայց երանի՛ այն
ազգին, որի կրօնքը քարոզում է այդ վերջինը . . .։

"Հայոց եկեղեցին ջերմեռանդութեամբ տօնում է
Վարդանի եւ նրա ընկերների յիշատակը։ Բայց այնքան

շատ հոգիները, որ մորթուեցան՝ Յոյների, Պարսիկների, Տաճիկների, Թաթարների, Մոնղոլների սրերով, դրանց յիշատակը կորած է . . . : Հայոց շալականներըը չեն անմահացրել դրանց անուններըը . . . եւ ոչ մի հայ եկեղեցական մարդ նրանց գործի մէջ չէ կատարել իւր գիշերային ժամերգութիւնը . . . եւ պատմութիւնը թոյլ, անհոգի բառերով խօսում է դրանց վրայ . . . :

"Օրօրոց . . . դա առաջին դպրոցն է մարդկանց որդիների. օրօրոցի երգ . . . դա առաջին դասն է, որ մայրերը խօսում են իրանց երեխաների ականջներին: Օրօրոցից պատրաստվում է մարդս լինել մարդ այդ բառի բազմախորհուրդ նշանակութեամբ: Բայց ի՞նչ խելք, ի՞նչ միտք, ի՞նչ զգացմունքներ կարող են ստանալ հայոց մանուկներըը այն օրօրոցների մէջ, ուր դնում են նրանց իրանց մայրերը: Երբ երեխան ծնուած օրից՝ նրա օրօրոցի դաստակից կախում են նրա կրծքի վրայ կախարդական բժժանք, յուդութուլունք եւ մի փոքրիկ խաչ . . . երեխայի ձեռքի խաղալիկը նրա մանկութիւնից մինչեւ նրա մահը, — երբ այդ խաչով քահանան դլուշում է, կնքում է հանգուցեալի հոդատամբարանը . . . : Մնահատ մայրերը տղայական հասակից ծանրաբեռնում են խեղճ երեխայի գլուխը սուտ առասպելներով — ծառայութիւն, խոնարհութիւն, համբերութիւն, ստրկական հնազանդութիւն, — այդ բառերը լսում է նա օրօրոցի միջից մինչեւ այն ժամանակ, երբ ասում են նրան՝ "հող էիր եւ հող դարձիր,,: Արդարեւ, մի խորհրդական խօսք հայի համար . . . պատճառ՝ այդ ազգը իւր կեանքում չէ ցոյց տուել որեւիցէ հոգեկան զօրութիւն, այլ միշտ ապրել է նա որպէս հող, քար եւ անշունչ մարմին . . . :

Digitized by Google

"Բայց այրի կնոջ մէջ, աղքատիկ վրանի տակ միտք կայ, հանճար կայ, զգացմունք կայ, կեանք կայ. նրա երգն այնքան ոգևլից, ախտաբորբոք եւ կրակոտ է, որպէս նրա հոգին, եւ այդ չաղլի միջից կը ծագի հայի Յոյսը . . . :

"Ես դառնալով իմ վրանը, Սալթի, իմ միտքը պաշարուած էր կախարդիչ երգի զօրութեամբ, ես բոլոր գիշերը չը քնեցի: Մի քնքուշ մուզա յանկարծ քսեց իմ երեսին իւր թեւքը եւ իմ երեւակայութիւնը վառուեցաւ, ձեռքս առայ գրիչը, գիշերային լռութեան պահուն, լուսնեակի լուսով գրեցի այս երգը, իբրեւ նուէր այն պաշտելի այրիին:

Օ՜ր օ՜ր կարդա, ում գթոտ մայր,
Մինչ մեծանայ քո որդին,
Հօր ոսոխից նա պահանջէ
Իւր վրէժը դառնագին:

Այդ ձայնիկը քո օր օրի,
Այդչափ տխո՜ւր եւ տրտո՜ւմ,
Բորբոքում է իմ արիւնը,
Կրակ է ձգում իմ սրտում:

Այդ կրակը ինձ այրում է,
Ինձ կը տանէ գերեզման . . .
Արդեօք կը լինէ՞ր՝ զինուորուհի
Քո թշնամու յանդիման:

Սիլիկիայի վեհ Առիւծին՝
Արժանաւոր ում կորիւն,
Քո սարերի ազատութեան
Նուիրէի իմ արիւն:

Անգործ, հանգիստ՝ մեր պատիւը
Քարշ է ընկած թուանգը,

Digitized by Google

Իւր պատենում՝ իմ սայրասուր
Թուրս ուտում է ժանգը։
Իմ նժոյգը՝ գետնին տալով
Իւր սմբակը տրուփում,
Պատերազմի տապարէզին՝
Նա էլ ինձ հետ փափագում։
Գումը շարժվում ամէն սրտի,
Ոըքան լինէր նա մեռած,
Երբ տեսնում է մի ամբողջ ազգ
Գերութեան մէջ շղթայած։
Հայոց որդիք խլացած են,
Լսել չը կամին քո ծր ծր,
Սարկութեան ծանր լծի տակ
Ճնշուել կամին ամէն օր։
Օ՜ր ծր, կարդա՛, թող մեծանայ
Առիւծենի մանուկը.
Պէտք է նրա ամրացնել՝
Ցկարացած բազուկը,
Որ կարենայ քաջի նման
Կրել հօր ներս-աղեղը,
Թշնամու ժանտ գերութիւնից՝
Ազատելու իւր ցեղը։
Կը գայ օրը . . . Հակայի պէս՝
Նա դէմ տուած իւր դօշը,
Դէպ պատերազմ կը բարձրացնէ
Ազատութեան դրօշը։
Եւ նրա հետ շատ քաջազունք
Ուխտ կ՚ուխտէին այն դաշնով. —
Հայրենիքի փրկութիւնը
Գնել իրանց արիւնով . . . ։

"Առաւօտեան շուտով, իմ թանկագին Սալբի, վեր առայ իմ գրած ոտանաւորը եւ սկսեցի դիմել դէպի այրի կնոջ չադրը: Ես գտայ նրան, երբ նրա մանուկը քուն էր եղած, եւ ինքը միայնակ, խորին մտածողութեան մէջ, նստած իւր վրանի մօտ հոսող աղբիւրի ափին, ականջ էր դնում արծաթափայլ ջրի խոխոջմունքին: Նա նոյն ժամանակ նմանում էր մի աղբիւրային յաւերժահարսի, որ, ասես թէ, նոր էր դուրս եկել ջրից:

"Ողջունեցի նրա առաւօտը եւ նուէրը տուի նրա ձեռքը: Խորին ուշադրութեամբ կարդաց ոտանաւորը: Ես նկատեցի, արտասուքն սկսեց հեղեղել նման թափուել նրա մեծ սեւորակ աչերից . . . : Ախ, որքան արտասուքներ լացել են այդ սգաւոր աչերը . . . :

"Ցանկարծ նա իւր լցուած աչքերը բարձրացրեց դէպի երկինք. "Փառք քեզ, Տէր„, ասաց նա խորին ջերմեռանդութեամբ, "որ գտայ ինձ կարեկից. այսուհետեւ կը մխիթարուեմ ես, պատճառ՝ կան հայոց որդիների մէջ եւ այնպիսիները, որոնք հասկանում են ինձ„:

"Բայց, իմ սիրուհի, դժբախտաբար ես չեմ կարողանում ամէն բան արձակ, համարձակ գրել քեզ. իմ օրագիրը լցուած է այս անբարբառ կէտերով . . . պատճառ՝ մեր լեզուն կապ է եւ մեր գրիչը կաշկանդուած: Մենք չենք կարող արտասանել՝ ոչ մեր ուրախութիւնը եւ ոչ մեր տրտմութիւնը. մենք չենք կարող՝ ոչ լալ եւ ոչ ծիծաղել. ախ, մեր բոլոր մտքերը, մեր բոլոր զգացմունքները՝ պիտի ճնշուին, պիտի խեղդուին մեր սրտի մէջ . . . :

"Բռնաւորի երկաթեայ գաւազանը միշտ եւ հանապազ հսկում է մեր գլխի վրայ. լաց ես լինում՝ — լո՛ւ կաց . . . ծիծաղում ես՝ — լո՛ւ կաց . . . խօսում ես՝ — լո՛ւ կաց . . . ախ, ծեծում են ինձ՝ — լո՛ւ կաց . . .

Digitized by Google

ապանում են ինձ՝ — լո՛—ռ կաց . . . իմ երեխանց ալիւնն իմ աչքիս առջեւ թափում են՝ — լո՛—ռ կաց . . . իմ ապրանքը խլեցին, տարան՝ — լո՛—ռ կաց . . . իմ տունը քանդեցին՝ — լո՛—ռ կաց . . . ախ, չեմ դիմանում այդ ցաւերին, ինչ անեմ. — ուռ, Թշուառ, քեզ ասում են՝ — լո՛—ռ կաց, հա՛, լո՛—ռ կաց, միշտ լո՛—ռ կաց, Թէ աւելի խօսես, լեզուդ կը կտրեմ, Թէ էլի խօսես, քեզ կենդանի հողում կը Թաղեմ եւ այնտեղ կը սովորես լո՛—ռ կենալ . . . : Այդ անգութ գաւազանն ամէն ժամ, ամէն րոպէ պատուում է մեր գլխի վրայ եւ դու միշտ լսում ես այդ զարհուրելի սպառնալիքը :

"Այդ սպառնալիքի ձայնը քո ականջներին զարկում է, քանի կենդանի ես. այդ երկաթի գաւազանը քո գլխի վրայ պտրտւում է, քանի շունչ ես քաշում . . . Մի մարդ էլ չը կայ, որ ասէ. չէ՞ խեղճ է դա, դա էլ մեզ նման մարդ է, Աստուած լեզու է տուել, որ խօսէ, խորհէ, մտածէ եւ իւր մտքերն արտայայտէ :

"Բայց ասես Թէ, ամէն մարդ իւր գլուխն է պահում, իւր փորի, իւր հանգստութեան համար միայն ծառայում. մի բան, որ նրան վերաբերեալ չէ, դրա վրայ չէ մտածում : Ես այդպէս, մարդիկ սառն աչքով են նայում իրանց նման մարդկանց չարչարանքներին, նրանց նեղութիւններին : Ես Աստուած ինքը սառն աչքով է նայում այդ ցաւալի տեսարանների վրայ. նա տեսնում է, Թէ պապկեղը շինել են անասուններին հաւասար, բայց աչքերը խփում, երեսը շրջում, անց է կենում . . . :

"Երբ մեր Աստուածը, երբ մեզ նման մարդիկ, ամենեւին հոգս չեն քաշում մեզ համար, որ մեզ ազատեն մեր նեղիչների ձեռքից, էլի մեր ցաւը մնում է մեր վզին, էլի հարկաւոր է, որ մենք մեզնից մի սիրտ, մի հոգի

լինենք, միմեանց օգնենք մեր անբախտ գլուխը ազատելու համար. ուրիշից, որ մեր միսը, մեր արիւնը չէ, մեզ ոչինչ օգուտ չը կայ: Որովհետեւ բոլոր ազգերը, որոնցից որեւիցէ օգնութիւն յոյս ունինք մենք, բոլորն էլ առանց մեզքի չեն: Երբ նրանցից մինը՝ ասում է իմ նեղչին՝ դժուրս հան աչքիդ միջից շիւղը, նա նրան պատասխանում է. — ուրեմն դու էլ դժուրս հան քո աչքի միջի գերանը, յետոյ խրատիր ինձ: Ահա այդպէս, նա նրան ասում է՝ կոյր ես, նա պատասխանում է՝ դու էլ քաչալ ես:

"Ես արդարես, այդ երեւելի տիրապետողներից, այդ վեթխարի հրէշներից ամէն մինը, առած իւր ձանկերի մէջ մի քանի մանր ազգեր, ծամում են նրանց լերդը, ծծում եմ նրանց արիւնը: Ղազմալի զոհերը ճչում են, աղաչում են, ոչ ոք չէ լսում նրանց ձայները. եւ նրանք լսում են ճակատագրական սպառնալիքը — լո՛ռ կաց . . . :

— "Այս կեանքի չարչարանքների փոխարէն միւս կեանքում Աստուած կը հատուցանէ. այդ ապաշխարութիւն է, մնաս չունի:

— "Դարձեալ երեւացար, սեւերես. անէծք քեզ, չար սատանայ . . . :

— "Ծոր երանելին քեզ օրինակ:

— "Գնա, կորիր, ասում եմ քեզ, քո խրատները մեզ պէտք չեն:

— "Իսրայելացիք քեզ օրինակ Եգիպտոսում:

— "Դարձեալ սկսեցիր, ձայնդ չես կտրելու:

— "Ապա որպէս Ժառանգեցին Քանանու երկիրը:

— "Տօ յիմար, նրանք ունեցան Մովսէս, Ահարոն, Նաւեայ որդին Յեսու, մինչ քեզպէսները պիտի հայէ խաւար տանը ճրագ վառուն, նրա ձեռքից բռնեն եւ գերութիւնից ազատեն:

Digitized by Google

"Բայց այդ սեւսիրտը լիրբ է. դա չէ ամաչելու, դա չէ հեռանալու ինձանից: Ես ինքս կը փախչեմ դրանից, եթէ ոչ, քանի կանգնած եմ դրա մօտ, միշտ իմ ականջներս ծակելու է դրա միջնադարեան զուռնայի ձայնը... տասն եւ ինը դար այդ զուռնան փչում են հայի ականջներին, բայց նա չէ զարթնում իւր քնից... նա քնած է եւ գուցէ կը քնէ անթուելի շատ ժամանակներ...:

"Մնաս բարեաւ, իմ Սալբի, գալոց օրագրութեանս մէջ կը տեսնուենք քեզ հետ:

ԻԸ.

ԹՈՒՄՏԱՄԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

"Եւ ես, իմ սիրուհի, ամէն օր տեսութեան համար՝ գնում եմ այն պաշտելի տիկնոջ վրանը. իմ խելքս տարել են՝ նրա պարզ ձեւերով, արդար սրտով, ընդունելութիւնները, եւ նրա ազնիւ հիւրասիրութիւնը հիացնում է ինձ:

"Օր ըստ օրէ ես ծանօթանում եմ այդ վրանաբնակների երեւելի տղամարդկանց, նրանց տիկիններին եւ նրանց պատկառելի ալեւորների հետ: Եւ ես տեսնում եմ այդ անմեղ ժողովուրդը, իրանց պարզ բարք ու վարքով, իրանց առաքինական բնաւորութեամբ, իրանց միամիտ սրտերով ձեւացնում են մարդկութեան առաջին ժողովուրդը, իւր կիսավայրենի եւ բնական կերպարանքներով: Եւ դրանց մէջ պատկերանում է բիբլիական աշխարհը՝ իւր Աբրահամներով, իւր Իսահակներով եւ իւր Յակոբներով: Եւ արդարեւ, ես նկատում եմ դրանց բոլորի մէջ, համարեա՛ երեւմուտ է անում մի շունչ եւ շարժվում է մի հոգի:

"Ես տեսնում եմ դրանց մէջ ալեւորներ դարաւոր հասակներով, բայց տակաւին ժիր, գործունեայ եւ աշխոյժ: Այդ ծերունի հսկաները, իրանց մարմնի երկաթի կազմուածքով, որպէս անմահ աստուածներ, միշտ արհամարհել են մարմնական տկարութիւնները: Ուրանք իրանց հարիւր քսան, հարիւր չիսուն տարեկան հասակներում եւս,

Digitized by Google

որպէս իրանց մարմնի անդամներ՝ չեն հեռացնում իրանց մօտից իրանց թուրը, իրանց թուանգը — իրանց կեանքի մտերիմ ընկերները, եւ այն մի զոյգ ատրճանակները, որ խնամքով խրել են իրանց հաստ գօտիների մէջ: Այդ հինաւուրց նահապետները, որպէս կենդանի պատմագրքեր, պատմում են, թէ քանի՛ հալածանքներ, քանի՛ չարչարանքներ եւ քանի՛ կոտորածներ է կրել իրանց ցեղը այնքան երկար թափառելով աշխարհի երեսին, եւ նրանց ցամաքած աչքերի մէջ պահուած են մի քանի կաթիլ արտասուք, որոնք շուտով գլորվում են նրանց փառահեղ, ապիտակ մօրուքի վրայ, երբ մտաբերում են ցաւալի անցեալը:

"Նրանց տղամարդիկն այնքան ամուր, այնքան պնդակազմ են, որ ձեւացնում են Հերքուլէսի չուգունից արձանները: Նրանք միանգամայն պատած պողովատի զրահներով, միշտ իրանց վրայ ունին զէնքեր: Նրանց ձիաները միշտ թամբած սպասում են վրաններին առջեւ, որ երբ պատահէ թշնամու յանկարծահաս յարձակմունք, շուտով քաջերը թռչեն նրանց վրայ եւ դուրս գան աւազակների դէմ:

"Նրանց կանայք բոլորն ունին բարձր նոճիների նման ուղիղ հասակ, նրանք աւելի նրբակազմ են, բայց ջլուտ եւ ոսկրոտ. ես չեմ տեսնում նրանց մէջ եւ ոչ մէկը, որ մսալի եւ հաստլիկ լինի: Նրանք ունին թուխ, կրակոտ աչքեր, բարակ ձեւ յօնքեր, մետաքսի նման փափուկ, բայց ղասայի նման սեւ եւ փայլուն ծամեր: Նրանց երեսները նիհար են, գորշ կարմրագոյն թշերով, որոնց կաշին փայլում է առաւել կոկուԹիւնից, բայց խիստ շատ վայելուչ եւ գրաւիչ հայեացքով: Այդ ախտալից կանայքը, այդ հայկազնեան Արտէմիսները, դու տեսնում ես շատ անգամ թեթեւաշարժ եղջերուների նման անհրկիւղ եւ

Digitized by Google

համարձակ վազվզում են բարձր եւ մեծ ապառաժների վրայ որսի համար. նրանք նոյնպէս կրում են զէնքեր, նրանք նոյնպէս կռվում են, երբ նեղում է նրանց թշնամին, երբ հարկաւորվում է պահպանել իրանց անասունները:

"Այս ոչ այնքան բազմաթիւ վրանաբնակները, իրանց կեանքի պարզ եւ բնական կերպարանքներով, ձեւացնում են նախկին մարդկութիւնը, որ ապրում էր միմիայն իւր հօտերով: Ոչխարների կաշիից պատրաստում են՝ մաճուն, սեր, կալագ, իւղ, պանիր եւ ժաժիկ. — դրանք բաւական են նրանց կերակուրների համար: Ոչխարների բրդից մանում են թելեր, որոնցից գործում են կապերտներ, օթոցներ, գորգեր՝ սփռոցի, վերմակի համար, եւ աբաներ, վերարկուներ, արխալուղներ, շալվարներ՝ հագնելու համար, ձեռնոցներ, թաթմանններ եւ գլուխը դնելու թաղիքէ փօլոշներ: Ուրանց միւռմ է գնել միմիայն հաց, այդ էլ փոխարինում են իրանց անասունների բերքերի հետ: Այծերի մազերից յօրինում են չուաններ եւ վրաններին պաստառներ:

"Բայց այդ բոլոր գործերը կատարում են կանայք: Ուրանց տղամարդիկն աւելի հանգիստ են: Ուրանց կանայքը միշտ կրկնում են իրանց սովորական առածը, թէ "կնոջ գործն է աշխատելը, տղամարդը պիտի հանգիստ ապրի, որ գիրանայ, զօրանայ կռուելու համար„: Ու այս է պատճառը, որ երբ նրանց տղամարդիկը կամենում են վշտացնել իրանց կանանցը, գնում են եւ անճաճկոյթ պառկում են սառը քարերի վրայ, որ հիւանդանան:

"Այդ բնութեան հաւատարիմ որդիների հագուստները, անտարակոյս, ունին մեր նախնի հայերի զգեստաձեւերը: Թաղիքէ երկայն փօլոշներ, փաթաթած ապարօշներով, դրած են գլխներին. հագած են լայն շալվարներ,

Digitized by Google

որոնց մէջ թողնելով իրանց վարտիքը եւ բաճկոնի կամ զգեստի երկայն դրօշակները, բաւականին ուռցնում են, եւ նրանց իշխանները՝ համարեա կիսաքարշ գետնից տանում են իրանց շալվարները: Մէջքները պնդած են հաստ գօտիներով, որից վերեւ հագել են կարճլիկ փալախա կամ գաւակի, եւ մի լայն վերարկուի (աբայի) մէջ ծածկվում են նրանք: Նրանց շապիկների թեւքերը, երկայն եւ լայն, քարշ են ընկած, որ եւ շատ անգամ փաթաթում են իրանց բազուկների վրայ:

"Նրանց կանանց հագուստներն աւելի պարզ են. մի շապիկ իջնում է մինչեւ նրանց ոտքերը. նրանց վարտիքի բերանը սրունքներից վերեւ պինդ քո-ղմայած է լարանով. շապկի վրայ հագած ունին անխոպլ կամ քնիշ՝ երկայն եւ բաժանուած դրօշակներով: Նրանց գլխի զարդերը ցուցանում են, թէ հայոց կանայքը հին ժամանակներից միշտ տովորութիւն են ունեցել կրել թագ եւ պսակ, որպէս մեր Զարեհաւանի կանայքը կրում են գօտի: Ուլունքներ, մատանիներ, գնդեր, ապարանջաններ, քթի օղեր կրում են համարեա բոլորը:

"Բայց այնքան բազմութեան մէջ ես չեմ տեսնում մի մարդ, որ կարդալ գիտենար: Մի բան, որ պակաս է դրանց՝ է ուսումը եւ կրթութիւնը: Բայց դու կը զարմանաս, իմ սիրուհի, թէ ասեմ որ դրանց մէջ կան եւ քահանայք, որոնք կարդալ չը գիտեն . . . : Այդ քահանայքը չեն որոշվում հասարակ ժողովրդից. նրանք նոյնպէս ունին իրանց գօտիների մէջ ատրճանակներ, եւ նրանց կողքից քարշ է գնում երկայն թուրը . . . : Ես քննեցի այդ քահանաներից մինի ուսումը. սուրբ գրքերից գիտեր միայն Ծէրունական աղօթքը եւ Երրորդութեան անունները. նրա հաւատքի հանգանակն էր այն, որ Աստուած

ստեղծել է երկինքը եւ գետինքը. նա միայն կառավարում է բոլոր աշխարհը, եւ ինքը, իւր թախտը դրած ամպերից վերեւ, քննում է արդարների եւ մեղաւորների գործերը: Նա Քրիստոսը նրա որդին է, որին ուղարկեց աշխարհ մեզ սատանայի գերութիւնից ազատելու համար, եւ աշխարհից վերանալուց յետոյ թողեց սուրբ Յաչը իբրեւ իւր օրինակը, որ մենք պաշտենք. այդ պատճառով այդ մարդիկն իրանց կոչում են առաւել խալպալաք, քան թէ քրիստոնեայ: Շկեղեցու խորհուրդներից նրանց յայտնի են միայն Մկրտութիւնը, Պսակը եւ Հաղորդութիւնը, որոնք քահանան կատարում է երեք անգամ Երրորդութեան անունը յիշելով:

"Նրանք ճանաչում են եւ մի քանի սրբերին, որոնց մէջ երեւելի են սուրբ Տիրամայրը, սուրբ Կարապետը, որի գերեզմանը Տարօնումն է, սուրբ Լուսաւորիչը եւ սուրբ Նշխարքը. այդ երեքին ճանաչում են որպէս Աստուծոյ վէզիլներ: Գիտեն եւ այլ սրբերի անուններ, որոնք Աստուծոյ ատեանում ունին զանազան բարձր եւ խոնարհ աստիճաններ, որոնց յանձնուած են մարդկանց զանազան տեսակ հսկողութիւնները:

"Դրանք ունին եւ մի հատ սուրբ Աւետարան գլխեայ եւ մի քանի մասունքներ, որոնք մեռած են աճում իրանց հետ, որպէս սրբութիւններ: Այդ մարդկանցից ոչ մինը չէ տեսած, թէ ինչ բաներ են դրանք, պատճառ՝ որ նրանք միշտ փաթաթուած են զանազան դոյներով թաշկինակների մէջ: Մի առանձին վրան ամէն մի իջեւանում կրում է իւր մէջ այդ սրբութիւնները: Եւ ամէն առաւօտ ջերմեռանդ վրանաբնակները, հաւաքուելով այդ վրանի առջեւ, մի քանի անգամ ծունր են իջնում, երկրպագութիւն տալիս, մի քանի անգամ խաչակնքում իրանց երեսները,

եւ այդ է նրանց աղօթքը: Իսկ այդ սրբութեանց խորանը եւ միանգամայն կացուցանում է նրանց ժամատունը:

"Հայկական բարբառը տակաւին չէ կորուսել դրանց լեզուի մէջ իւր հին ձեւերը: Նրանք տակաւին գործ են ածում իրանց խօսակցութեան մէջ՝ է, ը, ընդ, ա՛ռ նախադիրները: Նրանց խօսակցութիւնը խիստ արագ է եւ կենդանի. նրանց ձայնը զանգակի հնչիւն ունի:

"Վերջին փոթորիկները Փոքր-Ասիայի մէջ, կործանելով մեր Ռուբինեան թագաւորութիւնը, խլեցին մեր ազգի այդ մի հատուածն իրանց բնիկ աշխարհից, եւ երկար տարուբերելով աշխարհի վրայ, այժմ հասցրել են մեր սահմանակից սարերին. բայց ով գիտէ, մինչեւ ո՛ր պիտի քշէ, տանէ դրանց անգութ ճակատագիրը...:

"Այդ մարդիկը բնութեամբ խիստ կրակոտ են եւ աշխոյժ. սիրում են երգել, պարել, մանաւանդ դրանց կանայքը, եւ միշտ ոգեւորուած են կենդանի աւանդութիւններով իրանց ազգի եւ իրանց կրօնքի մասին: Ես յոյս ունիմ քաղել դրանցից շատ իրողութիւններ, որոնք լոյս կը տան մեր ազգի միջնադարեան եւ նոր ժամանակների պատմութեանը:

"Բայց մի ցաւալի կորուստ յանկարծ աղմկեց բոլոր վրանաբնակների ուրախութիւնը: Այսօր առաւօտեան շուտ գնացի իմ բարեկամ այրիի վրանը. ես գտայ նրան բոլորովին միայնակ նստած լաց լինելիս: Ցեանելով ինձ նա սրբեց իւր աչքերի արտասուքը, բայց նրա կերպարանքը տակաւին տխուր էր եւ մռայլուած:

— "Ի՞նչ է պատահել ձեզ, հարցրի ես:

— "Մի՛թէ չէք լսած. մեռա՛ւ Հասօն, այն մեծ եւ հռչակաւոր տղամարդը, պատասխանեց կինը յոգւոց հանելով:

— "Հասօն. մեռե՞լ է, կրկնեցի ես։

— "Հա՛, Հասօն, յառաջ տարաւ այրին. մեր ցեղի փառքն ու պարծանքը... մեր վրանաբնակների Աղան...։ Վա՛յ մեզ, վա՛յ մեր սեւ օրերին, այսուհետեւ էլ ինչպէս պէտք է ապրել՝ այդ հզօրը կորուսանելուց յետոյ...։

"Նոյն րոպէին նրա վշտալի թշերի վրայ երեւեցան արտասուքի կաթիլներ, նա ակամայ փղձկեցաւ։

— "Արժէր ափսոսալ մի այդպիսի անձը, հարցրի ես, որ իւր գործը՝ իւր կեանքի նպատակը շինել էր միշտ արիւն թափել։

— "Չէ՛, այդ մի ասէք. նա երբեք չէ թափել մի արդար արիւն, բայց գործ չունել իւր սուրը թշնամու առջեւ՝ այդ մի սուրբ բան է, եւ կողոպտել բերել նրա աւարը՝ նոյնպէս մեղք չէ։

— "Ի՞նչ էր պատճառը, որ մեռաւ այդ քաջը։

— "Ոչինչ... նա մեռաւ անարգ եւ անփառունակ մահով... հանգստութեամբ, իւր վրանի տակ, հիւանդութեան մահճի մէջ...։

— "Հապա ո՞րպէս պիտի մեռնիլ,,։

— "Ջրի կուժը պիտի ջրի ճամբին կոտրուի,,, ասում է մեր հօրերու առածը։ Քաջերը, որ թափել են այնքան շատ արիւններ, պէտք է արիւնով մեռնին, բայց դժբախտ Հասօն չը վայելեց այդ փառքը...։

— "Արդարեւ այդպէս է, պատասխանեցի ես մի զաղտնի համակրութեամբ յիշելով հոմերեան տողերը.

"Պարտ մարտընչել եւ մեռանել փառք են առյգ պատանւոյն,
եւ վէր եւ խոց սուր սրլաքաց զարդ գեղեցիկ են մահուն,,։

— "Բայց նա թողեց իւր ցեղի վրայ աւելի երախտիք, խօսեց կինը կարեկցութեամբ. տեսնո՞ւմ էք այդ լայն եւ

ընդարձակ հովիտը, այդ խոտաւէտ արօտամարգերը, նրա շնորհիւ մեր ոչխարներն արածում են այս սարերում. նա խլեց Ջալալինների այդ բոլորը։

— "Ի՞նչպէս, հարցրի ես։

— "Ի՞նչպէս... կրկնեց այրին հեգնութեամբ. — "զարքէ անօթ նինա,,, ասաց քրդի առածը։

"Այդ սրբազան առածը, Սալթի, որ շնչում է իւր մէջ պատերազմասէր հոգի, նշանակում է հայոց բառերով՝ "ոյժը, կամ զօրութիւնը, կամ քաջութիւնը՝ սահման չունին,,։ Մի այդպիսի առած եւս գործ էին ածում մեր նախնիքը, որ յիշեցնում է արժանայիշատակ Խորենեան ծերը. "սահմանք քաջաց — զէնք իւրեանց,,։ Բայց այդ առածն այժմ չէ լսվում եւ ոչ մի հայի բերանից... նա վաղուց լռուել է հայերի համար...։

"Ծերկանալով որ առաւօտեան է լինելու քաջի թաղումը, ես խոստացայ ներկայ գտնուիլ իմ ընկերներով, եւ ցաւալի զգացմունքներով հեռացայ նրանց վրաններից։

"Ես յայտնեցի Ծաղկաւանի խաչնարածներին այդ սգաւոր անցքը եւ առաւօտեան շուտով՝ բաւականին բազմութիւն՝ երկու սեռից ցանկացան ինձ հետ գնալ քաջի թաղումը կատարելու համար։

"Թաղման հանդէսը խիստ տխուր էր եւ ցաւալի. այստեղ ոչ մի քարացեալ սիրտ չէր կարող իւր արտասուքը զսպել, իւր սրտի ցաւին դիմանալ։ Սեւ պաստառներով պատած նաշի մէջ դրած էր քաջի դին. եօթը տղամարդ սեւ հագած տանում էին նաշը. դրանք մեռնողի ընկերներն էին։ Դագաղի առջեւից տանում էին հանգուցեալի նժոյգը՝ գլուխը, պարանոցը եւ թամբը սեւով պատած։ Նրա վրայ կարգով կախուած էին նրա տիրոջ բոլոր զէնքերը — նրա ահագին թուրը, թուանգը, թափանչէքը,

Digitized by Google

ղալխանը, մզլախը, երկաթի զրահը եւ գլխի սաղաւարտը։ Յօելացի երիվարն ընթանում էր տխուր եւ սրտաբեկ, կարծես զգալով, թէ իւր վրայ այլ եւս չէր նստելու նրա հսկայամարմին տէրը։ Նա էլ իւր աչքերից թորում էր արտասուք . . . ։

"Ժողովի յետեւից գնում էին մի կարգ վրանաբնակների բոլոր կանայքը՝ բաց գլուխներով, հերարձակ, մերկացրած իրանց կրծքերը։ Նրանք փետում էին իրանց գլխի ծամերը, նրանք փետում էին իրանց խոպոպիքն ու գանգուրները եւ թափում էին դագաղի առջեւ ճանապարհի վրայ . . . Նրանք կոծում էին իրանց կրծքերը, հող եւ փոշի էին ցանում իրանց գլխի վրայ, տխուր եւ ցաւալի ձայներով եղանակելով այսպիսի ողբեր.

"Ա՛յլ եւս պէտք չէ մեզի ապրել,
Խաւար արեւի երեսը տեսնել.
Կորա՛ւ մեր յոյսը, կորա՛ւ մեր փառքը.
Վա՛յ մեր սեւ օրին . . . Հողը՛ մեր գլխին . . .„։

"Նաշի յետեւից գնում էին բոլոր այր մարդիկը՝ գլուխները քարշ գցած, լաց լինելով, նոյնպէս իրանց կրծքերը ծեծելով, եւ նրանց գլխների վրայ ածած էր հող եւ մոխիր։

"Դագաղի բոլորտիքը շրջապատել էին հանգուցեալի ազգակիցները եւ նրա մերձաւոր բարեկամները, նրա կինը, որդիքը։ Ինչ որ դրանց դրութիւնն էր՝ դժուար կարելի է գրչով նկարագրել։ Աստուած ինքը հեռու անէ այդպիսի տեսարաններ . . . մազեր փետած, հագուստներ պատառոտած, աչք, երես ծուատած, արիւնաշաղախ, ամէն մինը մի քար ձեռքում անդադար բախում էր կուրծքը.

Նրանք թաւալվում էին գետնի վրայ նաշի առջեւ, հողերը, փոշիները ցանում էին իրանց գլխներին։

"Այդ ողբալի տեսարանը այրեց եւ իմ հետ եկած ծաղկաւանցոց սրտերը եւ նրանք բոլորը միաձայն սկսան լալ։ Ո՞նչ սիրտ կարող էր դիմանալ, ինչ աչք կարող էր իւր արտասուքը պահել, ամէն, քարերն էլ էին լաց լինում, ծառերը ողբում, թռչուններն ձայնակից լինում, հնչող քամիներն նրանց ողբը խլում եւ հասցնում էին երկնքի հրեշտակներին . . . ։

"Ճանապարհին մի քանի տեղ դադար առին եւ նաշը դրին գետին եւ լաց եղան։ Կանայքը հերթով գովաբանում էին հանգուցեալի քաջութիւնները եւ բոլորի սրտի մէջ կրակ էին վառում . . . մինչեւ իսկ նրա կինը տխուր եւ ողբալի ձայնով յառաջ տարաւ։

"(Ա՛խ, Սալբի, այստեղ կտրում եմ իմ խօսքը. այդ վրանաբնակների եւ ողբերն ունին իրանց քաջալերական ոգեւորութիւնները . . . ։)

"Այսպէս էր նրա ողբը.

— "Ափսո՜ս, որ այդպէս անփառք եւ անշուք,
փափուկ մահճի մէջ՝ փչեցիր քո հոգին,
Ափսո՜ս, որ մահը քեզի հանդիպեց
քո խաղաղ տնակի կամարի տակին։

"Դու մի քաջ էիր՝ արի եւ հզօր,
քաջերի սուրը թող նիւթէր քեզ մահ,
Կռուի դաշտիցը քո արիւնոտ դին
Ես տուն բերէի՝ սրտով գո՛հ, ուրա՜խ . . . ։

"Ինձ դառն չէր յայնժամ թափել արտասուք
քո արիւնաներկ դիակի վերան,

Digitized by Google

Ինձ ցաւ էր յայնժամ ողբերով երդել
Քո պարծանքներով կանգնած գերեզման։

"Չի հայոց տիկնայք ինձի կ'ասէին՝
Փառք, պատիւ քեզի, երջանիկ այրի,
Դու բախտաւոր ես կնիկների մէջ,
Չի կորուսիր այր՝ — քաջ, հակայ, արի։

"Ինձ քաղցր էր յայնժամ թափել արտասուք
Արնով զարդարուած դիակիդ վերան,
Եւ ծաղիկներով պճնել, զարդարել
Քո միշտ պաշտելի հողադամբարան։

"Թո՛ղ պատերազմում, քաջ հարքիներին,
Հարիւր գերիներ բերելով ներս,
Հազար ձիաւոր քեզ հալածելիս,
Քո կըրծքին դիպչէր թշնամու գո՛լլան[1]։

"Թո՛ղ կռուի միջում, Արարատայ դաշտում,
Ազգի, կրօնքի, հայրենեաց համար
Սուրը քո ձեռին, փառաւոր մահով,
Թո՛ղ դու զոհէիր քո արիւն արդար։

"Ինձ քաղցր էր յայնժամ իմ ձեռքով փակել
Քո այդ սեւ, հպարտ, շիջած աչերը,

---

[1] Այս եւ յաջորդող տունի փոխարէն Փուշը, I. հատ. "Ողբ զէյթունցի կնոջ" ստանաւորի մէջ զետեղուած է. —

Թող պատերազմում, կռուի դաշտում
Մեր հայրենիքի կռուի համար,
Սուրը քու ձեռին, փառաւոր մահով
Թող դու զոհէիր քո արիւն արդար։

Ծանօթ. հրատ. Ան. Րաֆֆի

Ջի հազար աչեր պիտ՝ արտասուէին
Քո հզօր թրից սպանուածները։

"Ջի ես գիտէի, որ դու թոռչրիր
Հարիւր գլուխներ թշնամու ուսերից,
Ջի ես գիտէի, որ դու զրկեցիր
Հարիւր կնիկներ իրանց այրերից։

"Ա՛յդ զարհուրելի խոր խոր սպիներ՝
Քո արուեստանոցը — վկայ եւ նշան,
Ձունի մի տղամարդ հայոց քաջերից,
Ո՛չ Քուրդ, ո՛չ Արաբ եւ ո՛չ մի Թուրքմեն։

"Թայց, ափսոս, քեզ հետ՝ ալ - վարդակարմիր
Դու մի թարմ սպի չը տարար գերեզման,
Դու մեռար, անբախտ, հասարակ մահով՝ —
Փափուկ մահճի մէջ... քո բարձի վերան...։

"Ողբը վերջացաւ։ Քահանան կատարեց աղօթքը։ Ժամանակ էր. երբ քաջի դին կամենում էին յանձնել հողին, նոյն լուսէին հանգուցեալի կինը կատարեց մի խիստ վսեմ եւ սրտաշարժ իրողութիւն. — նա կտրեց իւր գլխի ծամերի հիւսերը, իւր գանգուր խոպոպիքը, իւր գլխի բոլոր արծաթի եւ ոսկի զարդերը, դրեց դագաղի վրայ. "Քեզանից յետոյ թող մի այլ աչք չը տեսնէ իմ զարդասրանքը,,... ասաց նա։ Նաեւ դրեց մի փունջ ծաղիկ նրա նաշի վրայ... այդ նրա սիրտն էր, Սալբի, որ մեռնող ամուսինը տարաւ իւր հետ հողի տակ...։

"Հանգուցեալի վրանում պատրաստուած էր հոգեհայց. բոլորը հաւաքուեցան այնտեղ ճաշ ուտելու։ Երբ կերան, լիացան, քահանան կանգնեց ոտքի վրայ եւ խօ-

Digitized by Google

սեց մի կալճ, բայց ազդու ճառ. ‘‘Աստուծոյ կամքը գուցէ այդպէս էր եղած, եւ Թող օրհնեալ լինի նրա կամքը. արդարեւ, նա չը Թողեց երկար ապրել մեր վըտաններին առաջնորդին, բայց առանց դրա այդ քաջը շատ բարիք գործեց իւր կեանքում, նա Թողեց իւր յետքից միշտ գովելի յիշողութիւններ: Դուք, իմ սիրելիք, սրբեցէք արտասուքը ձեր աչերից, Թող մխիթարենք ընտանիքը պատուելի հանգուցեալի,,:

‘‘Քահանան նստեց: Ծերերից մի քանիսը ներս բերին մեռնողի տան եւ երկու տարեկան որդուն՝ հագնուած սգազգեստի մէջ, եւ նրա Թուրն ու կամարը: Քահանան օրհնեց այդ զէնքերը եւ մի ծեր պատերազմող կամարը կապեց նրա մէջքը, եւ քարշ տուեց հօր Թուրը: Այնուհետեւ բոլորը մի մի սկսան համբուրել նրա երեսը շնորհաւորելով նրա գլխաւորութիւնը,,:

ԻԹ.

ՍԱԼԲԻ ՆԱՄԱԿԸ

“Սիրելի Ռուստամ,

“Ես կարդացի քո օրագիրը, երբեմն ուրախանալով եւ երբեմն արտասուելով. ես քեզ հետ զգացի բազմախորհուրդ օրօրոցի երգի նպատակը այն այրի տիկնոջ. քո ոտանաւորով նուէրը հիանալի է...: Բայց, ափսոս, այժմ չեմ կարող գրել քեզ իմ զգացմունքները քո թղթից օրագրի վրայ. ուրիշ ժամանակի թողնելով այդ, այժմ շտապում եմ յայտնել քեզ մի նոր խաբար, որ վերաբերում է ինձ եւ քեզ:

“Դու չը ծիծաղես, սիրելի Ռուստամ, իմ այս անքաղաքավարի խոստովանութեանս վրայ. — ինձ այժմ յայտնուել է մի նոր սիրող...: Ի՞նչ ես կարծում, ո՞վ է դա. — Աւազակեանց Սոլոմոնը, այն անզգայ յիմարը, այժմ սկսել է սիրել ինձ...: Այդ մի նոր լուր չէ՞... Ներսիս, որ փոխանակ պատասխանելու քո սրբազան օրագրին, գրում եմ դատարկ բաներ: Որովհետեւ ես առանց քո գրելու գիտեմ, որ Հայի օրը վաղուց խաւարել է եւ Հայի աստղը վաղուց նսեմացել է...: Ես առանց քո գրելու գիտեմ. մեր ականջներին զարկում է մի օրօրոցի երգի ձայն, այդ խրախուսական ձայնը՝ Հայաստանի մօր ձայնն է...: Բայց դու տեսնո՞ւմ ես այն անթիւ, անհամար Հերովդէսները, որոնք, դեռ չը ստուգած մոգերից

Digitized by Google

— իմաստուններից մի այդպիսի գո՞ղ-ակո՞ղ-ն, հրամայում են կոտորել բոլոր մանուկներին, որպէս զի, նորածինը եւս նրանց հետ կորչի . . . : Ես չեմ կարողանում աւելի պալող գրել քեզ. ստոյգ ես գրել, մեր լեզուները կապ են, մենք դատապարտուած ենք մշտնջենաւոր համրութեան. պատճառ՝ Զաքարիայի պատիժը եկել է մեր գլխին . . . ուրեմն մի նոր Ծովհաննէս պէտք է, մկնչեւ արձակուին մեր լեզուների կապերը . . . : Դառնանք դէպի մեր խօսքը:

"Աւազակեանցը, միով բանիւ, խնդրել է իմ ձեռքը, ուրիշ խօսքով, նա միտք ունի ինձ հետ պսակուելու: Նրա մի այդպիսի խորհուրդը յառաջագոյն յայտնեց ինձ նրա քոյրը, որ, որպէս երեւում է, եղբօր նպատակը կատարելու համար, յանձնուած է տիկին Սալամիխի մօտ ուսանելու օրինակով: Բայց մի քանի օր առաջ մի անգք բոլորովին յայտնի կացոյց նրա միտքը: Ես հարկաւոր եմ համարում գրել այդ մի լաւ միջոց: — Ես մեր այգումն էի, եւ նստած մի ծառի տակ, փունջ էի կապում ծաղիկներից, որ նոր բուսել էին հալուած ձիւնի տակից: Մեր այգեպանը գնացել էր հեռու, այգիի խորքումը կորում էր որթերը. ես միայնակ էի: Յանկարծ տեսայ այգիի ցանկապատից ներս սողաց մի մարդ եւ մօտեցաւ. ճանաչեցի, Աւազակեանց Սոլոմոնն էր: Նա սկսաւ մեզ գալ այգիում: Ոչը ո՛չ ոք չը տեսաւ, եւ կարծելով ես միայնակ եմ, տեսայ, ուղղակի եկաւ ինձ մօտ: Ես ամենեւին ընդունելութեան նշան ցոյց չը տուի նրան, բայց նա ինքնագլուխ նստեց ինձանից մի փոքր հեռու խոտերի վրայ: Ոչկար այնպէս նստած լուռ նայում էր դէպի ինձ, բայց երբ հասկացաւ, որ ես իրան ուշադրութիւն չեմ դարձնում, խօսեց. — "Ախր անողորմ էք, աղջիկ պարոն, չէք մատուցանում ինձ գոնեա մի վարդ":

Digitized by Google

"Ես իսկոյն հասկացայ նրա ինչ խորհրդով ինձ մօտ գալը. այդ պատճառով, մտածեցի, նրա բերնի համը տալ։

— "Ես ուրիշի համար եմ պատրաստում այս փունջը, ասացի սառնութեամբ։

— "Բայց ես այժմ ձեզ հիւր եմ եւ հիւրի պատիւը սուրբ բան է, պատասխանեց նա։

— "Նա՝ որ դռնից չէ ներս մտնում, այլ պատից է վեր գալիս, գող է եւ աւազակ, ասում է գիրքը։

"Նա բարկացաւ։

— "Դուք շատ անքաղաքավարի էք, ես խնդրեցի ծաղիկ, ասաց նա վշտացած ձեւով։

"Բարկութիւնը խռովեց եւ իմ արիւնը, այդ պատճառով բոլոր քաղաքավարութիւնները մի կողմ դնելով, աւելի կոշտութեամբ պատասխանեցի նրան.

— "Ներեցէք, պարոն, դուք տակաւին այն արժանաւորութեանը չէք հասած, որ կարող լինիք իմ ձեռքից ընդունել՝ ոչ թէ ծաղիկ, այլ եւ փուշ։

— "Ա՛ս... Մելիք Պիլատոսի որդի՛ն... այս գաւառի իշխանը... արժան չէ՞ ընդունել ձեր ձեռքից եւ փուշ..., գոռաց նա կատաղի եղանակով։

— "Արդարեւ, ձեզ արժան է Յէր-Առաքելենց Ռուստամը, այն արիւնախում սրիկան..., կցորդեց նա։

"Բայց ես, կամենալով աւելի խոր խոցել նրան, պատասխանեցի.

— "Անպիտան դուք, ինչպէս էք համարձակվում առանց ահ ու դողի բերան առնել այն պաշտելի տղամարդի անունը, որին այնքան սիրում եմ ես։

"Երբ նա նշմարեց, որ խստութեամբ չէ կարող հալմոզել ինձ, տեսայ, ստրկաբար ծունկ իջաւ իմ առջեւ եւ կամենում էր համբուրել իմ ոտքերը։ Սերժեցի ես այն

Digitized by Google

փոքրոգին եւ թոյլ չը տուի որ նրա սիրտը շրթունքը մերձենային ինձ: Բայց նա մերկացոյց իւր դաշոյնը, դրեց իմ առջեւ. — "Երբ դուք այդպէս անխիղճ էք, ասաց նա. երբ չէք կամենում ձեզանով բախտաւորել ինձ, ուրեմն առէք այս սուրը եւ այդ մահու գործիքով հատուցէք մի խորին հարուածը իմ սրտին, որ այդպէս սաստիկ կերպով զարկում է ձեզ համար... Թող դադարէ նրա զարկը... եւ այդ պարծանքը կը հանգստացնէր ինձ գերեզմանի խորքում, թէ սպանուեցայ Սալեմի ձեռքով...:

— "Հեռացէք ինձանից, ասում եմ ձեզ, ես չեմ կամենում տեսնել ձեր երեսը, սպառնացայ նրան: Ինչու էք խռովում իմ հանգստութիւնը, ինչո՞ւ ի զուր սոսրացնում էք ձեզ. հաւատացնում եմ ձեզ, ո՛չ ձեր փառքը, ո՛չ ձեր հարստութիւնը եւ ո՛չ ձեր այդ փոքրոգի, ստորաքարշ կեղծաւորութիւնները, ոչ ինչ բան ձեր կողմից՝ չեն կարող խաբել ինձ...: Եթէ կրակը եւ վառօդը կ'ունենային որ եւ իցէ ընկերութիւն, այն ժամանակ եւ դուք կը վայելէք այն փառքը՝ կոչուիլ Սալեմի փեսայ:

"Երբ նա կամենում էր իւր աղուէսաբարոյ շողոքորթութեանց երկրորդ փորձն անել, յանկարծ ծառերի յետքից երեւան եկաւ Ծերունի Մարտիրոսը, մեր այգեպանը, հազալով եւ փռշտալով, իսկ կեղծաւորը աներեւութացաւ թփերի մէջ:

"Այդ անգքը եղաւ ինձ ամենօրեայ մտածութիւններին նիւթ եւ ես սպասում էի, թէ ինչ է լինելու դրա վերջը: Մինչեւ ներկայ օրերումս հարանիք էր մեր դրացու տանը, մի գիշեր ես էլ էի հրաւիրուած այնտեղ: Ոտրահաս աղջիկներ եւ մանուկ պատանիներ պար էին բռնած. տեսայ ինձ մօտեցաւ կրկին անգամ այն յիմարը եւ խնդրեց իմ ձեռքը պար բռնելու. ես մերժեցի նրան

այս մի քանի խօսքերը նրա ականջներին հասցնելով. "Ծիմա'ր, դուք արդէն առել էք ինձանից ձեր առաջին անմոռնալի վարձը, դարձեալ լըրանում էք վշտացնել ինձ„:

"Միւս օրը առաւօտեան մի անծանօթ կնոջ ձեռքով ստանում եմ մի նամակ. ահա, նրա խօսքերը բառ առ բառ հաղորդում եմ քեզ.

"Անխիղճ եւ անողորմ օրիորդ,

"Ես մոռանում եմ այն բոլոր դառնութիւնները, որ դուք պատճառել էք ինձ եւ դարձեալ դիմում եմ դէպի ձեզ սիրոյ խօսքերով, յուսալով, թէ ձեզանում նոյնպէս գտնվում է կարեկից սիրտ: Սալլի, աղաչում եմ ձեզ, մի թողէք ինձ երկար տանջուել. ձեր ձեռքումն է այժմ իմ մահը եւ իմ կեանքը . . . : Ցախախնամութիւնը գրել է ձեր ճակատի վրայ ոսկի տառերով. — Ո-ո-ւ նշ է+: Բայց, Սալլի, ես ցաւում եմ, դուք անուցանում էք ձեր սրտի մէջ սէրը մի տղամարդի, որ խիստ աստելի է ինձ: Դուք չէք կարող կատարել ձեր անխոհեմ նպատակը: Ձեզ համար մի ճար կայ. — ընդունել իմ յե-ւը: Բայց եթէ դուք ընդ երկար կը մնաք ձեր կամակորութեան վրայ յամառած, անտարակոյս պատճառ կը լինէք երեք անպարտ զոհերի՝ իմ, +ո ե- +ո «ւրուածի . . . : Ես սակաւ գրեցի, դուք շատ հասկացէք:

"Սպասում եմ ձեր պատասխանին:

"Ս. Բ. Աւազակեանց„:

«Ես իսկոյն գրեցի հետեւեալ պատասխանը եւ տուի գրաբերին.

Digitized by Google

"Պարոն,

"Ես, այլ եւս չը կարողանալով տանել ձեր վշտացուչից խօսքերը, առաջարկում եմ ձեզ Ղնաիւխ-մուտքից յետոյ, գիւղից դուրս, սպասելով ձեզ կալերի դաշտում„:

"Սալբի„:

"Երբ արեւը մայր մտաւ, ես, հաստատ միտքով դիտաւորութեանս վրայ, հագուստս փոխեցի, իմ հանգուցեալ եղբօրս զէնքերը վեր առայ եւ երբ մութը մի փոքր պատել էր աշխարհը, ես լուանի ծերացած լուսով նրան սպասում էի կալերի դաշտումը, ինձ հետ ունենալով մեր ծառան: Տեսայ, նա երեւեցաւ մի քանի մարդկանց հետ: Երբ մօտեցած էր ինձ, երբ տեսաւ ինձ, խօսեց. "Դուք էք, Սալբի. ներեցէք, խնդրեմ, ես չը կարողացայ ճանաչել ձեզ. իրաւ, ձեզ չէ կարելի որոշել մի նորահաս Զելքէս իշխանաձնից: Բայց չէք վախենում այսպէս ուշացած... այստեղ միայնակ...:

— "Ես վախնամ. տեսում էք այս խանջալը, այս կարաբինան, այս ատրճանակները, պատասխանեցի ես, զէնքերս ցոյց տալով:

— "Ես հանած էի համարում, բայց դուք, իրաւ, պատրաստուել էք կռուելու, ասաց նա հանդարտութեամբ: Բայց մոռացել էք, որ մեր նահապետական կոչուած բանը մինչեւ այսօր սովորութիւն չէ եղած մեր երկրում, ուր միայն, որ արգելուած է: Բայց դուք, փոխանակ այդ մտքի գործիքները ձեզ վրայ կրելու, առաւել լաւ էր փնջերով հանդիպէիք ինձ այստեղ:

— "Վաւոդը միշտ բուրում է վարդի անուշահոտու-

Digitized by Google

թիւն, երբ գործ է դրվում նա մեր ատելիների դէմ, ասացի ես։

"Նա նշան արաւ. պատի յետքից, ուր թագնուած էին, դուրս եկան մի քանի հոգիներ. — "Ցափշտակեցէք,,, հրամայեց նա։ Ուրանք յարձակուեցան ինձ վրայ։ Ջուր էր ինձ իմ զէնքերով պաշտպանել իմ անձը։ Ուրանք շրջապատեցին ինձ . . . ։ Բայց մինչեւ այժմ ես չեմ կարողացում երեւակայել, թէ ինչ հնարքով պրծայ նրանց ձեռքից . . . կարծես թէ մի անէքսպլն յեռ ազատեց ինձ . . . ։,,

* * *

Մինչ օրիորդ Սալքին գրում էր իւր նամակը իւր սիրողին, Աւազակեանց տանում անց էր կենում հետեւեալ խօսակցութիւնը.

— Դուք չէք հաւատում, Ռէյս, նա կատարեալ դեւիկ է, խօսեց Սոլոմոն-Բէկը։

— Ո՛չ, ձեր մարդիկը քաջութիւն չեն արած, եթէ ոչ՝ խիստ դիւրին էր նրան յափշտակել, պատասխանեց պարոն Վասակեանը։

— Իմ մարդիկը, դուք գիտէք, կարող են բռնել եւ յափշտակել կենդանի առիւծներ, կատաղած արջեր, բայց այդ սատանի ծիծ կերածը, կարծես թէ աներեւութացաւ մեր միջից, որպէս ուրուական։

— Արդէն անցել է, դուք կորուսիք յաջող միջոցը։

— Բայց ես կը մեռնիմ յուսահատութիւնից . . . ։

— Եթէ դուք կ'ընդունէք իմ խօսքերը, որը դարձեալ մեր ձեռքում է։

— Դուք միշտ յուսադրում էք, բայց . . . ։ Եւ նրա ձայնը խեղդուեցաւ շնչափողի մէջ։

Digitized by Google

— Անհամբերութիւնը սեպհական է թուլասիրտ եւ փոքրոգի մարդիկներուն, պէտք է ունենալ մտքի հաստատութիւն եւ հեռատեսութիւն, պատասխանեց պարոն Վասակեանը։

— Մինչեւ ե՞րբ . . . ։

— Մինչեւ դուք հասած կը լինիք ձեր նպատակին ։

Սոլոմոն-Բէկը լուռ կացաւ ։

— Գիտէք, աղա, յառաջ տարաւ պարոն Վասակեանը, մեր մինչեւ այս րոպէիս խորհած բոլոր հնարքները՝ որսալու օրիորդ Սալբին, բոլորն ի գուր անցան։ Աշխարունու տանից մեղ օգուտ չեղաւ։ Այժմ պէտք է փոխել առաջին մտքերը եւ մտածել նոր հնարքներ։ Մեր մի միայն յոյսը, որ ճնացել է, է նրա մայրը։ Մենք կը սկսենք այսուհետեւ ներգործել նրա մօր վրայ. երբ կարողացանք շահել նրա կամքը, այնուհետեւ ոչինչ չէր մնում նրա աղջկան։ Տիկին Թարլանը աւելի ժլատ է քան թէ ջհուտ։ Դուք այդպէս պիտի չը սեղմէք ձեր քսակի բերանը. այսուհետեւ արծաթն պիտի լինի մեր լարած մեքենաների շարժառիթը։ Ես վաղուց մտածել եմ մի հնար, որով տիկին Թարլանը կարօտութիւն կ'ունենայ փողի. երբ այդ կատարուած է, այնուհետեւ գործը կ'երթայ իւր կարգով . . . ։ Մենք այժմ խիստ կարճ ժամանակ ունինք մեր ձեռքում . . . մի ամսից յետոյ մեր յոյսը կորած է . . . որովհետեւ, Ռուստամը կը պսակուի օրիորդ Սալբիի հետ, այնուհետեւ ոչինչ չէ կարելի անել . . . ։

— Ես չեմ կարծում, որ իմ փափաքը կատարուի, ասաց Սոլոմոն-Բէկը երկար լռութիւնից յետոյ։ Որովհետեւ այդ աղջիկը ոչինչ բանով չէ կարելի խաբել. նա մի երկաթի պնդութեամբ հաստատամիտ աղջիկ է ։

Digitized by Google

— Ես ասացի, թէ աղջկայ հետ գործ չունինք այսուհետեւ, պատասխանեց պարոն Վասակեանը։ Եւ եթէ մինչեւ այսօր մտածել ենք օրիորդ Սալբիի կամքով շինել բանը, այդ մեր անխելքութիւնից է եղած, որովհետեւ Ասիայում աղջիկների ու տղամարդերի կամքը ամուսնութեան մասին ոչինչ նշանակութիւն չունի. նրանց կամքը՝ նրանց ծնողների սրտումն է. նրանց ընտրութիւնը՝ կախուած է իրանց ծնողների հաճութիւնից։ Դուք լսել էք մինչեւ այսօր Պարսկաստանում մի աղջիկ իւր կամքով ընտրէր փեսայ, կամ թէ մի տղամարդ ինքնագլուխ իրան կին ածէր։ Ուրեմն ինչ շահ կար մեզ աշխատել շահելու օրիորդ Սալբիի կամքը, երբ նրա մայրը կարող էր իւր աղջիկը ամէն մարդու տալ։ Եւ օրիորդ Սալբին իւր կողմից ոչ մի իրաւունք չունէր իւր մօրն ընդդիմանալու։

— Ձեր խօսքերն ստոյգ են, Ռէս, մենք մինչեւ այսօր սխալուեցանք, ի զուր ժամանակ կորուսինք։ Արդարեւ, Ասիայում ծնողքներն ո՛չ միայն կարող են իրանց աղջիկներն ուզած մարդին տալ կնութեան համար, այլ եւ վաճառել ստրուկի, գերիի նման։

— Ես ուրախ եմ, որ դուք հասկացաք իմ միտքը, առաջ տարաւ Ռէսը, բայց արդեօք կարո՞ղ եմ հասկացնել ձեզ, որ ձեզ պէտք է յանձն առնուլ եւ մեծ զոհաբերութիւն։

— Միթէ փողը կարո՞ղ էր մի բան շինել այստեղ։

— Ի՞նչ էք խօսում, օրհնած, ես փողի մէջ ճանաչել եմ մի վերին աստուածեղէն զօրութիւն. ի՜նչ անհնարին գործեր կան, որ չէ կատարում արծաթը...։

Պարոն Վասակեանի վերջին խօսքերը խիստ ծանր էին պատանի Աւազակեանցի սրտին. նրան դժուար էր

այնպէս շռայլաբար բաց անել իւր քսակի բերանը, որով-հետեւ նրանում դրուած էր եւ նրա հոգին, որ իսկոյն դուրս էր թռչելու արծաթի հետ: Բայց օրիորդ Սալբիի սէրը, առաւելապէս նրան խելքից հանած լինելով, քան ոսկին, ակամայ յօժարուեցաւ Ռէսի խորհուրդին:

— Ես ասացի, թէ մեզ պէտք է շահել տիկին Թարլանի կամքը, պատասխանեց պարոն Վասակեանը իւր սովորական հանդարտութեամբ: Որպէս զի կարողանանք շահել նրա կամքը, պէտք է պարտաւորացնել այդ կինը արծաթով: Ու այդ իրողութեան մի կարգին կերպարանք տալու համար՝ ես մտածել եմ ահա թէ ինչ հնարք:

— Ես վաղուց գիտեմ որ տիկին Թարլանի հանգուցեալ այրը, վարպետ-Պետրոսը, հաստատ գրաւատոմսակով՝ հազար թուման պարտք է թողել Միրզա-Փաթալի պարսկին, որ եւ մինուճար է նրա կնոջ վրայ մինչեւ այսօր: Բայց է, տիկին Թարլանը չունի այնքան կարողութիւն, որ կարողանայ վճարել մի այսքան ծանր պարտք. դրա համար Միրզա-Փաթալին պարտաւորուած է տիրել իւր գրաւները, այսինքն՝ Յովասափենց տունը եւ նրանց այգին, տիկին Թարլանի միակ ժառանգութիւնները, որ են եւ նրա ընտանիքի ապրուստի միակ աղբիւրները: Միրզա-Փաթալին մտերիմ բարեկամ է ինձ, ես մտադիր եմ խնդրել նրան, այս օրերում տիրէ գրաւները, որ նրա գրաւատոմսակի պայմանով այժմ պատկանում են պարտատիրոջը: Տիկին Թարլանը զրկուելով իւր տանից, կորուսանելով իւր այգին, այլ եւս չէ կարող ապրել, այսինքն՝ կ'ընկնի անբախտ աղքատութեան մէջ: Կարօտութիւնը ու չքաւորութիւնը խոնարհեցնում է մարդիկ: Մենք՝ յայտող միջոցը որսալով՝ կ'առաջարկենք նրան ձեր օգնութիւնը, եթէ դուք պատրաստ էք վճարել Միրզա-Փաթալիի պահան-

ջելի արծաթը, եւ յետ առնելով նրա տիրած գրաւները, դարձնել տիկին Թարլանին, այն պայմանով, երբ նա կը հաձէր իւր աղջիկը տալ ձեզ կնութեան։ Ես դուք այդ մեծահոգութիւնը կատարելէն յետոյ, տիկին Թարլանը ուրախութեամբ կը ցանկար ունենալ ձեզ նման փեսայ։ Ես օրիորդ Սալբին անտարակոյս սիրելու էր ձեզ, երբ պատճառ կը դառնայիք նրանց ապրուստի կրկին ապահովութեանը։

Սոլոմոն-Բէկը երկչոտ աչքերով նայում էր պարոն Վասակեանին եւ դողում էր բոլոր մարմնով։ Սէրը եթէ չը լինէր փոքրոգի մարդերի մէջ այնքան զօրեղ, պարոն Ասաքեանցը ոչ մի պայմանով չէր համաձայնուելու այդ նրա համար ամենածանր զոհաբերութեանը։ Բայց նրա յիմար գլուխը այնպէս խռովել էր օրիորդ Սալբէի կախարդական սէրը, որ այժմ նրա աչքում ոչ մի բան բացի նրանից արժէք չունէր։ Նա հրամայեց, նրան տուին ղէյլան, եւ մի քանի շունչ ծխելէն յետոյ ասաց. — Ես յօժար եմ, Ռէչ, ես ոչ մի բան չեմ խնայում, միայն թէ կարողանայի շահել օրիորդ Սալբէի սէրը։

— Շատ լաւ. այժմ ինձ մնում է կապել ձեզ հետ եւ մի դաշինք, այսինքն՝ դուք յայտնի կացուցանէք, թէ որքանով կը վարձատրէիք իմ ծառայութիւնը, հարցրեց Վասակեանը։

— Բայց դուք յայտնի կացուցէք ձեր գործը։

— Ի՞մ գործը. — իմ գործը կը լինի, որ օրիորդ Սալբին իւր յօժարութեամբ կ'ընդունի պսակուիլ ձեզ հետ։

— Ձեր մի այդպիսի աշխատութիւնը կը վարձատրեմ ես երկու հարիւր թումանով եւ մի թաղա ընտիր շալով։

Digitized by Google

— Թէպէտ խիստ սակաւ է, իմ ծառայութեան հետ համեմատելով, բայց ձեզ մեծ կորած չէ, եթէ ոչինչ ըլլ տաք, ես դարձեալ ընդհակառակ եմ. ճեպաք բարեաւ:

— Տէրը ձեզ հետ:

Յաբեթան հեռացաւ:

Բայց պարոն Աշխարունիի տանուտէր պարոն Արամը եւ նրա կինը՝ տիկին Սալլաթինը՝ այդպէս լսօսում էին.

— Պէտք է ընդհակառակ լինել Սոլոմոն-Բէկին, որ այդպէս շուտ դուրս տարաւ քոյրը մեր վարժարանից, ասաց պարոն Արամը:

— Արդարեւ. օձը բոյն էր դրած դրախտի մէջ, պատասխանեց նրա կինը:

— Սոլոմոն-Բէկը սկսել է այժմ աշխատել մեր գործի վնասի համար:

— Ծուդանները միշտ պակաս չեն աշխարհից . . . : Բայց Տիրոջ գործը միշտ գնում է յառաջ եւ յառաջ . . . հալածանքները, արգելքները՝ միշտ զօրութիւն են տալիս նրան . . . :

— Սոլոմոն-Բէկը սկզբանէ ունէր չար միտք . . . , ասաց տիկին Սալլաթինը. եւ նրա այնպէս բարեկամաբար մեզ մօտենալն առանց պատճառի չէր:

— Ի՞նչ պատճառ կար:

— Նա սիրում էր Սալբին եւ միտք ունէր մի հնարքով նրան խլել պարոն Ռուստամի ձեռքից:

— Ա՛ . . . ա . . . ա . . . այդպէ՞ս . . . դա ծիծաղելի է . . . , բացականչեց պարոն Արամը:

Յանկարծ ներս մտաւ պարոն Յոսրով Մելիքզադէն:

— Օրիորդ Սալբին խոստացել էր ինձ տալ կարդալու պարոն Ռուստամի օրագրութիւնները, ասաց նա. այժմ հասկացայ, ձեզ մօտ են, կը խնդրեմ տալ ինձ:

Digitized by Google

— Հա՛, մեզ մօտ են, պատասխանեց տիկին Սալա-թինը եւ տուեց նրան թղթերը։

Պարոն Մելիքզադէն առեց թղթերը եւ անփոյթ կերպով թեք ընկաւ սոֆայի վրայ, սկսաւ կարդալ։

— Արդարեւ, հեղինակը խիստ խոր զգացել է ան-բախտ այրիի հետ նրա օրօրոցի երգը, ասաց նա ուշա-դրութեամբ նայելով թերթին։

— Պարոն Ռուստամը, միւս կողմից խօսեց պարոն Աշխարունին, ոգեւորուած գովաբանում է վայրենի քա-ջալնական կեանքը, կամ աւրիշ խօսքերով՝ բարբարոսու-թիւնը, բայց յոյները իրանց ճարտարութեամբ թողել են արժանի յիշատակի մի արձան գալոց ազգերին — մի արձան, որ միանգամայն ձեւացնում էր կռուի եւ իմաստութեան աստուածուհին։ Այդ մի մեծ խրատ է մարդկութեանը, որ առանց իմաստութեան, առանց ուսման, առանց կրթու-թեան, միով բանիւ՝ առանց լուսաւորութեան, այսօրուայ օրս ոչ մի գործ չէ կարելի կատարել։ Անցան, գնացին այն ժամանակները, երբ մի Ալէքսանդր, մի Ատիլլա, մի Լանկ-Թէմուր, մի Նադր-Շահ աշխարհի մի ծայրից դէպի միւսն արշաւել են։ Այդ մեծամեծ աւազակները միշտ նմանել են ցոլացող մէտէօրաներին, որ յանկարծ երեւան էին գալիս եւ իսկոյն չքանում մթնոլորտի մէջ...։

Digitized by Google

Լ.

ՈՒՂՂԱՓԱՌ ՄԱՀՄԵՏԱԿԱՆԸ

Առաւօտեան շուտ պարոն Վասակեանը հրամայեց թամքել իւր ջորին. հեծաւ եւ սկսաւ դիմել դէպի գիւղաքաղաքը, որ ոչ այնքան հեռու էր ծաղկաւանից:

Այդ գիւղաքաղաքում վաղուց արդէն բնակվում էր Միրզա-Փաթալի անուն հարուստ պարսիկը, մի եկուոր այս կողմերը Շիրազից:

"Մեծ հարստութիւնները միայն կարելի է վաստակել անիրաւութեամբ, արդարութեամբ չէ կարելի միշտ փլաւ ուտել. ցամաք հաց է աղքատիկ կերակուրը արդարների...„: Այդպէս էր սովորական առածը Միրզա-Փաթալիի: Իւր նպատակի հիմը դնելով այդ բնաբանի վրայ՝ Միրզա-Փաթալին իւր մանկութիւնից ամենաւելն չունէր պահեցողութիւն մեղք գործելու մէջ. — սուտ խօսիլ, սուտ երդուիլ, ուրանալ, գողանալ, թեթեւ քարով կշռել, կարճ կանգունով չափել, փոքրիկ թուրայով (քոռով) տալ, մեծով առնել՝ էին միակ վաստակարարութեան աղբիւրները նրա առեւտուրի մէջ: Այսուամենայնիւ, նա իւր հաւատակիցների մէջ համարվում էր մինը ուղղափառ մուսուլմաններից: Աւելի ճշտութեամբ կատարելով Իսլամի շառիաթական կանոնը, "թէ օրէնքը երեւելին հրամանի կ'անէ„, — կամ "քննութիւնը պիղծ է„. — Միրզա-Փաթալին կարողացել էր մուսուլմանների արդարութեան գոյներով ներկել իւր արտաքին կերպարանքը: Կամ ըստ

Digitized by Google

հայոց ասութեան, լինել մի ոչխարազգեստ գայլ։ Նա ոտքից ցգլուխ ծածկուած էր մեշտեան սեւ վերարկուով, բարեպաշտութեան հաստ գօտիով պնդել էր իւր մէջքը, իւր ճկոյթը անցուցած էր արդարութեան մատանին, միշտ ձեռքում ունէր փառաբանութեան նշոպահը, գլխին կապած էր նուիրական չալման, հագած էր ժուժկալութեան սպիտակ թումանը (վարտիք), նրա աչքերը միշտ սուրմայած էին սեւ դեղով, նրա երեսը ամէն առաւօտ թաց էր լինում վարդաջրով, եւ եթէ մի մուսուլման՝ իւր կեանքում գործածելով մի բաթման հանայ, ազատում էր դժոխքի կրակից, Միրզա-Փաթալին արդէն գործ էր ածել քանի քանի բաթմաններ հանայ, ամէն ուրբաթ ներկելով իւր ձեռքերը, ոտքերը եւ մօրուքը՝ նրա աղիւսագոյն ռանգով։

Միրզա-Փաթալին ամէն օր գնում է բաղնիք. ով որ տեղեակ է Իսլամի խորին գաղտնիքներին՝ իմանում է, թէ Միրզան դրանով լցուցանում էր մի մեծակշիռ կրօնական պարտաւորութիւն, ամէն օր մերձաւորութիւն անելով իւր կնիկներին... եւ այդ ցանկասիրական առաքինութիւնը ստանում է իւր վարձքը ճէննաթի մէջ...։

Վաստակել արդարութիւնը Իսլամի մէջ խիստ հեշտ է եւ դիւրին՝ նիւթական ծէսերի եւ արարողութիւնների միջոցաւ, Իսլամի հոգեւոր մասը մոռացուած է՝ հոգեկանէրի խրատներով։

Դու տեսնում ես, Միրզա-Փաթալին նստած է իւր տուքանում, յանկարծ լսելի է լինում կէսաւուր ազանի ձայնը, եւ ահա նա, իւր ղապայի երկայն դրօշակները հաւաքած, իւր հագուստների թեւքերը մինչեւ արմունկները ծալած, վեր է առնում աֆթաֆան, լուացվում, դաստա-մաղ առնում, եւ կատարում է իւր նամազը։ Նա կարդում է իւր աղօթքը (որ մարգարէն յօրինել է արա-

Digitized by Google

բացւոց լեզուաւ), ամենեւին չը հասկանալով իւր աղօթքի իմաստը. նա կարդում է բարձր եւ լսելի ձայնով, որպէս զի բազառի բազմութիւնը լսէ նրա աղօթելը եւ գովէ իւր բարեպաշտութեան համար:

Միրզա-Փաթալին ճշտութեամբ պահում էր երեսնօրեայ Ծոմը (օրուջը), մուհարրէմի ամսում ամբողջ քառասուն օր հազնում էր սեւ քուրձ ի պատիւ իմամ Ճուսէյնի եւ նրա ընկեր միւս մարտիրոսուածների, եւ նշանաւոր զատիկ օրերում բաժանում էր աղքատներին հաց եւ արծաթի շահիներ:

Միրզա-Փաթալին, գալով այդ երկիրը Դաղստանից, առաջ ապրում էր որպէս փաստաբան մոլլաների դիւանատներում. այդ գործով, նա խիստ փոքր ժամանակում, մեծ հարստութեան տէր դառնալով, սկսաւ վաճառականութիւն անել: Բայց միեւնոյն ժամանակ նա բոլորովին չը կորեց իւր հաղորդակցութիւնը մոլլաների հետ. կարծես թէ Միրզա-Փաթալին պատրաստուում էր կերակրել այդ մարդերի ստամոքսը, որոնց ձեռքումն էր Իսլամի օրէնքը: Բացի դրանից՝ նա ամէն շաբաթ ունէր իւր տանում մի քանի առանձնակի հիւրեր, որ էին այն կարգի մարդերից, որ իրանց կեղծաւորութեամբ եւ փարիսեցութեամբ, ոչ միայն ստացել էին ուղղափառ մուսուլմանի անուն, այլ օրինական մոլլաների դիւաններում, գրաւել էին մեծակշիռ համարում իրանց արդարութեան մասին: Միրզա-Փաթալին կարօտ էր պահպանելու իւր բարեկամութիւնը այդպիսի խաբեբաների հետ, որ շատ անգամ օգնում էին նրան իւր չարագործութիւնների մէջ. — հարկաւորած ժամանակ՝ լինելով նրա հւսմար սուտ վկաներ, եւ շատ անգամ կնքելով նրա կեղծեալ եւ խարդախ տոմսակները եւ մուրհակները:

Digitized by Google

Մի քանի դերվիշներ ապրում էին նրա հացով՝ նրա տան նախագաւթում նրանց համար առանձին շինուած խուցերում։ Միրզա-Ֆաթալին գովաբանում էին, որ կերակրում էր այդ փաղերները Աստուծոյ համար։ Եւ շատերը կարծիք ունէին, թէ այդ խնամատուներները ալքիմեայի արհեստով շինում էին նրա համար ազնիւ մետաղներ, որով այնքան հարստացած էր Միրզա-Ֆաթալին։ Բայց ո՛չ այս ո՛չ այն, դերվիշները նրա համար շինում էին խարդախ դրամներ։

Միրզա-Ֆաթալիի ծառան լսած տուաւ, թէ Ռէս Վասակեանը կամենում է առանձնակի տեսութիւն անել՝ հարկաւոր խօսելիքի համար։

— Մաշատի-Սմայելը, ասաց նա իւր որդուն, դուք այստեղ վերահասու եղէք առեւտրական գործերին մինչեւ ես կը վերադառնամ։

Նա մտաւ կրպակին կից փոքրիկ սենեակը, ուր սպասում էր նրան պարոն Վասակեանը։

— Հըմ, ինչ կայ, Ռէս, բարի լինի, ծիծաղելով ասաց Միրզան սովորական ոգեւնից յետոյ։

— Աստուծով բարի է... ես չար եւ անօգուտ գործերի համար ձեր շէմքը չեմ կոխել, պատասխանեց պարոն Վասակեանը։

— Դարձեալ ո՞րս... կա՞յ մի այդպիսի բան, հարց արաւ պարսիկը խորհրդական եղանակաւ։

— Այո՛, որս... բայց որպիսի՛... խիստ գէր եւ պարարտ... ես կը թողնեմ դուք զարկէք, պատասխանեց խաբեբան իրանց միայն հասկանալի ոճով։

— Շատ լաւ. ես պատրաստ եմ կատարել սուրբ պարտականութիւնները, միայն դուք պարզեցէք գործի իսկութիւնը։

Digitized by Google

Պարոն Վասակեանը խօսեց.

— Մեր գիւղում բնակվում է Ծովասաբենց տիկին Թարլան անուն այրին: Դա մի աղքատ կին է, որի ապրուստի միակ աղբիւրներն են՝ նրա տունը եւ այն մեծ այգին, որ ժառանգութեամբ մնացել են նրա հանգուցեալ ամուսնին այրից: Այդ կինը ունի մի ամենագեղեցիկ աղջիկ Սալբի անունով, որ նշանուած է Տէր Առաքելենց Ռուստամին: Բայց իմ տէրը, Սոլոմոն-Բէկը, Մելիք Պիլատոսի որդին, ամենասաստիկ կերպով սիրահարուած է օրիորդ Սալբիի անմման գեղեցկութեամբ: Մեր բոլոր ջանքերը, որ եւ իցէ հնարքով հրապուրել մանուկ օրիորդի սիրտը դէպի պատանի Աւազակեանցը, բոլորը ի զուր անցան: Ու որքան օրիորդ Սալբին մնացել է հաւատարիմ իւր նշանածի սիրոյն, այնքան Սոլոմոն-Բէկը պահանջում է ինձանից նրա սէրը գրաւել դէպ ինքը: Միրզա, լսեցէք, առաջ տարաւ պարոն Վասակեանը. ինձ խիստ պէտք է ձեր գործակցութիւնը, եւ մի առատ դրամացի օգուտ ստիպում է մեզ սառն աչքով չը նայել այդ գործի վրայ, այլ աշխատիլ մի հնարքով կատարել Սոլոմոն-Բէկի կամքը, ընդ նմին եւ տէր դառնալ այն բաւականաչափ գումարին, որ ես կ'որսայի մէջտեղից:

— Ո՛րպիսի՞ հնար, հալցրուց անհամբերութեամբ Միրզա-Փաթալին, եւ ի՞նչ գումար կարելի է որսալ այդ գործի միջից:

— Միակ գործադրելի հնարը, առաջ տարաւ պարոն Վասակեանը, չէ այլ ինչ, միայն նիւթական միջոցներով պարտաւորել տիկին Թարլանը, կամ աւելի պարզ ասած՝ գնել նրա աղջիկը արծաթով: Այդ իրողութիւնը կարելի անելու համար՝ պէտք է գտնել մի հնարք, որ նրանք կարօտութիւն ունենային արծաթի. — այսինքն՝ մի ան-

Digitized by Google

հրաժեշտ կարիք, որ ստիպէ տիկին Թարլանին իւր աղջիկը փոխարինել արծաթի հետ։

— Կայ մի այդպիսի ստիպողական միջոց կամ հնարք, որով տիկին Թարլանը յանձն առնէր, որպէս ասացիք, իւր աղջիկը փոխարինել արծաթի հետ, հարցրուց պարսիկը, աւելի ուշադրութեամբ մտադիր լինելով իւր լսածներին։

— Կայ, պատասխանեց Ռէյսը բանիմաց մարդի եղանակով։ Կայ մի աւելի յաջող հնարք այդ անելու։ Ես պատմեցի Սոլոմոն-Բէկին, թէ տիկին Թարլանի հանգուցեալ այրը թողել է մի հազար թումանի պարտք Միրզա-Փաթալի պարսկին եւ նրա տուները ու այգին գրաւ են այդ փղի գումարին։ Սոլոմոն-Բէկը հրամայեց, թող տիրէ Միրզան իւր գրաւները, եւ տիկին Թարլանը չունենալով այլեան կարողութիւն վճարելու պարտքը, անշուշտ դիմելու է դէպի մի ուրիշի օգնութիւնը։ Այն ժամանակ մենք կը հատուցանենք Միրզայի փողը, եւ գրաւները ձրիաբար տիկին Թարլանին դարձնելով, կը պարտաւորեցնենք նրան, եւ որպէս ասացինք, կը գնենք նրա աղջիկը արծաթով։

— Երբ չը կայ մի այդպիսի գրաւատումնակ, ինչ պէտք է ասած։

— Ես գիտեմ, որ չը կայ, բայց ինչ դժուար գործ է խարդախ գրաւատումնակներ շինելը ձեր ձեռքում...։

— Այդ իրաւ... բայց պէտք են մի քանի հաւատարիմ վկաներ։

— Վկաները հայերի կողմից կը լինինք մին ես, միւսը տէր Եարկոսը, մեր քահանան, եւ մի քանի այլ հոգի ես կարող եմ գտնել, իսկ թուրքերի կողմից դուք կարող էք գտնել շատերը, պատասխանեց Ռէյսը։

Digitized by Google

— Բայց դուք միամտացած էք Սոլոմոն-Բէկի զոհաբերութեան մասին:

— Բոլորովին: Նա, չը նայելով իւր այնքան ժլատութեանը, գիտեմ, իւր բոլոր հարստութիւնները չէ խնայելու այդ գործի մէջ իւր նպատակը յառաջ տանելու համար: Միայն թէ դուք աշխատեցէք ծրքան կարելի է շուտով հնարելու դրաւաթուղթը եւ տիրելու այն անշարժ կայքերին: Ու այդ գումարը բաժանելու համար ես անում եմ այդպիսի պայմաններ. հազար թումանի հինգ հարիւրն քո բաժինն է, իսկ մնացեալ հինգ հարիւրն ես պէտք է վէս կիսեմ տէր Մարկոսի հետ, որ մեղ խորհրդակից է:

— Շատ լաւ. քահանայի գործակցութիւնը հարկաւոր է մեզ:

— Քահանայի գործակցութիւնը հարկաւոր է, եւ մի ուրիշ պատճառով, որ եթէ այդ գործի մասին դատաստանական քննութիւն լինի, քահանան կը վկայէ, թէ հանգուցեալը իւր մեռնելու ժամանակ խոստովանուել է մի այդպիսի պարտքի մասին: Մեր ժամանակը մի բախտաւոր ժամանակ է, կրկնեց Ռէսը հրճուանօք. մոլլաներն, որպիսի թուղթ ուզում ես, տալիս են ընչին արծաթով... քահանաները վկայում են ամէն տեսակ ստութիւն... եւ սուտ վկաներ կարելի է ճարել ամէն ազգից մի բաժակ ալաղով... միայն ճարտարութիւն պէտք է, որսալու արծաթ...:

— Արդարեւ. այդպէս է, ասաց Միրզա-Փաթալին: Բայց դուք անհոգ կացէք, Ռէս, ես առաւօտեան կը սկսեմ գործը, եւ յուսով եմ, որ բոլորը կը վերջացնեմ մի քանի օրուայ մէջ:

Պարոն Վասակեանը ձեռք բարեաւ ասելով, հեռացաւ:

Digitized by Google

Մի քանի օրից յետոյ Միրզա-Փաթալին Յանի հրամանով տիրեց տիկին Թարլանի այգին եւ արտաքսեց նրան այն նուիրական տանից, ուր երկար տարիներով բնակուել էր Ծովասաբենց ազգատոհմը։ Տիկին Թարլանը ճարահատեալ տեղափոխեցաւ իւր դրացի Ծերունի Մկրտչի մեզ նախաճանօթ տունը։

Այդ յանկարծակի անցքը մահուչափ ցաւալի եղաւ տիկին Թարլանին. նա չէր կարողանում տանել իւր անբախտութիւնը։ Մի օր երբ նա միայնակ նստած լաց էր լինում իւր սեւ օրը, լսելի եղաւ, որ զարկում էին բակի դռները. սարսափելի դող եկաւ խեղճ տիկին Թարլանի վրայ։ — Գնա, ասաց նա օրիորդ Նազանուն, գնա՛, տես, այլ եւս ոմ կամենում է վրդովել մեր հանգստութիւնը . . . , եթէ այն անիծեալ Միրզա-Փաթալիի մարդիկն լինեն, ասա՛, ես հիւանդ եմ, չեմ կարող ընդունել մարդիկ։

Աղախինը շուտով յետ դարձաւ, յայտնեց. Վասակեան Ռէսը հարկաւոր խօսելիք ունի։

— Բարի՛ լինի . . . կրկնեց տիկին Թարլանը եւ հրամայեց աղախնոյն, որ ասէ, թող ներս գայ։ Նա ինքը, չորեքով աչքերի արտասուքը, ընդունեց պալոզ եւ հանդարտ կերպարանք։

Ներս եկաւ Ռէսը. տիկին Թարլանը ոտքի ելաւ նրա առջեւ, ցուցանելով արժանաւոր ընդունելութիւն. երկուքն կրկին նստեցան միմեանց շատ մօտաւոր։

Ռէսը սկսաւ հարցնել տիկին Թարլանի առողջութիւնը եւ նրան պատահած դժբախտութեանը ցոյց էր տալիս խորին ցաւակցութիւն։ Նազանին ոտքի վրայ սպասաւորութիւն էր անում. նա շուտով մատոյց հիւրին

ղէյլան, եւ պարոն Վասակեանը սկսաւ ծանր ու հանդարտ կերպով ղռղռացնել։

— Ասացէք, խնդրեմ, հարցրեց պարոն Վասակեանը երկար լռութիւնից յետոյ, ինչպէս վերջացաւ ձեր վէճը Միրզա-Փաթալիի հետ։

— Ես իմ բնակութիւնը փոխելով այդ աղքատին տան մէջ, դուք պիտի հասկանաք, ես զրկուած եմ իմ տանից, պատասխանեց տիկին Թարլանը յոգւոց հանելով։

— Տէր ողորմեա . . . գլուխը շարժեց խաբեբան աւելի ցաւակցութիւն ցոյց տալով։ Ասացէք, խնդրեմ, ձեր լուսահոգի ամուսին այրը իւր կենդանութեան ժամանակը երբեք պատմել էր մի այդպիսի պարտքի մասին։

— Ո՛չ երբեք. նա ամենեւին հաղորդակցութիւն չունէր Միրզա-Փաթալիի հետ։

— Ուրեմն դուք կարծում էք, այդ պարտքը ձեր ամուսինը թողած չէ։

— Աստուած գիտէ . . . այդ չեմ կարող ասել, մթին եւ չին գործ է։

Պարոն Վասակեանի յօնքերը աւելի եւ աւելի խոժոռւում էին. նրա կերպարանքը ընդունում էր հետզհետէ կատաղի գծագրութիւն. նա նմանում էր նոյն ժամանակ գազանին, որ պատրաստվում էր յարձակուել իւր զոհի վրայ։

— Գիտէք, տիկին, խօսեց նա, դուք գիտէք, որ մենք ոչ մի անգամ չենք ցանկանալու մի հայ քրիստոնեայի ապրանքին տիրել այլազգին։ Բայց մենք հոգի ունինք Աստծուն տալու, ինչպէս կարող ենք սուտ խօսիլ. Աստուած ինքն վկայ է երկնքում, եւ ես գիտեմ, որ այն

պարսկի գրաւատումնակը սուտ չէ. ձեր այրը մի այլքան գումար պարտ էր նրան իւր կենդանութեան ժամանակ։ Ու տէր Մարկոսը, ես եւ մի քանի այլ մարդիկ մեր դրկիցներից՝ վկայ ենք այդ իրողութեանը։

— Ի հարկէ, դուք լաւը գիտէք։

— Լսեցէք ինձ, մայրիկ, առաջ տարաւ նա իւր առևորական ճարտարախօսութեամբ, ես, ունելով ձեր հանգուցեալ ամուսնի հետ մի անկեղծ բարեկամութիւն, մեծ պարտաւորութիւն եմ համարել մինչեւ այսօր միշտ մտածել նրա ընտանիքի բարօրութեան մասին։ Ու այդ դժբախտութիւնը ձեզ պատահելէն յետոյ, քանի օր է, որ ես գիշեր ու ցերեկ հանգիստ չունիմ, միշտ մտածելով մի հնար՝ ազատելու ձեզ այդ թշուառութիւնից։

— Տէրը թող միշտ օգնական եւ պահապան լինի քեզ, խօսեց տիկին Թալլանը ջերմեռանդութեամբ։

— Ես մտածել եմ մի իրողութիւն, որի մէջ, եթէ դուք եւս ինձ հետ համաձայն կը լինիք, յուսով եմ, որ կրկին տէր կը լինիք ձեր կորուսած ժառանգութիւններին։

— Ես ձեր ուղի հողն եմ, դուք ինչ ասէք, ես կը լսեմ։

Պարոն Վասակեանը այն կարգի մարդերից էր, որ հայերի ասածին պէս, "սեւ ջրից սեր վեր կու առնէր,,։ Ըրա հնարագէտ միտքը իսկոյն գտաւ մի նոր միջոց այստեղ նոյնպէս իւր օգուտը որսալու։

— Այո՛, այդպէս, ասաց նա հաստատամտութեամբ, դուք կրկին տէր կը լինիք ձեր կորուսած ժառանգութիւններին միայն մի քանի պայմաններով։

Digitized by Google

Տիկին Թարլանը կարծես թէ երազի մէջ էր. նա չէր հաւատում իւր ականջներին. նրա շնչառութիւնը ուրախութիւնից խեղդվում էր։

— Աստուած է յուղարկել քէզ, Ռէնս, մխիթարելու խեղճ այրին, ասաց նա ուրախութեամբ համբուրելով պարոն Վասակեանի ձեռքերը։

— Ես ասացի ձեզ, թէ դուք տէր կը լինիք ձեր կորուսած ժառանգութիւններին, միայն մի քանի պայմաններով, շարունակեց Ռէնը անվրդով եղանակաւ։ Այժմ հարկաւոր է ձեզ, պատուելի տիկին, գիտել, թէ ինչ պայմաններ էին դրանք։ Մի մեծահոգի տղամարդ իմ բարեխօսութեամբ յանձն է առել բարերարել ձեզ, վճարելով Միրզա-Փաթալչին ձեր մի հազար թումանի պարտքը, յետ առնելով գրաւները եւ դարձնելով նրանք ձեզ բոլորովին ձրիաբար։ Առաջին որ դուք խոստանայիք տալ նրան կնութեան ձեր աղջիկը, երկրորդ, որ իմ այս ծառայութեան փոխարէնը վարձատրէք արծաթով։

— Կարելի է գիտենալ այդ բարերարի անունը, հարցրուց տիկին Թարլանը։

— Մելիք Պիլատոսի որդին, Սոլոմոն-Բէկը։

Քիչ էր մնում տիկին Թարլանը խելքից գնար, լսելով այդ փառաւոր անունը։

— Իմ աղջիկը ո՛չ թէ արժան է լինել Սոլոմոն-Բէկի կինը, այլ նրա տան մէջ մինը ստորին աղախիններից։ Այդ Աստծոյ շնորհն է. ես անարժան եմ մի այդքան բախտաւորութեան . . . : Բայց դուք, որ ձեր բարեսրտութեամբ պատճառ էք եղել իմ եւ իմ աղջկայ բախտաւորութեանը, ձեզ ես իմ հոգին տալու լինիմ դեռ սակաւ

Digitized by Google

է . . . ի հարկէ, ձեզ առանց վարձատրութեան չեմ թողելու։

— Դուք յայտնեցէք, թէ ինչ կամիք տալ։

— Ես ամենայն խնայողութեամբ իմ վաստակներից աւելացրել եմ մի հարիւր թումանի փող, որ միտք ունէի Շրուսաղէմ յուղարկելու. այդ գումարն քեզ կու տամ. եթէ դլանից աւել ունենամ եւ չը տամ թող Ծուդայի ալծաթ լինի։

Պարոն Վասակեանը ոտքի ելաւ։

— Այժմ ինչ յուսով գնում եմ ես, հարցրուց նա։

— Դուք բոլորովին միամիտ կացէք, թէ ձեր մի հարիւր թումանի մասին եւ թէ իմ աղջկայ մասին։ Միայն աշխատիր, որքան կարելի է, մենք շուտով դուրս գանք այդ անտանելի բնակութիւնից, կրկնեց տիկին Թալալեանը։

Յաջողեցաւ։ Բայց անմիտ տիկին Թալալեանը, ամենեւին չը մտածելով իւր աղջկայ հպարտ եւ յանդուգն բնաւորութիւնը, եւ թէ նա՝ բոլոր աշխարհի հետ էլեր փոխելու պարոն Ռուստամի մի մազը, — ի զուր յանձնառու եղաւ պարոն Վասակեանի առաջարկութեանը։

Երեկոյեան պահուն, երբ տիկին Թալալեանը գնացել էր ժամ, օրիորդ Սալբին դալէաւ պարոն Աշխարունու տանից։ Նա գտաւ իրանց նոր բնակարանում մի միայն օրիորդ Նազանին եւ իւր սովորական կատակասիրութեամբ սկսաւ նրա հետ խաղալ. բայց տեսնելով նրա տրտում եւ տխրամած երեսը, ասաց. — Նազանի, միթէ դուք տկա՞ր էք։

— Ո՛չ, ես տկար չեմ, պատասխանեց վշտացած օրիորդը. բայց Սալբի՛, քոյրիկ, ձեր մայրը մի անագորոյն

Digitized by Google

ծնող է. դուք մի՛ ընդունէք նրա խօսքերը. նա կամենում է ձեզ ձգել անբախտութեան մէջ՝ զրկելով պարոն Ռուստամից եւ տալով Սոլոմոնին, այն յիմար անասունին, որին այնքան ատում էք դուք:

— Ի՞նչ էր ստիպում նրան այդ անել:

— Շահասիրութիւնը եւ անխելք փառասիրութիւնը, իմ սիրելի, որովհետեւ Սոլոմոն-Բէկը խոստացել է վճարել ձեր հօր պարտքը եւ ձեր տունը եւ այգին ձրի դարձնել ձեզ:

— Այդ դուք ո՞ր տեղից գիտէք:

— Այսօր եկել էր ձեր տունը Ռէս Վասակեանը եւ դրա վրայ խօսում էր ձեր մօր հետ. մայրդ խոստացաւ նրան մի հարիւր թումանի փող, երբ նա կը կատարէ այդ գործը:

— Ա՛հ, չար Վասակներ... ա՛հ դժոխքի որդիք... մինչեւ ե՞րբ դուք պիտի անպակաս լինիք խեղճ հայերի միջից... մինչեւ ե՞րբ ձեր թունաւոր շունչը պիտի ապականէ մեր աշխարհի օդը..., բացականչեց օրիորդ Սալբին տխուր հառաչանքով:

— Ո՛չ. դուք մի խաբուիք, Սալբի, Ռուստամը ափսո՜ս է:

— Ես չեմ խաբուիլ, Նազանի, եւ ո՛չ մի բան աշխարհում չէ կարող խաբել ինձ... ես չեմ լսելու ոչ մի այլ ձայն. բայց կը լսեմ սիրոյ ձայնին, որ միշտ ղօրկում է իմ սրտի մէջ...:

Օրիորդ Նազանին լուռ կացաւ եւ գնաց ճրագ վառելու: Մեր անբախտ հերոսուհին միայնակ նստած էր մութի մէջ: Հազարաւոր դառն մտածմունքներ պաշարեցին նրան: «Անտարակոյս գործը կ'ընդունէ վատ ուղղութիւն, երբ

Digitized by Google

մայրս նոյնպէս անցաւ նրանց կողմը... այդ յիմարը կը խանգարէ իւր այրի, իմ հօրը սուրբ ուխտը... եւ ինչ կը լինի այն ժամանակ իմ եւ խեղճ Ռուստամի վիճակը...», մտածում էր նա խորին տխրութեամբ:

Օրիորդ Սալանին ճրագ բերաւ. աղջաղջին խրճիթը լուսաւորուեցաւ պայծառ լուսով: Մի եւ նոյն րոպէին ժամից յետ դարձաւ տիկին Թարլանը: Օրիորդ Սալեին նկատեց, նրա երեսը փայլում էր ուրախութիւնից:

Digitized by Google

ԼԱ.

ՅԻՄԱՐ ԾՆՈՂՔ

Տիկին Թարլանը բոլոր գիշերը չէր քնացել ուրախութենից։ Առաւօտեան նա սովորականից խիստ շուտ զարթել էր։ Նա հրամայեց իւր մօտ կոչել իւր աղջիկը։

— Մայր իմ, ասաց օրիորդ Սալբին նշմարելով նրա պայծառ դէմքը, այսօր խիստ ուրախ եմ տեսնում ձեզ։

— Այո՛, Սալբի, պէտք է ուրախանալ եւ օրհնել վերին նախախնամութիւնը, պատասխանեց նրա մայրը հրճուանօք։ Որովհետեւ Տէրը ողորմութիւն է արել մեզ անբախտներիս։

Օրիորդ Սալբին անհամարհական ձեւով ժպտեցաւ։

Ի՞նչ ողորմութիւն, ասացէք, խնդրեմ, թող ես նոյնպէս բաժանորդ լինիմ ձեր ուրախութեանը, հարցրուց նա։

— Իմ աչքի լոյս, մի մեծամիտ եւ մեծահոգի բարերար շնորհ է գործել մեզ. մենք միւսանգամ տէր կը լինինք մեր կորուսած ժառանգութիւններին եւ մեր ապրուստը կրկին ապահովութեան մէջ կը լինի։

— Ես կարծէ էի գիտենալ այդ բարերարի անունը։

— Սոլոմոն-Բէկը, Մելիք Պիլատոսի որդին։

Ծիծաղը կրկին ցնցեց օրիորդ Սալբիի վարդագոյն շրթունքը։

— Ես չեմ կարծում նրա կողմից մի այդպիսի մեծահոգութիւն, ասաց նա։

Digitized by Google

— Նա պատճառ ունէր այդպէս անելու, պատասխանեց տիկին Թարլանը: Աստուած դրել է նրա սրտի մէջ այն բարենպատակ ցանկութիւնը, որով նա խնդրում է ձեր սէրը: Աստուած նրան ազդել է այն վսեմ յօժարութիւնը, որով նա խոնարհվում է պսակ կապել մի աղքատ աղջկայ հետ:

Օրիորդ Սալքին ոչինչ պատասխան չը տուաւ: Արտասուքը նրա աչքերի մէջ չէին կարողանում շիջուցանել կրակը բոցավառուած աչքերի եւ նրա շնչառութիւնը խեղդվում էր սրտի տհաճութիւնից եւ մրրկայոյզ վրդովմունքից:

— Սալքի, սիրական, յառաջ տարաւ մայրը, մի լաւ մտածեցէք. Սոլոմոն-Բէկը, մեր երկրի առաջին իշխանի որդին ցանկանում է պսակուիլ քեզ հետ... այդ Աստուածոյ ողորմութիւնը չէ՞...:

— Ուրեմն դուք միտք ունիք պղծել իմ հօր սուրբ ուխտը, պատասխանեց օրիորդը վշտացած կերպով:

— Ի՞նչ պէտք է արած... երբ աղքատութիւնը ստիպում է...: "Հարկ զօրէնս լուծանէ„ ասում է գիրքը, պատասխանեց նրա մայրը:

— Ուրեմն դուք կամիք վաճառել ինձ:

— Ո՛չ: Բայց ես իբրեւ մայր, իբրեւ առաւել փորձառու իմ այնքան անցուցած օրերով, կամենում եմ բախտաւորել քեզ. հաստատ գիտելով այդ չար աշխարհի գործը, որ նա իւր դառնութիւնները միշտ թափում է աղքատների վրայ..., բայց արծաթից, իբրեւ կախարդական թիլիսմից, միշտ փախչում են կեանքի հոգսերը...:

— Մայր իմ, ասաց նա հանդարտութեամբ, դուք խիստ սխալվում էք ձեր դատողութեանց մէջ. որովհետեւ, արծաթը թունաւորում է երջանկութիւն ասած բանը:

Digitized by Google

— Ձեր մանուկ սրտին դիւրին է այդպէս մոռանալ, բայց իմ ծամերը սպիտակացել են վշտակրութեան մէջ. ես առել եմ աշխարհի դառն համը . . . այդ պատճառով, մոռանում եմ քեզ համարը, գոնեա, ես հանպատրաստից գերեզմանն մտնեմ, չը տանելով իմ հետ հողի տակ եւ այն ցաւը, թէ դուք միացիք արեւի տակ ինձ նման դժբախտ . . . :

— Աղքատութիւնը մեղք բան չէ, պատասխանեց օլիվըր Սալըին սառնութեամբ: Ու եթէ մարդիկ կը սանձէին իրանց եսական շահասիրութիւնները եւ մարդասիրութիւնը տեղ կը գտնէր բարի քրիստոնեաների մէջ, այն ժամանակ կարող էինք ասել, աղքատութիւն ոսած բանը չէ ապրում աշխարհի մէջ:

— Դրանք վերացական մտքեր են, որդի, նրա խօսքը կտրեց տիկին Թարլետնը: Մենք պէտք է մեր անձը յարմարացնենք ներկայ ժամանակի եւ մեր կեանքի պիտոյքների հետ:

— Ժամանակի հետ ես գործ չունիմ. ես ամենեւին ուշադրութիւն չեմ դարձնում, թէ ինչ բաներ գործ վում էին իմ շրջակայքում. բայց ես գործ ունիմ իմ սրտի, իմ մտքի, իմ գաղափարների հետ. ես իմ անձս կը յարմարացնեմ իմ կամքի հետ, մոռանալով, թէ երկու սիրավառ սրտերի համար եւ այն փոքրիկ, համեստ իրաւիթների մէջ կարելի էր գտնել բախտաւորութիւն:

— Դուք ապրում էք ֆանտազիայով, կրկնեց նրա մայրը վշտացած սրտով եւ աւելի չը կամեցաւ խօսել նրա հետ, այլ առաւ չարշաւը, սկսաւ գնալ առաւօտեան ժամը խոռված սրտով: Նա ճանապարհում անիծում էր ինքն իւր անձը, իւր անխելքութիւնը, թէ ինչու իւր աղջիկը տուեց ուսում եւ գիտութիւն սորվելու, որ նա-

Digitized by Google

լողանայ մինչ այն աստիճան լըքանալ, ընդդիմութիւն գործելով իւր կամքին, կամ այնպէս համարձակ եւ անամօթ կերպով խօսել «էրոյ վըրայ: Նա գնաց ժամ աղօթելու. եւ սրբերուս բարեխօսութիւնները խնդրելու, որ իւր աղջկայ միտքը փոխէին . . . :

Ժամից դուրս գալուց յետոյ նրան հանդիպեց Ճանապարհում Ռէս Վասակեանը, որ՝ իւր կեանքում եկեղեցւոյ երես տեսած չը լինելով, նոյն առաւօտ գնացել էր, այն մտօք, որ կարողանայ խօսել տիկին Թարլանի հետ:

— Նկեղեցում մեր պարտքը Աստծուն հատուցանելէն յետոյ, այժմ մնում է մեզ լքնել մեր պարտաւորութիւնները դէպ մարդիկ, խօսեց նա աւելի բարեպաշտութիւն ցոյց տալով: Դիտէք, պատուելի տիկին, ոչքան անհանգիստ եմ ձեր գործի մասին . . . Ես մոռացիր էի ձեզ մօտ գալ այս առաւօտ, լաւ եղաւ, հանդիպեցանք միմեանց. դուք խօսեցիք ձեր դստեր հետ այն խորհրդի մասին, որ անցեալ օր մտնքան սիրով ընդունեցիք դուք:

Տիկին Թարլանը, տակաւին յոյս ունենալով թէ մի կերպով կարող էր համոզել իւր աղջիկը, պատասխանեց. — ինչ հարկ կայ այդ մասին խորհրդակցել իմ դստեր հետ. մինչ մեր աղջիկները մինչ այն աստիճան լըքացած են, որ կարողանային ընդդիմութիւն գործել իրանց ծնողների կամքին: Մենք ունինք իշխանութիւն մեր աղջիկների վրայ, ոչ միայն մեր ուզած մարդին տալու, այլ եւ վաճառելու:

— Ահա՛ ամենաճշմարիտ խօսուածք, կրկնեց բանասարկուն: Միայն յիմար Եւրոպան չնորհել է իւր որդիներին այնքան անտեղի ազատութիւններ ամուսնութեան մասին: Բայց իրաւ, մեր ասիացի ծնողքները առաւել իրաւացի վարուել գիտեն իրանց որդիների հետ . . . : Ու

Digitized by Google

Եւրոպայի պղծութիւնները մեծ ապացոյց են, նրանց չարաչար սխալմունքներին։

— Իշխանութիւն տալ հասուն աղջիկներին, իրանց կամքի ազատութեամբ ընտրել փեսայ, ասել է թէ փչացնել, ոչնչացնել նրանց, պատասխանեց տիկին Թարլանը։

— Օ՛հ, խելքս տանում են այդ ճշմարտապարոզ խօսքերը, կրկնեց կեղծաւորը։ Դուք, տիկին, խօսում էք իսկ եւ իսկ աւետարանի մէջից. բայց ներողութիւն, խնդրեմ, որ մի ամենահարկաւոր գործ դժբախտաբար ինձ զրկում է ձեր մեղրաճաշակ զրուցներից. առ այժմ մնաք բարեաւ։

Տիկին Թարլանից բաժանուելով, պարոն Վասակեանին հանդիպեց Միրզա-Փանթալէոնը, որ թանկագին ջորու վրայ նստած, գնում էր իւր գիւղը, որ ոչ այնքան հեռի էր քաղաքից։

— Հը՛մ... բարեկամ, ինչ եղաւ, հարցրուց նա. ես կատարեցի ձեր կամքը. դուք էլ կատարեցէք ձեր խոստումները։

— Անտարակոյս, այս րոպէիս գնում եմ Սոլոմոն-Բէկի մօտ. առաւօտեան կը ստանաք հինգ հարիւր թումանը, պատասխանեց պարոն Վասակեանը։

— Մնացեալ հինգ հարիւր թումանը, դուք պիտի բաժանէք տէր Մարկոսի հետ։

— Ի հարկէ։

— Ա՛յ դու սատանայ, կրկնեց Միրզան եւ իւր ձեռքի մտրակը դէպի նա շարժելով, հեռացաւ։

Սատանայ բառը Միրզա-Փանթալէոն սովորաբար գործ էր ածում խելքը բառի փոխարէն։

Այնտեղից անցնելով Ռէխը ուղղակի դիմեց դէպի Աւազակեանց իշխանի տունը եւ գտաւ Սոլոմոն-Բէկին մէյնակ իւր սենեակում։

Digitized by Google

— Ի՞նչ արեցիք, հարցրեց Սոլոմոն-Բէկը։

— Մինչեւ մի բան չը պարզեւէք ինձ, չեմ ասի, պատասխանեց պարոն Վասակեանը, աւելի Թանգ ծախե-լով իւր գիտցածը։

— Թէ Աստուած կը սիրես, ասա։

— Էլ ինչ ասեմ, երկնային աւետիք, որ Աստուած յուղարկում է իւր հրեշտակների լեզուով. օրիորդ Սալ-բին այժմ ձերն է . . . ։

— Ուղղիդ, եթէ այդպէս լինի, ես կ'աւելացնեմ իմ խոստացածի վրայ եւ մի քանի Թումանն։

— Ճշմարիտ . . . Աստուած է վկայ, որ սուտ չեմ ասում։

Սոլոմոն-Բէկը յափշտակուեցաւ հիացմունքով։

— Բայց ժամանակ կորցնել պէտք չէ, կրկնեց Ռէսը. դուք հրամայեցէք, թէ որտեղից կամենում էիք տալ մի հազար Թումանը, այսօր իրիկնապահին ժամադիր եմ եղած հասցնել Միրզա-Փաթալիին։

— Առէք այդ տոմսակը, գնացէք բազառ. այնտեղ գանձապետից կը ստանաք բոլոր գումարը, եւ հատուցա-նելով Միրզա-Փաթալիին՝ կը ստանաք նրանից գրաւա-Թուղթը, եւ առաւօտեան Ծովասարենց գերդաստանը կրկին կը տեղաւորէք իրանց հայրենական բնակութեանց մէջ։

— Շատ լաւ, ասաց Ռէսը եւ առնելով տոմսակը հեռացաւ։

Իրիկնապահին մի ընդարձակ դահլիճ Աւազակեանց ամրոցում լուսաւորուած էր բազմաթիւ ճրագներով, եւ պարսկական ճաշակով խիտ ճոխ զարգարուած դահլիճը շողշողում էր, վառվում էր ղառիկից, պրոնզից, ֆաք-վոռից, ոսկուց եւ արծաթից, միանգամայն կացուցանելով շռայլութեան աստուածոյ տաճարը։ Մի հակայաձեւ հաստիկ

Digitized by Google

մարդ, քիշլամիրեան շալից խալաթը հագին, չափաւոր քայլերով անցուդարձ էր անում թանկագին գորգերի վրայ։ — Դա էր Մելիք-Պիլատոս Աւազակեանցը։

Մի մարդ, մեսյլոտ կերպարանքով, ստրկաբար իւր գլուխը դէպի ցած խոնարհեցուցած, կանգնել էր դրան մօտ ոտքի վրայ, եւ իւր աչքերը մեքենաբար հետեւեցնում էր Մելիքի քայլերին։

Ինքը Մելիքը կը լինէր յիսուն տարեկան մարդ։ Ժամանակը բոլորովին սպիտակացրել էր նրա ալիքը։ Բայց նա, կամենալով իրան աւելի մատաղահասակ ցոյց տալ, գլխի մազերը ածիլել տալով՝ մօրուքը կարմիր ներկել էր հանոյով։ Նրա բարձր, հակայաձեւ հասակը, իւր նախկին ուղղութիւնից թեքուելով դէպի քամակը, առջեւից դուրս էր ընկել ահագին հաստլիկ փորը։ Նրա աղեւսագոյն մնալի երեսը ոյց չէր տալիս ոչ մի մարդկային գծագրութիւն, այլ մի վագրի կերպարանք, որ իւր կատաղի արտայայտութեամբ՝ բացատրում էր նրա գազանական հոգու վայրենի տրամադրութիւնները։ Նրա խոժոռուած աչքերը, սեւ, փայլուն, շուտասլաց, լի էին արիւնով եւ բարկութեամբ։

Ոչ թէ Մելիքի արտաքին կերպարանքին նայելով՝ չէր կարելի որոշել նրան մի խաբեբայ եւ փառասէր պարսկից, այլ նրա բոլոր սովորութիւնները, բարք ու վարքը միանգամայն նման էին մի կեղծաւոր մուհամետական, որ արտաքին ձեւականութեամբ միայն կամենում է երեւիլ բարեպաշտ մուսուլման, բայց հոգին լի է ամենայն չարութեամբ։

Նա մեղմաշարժ ընթացքով գնաց, մօտեցաւ փառաւոր կիսաթախտին, որի տախտակները բարձր հնչեցրով ճռացին այդ վիթխարի անասունի անհամեմատ ծանրութիւնից. երբ նա նստած էր նրա վրայ, եւ խորամանկ

աչքերը ուղղելով դէպ Ռէս Վասակեանը, որ կանգնած էր դրան մօտ, խօսեց.

— Վասակ, այսօր մեր գանձապետը տուաւ ինձ մի տոմսակ, որ գրել էր մեր փէացած Սոլոմոնը, որով դուք ստանցել էք մի հազար թումանն, Միրզա-Փաթալիին հասցնելու համար:

— Ստոյգ է, այնպէս, երկիւղածութեամբ պատասխանեց պարոն Վասակեանը:

— Առանց ինձ յայտնելու, նզովեալ, գոռաց նրա ձայնը:

Պարոն Վասակեանը շփոթուեցաւ երկիւղից:

— Ես պիտի չը գիտենամ, թէ ինչ է գործվում իմ տանումս, կրկնեց Մելիքը բարկութեամբ: Ինչ յարաբերութիւն ունի իմ փէացած որդին Միրզա-Փաթալիի հետ. այդ ինչ փող է, որ տալիս է նրան:

— Թող Աստուած փէացնէ ինձ, թէ ես գիտեմ, նրանց մէջ ինչ յարաբերութիւն կայ, պատասխանեց Ռէսը դողալով:

— Միթէ դու չես բոլոր չարութեան խմորը:

— Թող ես Քրիստոսի մեխ զարկողներից լինիմ, թող ես Սուրբ Յովհաննու գլուխ կտրողն լինիմ, թող ես Սուրբ Ստեփանոսի քարկոծողներից լինիմ.... Թէ գիտեմ ձեր որդու եւ Միրզա-Փաթալիի մէջ ինչ գաղտնիք կայ... Թող ես դժոխքի շունը լինիմ եւ Աստուծոյ երես չը տեսնեմ, թէ գիտեմ ինչ փող է, որ Սոլոմոն-Ռէկը տալիս է նրան: Չէք չէք հաւատում ինձ... հրամայեցէք ձեր ծառաներին թող թափեն իմ արիւնը. իմ լեշը թող ուտեն ձեր դրան շուները:

Ու պարոն Վասակեանը կեղծաւորաբար փղձկեցաւ եւ նրա աչքերը լցուեցան արտասուքով:

Digitized by Google

Այդ սարսափելի երդումները մի փոքր մեղմացրին Մելիքի բարկութիւնը եւ նա հարցրեց. — Մինթէ դուք չէիք գնացել հարսնախօսութեան համար Ծովասաբենց տանում, տիկին Թալալեանի մօտ, նրա աղջկայ մասին:

— Եթէ այդ ստոյգ լինի, եթէ մի այդպիսի բան արել եմ ես, դուք տուէք իմ կաշին քերթեն, իմ լեզուն կտրեն, իմ աչքերը դուրս հանեն: Բայց աղա, խօսքը փոխեց նա, ձեր ոտքերի հողն լինիմ, ձեզ մատաղ դառնամ, ես քանիցս անգամ ձեզ խնդրած եմ, թէ ձեր ծառաներից ունանք մի հին ոխակալութեան պատճառով չարախօսութիւն են անում ծառայիս համար եւ վառում են ձեր բարկութիւնը խղճալոյս վրայ . . . : Դուք ստուգեցէք ճշմարիտը, եթէ ձեր լսածները ուղիղ են, ինչ պատիժ կամիք, տուէք ինձ:

Մելիքը, իւր անչափ փառասիրութեան պատճառով, շատով կը զիջանէր իւր բարկութիւնից, երբ մինը ալաչաւոր կերպով, փաղաքշաբար՝ խոնարհվում էր նրա առջեւ:

— Ո՞վ է նա, որ այդ մասին չարախօսել է ձեզանից, հարցրեց Մելիքը մի փոքր հանգստանալով:

— Ձեր գանձապետը, որ ոչ սակաւ դիպուածներում ցոյց է տուել ինձ իւր թշնամութիւնները:

Պարոն Վասակեանը, վաղուց դարանակալ լինելով յափշտակելու գանձապետի պաշտօնը, յաջող միջոցներում, միշտ սուտ եւ խորամանկ չարախօսութիւններով, աշխատում էր նրան կացուցանել Մելիքի աչքում մի աւազակ եւ ստախօս մարդ:

— Եթէ գանձապետը սուտ ամբաստանութիւն է արած ձեր մասին, ես կը պատժեմ նրան:

Digitized by Google

— Ինձ այնքան ցաւալի չէ, երբ ես ձեր առջեւ կորցնում եմ իմ բարի համբաւումը, բայց առաւել զգալի է ինձ, երբ ես բաց աչքով տեսնում եմ նրա գողութիւնները։

Դիւրահաւան Մելքը իսկոյն հաւատաց ստախօսին, բայց չը կամենալով նոյն րոպէին խօսել մի այդպիսի առարկայի վրայ, ասաց.

— Մենք ուրիշ ժամանակի ենք թողնում խօսել դրա մասին, ես ինքս հասկացել եմ գանձապետի անհաւատարմութիւնները, միայն ասէք, ինչ է ձեր կարծիքը Սոլոմոնի մի այդպիսի յիմար ցանկութեան վրայ։

— Ես մինչեւ հիմայ չեմ լսել եւ չեմ հասկացել, թէ ձեր որդին կամք ունի Ծովասաբենց աղջիկը իրան կին առնուլ. եթէ եղել է մի այդպիսի բան, այդ խիստ հակառակ է իմ կամքին, եւ ես կ'աշխատեմ նրա սրտից դուրս բերել մի այդպիսի յիմար ցանկութիւն։

Ծանկարծ ներս մտաւ Մելքի կինը, Նաղլու խանումը, իւր ամուսնի նման հաստլիկ եւ մսի կոճղ։

— Մենք ի զուր բարկացել ենք Ռէսի վրայ, ասաց նա իւր կնոջը։

— Ո՞նչպէս, հարցրեց Նաղլու խանումը։

— Մենք սխալուած ենք, կարծելով, թէ Ռէսը նոյնպէս խաւն է եղել Սոլոմոնի գործի մէջ։

— Թող երեսը սպիտակ լինի, երբ այդպէս է, պատասխանեց նրա կինը։

— Դուք, Ռէս, աշխատեցէք հեռացնել Սոլոմոնին իւր ցնորուած մտքերից, եւ այս անգամիս բաշխում եմ նրա մեղքը, եւ չեմ ցոյց տալու, թէ ինձ յայտնի եղած են նրա գործելը։ Դուք յայտնեցէք, որ ես Թէհլրանում

դառնալու ժամանակ նրա համար Թաբրիզում նշանադրել եմ Ե . . . խանի աղջիկը։

— Դուք անհոգ կացէք, տէր, ինձ համար դիւրին է ձեր որդին զարթեցնել իւր երեւակայական երազներից. միայն զանձապետը . . . ։

— Թող մնայ այդ. ես միտք ունիմ զանձապետին հեռացնել իւր պաշտօնից, եւ եթէ դուք խելօք կը լինիք եւ հաւատարիմ՝ կը ստանաք նրա պաշտօնը։

Պարոն Վասակեանը մօտեցաւ, կամենում էր խոնարհուիլ համբուրելու Մելիքի ոտքերը։ Բայց նա թոյլ չը տուաւ, Ռէսը գլուխ տալով դուրս ելաւ դահլիճից։

Դուրս գալով Աւագակեանց դահլիճից, պարոն Վասակեանի միտքը նմանում էր մի ամենաուղիղ կշեռի, որի ամէն մի թաթի մէջ ամենաթեթեւ ծանրութիւնը զգալի էր։ Մտաբերելով Մելիքի վերջին խօսքը, երբեմն նա մտածում էր, դուրս հանել Սոլոմոն-Բէկի գլխից նրա ցանկութիւնը, եւ կատարելով Մելիքի կամքը, յափշտակել զանձապետի պաշտօնը . . . ուր մեծաւորի անհոգութիւնը եւ ծուլութիւնը պատճառ էր տալիս ինքնակամ նեղգործել արծաթի վրայ . . . ուր ամէն օր պիտի խաղ անել մեռատների հետ . . . ։

Բայց յանկարծ նրա մտքում լոյս էին ընկնում խոստացածները՝ տիկին Թարլանի, Սոլոմոն-Բէկի, Մելզափաթալեի եւ այլն . . . ։ Կրկին տիրում էր նրան ագահութեան դեւը եւ փոխում նրա միտքը . . . ։

Ձէ, ասում էր նա, այդ իմ կողմից մեծ յիմարութիւն է, երբ ես "եփած հաւը թող տամ օդի մէջ թռչուն որսալու,, . . . ։ Ի՞նչ արգելք կայ, ես չեմ թող տայ իմ ձեռքից երկու կողմերն էլ։ — Մի կողմից պէտք է աշխատել, Սոլոմոն-Բէկի նպաստակն կատարուի, միւս

կողմից պէտք է ձեռք բերել եւ այն հնարները գանձապետը ցած գլորելու իւր աթոռից . . . :

Յորասուզուած այդպիսի մտածութիւնների մէջ, նա ներս մտաւ Սոլոմոն-Բէկի մօտ. պատմեց նրան հօր սպառնալիքը, եւ երկար խորհրդակցութիւնից յետոյ, պատուիրեց՝ մի քանի օր հիւանդ ձեւանալ, մինչեւ նա կաշառուած բժիշկների վկայութեամբ կ'իմացնէր Մելիքին, թէ նրա որդին առանց օվսորդ Սալբիին՝ վտանգի մէջ կը գցէ իւր անձը: Եւ դուրս գալու ժամանակ սաստիկ պատուիրեց, որ Սոլոմոն-Բէկը այնպէս ցոյց տայ, թէ Ռւխը այս գործի սկզբից մինչեւ նրա վերջը ոչ մի տեղեկութիւն չունի:

Մինչ նրանք այդ խորհրդածութեան մէջ էին, օվսորդ Սալբին՝ միայնակ իւր սենեակում գրում էր այդ նամակը.

"Անդին բարեկամ,

"Հանգամանքները օրէցօր փոխվում են, ընդունելով աւելի եւ աւելի վտանգաւոր կերպարանքներ . . . եւ յետադարձ բախտը, ասես թէ, կամենում է զօրութիւն տալ մեր հակառակ կողմին . . . :

"Սոլոմոն-Բէկը, հաստատ իւր դիտաւորութեան վրայ, խիստ յիմար եւ անխելք կերպով սիրում է ինձ: Եւ մի նոր դժբախտութիւն. — մեր տան եւ այդիի կորուստը պատճառ են տուել նրան գրաւել եւ իմ մօր կամքը . . . : Ա՛խ, ո՛րքան փոփոխամիտ եւ թոյլ են այդ անսիրտ ծնողները:

"Դու լսել ես Միրզա-Փաթալիի անցքը: Այժմ մայրս յօժարուել է ինձ տալ Սոլոմոն-Բէկին կնութեան, միով բանիւ, ինձ վաճառել այն արծաթին, որ Մելիքի որդին

Digitized by Google

խոստացել է վճարել իւր քսակից եւ ազատել մեր կորուսած ժառանգութիւնները։

"Ինձ սիրելի, դժուար է ապրել մի այսպիսի երկրի մէջ, ուր անկարգ շաբիկլիը, առանց երկար քննութիւնների, հաստատութիւն է տալիս քսան տարուայ հին գրաւաթղթին եւ պարսիկը տիրում է խեղճ հայի կալուածքին. ուր մայրերը վաճառում են իրանց որդուց, պարտք վճարելու համար։ Արդարեւ, դժուար է բնակուել մի այնպիսի երկրի մէջ; ուսկից վաղուց արդէն դուրս է կորել աքսորուած արդարութիւնը . . . ։

"Բայց դու անխիղճ ես, Ռուստամ, դու երկար պիտի թողնես ինձ տանջուել մի խստաբարոյ եւ յիմար ամբոխի մէջ, որոնց համար սիրոյ կախարդական գաղտնիքը դեռ չէ դուրս բերուած յաւիտենական խաւարի միջից։ Արդեօք դու ինձ չե՞ս ափսոսում, ի՛նչ յիմար ցանկութիւն է բնակուել մի այսպիսի անբարոյական ժողովրդի մէջ։ Ծկ, հասիր, ազատէ՛ ինձ։ Մի՛թէ այն լայն եւ ընդարձակ անապատները չունի՞ն այնքան տեղեր մեզ ապրելու։ Մի՛թէ այն բարձրաբերձ սարերը եւ ծառախիտ անտառները չե՞ն կարող պահպանել մեզ իրանց ծոցերում։ Արդարեւ, առաւել երջանիկ կը լինինք մենք բնակուելով այծեաձիների, թռչունների, վայրենի ծառերի եւ ծաղիկների հետ, քան թէ մարդկանց հետ, որոնք խիստ ստոր են անասուններից . . . ։

"Անաստուած երկրում բնակուիր, բայց անօրէն երկրում մի՛ բնակուիր„, այդպէս է հայերի խրատը, որ եւ եղել է սովորական առած։ Արդարեւ, մեծ յիմարութիւն է բնակուել մի երկրում, ուր օրէնքը, իրաւունքը, արդարութիւնը՝ ոտքի տակ են ընկած, ուր զօրեղը տիրում է անզօրին, ուր հարուստը արծաթի զօրութեամբ կա-

Digitized by Google

տարուամ է իւր կամքի ամենազարհուրելի բաղձանքները . . . :

"Իմ թանկագին բարեկամ, ճշմարիտ, ես երկիւղ ունիմ, գուցէ մեզ զրկեն միմեանցից . . . :

"Ե՛կ, հասիր, ազատէ՛ ինձ, գնանք, հեռանանք այս չար երկրից, գնանք, ուր ճակատագիրը կոչում է մեզ : Գնանք, խառնուինք այն քաջ վրանաբնակների հետ, բառնանք նրանց սրբութիւնները, եւ նրանց հետ միասին, թափառինք սարից սար, ձորից ձոր, մինչեւ Նախանամութիւնը կը հաստատէ մեր կացութիւնը ամուր երկրի վրայ, ուր հայկական տունկը՝ ազատ, ինքնուրոյն կ'աճէր, կը հասունանար . . . :

"Այն օրից, որ կարդացել եմ քո օրագիրը, իմ սրտի մէջ զգացել է մի անհանգստութիւն՝ դեռ եւս ինձ անհասկանալի բաղձանքի հետ : Վրանաբնակ այրին եւ նրա անբախտ որբիկը միշտ իմ մտքիս մէջ են, ես չեմ մոռանում նրանց : Շատ անգամ ես մտածում եմ, իմ բոլոր կեանքս ընծայել նրա սպասաւորութեանը, իմ կրծքի վրայ գրկելով նրա որբիկը, իմ բազուկների վրայ մեծացնելով եւ իմ ձեռքով շարժելով նրա օրօրոցը :

"Ե՛կ, մի՛ ուշացիր, Բեթլեհէմեան աստղը առաջնորդում է մեզ դէպի այրի կնոջ չադրը. ե՛կ, գնանք, երկրպագութիւն տանք այն մանուկին . . . :

"Քո Սալբին" :

Նա ծալեց եւ կնքեց նամակը, տուաւ Յաչոյին, որ սպասում էր նրա սենեակի դրան մօտ :

LF.

ՅՈԽՍԱՀԱՏՈԽԹԻՆ

Ցուսահատութիւնը միշտ բնական է փոքրոգի մարդիկներին, որոնց միտքը, սիրտը, խելքը եւ բոլոր հոգեկան զօրութիւնները, չեն կարող տանել դժբախտութեան հարուածներին։

Պարոն Վասակեանի խորհուրդը, — որով մարգարէաբար պատուիրեց Սոլոմոն-Բէկին՝ մի քանի օր հիւանդ ձեւանալ, գուցէ Մելիքը հասկանալով, թէ նրա հիւանդութեան պատճառն էր օրիորդ Սալբին, համոզուէր կատարել նրա կամքը, — եղաւ ուղղորդ — "մարդի սասած, Տէրի լսած,, — Սոլոմոն-Բէկը իրաւ հիւանդացաւ։ Ու նրա հիւանդութիւնը օրէցօր սաստկանում էր, չը նայելով, թէ նրա ծնողքը ուշադրութիւն չէին դարձնում դէպի նա։

Պարոն Վասակեանը չէր հեռանում հիւանդի մօտից։

Մի գիշեր նրան իւր մօտ կոչեց Մելիքը։

— Նա տակաւին չէ՞ վեր կենալու իւր հիւանդութեան մահճից, հարցրեց նա։

— Նրա հիւանդութիւնը սաստիկ է, պատասխանեց Ռէսը։

— Այն աղքատ աղջկայ համար։

— Հրամեր էք. բժիշկները այդպէս ասում են։

— Ուրեմն թող մեռնի՛ իւր հիւանդութեան մահճի մէջ, պատասխանեց անագորոյն հայրը, գուցէ միւս աշխարհում կը տեսնէր իւր սիրուհին . . . ։

Digitized by Google

Պարոն Վասակեանը կոտրած սրտով դուրս եկաւ Մելիքի դահլճից։ Գիշերը մթին էր եւ զարհուրելի. ամրոցում տիրում էր գերեզմանական լռութիւն։ Ռէսը, անցնելով հիւանդի սենեակի մօտից, տեսաւ, դեռ ճրագը վառվում էր. մօտեցաւ դրանը, կամեցաւ բաց անել, փակ էր։ Մի քանի րոպէ նա ականջը դրեց դրան ճեղքերին. ներսից լսելի էր լինում հիւանդի նուաղած ձայնը եւ մի զարհուրելի խռոց։ Նա առաւել լարեց իւր լսողական գործարանը, դարձեալ լսելի էր լինում այն չարագուշակ խռոցը, որ աւելի նման էր խեղդուողի հեծկլտոցի խառն ձայներին։

Ռէսը, չը կարողանալով ներս մտնել դռնից, մի հնարքով բաց արաւ լուսամուտը։ Սարսափելի ապշութիւն տիրեց նրան, երբ տեսաւ Սոլոմոն-Բէկը իւր մէջքի գօտիով իւր պարանոցէն քարշ ընկած։ Նա իսկոյն կտրեց մետաքսեայ գօտին, եւ իւր գրկի մէջ առնելով անզգայացած տղամարդը, դրեց նրան մահճի մէջ։ Նա շօշափեց խեղդուողի շնչերակը, նկատեց, տակաւին զարկում էր. ձեռքը դրեց նրա կուրծքի վրայ, զգաց, սիրտը թռթռում էր, եւ դրանցով Ռէսը իմացաւ, թէ տակաւին յոյս կար նրա կենդանութեանը։

Ռէսը չը կամեցաւ իմացում տալ Մելիքին, մտածելով այդ անցքը գաղտնի պահել։

Սոլոմոն-Բէկը մի քանի րոպէից յետոյ ուշի եկաւ, սկսաւ շարժել իւր ձեռքը, բայց նրա բերանից եւ պնչածակերից հոսում էր արիւն։ Ապա նա բաց արաւ իւր կարմրած, արիւնով լեցուն աչքերը, տեսաւ Ռէսին նստած իւր մօտ։ Նա ասաց թոյլ ձայնով. — Ինչո՞ւ դուք չփոթեցիք իմ հանգստութիւնը . . . ։

Ռէս Վասակեանը ոչինչ պատասխան չը տուաւ։ Նա ջուր ածեց, Սոլոմոն-Բէկը լուաց բերանը եւ քիթը.

Digitized by Google

մի փոքր հանգստանալէն յետոյ բոլորովին զգաստացաւ, եւ խօսեց. — Շրանի՛. մի քանի րոպէ յետոյ հասած լինէիք։

— Ինչո՞ւ, հարցրեց Ռէսը։

— Որովհետեւ, ես միասս բարեաւ կ'ասէի իմ կեանքին, կրկնեց հիւանդը։

— Այդ ինչ յիմար ցանկութիւն է։

— Ա՛խ, դու չը գիտես, Ռէս, սրքան ծանր է ինձ ապրելը . . . մահը միայն կը հանգստացնէ իմ խղճալի անձը։

Ռէսը ոչինչ պատասխան չը տուաւ. նա ուշադրութեամբ նայում էր նրա երեսի վայրենի գծագրութեանցը։

— Թողէք իմ գլուխը բարձի վրայ, ասաց Սոլոմոն-Բէկը։

Պարոն Վասակեանը իւր գրկից նրա գլուխը դրեց բարձի վրայ եւ զգուշութեամբ ծածկեց նրա երեսը, որ նոյն րոպէին գունատուած, կապտագոյն, երեւցնում էր զարհուրելի կծկոտութիւններ։ Նրա աչքերը փակուեցան. սաստիկ ջերմախտական կրակը տիրեց նրան։ Նա շփոթուած էր երեւակայական ցնորքների մէջ, եւ երբեմն դուրս էր թողնում բերանից անորոշ եւ կցկտուր բառեր։ — "Սալեի„ — "իմ նազելի„ — "հոգիս„ — ըստ մեծի մասին լսելի էին լինում նրա խօսքերի մէջ։

Պարոն Վասակեանը բոլոր գիշերը անքուն հսկեց հիւանդի մօտ։ Առաւօտեան Սոլոմոն-Բէկը, աչքերը բաց անելով, տեսաւ իւր մօտ նստած Ռէս Վասակեանը։

— Շրեւի բոլոր գիշերը անքուն էք մնացած, ասաց նա, գնացէք մի փոքր հանգստանալու։

— Ո՛չ. ես բոլորովին հանգիստ եմ. բայց ասացէք, ինչպէս զգում էք ձեզ այժմ, հարցրեց Ռէսը։

— Ես ծանր հիւանդ եմ եւ շատ կարելի է այդ հիւանդութիւնը ինձ տանի դէպի գերեզման։

Digitized by Google

— Նոյն ժամանակ պարոն Վասակեանը նշմարեց նրա աչքերը նուազած եւ նեղս ճնշուած։ Սրանց մէջ տեսանելի էր ցաւալի յոռահաւատ-ընկճը եւ կատաղի նախանձ։ Նրա դէմքը գունատուած էր. մահուան դալուկը ներկել էր նրա զարհուրելի երեսը քրքմագոյն դեղնութեամբ։ Նրա ձայնը սառցել էր կոշտ եւ խռպոտ հնչումներ։

Պարոն Վասակեանը, նշմարելով, որ հիւանդի դրութիւնը վտանգաւոր էր, հարցրեց. — կամիք իմացում տալ ձեր մասին։

— Միայն ասացէք, Սոլոմոնը հիւանդ է, ուրիշ ոչինչ . . . ։

Ռէսը դուրս դնաց։

Ռէսը գտաւ Մելիքին. մի այնակ, իւր գործակալի հետ խօսում էին։ Նրը յայտնել էր նրա որդու դրութիւնը. — Թող մեռնի, ասաց նա անգութ սրտով, գուցէ հողը կը պարտակէր այն նզովեալ մարմինը։

Ու նա բոլոր առնասրտութեամբ յառաջ տարաւ հարցուփորձը գործակալից։ Ռէսը հեռացաւ։

— Ղ . . . գիւղն ամբարը չափեցիք, հարցրեց Մելիքը։

— Հրամեր էք, պատասխանեց գործակալը, որ կանգնած էր ոտքի վրայ։

— Գիտեմ, որ չափել էք, կրկնեց նա, բայց որ քոռով կամ սոմարով։

— Ո՛չ այն հասարակաց քոռով, որով միշտ առեւտուր է լինում, եւ որով խօսացել էք իմանի հետ, այլ մի բաւականին մեծ քոռով։

— Ո՞րքան զանազանութիւն կ'անէ։

— Հարիւրին տասն եւ հինգ բեռ։

— Ծանի մարդը չը հասկացաւ։

Digitized by Google

— Մինը հասկացաւ, բայց ես նրա ափսոսմ դրի մի քանի աշխատեցէք, յետոյ լուռ եղաւ։

— Հա, ապրիս..., կրկնեց գոհութեամբ Մելքը։ Միայն աշխատեցէք, ճնացեալ ամբարիշտներն նոյնպէս այդ քոռով չափուին։

Մի քանի րոպէ տիրեց նրանց մէջ խորին լռութիւն։

— Գիւղերի նախրապաններին եւ հովիւներին ասացէ՛ք, հոգաստանիների թիւը, որքան կարելի է, պակաս ցոյց տան, հալցրեց Մելքը։

— Ասացի, համարեա կէս ու կէս գցել տուի։

— Ի՞նչպէս։

— Համբարքից մի օր առաջ տաւարներն եւ ոչխարներն պահել տուի շրջակայ դիւղերում։

— Այդ որ քո հին արհեստն է, ծիծաղելով կրկնեց Մելքը։ Բայց թող երեսդ սպիտակ լինի։

Դարձեալ տիրեց լռութիւնը։

— Շրկրաչափին տեսա՛ք։

— Հրամեր էք. պատուիրեցի, որքան կարելի է, չուանը երկար անէ։

Այդ հատուկոտոր խօսակցութիւնը մեր ընթերցողին հասկանալի կացուցանելու համար, աւելորդ չեմ համարում, մի քանի տեղեկութիւններ տալ նրան։

Մելքը Զարեհաւանում սովորութիւն ունէր ամէն տարի վարձով վեր առնել խանից մի քանի գիւղեր։ Ու մի գիւղի վարձը որոշվում էր՝ հաշուելով նրա բնակիչների եւ հոգաստանիների թիւը եւ հողերի չափը, որոնց քանակութեան համեմատ ստացվում էր հարկ։ Դրա համար Մելքը հրամայել է, որքան կարելի է, սակաւ ցոյց տան անասունների թիւը, եւ հողերի չափելու չուանը սովորականից երկար անեն, որպէս զի արտերը ձերեւցնեն

աւելի տարածութիւն։ Ծա՛ւ եւ գնում էր Յովանի ամբարտաւանների յորեանները. ով որ տեղեկութիւն ունի այդպիսի առեւտուրներից գիտէ, որ մեծ չափով առնել, փոքրով վաճառել, ահագին օգուտ կը բերէ վաճառողին։

— Յովանին յայտնեցի՛ր այդ լուրը ապրնչայ մասին . . . , հարցրեց Մելիքը։

— Ցայտնեցի . . . , պատասխանեց գործակալը։

— Ի՞նչ ասաց։

— Ուրախութեամբ ընդունեց։

— Այլ եւս ի՞նչ խօսեցիք։

— Ինչ որ պատուիրած էիք ինձ. առաջինն՝ այն հայերին, որ այժմ կալանաւորուած է, յայտնեցի, որքան կարող է չարչարէ. եւ քանի կը տանջէ նրան, այնքան աւելի փող դուրս կը գայ . . . ։ Երկրորդ՝ թէ դուք համոզել էք ժողովուրդի ծերերին, որ աւելացուի գիւղացիների գլխահարկը։ Երրորդ՝ յայտնեցի՝ այն իրողութիւնը, որ պատուիրեցիք, ձեր ու Յովանի մէջ գաղտնի պահուի . . . ։

— Ապա դուք այն նորեկ հայի մասին ոչինչ չը խօսեցիք, որ այնքան փող է բերել Ռուսաստանից։

— Հրամմեր էք. ես ասացի, թէ այդ հայը իւր արծաթից փքուելով խիստ բարձրից է գնում, պէտք է աչքից նրան եւ յայտնեցի, թէ դուք ուսուցել էք մի մարդու, որ բողոքէ Յովանին, իբր նորեկ պարոնը բռնութիւն էր գործ դրել նրա կնոջը վրայ, եւ մի այդպիսի սուտ ամբաստանութիւն բաւական էր նրանից դուրս քաշելու իւր բերած ոսկիները։

— Յովանը ի՞նչ ասաց։

— Հրամայեց, կնոջ այրը շուտ իւր մօտ յուղարկէք։

Մինչ Մելիքը այդպէս խօսում էր իւր գործակալի հետ, Ռէս Վասակեանը ներս մտաւ Նազլու խանումի մօտ

եւ յայտնեց նրա որդու երկիւղալի հիւանդութիւնը: Բայց մայրական սիրտը՝ իւր բոլոր թուլութեամբ՝ առաւել փափուկ եւ զթառատ է: Նա շուտով զինջաւ իւր բարկութիւնից, եւ առանց ժամանակ կորցնելու, մոտաւ որդու սենեակը: Ղղձալի մայրը զարհուրեցաւ, երբ տեսաւ իւր որդու մեռելատիպ երեսը: Մի եւ նոյն ժամանակ հաւատքուեցան այնտեղ եւ նրանց բարեկամ կանայքը, բոլորեցին հիւանդի շուրջը:

Հացի հետ խառնել սգաւոր երգեր, մի ծանր հիւանդի մօտ, կամ մեռելի վրայ, այդ սովորութիւն է արեւելեան ազգերի մէջ: Ամէն մի լացող աշխատում է՝ իւր երեւակայութեան եւ խելքի զօրութիւնը ցոյց տալ՝ առաւել տխրեցուցիչ եւ սրտաշարժ խօսքերով յօրինելով իւր ողբը: Բայց ափսո՜ն, արեւելքում եւ ազի ողբերը երգւում են այլազգի բարբառով:

— Վա՜յ . . . վա՜յ . . . ամա՜ն . . . վա՜յ . . . ազատեցէ՛ք. օգնութեան հասէ՛ք. մեռա՜ւ . . . մեռա՜ւ իմ որդիս . . . ազատեցէ՛ք, վա՜յ ինձ . . . վա՜յ իմ հոգուս . . . Սոլոմո՜ն ջան, հոգի՛ ջան, աչքի լոյս . . . ինչ պատահեց քեզ . . . տունս քանդուեցաւ . . . օրս ու արեւս մթնեցաւ . . . Աստուածա՜ ջան . . . Քրիստոս ջան . . . Ո՛վ Սուրբ Աստուածածին . . . ազատեցէ՛ք, օգնութեան հասէ՛ք . . . ազատեցէ՛ք իմ սիրականը . . . իմ ծերութեան միակ յոյսը . . .

Միւս կանայքը սկսեցին աւելի դաշնակաւոր եղանակաւ.

— Երկինք, դու փուլ եկ . . . մեզ տակով արէ՛ք՝ որուտ, կայծակներ . . . : Անդունդ, բաց արա՛ անյապ բերանդ, մեզ ձեզ մօտ տարէ՛ք հրէշ ճիւաղներ . . . , թող մեր աչքերը չը տեսնեն, աւա՛ղ, այդ զարհուրելի տխուր տեսա-

Digitized by Google

լան . . . Թող մեր աչքերը չը տեսնեն չքնաղ՝ այդ սիրուն աղամարդ՝ ընկած անկենդան . . . :

Սկսում է մայրը, միւսները ձայնակից են լինում.

Ա՛յդ ի՞նչ եմ տեսնում... քոռացէք աչքեր,
Ա՛յդ ինչ է Աստուած, ինչ տխուր պատկեր...
Դժոխք, ով դժոխք, ինչո՞ւ չես բացվում,
Իմ խղճիկ մարմին դէպի քեզ քարշում:

Վեր կաց, մի՛ քնէ, որդեակ իմ չքնաղ,
Իմ սիրուն հոգիս՝ քեզ կը տամ մատաղ.
Բաց արա՛ աչերդ, ով իմ կենաց լոյս,
Մի՛ խաւարեցրու մեր արեւ, մեր լոյս:

Մի՛ փակէ աչերդ, այդ սեւ սեւ աչեր,
Ա՛խ, քեզ Թող օգնեն սուրբ աջեր, խաչեր...
Քեզ եմ ազերսում, հզօր սուրբ Սարգիս,
Կամ փրկիր որդիս, կամ տո՛ւ իմ հոգիս:

Լսէ իմ ձայնիս, խղճա քո խեղճ մայր,
Մի՛ ցցէ սրտումը նեռաեր քառասայր,
Մի՛ Թող դու նորան դնել գերեզմանի՝
Իւր անգին որդին, որդի՛ն աննման . . . :

Վեր կաց, մի՛ քնէ, որդեակ իմ սիրուն,
Մի՛ քանդէ քո հօր եւ քո խեղճ մօր տուն.
Ցիշէ մեր սարեր, յիշէ մեր դաշտեր,
Ծաղկած այգիներ, աղբիւրներ, գետեր:

Առանց քեզ ծաղկոց, պարտէզ, բուրաստան
Են փուշ, տատասկի մնցատ անպիտան.

Digitized by Google

Առանց քեզ մեխակ, շուշան, նռնօփար
Չեն անուշահոտ՝ եւ վարդերը քեռփար։

Երբ որ պարտիզում դու ծաղկապսակ՝
Մնջիկ ման գայիր, որպէս հրեշտակ,
Վարդը նուրբ թերթերն կամենար ներկել՝
Քո շքեղափայլ թշերուն հասցնել։

Երբ որ անտառում՝ ուրախ խնդամիտ՝
Կը հնչեցնէիր ծառեր թաւախիտ,
Սոխակը ձայնիդ երգակից լինէր,
Հովտի հօտերը քեզնով կը հրճուէր։

Վէր կաց, իմ հրեշտակ, վէր կաց կեանքիս յոյս,
Մեր խաւար օրին դու ծագէ մեզ լոյս,
Առանց քեզ մի ժամ, եւ յօժար ինքնակամ,
Անգութ գրողին՝ ես հոգիս կը տամ...։

Պարոն Վասակեանի աչքերը նոյնպէս լցուած էին արտասուքով, նա լաց էր լինում, ոչ առաւել նրա համար, որ երկիւղ կար իւր աղայի կեանքի մասին, այլ որ, նրա հետ կը կորչէին իւր այնքան օգուտները, որ յոյս ունէր ստանալ Սոլոմոն-Բէկի ամուսնութիւնից...։

Մինչ Աւագակեանց տանում այդպէս սուգի մէջ էին, Տէր Առաքելենց դրանը վեր եկաւ ձիուց մի տղամարդ. նրա զէնքերը հնչեցին բարձր ձայնով, եւ նա՝ իւր ձիու սանձը ծառայի ձեռքը տալով, ներս մտաւ։

— Բարով, բարով, նրան ասաց Մահտեսի Աւետիսը, հանդիպելով իւր որդուն բակի մէջ։

Բայց պարոն Ռուստամը գլուխ տուեց եւ անխօս մտաւ իւր սենեակը։

Digitized by Google

Երեկոյեան պահուն՝ նրան տեսութեան եկան՝ պարոն Արամ Աշխարունին եւ պարոն Յոսրով Մելիքզադէն։

— Օ՛, ոլքան չաղացել էք, նրա ձեռքը բռնելով ասաց Մելիքզադէն. երեւի լեռնային օդը ձեզ համար առաւել առողջարար է եղել։

— Դուք պիտէք, մեր սարերում ոլքան չաղանում են մեր ոչխարները, մինէ ես նրանցից պակաս էի, պատասխանեց ծիծաղելով պարոն Ռուստամը։

Պարոն Աշխարունին սկսեց երկայն հարցուփորձ անել այն տարուայ արօտների մասին, ոչխարների մասին, նա մի առ մի հարցնում էր գիւղացիների առողջութիւնը։ Բայց պարոն Ռուստամը միշտ տալիս էր կարճ եւ անորոշ պատասխաններ։ Նրա միտքը այն րոպէին օրիորդ Սալբիի մօտ էր։

— Դուք լսել էք, Ռուստամ, Յովասաբենց մասին մի բան, հարցրեց պարոն Մելիքզադէն։

— Հա՛, լսել եմ. Միրզա-Փաթալին տիրել է նրանց ժառանգութիւնները եւ Սոլոմոն-Բէկը կամենում է պսակուիլ օրիորդ Սալբիի հետ, պատասխանեց պարոն Ռուստամը կատականօք։

— Ես չէի կարծում տիկին Թարլանի կողմից մի այդպիսի յիմարութիւն, խօսեց պարոն Աշխարունին, որ նա իւր փառասիրութեան համար ցանկանար աւերել իւր ամուսնի ուխտը։

— Ինչո՞ւ համար չէք կարծելու, նրա խօսքը կտրեց Յոսրովը. կանանց սեռի փոփոխամտութիւնից եւ մանաւանդ նրանց թուլութիւնից ամէն բան կարծելի է։

— Մինչեւ այդ աստիճան։

— Բանը, իրաւ, աստիճանից է կախ, աշխարհի աչքերը միշտ յարգութեամբ նայում են դէպ աստիճանները։

Digitized by Google

— Ի՞նչպէս։

— Այնպէս որ, մեզ յայտնի է՝ տիկին Թալլանը մի աղքատիկ կնիկ է. դարձեալ մեզ յայտնի է՝ մի անկիրթ ազգի մէջ աղքատը հարուստի էշն է, որպէս կամենայ կը բանեցնէ։

Պարոն Ռուստամը լուռ ականջ էր դնում։

— Եթէ տիկին Թալլանը ընդդէմ իւր աղջկայ կամքին կը գործէր մի այդպիսի ուխտազանցութիւն, յայնժամ ես կը բողոքէի հոգեւոր կառավարութեանը, կրկնեց պարոն Ռուստամը։

— Ա՛յ եղբայր, ո՛րքան պարզամիտ էք դուք, նրան պատասխանեց պարոն Յոսրովը. միթէ չէ՞ք գիտում, որ հոգեւոր կառավարութեան շունչը, հոգին՝ Մելիքի քսակի մէջն է։

— Ի՞նչպէս, հարցրեց պարոն Ռուստամը աւելի տհաճութեամբ։

— Այնպէս որ, երբ մի մարդ մի ուրիշի ձեռքով գործում էր մեղք, նա նրան ծառան է։ Այժմ մտածեցէք, մեր հոգեւոր կառավարութիւնը ո՛րքան աւազակութիւններ, ո՛րքան գողութիւններ, ո՛րքան անիրաւութիւններ գործել է Մելիքի ձեռքով։ Ու եթէ գիտէք, հոգեւոր կառավարութիւնն էր, որ բարեկենդանին արգելեց քո պսակը. երեւում է, այդ գործի մէջ Աւազակենց հետ խորհրդակից են եւ սեւագլուխները...։

Պարոն Ռուստամը դարձեալ լուռ կացաւ։

— Ի՞նչ պէտք է արած, հարցրեց պարոն Աշխարունին իւր սովորական հանդարտութեամբ։

— Ըսպէս ես մտածում եմ, պարոն Ռուստամ պսակուելու գործը օրիորդ Սալբիին հետ՝ ազատ չէ վտանգներից, խօսեց պարոն Յոսրով Մելիքզադէն։ Ես գիտեմ որ

Digitized by Google

հայոց բոլոր քահանանելը հրաժարուելու են այդ պահը կատարելուց, եւ այդպիսի հանգամանքներում պէտք է վարուիլ այնպէս, որպէս եւ արժան տեսայ երկք ամիս դրանից առաջ, այսինքն առանց քահանայի՝ մեր ձեռքով պահել։

— Ահա այդ տեղիցն են սկիզբն առել հայերի մէջ բաժանմունքները, կաթոլիկների, պրոտեստանտների եւ այլն, պատասխանեց Արամը։ Երբ մի հայ մի փոքր ընդդիմացել է հայ հոգեւորականի կամքին, նա, իսկոյն փոխանակ քրիստոնէական եղբայրսիրութեամբ նրա սիրտը ամրելու եւ նրա հետ հաշտուելու՝ հրաժարեցնում է իւր եկեղեցուց, չը կատարելով նրա հոգեւոր պիտոյքները։ Եւ խղճալի հայը, ճարահատեալ դիմում է դէպ մի այլ եկեղեցի, մնում է նրա ծոցը, ընդունում է այլ անուն... եւ այդպէս, մեր չար եկեղեցականների յիմարութեամբ, ամէն տարի հոգիներ կորչում են, անհետանում են եւ կուլ են գնում միւս ազգերի անդնդում...։

Նոյն ժամանակ ներս մտաւ Մահտեսի Աւետիսը. նրան արժանաւոր ընդունելութիւն ցոյց տուին, նստեց։

Բայց նոյն միջոցին, երբ մանուկ տղամարդիկը, տաքացած էին խօսակցութեամբ, դրսից ՚ի քան քանի անգամ զարկուեցաւ լուսամուտի ապակիներին։ Սրանք՝ կարծելով թէ քամին շարժեց պատուհանները, ուշադրութիւն չը դարձրին։

— Ապա ինչ պէտք է արած, հարցրեց պարոն Մելիքզադէն։

— Նըզաւլը, մենք մի բանի հիմքը դրել ենք այդ երկրում, խօսեց պարոն Արամը, պէտք է նոյն հիման վրայ, նոյն ուղղութեամբ բարձրանայ շինուածքը։ Մեր դիտաւորութիւնն այն չէ այստեղ ազգի մէջ հերձուած գցել,

Digitized by Google

նոր կրօնք բաժանել, եւ նրանց սէրն ու միաբանութիւնը խռովել: Ու ոչ մեր նպատակն այն է, որ նոր անուն ընդունել մեզ վրայ. բայց մի փոքր զատելով հայոց կրօնքը իւր պղտորութիւններից, մենք դարձեալ հայ, սիրելով մեր ազգը, մեր պատմութիւնը եւ մեր հայրենիքը: Տեսնենք, եթէ այդ գործի մէջ տեղիս եկեղեցական հարք կը սկսէին մեզ հետ հակառակիլ, մենք մեր խոնարհութեամբ կ'աշխատենք նրանց հետ վարուիլ որպէս եղբայրներ:

Դրսում խորին մութ էր, պարոն Աշխարունին հրաժարական ողջոյն տալով, հեռացաւ: Պարոն Մելիքզադէն ճեպաց այնտեղ:

— Նզբայր, խօսեց նրա գնալուց յետոյ պարոն Յոսրովը, թէպէտ պարոն Աշխարունու խօսքերը հեռու չեն ճշմարտութիւնից, բայց դարեր հարկաւոր են, մինչեւ մենք հայոց եկեղեցականներին սովորեցնենք՝ միաբանութիւն եւ եղբայրսիրութիւն: Ինչ քո պատկը չէ կարելի թողուլ մինչեւ դարերի վերջը: Շատ լաւ. մենք չեմք կամենայ այստեղ հերձուած գցել, միայն մի բան ասեմ քեզ, Ռուստամ, լսի՛ր, եթէ կամենում ես օրիորդ Սալբին քեզ կին լինի, ած նրան, փախիր դէպ ի հեռաւոր աշխարհ, այնտեղ կատարել կը տաս քո պսակը . . . :

— Ճշմարիտ, լաւ է խօսում Յոսրովը, կրկնեց Մահտեսի Աւետիսը: Մենք չենք կարող մարտնչել մի երկրի ժողովուրդի հետ:

— Դուք կարծում էք, աշխարհը շարժող մեքենան արծաթին է, հարցրեց պարոն Ռուստամը հօրից:

— Հա՛, աշխարհի աստուածը այդ ժամանակում նոյնպէս արծաթն է, պատասխանեց Մահտեսի Աւետիսը:

Digitized by Google

Պարոն Մելիքզադէն վեր կացաւ, նոյնպէս կամենում էր գնալ։ Պարոն Ռուստամը յայտնեց նրան, թէ նրա խորհուրդը հաւանական է, միայն պէտք է խօսել օրիորդ Սալբիին հետ։ Պարոն Մելիքզադէն հեռացաւ։

Բայց մի քանի րոպէից յետոյ, մի մարդ դուրս գալով պարոն Ռուստամի նախասենեակից, մութի մէջ, կտուրների վրայով գնալով, մօտեցաւ պատին. իւր մէջքի պարանը կապեց պատից վեր ցցուած ժանիքին, իջաւ դէպի ցած, անհետացաւ խաւարի մէջ։ Եթէ մինը կը հարցնէր, թէ ո՞վ էր այդ գիշերային դէմը, մենք կ'ասէինք, Ռէս Վասակեանը, որ լուսամուտի առջեւ լռեհում էր։

ԼԳ.

ՍՐԻԿԱՅ

Կէս գիշեր էր։ Պարոն Ռուստամը, իւր հիւրերը ճանապարհ դնելուց յետոյ, որովհետեւ շատ յոգնած էր, շուտով քնեցաւ։ Յանկարծ նրա քնարանի դռները անլսելի ձայնով բացվում են։ Ննջարի մէջ շիվում է ծծմբաոտը. ձեռքի մոմպատի լուսով, որ վառվում է նոյն րոպէին, սենեակի կենդրոնում երեւան է լինում մի մարդ։ Նա իւր ուսից վեր է գցում թեթեւ լեզկու եափունջին, եւ նոյն րոպէին նրան կարելի էր նմանացնել մի մանուկ չէրքէս պարոնի, գեղեցիկ հագնուած եւ ըստ կարգին զինուած։

Ալյեկսան ծնկների վրայ չոքում է մահճակալի մօտ, որի վրայ քնած էր պարոն Ռուստամը. նա իւր ցուցամատով հեզիկ խեթկում է նրա կողքը։ — "Ռուստամ", — "Ռուստամ", — լսելի է լինում բարակ ալծաթի հնչումի ձայնով։ Քունը խիստ ծանր էր. տղամարդը ոչինչ չէ զգում, չարունակելով իւր խորին շնչառութիւնը։ Ալյեկսան իւր բարակ, հեշտախտութիւնից դողդոջուն շրթունքը հպեցնում է քնողի երեսին, մի քանի ջերմ համբոյրներ քաղում է նրա նոյն ժամանակ վառուած թշերից, եւ միւսանգամ սկսում է մեղմիկ խեթել նրա կողքը, շփել իւր դալար մատներով նրա երեսը ու բաց կուրծքը։

Պարոն Ռուստամը զարթնում է, նա զարհուրած կերպով վեր է թռչում, եւ երբ Ալյեկսան շուտով ծա-

Digitized by Google

նօթուխիւն չէր տուած իւր մասին, իսկոյն չարդուփշուր կը լինէր այդ հսկայի ոտքերի տակ։

— Մի՛ վրդովիք, հեզիկ ասաց նրան ազջիկը։

— Ա՛խ, Սալքի, դո՛ւք էք, կրկնեց պարոն Ռուստամը։

— Որքան անզգայ քնած էիք, ես մոտծեցի կոշղոպտել ձեր սենեակը։

— Իրաւունք ունիք ամաչեցնել ինձ, պատասխանեց մանուկ տղամարդը։ Ուրեմն ես կ համբուրեմ քեզ, իմ նազելի Պալլաս, կրկնեց նա սեղմելով իւր կուրծքի վրայ չքնաղագեղ օրիորդը։

— Մոտծեցէ՛ք, Ռուստամ, ոչքան մեծ բան է սէրը, խօսեց օրիորդը գաղտնի համակրութեամբ։ Ես ոչքան մեծ է նա, այնքան կատարի եւ անխելք է։

— Բայց ոչքան անխելք է, այնքան քաղցր է։

— Սէրը քաղցր է, երբ երկու կողմից եւս ունի իւր հաւասարակշիռ ազգնիսական ձգողութիւնը, պատասխանեց օրիորդը։ Բայց Սոլոմոն-Բէկը նոյնպէս սիրուած է ինձ, եւ նրա սէրը կատարի ու անխելք է, բայց երբեք քաղցր չէ . . . ։

Պարոն Ռուստամը ժպտեցաւ։

— Ինչո՞ւ քաղցր չէ, եւ ինչո՞ւ չէք կարող սիրել նրան, հարցրեց նա։

— Որպէս մի տէրութեան մէջ չեն կարող կատարվարել երկու թագաւորները, նոյնպէս եւ մի սրտի մէջ երկու սէր, պատասխանեց օրիորդ Սալքին։

— Ուրեմն դուք բացի ինձանից ոչ ոք չէք սիրում։

— Ես բացի ձեզանից ուրիշները պատրում եմ։

Պարոն Ռուստամը լուռ եղաւ եւ երկու կողմից առժամանակ տիրեց լռութիւնը։

Digitized by Google

— Ուրեմն Սոլոմոն-Բէկը ի՞նչ խելքով մտածել է քեզ արծաթով գնել ձեզ, հարցրուց պարոն Ռուստամը: Ու ձեր մայրը ի՞նչ իրաւունքով կամենում է անել մի այդպիսի վաճառականութիւն:

Օրիորդ Սալբին պատասխան չը տուաւ:

— Եթէ ձեզ կ'անէին վաճառքի նիւթ, առաջ տարաւ պարոն Ռուստամը, ձեզ գնելու իրաւունքը առաւել հասանում է ինձ, որովհետեւ յառաջագոյն ես իմ ձեռքս դրած եմ ձեզ վրայ:

— Միթէ դուք ունէիք այնքան փող, հարցրուց օրիորդ Սալբին:

— Թէպէտ ես չունիմ այնքան փող, բայց կարող էի Միրզա-Փաթալիից խնդրել մի ժամանակ, մինչեւ ես կը գնայի օտար աշխարհները եւ կը վաստակէի այնքան արծաթ, որով կարողանայի հատուցանել ձեր հանգուցեալ հօր պարտքը, միայն թէ դուք հաւատայիք ճշմարիտ դէպ ինձ, եւ չը փոխէիք ձեր սէրը, մինչեւ իմ գալուստը:

— Արդարեւ, դուք կը լինէիք երկրորդ Աշըղ-Ղարիպը, պատասխանեց օրիորդը ժպտելով:

Պարոն Ռուստամը կարմրեցաւ ամօթից:

— Ռուստամ, հոգիս, շարունակեց նա, իրաւ որ սէրը գիժեցնում է . . . ինչո՞ւ դուք խօսում էք այսպէս տղայաբար: Դիցուք թէ, Միրզա-Փաթալին տիրել է այն ժառանգութիւնները, որ թողել էր իմ հայրը: Այդ ինձ ի՞նչ փոյթ: Դրա վրայ թող տրտմի իմ մայրը: Այդ անցքը ինձ չէր վերաբերում: Բայց եթէ կը յաջողէր Աստուած եւ մի օր Տիրոջ օրհնքով իմ անձս կը կապուէր քոնի հետ, այնուհետեւ, որքան կը տեւէր մեր կեանքը, թէ բարեբախտութիւնը եւ թէ դժբախտութիւնը՝ ամե-

Digitized by Google

նեւին զանազանութիւն չէր անելու մեզ համար. որով-հետեւ, դրանց երկուսին մենք բաժանորդ կը լինէինք միասին։

— Ախ, Սալըխ, ձեր խօսքերը մահացնում են ինձ, կրկնեց պարոն Ռուստասը, միթէ ես այնքան աղքատ եմ, որ չեմ կարող վայելուչ կերպով պահպանել ձեզ։

— Դարձեալ խօսում էք որպէս երեխայ, Ռուստամ. մեր կեանքը ինչ մի արժէքաւոր բան է, որ պէտք լինի նրա ապրուստի համար մտածել։ Միակ իրողութիւնը, որ պէտք է ամուսնական կեանքի համար, չէ ոսկի, չէ արծաթ, չէ թանկագին քարեր — միակ իրողութիւնը՝ որ շունչ է տալիս, կենդանացնում է ամուսնական կեանքը, է սէրը։

Պարոն Ռուստամը ոչինչ չը խօսեց, նա ախտալից սրտով միայն նայում էր իւր սիրուհու երեսին։

— Դուք պատմեցէք մի փոքր ձեր հովուական կեանքի մասին, ասաց նրան օրիորդ Սալըխին։

— Ես երկար գրած էի ձեզ այդ մասին եւ կը խօսեմ ձեզ յետոյ, եթէ դուք ախորժում էք լսել, բայց այժմ կամենում եմ առաջարկել քեզ մի խնդիր։

— Ո՞նչ խնդիր։

— Դու ցանկանում ես, որ մենք երկուքս միմեանց հետ ապրէինք միշտ այդպէս անօրէն սիրով։

— Ո՛չ, կարճ պատասխանեց օրիորդը։

— Ապա ինչ պէտք է արած, երբ թշնամիները ամէն կողմից շրջապատել են մեզ այստեղ եւ քահանաները չեն կամենում կապել մեզ օրինաւոր սիրով։

— Միթէ մոռացել էք ինչ որ ձեզ գրած էի։ Իմ միտքը, իմ դիտաւորութիւնը միեւնոյնն է, ինչ որ քանի օր առաջ յայտնել եմ ձեզ թղթով. այսինքն՝ գնալ,

Digitized by Google

հեռանալ այդ երկրից մի այլ աշխարհ, ուր կարելի էր հանգիստ եւ անվրդով կեանք վարել։

— Միեւնոյնը եւ ես կամքի առաջարկել քեզ, հոգիկս, կրկնեց պարոն Ռուստամը ուրախացած։ Ուրեմն երբ պէտք է դնել մեր դուրս գալու պայմանը։

— Երբ որ կամիս, ես միշտ պատրաստ եմ։

— Երկու օր դրանից յետոյ, այսինքն՝ շաբաթ կէս գիշերին։

— Շատ լաւ, պատասխանեց օրիորդը եւ վեր կացաւ։

— Ո՞ւր, հարցրեց պարոն Ռուստամը, ուղղակի նրա երեսին նայելով։

— Գողերը գործում են քանի մութ է, բայց լուսաբացին նրանք հեռանում են դէպ իրանց բնակարանները։ Մեր երկրի անկարգ սովորութիւնները պատճառ են տուել մեզ գողանալ միմեանց սէրը..., բայց ահա մօտ է լուսաբացը..., պէտք է հեռանալ։

— Արդարեւ, այդպէս է..., կրկնեց պարոն Ռուստամը։ Եթէ մի անբախտ ռոմանտիկիր մեր սէրը նիւթ կ'առնէր իւր վիպասանութեանը, ես զարմանում եմ, ինչ մի ցանկալի բան կարող էր գտանել նրա մէջ։

— Ոչինչ... մեր երկուսիս կեանքը դարտակ է...։

Օրիորդը սկսեց հեռանալ, պարոն Ռուստամը գնաց նրան ճանապարհ դնելու։

Ծաղկաւանի բոլոր տները կից են միմեանց. նրանց կտուրների վրայից կարելի էր գնալ գիւղի մի ծայրից դէպ միւսն։ Ու այդ միմեանց հետ կպած տուների մէջ կային ծակեր, այնպէս որ, առանց դուրս գալու, ծակերի միջով, մի եղբայրութիւն մի րոպէում կարելի էր բոլոր գիւղի մարդկանցը իմացում տալ։ Պարսկաստանի հայերի եւ ջհուտների բոլոր տուները ունին այդպիսի ձեւեր։ Ու այդ առանց

պատճառի չէ։ Յարաժամ երկիւղը՝ գողերից, թշնամիներից՝ պատճառ են տուել նրանց այնպէս սեղմուիլ միմեանց հետ եւ այնպէս սերտ գրկել միմեանց . . . ։

Ճանապարհը, որ տանում էր Տէր Առաքելենց կտուրից մինչեւ Ծերունի Մկրտչի տունը, բաւականին երկար էր եւ պէտք էր անցնել բաւականին շատ կտուրներ։ Պարոն Ռուստամը իւր սիրուհու հետ անցաւ մի քանի կտուրներ։ Մութը խորին էր եւ աղջամղջին։ Շուները կատաղած հաչում էին նրանց ոտնաձայներից ու կտուրների երդիկներից շատ անգամ լսելի էին լինում դեռ եւս քնած գիւղացիների ձայները — "էյ, այն ո՞վ է . . .„։

Գիւղական կեանքում կից կտուրները մեծ բախտաւորութիւն են անբախտ սիրողների համար։ Նրանք, լոյս ցերեկով չը կարողանալով միմեանց տեսնել, շատ անգամ, օգուտ քաղելով գիշերների խաւարից, կտուրների անմարդ անապատի մէջ կարողանում են գտնել մի անկիւն, մի քանի ժամ միմեանց հետ խօսելու, եւ իրանց այրուած սրտերի խորհուրդը միմեանց յայտնելու։ Ասիական աշխարհի մէջ այդ փոքրիկ անկիւնը առաւել ախորժելի է այդ անբախտների համար, քան թէ մի պարտէզ, բուրաստան կամ ծաղկոց։ Որովհետեւ, այստեղ նրանց ծնողքը եւ ոչ այլ մարդիկ չէին կարող տեսանել նրանց . . . ։ Լուսինը, փայլուն աստղերը, երբեմն տեսնում են նրանց եւ լսում նրանց ջերմ, հեշտախտութիւնից բորբոքուած, համբոյրները։

Պարոն Ռուստամը մինչեւ Ծերունի Մկրտչի տունը, ճանապարհ դրեց իւր սիրուհին, եւ մի քնքոյշ գրկախառնութիւնից յետոյ, նրանք բաժանուեցան միմեանցից։

Պարոն Ռուստամը դառնալով, իւր սենեակի դրանը հասնելով, ներսից լսեց մի թխկոց եւ մարդու զգեստների

Digitized by Google

խշխշոց։ Նա կասկածանօք մօտեցաւ լուսամուտին, վառ ճրագի լուսով տեսաւ իւր սենեակում մի պարսիկ՝ բարձր հասակով, որ՝ կանգնած իւր մահճակալի մօտ, մերկացուցած դաշոյնը ձեռքին, անդադար հարուածներ հասցնում էր մահճի վերմակին, մտածելով, թէ նրա տակին քնած էր մարդ։ Նրա մանուկ սրտի անհամբերութիւնը թոյլ չը տուաւ նրան երկար մտածել։ Նա շուտով բաց արաւ դուռը, նետս մտաւ եւ աննկարագրելի արագութեամբ՝ յարձակեցաւ աւազակի վրայ, եւ յետքից պինդ բռնեց նրա թեւքերը։ Աւազակը, ոչ այնքան պարոն Ռուստամի անհամեմատ ուժից, որքան մի այդպիսի յանկարծակի յափշտակուիլն զերբնական զօրութիւնների ընծայելով, իսկոյն թուլացաւ եւ տարածուեցաւ յատակի վրայ մեր քաջ հերոսի ծնկների տակ։ Նա շուտով կապեց նրա թեւքերը եւ ոտքերը, ձէնքերն առաւ, սկսեց հարցնել.

— Ասա, չարագործ, դու ինչ նպատակաւ եկել էիր այստեղ։

— Ես եկել էի քեզ սպանելու համար, պատասխանեց աւազակը աներկիւղ համարձակութեամբ։

— Ո՞նչ թշնամութիւն ունէիր ինձ հետ, չէ՞ որ ես քեզ ոչինչ վատութիւն չեմ արած։

— Այդ ստոյգ է, բայց ես կատարում էի մի այլ մարդու՝ քո թշնամու կամքը։

— Ո՞վ է այն մարդը, ուղղորդն ասա, եթէ ոչ կը սպանեմ քեզ։

— Ես կ'ասեմ քեզ, թէ ո՛վ է նա, ոչ այնքան երկիւղ կրելով քո սպառնալիքից, որքան պատիւ դնելով քո քաջութեանը եւ տղամարդութեանը, որով անկած եմ ես այդ յատակի վրայ։ Իրաւ, ոչ ոք մինչեւ այսօր չէ զարկել իմ կողքը գետնին . . . բայց ես ուրախ եմ, որ

Digitized by Google

հանգամանքները այնպէս բերեցին, որ իմ ձեռքը չը թա-
թախուեցաւ ձեր արիւնով։

— Պատմիր, երկար մի խօսիր, կեղծաւոր, ես լաւ
կը ճանաչեմ ձեր ազգի հոգին։

— Դուք ունիք մի ամենավտանգաւոր թշնամի՝ Աւա-
զակեանց Սոլոմոն-Բէկը, նա ամենաստոխկ կերպով խեղա-
թարուած է ձեր նշանածի՝ օրիորդ Սալբիի սիրով։ Բայց
այդ սէրը ընդդէմ լինելով նրա հօր Մելիքի կամքին, եւ
կամենալով հեռացնել իւր որդին մի այդպիսի ցանկու-
թիւնից, մտածել է նա կորուսանել, որպէս քեզ, նոյն-
պէս եւ օրիորդ Սալբին։ Դրա համար այս գիշեր կանչեց
ինձ նա իւր մօտ — "Ապպաս, ասաց նա ինձ, առանց
ժամանակ կորուսանելու կը մտնես Ցէր Առաքելենց Ռու-
տամի քնարանը եւ նրա կտրած գլուխը կը բերես ինձ,
որի փոխարէն ես կը տամ քեզ լի բուռով ոսկիներ, մին-
չեւ առաւօտեան կը մտածէինք եւ օրիորդ Սալբիի հա-
մար . . .„։

— Ի՞նչ յարաբերութիւն կար քո եւ Մելիքի մէջ,
որ դու յանձն ես առել գործել մի այդպիսի չար դաւա-
ճանութիւն, միթէ միմիայն ոսկիների համար, հարցրեց
պարոն Ռուստամը զարմանալով։

— Ո՛չ, թէ ոսկի եւս չը լինէր, դարձեալ ես պար-
տաւորուած էի կատարել նրա կամքը։ Մենք աւազակներ
ենք թուով աւելի քան տասն, որ ծառայում ենք Մե-
լիքին։ Բոլոր Ասիան կողոպտում ենք եւ լցնում նրա
տունը։ Մելիքը գաղտնի կերպով վաճառում է մեր կո-
ղոպուտները եւ հարկաւորուած ժամանակ արծաթը տալիս
է մեզ։ Մեր ձեռքով նա ժողովել է իւր այնքան մեծ
հարստութիւնը։ Բայց երբ պատահում էր, մեզանից մինը
կալանաւորուած էր տէրութիւնից, ուր որ լինէր այդ,

Digitized by Google

Մելիքը անհուն գումարներ գործի է դնում մեզ ազատելու համար. այդ պատճառով, մենք միշտ կալւստուԹիւն ունինք նրան, որ իւր ձեռքում ունի երկու զօրուԹիւն՝ արծաԹ եւ իշխանուԹիւն:

— Մելիքը վաղուց պարապվում է այդ արհեստով:

— Վաղուց . . . մենք շուտուց ճանաչում ենք նրան, համալեա նրա երեխայուԹիւնից . . . , պատասխանեց աւազակը խորհրդական ձայնով: Պարոն, դուք մի նայիք նրա երեւելի բարեպաշտուԹեանը. դա մի շատ վտանգաւոր մարդ է: Երբ մի մարդու նա կամէր վնէժինդիր լինել, նրա տունը կողոպտել է տալիս, նրա վիզը կտրել է տալիս, նրա կինը եւ աղջիկները խայտառակել է տալիս . . . : Իսկ առաւօտեան ինքը իբրեւ Թէ ոչինչ բանից լուր չունի, սկսում է որոնել գողը . . . :

— Նա իւր այդպիսի չարուԹիւնները գործ է դնում եւ հայերի՞ վրայ:

— Նրա համար ոչինչ զանազանուԹիւն չունի, Թէ հայ, Թէ Թուրք եւ Թէ Ջհուտ՝ բոլորը մի են:

"Իսկզձ հայեր, բաւական չէ որ ուրիշները կողոպտում են ձեզ, եւ ձեր գլխաւորները, ձեր իշխանները՝ ձեր մարմինն ցեց են դարձել . . .,,: Նա ընկղմուեցաւ խորին մտածուԹիւնների մէջ. մինչեւ այսօր չէր լսել մի այդպիսի բան Մելիքի մասին:

— Նա, պարոն, խօսեց աւազակը, ես չարագործ մէկն եմ, ինձ ներելի է, որ յանձն եմ առել քեզ ապանելու պաշտօնը, բայց դուք ձեր մեծահոգուԹեամբը ներեցէք ինձ, առանց պատժի արձակելով ինձ:

— Ես բաշխեցի քո պատիժը քո ուղիղ խոստովանուԹեանը, ասաց պարոն Ռուստամը, եւ սկսեց բաց անել նրա կապանքները:

Digitized by Google

— Ես ուխտ եմ դնում այսուհետեւ միշտ ճիշտ ձեզ հաւատարիմ բարեկամ, կրկնեց աւազակը։

— Քո բարեկամութիւնը ինձ պէտք չէ, միայն լաւ է, որ դու ուխտես թողուլ քո այժմեան արհեստը։ Որովհետեւ, քանի դու պարապվում ես չար գործերով, ինչ հաւատարմութիւն կարող է լինել քո բարեկամութեան մէջ։

— Հութիները (սրիկաները) նոյնպէս ունին իրանց յատուկ օրէնքը եւ ճշմարտութիւնը։ Գիտէք, այսուհետեւ Աւազականք չեն թողնելու իրանց չար խորհուրդները, որպէս քո, նոյնպէս եւ օրիորդ Սալըհի կեանքին դէմ որոգայթներ լարելու, եւ բոլոր այդ գործերի մէջ գործակատար լինելու ենք ես, իմ ընկերների հետ։ Ուրվում եմ ես Ապութալէպի որդի Ալիի անունով, միշտ հաւատարիմ լինել ձեզ, միշտ յայտնելով ձեզ նրանց դաւաճանութիւնները, եւ հարկաւորած ժամանակ, չը խնայել իմ ծառայութիւնները գործիքով — իմ սրով։

— Դէ, վեր կաց, ասաց պարոն Ռուստամը, առ ղէնքերդ, հեռացիր. քանի մութ է, ոչ ոք չէ տեսանելու քեզ։

Սրիկան գոհունակութեամբ համբուրեց իւր բարերարի ձեռքը եւ հեռացաւ։

Պարոն Ռուստամի քունը փախաւ աչերից. զանազան խառն մտածմունքներ պաշարեցին նրան, նա յիշեց սրիկայի խօսքը, որ ասել էր Ագան Մելիքը. "Ապագա, կը մտնես Տէր Առաքելենց Ռուստամի քնարանը... նրա կտրած գլուխը կը բերես ինձ... մինչեւ առաւօտեան կը մտածէինք եւ օրիորդ Սալըհի համար..."։

Քաջասիրտ տղամարդը, որին երկիւղ ասած բանը անծանօթ էր, սկսեց վախենալ, եւ վախենալ ոչ թէ իւր

մասին, այլ իւր սիրուհոյ համար: Նա հաստատ որոշեց իւր մտքում, առաւօտեան հրաժարական ողջոյն տալ իւր բարեկամներին եւ երեկոյեան գաղտնի դուրս գալ ծաղկաւանից:

Նա մօտեցաւ գրասեղանին, սկսեց գրել այդ նամակը իւր բարեկամին, որ թողել էր սարում իրան տեղապահ:

"Ազնիւ բարեկամ

Պարոն Վ. . .,,

"Նա մի քանի օրուայ համար, խաշնարածների վերատեսչութիւնը ձեզ յանձնելով, եկայ տուն, յոյս ունենալով, թէ շուտով կը դառնամ դէպի ձեզ: Բայց հանգամանքները, ընդդէմ իմ կամքին, փոխեցին նպատակս, եւ ես ստիպուած եմ խնդրել ձեզ, այս տարի մինչեւ վերջը յանձն առնել այդ նեղութիւնը:

"Սիրելի Վ. . . , "խորհուրդ մարդկան — կամք Աստուծոյ,,, ասում են գրագէտները. — "Մարդի ասած — Աստծոյ լսած„ — ասում է առածը: Նղբայր, ձեր մարգարէութիւնը կատարուեցաւ. ես ստիպուած եմ, իմ սիրուհու հետ, դուրս գնալ իմ հայրենի երկրից. դուրս գնալ, չը գիտեմ ուր:

"Ո՞ւր, կրկնելու էք դուք. հայի համար ամէն տեղ միեւնոյն է. հայի համար ամէն տեղ լոյս է տալիս միեւնոյն մռայլուած, խաւարած արեգակը:

"Ընդարեւ, այդպէս է . . . բայց ես չեմ գնում ուրիշ աշխարհներում բախտ որոնելու, ես գնում եմ փորձելու նոր անբախտութիւններ. ես գնում եմ տեսնել նորանոր անբախտ հայեր, լսել նրանց լացը, աղաղակը, նրանց ցաւակից լինել, նրանց հետ արտասուել. . . :

Digitized by Google

"Բայց հայրենիքը — այս ինչ յիմար բառ է, որ գործածում եմ ես. հայի համար ուր է հայրենիք: — Բայց հայրենիքը, ասես թէ, ատում է ինձ. նա խորթ-մայրի թեամբ նայում է ինձ վրայ:

"Շղթայը, այստեղ քահանան արբունքեան տեղ թողն է մատուցանում հիւանդին: Իշխաններըը աւազակների խումբ են բանացնում: Անկարգ շառիթը իրաւունք է տալիս մուսուլմանին խարդախ գրաւաթղթով տիրել այրի կնոջ անշարժ կալքը: Ու մայրերը վաճառում են իրանց աղջիկները, ազատելու համար իրանց կորուսած ժառանգութիւնները, որ ապրէին: Վասակները՝ օգուտ քաղելով մարդիկների տգիտութիւնից, որպէս չղջիկները գիշերի խաւարից, ծծում են իրանց զոհերի արիւնը: Ու արծաթը բեկերի ձեռքում հրաշք է գործում. . . :

"Ինձ երեւում է, թէ այդպիսի աշխարհի օդը թունաւորուած է եւ բնակիլ նրա մէջ անկարելի է:

"Ինձ կ'ասեն, այդ մի նոր բան չէ հայերի կեանքի մէջ. հայերի մէջ ամէն տեղ անպակաս են եղեռնագործ տէր Մարկոսներ, աւազակ Մելիքներ, խաբեբայ Միրզա-Փաթալիներ, փոփոխամիտ տիկին Թալլաններ, օգտածարաւ վաճառներ եւ այլն. . . : Այդ իրաւ, դարանք բոլորն կան: Բայց հայերի մէջ ամէն տեղ դժուար կարելի է գտնել — ինքնահաստատ ոգեհոգեր:

"Ես ամենաերին առն արտով դուրս եմ գնում այդ երկրից: Բայց մի տխրութիւն, որ տանում եմ ինձ հետ՝ է այն, որ ես չը կարողացայ երկար ժամանակ իմ խաչնարածների մօտ մնալ, եւ իմ բոլոր սկսածներս նրանց մնացին՝ մնացին անկատար, իմ բոլոր խորհուրդներս նրանց մնացին՝ եւ պիտի տանջեն ինձ գերեզմանում: Բայց միւս կողմից ուրախ եմ, որ նրանց համար թողնում եմ ձեզ

Digitized by Google

նման մի ոգեվից տղամարդ, որ կրում է իմ գաղափարներս, իմ հոգին . . . :

"Նա միակ յոյսը, որ մխիթարելու է իմ պանդխտութիւնս, է այն, որ ես իմ հետ տանում եմ մի ընկեր, որ կարող է կարեկից լինել ինձ, որ ընդունակ է հասկանալու իմ ուրախ եւ տխուր զգացմունքները, որ կարող է ինձ հետ լալ եւ ինձ հետ ծիծաղել:

"Բայց սիրելի վ. . . դուք մի մոռանաք երբեմնապէս գնալ այն անբախտ թափառական վրանաբնակների մօտ, դուք սրբեցէք արտասուքը այն այրի կնոջ աչքերից, դուք մխիթարեցէք նրան:

"Ողջոյն մատուցէք սիրոյ համբոյրներով իմ բոլոր բարեկամներին, ճնաք բարեաւ, իմ բարեկամ, գուցէ այլ եւս չենք տեսնելու միմեանց . . . :

"Ձեր արտակից բարեկամ այժմ եւ միշտ

"Տէր Առաքելենց Ռուստամ":

ԼԴ.

ԿԱԼՈՒԾԱՏԷՐ ԽԱՆԸ

— Ո՞ւր այդպէս շտապաս, Մարտիրոս եղբայր, առաւօտեան շուտ գնում ես, հարցրեց գիւղացի Յաչատուրը իւր դրկիցից։

— Գնում եմ... ասում են Յանը եկել է Աւազակենց տանը, բոլոր մարդիկ գնացին ասլամ, ես ել գնում եմ... գիտե՛ս մեր դրկիցների սատանութիւնը, թէ այնտեղ չը գնում իմ քարփուչը[1] չուրը կը չնեն, ասաց Մարտիրոսը։

— Ուրեմն կանգնի՛ր, միասին գնանք, կրկնեց Յաչատուրը։

Նրանք հեռուից տեսնում են գիւղացիների բազմութիւնը, որ խումբ խումբ գնում էին Աւազակենց տունը։

— Ի՛նչ գործի համար Յանը եկել է Աւազակենց տունը, հարց արեց Յաչատուրը։

— Բա՛, լսած չե՞ս, Յանը պահանջել է Ծովասաբենց աղջիկը՝ օրիորդ Սալբին, իրան կին առնուլ, այսօր պիտի բերեն, այնտեղ տեսնէ։

— Օ՛յ, Տէր Աստուած, կրկնեց զարմանալով Յաչատուրը. Յանին ոմ է հասկացրել, թէ օրիորդ Սալբին մեր գիւղի բոլոր աղջիկների գեղեցկուհին է։

---

[1] Պարսկաստանում գործ են ածվում բուա մեծի մասին հում եւ անթուրծ քարփուչներ (ազիւաներ), որ ջրում դցածին պէս փչրվում են։ Մի մարդու քարփուչը ջուրը դնել, ասել է՝ նրա գործը խանգարել։

Digitized by Google

— Ըհ՛հ, եղբայր, պատասխանեց Մալտիրոսը... "Գողը որ տանից լինի, եզն երդիկից կը հանէ„: — "Ծառի որդը իրանից չը լինի, հազար տարի կ'ապրէ„: — "Մեր գողն մեր տանիցն է, մեր որդն մեր ջանիցն է...„:

— Ո՞վ էք կարծում, որ լինէր այդ անաստուածը:

— Միթէ չէ՞ք ճանաչում մեր գիւղի չարութեան դեւը, ո՞վ պիտի լինի, եթէ ոչ Մելիքը. Յօանի հետ խօսքերը մի են արած՝ խեղճ գիւղացիների տուները քանդում են:

— Այդպէս է, եղբայր, երկու սատանայ երբ միացան, աշխարհս մատի վրայ պտոյտ կը տան: Բայց ասա՛, խնդրեմ, ինչ առիթ ունէր Մելիքը այդպիսի անիրաւութիւն գործելու:

— Որպէս ես լսեցի, անցեալ օր մարդիկ խօսում էին, թէ Սոլոմոն-Բէկը միտք ունէր Ծովասաբենց աղջիկը իրան կին առնուլ: Նրա մի այդպիսի ցանկութիւնը ընդդէմ էր հօր կամքին, եւ կամենալով հեռացնել իւր որդուց մի այդպիսի միտք՝ Մելիքը մատնել է օրիորդ Սալբին, որով մի կողմից Սոլոմոն-Բէկը կը զրկուի իւր սիրուհուց, միւս կողմից Յօանին մեծ ծառայութիւն արած կը լինի Մելիքը:

— Ատուած քեզ մի պատիժ չը տայ, Մելիք Պիլատոս, կրկնեց Յօաչատուրը վշտանալով, ինչ ասել է Հուսաւորչայ լոյս հաւատը կորցնել եւ Քրիստոսի անմեղ գառը գայլերի բերանը գցել:

Մելիք Աւազակեանցի ընդարձակ դահլճում, զարդարած պարսկական ամենաշքայլ եւ զեխ ախորժակով, Յօանը, մէջքը տուած մախմուրի փափուկ բարձերին, նստած էր մի թանկագին օթոցի վրայ, ասղնագործած ոսկի թելերով: Նրա գեղեցիկ մանկլաւիկները, փառաւոր

Digitized by Google

հագնուած, ձեռքերը կուրծքի վրայ փակած, կանգնել էին Յօանի առջեւ եւ զգուշութեամբ սպասում էին նրա հրամաններին։ Նրանցից մի փոքր հեռու, նոյնպէս ոտքի վրայ, ձեռքերը սրտին դրած, ստրկական հնազանդութեամբ, կանգնել է Մելքը, իւր հասակ ահագին մարմնով։ Բացի դրանցից դահլճի մէջ ոչ ոք հրաման չունէր կանգնել Յօանի առջեւ։ Բայց բակումը, դահլճի բաց արած լուսամուտների հանդէպ, կանգնած են վարոցաւոր Փէրրաշները եւ նրա միւս ծառաները, ղալաւի երկայն գդակներով եւ լեզկու խանջալներով։

Փէրրաշներից շատ հեռու, բակի մէջ, բոբիկ[1] ոտքերով, լուռ եւ անձայն, որպէս անշունչ էակներ, իրանց ձեռքերը փակած, խառնիխուռն, միմեանց յետքից՝ կանգնած էին գիւղացիները։ Նրանց ամէն մէկը, բակի դռնից մտնելով, մինչեւ Յօանին մի փոքր մերձենալն, հարիւր անգամ գլուխ էր խոնարհեցնում, թէպէտ գոռոզ բռնակալը ամենեւին ուշադրութիւն չէր դարձնում նրանց։

Մի քանի մարդիկ գիւղացիներից իրանց գլուխների վրայ բերեցին ահագին փայտեայ սկուտեղներ, որ տուին մանկլաւիկներին, որ նոյնպէս իրանց գլուխների վրայ առած՝ ներս տարան, դրեցին Յօանի առջեւ։ Նրբ ծառաները բարձրացուցին նրանց երեսներից շալ ծածկոցները, սկուտեղների մէջ դրած էին քաղքրաւենիների անհուն տեսակներ, մեծ մեծ շաքարների պլուխներ, թէյի կապոցներ եւ մի փոքրիկ ամանի մէջ լցրած ոսկի դահեկաններ — դիշքիրատ — Յօանի ատամների վարձը, որով բարե-

---

[1] Պարսից փառասէր իշխանները, իրանց գնելով այն էակի տեղ, որ մերենալ պիտի ձայն տուեց մարգարէին. — "աբձակէր կօշկներդ„ — երբեք թոյլ տուած չեն իրանց հպատակներից մէկին ոտքի ամաններով մերձենալ նրանց։

Digitized by Google

հաճէր նա ընդունել նրանց բերած ընծան, եւ իւր ատաճիներին նեղութիւն տալով, հաճէր ուտել . . . :

— Ի՞նչ նեղութիւն էք կրել, ես առանց դրանց չնորհակալ եմ ձեզանից, ասաց նա հպարտութեամբ աչք ձգելով ընծաների վրայ: Դուք ձեր չափազանց հնազանդութեամբ միշտ զբաղցուցել էք իմ սիրտը ձեզ վրայ եւ իմ աչքը միշտ քաղցրութեամբ նայում է ձեզ վրայ:

Ժողովրդի միջից մի մարդ եւս չը կարողացաւ համարձակուիլ մի քանի բառ խօսել Յօանի առջեւ: Միայն նրանք մինչեւ գետին երկրպագութիւն տալով, նրանց միջից լսելի էին այսպիսի խօսքեր. — "Ցերը թող երկար կեանք տայ ձեզ, ձեր թուրը միշտ կտրուկ անէ . . . մեր կեանքից կտրէ ձերի վրան դնէ . . . „:

Բայց Մելիքը, իւր երկար տարիների ծառայութեամբ, մի փոքր համարձակութիւն ստացած լինելով Յօանի սպասաւորութեան մէջ, ժողովրդի կողմից խօսեց այդպէս.

— Քեզ մատաղ լինինք, Վեհափառ Յօան, մենք ձեր ոտքի տակի հողն ենք եւ ձեր կօշիկների փոշին: Ցերը Աստուած ի պատիւ մեծ մարգարէին (Մուհամէտի) թող օրհնէ ձեր կեանքը. ձեր փառքը, ձեր կարողութիւնը եւ ձեր զօրութիւնը՝ թող միշտ զօրացնէ: Մենք ու մեր որդիները, բոլոր գերդաստաններով՝ ձեր անարգ ծառաներն ենք, եւ դուք պէտք է միշտ անպակաս անէք մեզանից ձեր կարող ձեռքի հովանաւորութիւնը, ձեր բարեսրտութեան առատագութ ցօղը, եւ ձեր մեծահոգի ողորմածութեան բարի խնամքը, որպէս զի, մենք՝ հանգստութիւն գտնելով, մեր ծառայութեամբ աշխատինք ձեզ համար:

Մելիքը լռեց: Բոլոր բազմութիւնը զարմանում էին նրա անվախ ճարտարիուսութեան վրայ եւ գովասանում

Digitized by Google

էին նրան, որ այնպէս համարձակվում էր փոփկացնել Յօանի սիրտը։

— Հաւատացնում եմ ձեզ տասն երկու իմաստներով անունով, խօսեց Յօանը, ձեռքում շարժելով իւր փոքրիկ գաւազանը, եւ երդվում եմ իմ պապերի սուրբ ոսկորներով, որ ես երբեք իմ սիրելի ծառաներից չեմ որոշելու ձեզ, եւ որպէս իմ արժանայիշատակ պապերը միշտ խաղաղութեամբ պահպանել են ձեզ, ես էլ աշխատելու եմ եւս առաւել բաշխել ձեզ հանգստութիւն եւ բարօրութիւն։

— Աստուած երկայն կեանք տայ ձեզ, գոռացին գիւղացիները, մենք մեր աչքերից գանգատ ունինք, ձեզանից երբեք ոչ։

"Ողորմելի ժողովուրդ,,, խօսեց անլսելի ձայնով պարոն Ռուստամը, որ այն ժամանակ նստել էր բակի մի անկիւնում, եւ նայում էր գիւղացիների ստրկական հնազանդութեանը, եւ լսում էր նրանց փոքրոգի խօսքերը։ Երկար եւ ձիգ տարիների բռնակալութեան հարկը եւ գերութիւնը բարբարոս իշխանների թրի տակ՝ ոչինչ չեն կարողացել աւելացնել այդ ազգի հոգու մէջ, բացի մի կեղտոտ կեղծաւորութիւն եւ մի ստոր, փոքրոգի խոնարհութիւն։ Արդարեւ, այդպէս է աշխարհի կարգը. երբ մէկը չէ կարող ինքնուրոյն պահպանել իւր անբախտ գլուխը, իւր մարդկութեան ազատ անձնիշխանութեան մէջ, նա պարտաւոր է խոնարհիլ ուրիշի թրի տակ, եւ աղաչանքով, կեղծաւորութեամբ, նրա կամքին գործիք դառնալով, պահել իւր գլուխը . . . Ահա այդպէս է մեր ազգի վիճակը . . .։

Բոլոր բազմութեան մէջ քրթմնջոց ընկաւ, թէ ահա բերեցին Ծովասաբենց Սալբին։

Digitized by Google

Եւ արդարեւ, երկու թուղթի կանայք, Յովնի հարեւմատան պառաւներից, իրանց կապոյտ չարշաւների մէջ փաթաթած, բերում էին մի այլ կին, սպիտակ չարշաւով։ Շրջ հասցրել էին նրան Յովնի հանդէպ, նա հրամայեց պառաւներին բարձրացնեն նրա երեսի քօղը։ Ի՞նչ զարմանալի փոփոխութիւն . . . ։ Ընեսաքօղի տակից դուրս երեւաց մի այլանդակ եւ տգեղ կերպարանք, ներկուած գորշ եւ մռայլոտ դեղնապղնձի գունով, սովորականից շատ մեծ, զարհուրելի աչքերով, որ վառվում էին գերբնական փայլողութեամբ։ Այդ ահագին, բարձրահասակ մարմինը, իւր կերպարանքի սարսափելի գծագրութեամբ, ոչ միայն վրդովեց Յովնի կատաղի բարկութիւնը, այլ եւ մի անսովոր երկիւղ ձգեց նրա սրտում։

— Դուք ինձ վրայ ծիծաղո՞ւմ էք, դժոխքի ծնունդներ, գոռաց նա պառաւներին։

Պառաւները սկսեցին զարհուրելի երդումներով հաւատացնել Յովնին, թէ այդ ճիւաղը մի եւ նոյն աղջիկն էր, որ խոստացել էին նրան, բայց իրանք նոյնպէս զարմանում են, թէ որպէս կերպարանափոխ եղաւ նա։

— Վօֆակ (գամիւռ), բարկանալով ասաց Յովնը Մելիքին, այս է քո ինձ խոստացած աղջիկը, ուրեմն դու խաղ ես անում ինձ հետ. դու խայտառակել կամենում ես իմ հարեմատունը, սպասի՛ր, դու կը ստանաս իմ վրէժխնդրութեան ծանր պատիժը։

Քրտինքը խոշոր կաթիլներով սկսեց թափուիլ Մելիքի ճակատից եւ անհետանալ նրա մօրուքի մէջ. նրա երեսը ամօթուց կարմրեցաւ աղիւսի գունով. նա ուզում էր գետին մտնել. որովհետեւ, Յովնը նրան բոլոր բազմութեան առջեւ կոչեց քօփակ։ Բայց եւ այնպէս, նա չէր կարողա-

Digitized by Google

նում հասկանալ այդ զարմանալի եւ տարապայման անցքի պատճառը։

— Ա՛յ գիւղացիք, ասաց Յովանը սպառնացած, բոլորիդ գլուխները այս րոպէիս կտրել կը տամ, եթէ չը գտնէք այս վայրկեանում այդ աղջիկը։ Դուրէք դուք, գարշելիներ, ասաց նա պառաւներին։

Սարսափը եւ զարհուրանքը տիրեց խղճալի ժողովրդին։ Նրանց աչքերը սեւացան, նրանց գլուխները պտոյտվեցան. նրանք դողում էին ահից եւ երկիւղից։

Պարոն Ռուստամը ինքը մնացել էր զարմացած, որովհետեւ նա իւր աչքով տեսաւ, երբ առաւօտեան շուտ Յովանի անթիւ ֆէդրաշները շրջապատեցին Ծերունի Մկրտչի տունը, օրիորդ Սալբիին բռնեցին, տուեցին պառաւների ձեռքը. ինքը չը կարողացաւ օգնել իւր սիրուհուն, եւ ճարահատեալ դիմեց Աւազակենց տունը, գուցէ մի հնարքով ազատէր նրան։ Բայց տեսնելով զարմանալի փոփոխութիւնը՝ նա մնաց սառած, թէ ինչ գաղանիք էր այդ, ուր անելութեացաւ օրիորդ Սալբին. ուսկից յայտնուեցաւ այդ ղարաչի կինը, որ քանի օր առաջ տեսել էր տներում մեզ էր գալիս, ֆալ բաց անում (հմայում) եւ հաց ժողովում։ Նա որ երբեք չէր հաւատում գերբնական ղօրութիւնների, ընկղմուեցաւ խորին կասկածների մէջ, թէ այդ գործի մէջ թագուցած էր մի անբնական գաղտնիք։ Բայց լսելով Յովանի սպառնալիքը, տեսնելով գիւղացիների տագնապը եւ զարհուրանքը, թողեց իւր մտածմունքը, մօտեցաւ Յովանին ու խօսեց.

— Ինչո՞ւ դուք մի խաբեբայի (Մելիքի) խօրհրդով հաւատում էք այդ խեղճ գիւղացիների հանգստութիւնը. ինչո՞ւ հայհոյում էք այդ ողորմելի ժողովուրդը, որ այսպէս հնազանդութեամբ իրանց գլուխները ծռել են ձեր

Digitized by Google

առջեւ: Բաւական չէ՞, որ դուք խլում էք մեր կայքը, կարասիքը, մեր բոլոր ապրանքը, եւ մեր ընտանիքն էլ ծառայ պիտի լինին ձեր անիրաւ կամքին. ո՞վ է տուել ձեզ այդ իշխանութիւնը, դուք չէ՞ք գիտում, որ մեր կրօնքը երկնքից մինչեւ երկիր մեզ հեռացրել է ձեզանից եւ մեր ու ձեր մէջ անկարելի է խնամութիւն:

— Ողբան դուք այդպէս պինդ կապուած կը լինիք ձեր մոլար կրօնքին, միշտ կը ցաւք խեղճ եւ մեզ ծառայ, պատասխանեց Յօանը թուռնաւոր հայհայդուկով:

— Ո՛չ, ողբան մենք պինդ կապուած կը լինինք տգիտութեան եւ կործանիչ անմիաբանութեան, միշտ կը ճնանք խեղճ, բայց գիտէք, որ հասել է ձեր բռնակալութեան վերջը... եւ հայը մինչեւ իւր արիւնով կարող է վըէժխնդիր լինել ձեզ...:

— Զայնդ կտրէ, լերբ շուն, պոռաց բռնաւորը. ես այս րոպէիս կտրել կը տամ քո լեզուն եւ դու կը ճաշնաչես քո չափը:

Ու նա հրամայեց դահիճներին, որ նրա լեզուն կտրեն:

Պարոն Ռուստամի մօտ կանգնած գիւղացիները, լուռ, աչքով, յօնքով՝ նշանացի էին անում նրան, որ չը խօսէ այդպիսի հանդարձակ խօսքեր, որով ո՛չ միայն իւր անձը կը ձգէր պատժի տակ, այլ բոլոր հայերը նրա պատճառով վտանգի մէջ կ'ընկնէին: Բայց արիասիրտ տղամարդը ուշադրութիւն չը դարձրեց թուրքահոգի եւ վախկոտ ամբոխին, նա խօսեց Յօանի երեսին եւ աւելի անպատշաճ խօսքեր, մինչեւ անգամ հայհոյանքներ:

Անբաւիտ տղամարդ, արդարեւ, քո երակներում դեռ չէ սառած հայոց դիւցազունների արիւնը... եւ քո սիրտը զարկում է վսեմ ազգասիրական նախանձով...: Բայց դու մինակ ես. "մի ձեռքը ծափ չի զարկում...":

Digitized by Google

— Սպանէ՛ք, սպանէ՛ք, կտոր կտոր արէ՛ք, պոռաց Յօանը զարհուրանօք։

Երբ Ֆէրրաշները եւ Յօանի սարվաղները մօտեցան նրան, քաջն Ռուստամ՝ դուրս եկաւ բազմութեան միջից, քարշուեցաւ դէպ բակի արձակ կողմը, եւ մերկացնելով իւր ահագին թուրը, որ թագցրել էր իւր վերարկուի տակ, յարձակեցաւ Ֆէրրաշների վրայ, կոչելով — անիրաւներ, երեխայի՞ վրայ վազում էք դուք։

— Սպանէ՛ք, սպանէ՛ք, գոռում էր կատաղած Յօանը։

— Տեսնենք, ով շուտ կը սպանէ, կոչեց մեր քաջը աներկիւղ սրտով. մինչեւ այդ կատուները կը հասցնէին ինձ մի չնչին վէրք, ես բոլորին կ՚ուղարկեմ դժոխքը քո պապերի մօտ։

Այդ խօսքերի հետ նա զարկեց թուրը առաջին մօտեցող Ֆէրրաշի գլխին. արիւնը խաւարացրեց նրա աչքերը, հասցրեց մի սաստիկ հարուած երկրորդի կռան վրայ, գցեց մի երրորդի ուսը։ Բայց տակաւին ոչ մի վէրք չէր ստացել նա։

— Տօ, հեռուից թափանչով, ձայն տուեց Յօանը, ինքը նոյնպէս բաւականութիւնից վեր կենալով եւ իջանելով դահլճից կռուողների մօտ։

Երբ որ նրանք, չը կարողանալով մօտուց սրով զարկել նրան, կամեցան հեռուից հրացան գործիքներ արձակել դէպի նա, պարոն Ռուստամը, առանց ժամանակ կորուսանելու, իւր թուրը պատենին յանձնեց, եւ դուրս քերելով իւր գօտուց երկու թափանչա, մինը ուղղեց դէպի Ֆէրրաշները, միւսը դէպը Յօանը, ասելով — դու հրամայում ես ինձ սպանել թափանչով, բայց քո ծառաները խիստ թոյլ են երեւում կռուի մէջ, ուրեմն առաջադոյն դու ինքդ փորձիր իմ փնդակի զօրութիւնը։

Digitized by Google

Յովանը, նշմարելով անհրաժեշտ մահը իւր աչքի դէմ, եւ տեսնելով իւր ծառաների թուլասրտութիւնը, սկսեց կեղծաւորութիւն գործի դնել: Արդարեւ, նեղլ ընկած միջոցին պարսիկը բացի կեղծաւորութիւնից եւ խաբեբայութիւնից աւելի չնորհ չունի:

— Դու չես ամաչում, սեւերես, որ քո Յովանի վրայ ձեռք ես բարձրացնում, ասաց նա:

— Ինձ համար ոչինչ զանազանութիւն չը կայ Յովանի եւ մի ստոր չհուտի մէջ, երբ հարկաւորում է պահպանել իմ կեանքը եւ իմ պատիւը, պատասխանեց ալիսաիրտ Ռուստամը:

Նոյն ժամանակ մի մարդ բազմութեան միջից դուրս եկաւ, բռնեց պարսն Ռուստամի ձեռքը, ասելով. — աման, Ռուստամ, իմ որդի, իմ աչքի լոյս, խղճա քո ողորմելի հօրը, բաշխիր այդ խեղճ ժողովրդին, որ բոլորը քո պատճառով պիտի վտանգի մէջ ընկնին, սանձիր քո բարկութիւնը, մտածիր, թէ ինչ ծանր յանցանք ես գործում. . . :

Մահտեսի Աւետիսը հանդարտեցրեց որդու կատաղութիւնը եւ խլեց նրա ձեռքից թափանչաները:

— Ծերունիդ դու, ասաց Յովանը Մահտեսի Աւետիսին, առ նրա զէնքերը, տար, թող գայ իմ ձեռքս համբուրէ, որ ես բաշխեմ նրա յանցանքը:

Մահտեսի Աւետիսը, հաւատալով խաբեբայ եւ խրամանգ պարսկի խօսքին, բոլորովին զենաթափ արեց իւր որդին: Յովանը, տեսնելով նրան առանց զէնքի, հրամայեց իւր ծառաներին բռնեցին նրան եւ կապեցին թեւքերը: Նոյն ժամանակ մի անմազ մանկլաւիկ բարձրաձրուց խանջալը եւ ուզում էր խրել պարոն Ռուստամի սիրտը:

Digitized by Google

— Քո ձեռքով պիտի սպանուեմ ես, լակոտ, ասաց նա եւ իւր ոտքով այնպէս սաստիկ զարկեց մանկլաւիկի փորին, մինչ նա գլորուեցաւ եւ հինգ քայլ հեռու վեր ինկաւ գետնի վրայ:

Ամբ բոլորովին կապանաւորուած էր նա, ուխտազանց պարսիկը հրամայեց իւր ծառաներին, ամէն մէկը մի թափանչա արձակեն նրա վրայ: Յսեղճ Ռուստամի մահը հաստած էր: Այնքան բազմաթիւ հայերից ոչ ոք օգնեց նրան: Բոլորը, ահից, երկիւղից, սաստանուած, չորացած, սառն աչքով նայում էին այդ ցաւալի հանդէսի վրայ: Ու ոմանք շատ ուրախ էին, որ սպանվում էր մի այնպիսի գոռոզ եւ հպարտ տղամարդ, որ չը գիտէր չափ դնել իւր լեզուին:

Բայց Մահտեսի Աւետիսը, Յսանի ոտքերն ընկնելով, նրա սօլերը համբուրելով, լալով ասաց. — Ողորմած Յսան, բաշխիր ծերունի հօրը, մի սպանիր իմ որդիս, Աստուած չէ ընդունիլ այդ, դուք խոստացաք բաշխել նրա յանցանքը, դրա համար ես զինաթափ արեցի նրան . . . այդ մի տղամարդութիւն չէ յարձակուիլ անզէն մարդի վրայ, ողորմիր իմ ալիքներիս, այժմ անձնատուր է իմ որդին, արժան չէ այլ եւս սպանել նրան . . . նա դեռ մանուկ է, նրա խելքը հասուն չէ, խղճա ողորմելի հօրը, քո ծառային, մի սպանիր իմ որդին:

— Դա մանուկ է, այո՛, խօսեց Յսանը գլուխը շարժելով. դա օձի ձագ է, երբ մեծանայ, վիշապ կը դառնայ . . ., սպանէք, ասում եմ, հրամայեց ֆէրրաշներին:

Ծանկարծ բոլոր բազմութեանը տիրեց զարհուրելի սարսափ. եօթն հակայաձեւ տղամարդիկ, կայծակի արագութեամբ, մերկացուցած թրերը ձեռքերում, յարձակուեցան ֆէրրաշների վրայ:

Digitized by Google

— Թո՛ղ տուէք դրան, գոռաց ամպի որոտի ձայնով նրանցից մինը, թո՛ղ տուէք, ասում եմ ձեզ, եթէ ոչ բոլորիդ կը մորթեմ այս րոպէիս. դրանց մինն էր պարոն Յոսրով Մելիքզադէն։

Փերրաշները զարհուրեցան երկիւղից, տեսնելով Ապապաս-լութին եւ նրա աւազակ ընկերները, որոնց քաջութիւնը եւ արիւնախում բնաւորութիւնը բոլորին յայտնի էր։ Յովանը, որ բնութեամբ մի վախկոտ մարդ էր, աւելի երկիւղ կրեց. մտածելով, թէ ո՛չ միայն ինքն կամ իւր ծառաներն կարող չէին ընդդիմութիւն գործել նրան, այլ եւ, այն վտանգաւոր սրիկան, սպանելով բոլորին, մի գիշեր կը կորչէր եւ իւր որդիները գլուխները։ Այդ պատճառով, նա, ընդունելով աւելի հանդարտ կերպարանք, խօսեց — Ապպաս, դու գիտես, ես սիրում եմ քեզ իմ որդիներից առաւել, բայց մտածիր, այդ նեղվեալը որքան վշտացրել է ինձ։ Նա վերաւորել է իմ ծառաներից երեքին, որ անտարակոյս կը մեռնին, իրաւունք չէ; մի այդպիսի յանցաւորը անպատիժ ձնայ։ Որովհետեւ ես իմ կեանքում մի այդպիսի նախատինք կրած չեմ ոչ ոքից, ուր ձնաց, մի պիղծ Հայից, որ իմ հպատակս է, որ պատկանում է ինձ իւր կեանքով եւ արիւնով։

— Արդար է ձեր հրամայածը, Յովան, բայց այդ մեծահոգի տղամարդը մի օր պարգեւել է իմ կեանքը, եւ ես պարտաւոր եմ անել նրան մի եւ նոյնը, պատասխանեց սրիկան, պարոն Ռուստամի թեւքերի կապանքներն արձակելով, առանց սպասելու Յովանին վճռին։

Մելիք Աւազակեանցը մեռնում էր տհաճութիւնից, տեսնելով իւր աւազակները բռնել էին իւր թշնամու կողքը։

Digitized by Google

Յովանը, մոռանալով, որ այդ գործը կ'ընդունէ աւելի վատթար ուղղութիւն, հրամայեց բաց թողուլ կալանաւորը։

— Ես եւ իմ ընկերները շնորհակալ եղանք ձեզանից, ասաց սրիկան, եւ նրանք դուրս եկան Աւազակեանց բակից, իրանց հետ տանելով պարոն Ռուստամը։

Գիւղացիները, նոյնպէս գլուխ տալով Յովանին, հեռացան, մինչեւ ճնացին Մելիքը եւ Յովանը երկուքը միասին։

— Ի՞նչ պէտք է արած, Մելիք, ես չեմ կարող տանել այդ անարգութիւնը, ասաց Յովանը, ես կը մեռնիմ իմ սրտի կսկիծից։

— Ես ինքս ճնացել եմ շուարած, պատասխանեց Մելիքը յուսահատութեամբ. տեսա՞ր նրա գործը, տեսա՞ր նրա ընկերները։

— Ի՞նչ պէտք է արած, դարձեալ կրկնեց Յովանը տհաճութեամբ։

— Դուք այժմ շատ վրդովուած էք, Յովան, մի փոքր հանգստացէք, այնուհետեւ կը խօսինք, թէ ինչ պէտք է արած։

Յովանը իւր ծառաների հետ վեր կացաւ եւ գնացին ամրոցը, որ քառորդ ժամու ճանապարհաւ հեռի էր ծաղկաւանից։

Բայց նախանձը եւ տհաճութիւնը ուտում էր, մաշում էր Մելիք Պիլատոսի լերդն ու սիրտը, որ նոյն րոպէին գտնվում էր զարհուրելի ալէկոծութեան մէջ։ Ես կարմրելով յիշում էր այն անցքը, որ Ռուստամի նման աղքատ տղամարդը (նրա կարծիքով հարուստները միայն պիտի ունենային ձայն եւ կշիռ) — իւր քաջութեամբ արհամարհեց, որպէս Յովանի բռնակալութիւնը, նոյնպէս եւ իւր բոլոր ջանքերը օրիորդ Սալբին կորուսանելու։ Ես մեռ-

Digitized by Google

նում էր իւր բարկութիւնից, որ չը կարողացաւ իւր չարագործութիւնը կատարել։

Մինչ նա ատրուբերվում էր իւր կատաղի ալէկոծութեան մէջ, նրան իմաց տուին, թէ Յանի հարեմատան ներքինիներից մէկը կամի ձեզ տեսանել։ Նա հրամայեց որ ներս թողուն։

Ներքինին դուրս բերաւ իւր ծոցէն մի նամակ, տուեց Մելիքին. նա կարդաց նրա մէջ հետեւեալ խօսքերը.

"Անպիտան դու, այդ ինչ աններելի յանդգնութիւն է, որ գործում ես։ Բաւական չէ՞, որ քո ամենայն տեսակ բանսարկութիւնով եւ չարախօսութեամբ, մոլորեցնելով Յանի միտքը, խոռվում ես լսեղճ գիւղացիների հանգստութիւնը, իսկ այժմ համարձակուել ես եւ աղմկել նրա հարեմատունը։ Թող վկայ լինին Աստուծոյ բոլոր հրեշտակները, թէ քանի ծանր եւ դժնդակ կերպով դու կը ճաշակես քո չարութեանց պատիժը իմ ձեռքից, թէ չը կամիր քո սատանութիւններին չափ դնել„։

Ինքի վրայ կարդացվում էր Յանի գլխաւոր հարեմի անունը "Դուրրի-դարեայ„։

Մահուան գունատութիւնը ներկեց նրա դէմքը քրքումի գունով, նա թուլացաւ, ուշքը, միտքը կորցրուց, եւ հազիւ հազ մի քանի րոպէից յետոյ իւր զօրութիւնները պնդելով, ասաց ներքինուն — ինչ առիթ ունէր Յանումը այդպէս բարկանալ ինձ վրայ։

— Դու խելագարուա՞ծ ես, այ մարդ, կրկնեց ներքինին։ Ի՞նչպէս թէ խանումը առիթ չունէր քեզ վրայ բարկանալու, միթէ այդ փոքր գործ է, քեղ ինչ վերաբերեալ է խառնուիլ Յանի ընտանեկան գործերին. այդ ինչ աղջիկ տալ է. դու չե՞ս իմանում, խանըմները կը բարկանան դրանով։

Digitized by Google

Մելիքը սկսեց հազալ ու մի երդուածներով հաւատացնել թէ ինքը ամենեւին այդ գործից տեղեկութիւն չունի եղել, եւ թէ այլ մարդիկ հասկացրել են Յովանին օրիորդ Սալբիի մասին։ Բայց ինքը, կամենալով Յովանին անհաւանելի կացուցանել նրան, հրամայել էր այն ղարաչի կինը ցոյց տալ օրիորդ Սալբիի փոխարէն, եւ շատ ուրախ էր, որ յաջողուեց նրան։

Բոլորովին սուտ էր խօսում Մելիքը, որովհետեւ, նա ինքը չէր կարողացել մինչեւ այն րոպէին հասկանալ այն հրաշագործ փոփոխութեան գաղտնիքը . . . ։

ԼԵ.

ՄԱՏՆՈՒԹԻՒՆ

Այն ժամուն, — երբ բոլոր ծաղկաւանը աղմկալի խռովութեան մէջ էր Յանի մասին, երբ ձայն դուրս եկաւ, թէ օրիորդ Սալքիին տարան, պարոն Ռուստամին սպասնեցին, — Տէր Առաքելենց տանուտէր ոչ ոք չէր մնացած. նրա մայրը, հայրը եւ բոլոր ընտանիքը՝ հաւաքուած Աւազակենց տանուտէր, լաց էին լինում: Այդ ցաւալի ժամուն Ռէս Վասակեանը դեւի նման սողաց պարոն Ռուստամի առանձնասենեակում: Նա առանց ժամանակ կորցնելու մօտեցաւ ահագին փայտեայ արկղին, որ պարոն Ռուստամի թղթերու պահարանն էր: Նա դուրս բերաւ չերքից մի շատ բանալիներ, մի քանիսը փոփոխելով, ապա բաց արեց արկղը, եւ սկսեց ուշադրութեամբ քրքրել թղթերը: Նրանց միջից նա վեր առաւ երկու մեծ տետրակներ, մինը՝ պարոն Ռուստամի "Ծիշատակարանը,, միւսը՝ "Ազատ ժամեր„ մականշութեամբ, որ պարունակում էր նրա բոլոր տաղաչափութիւնները: Այդ երկու տետրակները իրան հետ վեր առնելով Ռէսը զգուշութեամբ փակեց արկղը, դուրս ելաւ սենեակից եւ անկութեաց ծաղկաւանի նոյն ժամուն անմարդաբնակ փողոցների մէջ:

Նոյն օրուայ երեկոյեան պահուն Մելիքը Ռէս Վասակեանի հետ ձիով գնում էին դէպ Յանի ամրոցը: Երանք հասան, ձիերը պահ տուին ախոռապանին, մտան

ամրոցը։ Բոլոր ամրոցը վառվում էր ճոխութիւնից, արեւի վերջալոյսը, խաղալով պատուհանների գոյնզգոյն ապակիների հետ, ձեւացնում էր հազարաւոր կախարդական գունաւորութիւններ։ Շատրուանները փողփողում էին հայելեայ նման, ջուրը բարձրանում էր անհամեմատ բարձրութեամբ, սենեակներից լսելի էին լինում զանազան եղանակներով երգերի եւ նուագարանների ներդաշնակութիւններ։

Երանք մանկաւիկներից մէկին յայտնեցին, որ Յոանին իմաց տայ իրանց մասին եւ շուտով ընդունուեցան մի առանձին սենեակում դրսի բակում։ Շուտով յայտնուեցաւ նրանց մօտ եւ Յոանը։

— Բարով էք եկել Փոքրանէզ, ասաց նա։

Երանք մինչեւ գետին խոնարհուեցան, երկրպագութիւն տուեցին եւ կանգնեցան ոտքի վրայ։

Ասես թէ, Յոանը այսօր մի առանձին ակնկալութիւն ունէր այդ երկու անձերից, նա խօսում էր նրանց հետ սիրով եւ մինչեւ անգամ հրամայեց նստեցան իւր մօտ։ Այդ պատիւը, նրա կեանքում, նրանից չէր վայելած ոչ մի հայ մարդ։ Այնուհետեւ հրամայեց ծառաներին հեռանան, եւ ոչ ոք չը թողնեն իրանց մօտ։

— Ռէմս, բերի՞ էք այն թղթերը, հարցրեց Յոանը։

— Հրամեր էք, Յոան, պատասխանեց նա։

Ու Ռէմսը դրեց Յոանի առջեւ երկու մեծ տետրակները — "Ազատ ժամեր„ եւ "Ցիշատակարանը„։

— Ի՞նչ են գրուած այդ տետրակների մէջ, հարցրեց Յոանը թերթելով նրանց։

— Երկար քննութիւններ հարկաւոր չեն, որ դուք հասկանաք այդ գրուածների միտքը եւ հեղինակի գաղափարները, ասաց պարոն Վասակեանը։ Միմիայն դուք կար-

Digitized by Google

դալով մի ուտանաւոր, որ ես թարգմանել եմ այդ "Ազատ ժամեր,, կոչուած տաղաչափութիւններից, կարող էք հասկանալ, թէ ինչ հոգւոյ տէր մարդ է դրանց հեղինակը:

Ու պարոն Վասակեանը տուեց Յովհին պարակերէն թարգմանեալ հետեւեալ ուտանաւորը:

Երանի՛ մի ժամ, երանի՛ մի օր՝
Գէթ ես լինէի՝ անմահ թագաւոր,
Սուրբ Մասիս իւր գլուխը՝
Խոնարհեցնէր ինձ առաջ:

Ա՛հ թէ մի րոպէ... գուցէ մի վայրկեան
Ձեռքումս կրէի ցիրոլ գաւազան:
Ամպերու վերայ՝
Դնէի ես գահ,
Երկինք-երկիրը՝
Դողացնէր իմ ահ:

Գուսանի բոցով, որոտ-կայծակով,
Հայոց քաջերը՝ զարթնէին շուտով.
Սուրբ բաղդային, նիզակը խաղային,
Վառօդը կապարաց կարկուտ տեղային:

Գլխով, լեշով լեցնէի՝
Արարատայ ձոր ու փոս.
Երեսը դաշտին ներկէի՝
Խոխոջներով կարմրատոս:

Հայր Երասխ, ալիքներդ
Հրճուելով խաղ առնէին.

Digitized by Google

Մեր թշնամեաց լէշերով՝
Մասսի կուրծք զարդարէին.
Մեր թշնամեաց արիւնով՝
Նորա թշեր ներկէին։

Հիմքից դէպ՝ վեր շրջէի
Արիւնախում. . . .
Ինաս գետի ափի մօտ՝
Ցաղիթուխեան դնէի արձան։

Ոտքի տակ ես փշրէի՝
. . . . . .
. . . . . .
. . . . . .

Պահանջէի որգիքս,
Որքան կուլ տուեց անյագ.
Ծողովէի հայ ազգը՝
Իմ յաղթող դրօշակիս տակ։

Հայոց փշրուած քաղաքներ
Վեր կանգնէի փառաւոր,
. . . Ծովի ափի մօտ՝
Ես դնէի իմ աթոռ։

Ուրախնեան վիհ թագը,
Անփշրելին գաւազան
Թող հովուէր հայոց ազգը
Միշտ, անփոփոխ, անսասան։

Ո՜հ լուռեցէք, տխուր մտքեր
Իմ հոգւոյս մէջ դուք անշարժ,

Digitized by Google

Այդ մեծ բախտը, այդ սուրբ օրեր՝
Հայր ճակատին չե՞ն գրուած...։

— Արդարեւ, այդ մարդը հասարակ մարդերի կարգից չէ, կրկնեց Յովանը կարդալը վերջացնելով։ Այդ մարդը մի վտանգաւոր մարդ է։

— Մինչեւ հիմայ ձեզ ասում էի, դուք չեիք հաւատում, խօսեց Մելիքը. բայց այսօր ձեր աչքով տեսաք նրա գործքը, ձեր ականջով լսեցիք նրա խօսքերը, եւ այդ թունաւոր գրուածքները ցոյց են տալիս նրա զարհուրելի մտքերը։

— Արդարեւ, դա վտանգաւոր մարդ է, դարձեալ կրկնեց Յովանը։

— Այդ մարդը, ոչ թէ լոկ խօսքերով քամիներ է փչում, պատասխանեց Ռէսը, այլ նա աշխատում է իւր չար մտքերը կատարելագործել եւ գործով։ Այս տարի նա սարսում գտել է իրան սրտակից բարբարոսների մի մեծ բազմութիւն, որոնց մէջ կան մօտ հազար հոգու չափ պատերազմող տղամարդիկ, որոնք, իրանց անպարտելի քաջութեամբ եւ յաջողակութեամբ կռուի մէջ, կարող են նուաճել մի մեծ թագաւորութիւն։ Որպէս ինձ յայտնի եղաւ ստոյգ տեղեկութիւններից, այդ բարբարոսների հետ, նա միաբանուել է՝ յարձակուիլ ձեզ վրայ, տիրել Զարեհաւանը եւ հաստատել այստեղ իրան համար անկախ տէրութիւն։

— Ուղղո՞ւդ, հարցրեց Յովանը զարհուրելով։

— Ճշմարիտ, այդպէս է, վկայեց Մելիքը։ Բացի այն բարբարոսներից եւ Զարեհաւանի հայերից շատերը միաբանուել են նրա հետ։

Digitized by Google

— Ի հարկէ, եւ զարեհաւանցիները նրա հետ կը միաբանուէին, նրա խօսքը կարեց Ռէսը։ Որովհետեւ այդ մարդը միշտ եւ անդադար քարոզում է ազատութիւն... ազատութիւն... ազատութիւն...։ Թէ հայոց ազգը իւր յատուկ իշխանութիւնը եւ իւր հայրենի երկիրը պիտի ունենայ, թէ պէտք չէ ծառայել ուրիշ ազգերին, եւ թէ ամէն մի հայ պիտի սիրէ իւր կրօնը, լեզուն, գրականութիւնը եւ իւր հայրենի հողն ու ջուրը։ Նա խաբում է բոլորին, ասելով, թէ հայերն էլ մի ժամանակ ունէին տէրութիւն, իշխանութիւն եւ զօրութիւն աշխարհի մէջ, եւ թէ այդ հողը, որի վրայ տիրում է — նրա խօսքով — բռնակալի գաւազանը, մեր հօր տունն է, մեր պապերի բնակարանն է։

— Դուք ինչպէս էք մտածում, հարցրեց Յօանը։

— Մենք մեր աչքերը բաց ենք արել, մեզ ձեզ ծառայ ենք տեսել, խօսեց Մելքը։ Մենք այսքանը գիտենք, որ հայ ազգը սկզբանէ մինչեւ այսօր ապրում է ուրիշի հրամանի տակ։ Այդ պատճառով, մենք եւ մեր որդիները, որքան կենդանի ենք, ուրախ ենք միշտ ընդունել ձեր կարող ձեռքի հովանաւորութիւնը։ Այդ խօսքերը, որ նա խօսում է, այդ ոտանաւորները, որ նա գրում է, իանգարուած երեւակայութեան ցնորքներ են, փուած գլխի մտածմունքներ են։ Մեր ականջները միշտ փակ են այդ մոլորութիւնները լսելու, մենք միշտ պատրաստ ենք ձեզ հնազանդութեամբ ծառայելու։

— Շատ լաւ... կրկնեց Յօանը։ Ես հասկացայ բոլորը...։ Ես կը մտածեմ դրա ձարը...։ Միայն դուք ասացէք, ինչ է ձեր կարծիքը օրիորդ Սալբիի մասին, մինչեւ այժմ ես չեմ կարողանում հասկանալ այդ օրուայ գաղտնիքը... այդ ղարաչի կինը զարհուրեցնում է ինձ։

Digitized by Google

Պարոն Վասակեանը չուզեց այդ հարցմունքին պատասխան տալ։ Որովհետեւ, Մելիքի կամքը, օրիորդ Սալբին Յօանի ձեռքը դցելու, բոլորովին նրան ընդդէմ լինելով, չէր կամենում այս առարկայիս վրայ զրոյց լինի։ Բայց Մելիքը ասաց.

— Ա՛յն զարհուրելի ղարաչի կինը միեւնոյն օրիորդ Սալբին էր, միայն կերպարանափոխուած, որովհետեւ այդ դեւի կաթ ծծած աղջիկը մի կատարեալ կախարդ է, նրան դիւրին է ընդունել ամէն կերպարանքներ եւ հարկաւորուած ժամանակ անհետանալ։

Մելիքի պատասխանը, իւր սրտին խիստ մօտիկ լինելով, Ռէսը շուտով ուզեց հետեւցնել նրանից մի ուրիշ եզրակացութիւն, թէ մի կախարդ կին անվայել էր Յօանին, ասելով. — Ճշմարիտ է խօսում Մելիքը. Յօան, այդ աղջիկը կատարեալ կախարդ է. նա ուսել է այդ արհեստը պարոն Աշխարհունու վարժարանում, ուր սովորեցնում են կատարեալ կախարդութիւն։ Ու այդ վարժարանի մասին պէտք է ձեզ անհոգ չը լինել, որովհետեւ այդ աղբիւրից բղխում են այդ բոլոր չարութիւնները...։ Բայց թող մնայ այդ, խօսքը փոխեց նա, վարժարանի համար կը մտածենք յետոյ...։ Բայց այժմ, եթէ կ'ընդունէք ծառայիդ անկեղծ խորհուրդը, ես ամենեւին կարք չեմ տալիս ձեզ ունենալ մի այդպիսի վտանգաւոր կախարդ կին։

— Ո՛չ, ո՛չ, նրա խօսքը կտրեց Մելիքը. սկսեալ մեր պապերից, Յօաները միշտ էքսաուն են ունեցել մեր ազգի գեղեցիկ աղջիկներով զարդարել իրանց հարեմատունը. բոլորովին անխելքութիւն է մի այդպիսի սիրուն բաց թողնել։

Մելիքի խօսքերի մի փոքր ծամանական ձեւը, շարժելով Յօանի հեշտախտութիւնը, խօսեց նա. — Ես երբեք

բայց չեմ թողնելու օրիորդ Սալքին, միանգամ տեսել եմ նրան դաշտում որսորդութեան ժամանակ, եւ միևչեւ այսօր նրա սիրուն պատկերը չէ հեռանում իմ աչքերի առջեւից։

Ռէսը լուեց, երբ նկատեց նրանց երկուսի կամքը միացան, բայց նա իւր հնարագիտութիւնից վատահ էր, թէ օրիորդ Սալքինին, չէ թողնելու բացի Սոլոմոն-Բէկից, գրկէ մի այլ մարդ։

— Ո՞նչ պէտք է արած օրիորդի մասին, հարցրեց Յօանը։

— Ես կ'ասեմ թէ ինչ պէտք է արած, միայն դրա ժամանակն չէ, պատասխանեց Մելիքը. որովհետեւ, քանի այդ ծպտուկը ապրում է մեր երկրի մէջ, դժուար է յաջողացնել նրա ձեռքից նրա սիրուհին. դուք մոռացեցէք նրա կոպուսպը, այնուհետեւ օրիորդը ձերն է։

Դուրս գալով Յօանի տանից, ճանապարհում Մելիքին ասաց Ռէսը. — Ազա, դուք ի զուր մոռացում էք օրիորդ Սալքին տալ Յօանին, որովհետեւ այդ մի օրինաւոր հնարք չէ, ձեր որդու սէրը նրանից հեռացնելու։

— Ինչպէ՞ս, հարցրեց Մելիքը բարկութեամբ։

— Ներեցէք, խնդրեմ, որ մի քիչ երկար կամենում եմ պատասխանել ձեր ինդրին, խօսեց խարեբան իւր սովորական կոկ ոճով։ Ամէն մի իրողութիւն, որ կամենում ենք գործել մենք, պէտք է յառաջագոյն մոռածել, թէ ինչ խօսելու է դրա վրայ հասարակաց լեզուն, կամ ինչպէս նայում է դրա վրայ հասարակաց աչքը, սամնեւին առղի չը տալով վատ կարծիքների եւ չար բամբասանքների։ Բայց մի այդպիսի իրողութիւն, որով դուք մոռածել էք հեռացնել ձեր որդու սէրը մի աղքատ

Digitized by Google

աղջկանից, ոչ մէկն հեռու չէ կացուցանում ձեր անձը ժողովուրդի չար վատաբանութիւնից, այլ եւ. կոտրում է ձեր պատիւը եւ համարումը։

Հասանելով տունը Մելքը, յանկարծ նրա սենեակը մտաւ Սոլոմոն-Բէկը, քանի օրուայ հիւանդութիւնից բոլորովին նիհարացած եւ տկարացած, ընկնելով հօր ոտքերը, նա ասաց. — Հայր, ողորմութիւն արէք, լսեցէք ձեր որդու աղաչանքը. այդ ինչ մոռածմունք է, որով դուք կամեցել էք իմ պատճառով կորուսանել օրիորդ Սալբին։ Դուք չէք իմանում, ես սիրում եմ նրան, այո, մի կատաղի եւ ցնորուած սիրով։ Շրը նա ինձ համար չը կայ, եւ իմ կեանքը նրա հետ կորած է։ Շրը դուք մոռադիր էք նրան մատնել Յօանի ձեռքը, լաւ է, յառաջագոյն սպանէք ինձ. թող իմ աչքերս չը տեսնեն այդպիսի դժբախտութիւն։

Ասիացի ծնողք չեն կարող առանց բարկութեան լսել իրանց որդիների եւ աղջիկների անկեղծ խոստովանութիւնը սիրոյ մասին։ Վերջին աստիճանի անհամեստութիւն համարելով իւր որդու խօսքերը, կոչեց Մելքը գազանաբար. — Ձայնդ կտրիր, յիմար, դու ցնորուած ես, դու գժուած ես, եթէ երկար կը խօսես այդպիսի բաներ՝ քեզ կ'արտաքսեմ իմ տանից, զրկելով բոլոր ժառանգութիւնից։

— Ես բոլոր յօժարութեամբ կամքի զրկուիլ աշխարհի ամէն փառքերից, ամէն հարստութիւնից, բայց օրիորդ Սալբիից ոչ երբեք, ասաց Սոլոմոն-Բէկը եւ դուրս եկաւ հօր սենեակից։

Ահա Վասակեանը, նոյն գիշեր, անգիտելի է, թէ ինչ խորհրդով, մեծաց Աւագակենց տունը. հանդիպելով յուսահատուած եւ սիրտը կոտրուած Սոլոմոն-Բէկին,

Digitized by Google

ասաց. — Ձեզ պէտք չէր առանց իմ խորհրդին խօսիլ ձեր հօր հետ՝ ձեր սիրոյ մասին. ես միշտ խրատեմ ձեզ հետեւիլ իմ կանոններին։

Գիշերից բաւական անցել էր։ Օրիորդ Սալքին, Տէր Առաքելենց տանում, իւր սիրականի հետ նստած, խօսում էին այն օրուայ անցքի մասին։ Պարոն Ռուստամը զարմանալով յիշում էր ղարաչէ կինը եւ հետաքրքրութեամբ հարցնում էր օրիորդից նրա մասին։ Բայց օրիորդ Սալքին չուզեց նրան յայտնել եւ ոչ մի բառ Յովհիկի մասին, որ աներեւութացնելով օրիորդը, առել էր ղարաչուս կերպարանք։

— Այլ եւս ժամանակ կորցնել հարկաւոր չէ, ասաց պարոն Ռուստամը իւր ճանապարհի պիտոյքները խուրջինները հաւաքելով. երեք ժամ լուսաբացին մեզ ճամբայ, Սալքի, դուք պատրաստ եղէք գիւղերը դուրս, աւերուած ջրաղացի մօտ. մենք այնտեղ կը հանդիպինք միմեանց. ձեզ համար առանձին ձի կը բերեմ. այնտեղից մենք երեք հոգի ճանապարհ կ'ընկնինք, ես, դուք եւ մեր Յաչօն։

— Շատ լաւ, պատասխանեց օրիորդը։

— Միայն դուք փոխէք ձեր զգեստը, հագնուեցէք տղամարդի ձեւով, վեր առէք ձեր զէնքերը եւ այն մօրուքաւոր դիմակը դրէք ձեր երեսին։

— Շատ լաւ, կրկնեց դարձեալ օրիորդը։ Բայց իմ վառօդը սակաւ է, տուէք ինձ մի փոքր վառօդ եւ մի քանի գնդակներ։

— Ա՛ռ քեզ, ասաց պարոն Ռուստամը, տալով նրան մի ման լի վառօդով եւ գնդակներ։ Երէկ կամենում էք, Յաչոյին յառաջադոյն կ'ուղարկեմ ձեզ մօտ, որ շալակէ ձեր

Digitized by Google

ճանապարհի մթերքը եւ հասցնէ մինչեւ աւեր ջրաղացը գիւղից դուրս:

— Պէտք չէ, ես ինքս կը շալակեմ իմ ճանապարհի պիտոյքը եւ կը հասցնեմ մինչեւ նշանակեալ տեղը: Այսուհետեւ պէտք է մեր անձը սովորցնել դժուարութիւններին . . . :

— Դէ՛, գնացէք, ժամանակը կորչում է, լսեցիք ինչ ասացի ձեզ:

— Հա՛, ինքը բարեւաւ:

Օրիորդը հեռացաւ:

Ներս մտաւ Յակէն:

— Իմ բարեկամ, ասաց նրան պարոն Ռուստամը, լուսարացին չորս ժամ ինացած ձիաններին գարին տուր, թամքիր, որովհետեւ, երեք ժամ ինայած լուսանալուն մենք պիտի աւերուած ջրաղացի մօտից ճանապարհ ընկնինք:

— Հրամեր էք, ասաց ծառան:

— Դուք մի քնէք, բայց եւ մի մոռնաք ինձ շուտ զարթեցնել. ես կամիմ մի փոքր հանգստանալ:

— Լսում եմ, աղա:

Պարոն Ռուստամը, իւր ճանապարհորդութեան բոլոր պատրաստութիւնները կարգի դնելէն յետոյ, որովհետեւ այն օրը խիստ շատ յոգնած էր, այնպէս իւր ճանապարհի պզտիատով գլուխը բարձին դրեց, չուշացաւ եւ քունը, շուտով թափեց նրա վրայ իւր թմրութեան բաժակը:

Բայց երանի թէ նա քնած չը լինէր . . . այդ դժբախտ քունը պատճառ եղաւ նրա կորստեանը: Ծանկարծ մի քանի հոգի մտան նրա սենեակը, եւ գոնելով նրան բո-

Digitized by Google

լսթավլին անզգայ քնած, յափշտակեցին նրան իւր մահճի միջից . . . :

Հասաւ նշանակեալ ժամը: Օրիորդ Սալբին միայնակ սպասում էր սէր ջատագովի մօտ: Այնքան երկար սպասեց նա, մինչեւ արեւը ցոլացրուց իւր ճառագայթները նրա երեսի վրայ, բայց տակաւին պարոն Ռուստամը չեկաւ . . . :

Ծեռ դառնալով դէպի գիւղը, նա տեսաւ բոլոր գիւղացիները հաւաքուած Տէր Առաքելենց դրանը: Ոմանք որիորդը խոյին հասկացաւ, թէ պատահել է մի օտարական անցք: Հասանելով Ծերունի Մկրտչի տունը, օրիորդ Սալբինին, արտասուքը աչքերում, պատմեց նրան. — Գիտէք, ինչ է պատահել, Սալբի, այս գիշեր պարոն Ռուստամին յափշտակել են իւր սենեակից. գիւղացիները նրա որեւնոտ հետքերը գտել են հեռու, Աղանայ ասլերում . . . :

Դայծակի հարուածի ունեցաւ այդ բոթաբեր լուրը խեղճ օրիորդի սրտին, նա շփոթուեցաւ . . . խելքից գնաց . . . ուշաթափ եղաւ . . . :

Աստուած իմ, Աստուած, բարերար Աստուած,
Ամէն քաղցրութեան լիութիւն ես խառնած.
Աստուած իմ հզօր, միշտ հանապազօր՝
Խաւար պիտ՝ անես՝ անմեղներուս օր:

Ինչո՞ւ ո՛չ էարը, այլ խեղճ անճարը՝
Թարմ՝ օր սեանելու՝ չունենայ էարա:
Անօրէնն իւր գահէն՝ խլում չէ գիհեն,
Միշտ արդար Աբէլ պիտ՝ սարսի քո սէնեն:

Ախոյա՜ չէ՞ վարդը. — սիրուն զուարթը,
Դեղնի, թառամի, — ծաղկոցի զարդը.

Digitized by Google

Ափսո՜ս չէ՞ շուշան, սիրոյ միակ նշան,
Փուշի մէջ բուսնի, թողլով իւր գիւղյան։

Եթէ դու ես ցերը, միշտ եղիր արդար,
Զարը խափանիր, բարւոյն խնամք տար։
Երբ որ սատանան՝ — առանձին բնութիւն,
Ես դորան կ՚ասեմ, — անէքսուսիւն ...

ԱՒԱԶԻՆ ՀԱՑՈՐԻ ՎԵՐՋԸ[1]։

---

[1] Այրվի հեղինակը, աչքերի տկարութեան պատճառաւ, չը կարողացաւ արտագրել իւր ուսմանի առաջին հատորը, ուստից նորան օրինակել իւր գրագրին, որ, մոր լեզուի կանոններին անտեղեակ լինելով, լքուցել էր մոր գրուածքը անհներելի սխալներով։ Ուրեմն ներում էր մոր կարողութիւնը, ուղղելիք սխալները, ճեղքածների համար ներողութիւն խնդրելով մոր պատուելի ընթերցողներէն։ Ծ. Հ.

Digitized by Google

ՅԱՆԿ

	էջ
Ա. պտ	8
Յառաջաբան	19
Ա. Խլվլիկ, ծառայող գեւխիկը	45
Բ. Ուխտաւոր հարձանացուն	59
Գ. Լիլեթը	73
Դ. Վարժապետը եւ վարժուհին	86
Ե. Լէյլի եւ Մաջնունի համառօտագրքը	101
Զ. Մեր հերոսը	114
Է. Սնահաւատ գառաիրաւկչուհին	127
Ը. Մի ծաղիկ խեզգոզ փուշերի մէջ	140
Թ. Հին եւ նոր	153
Ժ. Նուիրական կրակը	167
ԺԱ. Նիւթապաշտութիւնը	179
ԺԲ. Մոգպետը	194
ԺԳ. Հակառակ կարծիքներ	209
ԺԴ. Խորհուրդ	224
ԺԵ. Հոգեւոր առաջնորդի առաքելոը	237
ԺԶ. Բուն բարեկենդանը	251
ԺԷ. Ընդհանք	265
ԺԸ. Երազ	277
ԺԹ. Կեղծաւորը	292
Ի. Պէրվիշը	307
ԻԱ. Երկրորդ հարսանիք	323
ԻԲ. Հոգեւոր բժիշկը	338
ԻԳ. Ցերօլ մնաքինը	354
ԻԴ. Խաչագողը	370

Digitized by Google


		Եջ
ԻԵ.	Գաթան	385
ԻԶ.	Ռուսաստան օրագրութիւններէն	399
ԻԷ.	» »	412
ԻԸ.	» »	426
ԻԹ.	Սալթէր հասնիկը	439
Լ.	Ուզզափա մուհամետականը	452
ԼԱ.	Ճիմար Ծնողք	466
ԼԲ.	Ճառահառութիւն	480
ԼԳ.	Արքիկայ	494
ԼԴ.	Կալառածառէր խանը	507
ԼԵ.	Մառնութիւն	522

Digitized by Google

ՑԱՆԿ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԻ

1. Սիք իմ, ահ սէր, սէր	125
2. Քնիլ, քնիլ, սիրուն Թուանեակ	137
3. Հպատասան, Հպատասան	163
4. Երբ մանիւթեան անցան օրեր	257
5. Աբգիոք կը լինի միշ գալոց տարի	275
6. Կատի օրում քալ տղամարդը սիրեմ է	283
7. Քիչըչ ձեռքերը Հարիւրին սիրուն	288
8. Ջի սէր է Աստուած	303
9. Միթէ տրխնամ գրասիցս	327
10. Կարծես եղեր մեռելներով	331
11. Ալելուխա ալելուխա	372
12. Ճանիկ ախա, սիրուն սրդիակ	409
13. Օ՛ր օ՛ր կարգա, ահ գիտաս ինչը	420
14. Ափսոս, ա պզտիկ անփառք եւ անշուք	435
15. Այդ ինչ եմ առնում... քօսայիքը ալիքներ	487
16. Երանի ու ժամ, երանի ու ախ	524
17. Աստուած իմ, Աստուած, քարէրախ Աստուած	533

Digitized by Google



Digitized by Google

ՐԱՖՖԻ

ՎԱՃԱՌՔԻ ԳՐՔԵՐ

1. "ՍԱՄՈՒԷԼ„ Հար. Ա. Բ. եւ Գ. *մի գրքի մէջ ամփոփուած, Բ. տպագրութիւն* . .	3.50	8
2. "ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ„ Հար. Ա. (*սակաւ.*)	2.—	4½
3. "ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ„ Հար. Բ. (*սակաւ.*)	2.—	4½
4. "ՋԱՀՐՈՒՄԱՐ„ *վէպ*	2.—	4½
5. "ԿԱՑԷՆԻ ԿՏԱԿԸ„ *Թարգ.* (*սակաւ.*) .	1.20	2½
6. "ՈՍԿԻ ԱՓԱՂԱՂԸ„ Բ. *տպագր.* . . .	1.—	3
7. "ԴԱՒԻԹ-ԲԷԿ„ Հար. Ա. Բ. եւ Գ. *վերջաբանով, Գ տպագր.*	3.50	8
8. "ԿԱՑԵՐ„ Հար. Ա., Գ. *տպագր.* . .	2.—	5
9. "ԿԱՑԵՐ„ Հար. Բ. եւ *վերջ*, Բ. *տպ.*	3.—	7
10. "ԽԵՆԹԸ„ եւ "ՋԱՒԱԼԻՊՊԻՆ„ *մի գրքի մէջ ամփոփուած*, Գ. *տպագր.*	2.—	5
11. "ԽԱՉԱԳՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ„ Ա. Բ. Գ. եւ Դ. Հար. *մի գրքի մէջ ամփոփուած Գ. տպագր.*	2.—	5
12. "ԽԱՄՍԱՑԱՒ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ„ "ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԻՏԸ„ . . "ԳԱՂՑՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ„ . . .	2.—	5
13. "ՍԱԼՊԻ„ Հար. Ա.	3.—	8

Հրատ. ԱՅՐԻ ԱՆՆԱ ՐԱՖՖԻ

Յանկացողները պիտի դիմեն՝

Mme. Raffi

32, Richmond Gardens, Shepherd's Bush, London, W. (England).

Մեծ քանակութեամբ պահանջողներն պիտի դիմեն՝

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՐՑ ՎԻԵՆՆԱ, VII/2 Mechitharistengasse 4.

Digitized by Google

ԼՈՑՄ ԵՆ ՏԵՍԵԼ

ՐԱՖՖԻ ՄԱՀԻՑ ՑԵՏՈՑ

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

		դրամ
1.	“ՀԱՑ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՑ ԵՐԻՑԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ„ (*պատ.ուած*)	—.—
2.	“ԽԵՆԹԸ„ ԵՒ “ՋԱԼԱԼԷԴԻՆ„ *մի գրքի մէջ ամ-փոփուած*, Ր. *պատգր.* (*պատ.ուած*)	—.—
3.	“ԴԱՒԻԹ-ԲԷկ„ *Հայր.* Ա., Ր. *եւ Գ. վերջաբանով*, Ր. *պատգր.* (*պատ.ուած*)	—.—
4.	“ՄԻՆՆ ԱՑՍՊԷՍ, ՄԻՒՍՆ ԱՑՆՊԷՍ„, *պատկերա-զարդ վէպ* (*պատ.ուած*)	—.—
5.	“ԿԱՑԾԵՐԻ„ Ա. *Հայր.* Ր. *պատգր.* (*պատ.ուած*).	—.—
6.	“ԿԱՑԾԵՐԻ ՎԵՐՋԸ„ (*պատ.ուած*).	—.—
7.	“ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ„ *Հայր.* Ա. (*սակաւ.*)	2.—
8.	“ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ„ *Հայր.* Ր. (*սակաւ.*)	2.—
9.	“ԱՐԾԻՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ„ (*պատ.ուած*). . .	—.—
10.	“ԽԱՄՍԱՑԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ„ Ր. *պատգր.* (*պատ.ուած*)	—.—
11.	“ՊԱՐՈՑԻ ՀԱՑԿԱՋՆ„ (*պատ.ուած*)	—.—
12.	“Ո՞Վ ԷՐ ՄԵՂԱՒՈՐ„ (*պատ.ուած*)	—.—
13.	“ՖՐԻԴԱԼԻՆ„ *Թարգ.* (*պատ.ուած*)	—.—
14.	“ՋԱՀՐՈՒՄԱՐ„ *վէպ*	2.—
15.	“ՏԱՃԿԱՀԱՑԿԸ„ (*պատ.ուած*)	—.—
16.	“ԽԱՉԱԳՈՂԻ ՑԻՀԱՑԱԿԱՐԱՆԸ„ Ա., Ր., Գ. *եւ Դ. մաս*, Ր. *պատգր.*	—.—
17.	“ՈՍԿԻ ԱՓԱՂԱՂԸ„ Ր. *պատգր.*	1.—
18.	“ՍԱՄՈՒԷԼ„ *Հայր.* Ա., Ր. *եւ Գ.*, *Հայր.* Ր. *պգր.*	3.50

Digitized by Google

19. "Գանի-Բէկ", հայր. և., Բ. եւ գ. վերջաբանով, բուբլի
գ. տպագր. 3.50
20. "կանճեր", և. հայր. գ. տպագր. . . . . 2.—
21. "կանճեր", բ. հայր. եւ վերջ, բ. տպագր. . . 3.—
22. "Խենթը", եւ "ջանլանիդուին", գ. տպագր. . . 2.—
23. "ջանլանիդուին", առանձին, գ. տպագր. . . . —.50
24. "Խաշագողի ցիշանցանկարանը", և. բ. գ. եւ
գ. մաս, գ. տպագր. . . . . 2.—
25. "Խամսանցի մելիքությունները",
"ղարաբաղի ասպղանդը", ... 2.—
"գաղջնիձոն ղարաբաղի", . .
26. "սանդի հայր. և. . . . . 3.—

Հրատարակչությի՝ ացրի աննա բաջեի

Digitized by Google

ՀԵՏՋՀԵՏԷ ԼՈՒՍՈ ՊԻՏԻ ՅԵՍՆԵՆ

ԹԱՓՓԸ

ՀԵՏԵԻԵԱԼ ՍՊԱՌՈՒԱԾ ԵՒ ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. "ՍԱԼՔԻ„ Բ. եւ Գ. մեծադիր հատորները (անտիպ)։
2. "ՀԱՑ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՑ ԵՐԻՑԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ„։
3. "ՀԱՑՈՑ ՀԱՐՑԸ„ (Յաճկահայք) (տպուած եւ անտիպ)։
4. "ԽՐԻՄԵԱՆ ՀԱՑՐԻԿ„ (Արծիւ վասպուրականի)։
5. "ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ„ Հտր. Գ. (տպուած եւ անտիպ)։
6. "ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ„ (տպուած եւ անտիպ)։
7. "ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ„ (տպուած եւ անտիպ)։
8. "ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ„ (տպուած եւ անտիպ)։
9. "ՓՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ„ (տպուած եւ անտիպ)։
10. "ՆԱՄԱԿՆԵՐ„ (անտիպ)։
11. "ՄԻՆՉ ԱՑՍՊԷՍ եւ ՄԻՒՍՆ ԱՑՆՊԷՍ„։
12. "ԿԱՑԷՆԻ ԿՏԱԿԸ„ (Թարգ.)։
13. "ԱԶԳԱՑԻՆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ„ Հայկից մինչեւ Լեւոն Ջ։
14. "ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ„. եւ այլն, եւ այլն։

Digitized by Google

Digitized by Google